

ՄԵՐ ՉԱՎՈՐԵՎ ՄԻՉԻՆ


ՄԵՎԵԼԸՐԻ

ԵՐԿՐՆԵՐ

ԵՎ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXV



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

**THE COUNTRIES AND PEOPLES  
OF THE NEAR AND MIDDLE EAST**

**XXV**

*This publication was made possible by  
Armen and Bersabe Jerejian Foundation Inc. - USA*

YEREVAN – 2006

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

---

**СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА**

**XXV**

*Спонсор – "Фонд Армен и Берсабе Джереджан",  
США*

ЕРЕВАН – 2006


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՈՒՅԿ 26

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

XXV

Մեկնասություններ  
Արմեն և Բերաբեկ ճերեմեան Հիմնադրամի - ԱՄՆ



ԵՐԵՎԱՆ – 2006

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

ՀԱՏՈՐԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 35-ԱՄՅԱԿԻՆ

ՀՏԴ- 950  
ԳՄԴ 63.3(5)  
Մ 663

Խ Մ Բ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ի Ո Ր Հ Ո Ւ Բ Դ  
Հովհաննիսյան Ն.Հ. (նախագահ),  
Բայրություն Վ.Ա., Կարամանուկյան Շ.Լ., Հարությունյան Ն.Վ.,  
Չոբանյան Պ.Ա., Սաֆրասայան Ռ.Ա.

Տեխնիկական համակարգող՝ Ն. Վ. Կարախանյան

Մ 663 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXV).-  
Եր., Ձանգակ-97, 2006, 480 էջ:

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաչարի  
XXV հատորը բաղկացած է հինգ բաժիններից, որոնք ընդգրկում են Մերձավոր  
և Միջին Արևելքի երկրների մեր և նորագույն, հին և միջին դարերի պատմու-  
թյան, ինչպես նաև մշակույթի և քաղաքացիական հարցեր: Ձգալի տեղ է հատկա-  
ցված նաև ինչպես տարածաշրջանի մերձադարական զարգացումների, միջազ-  
գային և տարածաշրջանային, ցեղասպանագիտության և հարակից հիմ-  
նախնդիրների լուսարանությանը, այնպես էլ բնագրային հրապարակումներին:  
Նախատեսվում է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբաննե-  
րի, մշակույթի հարցերով զբաղվողների, ինչպես նաև բարձրագույն ուսումնա-  
կան հաստատությունների ուսանողների համար:

Մ  $\frac{0503000000}{0003(01)-2006}$  2006 թ.

ԳՄԴ- 63.3(5)

ISBN 99941-1-250-3

© Հեղինակներ, 2006 թ.

ՀՀ ԳԱՍ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ – 35

ՆԻԿՈՒԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲՈՍՖՈՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ

Մտորումներ ՀՀ ԳԱՍ Արևելագիտության ինստիտուտի  
35-ամյակի առթիվ

Երբ 1943 թվականի դեկտեմբերին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի դժնդակ տարիներին, Խորհրդային Միության կառավարության որոշումով հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, ապա նրա կառույցներում չէր նախատեսված արևելագիտական առանձին կենտրոնի ստեղծում: Եվ դա այն դեպքում, երբ հայ արևելագիտության ձևավորման ակունքները հասնում են առնվազն հինգերորդ դար:

Սակայն արևելագիտությունն այդ «պարտություն» դիմաց «ռևանջ» վերցրեց նրանով, որ նորաստեղծ ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց արևելագետ Հովսեփ Օրբելին: Մեծ գիտելիքների տեր և արտակարգ ներշնչող արտաքինով օժտված այդ պատկառելի անձնավորության նշանակումը պրեզիդենտի պաշտոնում պատահականություն չէր: Նա այդ ժամանակ միջազգային ճանաչում ունեցող քերականագետն էր և հայտնի հայ գիտնական էր, անառարկելի հեղինակություն հասարակական գիտությունների՝ այդ թվում և արևելագիտության ասպարեզում: Նա Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, ղեկավարում էր Լենինգրադի աշխարհահռչակ Էրմիտաժը, եղել էր մի շարք միջազգային կոնգրեսների կազմակերպիչ և ղեկավար: Իսկ հիտլերյան հանցագործների դեմ 1945թ. Նյուրնբերգյան միջազգային դատարանում իր փայլուն մեղադրական ելույթով առաջացրել էր տարբեր երկրների գիտնականների, իրավաբանների, քաղաքական, պետական և հասարակական գործիչների հիացմունքն ու երախտագիտությունը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի քարճր պարտականությունները նման համբավավոր և մեծավաստակ գիտնականին վստահելը մեծապես նպաստեց Հայաստանի գիտությունների ա-

կաղնեմիայի հեղինակության բարձրացմանը և գիտությունների ակադեմիաների համակարգում նրան արժանի բարձր տեղ ապահովելուն:

Արևելագետ-հայագետ Հովսեփ Օրբելիմ Հայաստանի գիտությունների ակադեմիան գլխավորեց մինչև 1947թ., երբ նա արդեն կատարել էր իր հիմնական խնդիրը՝ ոչ միայն ավարտել ակադեմիայի կազմակերպական ձևավորումը և կայացումը, այլև ամրապնդել նրա դիրքերը միջազգային գիտական համակարգում: Եվ նա հետագավ՝ «Մավրն առեց իր գործը, մավրը հեռանում է»<sup>1</sup>:

Տարիներն անցնում էին և քանի գնում, այնքան ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում հայկական գիտության կաճառում առանձին արևելագիտական կենտրոնի բացակայության բացասական հետևանքները՝ մի կողմից, և մյուս կենտրոն ունենալու անհրաժեշտությունը՝ մյուս կողմից: Դրա անհրաժեշտությունն ավելի էր ընդգծվում, եթե նկատի ունենանք, որ խորհրդային արևելյան մի շարք հանրապետություններում արդեն ստեղծվել և գործում էին արևելագիտական կենտրոններ՝ անգամ արևելագիտական ինստիտուտներ: Եվ դա այն դեպքում, երբ նրանք իրենց արևելագիտական ավանդույթներով, գիտության այդ ճյուղի հնությանը, սկզբաղբյուրների առատությանը ու բազմազանությանը, գիտական նվաճումներով ակնհայտորեն զիջում էին հայ արևելագիտությանը, որը վաղուց իր արժեքավոր, ինքնուրույն և շքեղ բնակատեղին էր կառուցել գիտության համաշխարհային այդ ուղղության մեջ, որն անհնար էր շփոթել ուրիշ մեկի հետ:

Եվ վերջապես եկավ այդ պահը: 1958թ.՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումից 15 տարի անց, որոշվեց գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծել ինքնուրույն արևելագիտական հաստատություն, որը կոչվեց «ՀՀ ԳԱ Արևելագիտության սեկտոր»: Այդ որոշման տակ դրված էր ակադեմիայի պրեզիդենտ, համաշխարհային հռչակ ունեցող, հայկական ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնում արևելագետ Հովսեփ Օրբելու անմիջական հաջորդի՝ աստրոֆիզիկայի ինժեներներից մեկի՝ Վիկտոր Համբարձումյանի ստորագրությունը:

Թեև արևելագիտական մոր կենտրոնը պաշտոնապես կոչվում էր «Արևելագիտության սեկտոր», սակայն նա ինքնուրույն միավոր էր և եմքակա էր անմիջապես ակադեմիայի նախագահությանը<sup>1</sup>: Այդուհան-

<sup>1</sup> Մեր նպատակը չէ այստեղ հանգամանորեն անդրադառնալ կամ լուսարանել հայ արևելագիտության և արևելագիտական կենտրոնի անցած ուղին և պատմությունը՝ իր մարմնամասնություններով: Այդ հարցը բավականին հանգամանորեն լուսարանված է Հ.Ինժեկյանի, Վ.Բայրուրյանի, Գ.Սարգսյանի և այլոց աշխատություններում: Տես նաև՝ Н.О.Оганесян, Становление и развитие востоковедения в советской Армении: «Востоковедные центры в СССР»



դերձ, հայ մտավորականության շրջանում եղան դժգոլության արտահայտություններ այն կապակցությամբ, որ միանգամից չստեղծվեց արևելագիտության ինստիտուտ, ինչպես հարևան Վրաստանում և Ադրբեջանում: Դրա հիմնական “մեղավորներին” պետք է փնտրել Հայաստանի և ակադեմիայի ղեկավարության մեջ, որոնք, ինչպես հաճախ է լինում, անհասկանալի և անհարկի զգուշավորություն էին ցուցաբերել այդ հարցում՝ դրսևորելով որոշ անվստահություն տեղական մասնագետների նկատմամբ: Այդ կարգավիճակի պատճառով Հայաստանի ակադեմիայի Արևելագիտության սեկտորը շատ հաճախ համամիտօրենական զանազան հանդիպումների և միջոցառումների ժամանակ ռեյտինգային հարցերում հայտնվում էր ոչ նպաստավոր դրության մեջ:

Սեկտորի կարգավիճակը հետագայում բարդություններ և դժվարություններ ստեղծեց նաև նրա ինստիտուտի վերակազմավորելու հարցում, որի համար պահանջվեց տաս տարոց էլ ավելի երկարատև ու համատար պայքար:

Ինչևէ, որոշումը կայացել էր և անհրաժեշտ էր ձեռնամուխ լինել նրա իրականացմանը:

Արևելագիտական կենտրոնի ստեղծումը պետք է համարել շրջադարձային փուլ հայ արևելագիտության զարգացման մեջ: Առաջին անգամ էր հայրենի երկրում ստեղծվում արևելագիտական ակադեմիական կենտրոն:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի ղեկավարությունը Արևելագիտության սեկտորի ղեկավարի՝ վարիչի, պաշտոնը վստահեց ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանին: Ընտրությունը կատարվել էր միանգամայն ճիշտ: Նա հայտնի պատմաբան էր և մի շարք աշխատությունների հեղինակ, որոնք հիմնականում նվիրված էին հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի, հայ-ռուսական հարաբերությունների և այլ հարցերի ուսումնասիրությանը: Մակայն նրա որոշ աշխատություններ ուղղակի առնչվում էին XIX դարում հայ-թուրքական հարաբերությունների լուսարանությանը, որոնց մեջ առանձնանում է “Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ: 1850-1970թթ.” աշխատությունը, որի համար նրան շնորհվել էր պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Հետագայում ևս,

/Աзербայձան, Արմենիա, Դրուզիա, Սուրինա, Մոսկա, Մալա, 1988: “Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան 60 տարում”, Երևան, 2003 և այլն:

Սեր խնդիրն է ուրվագծել հայ արևելագիտության զարգացման հիմնական միտումները, առանձնացնել նրա զարգացման փուլերը, ցույց տալ այն դժվարությունները, որ կանգնած են եղել նրա ճանապարհին 1990-ականների վերջերին, նրա ճգնաժամից դուրս գալը և այն վերելքը, որ նա ապրեց XX դարի վերջերին-XXI դարի սկզբներին:

երը մա այլևս չէր աշխատում արևելագիտական կենտրոնում և հետագայում էր նրանից, Մ.Ներսիսյանը երբեք չի հետագալ արևելագիտությունից և կապերը չի զննում նրա հետ: Օսմանյան կայսրության, Արևմտյան Հայաստանի, հայկական հարցի և ցեղասպանության խնդիրների լուսաբանությունը միշտ ուղեկցել են նրան՝ նրա գիտական ողջ գործունեության ընթացքում:

Մ.Ներսիսյանին Արևելագիտության սեկտորի վարիչ մշտնապես գործում իր դերը խաղաց մա. այն հանգամանքը, որ մա ուներ գիտական կազմակերպչական աշխատանքի բավականին հարուստ փորձ: Տարբեր տարիների մա գրադեցրել էր ակադեմիայի փոխպրեզիդենտի, Հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի և այլ պաշտոններ: Այդ հանգամանքը հատկապես կարևոր է, երբ խոսքը գնում է գիտական նոր հաստատություն ստեղծելու մասին:

Ակադեմիկոս Մ.Ներսիսյանը սկսեց համարյա գրոյից՝ սեկտորի համար աշխատակիցներ հավաքագրելով ակադեմիայի տարբեր ինստիտուտներից, բարձրագույն ուսումնական հաստատություններից և այլ հիմնարկներից: Նրանք որպես կանոն պրոֆեսիոնալ արևելագետներ չէին, սակայն լինելով հայ ժողովրդի պատմության կամ մշակութային մասնագետներ, իրենց աշխատանքի բերումով առնչվել էին մա արևելագիտական հարցերին: Աշխատակիցների առաջին կազմում ներգրավվեցին մա և որոշ հայրենադարձներ, որոնց մոտ եթե կարգում էր կրթական-մասնագիտական կողմը, ապա դա փոխհատուցվում էր նրանց արևելյան և եվրոպական լեզուների իմացությամբ:

Մ.Ներսիսյանը Արևելագիտության սեկտորը գլխավորեց ոչ շատ երկար ժամանակ՝ մինչև 1959թ. սեպտեմբերի 9-ը: Մակայն այդ ժամանակն էլ բավարար եղավ ապացուցելու համար, որ արևելագիտությունը Հայաստանում ունի զարգանալու ամուր հիմքեր և մեծ հետանկարներ: Գրանով փարատվեց բերահավատությունը Հայաստանում գիտության այդ կարևոր ճյուղի հնարավորությունների վերաբերյալ: Կարծում ենք, որ դա ակադեմիկոս Մյրտիչ Ներսիսյանի ամենակարևոր ծառայությունն էր հայ արևելագիտության համդեպ:

1959թ. սեպտեմբերին Արևելագիտության սեկտորի վարիչի պաշտոնում ակադեմիկոս Մ. Ներսիսյանին փոխարինելու եկավ պատմական գիտությունների բեկնածու Հովհաննես Ինճիկյանը: Նա Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտի շրջանավարտներից էր, երկար ժամանակ վարել էր պետական և կուսակցական քարձր պաշտոններ, այդ թվում եղել Հայաստանի կոմունիստական կուսակցության ԿԿ-ի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ: Զուգահեռաբար մա գրադվել էր հայ պատմագիտության՝ այդ թվում և կոմունիստական կուսակցության պատմության հարցերի ուսումնասիրությամբ, որոնց մեջ ուշադրության է արժանի ակամավոր բողշևիկ Բոգ-

դամ Կոմունյանցին մվիրված նրա մեմագրական ուսումնասիրությունը, որի համար նա ստացել էր պատմական գիտությունների ֆելոնաթուի գիտական աստիճան:

Հ. Ինճրկյանը Արևելագիտության սեկտորը գլխավորեց 12 տարի՝ մինչև 1971թ., որի ընթացքում մեծ փոփոխություններ կրեց սեկտորը: Լրե մինչ այդ սեկտորը մի տեսակ ամոռն էր, չունեւ ուղղությունների հստակ ստորաբաժանում, փոքրաթիվ էր և չէր կարող իր առջև դնել մասշտաբային խնդիրներ, այսպե՛ս 12 տարիների ընթացքում աստիճանաբար հասունացավ, համարվեց նոր աշխատակիցներով, որոնց մեջ արդեն առկա էին արևելագիտական պրոֆեսիոնալ կրթություն ստացածները: Դա հնարավորություն տվեց անցկացնել արևելագիտական ուղղությունների սահմանազատում և դասակարգում, ընտրություն կատարել ու գերակա ուղղություն համարել նրանք, որոնք առավել արդիական էին և ուղղակիորեն առնչվում էին նաև հայ ժողովրդի ու նրա պատմության հետ:

Այս փուլում սահմանվեց հայ արևելագիտության հետազոտությունների աշխարհագրական արեալը: Այդպիսին ճանաչվեց Մերձավոր ու Միջին Արևելքը և գլխավոր խնդիրը համարվեց այդ տարածաշրջանի երկրների ու ժողովուրդների պատմության, տնտեսության, մշակույթի, սկզբնաղբյուրների և միջազգային հարաբերությունների, ինչպես նաև հայ համայնքների ուսումնասիրությունը: Այդ շրջանակներում ավելի կոնկրետացվեցին ամմիջական հետազոտության առարկա հանդիսացող ուղղությունները: Այդպիսին համարվեցին արաբագիտությունը, քուրդագիտությունը, իրանագիտությունը և քրդագիտությունը՝ իրենց ենթաբաժիններով ու բաղադրիչներով:

Ըստ այդմ, առաջին անգամ տեղի ունեցավ սեկտորի կառուցվածքային համակարգի ձևավորում: Ստեղծվեցին չորս գիտահետազոտական խմբեր՝ արաբագիտական (ղեկ.Ն.Հովհաննիսյան), քուրդագիտական (ղեկ.Ե.Սարգսյան), իրանագիտական (ղեկ. Հ.Եզանյան) և քրդագիտական (ղեկ. Հաջին Ջոդի): Այս փուլում գերակշռող նոր ու նորագույն շրջանների հարցերն ու ժամանակակից քննաներն էին:

Սեկտորի ձևավորումից ընդամենը երկու տարի անց՝ 1960թ., հայ արևելագիտները պատրաստեցին և հրատարակեցին "Արևելագիտական ժողովածու"-ի առաջին հատորը, որը հանդիսացավ հայ արևելագիտության յուրատեսակ մանիֆեստը: Դրան հաջորդեցին այդ մատենաշարի այլ հատորներ, որը սկսած երրորդ հատորից՝ մեր առաջարկությանը, կոչվեց "Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ": Սկսեցին լույս տեսնել նաև աշխատակիցների մեմագրական ուսումնասիրությունները և գիտական հոդվածները:

Այդ տարիներին արևելագիտության զարգացմանը նախկին Խորհրդային Միությունում, այդ թվում և Հայաստանում, նպաստում էր

խորհրդային իշխանությունների քաղաքականությունը, որի կարևոր խնդիրներից մեկը Արևելքում հաստատված գաղութատիրության համակարգի վերացումն էր: Այդ հարցում նա զգույս էր արևելագիտության օգնության կարիքը՝ տեսականորեն հիմնավորելու գաղութային համակարգի վերացման և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներում ազգային անկախ պետությունների կազմավորման ամերաժեշտությունը: Եվ նոր արևելագետները թերամում էին այդ հարցում, ապա նրանք արժանանում էին խորհրդային իշխանության ղեկավարության հանդիմանությանը: Դրա վառ վկայությունն էր Խորհրդային Միության կառավարության նախագահի առաջին տեղակալ Անատոս Միկոյանի նույթը Մոսկվայում 1960թ. կայացած արևելագետների համաշխարհային կոնգրեսում, որի ժամանակ նա հայտարարեց՝ «Արևելքը վաղուց արթնացել է, իսկ արևելագետները շարունակում են մնալ քնած»: Ըստ էության դա յուրահատուկ ուղղերձ էր հասցեագրված արևելագետներին: Եվ նրանք արթնացան:

Արթնացան նաև հայ արևելագետները:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության սեկտորի ձևավորման ու զարգացմանը գուզահետ փոփոխության ենթարկվեց նաև ինքը՝ Հ. Ինճիկյանը որպես մասնագետ: Նա հետագայ կուսակցական քննադատիկ և ավելի ու ավելի խորացավ թուրքագիտության քննադատում: Նա գրեց «Օսմանյան կայսրության բուրժուազիան» մեմորանդում ինքնատիպ աշխատությունը, որի համար նրան շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, ապա նաև «Օսմանյան կայսրության անկումը» ուսումնասիրությունը:

Այս տարիներին սեկտորը կառուցվածքային և քննադատիկ առումով ձևավորվեց որպես իր դեմքն ունեցող արևելագիտական կենտրոն: Կատարված աշխատանքը, որն արժանի է քարձր գնահատականի, եկավ ապացուցելու, որ Հայաստանում կա արևելագիտական հզոր մեթոդ, որին արդեն մեղ են գալիս սեկտորի շրջանակները: Արդեն հասունացել էր սեկտորը ինստիտուտի վերակազմավորելու հարցը:

Դա պետք է համարել սեկտորի գոյության և գիտական զործունեության ամենակարևոր արդյունքներից մեկը, որի մեջ ամուրանալի են նրա ղեկավար, պրոֆեսոր Հ. Ինճիկյանի ծառայությունները:

ՀՀ ԳԱ ղեկավարությունը՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի և կառավարության աջակցությամբ, քազմիցս քարձրացրել էր Արևելագիտության սեկտորը Արևելագիտության ինստիտուտի վերածելու հարցը և այդ կապակցությամբ դիմել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիային և Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեին: Ըստ այն ժամանակներում գոյություն ունեցող կարգի՝ հանրապետությունների ղեկավար մարմիններն իրավունք չուներին առանց Մոսկվայի համաձայ-

նության որոշումներ ընդունել հանրապետություններում նոր ինստիտուտներ ստեղծելու վերաբերյալ: Սակայն Մոսկվան երկար ժամանակ մերժում էր Հայաստանից ստացված խնդրանքը, որը դժգոհությունների տեղիք էր տալիս Հայաստանի գիտական շրջաններում: Վերջապես Մոսկվան զիջեց և իր համաձայնությունը տվեց Արևելագիտության սեկտորը Արևելագիտության ինստիտուտի վերակազմավորելու հարցում:

Դրանից հետո Հայաստանի կառավարությունը՝ ՀՍՍՀ Մինիստրների Սովետը, 1971թ. հունիսի 24-ին ընդունեց Նո. 378 որոշումը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայում Արևելագիտության ինստիտուտ հիմնելու մասին: Կառավարության այդ որոշման համաձայն ՀՀ ԳԱ նախագահությունը 1971թ. հուլիսի 28-ին ընդունեց համապատասխան որոշում, որն ամրագրված է Նո. 17 Արձանագրության մեջ:

1971թ. հուլիսի 28-ը Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ծննդյան օրն է:

Բնականաբար, անհրաժեշտ էր առաջին հերթին լուծել նորաստեղծ ինստիտուտի անօրենի հարցը, որը, ինչպես պարզվեց, այնքան էլ դյուրին գործ չէր: Այդ տեղին մի քանի հավակնորդներ կային՝ ինչպես ակադեմիայի ներսում, այնպես էլ նրանից դուրս: Ակադեմիայի նախագահության ընտրությունը կանգ առավ պատմական գիտությունների դոկտոր Գագիկ Սարգսյանի թեկնածության վրա, որը հավանություն ստացավ նաև Հայաստանի կոմկուսի կենտկոմի կողմից: Եվ Գ. Սարգսյանը դարձավ Արևելագիտության ինստիտուտի՝ ԱԻ առաջին տնօրենը:

Գագիկ Սարգսյանն ավարտել էր Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետը, իսկ այնուհետև ասպիրանտուրան: Նա 1967թ. ստացել էր պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1986թ. ընտրվել ՀՀ ԳԱ իսկական անդամ: Ջրադեղքի էր տարրեր պաշտոններ, այդ թվում 1962-1966թթ. եղել պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ:

Գիտության բնագավառում կատարած առաջին քայլերից սկսած նրան մշտապես հետաքրքրել է երկու ուղղություն՝ հայագիտությունը և սեպագրագիտություն-աստրագիտությունը: Եվ նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց իր գիտական այդ երկու նախասիրություններին:

Մինչև ԱԻ-ի տնօրեն նշանակվելը նա արդեն հրատարակել էր մի շարք ուշագրավ աշխատություններ, ինչպես “Տիգրանակերտ”, “Մովսես Խորենացու “Հայոց պատմության” ժամանակագրական համակարգը” և “Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին”, որոնք նրան մեծ ճանաչում էին բերել: Նա հեղինակն էր նաև աստրագիտական բնույթի մի շարք հոդվածների:

Ինստիտուտի ստեղծումով նոր փուլ սկսվեց հայ արևելագիտության զարգացման բնագավառում: Նրա զարգացումը ստացավ ավելի ամբողջական եվ խորքային բնույթ:

Սկզբնական շրջանում մեծ ուշադրություն դարձվեց կազմակերպչական-կառուցվածքային հարցերին: Մեկտարում գոյություն ունեցող արաբագիտական, քուրդագիտական, իրանագիտական և քրդագիտական գիտահետազոտական խմբերը դարձան Արաբական երկրների, Թուրքիայի, Իրանի և Քրդագիտության բաժիններ: Մտցվեց բաժնի վարչի պաշտոն՝ որպես տվյալ գիտական ուղղության ղեկավար և պատասխանատու: Այդ բաժինների վարիչներ ընտրվեցին համապատասխանաբար Ն.Հովհաննիսյանը, Ե.Սարգսյանը, Հ. Եզանյանը և Հաջին Ջնդին, որին շատ չանցած փոխարինեց Խ.Չատուրը<sup>2</sup>:

Սակայն սխալ կլիներ խմբերի վերակազմավորումը բաժինների ղիտել որպես մեխանիկական փոփոխություն: Իրականում փոփոխությունը որակական բնույթի էր: Բաժինների ստեղծումով ավելի հստակ դարձան տվյալ գիտական ուղղության ուսումնասիրության սահմանները և հիմնախնդիրները: Բաժիններն ու նրանց ղեկավարներն ավելի լայն լիազորություններից էին օգտվում, քան թե գիտահետազոտական խմբերը, որոնց ղեկավարներն այդ պարտականությունները կատարում էին հասարակական կարգով:

Կարևոր փոփոխություն տեղի ունեցավ նաև արևելագիտական կենտրոնի ուսումնասիրությունների բնագավառում՝ ժամանակագրական կտրվածքի առումով: Մեկտորը հիմնականում ուսումնասիրում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ու ժողովուրդների նոր և նորագույն շրջանի պատմությունը՝ թեև առանձին ղեկավարում, ինչպես արևելյան աղբյուրների ուսումնասիրության պարագայում, խախտվում էր այդ սկզբունքը: Ինստիտուտի կազմավորումից հետո անմիջապես ակնհայտ դարձավ այդ մոտեցման անընդունելի լինելը և խնդիր դրվեց արևելագիտական ուսումնասիրությունները ժամանակագրական առումով ամբողջացնել՝ ներառնելով միջին դարերը և անտիկ շրջանը: Դա միանգամայն ճիշտ որոշում էր, որի շնորհիվ հայ արևելագիտության առջև՝ ամբողջական դառնալու հետ միասին, բացվում էին նոր հորիզոններ: Ըստ այդմ, ԱԻ-ն համալրվեց երեք նոր բաժիններով՝ Հին Արևելքի (ղեկ. Ն.Հարությունյան), Կովկասագիտության և Բյուզանդագիտության (ղեկ. Պ. Մու-

<sup>2</sup> Հետագայում այդ բաժինների վարիչների պաշտոններում նշանակվեցին՝ համապատասխանաբար, Ե.Կարամանուկյանը, Ռ.Սահակյանը՝ ապա Ռ. Սահարստյանը, Վ.Բայրուրյանը, Ե.Մեղիկ՝ ապա Մ.Խամբյանը:

բաղյում)<sup>3</sup> և Արևելյան աղբյուրների (ղեկ. Ա.Տեր-Ղևոնդյան): Այսպիսով՝ ինստիտուտում գործող գիտական բաժինների թիվը դարձավ յոթը, իսկ արևելագիտական թեմատիկան ընդգրկեց ամտիկ շրջանից մինչև մեր օրերը: ԱՌ-ն՝ որպես ամբողջական մարմին ավելի լիաթոք սկսեց շնչել:

Նոր բաժինների կազմավորումով ավելացավ ինստիտուտում հրատարակվող մատենաշարների թիվը: “Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ” մատենաշարին ավելացան “Հին Արևելք”, “Կովկաս և Բյուզանդիա” և “Արևելյան աղբյուրագիտություն” մատենաշարները, որոնցից առաջին երկուսը հրատարակվում էին ռուսերեն լեզուներով:

Ինստիտուտի կազմավորումով, նոր բաժինների ստեղծումով և ուսումնասիրությունների ժամանակագրական շրջանակների ընդլայնումով՝ նոր խնդիրներ դրվեցին արևելագիտական կադրերի պատրաստման և համարման ասպարեզում: Ոչ պրոֆեսիոնալ կամ սիրողական մակարդակը այլևս չէր կարող բավարարել արևելագիտական խնդիրների ուսումնասիրությանը՝ միջազգային գիտական յափսիշներին համապատասխան: Ժամանակները լիտիվել էին և նոր մտեցումներ ու նոր մակարդակ էր պահանջվում: Գոյություն ուներ, որ արևելագիտությունը համաշխարհային գիտություն է: Արևելագիտական կադրերի պատրաստումը և ԱՌ-ին նոր կադրերով համարելը կատարվեց ելակետ ունենալով այդ սկզբունքները: Մասնագիտական կրթության հետ պահանջվում էր նաև լեզուների բավարար իմացություն: ՀՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը մի առիթով անդրադառնալով արևելագիտության զարգացման խնդիրներին ՀՀ ԳԱ Արևելագիտական ինստիտուտում, ուղղակի պահանջեց ինստիտուտ ընդունել միայն այնպիսի երիտասարդ կադրերի, որոնք տիրապետում են անվիզոն չորս լեզուների՝ հայերեն, ռուսերեն, մեկ եվրոպական և մեկ արևելյան: Ինստիտուտը մշտապես հետևել է այդ իմաստուն խորհրդին և այսօր լեզուների իմացության հարցում նրա բոլոր աշխատակիցները համապատասխանում են այդ պահանջներին, իսկ նմանց մատչելի են անգամ հինգ և վեց լեզու:

1970-1980-ական թվականներին ԱՌ-ն մեծ վերելք էր ապրում և դարձել էր Խորհրդային Միության կարևոր արևելագիտական կենտրոններից մեկը: Դա արդյունք էր այն ճիշտ քաղաքականության, որ վարում էր նրա տնօրեն ակադեմիկոս Գ. Սարգսյանը՝ ինստիտուտի գիտական օղակների ղեկավարների ամենակտիվ աջակցությամբ և օժանդակությամբ:

<sup>3</sup> Այնուհետև հերթականությամբ այդ բաժինը ղեկավարեցին Ա. Բոզոյանը, Պ. Չորանյանը, և Ա. Հակոբյանը, իսկ Արևելյան աղբյուրների բաժինը Ա. Փափազյանը:

1991թ. Հայաստանի Հանրապետությունը վերանվաճեց իր անկախությունը և թևակոխեց մի դարաշրջան, որը ստացավ “անցման շրջան” անվանումը: Տարաբախտաբար այդ “անցման շրջան” կոչվածը շատ ծանր նստեց երկրի վրա, որը նրան անկասելիորեն զուրում էր դնելի անդունդը: 1990-ական թվականներին հանրապետության տնտեսությունը կաթվածահար եղավ: Վրա հասավ անգրագետ և կիսագրագետ դուրսպրծուկների աստեղային ժամը, տեղի ունեցավ բայրյակյան նորմերի անկում, ժողովուրդի ճնշող մեծամասնությունը հանկարծ հայտնվեց աղքատության թագավորությունում, քանդվեցին քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային կառույցները, մոլեգնում էր ազանությունը և ընչաքաղցությունը, սկսվեց հայերի զանգվածային արտագաղթ Հայաստանից և երկրի հայաթափման մի նոր և վտանգավոր վտույ:

Առանձնապես ծանր պայմաններ ստեղծվեցին գիտության, նրա կառույցների և գիտական մտավորականության համար: Նրանց համար “անցման շրջանը” վերածվեց դժոխքի, մաքառումի և գոյատևման շրջանի: Անբերական կայելի ցածր աշխատավարձեր, գործնականորեն գիտության ֆինանսավորման դադարեցում, գիտական աշխատությունների հրատարակության իսպառ վերացում՝ այս էր 1990-ական թվականներին գիտության ոլորտում հաստատված “ոեմիսը”, որին ոչ բոլորն էին որ կարողացան դիմանալ:

Գիտական բոլոր ինստիտուտները և կենտրոնները հայտնվեցին կործանման եզրին: Դրանից չխուսափեց և չէր էլ կարող խուսափել ՀՀ գիտությունների ակադեմիան իր բոլոր ինստիտուտներով հանդերձ: Այդ ջրապտույտի տակ ընկավ նաև Արևելագիտության ինստիտուտը: 1990-ականները եղան Արևելագիտության ինստիտուտի գոյության ամենածանր տարիները:

Արևելագիտության ինստիտուտի կորուստները մեծ էին և տարատեսակ: Գիտաշխատողների մի ստվար խումբ հեռացավ հայրենիքից և ապաստանեց օտար երկրներում: Սի խումբ էլ՝ չդիմանալով ստեղծված անտանելի մյուսական պայմաններին, հրաժեշտ տվեց այս կյանքին: Եվ, վերջապես, արևելագետների համեմատաբար մի հոծ զանգված հեռացավ ինստիտուտից և նոր գործատեղ գտավ ավելի ապահով ու լավ վարձատրվող իշխանական կառույցներում՝ պրեզիդենտի աշխատակազմում, պառլամենտում, արտաքին գործերի նախարարությունում և նրա արտասահմանյան ներկայացուցչություններում, և այլուր: Ինստիտուտի մոտ 75-ի հասնող գիտաշխատողներից մնացին ընդամենը 20-25-ը: Եղավ մի պահ, երբ մի շարք բաժիններում մնացել էր ընդամենը 2-3 գիտաշխատող, իսկ Արևելյան աղբյուրների բաժինն ընդհանրապես դադարեցրեց իր գոյությունը: Քայքայման և վերացման եզրին հասած ինստիտուտում գիտական կյանքն առկայծում էր շնորհիվ մի երկտասնյակ “խելահեղ” նվիրյալների:



Ծանր, իսկապես շատ ծանր ժամանակներ էին:  
Ահա այսպիսի իրադրության պայմաններում 1995թ. տեղի ունեցավ փոփոխություն Արևելագիտության ինստիտուտի ղեկավարության մեջ:

ՀՀ ԳԱ նախագահությունը՝ արեզիդենտ Վիկտոր Համաբարձումյանի նախաձեռնությամբ, ընդունել էր մի որոշում, ըստ որի չէր թույլատրվում վիցեպրեզիդենտներին և բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարներին միաժամանակ զբաղեցնել ինստիտուտի տնօրենի պաշտոն, որը վաղուց գործում էր Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասնակարգում: Նրանց առջև դրվեց երկընտրանք՝ զբաղեցնել դրանցից մեկը՝ ըստ իրենց հայեցողության: Ակադեմիկոս Գ. Մարգարյանը 1994թ. զբաղեցնում էր ՀՀ ԳԱ փոխպրեզիդենտի պաշտոնը, իսկ 1995թ.վականից փոխպրեզիդենտի և Հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները: Եվ նա, որ մոտ 24 տարի գլխավորում էր Արևելագիտության ինստիտուտը՝ նախընտրեց իրաժարվել Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնից և մնալ վիցեպրեզիդենտի ու բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոններում:

1995թ. փետրվարին Արևելագիտության ինստիտուտի նոր տնօրեն ընտրվեց տողերիս հեղինակը<sup>4</sup>:

Մտանձնելով տնօրենի պարտականությունները գիտության գոյության ու զարգացման համար ոչ նպաստավոր այդ ժամանակաշրջանում, ես կանգնեցի մի շարք բարդ խնդիրների առջև և պետք է ընտրություն կատարեի ու որոշեի՝ թե ինչից սկսել:

Երկար մտորումներից հետո եկա այն եզրակացության, որ այդ ժամանակ ամենագլխավորը հայ արևելագետների գեներալի պահպանումն է և այդ հիմքի վրա ինստիտուտի վերածնդի ասպեկտները: Դա այդ ժամանակահատվածի համար դարձավ ստրատեգիական խնդիր: Ամերկապայելի ջանքերի գնով և զործնական քայլերի միջոցով աստիճանաբար հաջողվեց լուծել այդ խնդիրը: Ինստիտուտը և արևելագիտությունը դարձավ երասպորիչ երիտասարդ կադրերի համար և մագնի-

<sup>4</sup> Այդ ժամանակ ես արդեն 35 տարի է, ինչ աշխատում էի Արևելագիտության ինստիտուտում, մոտ 10 տարի (1961-1971թթ.) ղեկավարել էի արաբագիտության խումբը, 1971 թվականից եղել Արաբական երկրների բաժնի առաջին վարիչը, իսկ 1984-1985թթ. ինստիտուտի տնօրենի տեղակալ՝ գիտական գծով, պատմական գիտությունների դոկտոր՝ 1968թ, պրոֆեսոր՝ 1972թ.: Տնօրեն ընտրվելու պահին 17 մեմագրական ուսումնասիրությունների՝ այդ թվում արաբական երկրների նորագույն պատմությանը և ազգային-ազատագրական շարժումներին նվիրված յոթ հատորների, միջազգային հարաբերություններին և իսլամին նվիրված քաղաքիվ մեմագրությունների հեղինակ էի, արտասահմանյան մի շարք ակադեմիկոսների և գիտական ընկերությունների անդամ:

սի պես նրանց իրեն էր ձգում: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում հնարավոր դարձավ ոչ միայն պահել արևելագետների գեներալները, այլև ինստիտուտը համարել երիտասարդ, մասնագիտական կրթություն ստացած և լեզուներին տիրապետող նոր խոստումնային կադրերով: Եվ հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ այսօր Արևելագիտության ինստիտուտը և նրա բոլոր գիտական օղակները համարված են երիտասարդ գիտական կադրերով: Ար-ն թերևս միակ ինստիտուտն է ՀՀ ԳԱ համակարգում, որ երիտասարդ գիտական կադրերով համարվելու խնդիր չունի:

Ինստիտուտ վերադարձան նաև նրա նախկին որոշ աշխատակիցներ: Եվ կարելի է ասել, որ սերնդավորությունը Ար-ում կատարվեց շատ սահուն կերպով՝ առանց ցնցումների կամ բախումների: Ավագ և երիտասարդ սերնդի գիտաշխատողների միջև հաստատվել են գործնական և քաղաքակիրթ ներդաշնակ հարաբերություններ, որի շրջանակներում երիտասարդ գիտաշխատողները խորը հարգանքով են վերաբերվում ավագ գիտնականների անձինն ու վաստակին; իսկ վերջիններս հաճույքով իրենց փորձն ու գիտելիքներն են հաղորդում նրանց:

Ինստիտուտում սկսեց աշխուժանալ գիտական կյանքը՝ գիտական կոնֆերանսների, սիմպոզիումների և այլ բնույթի քննարկումների կազմակերպումը մտավ իր բնականոն հունի մեջ: Իրենց աշխատանքները վերակենցիմ երիտասարդ արևելագետների հանրապետական կոնֆերանսները, որոնք ընդհատվել էին 1990-ական թվականներին: 1995-2006թթ. կայացել է երիտասարդ արևելագետների հանրապետական 11 կոնֆերանս: 2006թ. հունիսին տեղի ունեցավ երիտասարդ արևելագետների հանրապետական XXVIII կոնֆերանսը: Դա անփոխարինելի դպրոց է երիտասարդ կադրերի համար: 1996թ. սկսվեց «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի վերահրատարակումը, որն այնուհետև վերածվեց տարեգրքի: 2006թ. լույս տեսավ այդ մատենաշարի XXV հատորը: Դա հայ իրականության մեջ իր նախադեպը չունեցող արժեքավոր գիտական հրատարակություն է, որը մեծ հեղինակություն է վայելում մասնագետների շրջանում: Նման մատենաշար գոյություն չունի նախկին Խորհրդային Միությունում գործող և ոչ մի արևելագիտական կենտրոնում: Նման մատենաշար այսօր գոյություն չունի և ոչ մի տեղ:

Մեծ քափ առավ մեծագրությունների, ժողովածուների և հոդվածների հրատարակությունները: Ինստիտուտը կարողացավ այդ հրատարակությունների համար ապահովել հովանավորներ՝ ինչպես անհատներ, այնպես էլ ֆոնդեր: Դրանց մեջ պետք է առանձնացնել «Արմեն և Բերսարե Ջերեջյան Հիմնադրամը» (ԱՄՆ ), որի ֆինանսական աջակցությամբ միայն 1997-2006թթ. հրատարակվել է մոտ 60 մեծագրական ուսումնասիրություն և ժողովածու: Ար-ի աշխատակիցները, այդ թվում և

երիտասարդ արևելագետները, գործնականում իրենց աշխատությունները հրատարակելու պրոբլեմ չունեն:


Այդ բոլորը հիմք տվեց XX դարի վերջերին արձանագրել, որ Արևելագիտության ինստիտուտի վերածնունդն արդեն կայացել է, նա վերելք է ապրում և թևակոխել է զարգացման մի նոր՝ ավելի բարձր վտու: Մենք դա համարում ենք պատմական նվաճում:

Դրանում մեծ է ինստիտուտի ավագ սերնդի ներդրումը, որի աջակցությունը մենք՝ որպես տնօրեն, մշտապես վայելել ենք, և օգտվել նրանց բարի խորհուրդներից: Այդ առնչությամբ ցանկանում ենք երախտագիտությամբ նշել Ն. Հարությունյանի, Վ. Բայբուրդյանի, Պ. Մուրադյանի, Ե. Մուրադյանի, Ա. Քոսյանի, Ն. Սկրտչյանի, Մ. Խաչիկյանի, Ա. Բոզոյանի, Պ. Չոբանյանի, Մ. Խամոյանի, Կ. Չաչանյանի Ե. Կարամանուկյանի, Ռ. Մաֆրաստյանի, Ա. Կոզոբյանի, Հ. Կորխմազյանի, Ա. Մտեփանյանի, Ան. Հովհաննիսյանի և այլոց անունները: Ես կցանկանայի նաև հիշել 1998թ. այս կյանքին հրաժեշտ տված Գ. Աարզայանին, որը տնօրենի պաշտոնից հեռանալուց հետո էլ մշտապես հետևում էր ինստիտուտի գիտական գործունեությանը և լավատեսյակ էր նրանում ընթացող պրոցեսներին: Նա մահվանից մի երեք ամիս առաջ եկավ ինստիտուտ և հանգամանալից գրույց ունեցավ ինձ հետ ինստիտուտի և նրա հետակարգների մասին՝ ջրաքցնելով իր հիացմունքն այն դրական փոփոխությունների առթիվ, որոնք տեղի էին ունենում այն ինստիտուտում, որը նա գլխավորել էր մոտ քառորդ դար: Ավարտելով իր խոսքը, նա բառացիորեն ասաց հետևյալը՝ Նիկոլայ, ես հիմա տեսնում եմ , որ ինստիտուտը, իրոք, վերելք է ապրում և ճիշտ են ասում, որ տեղի է ունեցել վերածնունդ: Այդ կապակցությամբ ես քեզ շնորհավորում եմ: Ես հիմա հանգիստ եմ ինստիտուտի և հայ արևելագիտության ապագայի հանդեպ: Եվ նա իմ ձեռքը ամուր սեղմեց: Չեմ քաջանում որ նրա, որի հետ մենք աշխատել էինք մոտ քառորդ դար և միասին ճաշակել ինստիտուտի լավ ու վատ օրերը, տված զնահատականն ինձ շատ ուրախացրեց, մանավանդ եթե նկատի առնենք, որ նա ընդհանրապես շատ ժլատ էր և գուսպ իր զնահատականների մեջ:

Այսպիսով՝ ԱԻ-ն, ինչպես նաև հայ արևելագիտական գեներալը ոչ միայն պահպանվեցին, այլև համարվեցին և հետագա զարգացում ունեցան:

Երկրորդ կարևոր խնդիրը, որը հասնեց ԱԻ-ի և իմ՝ որպես ինստիտուտի ղեկավարի ստջև, և որն առանցքային բնույթ ուներ, կապված էր այն իրողության հետ, որ Հայաստանը դարձել էր անկախ պետություն և դրան համապատասխան անհրաժեշտություն առաջացավ վախճել հայ արևելագիտության հայեցակարգը և ֆունկցիաները:

Խորհրդային Միության գոյության շրջանում նրա տարածքում գործող բոլոր արևելագիտական կենտրոնները՝ այդ թվում և ԱԻ-ն, սպա-



սարկում էին Խորհրդային Միության արևելյան քաղաքակառուցության պահանջները: Խորհրդային Միության փլուզումից հետո այդ խնդիրը վերացավ և նրան փոխարինելու եկավ նորը: Հայաստանը դարձել էր անկախ պետություն և որպես այդպիսին դարձել էր նոր ձևավորված անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածքի օրգանական մասը: Նա արդեն ուներ իր արևելյան քաղաքակառուցությունը: Եվ հայ արևելագիտության խնդիրները համապատասխանաբար պետք է փոփոխության ենթարկվեին: Նա՝ պատկերավոր կերպով ասված, պետք է սպասարկեր Հայաստանի արևելյան քաղաքակառուցությանը, մշակեր նոր մոտեցումներ, առաջարկներ, նոր հանձնարարականներ, լուծումներ և այլն: Տնօրենի կողմից մշակված հայեցակարգի համաձայն՝ հայ արևելագիտությունը, որը Խորհրդային Միության գոյության ժամանակ խորհրդային արևելագիտության մի մասն էր հանդիսանում, Խորհրդային Միության փլուզումից հետո դարձել էր, առաջին՝ ազգային գիտություն Արևելքի մասին՝ կազմելով համաշխարհային արևելագիտության բաղկացուցիչ մասը, երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության համար ստրատեգիական նշանակություն ունեցող գիտություն, և, երրորդ, Հայաստանի համար կիրառական նշանակություն ունեցող գիտություն, որի արդյունքները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքակառուցության հիմնական ուղղությունների և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման տեսանկյունից: Եվ այդ հայեցակարգը 1995թ. սկսած դրվեց ԱԻ-ի գիտական գործունեության հիմքում: Ինստիտուտի հետագուտական աշխատանքները հանգեցրին այն եզրակացությանը, որ Հայաստանը անկախության միջանկյալ հետո դարձել է մերձավորարևելյան և անդրկովկասյան աշխարհաքաղաքական շրջանի քաղաքական, ռազմական, տնտեսական և տարածաշրջանային-կոմունիկացիոն կարևոր գործոն, որն անհնար է անտեսել կամ հաշվից դուրս մտնել:

Արևելագիտության վերածումը ստրատեգիական նշանակություն ունեցող գիտության քարձրացրեց նրա նշանակությունը հասարակական գիտությունների համակարգում:

Հայ արևելագիտությունը՝ որպես ազգային գիտություն, սպասարկում է հայոց պետության ոչ միայն գիտական, այլև քաղաքական պահանջները: Այդ քննազավադին վերաբերող հայ արևելագետների ուսումնասիրությունները, ինչպես նշվեց, խիստ կարևոր նշանակություն ունեն Հայաստանի արտաքին քաղաքակառուցության և ազգային անվտանգության հայեցակարգի մշակման համար:

Հարկ է նշել նաև, որ այդ հայեցակարգի շրջանակներում գործնական համագործակցություն հաստատվեց Արևելագիտության ինստիտուտի և Հայաստանի արտաքին քաղաքակառուցությունն իրականացնող մարմինների՝ Հանրապետության պրեզիդենտի աշխատակազմի, ար-

տաքին գործերի նախարարության, Հայաստանի արտասահմանյան ներկայացուցչությունների, մասնավորապես Եգիպտոսում, Լիբանանում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Չինաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում Հայաստանի դեսպանությունների հետ: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ՝ որպես մասնագետ-փորձագետներ, արտաքին գործերի նախարարության կողմից հրավիրվում են զանազան հարցերի քննարկմանը: Իսկ ինստիտուտի տնօրենը՝ որպես պատվիրակության անդամ, հաճախ մասնակցում է Հայաստանի պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանի արտասահմանյան պաշտոնական այցերին: Այդ առումով հիշատակության են արժանի պետական պաշտոնական այցելությունները Հնդկաստան՝ 2003թ. և Չինաստան՝ 2004թ.: Իսկ 2006թ. փետրվարին Եգիպտոսի Աքսանդրիա քաղաքում՝ Եգիպտոսում Հայաստանի դեսպանության անմիջական աջակցությամբ տեղի ունեցավ հայ-եգիպտական գիտական համաժողով՝ նվիրված «Հայ-եգիպտական պատմաքաղաքական հարաբերություններին»: Դա առաջին դեպքն էր ինստիտուտի պատմության մեջ, երբ հայ-արաբական հարաբերություններին նվիրված գիտաժողով էր կազմակերպվում ուսումնասիրվող երկրում:

Ար-ի համագործակցությունը հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների հետ, որի հիմքերը դրվեցին 1990-ականների վերջերին և հետագա զարգացում ստացան XXI դարի սկզբներին, մոտ երևույթ է, որը նախկինում բացակայում էր: Նա եկավ ապացուցելու հայ արևելագիտության ներուժն ու կարևորությունը, նրա աստղատեղիական բնույթի գիտական ուղղություն լինելը: Այդ ստումով նա հանդիսանում է «պետություն-գիտություն» համագործակցության հիմնադիր օրինակ:

Նոր ժամանակները և նոր պահանջները հրամայական դարձրեցին փոփոխություն մտցնել նաև մի այնպիսի սկզբունքային հարցում, ինչպիսին ինստիտուտի ուսումնասիրությունների արեալի հարցն է: Թե՛ սեկտորի հիմնադրման, և թե՛ ինստիտուտի կազմավորման ժամանակ գիտական և պետական ղեկավար մարմինների կողմից հայ արևելագիտական կենտրոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների տարածաշրջան էր հաստատված Մերձավոր և Միջին Արևելքը: Եվ նրանց հետազոտական աշխատանքի կենտրոնում գտնվում էր այդ արեալն ու նրա կազմի մեջ մտնող երկրները:

Անկախության նվաճումից հետո ղեկավարվեցին Հայաստանի արտաքին քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները նաև աշխարհի տարբեր երկրների հետ, որոնք չէին մտնում Մերձավոր և Միջին Արևելքի աշխարհագրական սահմանների մեջ: Հայաստանի համար կարևոր դարձան հարաբերությունների հաստատումն ու զարգացումն այնպիսի երկրների հետ՝ ինչպես Հնդկաստանը, Չինաստանը,

տանը, Վասպուրիան և նախկին խորհրդային միջինասիական հանրապետությունները :

Դ-ս համապատասխան խնդիրներ առաջադրեց Արևելագիտության ինստիտուտի առջև՝ նրանում կառուցվածքային փոփոխություն մտցնելու տեսանկյունից: Մեծավոր ու Միջին Արևելքն այլևս մեղ էր գալիս հայ արևելագիտությանը և մա չէր կարող տեղավորվել նրա զգեստում ու սահմանափակվել միայն այդ տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Այդպես հասունացավ Արևելագիտության ինստիտուտի ուսումնասիրությունների ոլորտում Արևելյան Ասիայի երկրների պատմության, քաղաքականության, տնտեսության, նրանց հետ Հայաստանի միջպետական հարաբերությունների հարցերի ուսումնասիրությունը ներառներու զաղափարը: Երբ համապատասխան բաժին բացելը դարձավ օրակարգի հարց: ԱԻ-ին հանդես եկավ իր կազմում մնացած բաժին ունեցալու նախաձեռնությանը, որն արժանացավ ՀՀ ԳԱԱ նախագահատության և ՀՀ արտաքին գործերի նախարարության ամենաակտիվ աջակցությանը: Հարցը մտցվեց Հայաստանի կառավարության քննարկմանը, որը 2002թ. սեպտեմբերի 18-ին որոշում ընդունեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կազմում ստեղծել Արևելյան Ասիայի բաժին (դեկ. 11-Կարապետյան):

Այդ բաժնի գլխավոր խնդիրները համարվեցին այդ տարածաշրջանի, հատկապես Հնդկաստանի, Չինաստանի, Վասպուրիայի, ժամանակակից պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության և տարածաշրջանի աշխարհաքաղաքական հարցերի, նրանց հետ Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների, այդ երկրների հետ հայերի պատմամշակութային կապերի և հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը:

Բաժնի պարտականությունների մեջ է մտնում նաև ՀՀ կառավարության, արտաքին գործերի նախարարության և պետական այլ մարմինների համար վերլուծական համապատասխան նյութերի, առաջարկությունների և հանձնարարականների պատրաստումը:

Դրա շնորհիվ հայ արևելագիտության ուսումնասիրության արհեստը խիստ ընդարձակվեց և այսօր այն ընդգրկում է մի վիթխարի տարածաշրջան՝ պատկերավոր ասված՝ Բոսֆորից մինչև Խտաղ օվկիանոս: Այդ տարածաշրջանի արևմտյան եզրը Թուրքիան է, իսկ արևելյանը՝ Վասպուրիան: Դրանով ևս մեկ լուրջ քայլ կատարվեց հայ արևելագիտությունն ավելի ամբողջական, բազմաշերտ և բազմարևոյթ դարձնելու ճանապարհին:

Շատ քիչ արևելագիտական կենտրոններ կան այսօր, որոնք ունեն մնաց ընդարձակ գիտական դաշտ:

Հայ արևելագիտական կենտրոնն իր գոյության համարյա 50 տարիների ընթացքում հրատարակել է մոտ 350 մեծագրական աշխատություն և ժողովածու ու մի քանի հազարի հասնող գիտական հոդված: Դրանց նշանակալի մասը համապատասխան օտար լեզուներով հրատարակվել է արտասահմանյան տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Կանադայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում, Վրաստանում, Դանիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Հնդկաստանում և այլուր: Ուշագրավ է, որ հայ արևելագետների աշխատությունները քարգմանվել և տպագրվել են նաև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, այսինքն այն երկրներում, որոնց ժողովուրդներին են անմիջականորեն հասցեագրված նրանց ուսումնասիրությունները: Այդ աշխատությունները լույս են տեսել Արաբական Միացյալ Էմիրություններում, Եգիպտոսում, Թուրքիայում, Իրանում, Իրաքում, Լիբանանում, Սիրիայում, Քուվեյթում և այլուր: Դավկայում է այն հետաքրքրյալ մասին, որ արտասահմանյան մասնագետները դրսևորում են հայ արևելագետների աշխատությունների նկատմամբ՝ մի կողմից, և այն համզամանքի մասին, որ հայ արևելագետների աշխատություններն ավելի ու ավելի լայնորեն են ներգրավում միջազգային ոլորտի մեջ՝ մյուս կողմից:

Վերջին տաս տարիներին բովանդակային փոփոխության են քարկվեցին ԱԲ-ի գիտական համագործակցության ձևերը արտասահմանյան գիտական կենտրոններ հետ: Նախ, նշենք, որ խորհրդային տարիներին հանրապետությունների ինստիտուտները զրկված էին ըստ իրենց հայեցողության անմիջական գիտական կապեր հաստատել այս կամ այն արտասահմանյան գիտական կենտրոնի հետ: Այդ բոլորը գտնվում էր Մոսկվայի և նրա համապատասխան մարմինների հսկողության ներքո: Հայաստանի անկախումից հետո այդ արգելքը վերացվեց և նոր հնարավորություններ բացվեցին ինստիտուտների առջև: Բայց առաջացան նաև նոր դժվարություններ՝ կապված ինստիտուտների ֆինանսական և տնտեսական նվազ հնարավորությունների հետ: Այդուհանդերձ, համագործակցության հնարավորություններն այժմ անհամեմատելի ավելի քարենպաստ են, քան երբևիցե եղել են:

ԱԲ-ն՝ պահպանելով համագործակցության հին ձևերը՝ մասնագետների փոխադարձ այցելություն, գիտաժողովների մասնակցություն, զրբավտխանակություն և այլն, նախապատվությունը վերջին տարիներին տալիս է համագործակցության հաստատմանը պայմանագրային հիմքի վրա, որն ավելի հուսալի, կոնկրետ և արդյունավետ ձև է: ԱԲ-ն գիտական համագործակցության վերաբերյալ պայամանագրեր է ստորագրել Դամասկոսի արաբական հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտի (14.IV.2000թ.), Չանդիգարի (Հնդկաստան) գիտահետազոտական կենտրոնի (16.V.2003թ.), Դելիի Քաղաքական հետազոտությ-

յունենքի ինստիտուտի (31.X.2003թ.), Չինաստանի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի (5.XII.2003թ.), Մերձավոր Արևելքի ֆրանսիական ինստիտուտի (15.VII.2004թ.), իսկ 2006թ. մայիսի 16-ին՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի հետ: Այդ պայմանագրերը ոչ քե ձևական բնույթ են կրում, այլ գործող փաստաթղթեր են: Ար-ն համագործակցում է նաև այլ գիտական կենտրոնների հետ:

Դամասկոսի վերոնշյալ ինստիտուտի հրավերով յուրաքանչյուր տարի Ար-ի մի քանի երիտասարդ մասնագետները մեկ ամիս ժամանակով մեկնում են Դամասկոս գիտական աշխատանք կատարելու համար: Այդ ինստիտուտն իր վրա է վերցնում Ար-ի գիտաշխատողների բոլոր ծախսերը: Ար-ն փոխադարձաբար և նույն հիմունքներով ընդունում է այդ ինստիտուտի աշխատակիցներին:

Ինստիտուտը ՀՀ արտաքին գործերի նախարարության, Հայաստանում Եգիպտոսի դեսպանության և Եգիպտոսում Հայաստանի դեսպանության աջակցությամբ վերջին շրջանում՝ յուրաքանչյուր տարի մոտ մեկ ամիս ժամանակով, Կահիրեի համալսարան է ուղարկում ինստիտուտի 10 գիտաշխատողների, որոնք այնտեղ լսում են դասախոսություններ և կատարում գիտական աշխատանքներ: Գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է եգիպտական կողմը:

Մի կարևոր փաստ ևս: Երբ Չանդիգարի ինստիտուտի տնօրենի հետ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում ստորագրում էինք համագործակցության պայմանագիր, ապա հնդկական կողմի խնդրանքով պայմանագրում մտցվեց հատուկ կետ այն մասին, որ Հայաստանի Արևելագիտության ինստիտուտը պարտավորվում է օգնել Չանդիգարի Գիտական կենտրոնին՝ նրա կազմում Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոն ստեղծելու հարցում: Մենք սիրառոտաբար համաձայնվեցինք այդ առաջարկության հետ, որն ամրագրվեց այդ երկկողմ պայմանագրում: Մեր պարտականությունների մեջ մտնում էր օգնել հնդիկ գիտնականներին խորհուրդներով, ամերաժեշտ մասնագիտական գրականությունը և այլն, որն Ար-ն կատարեց մեծ պարտամանադրությամբ: 2003թ. նոյեմբերի 1-ին, Հայաստանի պրեզիդենտ Ռաբրտ Քոչարյանի Հնդկաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ, որի ժրագրում նախատեսված էր նաև այցելություն Չանդիգար, տեղի ունեցավ Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնի հանդիսավոր բացումը, որը կատարեց Հայաստանի Հանրապետության պրեզիդենտը: Պետք էր տեսնել, քե ներկաները՝ նահանգի ղեկավարությունը, գիտական կենտրոնի աշխատակիցները, մամուլի ներկայացուցիչները և այլք, որոնք ներկա էին այդ արարողությանը, ինչպիսի խանդավառությամբ ընդունեցին այդ կենտրոնի բացումը: Այդ պահին ես ինձ շատ հպարտ էի գտում:



Արտասահմանյան գիտական կենտրոնների հետ համագործակցության ծրագրերի էական մասն են կազմում մասնատվող աշխատությունների կատարումը և դրանց հրատարակումը: Երկար տարիներ այսպիսի համագործակցություն է իրականացվում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտական ինստիտուտի և Սանկտ-Պետերբուրգի համալսարանի հետ: Վերջերս այդ ոլորտի մեջ ներգրավվեց մաթ. ճապոնիան: ԱՐ-ի Արևելյան Ասիայի համեմատաբար նորակազմ բաժնի աշխատակիցները և Հայաստանի այլ գիտական հաստատությունների մասնագետները ճապոնիայի մասնագետների հետ համատեղ պատրաստեցին «Հայաստան-ճապոնիա» աշխատությունը, որը հայերեն և ճապոներեն լեզուներով լույս տեսավ Երևանում 2005թ., և մեծ արժեքով գտավ ճապոնիայում: Դա առաջին դեպքն էր պատմության մեջ, երբ Հայաստանում ճապոներեն լեզվով ճապոնական իմաստագրերով գիրք է հրատարակվում:

Յուրատեսակ համագործակցություն է հատուկել ԱՐ-ի և ԱՄՆ-ի կոնգրեսի գրադարանի միջև: Կոնգրեսի գրադարանը ԱՐ-ն մտցրել է այն գիտական կարևոր կենտրոնների ցուցակում, որոնց նա ձրիաբար յուրաքանչյուր տարի մատակարարում է որոշակի քանակությամբ մասնագիտական գրականություն, իսկ ԱՐ-ն նրան է ուղարկում իր հրատարակությունները:

Այս բոլորը վկայում է այն ասիան, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը ձեռք է բերել որոշակի միջազգային ճանաչում և մվաճել կարևոր բնագծեր:

Դա է հաստատում մասն այն վիստը, որ արտասահմանյան շատ գիտնականներ իրենց համար պատիվ են համարում իրենց դիտորակյան ատենախոսությունները պաշտպանել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդում՝ «Համաշխարհային պատմություն» մասնագիտության գծով: Մեր գիտական խորհրդում են պաշտպանել և այդ գիտական աստիճանին են արժանացել արտասահմանյան մի շարք գիտնականներ ԱՄՆ-ից, Եգիպտոսից, Իսրայելից, Իտալիայից, Իրանից, Լիբանանից և Սիրիայից:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական բարձր հեղինակության մասին է խոսում մասն այն իրողությունը, որ 2000թ. սեպտեմբերին Մեմբերայում, որտեղ ընթանում էր Արևելագետների համաշխարհային XXXVI կոնգրեսը, մեր հանրապետության Արևելագիտության ինստիտուտը միաձայն ընտրվեց Արևելագիտական և ասիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ, որը գործում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո: Եշեմբ, որ մինչ այդ նրա՝ այդ խտասպահանջ միջազգային կազմակերպության անդամ էր ընդամենը 13 երկիր, այդ թվում արևելագիտության բնագավառում այնպիսի առա-

ջատար և հեղինակություն ունեցող երկրներ, ինչպես ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Վատիկանը, Հնդկաստանը, Հունգարիան և այլն:

Այսպիսով՝ հետադարձ հայացք ձգելով հայ արևելագիտության զարգացման ուղու և նրա նվաճումների վրա, այդ ուղին այլ կերպ, քան հաղթարշավ, չի կարելի գնահատել:

Մակայն աշխարհը արագորեն փոխվում է և նրա հետ փոխվում է նաև Արևելքը՝ լինի Հեռավոր, Մերձավոր, թե Միջին: Նա այլևս միջնադարյան պատկերացումներին համաձայն քարացած, անշարժ կամ դանդաղաշարժ Արևելքը չէ, այլ վերածվել է վերին աստիճանի դինամիկ և արագ զարգացող աշխարհամասի: Փոխվում է նաև նրա տեղը միջազգային համակարգում՝ նա կրավորականից վերածվում է ակտիվ գործունի, և իր վճռական խոսքն է ասելու XXI դարում համաշխարհային քաղաքական եղանակի և տնտեսական համակարգի ձևավորման գործում: Հեռավոր Արևելքում քարձրանում են երկու այնպիսի գիզանուներ, ինչպես Չինաստանը և Հնդկաստանը, որոնց արագընթաց զարգացմանը ապահար աշխարհը հետևում է շունչը պահած: Իր հետագա անակնկալները աշխարհին կմատուցի Վատիկանը: Մեծ փոփոխություններ տեղի կունենան Մերձավոր և Միջին Արևելքում: Նա ոչ միայն չի կորցնի իր դիրքերը, այլև ավելի ծանրակշիռ խոսք կասի XXI դարում՝ և անվերջ արդյունալի քաղաքական կենտրոնից կվերածվի միջազգային հարաբերությունների նոր կարևոր կենտրոնի: Բոսֆորից մինչև Խաղաղ օվկիանոս ձգվող տարածքը՝ շնորհիվ իր մարդկային և բնական անսպառ ռեսուրսների, մոլորակագիտության և կատարելագործման, բացառիկ դերակատարում կունենա և կդառնա համաշխարհային քաղաքականության և տնտեսության ծանրության կենտրոններից մեկը: Եվ դա տեղի կունենա գլոբալիզացիայի դարաշրջանում՝ նրան հատուկ մարտահրավերներով հանդերձ:

Այդ փոփոխությունները նոր խնդիրներ կդնեն համաշխարհային գիտության և նրա անբաժան մասը կազմող արևելագիտության առջև:

Եվ մենք, սիրելի ընթերցող, դույզն ինչ կասկած չունենք, որ ապագայում ևս՝ գլոբալիզացիայի և մարտահրավերների դարաշրջանում, հայ արևելագիտությունը կզունվի խնդիրների քարձրության վրա և կկատարի ստրատեգիական ուղղության իր պատմական առաքելությունը:

NIKOLAY HOVHANNISYAN

FROM BOSPORUS TO PACIFIC OCEAN

A Meditation on the Occasion of the 35<sup>th</sup> Anniversary of the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of Armenia

Establishment of the Institute of Oriental Studies, NAS Armenia, in 1971, was an outstanding event in the scientific life of Armenia and turning point in the history of the Armenian Orientalistics. The main area of studies for the institute at that time was defined the Middle East and the attention of the Armenian Orientalists was focused on the study of the Arab countries, Turkey, Iran, Kurdish problems, Christian East and Ancient East. The article deals with different stages of development of Orientalistics in Armenia, the main tasks, standing before the Institute in each stage, and its achievements. Since the establishment of the Armenian Orientalistic center it was published about 350 monographs and several thousands of scientific articles by the Armenian researchers, some of which in abroad in English, Arabic, Russian, Turkish, Persian, Germany, France, Italian, Japanese etc.

A special period occupies in the history of Orientalistics in Armenia the 1990s, when Armenia restored its independence. It impacted directly on the character and functions of the Orientalistics. If in the Soviet period the Armenian Orientalistics consisted of a part of Soviet Orientalistics, which served mainly the political interests of the ex-Soviet Union, after its dissolution and declaration of independence of Republic of Armenia, the Armenian Orientalistics turned into Armenian national science and its main task became to serve the interests and demands first of all Armenia, which historically and geographically belongs to the Middle Eastern region. The Armenian Orientalistics now is carrying out strategical functions for the independent Armenia.

In this period, when Armenia achieved its independence and started to develop interstate relations with the countries not only of the Middle East, but also of Central and Eastern Asia, as India, China and Japan, it became clear that it is time to enlarge the geographic frames of the scientific study area including in it together with Middle East also the study of the Eastern Asian countries. For that purpose in 2002 a new Department of Eastern Asia was established in the Institute. From that time on the area from Bosphorus (Turkey) to Pacific Ocean (Japan) became the main research field for the Institute of Oriental Studies of Armenia.

Upon the opinion of the author the Institute of Oriental Studies of Armenia is one of the distinguished centers in the field of Orientalistics and is playing significant role in the study of fundamental problems of East from the ancient times to our days.

**ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՀՆԻ ԲԱՅՅՈՒԿՅԱՆ**

**ԻՍԼԱՄԸ ԵՎ ՆՐԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԵՂԱԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՋ ԵՎ  
ՍԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Իսլամը համաշխարհային կրոններից մեկն է, ընդ որում՝ ամենաերիտասարդ կրոնը բուդդայականությունից ու քրիստոնեությունից հետո: ՎII դարում իսլամի ծագումը սոցիալ-քաղաքական մի շարժում էր, որն անվանել են մահմեդական հեղափոխություն, կամ Մուհամմեդի կրոնական հեղափոխություն: Դուրս գալով Արաբական թերակղզու սահմաններից, իսլամի ֆայության միջոցով իսլամը տարածվեց արևմուտքում մինչև Իսպանիա, իսկ արևելքում՝ Հնդկաստան, Չինաստան, Հարավարևելյան Ասիայի երկրներ և այլն: Իսլամի հաղթարշավը շարունակվում է նաև մեր օրերում: Գործնականում այժմ նա թափանցել է աշխարհի բոլոր մայրցամաքները, թեև նրա ավանդական տարածման շրջաններ են հանդիսանում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները և Հյուսիսային Աֆրիկան: Մեր օրերում իսլամ է դավանում երկրագնդի մոտ մեկ միլիարդ երկու հարյուր միլիոն ազգաբնակչություն: 1 Այսօր մահմեդական աշխարհը իր չափերով ու բնակչության թվաքանակով մի վիթխարի տարածք ու զանգված է, որը գնալով մեծանում է: Ենթադրվում է, որ XXI դարի ընթացքում իսլամը խաղաղ ճանապարհով նվաճելու է նորանոր տարածքներ, իսկ 20-25 տարուց հետո մահմեդական երկրների բնակչությունը դառնալու է երկու միլիարդ: 2 Ներկայումս մուսուլմանական աշխարհը կազմում է ամենաբարձր ծննդաբերության գոտին, նրանում բնակչության աճի ցուցանիշը աշխարհում ամենաբարձրերից մեկն է: Բացի այդ, իսլամական երկրների բնակչությունը երիտասարդ է՝ 40%-ից ավելին 15 տարեկանից ցածր է, իսկ դա նշանակում է, որ նրանցում առկա է հսկայական աշխատուժի ռեզերվ: Բացի այդ, իսլամի ավանդական տարածման շրջանների բոլոր պետություններում, բացի Աֆղանստանից և Իրաքից, մարդկանց կյանքի տևողությունը արդեն անցել է 60 տարուց, մինչդեռ XXI դ. կեսերին այն կազմում էր ընդամենը 35-40 տարի: Պատասխանում չէ, որ որոշ վերլուծաբաններ սկսել են իսլամը դիտարկել որպես

ժողովրդագրական (դեմոգրաֆիկ) վտանգ<sup>3</sup>: Կասկածից վեր է, որ հոգուտ մուսուլմանների գոյություն ունեցող ժողովրդագրական հաշվեկշիռը ոչ հեռու ապագայում անխուսափելիորեն կստեղծի նոր քաղաքական իրավիճակ:

Իսլամական երկրներն ունեն մեծ վիթխարի տնտեսական ներուժ. բավական է ասել, որ այդ երկրների 49% տարածքը պիտանի է հողագործության համար, մինչդեռ ներկայումս մշակվում է միայն դրանց 14%-ը: Հսկայական է նաև նրանց ընդերքի հարստությունները, հատկապես էներգակիրների՝ նավթի և գազի պաշարները: Իսլամի տարածման գոտում հարածուն կերպով ընթանում է ինդուստրիալիզացման գործընթաց, աճում է նրանց համախառն ներքին արդյունքն ու բնակչության կենսամակարդակը, թեև այդ տարածաշրջանը մեկ շնչին ընկնող եկամուտների չափով երկու անգամ հետ է մնում ընդհանուր համաշխարհային մակարդակից և տեսանելի ապագայի շրջանակներում, ամենայն հավանականությամբ, այդ համամասնությունը չի վախճվի:

Մուսուլմանական երկրներում ստեղծվել է մեծ հսկայական ռազմական ներուժ, շատ երկրներ ունեն սեփական ռազմաարդյունաբերական համալիրներ, որոնք ի վիճակի են արտադրելու ժամանակակից սպառազինության բազմապիսի տեսականի: Մահմեդական աշխարհը օժտված է մեծ իր սեփական «իսլամական միջուկային զենքով» (Պակիստան) և ապագայում չի քայքայվում մեծ ռազմական հարստությունը այլ պետություններում: Վերջապես անշեղորեն զարգանում է մեծ իսլամական աշխարհի մտավոր-գիտական ներուժը: Հատկապես վերջին տարիներս ուժգին թափ է ստացել (ճիշտ է ոչ բոլոր իսլամադավան երկրներում) ինտելեկտուալ-կրթական մակարդակի բարձրացումը և նոր սերնդի շփումները բարձր տեխնոլոգիաների հետ: Այդ երկրներում հարածուն կերպով մեծանում է կոմունիկացիաների և տեղեկատվության ժամանակակից միջոցներից, նախ և առաջ ինտերնետից օգտվողների թիվը: Այդ ցուցանիշը միայն 2002 թ. ավելացավ 2-3 անգամ (Եգիպտոսում՝ համարյա չորս անգամ), Թուրքիայում այն հասավ 5,1 միլիոն մարդու, Իրանում՝ 3,2 միլիոնի, Պակիստանում՝ 1,5 միլիոնի և այլն: Մահմեդական Արևելքի համարյա բոլոր երկրներում մկատելիորեն աճել է մեծ կամանակագրության ցուցանիշները: Այսպես, վերջին 12 տարիների ընթացքում Սաուդյան Արաբիայում այն աճել է 50-ից մինչև 69%, Օմանում՝ 38-ից մինչև 65%, Թուրքիայում՝ 66-ից մինչև 79%, Իրանում՝ 54-ից մինչև 70%, Միքիայում 48-ից մինչև 78%: Վերջապես աշխարհում մահմեդականներով բնակեցված շրջաններն ունեն առաջնակարգ ստրատեգիական նշանակություն, ծովային, ցամաքային և օդային կոմունիկացիաների ծավալում գանգ: Այս բոլորն, անշուշտ, կայուն երաշխիք է հանդիսանում այն քանի, որ համաշխարհային մասշտաբով ուժեղանալու է իսլամա-

կան պետությունների ազդեցությունը իրադարձությունների ընթացքի վրա:

Արդ, ո՞րն է միաստվածության (մոնոթեիզմի) սկզբունքի վրա խարսխված այդ կրոնի ներքին ուժը, կենսունակությունը և նաև նրա արագ տարածման ու ծավալման ամողջվածը: Անկասկած իսլամն ավելին է, քան պարզապես հավատքը: Այն ոչ միայն կրոն է, այլև տնտեսական ու սոցիալական բարդ կառույց, կառավարման համակարգ, մշակութային երևույթ և նույնիսկ կենցաղ ու ապրելակերպ: Իսլամը կանոնակարգում է կյանքի բոլոր բնագավառները, որոշում է ոչ միայն մշակութային, սոցիալական և իրավական հարցերը, այլև մտնում մտապնդմանակամ համայնքի անդամների անհատական հարաբերությունների մեջ: Իսլամը ներգործության մեծ ուժ ունի զանգվածային գիտակցության վրա, քանի որ այդ գիտակցության իսլամական ստերեոտիպները ընդգրկում են ոչ միայն բարոյա-էթիկական բնագավառը, այլև ամձի որջ վարքագիծը ընտանիքում և հասարակության մեջ, ներառյալ նաև տնտեսական գործունեությունը: Վերջապես հայտնի իրողությունն է, որ իսլամը միշտ էլ հավակնել է ձեռք բերել ունիվերսալ կրոնի կարգավիճակ:

Իսլամը ոչ թե մեկ ազգի կամ ժողովրդի, այլ մահմեդականների համաշխարհային համայնքի («ումմա») կրոն է, որի համար քաղաքական սահմաններ գոյություն չունեն: Այլ կերպ ասած, իսլամին բնորոշ է տոտալ բնույթը: Այն նաև վերին աստիճանի ներքին մեծ լիցք պարունակող և դինամիկ կրոն է:

Գարունիք չէ, որ մահմեդական բնակչության շրջանում մեր օրերում ևս կրոնական աշխարհայացքը շարունակում է մնալ որպես տիրապետող: Մահմեդական արևելքի երկրներում քաղաքական իրադարձությունները մարդկանց կողմից հիմնականում ընկալվում են կրոնի պրիզմայի միջոցով: «Հայրենիք», «ազգ» հասկացությունները երկար ժամանակ նրանց մոտ կապվում էին կոնկրետ կրոնական համայնքին («ումմային») պատկանելու գիտակցության հետ, այլ ոչ թե իրենց բնակության վայրի էթնիկական խմբի կամ տարածքի հետ: Այլ կերպ ասած, մահմեդականի համար առաջնայինը կրոնն էր, ապա նոր ազգությունը: Միայն տևական ճանապարհ անցնելուց հետո նրանց մոտ ձևավորվեց ազգային ինքնագիտակցություն: Ասկայն դա տեղի էր ունենում ոչ այնքան կրոնական ընդհանրության քուլտուրան հաշվին, որքան հենց դրա: Իսլամը նույնացվում էր ազգային ինքնագիտակցության հետ:

XXI դ. 60-ական թվականները նշանավորվեցին իսլամի աննախնդր քայլ աշխուժացմամբ, որը ստացել է «իսլամական բուռն» կամ «իսլամի վերածնունդ» անվանումը: Դա մի շրջան էր, երբ իսլամը վերածվեց քաղաքական հզոր սոցիալ-քաղաքական ուժի: Այդ կրոնական վերածնունդի սկիզբ է համարվում 1967թ. արաբա-իսրայելական «օկեցորյա» պատերազմը, որի հետևանքով Իսրայելը գրավեց մի շարք արաբական տա-

րածքներ, այդ թվում նաև իր նշանակությամբ երրորդ մահմեդական սրբավայրը՝ Երուսաղեմը: Այդ իրադարձությունից հետո պայքարը մահմեդականների միասնության համար հանում Բողոքի՝ Երուսաղեմի ազատագրման, հանդիսանում է իսլամական երկրների արտաքին քաղաքականության անկյունաքարը:

Աննախընթաց կերպով ուժեղացան նաև քաղաքականության «իսլամականացման» միտումները: Սի շարք պետություններում կառավարող վարչակարգերը ավելի ու ավելի լայնորեն սկսեցին իսլամն ընդգրկել իրենց պաշտոնական գաղափարախոսությունների և քաղաքական կառույցների մեջ, երբեմն հրաժարվելով դեպի արևմտյան մոդերնիզացումը կողմնորոշումից և վաղ իսլամի վերածնունդը համարելով որպես հասարակական առաջընթացի հիմք: Իսլամի քաղաքականացման հետ միաժամանակ տեղի էր ունենում մահմեդականների գիտակցության քաղաքականացում: Իսլամի քաղաքականացմամբ հստակորեն ձևավորվեցին արևմտյան կենսակերպի ու մշակույթի դեմ ուղղված տրամադրություններ: Մահմեդական աշխարհի շատ վայրերում արևմուտքը ասոցացվում էր շահագործման, բարոյական կործանման, անպատասխանատու ինդիվիդուալիզմի և սեքսուալ սանձարձակության հետ: Իսլամը սկսեց ավելի ուժգնորեն, քան նախկինում, տեղական խոչընդոտներ հարուցել արևմուտքի գերակայության նկատմամբ: Նա սկսեց ակտիվորեն հակազդել իսլամի տարածման ավանդական շրջաններում Արևմուտքի քաղաքակրթական արժեքների արմատավորմանը:

Մահմեդական աշխարհում կրոնական տրամադրությունների ակտիվացումը մի շարք իսլամագետներ վերագրում են նրան, որ հաղորդակցության և ինֆորմացիայի զարգացման հետևանքով քրիստոնեական մշակույթն ու գաղափարները հախտոն թափով սկսեցին ֆափանցել մահմեդական զանգվածների մեջ, առաջ քերելով համարժեք պաշտպանական ռեակցիա: Մեկ այլ տեսակետի համաձայն, «Մսուղ պատերազմի» տարիներին ազատական կայսրապետ իսլամի կենտրոնաձիգ սոցիալիզմը երրորդ աշխարհի երկրներին համառորեն առաջարկում էին զարգացման իրենց մոդելը, որի հետևանքով իսլամական երկրները կանգնեցին դժվարին երկրներանքների սաջև: Կարծիք կա նաև այն մասին, որ պատմության գիրկն անցած արևելքի և արևմուտքի միջև ատոմային առնակատումը այսօր վտխարիվում է հյուսիս-հարավ առնակատմամբ, դրա տակ հասկանալով քրիստոնեական և մահմեդական մենթալիտետների միջև եղած հակամարտությունը:

Այսպիսով, մինչև XX դ. 60-70-ական թվականները արևմուտքի քաղաքական շրջաններում տիրապետող այն տեսակետը, թե ժամանակակից աշխարհում իսլամը սահմանափակ ներգործություն ունի միջազգային հարաբերություններում մահմեդական պետությունների գործելակերպի ու վարքագծի վրա, համոզիչ փաստերով հերքվեց:

Ի սկզբանե իսլամին բնորոշ էր կրոնի և քաղաքականության միասնությունը: Դրանում կարևոր դերակատարություն է ունեցել այն փաստը, որ հենց ինքը, մարգարեն, նոր կրոնի հիմնադիրը, կրոնական համայնքի ղեկավարը, համայնք, որը վերածվեց պետության. դարձավ այդ տերության քաղաքական ղեկավարը, իր անձի մեջ մարմնավորելով հոգևոր, կրոնական և աշխարհիկ քաղաքական ֆունկցիաների անբաժանելիությունը: Իսլամի հենց այդ անբաժանելիությունը քաղաքականությունից, ժամանակակից զարգացման առանձնահատկությունների պայմաններում, անսպասելիորեն կրկին մղվեց առաջին պլան:

Այդ կրոնը իր սկզբնավորման օրվանից հանդես էր գալիս և՛ որպես կրոնական ուսմունք և՛ որպես քաղաքական ծրագիր: Հենց այդ պատճառով այն կարևոր դերակատարություն ունեցավ արևելքի երկրների քաղաքական մտքի զարգացման գործընթացում: Իսլամը կայուն կերպով ազդում է քաղաքականության վրա, չնայած այն հանգամանքին, որ հասարակական կյանքի աշխարհիկացման համաշխարհային գործընթացը այլևս դարձել է անշրջելի: Ուստի պատահական չէ, որ ժամանակակից իսլամը ևս հանդիսանում է ակտիվ քաղաքական գործոն, այդ թվում նաև միջազգային հարաբերություններում:

Հիրավի, իսլամական պետությունների արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների մեջ իսլամական գործոնը մեծ դերակատարություն ունի: Օրինակ, հայտնի է, որ իսլամն Իրանի Իսլամական Հանրապետությունում ունի պետական կրոնի սահմանադրական կարգավիճակ: Դա ճշանակում է, որ Իրանը հանդիսանում է իսլամական պետություն, այլ ոչ թե պարզապես իսլամական երկիր: 1979թ. իսլամական հեղափոխությունը առհասարակ աննախընթաց մղում հաղորդեց իսլամի քաղաքականացմանը: Դուրս գալով իր ազդեցության առօրյա շրջանակներից՝ մահմեդական կրոնը այսուհետև որոշիչ դեր սկսեց խաղալ իսլամական երկրների հասարակական-քաղաքական կյանքում, պետական կառուցվածքի մեջ և միջազգային հարաբերություններում: Լայնորեն զիտակցվեց նաև այն իրողությունը, որ իսլամական գործոնի օգտագործումը հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ լուծելու մահմեդական պետությունների առջև դրված արտաքին քաղաքական խնդիրները: Արևելքի երկրների բնակչության զանգվածային զիտակցության մեջ կրոնական աշխարհայացքի տիրապետության պայմաններում իսլամական փաստարկումները մահմեդական երկրների կառավարություններին լայն հնարավորություն սկսեցին ընձեռնել առավել մատչելի ձևով բնակչության զիտակցությանը հասցնելու ընդունված որոշումների իմաստը, ստեղծելու իրենց արտաքին քաղաքական քայլերին աջակցող կոնսենսուս, սեփական հասարակության և ողջ մահմեդական աշխարհի աչքում արդարացնելու և օրինականացնելու իրենց վարած արտաքին քաղաքականությունը:



Իրանում իսլամական հեղափոխությունից հետո «իսլամական միասնության» և «համերաշխության» շարժումը դարձավ օրվա հրամայականը: Այն լայնորեն սկսեց օգտագործվել որպես ազդու լծակ մահմեդական պետությունների դիվանագիտության և արտաքին քաղաքականության բնագավառում:<sup>6</sup> Մահմեդական աստվածաբանների կողմից առաջ քաշվող այն դրույթը, որ հավատացյալները չպետք է պասիվորեն սպասեն «աստվածային ֆազավորության» հաստատմանը, այլ մշտապես պետք է պայքարեն իսլամական արժեքների հաղթանակի համար, միա ու արյուն ստացավ իմամ Խոմեյնիի «Հոբու մաք-ե Էլլալի» («Իսլամական կառավարում» կամ «Իսլամական պետություն»)՝ տետրայան մեջ, որը ներկայումս ընկած է ԻԻՀ սահմանադրության հիմքում: Նրանում հիմնավորվում է կրոնապետության հիմքով իսլամական իշխանության գաղափարը: Սահմանադրության «Կառավարման կարգն իսլամում» բաժնում մասնավորապես նշվում է. «Իսլամի տեսանկյունից կառավարու՞թյունը ձևավորվում է ոչ թե դասակարգային, անձնական կամ խմբակային շահերից ելնելով, այլ թիտում է համակրոնակիցների, համախոհների և ժողովրդի իղծերից, որն ինքնազգամակերպվում է, որպեսզի հոգևոր և աշխարհայացքային էվոլյուցիայով հասնի վերջնական նպատակին՝ մերժենալ Մատուն»<sup>6</sup>: Հայտարարվում է, որ «իսլամական հասարակությունը» ազատ է լինելու շահագործումից, «դասակարգային պատերազմներից» և տնտեսական ու քաղաքական ստուժով անկախ՝ Արևմուտքից, որ մարդը նրանում ձեռք կբերի ազատություն և երջանկություն, որ նման հասարակության մեջ կստեղծվեն բոլոր հնարավորությունները անհատի բազմակողմանի զարգացման համար, քանի որ դա՝ իսլամի նպատակն է. որ «իսլամական պետության» մեջ կվերացվեն աղքատությունն ու սոցիալական անարդարությունը, քանի որ իսլամը դատապարտում է յբավորությունը, շահամտությունը, մերժավորի (մախ և առաջ դավանակցի.) դժբախտությունների նկատմամբ անտարբերությունը և այլն»:

ԻԻՀ սահմանադրության մեկ այլ բաժնում նշվում է. «Իսլամական կառավարման նպատակը կայանում է նրանում, որպեսզի բարձրագույն մարդու անհատականությունը, որպես աստվածային համակարգ, ինչպես նաև մարդու հնարավորությունների ծաղկման ու բացահայտման շնորհիվ ցույց տրվի նրա աստվածահաճո լինելը...»<sup>10</sup>: Սահմանադրության 4-րդ հոդվածում այդ բոլորը էլ ավելի է կոնկրետացվում. «Քաղաքացիական, քրեական, ֆինանսական, տնտեսական, վարչական, մշակութային, ռազմական, քաղաքական և այլ կարգի բոլոր օրենքները պետք է հիմնված լինեն իսլամական նորմերի վրա: Այս սկզբունքը տարածվում է սահմանադրության բոլոր հոդվածների, ինչպես նաև բոլոր օրենքների և նորմատիվ ակտերի վրա, իսկ որա որոշումը վերապահված է Պահապան խորհրդի կրոնագետներին»<sup>11</sup>: Հաջորդ 5-րդ հոդվածում ստվում է.

«Վալինե Ասրի» (թող Ալլահը մտտեցնի նրա հայտնությունը) քաջակյություն ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունում առաջնությունը և ժողովրդի հովվապետությունը իրականացնում է արդար ու հավատացյալ, ժամանակի խնդիրներին լավատեղյակ, համարձակ, նախաձեռնող և կազմակերպիչ ֆառիհը՝ առաջնորդը<sup>12</sup>:

Ի դեպ, «վեյաթ-ե ֆառիհի» ինստիտուտը իսլամի մեջ արտացոլում է աշխարհիկի և եզրակրի միասնությունը:

ԻԻՀ սահմանադրության 11-րդ հոդվածը ազդարարում է. «Ըստ Դուրանի... բոլոր մուսուլմանները համարվում են մի ունևա և Իրանի Իսլամական Հանրապետությունը պարտավոր է իր համընդհանուր քաղաքականությունը հիմնել իսլամական ժողովուրդների համախոհության և միասնության վրա՝ հետևողականորեն աշխատելով իրականացնել իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնականությունը»<sup>13</sup>: Այլ կերպ ասած, այդ հոդվածում որպես նպատակ, խտվում է իսլամական աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային միասնության հասնելու ձգտման մասին: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ պանիսլամիզմ, ավելի ճիշտ նեոպանիսլամիզմ. որը ակամայից ԻԻՀ արտաքին քաղաքականությանը հաղորդում է ակտիվ «հարձակողական» բնույթ, միաժամանակ հավակնություն դրսևորելով ԻԻՀ-ը ներկայացնելու որպես իսլամական ժողովուրդների իրական շահերի մեծատեր արտահայտիչ: Մասնաճառությունը նաև պարզաբանում է, որ «մարդկության» (ինն՝ իսլամական ժողովուրդների Վ.Բ.) նպատակը բոլոր մարդկանց կատարյալ հնազանդությունն է Ալլահի կամքին և համաշխարհային մի պետության ստեղծումը, որտեղ բոլորը կդառնան ունևայի անդամներ: Իրանի Իսլամական Հանրապետության ստեղծումը մի էտապ է այդ ճանապարհին: Մասնաճառության 14-րդ հոդվածում ձևակերպվում է իսլամի վերաբերմունքը ոչ մահմեդականների նկատմամբ. «Դուրանի... համաձայն Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը և մահմեդականները պարտավոր են ոչ մահմեդականների նկատմամբ քարյացակամ, բարեհաճ և արդար վերաբերմունք դրսևորել՝ պահպանելով վերջիններիս մարդկային իրավունքները: Այս սկզբունքը տարածվում է այն մարդկանց վրա, ովքեր դավեր չեն նյութում իսլամի և Իրանի Իսլամական Հանրապետության դեմ»<sup>14</sup>:

Իրանում շիական գաղափարախոսները «մահմեդական երկրներին» կոչ են անում միավորվել «Իսլամի միացյալ նահանգներին» և կամ, որ միևնույնն է, «Իսլամական հանրապետությունների դաշինքին» մեջ, վստահություն հայտնելով, որ ողջ երկրագնդի ժողովուրդները վերջ ի վերջո ապրելու են «իսլամի օրենքներով»<sup>15</sup>:

Խոմեյնին և նրա համախոհները շեշտում էին, որ «իսլամական հասարակության» ստեղծման նպատակը նախ և առաջ իսլամի շահերի պաշտպանությունն է: Բարձրագույն իրավաբանական խորհրդի անդամ

այսպիսով Ջավադի Ամենին դեռևս 1981թ. հայտարարել է, որ հենց իր՝ Մուհամմեդ մարգարեի կարծիքով, «հեղափոխությունն անհրաժեշտ է կրոնի ազատագրման և ոչ թե մարդկանց ազատագրման համար», որոնք իբր իրենց ողջ ուժով ձգտում են դառնալ աստծո ստրուկները»<sup>16</sup>։ Այդ տրամաբանությանը համաձայն, պետության մեջ իշխանությունը պետք է կենտրոնացվի «աստծո ծառայելի» ձեռքերում։ Խոմեյնին իսլամական հանրապետությունը բնութագրում է որպես «Մեծն Ալլահի պետություն»։ Խոմեյնիի գաղափարական զինակիցներից մեկի՝ Ֆալեդանիի կարծիքով, «Իսլամական հասարակության մեջ մեկ անձը իրավունք ունի դեկլարելու, սակայն իրավունք չունի տիրապետելու։ Հենց այդ պատճառով իսլամական հասարակության մեջ գոյություն չի ունեցել և գոյություն չունի կառավարող կուսակցություն»։ Իսլամական պետության կառուցման հիմքում, Ֆալեդանիի կարծիքով, ընկած է իսլամի ինտեգրացնող էությունը, որը միավորում է մարդկանց ոչ թե հասարակության դասակարգային միասնության հիմքի վրա, այլ իսլամի նկատմամբ հավատի հիմքի վրա<sup>17</sup>։

Խոմեյնին առաջնակարգ նշանակություն էր տալիս դեպի մահմեդական տարածքի այլ երկրներ «իսլամական հեղափոխության արտահանմանը»։ «Իսլամական հեղափոխության» նպատակը, ըստ Խոմեյնիի, մահմեդականների ուժեղ տարածքային միավորման կազմակերպումն է մեկ միասնական կառավարման ներքո։ Խոմեյնին վարժում էր ներշնչել մահմեդականներին, որ իսլամական համայնքի անդամների միասնությունը, որը «կախման մեջ է գտնվում միայն աստծուց», շատ ավելի քարձր է կանգնած, քան միասնությունը մացիոնայիզմի և անհատի շահերի հիմքի վրա։

Տեղին է նշել, որ թեև ազգայնականությունը աշխարհիկ հասկացություն է, սակայն այն լայնորեն օգտագործվում է իսլամական պետությունների (ԻԻՀ, արաբական երկրների և այլն) կողմից իրենց արտաքին քաղաքականության մեջ։

Նորագույն պատմության ողջ ընթացքում իսլամը և մագիստրալիզմը սերտորեն համագործակցում են միմյանց հետ, ավելի ճիշտ նրանք զգում են մեկը մյուսի կարիքը։ Ազգայնականները սովորաբար դիմում են իսլամին որպես ազգային արժեքների աղբյուրներից մեկի, առաջնորդվելով այն սկզբունքով, որ «տրաքսանյութ քաղաքակրթության հետևում կանգնած է կրոնը»։ Որպես կանոն, իսլամական ազգայնականները հանդես են գալիս մահմեդական ժողովուրդների քաղաքականության քաղաքով և մագիստրալիզմը օգտագործում են որպես միջոց, օրինակ, արևմտաքի երկրներին դեմ պայքարի ճակատ կազմելու համար։ Նույնիսկ լայիք թուրքական հանրապետությունում ազգայինը և կոնֆեսիոնալը հաճախ հանդես են գալիս սերտ միասնությամբ, ճակատելով քուրդ-իսլամական մի սինթեզ։ Մերօրյա քուրդ ազգայնականները հա-

մարյա առանց քացառության, այն տեսակետին են, որ քուրքական մացիոնայիզմը և իսլամը պետք է դիտել սերտ միասնության մեջ: Ավելին. նրանք հանդես են գալիս իսլամի քուրքականացման օգտին. պնդելով, որ հազար տարուց ավել է, ինչ Ալլահի կամոք քուրքը ծառայում է իսլամին և քուրքական հանրապետությունը այն երկիրն է, որ իսլամական աշխարհում զլխավորելու է այդ առաքելությունը:

Հարկ է նշել, որ ազգայնականությունը Իրանում ևս միշտ էլ ունեցել է խորը արմատներ: Ռեզա շահի դիկտատորայի շրջանում այն զլխավորապես հանդես էր գալիս պամիրանիզմի գաղափարախոսության ներքո: Իսլամական վարչակարգը ոչ միայն անցյալից ժառանգեց ազգայնականության գաղափարախոսությունը, այլև մշտապես աշխատել է գործնական քաղաքականության մեջ լայնորեն կիրառել այն: Սակայն ազգայնականությունը ԻԻՀ-ում ունի այն առանձնահատկությունը, որ այն առավելապես կոնֆեսիոնալ բնույթի է: Այդ երկրում անձի կամ հավաքականության իսլամի շիական ուղղությանը պատկանելությունը դիտվում է որպես կոնֆեսիոնալ ազգայնականության հիմք: ԻԻՀ-ում պետական կրոն հռչակված իսլամի շիական ուղղությունը դիտվում է մաև որպես եզակի մի ուսմունք, որն ի վիճակի է լուծել ժամանակակից մարդու առջև կանգնած պրոբլեմները և մոբիլիզացնել հասարակության բոլոր անդամների եռանդը ստեղծագործ աշխատանքի համար:

Կասկածից վեր է, սակայն, որ առայժմ մահմեդական արևելքի երկրները իրենց միջազգային հարաբերություններում իսլամական արժեքների համեմատ այնուամենայնիվ առաջնությունը տալիս են պրագմատիստական շահերին: Տարակույս չի կարող լինել այն հարցում, որ արդի աշխարհում առաջին հերթին ոչ թե կրոնական արժեքները, այլ ժամանակակից ազգային զարգացման պահանջները, մասնավորապես ներքաղաքական կայունության ամրապնդումը, կառավարող վարչակարգի լեզվախմբության ապահովումը, տնտեսական աճի արագացումը, սոցիալական կոնֆլիկտների լուծումը և այլ որոշիչ գործոններ են հիմք հանդիսանում մահմեդական պետությունների կառավարող վերնախավի արտաքին քաղաքականության հիմնական մպատակներն ու խնդիրները ձևավորելիս: Ինչ վերաբերում է կրոնական արժեքներին, ապա դրանք մասնակցություն են բերում գործընթացներին միայն այն ժամանակ, երբ համընկնելով արտաքին քաղաքականության պրագմատիստական մպատակներին ու խնդիրներին հետ՝ հանդես են գալիս լրացուցիչ խթանի դերում՝ ստեղծելով մախադդյալներ այս կամ այն արտաքին քաղաքական վճռի ընդունման համար:

Որպես տիպիկ օրինակ բերենք Իրանի Իսլամական Հանրապետության պրակտիկան: Ընդհանրապես պետք է նշել, որ ավանդաբար իրանական քաղաքական մտածողությանը և դիվանագիտությանը բնորոշ է եղել պրագմատիզմը: ԻԻՀ անցած քառորդ դար ճանապարհը վկայում

է, որ այդ պետության քաղաքականությունն ու պրակտիկան տեղապատույտ չի կատարում, այլ մշտապես ենթարկվում է փոփոխության, երբեմն նույնիսկ արժանատի փոփոխությունների:

Հայտնի է, օրինակ, որ XX դ. 80-ական թվականներին Իրանի քաղաքական, տնտեսական, գաղափարական և մշակութային կյանքը ենթարկվեց արժանատի փոփոխության, որն ընդունված է ամրապնդել «մշակութային հեղափոխություն» («էնդելաք-ե ֆարհանգի»), կամ «մշակութային վերածնունդ» («էնյայ-ե ֆարհանգի»): Ընդ որում, այդ շարժումը իշխանությունների կողմից իրականացվում էր «ոչ արևելք, ոչ արևմուտք, այլ իսլամ» կարգախոսի ներքո: Հետագայում այդ կտրուկ քաղաքականությունը արձանագրեց մահաճգ և տեղի ունեցան որոշակի փոփոխություններ, որոնք ընթացում էին բոլոր վեկտորներով՝ քաղաքական, տնտեսական, արտաքին քաղաքական, ռազմական մշակութային և այլն: Ուշագրավ է, որ այդ տեղաշարժերն ու փոփոխությունները ևս - հիմնավորվում էին իսլամական նորմերով: Այսպես, ժամանակին այսօրվա Խոմենինի հրապարակել էր այսպես կոչված «Եղբայրական խարտիա» («Մանշուրե քարադարի»), որտեղ նշվում էր, որ իջջիհադի (իսլամի մեկնաբանման) դարպասները բաց են բոլորի համար, և հասարակության կյանքի վերաբերյալ տարբեր տեսակետները հնարավոր են և օգտակար, եթե դրանք ուղղված են իսլամական պետության ամրապնդմանը<sup>16</sup>: Սա անշուշտ վկայում է այն մասին, որ Իրանում ներքին և արտաքին քաղաքականության մեջ փոփոխությունների շարժիչ ուժ է հանդիսանում պետական նպատակահարմարության և ազգային շահերի սկզբունքը: Որպես դրա ցայտուն օրինակ կարելի է բերել ԻԻՀ քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ, երբ Թեհրանը որպես կանոն տարբերություն չի դնում մահմեդական և քրիստոնյա լինելու հանգամանքի մեջ:

Առհասարակ պետք է նշել, որ Իրանի քաղաքական էլիտայի մի որոշակի հատված, այսպես կոչված պրագմատիկները, համապատասխանորեն է արձագանքում համաշխարհային զարգացման պահանջների նկատմամբ, ձգտելով նրանից Իրանի համար քաղել առավելագույն օգուտներ: Մինչդեռ այդ նույն էլիտայի մեջ շիջ չեն քարձր պաշտոններ զբաղեցնող այն գործիչները, որոնք ղեկավարվում են առավելապես գաղափարական կամ իսլամական սկզբունքներով:

1997թ. գարնանը մախազահական ընտրությունների ժամանակ տանելով համոզիչ հաղթանակ և ստանձնելով պետության ղեկը, Մահմուդ Խաթամին փոփոխության ենթարկեց մաս երկրի արտաքին քաղաքական ռազմավարությունը: «Իսլամական հեղափոխության արտահանման» տեսությանը փոխարինելու եկավ «քաղաքակրթությունների երկխոսության» մշակութային-քաղաքական հայեցակարգը: Այլ կերպ ասած, Խաթամին էթնո-ազգային հենքի վրա ստեղծատու մեղքին հա-

կադրեց միջադարձայնական մշակութային երկխոսության սկզբունքը: Այնուհետև, եթե նախկինում հեղափոխության արտահանման դոկտրինը հանդես էր գալիս խիստ ռազմաշունչ ոգով, որը խոցելի էր դարձնում ԻԻՀ արտաքին քաղաքականությունը, ապա Խաբաթմինի օրոք այն ենթարկվեց որոշ ազատականացման, ստանալով հետևյալ ձևակերպումը. «հեղափոխությունը արտահանվում է ոչ թե սվինների ծայրով, այլ օրինակի հոգևոր գերազանցության ուժով»: Լինելով հոգևորական և պատշաճ մատուցելով իսլամական կրոնին, Խաբաթմին միաժամանակ համոզված ազգայնական էր, որովհետև հասկանում էր, որ իրանական ազգայնականության գաղափարախոսությունը՝ պանիրանիզմը, ազգին ոգևորելու և նրա պետական հավարտությունը բարձրացնելու մի վիթխարի ուժ է: Նրա խորը համոզմամբ, շահական վարչակարգի տապալումից հետո, արհեստականորեն մոռացության փոշիների տակ մոցված ազգայնականությունը հենց այն միջոցն է, որը կրոնի հետ ձեռք-ձեռքի տված կարող է ապահովել իրանական ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը և ստեղծել ազգային համերաշխության հասարակություն: Խաբաթմին ոչ միայն վերածում էր զարկ տալ իրանական ազգայնականությանը, այլև համակարգել իսլամական արժեքները՝ օգտվելով նաև արևմտյան հնարքներից: Պատահական չէ, որ ԻԻՀ նախկին նախագահը մշտապես շեշտում էր, որ իր կողմից խոստացված սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական հավասարակշռության հասարակությունը իր հիմքում անպայման պետք է լինի իսլամական և ոչ երբեք աշխարհիկ (սեկուլյարիստական):

Հիանալի գիտակցելով, որ իր քաղաքական ծրագրի և նրա գաղափարախոսության առանձին դրույթներ մերժվելու կամ վերապահությանը են ընդունվելու ծայրահեղական-արմատական հոգևորականության կողմից, Խաբաթմին աշխատում էր ապավինել «չափավոր» կամ լիբերալ հոգևորականության, ինչպես նաև իսլամական ներշնչումներով տոգորված «հասարակ մարդկանց» աջակցությանը, հույս ունենալով նրանց օգտագործել որպես միջնորդի՝ ապահովելու համար իր շփումները քաղաքական ավանգարդի և լայն զանգվածների հետ, նրանց մոքիլիզացնելու և «զծելու» համար իր առաջադրած ծրագրերի իրագործմանը: Պետք է խոստովանել, որ նրա այդ քաղաքականությունը մշտապես ստիպում էր նրան երկրի քաղաքական տարբեր ուժերի միջև վարել նրբին հավասարակշռության քաղաքականություն, իսկ երբեմն էլ հավասարակշռել նույնիսկ անդունդի եզրին:

Խաբաթմին կատավարման շրջանում հայտարարվեց, որ լինելով իսլամական-աստվածապետական պետություն, ԻԻՀ իր ազդեցությունը տարածելու գլխավոր գործոն է համարում ոչ թե իր իսլամական ընդհանրությունը մի շարք երկրների հետ, այլ մշակութային գործոնը, ֆարսի լեզուն որպես միավորիչ ազդակ, Իրանի դարավոր մշակութային ժառանգ-

գությունը և այլն: Հատկապես Իրանի պետական լեզուն՝ ֆարսին դիտարկվում էր որպես ռազմավարական, մշակութաքաղաքական ժառանգություն: Ունենալ այն նույնիսկ հռչակեցին որպես «խսլամի երկրորդ լեզու»՝ արաբերենից հետո: Եթե Թուրքիան տարածաշրջանի հետ իր իսլամական ընդհանրության հետ միաժամանակ առաջադրում էր նաև քյուրքական նացիոնալիզմը, ապա Իրանը՝ կրոնի հետ միաժամանակ նաև հին իրանական մշակութային միասնությունը կամ ընդհանրությունը, այն համարելով մի լծակ, որը ապագայում կարող է այսպես կոչված «իրանական աշխարհի» մեջ համախմբել տարածաշրջանի երկրներին մեծ մասին: Պատահական չէ, որ Խաթամիի նախագահության շրջանում Իրանը քայլ առ քայլ ուժեղացնում էր իր մշակութային ազդեցությունը տարածաշրջանում: Այնուհետև, եթե Խոմեյնիի արտաքին քաղաքական կոնցեպցիան ժխտում էր միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը, կոչ անելով ստեղծել իսլամական համաշխարհային կարգ, ապա Խաթամիի կառավարման օրոք ԻԻՀ քաղաքական քառասունյակից ըստ էության հանվեց իսլամական ունիվերսալիզմի վերաբերյալ իմամի հայտնի դրույթը. «Իրանում մասնեղականները չեն դադարեցնի իրենց պայքարը, մինչև որ չհաստատվի համաշխարհային իսլամական վարչակարգ»:

Նախագահ Մահմուդ Ահմադինեժադի իշխանության գլուխ գալը ճշանավորվեց ԻԻՀ արտաքին քաղաքականության էական փոփոխություններով: Արտաքին քաղաքական հարցերի կապակցությամբ լայնորեն շրջանառության մեջ մտավ հակասեռնիզմը, Իսրայել պետության գոյության իրավունքի մերժումը, «թշնամու կերպարի» գաղափարը, ինչպես նաև հակաարևմտյան ֆրագմենտիզմը: Իրանը ավելի համախմբվեց ներկայացվել որպես աշխարհի առավել ակտիվ «հեղափոխական ու առաջադիմական ուժ» և այլն: Մակայն պետք է ճշել, որ ԻԻՀ նոր նախագահը երկրի արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքների մեջ արմատական փոփոխություններ չմտցրեց: Նախկինի պես Թեհրանը գտնում է, որ պետք է պահպանվի ստկա երկրաքաղաքական հավասարակշռությունը, Իրանը և տարածաշրջանի երկրները չպետք է թույլ տան, որ արտաքին ուժերը միջամտեն ռեգիոնի երկրների ներքին գործերին, կամ փորձեն այս կամ այն ձևով որոշել տարածաշրջանի երկրների հետագա ճակատագիրը:

Միանգամայն ակնհայտ է, որ նախագահ Մ Ահմադինեժադի հիպոթերոֆիկացված հակասեռնիզմը ունի իսլամական ենթահող: Մասնավորապես Իրանն աշխատում է իր համար ստեղծել «սիոնիզմի դեմ իսլամական ժողովուրդների պայքարի առաջնորդի» վարկ, որը վերջին հաշվով միտված է ապահովել տարածաշրջանային մասշտաբով Իրանի համար առաջատար դիրքեր: Առհասարակ Իրանի նոր վարչակարգը լայնորեն դիմում է իսլամին, որպես զանգվածներին ակտիվացնելու

վտասանելի միջոցի: Ինչպես և ժամանակին խոսնեցինք, Մ. Անժաղինժու-  
ղը մշտապես շեշտում է, որ ժողովրդավարության գաղափարը ԻԻՀ-ում  
երբեք չի կարող լինել արևմտյան դեմոկրատիայի կրկնօրինակը: Նա-  
խագահը նաև չի խորշում հայտարարել, որ իր մեղքին և արտաքին քա-  
ղաքականության գերակայող նպատակներից մեկը ԻԻՀ մուսուլմանա-  
կան ինքնության ամրակայումն է: Գաղտնիք չէ, որ հանդիսանալով իս-  
լամի շիական ուղղության կենտրոնը ողջ մահմեդական արևելքում, ներ-  
կայումս Իրանի ձեռքերում է գտնվում կրոնական այդ ուղղության քա-  
ղաքական բոլոր լծակները: Թեևրանից շիական-իմամական իսլամի թե-  
լերը ձգվում են դեպի Իրաք (որտեղ բնակվում են 60-65% շիա մահմեդա-  
կաններ), Աֆղանստան(10-15% շիաներ), Պակիստան (20%), Բահրեյն,  
Սաուդյան Արաբիա, Լիբանան և Պաղեստին: Այդ ամբողջ գոտում ար-  
դեն տարիներ շարունակ տեղի են ունենում քաղաքական այնպիսիներ,  
որոնց համար նոր խթան հանդիսացավ ԱՄՆ-ի կողմից Իրաքի ռազմա-  
կալումը:

Թուրքիան ևս, լինելով աշխարհիկ (սայիթ) պետություն, քեև նրա  
արտաքին քաղաքականության մեջ իսլամը որոշիչ դեր չի խաղում, սա-  
կայն այդ գործոնի օգնությամբ նա աշխատում է առավելագույն տնտե-  
սական և քաղաքական օգուտներ քաղել իսլամական աշխարհի հետ  
կապերից: Առհասարակ թուրքական ղեկավարները պրագմատիստա-  
կան նպատակներով աշխատում են իրենց մերձավորարևելյան քաղա-  
քականությանը տալ «իսլամական համերաշխություն» զուգավորում:  
Հանդիսանալով Մերձավոր և Միջին Արևելքի արդյունաբերական տե-  
սակետից առավել զարգացած երկրներից մեկը՝ Թուրքիան ձգտում է  
«իսլամական գործոնի» օգնությամբ մահմեդական երկրների շուկաները  
«քացել» իր ապրանքների արտահանման համար, մասնավորապես  
դառնալ մի յուրատեսակ կամուրջ արևմուտքի և արաբական երկրների  
միջև<sup>19</sup>: Թուրքիայի ղեկավարները նաև մեծ շահագրգռվածություն են  
դրսևորում իրենց ավելցուկ աշխատուժը նավթ արդյունահանող արաբա-  
կան հարուստ երկրներ՝ Սաուդյան Արաբիա, Արաբական Սիացյալ Էմի-  
րություններ, Զուվեյթ, Լիբիա և այլն, արտահանելու համար, որը կարող  
է ապահովել ոչ միայն տարադրամի մեծ հոսք դեպի երկիր, այլև մա-  
սամբ նպաստել Թուրքիայում գործազրկության պրոբլեմի լուծմանը:  
Շնորհիվ «իսլամական գործոնի»՝ Անկարան վերտիչյալ երկրներում ի-  
րականացնում է նաև մի շարք խոշոր շինարարական նախագծեր, իսլա-  
մական երկրներից Թուրքիա են այցելում մեծ թվով զբոսաշրջիկներ և  
այլն: Չպետք է մոռանալ նաև, որ Թուրքիան իր հեղուկ վառելիքի 2/3-ը  
ստիպված է ներմուծել արտասահմանից՝ գլխավորապես արաբական  
երկրներից, Իրանից և Ադրբեջանից: «Իսլամական գործոնը» այդ հար-  
ցում ևս Անկարային մատուցում է օգուտակար ծառայություններ: Սա դեռ  
բոլորը չէ: Թուրքիան «խաղում» է իսլամի հետ նաև զուտ քաղաքական



նպատակներով: Նա աշխատում է ձեռք բերել մահմեդական աշխարհի քաղաքական աջակցությունը Կիպրոսի հարցում, որն անկասկած համդիսանում է թուրքական ղեկավարության ազգային քաղաքականության ատաջակարգ խնդիրը<sup>20</sup>։

Մի շարք երկրներ (Պակիստան, Բանգլադեշ և այլն) «խլամական գործունի» օգնությամբ արդյունավետ ֆինանսական-տնտեսական օգնություն են ստանում Պարսից ծոցի նավթ արդյունահանող հարուստ երկրներից<sup>21</sup>։ Մատույան Արտրիտն, որի վերահսկողության ներքո են գտնվում մահմեդական հիմնական սրբավայրեր Սեքքան և Սեդիման, «խլամական գործունի» օգնությամբ նախ փորձում է մահմեդական երկրներում և առաջին հերթին արաբական աշխարհում ձեռք բերել «ուժային կենտրոնի» դեր և ապա ապահովել սեփական կայունությունն ու ազդեցությունը տարածաշրջանում<sup>22</sup>։ Իր այդ նպատակին հասնելու համար Էր-Ռիադը փորձում է իսլամական աշխարհին ներկայանալ ոչ միայն «լիարժեք իսլամական պետության» կերպարով, այլև ամբողջ աշխարհի մահմեդականների բարեկեցությամբ մտահոգված երկրի կեցվածքով: Թեև համեմատաբար «աղքատ» արաբական երկրներին ցուցաբերվող հսկայական ֆինանսական օգնությունը Մատույան Արաբիայի կողմից ռեկամվում է որպես «խլամական համերաշխության» օրինակ, սակայն իրականում այդ օգնությունը ոչնչով չի տարբերվում վարկերի տրամադրման այն քաղաքականությունից, որը լայնորեն օգտագործվում է արևմտյան տերությունների կողմից: Ընդ որում, շնորհիվ այսպես կոչված «խլամական ֆինանսավորման» քաղաքականության, Մատույան Արաբիան լուծում է իր համար հիմնաբար նշանակություն ունեցող արտաքին քաղաքական մի շարք հարցեր, որոնց թվին է պատկանում, օրինակ, Էր-Ռիադի համար ձեռնառու վարչակարգերի և քաղաքական շարժումների ամրապնդումը, իր դավանած քաղաքական-կրոնական սկզբունքների ու գաղափարների տարածումը մահմեդական այլ երկրների վրա, «քարեննպատ միջազգային շրջապատի» ստեղծումը, կառավարող թագավորական ղեկավարի միջազգային հեղինակության ամրապնդումը և այլն<sup>23</sup>։ Սակայն Մատույան Արաբիայի համախալամական ձգտումների առավել կարևորագույն նպատակն, անկասկած, նրա կողմից մահմեդական աշխարհում լիդերության ձեռքբերումն է<sup>24</sup>:

Իրողությունն է նաև այն հանգամանքը, որ Արաբական թերակղզու նավթային միապետությունների համար (Մատույան Արաբիա, ԱՄԷ, Ղաթար, Բուվեյթ, Բահրեյն և այլն) մահմեդական աշխարհի «կենտրոնի» իրենց ունեցած դերը մեր օրերում այլևս դժվար է պահպանել միայն նավթարդյունների օգնությամբ, ուստի այդ երկրները ներկայումս հաճախ հանդես են գալիս համամատուլմանական շահերի պաշտպանության դիրքերից (օրինակ Պաղեստինի դատի), որը նրանց հնարավորությամբ

յուն է տալիս գոյատևելու որպես միապետական վարչակարգեր ունեցող երկրներ:

Մի շարք պետություններում իսլամական սկզբունքները հայտարարված են որպես արտաքին քաղաքականության հիմքում ընկած առաջնային գործոններ (Իրանի Իսլամական Հանրապետություն, Պակիստան, Մալայզիա, Մարոկկո, Աֆղանստան և այլն):

Այսպիսով, վստահ կարելի է ասել, որ այսպես կոչված «իսլամական համերաշխության» ներկան և ապագան, որն ըստ էության կառուցված է «ժառուստների» և «աղքատների» փոխհարաբերությունների խախտում հիմքի վրա, չի կարելի կայուն և երաշխավորված համարել, քանի որ արարական «ժառուստ» պետությունների կողմից օգնություն տրամադրելու հույսերի խորտակման դեպքում բազմաթիվ մանկեղանկան երկրների համար իսլամական համերաշխության գրավորությունը կարող է կտրուկ անկում ապրել և նպաստել նրանց կողմից քաղաքական այլընտրանքների որոնմանը<sup>25</sup>: Հետևաբար վերին աստիճանի դժվար է, հիմք ընդունելով «իսլամի կոնցեպցիան», փորձել նախագուշակել մանկեղանկան պետությունների արտաքին քաղաքականության հիմնական «դրոշիչ արժեքները»: Դրա ցայտուն օրինակ կարող է ծառայել 1980-1988 թ.թ. Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ Իրանի կողմից նավթի գաղտնի վաճառքը ԱՄՆ-ին և ստացված նավթադուրյան գները զենքի մեծ խմբաքանակի գնումը «իսլամի դիսերիմ թշնամի» հորջորջված Իսրայելից, որը հակասում է իրանական ղեկավարության կողմից հռչակված իսլամական արտաքին քաղաքական սկզբունքներին<sup>26</sup>: Այդ քայլը միաժամանակ կարելի է մեկնաբանել և՛ որպես արտաքին քաղաքական հարցերի նկատմամբ պրագմատիստական վերաբերմունքի վառ դրսևորում, և՛ որպես մի քայլ, որն արդարացված է «դար-ալ-իսլամի» (իսլամի աշխարհի) քարժրագույն շահերի պաշտպանության հանրահայտ սկզբունքով: Պատահական չէ, որ քաղաքական այդ սկանդալը, որը հայտնի է «Իրանգեյթ» անունով<sup>27</sup>, ցնցող արձագանք ունեցավ աշխարհում, մինչդեռ իսլամական երկրներում ընկալվեց համեմատաբար հանգիստ, որպես «դար-ալ-իսլամի» սկզբունքներից թույլատրելի քայլ:

Իսլամը իր սուր ծայրով ուղղված է սիոնիզմի դեմ: Դեռևս 1920թ. սկսած, երբ Պաղեստինը վերածվեց բրիտանական մանդատի, մանհեղական արևելքում լայն տարածում գտավ այն տեսակետը, որ սիոնիզմը սպառնալիք է հանդիսանում իսլամի նկատմամբ: Ինչպես հայտնի է, Պաղեստինի սիոնիստական գաղութացումը, որն իրականացվում էր դեպի «ավետյաց երկիր» հրեաների վերադարձի նշանաբանի ներքո, հիմնավորվում էր կրոնական մտեղիվներով: Ըստ այնմ, արարական քարոզչության մեջ սկսեց զարգացվել այն տեսակետը, որ հնուց անտի հույալականությունը թշնամաբար է տրամադրված եղել իսլամի նկատմամբ: 1948-1949թ.թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո մի շարք

մանհեղական երկրներ որդեգրեցին «համաշխարհային հրեություն» («այ-յուդիստայն ալ-ալամիյա») դեմ տոտալ պատերազմի կարգախոսը, այն հիմնավորելով նրանով, որ դեռևս Մոխամմեդ մարգարեի ժամանակ հրեաները թշնամարար են վերաբերվել մանհեղականների նկատմամբ: Միոնիստները մեղադրվում էին նաև նրանում, որ ձգտում են զավթել ճորատը մուսուլմանական հողեր, աշխատելով մանհեղականներին ենթարկել հրեական քաղաքական հսկողությանը, կործանել իսլամական մշակույթը, կորստվել մանհեղական երկրների բնական ռեսուրսները և այդ երկրների ժողովուրդներին ենթարկել տնտեսական ստրկացման: Պատահական չէ, որ բազմաթիվ իսլամական կազմակերպություններ («Մուսուլման եղբայրներ», «Ալ-Կաիդա» և այլն), մույնիսկ պետություններ (ԻԻՀ և այլն) կոչ են անում սրբազան պատերազմ («ջիհադ») սկսել ոչ միայն սիոնիզմի, այլև ողջ հրեության դեմ: Իսլամական ծայրահեղական կազմակերպությունների հսկասխեմիստական քարտզույթումն ու պայքարը իր սուր ծայրով ուղղված է նաև Արևմուտքի դեմ: Իսլամական այդ սկզբունքներն ի վերջո վերանում են տոտալ գաղափարախոսության, որի նպատակն է անողոր պայքարը արևմտյան արժեհամակարգի և առհասարակ «ամհավատ» բնակչության ու «թշնամական աշխարհի» («ճար-ալ-հարբ») դեմ: Միանգամայն ակնհայտ է, որ առհասարակ հակաօսաարեղկրյա պայքարի ընթացքում իսլամը մանհեղական բնակչության նշանակալից մասի աչքում հանդիսանում է ոչ միայն կրոն, այլև հայրենասիրության դրսևորման առավել մատչելի ձև, բողոքի յուրահատուկ դրոշ: Դա միանգամայն բնական է, քանի որ պատմությանը վկայված է, որ յուրաքանչյուր ժողովուրդ, քախվելով ազրեսիայի հետ, կամ կանգնած լինելով արտաքին մարտահրավերների առջև, կամա թե ակամա դիմում է իր անցյալին, իր պատմությանը կամ կրոնին, նրանցից քաղելով ուժերի հավելյալ լիցք և վճռականություն:

Պատմության մեջ վերջին խալիֆայության՝ Օսմանյան կայսրության վերացումից հետո, թվում էր, թե համաշխարհային հանրությունը զարգանում է առանց կոնֆեսիոնալ տարբերությունների օգտագործման: Միջպետական հակասությունները գլխավորապես կառուցված էին այնպիսի գաղափարական սկզբունքների վրա, ինչպիսիք էին ազգայնականությունը, դասակարգային խնդիրները և այլն: Մական 1969թ. շատերի համար միանգամայն անսպասելի կերպով հրապարակ եկավ իսլամական հիմքի վրա խարսխված կոնֆեսիոնալ մի խոշոր կառույց՝ Իսլամական Կոնֆեդերացիոն Կազմակերպությունը (ԻԿԿ): Այն ըստ էության մանհեղական պետությունների քաղաքական մի համագործակցություն էր, որը կոչված էր խաղալու միջպետական միավորիչ դեր: Իր կազմավորման օրվանից այն դիտվեց որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների սուբյեկտներից մեկը: ԻԿԿ եզակի կազմակերպություն է այն առումով, որ գործելով միջազգային ասպարեզում, նրա հիմ-

քում դրված է կոնֆեյնմալ (իսլամական) սկզբունքը: Ներկայումս Իհլհ իրեն անդամակցող երկրների քվով (ավելի քան վեց տասնյակ) և նրանց վիթխարի բնական ու մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների ծավալներով հանդիսանում է ժամանակակից աշխարհի հզորագույն կազմակերպություններից մեկը:

1981թ. Իհլհ պաշտոնապես հռչակեց այսպես կոչված «իսլամական ազգի» տեսությունը, որի վերջնական նպատակն է հայտարարվում աշխարհում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցության փոփոխությունը հոգուտ իսլամի, կամ ծայրահեղ դեպքում գլոբալ կամ տարածաշրջանային առումով այնպիսի վիճակի ապահովումը, որպեսզի մախկին զադուֆային կամ կախյալ երկրները դառնան ժամանակակից միջազգային հարաբերությունների իրավահավասար գործընկերներ: Այդ տեսության գաղափարախոսները ձգտում են ստեղծել կոոնական սկզբունքի վրա հիմնված ներվիակ մի համագործակցություն, ավելի ճիշտ իսլամական աշխարհը վերածել ինքնուրույն միջազգային տարածաշրջանի, որի իրականացման դեպքում, հավանաբար, իսլամական աշխարհը կհակադրվի մնացած աշխարհին: Սա «մահմեդական միասնության» ծրագրի իրականացման կոնկրետ մախազիծ է, որի հիմքում ընկած է «բոլոր մահմեդականները եղբայրներ են» կարգախոսը: Դրա հիմքում ընկած է նաև իսլամի այն հայտնի տեսակետը, որ մարդկանց միավորում կամ բաժանում է ոչ թե մաշկի գույնը, սեռը, ծագումը ընդհանուր տարածքը կամ ընդհանուր շահերը, այլ հավատը: Այլ կերպ ասած, բոլոր երկրների մահմեդականները, անկախ իրենց էթնիկական, ռասայական և այլ տարբերություններից նույնն են և կազմում են մեկ միասնական ընդհանրություն կամ համայնք («ումմա»): Սա պահպանման (համախալանականության), ավելի ճիշտ նեոպահլամիզմի տիպիկ դրսևորում է, որը քարոզում է աշխարհի բոլոր մահմեդականների միավորման գաղափարը կամ մեկ միասնական պետության, կամ տարբեր պետությունների համադաշնության մեջ: Որպես կանոն մերօրյա պահպանմանները քարոզում են իսլամի և քրիստոնեության անհամատեղելիության մասին, ուստի և բացառում են երկխոսության հնարավորությունը Արևելքի և Արևմուտքի միջև և առաջին հերթին կրոնի բնագավառում: Նման հարցադրումը հիմնված է իսլամի աշխարհի (դար-ալ-իսլամ) հակադրման վրա ոչ մահմեդական աշխարհին, կամ պատերազմի աշխարհին (դար-ալ-հարբ), ինչպես նաև իսլամի բացառիկության կոնցեպցիայի վրա: Ընդ որում, ի դեմս քրիստոնեության և աստծո մասին նրա պատկերացումների (նկատի ունենալով նրա երեք խոստատախաները) շխաները տեսնում են ոչ այլ ինչ, քան բազմաստվածություն: Ժամանակակից դա Խոմենիսիի և նրա կողմնակիցների համար ծառայում էր որպես հակաարևմտականության գաղափարական հիմնավորում, որը պետք է ըստ նրանց, ըն-

կած լինի ցանկացած իսլամական պետության քաղաքականության հիմքում:

Ընչտ է, թեև մահմեդական երկրները ներկայումս չեն առաջնորդվում «իսլամի աշխարհի» և «պատերազմի աշխարհի» սկզբունքով և ոչ իսլամական երկրների հետ հարաբերություններում պահպանում են միջազգային իրավունքի ընդունված նորմերը, սակայն աշխարհը և մարդկությունը երկու միմյանց հակադիր ու թշնամական մասերի բաժանման գաղափարը իսլամական աշխարհի արդի գաղափարախոսները ձգտում են հիմք ծառայեցնել «համաշխարհային նոր աշխարհակարգ» ստեղծելու համար: Նման մոտեցման տրամաբանական ելքը ի վերջո հանգում է նրան, որ իսլամական աշխարհը պետք է կազմի մի առանձին դաշինք կամ ընդհանուր համայնք («ունմա»), որի ժամանակակից ընկալումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ազգերի իսլամական մի համագործակցություն, որը արևմուտքի կողմից իրականացվող գլոբալիզացման քաղաքականության պայմաններում իսլամական աշխարհը փրկելու է ատլանտիկյան աճող գրեհի սպառնալիքից: Այսպիսով, պետության վերաբերյալ շիական կրոնացիան որպես վերջնական նպատակ համարում է համաշխարհային իսլամական համագործակցության ստեղծումը, իսկ որպես միջանկյալ ստադիա՝ «իսլամական պետությունների» ստեղծումը: Շիական գաղափարախոսները կոչ են անում մահմեդական երկրներին համախմբվել «իսլամի Սիսցայա նահանգներին», կամ որ միևնույն է «Իսլամական Համրապետությունների միության» մեջ, միաժամանակ հույս հայտնելով, որ վերջ ի վերջո համայն աշխարհի ժողովուրդները կապրեն «իսլամի օրհնքներով»:

Ինչպես հայտնի է, գլոբալացումը փոփոխություններ է մտցնում «պետություն-ազգ», «ազգային» (պետական) սահմաններ հասկացությունների մեջ: Այն ենթադրում է նաև ստանդարտացում, որն աստիճանաբար հանգեցնում է ազգային արժեքների կորստին: Դրա հետևանքով անխուսափելիորեն տեղի է ունենում արևմտյան ստանդարտների դեմ ընդվզում և պայքար հանում ազգային արժեքների վերածննդի ու պահպանման, ազգերի ու էթնիկական խմբերի ինքնորոշման: Ինչպես տեսնում ենք, գլոբալիզացումը իր որոշակի դրական հատկանիշների հետ միաժամանակ ունի նաև բացասական կողմեր, մասնավորապես նա տանում է դեպի միջքաղաքակրթական և այլ հակամարտությունների: Ստանդարտացումը հատկապես ցավոտ է ընկալվում ավանդական և կիսավանդական գիտակցություն ունեցող հանրության կողմից, որովհետև նա գլոբալիզացիոն գործընթացներն ընկալում է որպես բռնի ներխուժում դարերի ընթացքում ձևավորված իր աշխարհը, իր ավանդույթները, իր մշակույթը, իր կրոնը և առհասարակ իր արժեքային համակարգը: Դրա պատճառը գուցե այն է, որ աշխարհում հաստատված ու ընթացող գլոբալիզացիոն գործընթացը բավականին անկատար է, միակողմա-

նի և չափից ավելի «արևմտամետ»: Երևի քե այդ մոդելը հարմարեցված չէ լիարժեք միջքաղաքակրթական և միջմշակութային շփումների համար:

Քանի որ իսլամը հիմքեր չունի զլոբայ գաղափարախոսություն դառնալու համար, ուստի նա որդեգրում է հակազլոբայիստական գաղափարախոսություն և վարքագիծ: Հայտնի է, որ հակազլոբայիստական գաղափարախոսությունն ունի բազմաթիվ տարրերակներ, սակայն վերլուծաբանները գտնում են, որ ներկայումս նրա իսլամական տարրերակը հանդիսանում է ամենասուր և գործուն տարրերակներից մեկը:

Առաջնորդվելով հակաարևմտյան էնոցիանների անհաղթահարելի լիցքով, իսլամական կազմակերպությունները ժխտում ու չեն ընդունում Արևմուտքի «ամաստված» ապրելակերպը, իսկ արևմտյան ժողովրդավարությունը, հատկապես նրա անձի ու իրավունքների պաշտպանության սկզբունքը, հայտարարում են մարդկության բոլոր դժբախտությունների հիմնական պատճառը: Այդ կազմակերպությունների գաղափարախոսության համաձայն, ժողովրդավարական սկզբունքների ճանաչումն ու ընդունումը և մահմեդական հասարակության կողմից նրանց գործնական կենսագործումը ծանր մեղք է իսլամի ճշմարիտ հետևորդների համար<sup>28</sup>: Իսլամական երկրներում, հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունում, տիրապետող է մասնաձև կարծիքը, որ Արևմուտքը մի շարք երկրներում և առաջին հերթին Իրանում, քաղաքականացնում է «մարդու իրավունքների» հարցը: Հայտնի է, որ իսլամի մեջ գոյություն ունի մահմեդականների վարքագծի գնահատման համակարգ, սկսած «ֆարգ»-ից (պարտադիր), մինչև «հարամը» (արգելված): Մահմեդական հոգևորականությունը մշտապես, իսկ քաղաքական էլիտան ըստ ամենաթշուշտության, դիմում է հիշյալ կրոնական կատեգորիաներին, ձգտելով դրանով իսկ բոլոր մուսուլմաններին մտքի լիզացնել իրենց քաղաքական մտայնություններին հասնելու համար:

Այսպիսով, իսլամական աշխարհի առջև արդի ժամանակներում կանգնած մարտահրավերներին դիմակայելու միակ ձևը դիտվում է իսլամական դաշինքի կամ բլոկի ստեղծումը: Ժխտելով դրա ճանապարհին եղած դժվարությունները՝ մահմեդական աշխարհի ղեկավարները, այնուամենայնիվ, այն իրականացնելու հնարավորությունները համարում են միանգամայն իրական<sup>29</sup>: Նման համագործակցության ստեղծման անհրաժեշտությունը այդ գաղափարի ջատագովները հիմնավորում են ինչպես մի շարք օբյեկտիվ-պատմական, այնպես էլ սուբյեկտիվ բնույթի գործոններով: Դրանց քվիլն են պատկանում իսլամական ինքնագիտակցության վերածնունդը, հիասթափությունը արևմտյան արժեքների մկատմամբ, իսլամական քաղաքական համակարգի վերակստուգման ձգտումը, նավթ արդյունահանող երկրների տնտեսական ու քաղաքական աճող ազդեցությունը և այլն: Ոչ պակաս կարևոր գործոն է և այն

իրողությունը, որ արդի միջազգային հարաբերությունների համակարգում մահմեդական երկրները դեռևս հանդես են գալիս ստորադաս փյունակում, որը մրանց մոտ ամառ է բերում խորը անբավարարվածության և դժգոհության զգացում, ինչպես նաև բնական ձգտում՝ ինքնավար քաղաքական, տնտեսական ու մշակութային զարգացման համար<sup>30</sup>:

Իսլամական տեսաբանները շեշտում են, որ արևմուտքում մատերիալիզմով տարվելը տանում է դեպի հոգևոր աղքատացում, իսլամական գիտակցությանը բնորոշ աշխարհի միասնական մոդելի խաթմանում ու քայքայում: Որ ամենասարակ տեսակ մատերիալիստական մտեցումը ի դեմս «սպառազանց հասարակության» խորք է իսլամական կենսակերպին և մահմեդական ժողովուրդների պատմական ավանդույթներին: Ըստ այնմ իսլամը ներկայացվում է որպես սոցիալական ազատագրման զարգացման ուղի, որի երկրորդ ընկած են արդարության սկզբունքները և որի նպատակակետը «համընդհանուր սոցիալական բարօրության պետության ստեղծումն է»:

Մահմեդական միասնության կամ դաշինքի ջատագովներն անշուշտ գիտակցում են, որ առկա են այդ միասնությունը արգելակող ու խոչընդոտող բազմաթիվ գործոններ, որոնց թվին են պատկանում, օրինակ, իսլամական պետությունների տնտեսական, առևտրական և ինտելեկտուալ կախումը նախկին մետրոպոլիտներից, իսլամական երկրների միջև տարբերությունները քաղաքական գաղափարախոսությունների մեջ, մրանց մրցակցող աշխարհաքաղաքական ռազմավարությունները, կրոնական տարածայնությունները (շիաներ, սուննիներ և այլն): Մակայն կարևորն այն է, որ աշխարհիկ քաղաքական վարչակարգեր ունեցող մահմեդական երկրների կառավարող վերնախավը բնավ չի ձգտում իսլամական դաշինքի ստեղծման քաղաքական դեկորի մեջ անհասկալի իրականացմանը, որը, բնականաբար, մրանց համար հավասարազոր կլիներ ինքնասպանության:

Շատերը ենթադրում են, որ դեզինտեգրացիոն գործոնները իսլամական համերաշխության զգացումների համեմատ կրում են ժամանակավոր, անցողիկ բնույթ և ժամանակի ընթացքում դրանք կարող են հաղթահարվել և արևելքում ժամանակակից միջազգային հարաբերությունների զարգացման գործընթացը կտանի դեպի մահմեդական ժողովուրդների միասնական իդժի վուլ առ վալ իրականացմանը<sup>31</sup>: Մակայն պետք է նշել, որ ավելի մեծ թվով վերլուծաբաններ այս տեսակետը համարում են ոչ իրատեսական:

Ներկայումս մահմեդական գաղափարախոսները հայտարարում են, որ արդեն մշակված է «միջազգային հարաբերությունների իսլամական տեսությունը», «իսլամական դիվանգիտության» սկզբունքները և այլն: Հինգավորելով դրա շարժիչ դրոշմապատճառները, «Իսլամական դի-

վանագիտություն» հետազոտության հեղինակներից մեկը՝ Հ. Մալիքը գրում է. «Կարելի է արձանագրել, որ քրիստոնյա ժողովուրդները միջազգային իրավունքը պարտադիր էին ճանաչում միայն միմյանց միջև իրականացվող հարաբերություններում: Ընդհուպ մինչև երկրորդ աշխարհամարտի ավարտը արևմտյան երկրները միջազգային իրավունքը և դիվանագիտական պրակտիկան չէին տարածում ոչ քրիստոնյա աշխարհի վրա ... Ուստի Իսլամը ևս պատվիրում է հետևել մահմեդականների և ոչ մահմեդականների համար միջազգային վարքագծի տարբեր նորմերի»: Սի շարքը պետությունների սահմանադրություններում և օրենսդրական փաստաթղթերում արձանագրված է, որ նրանց արտաքին քաղաքականությունը կառուցվում է «իսլամական սկզբունքների վրա» (օրինակ, ԻԻՀ, Աֆղանստան, Պակիստան և այլն)<sup>32</sup>: Սակայն պետք է նշել, որ որպես կանոն, իսլամական այդ սկզբունքները կրում են ընդհանուր և ղեկավարատիվ բնույթ՝ առանց ճշտելու դիվանագիտական պրակտիկայի կոնկրետ իսլամական ձևերը: Հարկ է նշել, սակայն, որ վերջին տասնամյակներում լուրջ քայլեր են կատարվում դրանց կոնկրետացման ուղղությամբ:

«Իսլամական մեծ ընկերակցություն» կամ «Իսլամական համաշխարհային պետության» գաղափարը ենթադրվում է սկզբում իրականացնել Ասիայում և Աֆրիկայում, ապա ուղջ երկրագնդի վրա: Ներկայումս արդեն առաջին քայլերն են կատարվում այդ ուղղությամբ: Իհնչ շրջանակներում ստեղծվել են մի շարք տնտեսական դաշինքներ, գիտական և տեխնիկական հետազոտությունների կենտրոններ, ապահովագրական ընկերություններ, տանկերային և ուղևորային մավատորմիղներ: Ստեղծվում են միացյալ առևտրական տարիֆներ, մշակվում են տնտեսական և տեխնիկական համագործակցության միասնական ծրագրեր, կապիտալ ներդրումների համապատասխան կառույցներ, կազմակերպվում են իսլամական տարադրամային ֆոնդեր, միջազգային իսլամական տարադրամային գուտիներ, գործում է զարգացման իսլամական բանկը, իսլամական առևտրաարդյունաբերական պալատը, վիճակագրական իսլամական կենտրոնը, քայլեր են կատարվում մահմեդական ընդհանուր շուկա ստեղծելու ուղղությամբ և այլն: Իրողություն է դսրձել «Իսլամական համալսարանների», «Իսլամական տեղեկատվական համակարգի», «Իսլամական միջուկային ռումբի» (Պակիստան) և այլն ստեղծումը: Քայլեր են կատարվում նաև «Նոր իսլամական տնտեսակարգ» ստեղծելու ուղղությամբ, որի կարևորագույն խնդիրներից մեկն է դիտվում մահմեդական երկրների ինտեգրացումը: Իսլամական աստվածաբանները նախագծեր են առաջ քաշում շարիաթի հիմքի վրա միասնական օրենսդրություն ստեղծելու, իսլամական օրենքները համակարգելու (կոդիֆիկացնելու) վերաբերյալ, փորձեր են կատարում մշակելու մի այնպիսի համընդհանուր սահմանադրություն, որը պիտանի լինի իս-



լամական համագործակցության բոլոր երկրների համար: Ծրագրվում է նույնիսկ «Իսլամական ՄԱԿ-ի ստեղծում»: Իսլամական համադաշնության երկրների պաշտպանության հարցերով, ըստ նախագծումների, զբաղվելու է 20 միլիոնանոց «իսլամական մեծ բանակը»՝ 100-150 միլիոն մարդուց բաղկացած պահեստային ուժերի առկայությանը: Այդ բանակի խնդիրներից մեկն է համարվում նաև այն հողերի հետնվաճառումը, որոնք մահմեդականներից զբաղվել են Իսրայելի և այլ պետությունների կողմից:

Իսլամական երկրները պլանավորում են ստեղծել նաև սեփական ուզմաարդյունաբերական համալիր: Արևմտյան փորձագետների կարծիքով, «իսլամական ռազմական արդյունաբերության» ստեղծումը այսօր բոլոր հնարավորություններն ունի իրականություն դառնալու<sup>32</sup>: Որպես ապագա իսլամական պետության տնտեսական ու ֆինանսական հիմք ենթադրվում է օգտագործել մահմեդական երկրներում առկա նավթի հարուստ պաշարները<sup>34</sup>:

«Համաշխարհային մահմեդական պետության» կոնցեպցիան հնարավոր է համարում անկախ իսլամական պետությունների միավորման տարբեր ձևեր: Ժամանակի ընթացքում այդ պետությունները կկազմեն համաշխարհային իսլամական համադաշնություն, որոնց անդամները կարող են ունենալ իրենց կառավարությունները, պետական սահմանները, սակայն կունենան կառավարման միատեսակ համակարգ ու սպորտաձև, կօգտվեն միասնական մահմեդական իրավունքից, որի հիմքում ընկած են Դուրանը, շարիաթը, հադիսները և ֆիկհը:

Այս բոլորը պահիսլամական երազանքներն են, քարոզչական նպատակներ հետապնդող տեսություններ, թե՛ ունեն իրականացում ունեւ հնարավորություններ: Մի շարք արևմտյան վերլուծաբաններ գտնում են, որ ազգերի իսլամական համագործակցության ստեղծման նպատակը միանգամայն ռեալ է և նույնիսկ մոտ է իրականացման: Ամեն ինչ կայսլած է առաջին հերթին այն բանից, թե ինչպիսիք են իսլամական աշխարհի ինտեգրացման հնարավորությունները: Համեմայն դեպս ոչ որ չի կարող ժխտել այն փաստը, որ իսլամը, շնորհիվ իր ունիվերսալիզմի, որն ունակ է անցնելու ռասայական, գաղափարական և աշխարհագրական սահմանները<sup>35</sup>, կարողանում է ապահովել մահմեդական աշխարհի կուլտուր-կրոնական միասնության որոշակի աստիճան:

Սակայն որպեսզի իսլամը վերածվի «նոր համաշխարհային համակարգի», անհրաժեշտ է այն դավանող երկրների ինտեգրացման համեմատաբար բարձր մակարդակ բազմաթիվ քննազատներում և առաջին հերթին տնտեսական, քաղաքական, գաղափարական, ռազմական և այլն, որը, սակայն, ներկայումս բացակայում է: Դրա հետանկարները և, համեմայն դեպս տեսանելի ապագայի շրջանակներում, դժվար է հուսադրող համարել: Խոչընդոտող գործոնները բազմաթիվ են ու բազ-

մատենակ: Օրինակ, նավթ արդյունահանող երկրների միջև շուկաների համար պայքարի հետևանքով առաջացող հակասությունները<sup>36</sup>։ Խորքեր երկրների ազգային եկամուտների միջև եղած մեծ տարբերությունները, գաղափարախոսական, քաղաքական, կրոնական բնույթի ներհակությունները և այլն: Հատկանշական է, որ մահմեդական երկրներին առաջօր դեռևս չի հաջողվել մշակել միասնական դիրքորոշում մույնիսկ այն հարցերի կապակցությամբ, որոնք վերաբերում են մահմեդականների կոնֆլիկտներին ոչ մահմեդականների հետ (օրինակ Ղարաբաղ, Չեչենիա, հնդկա-պակիստանյան կոնֆլիկտ, Կիպրոսի պրոբլեմ և այլն): Մահմեդական երկրները բարձր աստիճանի համերաշխություն են դրսևորում միայն համաշխարհային քաղաքականության գլոբալ հարցերի շուրջ:

«Իսլամական միասնական պետություն» ստեղծելու գաղափարը հաճախ ճնդվածքներ է տալիս նաև այն պատճառով, որ ճակատ առ ճակատ բախվում է իսլամական երկրների տեղական նացիոնալիզմի հետ: Բացի այդ, մահմեդական շատ երկրներ նախապատվությունը տալիս են ոչ թե կրոնական, այլ քաղաքական-ազգայնական գաղափարների ներքո միավորման սկզբունքներին (օրինակ՝ պանարաբիզմ): Վերջապես կարևոր է նշել, որ աշխարհիկ-քաղաքական վարչակարգ ունեցող իսլամական մի շարք երկրների քաղաքական էլիտայի կողմից առհասարակ մերժվում է իսլամական քաղաքական դոկտրինը, կամ որ միևնույնն է, իսլամական միասնական պետություն ստեղծելու գաղափարը:

Դարերի ընթացքում արևմուտքը ոչ արևմուտքի մոտ խթանել է թերաթիքության զգացում: Իսլամական աշխարհը չափազանց զգայուն է ընկալում այդ երևույթը և հատկապես իր ավանդական մշակույթին սպառնացող գործընթացները: Արևմտյան ու իսլամական քաղաքակրթությունների միջև միմյանց նկատմամբ անվստահություն ու վախ առաջացնող զգացումները հիմնված են դարերից եկող հիշողության վրա: Այսօր Արևելքը վարժում է իր վրայից թոթափել այդ բեռը: Իսլամը դարերի ընթացքում ենթարկվել է արևմտյան քաղաքակրթության ինտենսիվ ազդեցությանը, իսկ այսօր նա ներքաշվել է հետադարձաբերական բարձր տեխնոլոգիական զարգացումների մեջ՝ իրականում պատրաստ չլինելով դրան: Հիրավի, գլոբալիզացիային անպատրաստ քաղաքակրթությունները հայտնվում են ծանր վիճակում: Մեր օրերում մահմեդական Արևելքը դա իսլամական արժատականության կամ իսլամիզմի էպիկենտրոնն է, որը մարտահրավեր է նետել Արևմուտքին<sup>37</sup>: Իգուր չէ, որ դեռևս 1991թ. կեսերին Չ. Բժեզիևսկին Մերձավոր Արևելքն անվանել է Եվրասիական Բալկաններ, մկատի ունենալով այն իրողությունը, որ ներկայումս այդ տարածաշրջանը հանդիսանում է գլխավոր ապակայունացնող գործոնը<sup>38</sup>:

1990-ական քվականների սկզբից իսլամիստները ծավալեցին լայնամասշտաբ անարեկական պատերազմ, որի շրջանակները դուրս եկան Մերձավոր Արևելքից և տարածվեցին համարյա ամբողջ աշխարհում: Ժամանակակից անարեկությունը չունի աշխարհագրական սահմաններ, նրան բնորոշ են լուրջ քաղաքական-հոգեբանական սահմանները: Միջազգային անարեկությունը ինքնին ժամանակակից զինված առճակատման դրսևորումներից մեկն է, սակայն նա ունի նաև մի շարք յուրահատուկ գծեր, որոնք նրան տարբերում են փոքր պատերազմի մյուս ձևերից: Իսլամական անարեկությունը միջազգային անարեկության մաս է կազմում և գործում է թե՛ իսլամի տարածման ավանդական շրջաններում և թե՛ դրա սահմաններից դուրս:

Անկասկած իսլամը անարեկական կրոն ներկայացնելը կարող է մեծագույն վնաս հասցնել աշխարհի ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերություններին: 2001թ. սեպտեմբերի 11-ի ռդերգությունը Նյու-Յորքում մարդկությանը կանգնեցրեց նոր մարտահրավերների առջև: Ըստ երևի հակված են կարծելու, որ սեպտեմբերի 11-ը ոչ թե պարզապես մի ռդերգություն է, այլ շրջադարձային իրադարձություն: Պետությունները և աշխարհի բոլոր մտածող մարդիկ զիտակցում են, որ իսլամական անարեկությունը լուրջ սպառնալիք է դարձել աշխարհի անվտանգությանը: Ըստ երևի նույնիսկ թյուրիմացաբար հակված են նույնացնել անարեկությունը և իսլամը՝ մոայլ կանխագուշակումներ անելով սպազայում կրոնական պատերազմների հավանականության մասին: Մեյտեմբերի 11-ի իրադարձությունները շատերին բերեցին այն համոզման, որ իսլամը Արևմուտքի գոյության համար կարող է դառնալ ռազմավարական սպառնալիք՝ ինչպիսին Խորհրդային Միությունն էր «Սառը պատերազմի» տարիներին: Ամերիկացի հայտնի քաղաքագետ Մեմլուել Հանդինգտոնի քաղաքակրթությունների բախման տեսությունը կրկին իր վրա է սևեռում պետությունների և քաղաքագետների ուշադրությունը: Ինչպես հայտնի է, այդ տեսության համաձայն<sup>39</sup>, եթե XX դարը գաղափարախոսությունների բախման հարյուրամյակ էր, ապա XXI դարում կրնա Ֆրիկտները պետք է տեղի ունենան քաղաքակրթությունների կամ կրոնների միջև: Հանդինգտոնը առաջին անգամ շրջանառության մեջ մտցրեց «քաղաքակրթությունների բախում» հասկացությունը: Համաձայն նրա տեսության, աշխարհում ամենավտանգավոր և արյունալի կրնա Ֆրիկտներն ընթանալու են տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների պատկանող խմբերի միջև: Ընդ որում Հանդինգտոնը իսլամը համարում է միջազգային հանրության անվտանգությանը սպառնացող նոր հզոր գործոն: Նրա կարծիքով մարդկությանը սպասում են նոր գլոբալ պատերազմներ: Հակամարտության հիմնական առանձնահատկություններից մեկը կլինի քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների բախումը: Հանդինգտոնի կարծիքով արևմտյան և իսլամա-

կան քաղաքակրթությունները արդեն 1300 տարի գտնվում են պատերազմական վիճակում և այդ պատերազմը չի դրսևորում հանգելու մշակույթ: «Մառը պատերազմի» ավարտը մարդկության ամեն քաղաքացու համար շրջան՝ պայքար Արևմուտքի և «ոչ Արևմուտքի» միջև: Եռսառը պատերազմի ավարտը կոնֆլիկտը գաղափարախոսությունից ու տնտեսությունից վերաճեց մշակութային: Համաձայն Հանդիմնագրողի, գործադրական պայմանավորում է միջազգային քաղաքակրթական հարաբերությունները: Աշխարհը գնալով մեղանում է և սրվում է մշակութային տարբերությունների գիտակցությունը: Հանդիմնագրողի մոդելը հիմնված է այն գաղափարի վրա, որ միջազգային համակարգը, որը նախկինում բավականապես երեք բովանդակ (աշխարհներից), այսօր վերակառուցվում է վեր է ածվում մեկ մոր համակարգի, որը քաղաքացու է ու քաղաքակրթություններից (արևմտյան, ճապոնական, իսլամական, սլավոնական, ուղղափառ-պավոնական, հինդուիստական, լատինաամերիկյան և կոնֆուցիոնական): Հանդիմնագրողը համոզված է, որ իրար հետ մրցակցող ուժային բովանդակը ապագայում կսկսեն տարբերակել իրենց պատկանելությունը համաձայն որոշակի քաղաքակրթության: «Վերջին հաշվով մարդկանց համար կարևոր է ոչ թե քաղաքական գաղափարախոսությունը կամ տնտեսական հետաքրքրությունը: Հակառակը, ընտանիքը, արյունը և համոզմունքը, սրանք այն տարրերն են, որոնցով մարդիկ իրենց մուլտիկուլտուրալ են և ինչի համար մրանք պայքարելու և մահանալու են: Այդ իսկ պատճառով քաղաքակրթությունների բախումը կփոխարինի «Մառը» պատերազմին որպես գործադրական քաղաքականության գլխավոր գործոն»: Տարբեր քաղաքակրթություններ, ըստ մրա, ստեղծում են տարբեր արժեքային համակարգեր, որոնք շատ ավելի դժվար է հաշտեցնել, քան գաղափարախոսությունների բախումը:

Չնայած Արևմուտքը ուժեղի ծաղկման շրջանում է, սակայն այնուամենայնիվ մի շարք երկրներում մրա գաղափարները արժագանք չեն գտնում, կամ ուղղակի կշիտ չունեն: Ընդ որում, դա հավասարապես վերաբերում է ինչպես իսլամական երկրներին, այնպես էլ կոնֆուցիոնական, բուդդայական, հինդուիստական, ուղղափառ-քրիստոնեական և այլ մշակույթներ ունեցող երկրներին: Եստ քաղաքակրթություններ հանված են դիմագրավելու այն գաղափարին, որ Արևմտյան մոդելը համամարդկային են: Օրինակ՝ արևմուտքի ցանքերը արմատավորելու ազատական ժողովրդավարություն և մարդու իրավունքների սկզբունքը, շատ երկրների կողմից ընկալվում է որպես մեղմապերիալիզմ: Արևմտյան արժեքներն ու «արդիականություն» հասկացությունները շատ դժայքերում խորք են իսլամական աշխարհին: Հանդիմնագրողը մահ գտնում է, որ մարդկանց մշակութային հակումները ենթագիտակցական, նախասկզբնական և նախապատմական են: Այդ իսկ պատճառով մշակութային բաժանումը ժողովրդներին շատ ավելի է հեռացնում միմյանցից, քան

«Մառը պատերազմի» տարիներին «երկաթյա վարագույրի» գաղափարը:

Անկախ Հանդիմանողի տեսությունից, այսօր լուրջ խոսակցություններ են գնում քրիստոնեության և իսլամի անհամատեղելիության մասին: Ի դեպ, առաջին անգամ այդ մասին արտահայտվել է իման Խոմենին: Սեր օրերում արևմտյան մի շարք վերլուծաբաններ կանխատեսումներ են անում, որ ապագայում ամենավտանգավոր բախումները տեղի կունենան Արևմտքի ամբարտավանության, իսլամի անհամդրժողակամության և չինական ինքնավստահության պատճառով:

Սակայն կան նաև այս մտայն կանխատեսումները մերժող գիտնականներ, որոնց կարծիքով ժամանակակից աշխարհում կրոնական ինքնագիտակցության վերելքը չի կարելի միանշանակորեն դիտարկել որպես բախումներ ծնող աղբյուր: Օրինակ, ֆրանսիացի Օլիվյե Ռուան, որը իսլամի վերաբերյալ մեծաթիվ աշխատությունների հեղինակ է, գրում է. «Ես չեմ հավատում քաղաքակրթությունների միջև պատերազմին: Կարծում եմ, այստեղ խոսքը գնում է ավելի շուտ անցումային շրջանի պրոբլեմների վերաբերյալ, ինչպես նաև իսլամիստների շրջանում ինքնտիկության յուրահատուկ ճգնաժամի մասին: Ուշադրություն դարձրեք, որ ԱՄՆ-ում ահաբեկությունների համարյա բոլոր մասնակիցները մի ինչ-որ ժամանակ ապրել են Արևմտքում: Ուրեմն չի կարելի խոսել տարածաշրջանների բախման մասին, ինչպես դա եղել է «դասական» պատերազմների ժամանակներում: Խոսքը ավելի շուտ վերաբերում է Արևմտքի ներքին ճգնաժամի մասին»<sup>40</sup>:

Ինչպես հայտնի է, 2001թ. ՄԱԿ-ը հայտարարել էր քաղաքակրթությունների երկխոսության տարի, դրանով իսկ անշուշտ ցանկանալով շեշտել, որ քաղաքակրթությունների երկխոսությունը այլընտրանք չունի: Այսօր, ինչպես և դարեր շարունակ, երկրագնդի խաղաղությունը պայմանավորված է տարբեր ազգերի ու նրանց ղեկավարների կողմից իրականացվող ջանքերով և բարի կամքի դրսևորմամբ:

VAHAN BAIBOURTIAN

ISLAM AND ITS IDEOLOGICAL-POLITICAL REFLECTIONS IN  
POLITICS OF MUSLIM STATES AND PRESENT-DAY INTERNATIONAL  
RELATIONS

Islam is a world religion - the youngest after Buddhism and Christianity. Though Islam is traditionally thought to be widespread in countries of the Near and Middle East and North Africa, it effectively has a present-day range from the Atlantic Ocean to the Pacific. Analysts report a growing world-scale impact of Islamic states on global events. Islam's internal strength and rapid proliferation can be attributed to the fact that it is the religion of the world community ("Umma") of Muslims, rather

than any one given nation or people, which does not recognize any political borders. Therefore, Islam is a religion of a total nature. To date, political events of the Muslim East continue to be perceived mainly through the lens of religion.

The paper provides a detailed overview of the reasons for the present-day "boom" of Islam. It analyzes the factors that facilitate the persistent politicization of Islam. It indicates that modern Islam is an active political factor, which influences, among other things, contemporary international relations. The paper provides comprehensive research into role of the Islam factor in domestic and foreign policies of the Islamic Republic of Iran. Special attention has been paid to the correlation of Islam and nationalism. The paper shows that often, Islam and nationalism act in conjunction. There is a special emphasis on the fact that in terms of their international relations, Muslim East countries still prefer pragmatic interests to Islamic values. The paper particularly highlights the problems of Islam and globalization. It specifies that in our days, the Muslim East is the epicenter of Islamic fundamentalism, which has challenged the West. Present-day terrorism does not recognize geographic borders. The paper also highlights that, in any case, Islam may not and should not be presented as a terrorist religion, because it can seriously undermine the relationship between world peoples.

#### ՇԱՆՈՑԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Islam and International Relations, N.Y., 1965, p. VII; Davisha A., Islam in Foreign Policy, Cambridge, 1983, p. 33.
2. Barret D.B., Johnson T.M., Annual Table of World Religions, 1900-2025 [http://www.wnrf.Org/Cms/status Wr, Shtme].
3. Sh'u Esposito John, The Islamic Threat: Tyth or Reality? N.Y., Oxford University Press, 1992.
4. Sh'u Amirov H., Ислам и нации, Москва, 1975.
5. Sh'u Islam and International Relations, p. VII.
6. Sh'u Медведко Л.И., Германович А.В., Именем Аллаха; Политизация ислама и исламизация политики, Москва, 1988.
7. Շիրական կոնցեպցիայի մեջ «պետություն», «առարկություն», «առարկություն» տերմինները օգտագործվում են որպես հոմանիշներ, իսկ «տողություն» տերմինն էրբեմն փոխարինում է «ընչազորված» հասկացությունը:
8. Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրություն (իմնական օրենք), քարգմանությունը 4-ամսիկ Բաղայլանի, Թեհրան, 2005, էջ 19:
9. Sh'u Ислам в современной политике стран Востока (конец 70-х начало 80-х годов XX в.), Москва, 1986, с. 140.
10. ԻԻՀ սահմանադրություն, էջ 21:
11. Նույն տեղում, էջ 35:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում, էջ 38:
14. Նույն տեղում, էջ 40:
15. Դոնյա, Թեհրան, 13.02.1979թ.: Փեյրամ-ի էմիլար, 1982, № 55, էջ 3.

16. Երրիշար, Թեհրան, 28.12.1981:
17. Աֆրազյարի Բահմանի-Ռեհրան Սեյիդի: Թալիբանի լիա բարիլի: Օսիֆիանի «Կաշ-ի քաշի», լաֆ-ի թվլոն, 1360, փ.ս., էջ 17: Աադեբ Դ. Ս., Նեկորե կոնցեպտուալնե վազլադի ալտոլլի Տալեգանի նա սուշնոսթ իսլամսկոյ վասթի, Վ կն.: Իրան: Իսլամ և վասթ, Մոսկա, 2001, ս.40.
18. Մամեդովա Ն.Մ., Իսլամսկոե ցոսարսթո: սոոթնոսենի ցոսարսթեննի և իդեոլոցիկեսի թրիորիտեթ, Վ կն.: Իրան: իսլամ և վասթ, Մոսկա 2001, ս.15.
19. Իվանովա Ի.Ի., Րոլի Տուրկի Վ «մուսուլմանսկո միրե» և թոլիտիկա չաթադա.- Վլիանիե «իսլամսկո ֆակթոր» նա մեջուդարոնոսենի Վ Ազի և Տեւերնոյ Աֆրիկե և թոլիտիկա Չաթադա նա սուերնոսեննո շթաթե, Մոսկա, 1985, ս. 21.
20. Brown J., Turkey's Policy in Flux-Current History, 1982, January, p.37.
21. Richter W. L., Pakistan.-Politics of Islamic Reassertion, London, 1981, p. 157-160; Bertocci P.J., The Politics of Islam in Bangladesh.-Asian Thought and Society, 1980, vol.5, №13, p.58.
22. Mortimer E., Power Faithand the Politics of Islam, N.Y., 1982, p. 159-162.
23. Ochsenwald W., Saudi Arabia and the Islamic Revival.-International Journal of Middle East Studies, 1981, , №3, p.227.
24. Knauerhase R., Saudi Arabia's Foreign and Domestic Policy.-Current History, 1981, , № 462, p.18
25. Dcsouki A.E.H., The Islamic Resurgence: Sources, Dynamics and Implications.- Islamic Resurgence in the Arab World, N.Y., 1982, p.27.
26. Zartman I.W., Explaining the Nearly Inexplicable: The Absence of Islam in Moroccan Foreign Policy.-Islam in Foreign Policy, p.109.
27. Ramazani R.K., Khumayni's Islam in Iran's Foreign Policy.- Islam in Foreign Policy, p.22-23.
28. Vatikiotis P. J., Islamic Resurgence. A Critical Wiew.- Islam and Power, London, 1981, p. 172.
29. Ayoob A., Conclusion. The Politics of Islamic Reassertion, London, 1981, p.288-289.
30. Braibanti R., Saudi Arabia in the Context of political development Theory.- King Feisal and the Modernisation of Saudi Arabia, p.36-53.
31. Journal of Sout Asian and Middle Eastern Studies, Villanova, t, II, 1979, , № 3, p.86.
32. Տե՛ս օրիցալ «The Constitution of Islamic Republic of Pakistan», Islamabad, 1973, p. 19.
33. Տե՛ս The Washington post, 27.11.1981.
34. Րաչկո՛վ Բ.Յ., Նեֆթ և միրո՛վա թոլիտիկա, Մոսկա, 1972, ս.9.
35. Տե՛ս Piscatori J.P., Ramazani R.K., Middle East. Comparative Regional Systems, N.Y., 1980.
36. Կոլլո՛ն տե՛ղևի, էջ 290-291.
37. Բելոկրենիկի Վ., Մուսուլմանսկի Վոսթոկ Վ նաչալե XX վեկա: տենդենցի և թերսպեկտի՛վ Րա՛զի՛վա, «Շենթրալնա Ազիա և Կա՛վկազ», 2(38), 2005, ս. 23.

38. S'и Бжезинский Эб., Великая шахматная доска, Москва, 1998; S'и Бжезинский Эб. Выбор: мировое господство или глобальное лидерство, Москва, 2004.
39. S'и Хантингтон С., Столкновение цивилизаций, 1993; Huntington S. The Clash of Civilizations and Remaking the World Order. N.Y.: Simon & Schuster. 1996.
40. Шерматова С., „Запад перед Выбором“, Московские новости, 25 сентября-1 октября 2001, № 39.



**ԳՈՂԱՐ ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ**

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ԸՈՒՐՋ ԾԱՎԱԼՎՈՂ  
ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Այսօր միջազգային հանրության ուշադրությունն առավել քան երբևէ սևեռված է Իրանի Իսլամական Հանրապետության կողմը: Հիմնական խնդիրը Իրանի միջուկային ծրագիրն է, որը խիստ մտահոգում է հատկապես Արևմտյան տերություններին: Թեման արդիական է, քանի որ տարածաշրջանում երեք պետություն արդեն ունեն միջուկային զենք՝ Հնդկաստանը, Պակիստանը և Իսրայելը, որոնք սակայն մասնատիպ խիստ վերաբերմունքի չեն արժանացել: Դրա հիմնական պատճառը կարող է հանդիսանալ ԱՄՆ-ի ռազմավարական շահերի առկայությունը Իրանում՝ կապված նրա աշխարհաքաղաքական դիրքի և բնական հարստությունների հետ: Չենք բացառում նաև այն փաստը, որ Միացյալ Նահանգները ոչ օրինական է համարում Իրանի կառավարող մարմինները: Միևնույն ժամանակ, կարծում ենք առավել կարևոր հանգամանք է հանդիսանում այն, որ Իրանն այսօր առավելապես համագործակցում է Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի՝ ԱՄՆ-ի մոխրակնի և ապագա մրցակիցների հետ: Ի դեպ, Միացյալ Նահանգների կողմից Իրանի նկատմամբ կոշտ դիրքորոշումը, միաժամանակ կարող է հարվածել և՛ Ռ-ի, և՛ Չինաստանի շահերին: Չէ՞ որ Իրանը հանդիսանում է Չինաստանին էներգակիրներ մատակարարող գլխավոր պետություններից մեկը, ինչպես նաև Ռ-ից զենք զնոդ երրորդ պետությունը: Եվ ընդհանրապես, կարծում ենք, որ միջուկային զենք ունեցող պետությունների «ակումբը» լուրջ վերածնունդ կարիք ունի: Փաստացիորեն երեք պետություն արդեն ունեն միջուկային զենք, սակայն նրանք դեռևս պաշտոնապես չեն մտնում միջուկային զենք ունեցող պետությունների խմբի մեջ:

Ինչ վերաբերում է ԻԻՀ-ին, ապա կարծում ենք, որ այն հետապնդում է մեկ նպատակ. տարածաշրջանում դառնալ ազդեցիկ պետություն, մասնակցել տարածաշրջանային կարևորագույն խնդիրների կարգավորմանը, իր տեղն ու դերն ապահովել Մերձավոր և Միջին Արևելքում ծավալվող գործընթացներին: Դրա վառ ապացույցն է վերջերս մշակված Իրանի «20-ամյա հեռանկարի» ծրագիրը, ըստ որի 20 տարի անց

Իրանը պետք է լինի տարածաշրջանում զարգացած և հզոր տերություն: Դրան հասնելու համար ԻԻՀ-ն առաջին հերթին մեծ ուշադրություն է դարձնում զիտատեխնիկական զարգացմանը, էներգետիկ կարողությունների բազմազանացմանը:

Հատկանշական է, որ դեռևս 1970-ականներին պաշտոնական թեհրանը երկրի էներգետիկ կարողությունների բազմազանացման մասին որոշում էր ընդունել: Այդ գործում, որքան էլ տարօրինակ է. Իրանին օգնեցին հենց Արևմտյան տերությունները: Հիշեցման համար կարող ենք նշել, որ դրա հիմքը դրվել է դեռևս 1978թ. օգոստոսին, երբ ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ ԱՄՆ-ը պարտավորվում էր կատարել ատոմային էներգետիկ 8 կառույց: Բացի այդ, դեռևս 1960-ականների վերջին թեհրանի համապարամի միջուկային կենտրոնում գործում էր Սիացյալ Նահանգների կողմից տեղադրված 5 ՄՎտ ընդհանուր հզորությամբ հետազոտական ռեակտոր, որն աշխատում էր բարձր հարստացված ուրանով /հարստացման աստիճանը հետազայում 93%-ից իջեցվեց 20%-ի/: ԱՄՆ-ը հատկապես էր մաս «տաք խուց» ոչ մեծ քանակի պլուտոնիում առանձնացնելու համար՝ Նախատեսվում էր մինչև 2000թ. կառուցել 20 ԱԷԿ՝ 23 հազար մեգավատ ընդհանուր հզորությամբ, որի շնորհիվ Իրանը կդառնար Մերձավոր և Սիջին Արևելքում ատոմային էներգետիկայանների ցանց ունեցող հզոր տերություններից մեկը: ԳՖՀ-ի «Աիմենա» կորպորացիան ատոմակայանների կառուցման առաջին փորձն իրականացրեց Բուշեհրում: Այդ գործին մեծապես աջակցում էր մաս. Ֆրանսիան՝ ծրագրելով ատոմակայաններ ստեղծել Արաղանում և Անվազում: Ֆրանսիացիները նախատեսում էին Քարուն գետի ափին՝ Անվազում, կառուցել PWR (Pressured Water Reactor) տիպի 950 ՄՎտ հզորությամբ երկու ռեակտոր (յուրաքանչյուրը մոտ 2 մլրդ դոլար արժողությամբ)՝: Այդ ամենով հանդերձ, Իրանում սկսվեցին ուրանի հանքավայրերի որոնման աշխատանքները, որոնք պատկանում են հաջողությամբ: Յազդ նահանգում հայտնաբերվեց ուրանի որոշակի քանակի պաշար, որն այսօր Մերձավոր Արևելքում համարվում է ամենախառը:

Սակայն Իրանի Իսլամական Հեղափոխությունը խոչընդոտեց գերհզոր տերությունների ծրագրերի իրականացմանը, քանզի նորաստեղծ թեոկրատիկ կառավարությունը հրաժարվեց Արևմտյան տերությունների յուրաքանչյուր օգնությունից, այդ թվում մաս՝ միջուկային ոլորտի աշխատանքներում: Իրանի Ատոմային էներգետիկայի կազմակերպությունը չեղյալ հայտարարեց նախկինում կնքված պայմանագրերը ԳՖՀ-ի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ:

Ինչպես Ձորջ Բուշ Ավագը, այնպես էլ Բիլլ Քլինթոնը Իրանի նկատմամբ վարում էին կոշտ քաղաքականություն՝ սահմանափակելով արևմտյան առաջադեմ տեխնոլոգիաների ներկրումը թեհրան: Ապի-

տակ տան անմիջական ճնշման տակ հայտնվեցին Արզնետիցան, Բրազիլիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Հնդկաստանը և Ֆրանսիան, որոնք ստիպված դադարեցրին միջուկային լյութերի և սարքավորումների ներմուծումն Իրան: Միջուկային ուղղաձու Իրանի հետ շարունակեցին համագործակցել Չինաստանը և Պակիստանը<sup>3</sup>:

Առաջին հայացքից, այսօր կարծես թե որևէ բան չի վտխվել ԻԻՀ-ն բազմիցս հայտարարել է, որ Իրանի միջուկային հետաքրքրությունները գործում են «փաղաղ ատամ» ծրագրի շրջանակներում, այսինքն՝ այն, ինչ ժամանակին Իրանում վտրծում էին իրականացնել ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Գերմանիան: Ի դեպ, 1997թ. հուլիսին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (այսուհետ՝ ԱԵՄԳ) տնօրեն Հանս Բելիքսը, դրական էր համարել Իրան-ԱԵՄԳ համագործակցությունը<sup>4</sup>:

2001թ. մարտին Ռուսաստանի Դաշնություն այցելեց Իրանի նախագահ Մեհմեդադ Խաթամիին, և բանակցությունների սեղանին, ի թիվս մի շարք այլ հարցերի, դրվեց նաև Իրանի միջուկային ծրագրերին Ռուսաստանի առավել գործնական աջակցության հարցը: Ի վերջո Բուշեի լի կառուցման գործն իր ձեռքը վերցրեց Ռուսաստանը, և այժմ նրա աջակցությամբ Բուշեիում կառուցվում է ԵԵՅՔ-1000 տիպի ռեակտոր, որը չի կարող օգտագործվել միջուկային զենք ստեղծելու համար<sup>5</sup>:

2002թ. Իրանի կառավարությունը հայտարարեց երկրի միջուկային էներգետիկայի երկարամյա ծրագրերի զարգացման մասին: Նախատեսվում էր 20 տարվա ընթացքում ստեղծել ԱԵԿ՝ 6000 ՄԿՎ ընդհանուր հզորությամբ, ինչպես նաև միջուկային վառելիքի ամբողջական ցիկլ՝ ապագա ԱԵԿ-ների վառելանյութ մատակարարելու նպատակով<sup>6</sup>:

Մակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 2002թ., երբ Իրանի կառավարությանն ընդդիմադիր համարվող Մոջահեդին-ն Խալզ<sup>7</sup> խմբակցությունն ի լուր աշխարհին հայտարարեց, թե ԻԻՀ-ն համաշխարհային հանրությունից զաղտնի զբաղված է ուրանի հարստացմամբ, և, որ ամենակարևորն է, աշխատում է միջուկային զենք ստեղծելու ուղղությամբ: Ավելին, 2002թ. դեկտեմբերին Պենսազոնը, հենվելով արբանյակներից

<sup>3</sup> Հիմնվել է 1965թ. Թեհրանի համալսարանականների կողմից, ովքեր դժգոհ էին շահի կառավարումից: Նրանց զաղափարախոսությունն էր՝ պայքարել շահական վարչակազմի, կապիտալիզմի, իմպերիալիզմի և կրեոլականության դեմ: Նրանց հիմնական նպատակն էր՝ ստեղծել սոցիալիստական իսլամական հանրապետություն: Մոջահեդին-ն Խալզն աջակցում էր Խոմեյնիին հակամերիկյան գործունեության ժամանակ, և ողջունեց 1979թ. Իրանում ԱՄՆ-ի դեսպանատան գրավումը: Մակայն շուտով նրանք դարձան Խոմեյնու վարչակազմին ծայրահեղ ընդդիմադիրներ և նրանց գործունեությունը դարձավ խիստ վտանգավոր Խոմեյնու համար: Նա միջոցներ ձեռնարկեց կազմակերպությունը լուծարելու համար: Բայց Մոջահեդին-ն Խալզը, անցնելով ընդհատակ, շարունակեց իր գործունեությունը ԻԻՀ դեմ<sup>8</sup>:

ստացված տեղեկատվության վրա, հայտնեց, որ Արաքի մոտ Իրանի կենտրոնական մասում, կառուցվում է ծանր ջրի արտադրության ռեակտոր<sup>7</sup>:

2003թ. փետրվարի 21-23-ին Իրան այցելեց ԱԷՄԳ-ի ներկայացուցիչների մի խումբ՝ Մ. Էրաբազեի գլխավորությամբ: Նրանց ցույց տրվեց Նաթանզի ուրանի հարստացման սարքը, սակայն նրանց արգելեցին այցելել Արաքում գտնվող ծանր ջրի արտադրության գործարանը և Յազդի մոտակայքում գտնվող ուրանի արտահանման հանքահորերը:

2003թ. մայիսի 6-ին Իրանի փոխնախագահ և միջուկային էներգիայի հանձնաժողովի նախագահ Ռ.Աղազադեից քաջատրեց, որ ծանր ջրում ամիրածեշտ է Իրանին, CANDU-ն տիպի ռեակտորը շահագործելու համար: Սակայն այդ բացատրությունը չցրեց անկախ լրագրողներին<sup>8</sup>:

2003թ. սեպտեմբերի վերջին Իրանում, մի շարք ուսումնասիրություններից հետո, ԱԷՄԳ-ի վտրձագետները Նաթանզում հայտնաբերեցին քարձր հարստացված ուրանի հետքեր, որը հավելյալ լրագրության պատճառ դարձավ: Սակայն Իրանի ներկայացուցիչը ԱԷՄԳ-ում հայտարարեց, թե այն Իրան է հասել ներմուծված սարքավորումների միջոցով (խոսքը գնում էր Պակիստանից բերված ցեմտրիֆուգների մասին-Ի.Գ.)<sup>9</sup>: Բայց որոշ ժամանակ անց Իրանն ընդունեց, որ 1990թ. իրականացրել է ուրանի հարստացում՝ չտեղեկացնելով այդ մասին ԱԷՄԳ-ին: Ի հավելումն այդ ամենի, 2004թ. փետրվարի 2-ին Արդուլ-Քադիր Խանը՝ պակիստանյան միջուկային զենքի հայրը, խոստովանեց, որ միջուկային տեխնոլոգիաներ է հանձնել Իրանին, Լիբիային, ԿԺՀ-ին և Մալայզիային<sup>10</sup>: Այս հայտարարությունն ավելի ամրապնդեց Արևմուտքի այն կասկածը, թե Իրանը ձգտում է Պակիստանի օրինակով ստեղծել իր միջուկային զենքը չնայած որ, 2004թ. նոյեմբերի 15-ին Վիեննայում ԱԷՄԳ-ի շտաբ-կայանում տեղի ունեցած քննարկումների ժամանակ, Իրանը կրկին վերահաստատեց պաշտոնական իր տեսակետը, որ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ չի ձգտել և չի ձգտում ձեռք բերել միջուկային զենք<sup>11</sup>: Փոխարենը, Եվրոմիությունն ընդունեց Իրանի իրավունքը, այն է՝ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամակցության շրջանակներում ատոմակայանը շահագործել խաղաղ նպատակներով: Սակայն այսօր Միացյալ Նահանգների ճնշման տակ եվրոպական երկրները փոխել են իրենց դիրքորոշումը սույն խնդրի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ միջուկային ծրագրերի հարցում ԱՄՆ-ը դիմում է երկակի ստանդարտների. Իսրայելը, որ բացահայտ պնդում է իր տրամադրության տակ եղած զանգվածային ոչնչացման զենքի առկայության մասին, չի ենթարկվում ճնշումների: Այդ կապակցությամբ ԱՄՆ-ի Ազգային անվտանգության ճախին խորհրդական Ջ. Բեթեինսկին մատնան-

շում է, որ Մերձավոր Արևելքում, փաստորեն, միայն Իսրայելն է, որ ունի միջուկային զենք, որն էլ, քննականաբար, նյարդայնացնում է Իրանին: Ըստ որոշ տվյալների Իսրայելը ունի մոտ 200 միջուկային ռումբ<sup>14</sup>:

Միացյալ Նահանգներն ամհանգստացած է նաև Իրանում տեղափոխման սարքերի՝ արդիականացված հրթիռների անկայությունից: ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Քոլին Փաուելը իր ելույթներից մեկում մատնանշել է, թե Իրանն աշխատանքներ է տանում գոյություն ունեցող քայիստիկ հրթիռների վերափոխման ուղղությամբ այնպես, որպեսզի դրանք կարողանան կրել նաև միջուկային մարտագլխիկներ<sup>15</sup>: Խոսքը առաջին հերթին գնում է «Շահաբ-3» տիպի հրթիռի մասին: Շահաբ տեսակի հրթիռը կարող է հատել Իսրայելի սահմանը: Ի դեպ, հրթիռի քոնյքի առավելագույն հեռավորությունը 1500 կմ է, իսկ հաշվարկայինը՝ 1300 կմ<sup>16</sup>: Այն կարող է տանել 750 կգ քաշով մարտագլխիկ: «Շահաբի» գործողության շառավղում են գտնվում Մերձավոր և Միջին Արևելքի, Կենտրոնական և Հարավային Ասիայի տարածքները:

Միացյալ Նահանգներն էլ ելնելով Ջ.Բուշ Կրտսերի վարչակազմի մշակած Մեծ Մերձավորարևելյան ծրագրերից՝ փորձում են իրենց վերահսկողության տակ պահել ուղջ տարածաշրջանը՝ չենթարկվող պետությունների նկատմամբ իրականացնելով ճնշումների մի ամբողջ փաթեթ: Բազմաթիվ գրվել է, թե ԱՄՆ-ը կարող է հրթիռա-ավիացիոն ռմբակոծություն իրականացնել իրանական այն օբյեկտների վրա, որոնք համարում է ռազմավարական: Այնուհետև տեղեկատվություն տարածվեց, թե Իսրայելը ԱՄՆ-ից շուտ կոմերակոնդի Իրանի միջուկային օբյեկտները, սանավանդ, որ վերջինս նման փորձ արդեն ուներ Իրաքի հետ կապված<sup>17</sup>: Սակայն, ի տարբերություն Իրաքի, Իրանի միջուկային օբյեկտները, որոնց թիվն անհայտ է, տեղակայված չեն մեկ վայրում, այլ ցրված են ամբողջ երկրով մեկ: Առաջին իսկ նման գործողության դեպքում, ԻԻՀ-ը կարող է օգտագործել Շահաբ տեսակի հրթիռն ընդդեմ Իսրայելի:

Կարծում ենք, որ Ջ.Բուշի «ռազմատենչ» հայտարարությունն ավելի շուտ «տեղեկատվական ահաբեկությունն» էր Իրանի նկատմամբ, եվրոպական երկրների տեսակետները ճշտելու մի տարբերակ, ինչպես նաև միջազգային հանրության ուշադրությունը Իրաքից շեղելու ձգտում: Թեև չենք կարող քացառել նաև ապագայում ԱՄՆ-ի նախագահի հայտարարության իրականացման տարբերակը: Բայց առավել հավանական ենք համարում ԱՄՆ-ի կողմից Իրանում խռովարար ուսանողների, ազգայնական շարժումների, թագավորամետ և կառավարությանն ընդդիմադիր ուժերի հրահրումը, որի արդյունքում կջանան փոխել գործող վարչակարգը:

<sup>14</sup> 1981թ. Իսրայելը ռմբակոծության ենթարկեց Օսիրակում իրաքյան միջուկային օբյեկտը:

2005թ. փետրվարին Ջ.Բուշը Կոնգրեսում հանդես եկավ նախագահական տարեկան ուղերձով, որտեղ անդրադարձավ նաև Իրանին. «Այսօր Իրանը մնում է աշխարհում գլխավոր պետությունը, որը հովանավորում է ահաբեկչությանը: Չգտում է ձեռք բերել միջուկային զենք և գրկում իր ժողովրդին ազատությունից, ինչին (ազատությունից զրկվելուն, Ի.Գ.) նա իրավամբ արժանի է: Իսկ Իրանի ժողովրդին, ես այսօր ուզում եմ ասել՝ եթե դուք ոտքի կանգնեք հանուն ձեր ազատության, Ամերիկան ձեզ հետ կլինի»<sup>17</sup>:

Իրանի նկատմամբ լարվածությունն առավել սուր բնույթ կրեց, հատկապես ԻԻՀ նախագահ Մ.Ահմադինեժադի հայտնի ելույթներից հետո: Մակայն կարծում ենք, որ այդ ելույթները զուտ պոթելումներ չէին, այլ նախօրոք մշակված ծրագրի արդյունք: Դրանով լուծվում է մի քանի խնդիր. նոր լիցք է հաղորդվում խումեյնիզմի գաղափարներին, որոնք վերջին տարիների ընթացքում (Ռաֆսանջանի և Խաթամիի օրոք) կարծես փոքր-ինչ նահանջել էին, «աջակցություն» է ցուցաբերվում տարածաշրջանում «հալածված» պաղեստինցիներին, փորձելով այդպես հովանավորի դեր խաղալ Արաբական աշխարհում: Եվ ակնհայտ է, որ Մ. Ահմադինեժադի ելույթները պետք է ընդունվեն ոչ միայն Իրանի հոգևորականության ու պահպանողականների կողմից, այլ նաև միլիտանտ արաբների, որոնք ատելությամբ են լցված սիոնիզմի դեմ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք ընդգծել մեր այն տեսակետը, որ Իրանը ձգտում է տարածաշրջանում ունենալ իրական և կայուն ազդեցության ոլորտ: Որպես ապացույց մեջբերենք նաև ԻԻՀ նախագահի մի քանի առաջարկները, որոնք հնչեցին 2005թ. դեկտեմբերի 9-ին ԻԿԿ գագաթաժողովի ժամանակ: Համաձայն ԻՌՆԱ գործակալության՝ նա կոչ արեց գագաթաժողովի մասնակիցներին ձևավորել մահմեդական երկրների միություն, հետահաղորդագրության կազմակերպություն, հորտորեց թեթևացնել մաքսային վերահսկողությունը, ստեղծել ընդհանուր Իսլամական շուկա, Իսլամական արքիտրաժային դատարան և հիմնել մարդու իրավունքների Իսլամական կազմակերպություն: Նա հանդես եկավ նաև Իսլամական պետությունների միջև կոնկրետ անվտանգության և պաշտպանության պայմանագրեր կնքելու նախաձեռնությամբ: Միևնույն ժամանակ, Ահմադինեժադը հայտարարեց, որ աշխարհի մեկ հիմնգերուղ մասը կազմում են մահմեդականները և անհրաժեշտ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ընդգրկել մահմեդական որևէ պետություն<sup>18</sup>: Հատկանշական է, նաև ԻԻՀ նախագահի Ջ.Բուշին հղած նամակը<sup>19</sup>, որով Իրանն ակնհայտորեն առաջադրում է պետության դեր խաղալու վարձ է կատարում, որտեղ «նոգատարություն» է ցուցաբերվում Իրաքի և Պաղեստինի ժողովուրդների նկատմամբ:

Սեր կարծիքով Իրանի միջուկային զենքի ձեռք բերումից զատ, Արևմուտքը խիստ անհանգստանում է Իրանի զիտաստիանիկական մեծ

«թոյնքի» պատճառով, որի արդյունքում, 10-20 տարի հետո Իրանն ամբողջությամբ կվարի ինքնուրույն քաղաքականություն և ամենայն հավանականությամբ տարածաշրջանում առաջացած խնդիրը կփորձի լուծել ռեզիմի ներքին ռեսուրսների հաշվին՝ քացառելով Արևմտյան երկրների միջամտությունը, դրանով իսկ նրանց հետո պահելով գերշահույթ քերոյ էներգակիրներից: Ինչ վերաբերում է նախագահի սուր ելույթներին, ապա դրանք մտահոգի են այնքանով, որքանով հնարավոր է, որ Իրանում ոչ քոլորը կհսեն նրա տեսկետները:

Բազմիցս խոսվեց նաև այն մասին, որ Իրանի հարցը կքարձրացվի ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդում, և խնդիրը կլուծվի այդ շրջանակներում: Իրանի հարցը ՍԱԿ-ի ԱՆ-ին վախանցելուն միշտ դեմ են արտահայտվել ՌԴ և Չինաստանը: Դա առավել ակնհայտ դարձավ, երբ 2005թ. սեպտեմբերի 24-ին ԱԷՄԳ-ն Իրանի նկատմամբ ռոդեզոնց կոշտ դիրքորոշում՝ Թեհրանից պահանջելով կասեցնել ուրանի հարստացման ռոդուրյան վարձերի վերսկսումը՝ սպառնալով հակառակ դեպքում գործը հանձնել ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդ: Բանաձևը ընդունվեց ձայների մեծամասնությամբ, Ռուսաստանը և Չինաստանը մնացին ձեռնպահ: Ի զարման Իրանի՝ Հնդկաստանը, որը խոստացել էր իր աջակցությունը ԻԻՀ-ին, պաշտպանեց Արևմտյան տերությունների շահերը, քանի որ Սիացյալ Նահանգներից ստացել էր միջուկային ուրանի հետ կապված իրական խստումներ: ԱՄՆ-ը և Եվրոպական «նոյակն» էլ, հաշվի առնելով Ռուսաստանի շահերը, որը ՉԺՀ-ի հետ ընդդիմացավ Իրանի գործը ՍԱԿ-ի ԱՆ հանձնելուն, վճռեց պաշտոնական Մոսկվային տալ հավելյալ ժամանակ՝ Թեհրանի հետ միջուկային ուրանի խնդրի կապակցությամբ վախճիջումների շուրջ քանակություններ իրականացնելու համար<sup>20</sup>:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 2005թ. վերջին Իրանի մեջիսն ընդունեց օրենք, որի համաձայն՝ եթե ԱԷՄԳ-ն իրանական հարցը հանձնի ՍԱԿ-ի ԱՆ-ին, ապա Իրանը կդադարեցնի համագործակցությունն ԱԷՄԳ-ի հետ: Սույն օրենքը ղեկտեմբերին վավերացվեց նախագահի կողմից: Հնարավոր է, որ Իրանը հետապնդում է հենց այդ նպատակը, չհամագործակցել ԱԷՄԳ-ի հետ, դուրս գալ «Միջուկային զենքի չտարածման պայմանագրից» և այդպիսով ամբողջովին ազատ կլինեն Իրանի «ձեռքերը»: Անկայն ճշմարտությունն արձանագրելու համար հարկ է նշել, որ Իրանը 1970թ-ից անդամակցում է Միջուկային զենքի չտարածման պայմանագրին, 1974թ. ԱԷՄԳ-ի հետ ստորագրել է համապարփակ երաշխիքի համաձայնագիր, իսկ 2003թ. դեկտեմբերի 18-ին Իրանը ստորագրեց երաշխիքների համաձայնագրին զուգահեռ «Հավել-

յալ արժանագրություն»<sup>\*</sup>. որով կարծես քե Իրանի միջուկային ծրագիրը ամբողջովին բաց է դառնում գործակալության համար:

Պաշտոնական Մոսկվան առաջարկում է Իրանի համար նախատեսված ուրանը հարստացնել Ռուսաստանի տարածքում՝ իրանցի մասնագետների վերահսկողությամբ: Իրանը դեմ է այդ տարբերակին՝ հայտարարելով, որ ուռնահարվում է «խաղաղ ատոմի» շրջանակներում ուրանի հարստացման իր օրինական իրավունքը:

Ըստ Ռուսաստանի արտգործնախարար Ս.Լավրովի՝ դա Իրանի «խաղաղ ատոմ» ծրագրի համար ամենահարմար տարբերակն է, մասնավաճ, որ Իրանի համար առավել շահավետ է զմեյ վառելիքն արտասահմանից. քան վատնել ահռելի զուճարներ սեփական վառելիքի ամբողջական ցիկլ ստեղծելու համար<sup>21</sup>:

2006թ. հունվարի 10-ին ԱԵՄԳ-ի մասնագետների ներկայությամբ Իրանի միջուկային 3 օբյեկտներում հանվեցին կապարակնիքները: Իրանը դա բացատրում է հետևյալ կերպ: 2004թ. պաշտոնական Թեհրանը որպես բարի կամքի դրսևորում դադարեցրեց միջուկային ոլորտում իր հետազոտությունները, որոնք, ըստ ձեռք բերված պայմանավորվածության, պետք է վերսկսվեին 2 տարի անց: Այդ պայմանավորվածության ժամկետը լրացել է, և այժմյան կառավարությունն իրեն պարտավորված չի զգում իրականացնելու նախկին կառավարության որոշումը ուղին:

Եթե կապարակնիքների հետագման առաջին օրերին Ռուսաստանը զգալիորեն սուր արտահայտվեց Իրանի հասցեին, ապա մի քանի օր անց կարծես քե նրանց վերաբերմունքը մեղմացավ: Դրա վառ ապացույց կարող է հանդիսանալ Ս.Լավրովի մամուլի ասուլիսը, որտեղ նա, մասնավորապես անդրադառնալով Իրանի խնդրին, հայտարարեց, որ պատժամիջոցները միակ և լավագույն տարբերակը չեն միջազգային խնդիրների լուծման համար: Նա նշեց, որ պատժամիջոցների իրականացումը նույնն է, քե «սայլը կանգնեցնեն ձիու առաջ»: «Մենք հիշում ենք Իրաքի նկատմամբ պատժամիջոցների կիրառման պատմությունը և քե ինչով այն ավարտվեց: Մինչև այսօր մենք շարունակում ենք հաղթահարել այն իրավիճակի հետևանքները, որում հայտնվեց Իրաքը»<sup>22</sup>:

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա նույնիսկ այդ լարված իրավիճակում նա ևս զտնում է, որ հարցը պետք է լուծվի միմյայն դիվանագիտական ուղիներով:

Դաշնակցային հարաբերություններից զատ, Իրանը, Ռուսաստանը, Չինաստանը իրար հետ կապված են տնտեսական մի շարք «անքակտելի» կապերով և Իրանի նկատմամբ հմարավոր պատժամիջոցները կհարվածեն ինչպես Չինաստանի, այնպես էլ Ռուսաստանի շահե-

<sup>\*</sup> Համաձայն հավելյալ ծրագրի ԱԵՄԳ-ի ներկայացուցիչները կարող էին առանց նախապես զգուշացնելու մտնել երկիր և ուսումնասիրություններ կատարել:



րին,<sup>21</sup> և հենց դրանով է պայմանավորված Իրանի նկատմամբ երկու վե-  
րոնիչյալ պետությունների հովանավորական քաղաքականությունը:

Վերջին շրջանում լրահոսում ի հայտ են գալիս նյութեր, ԱՄՆ-ի  
կամ Իսրայելի կողմից Իրանի նկատմամբ ուժի կիրառման մասին:  
Շրջանառվող տեղեկատվության համաձայն ԱՄՆ-ը պատրաստվում է  
Ադրբեջանի Հանրապետությունում տեղակայել ռազմական բազաներ:  
Այդ յուրերև առավել արժանահավատ են դառնում հաշվի առնելով, որ  
մեկ տարվա ընթացքում Պենտագոնի ղեկավարը երկու անգամ այցելեց  
Իսրայել: Համաձայն ադրբեջանցի լրագրող Ջ.Ռասուլզադեի՝ մշվում է, որ  
ամերիկյան բազաների տեղակայմամբ փորձ է արվում Ադրբեջանում  
ստեղծել մարտահենադաշտ (պլացդադ)՝ ընդդեմ Իրանի՝ ԱՄՆ-ի հնա-  
րավոր ցամաքային գործողությունների ծավալման համար<sup>22</sup>: 2006թ. մա-  
յիսին էլ Ի. Ալիևն այցելեց ԱՄՆ, որտեղ Բուշի հետ քննարկեցին տարա-  
ծառքանային մի շարք հարցեր: Համաձայն ԲիԲիՍի-ի տեղեկատվոթ-  
յան երկու նախագահները հիմնականում քննարկել են Իրանի հարցը: Ի  
դեպ, նույն տեղեկատվության համաձայն Միացյալ Նահանգները վեր-  
ջերս Ադրբեջանում կառուցել են ռադիոտեղուղտման երկու կայան, որը  
պաշտոնապես իրականացվել է ամերիկա-ադրբեջանական ռազմական  
համագործակցության շրջանակներում<sup>23</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ Միացյալ Նահանգներն առավելապես  
անհանգստացած է ԻԻՀ-ի գիտատեխնիկական ոլորտում ձեռք բերած  
հաջողություններից և փորձելու է ամեն կերպ կանխել ԻԻՀ-ի զարգա-  
ման ընթացքը: Սակայն միևնույն ժամանակ Միացյալ Նահանգները իր  
գործունեությամբ նպաստում է տարածաշրջանում Իրանի հզորացմանը,  
մի կողմից՝ ոչնչացնելով Իրանին անհանգստացնող թալիբյան վարչա-  
կարգը, մյուս կողմից՝ Սադդամի կառավարությունը:

Այսօր Իրանի միջուկային ոլորտում արդեն իրավիճակը փոքր-ինչ  
այլ է, քանի որ գրանցվել է առաջընթաց: Վերջերս իրանական կառավա-  
րության կողմից հայտարարվեց, որ հաջողվել է ուրանի հարստացման  
աստիճանը հասցնել մինչև 4.8%-ի<sup>24</sup>, և այժմ կարծում ենք, որ «եվրոպա-

<sup>21</sup> 2004թ. հոկտեմբերին Չինաստանը Իրանի հետ կնքել էր 70 մլրդ դոլարի պայ-  
մանագիր բնական գազի մատակարարման<sup>25</sup> վերաբերյալ: Վերջերս Չինաստա-  
նը Իրանի հետ կնքել է նոր պայմանագիր, որի համաձայն, 250 մլն տոննա բնա-  
կան գազ պետք է մատակարարվի Իրանի կողմից մինչև 2029թ., մեկ այլ պայմա-  
նագրով Չինաստանը Իրանից օրական ստանալու է 130 հազար բարել մավթ  
քաղորդ դարի ընթացքում: Իրանի և Չինաստանի միջև 2005թ. առաջին ութ աս-  
միսների ընթացքում առևտրաշրջանառությունը կազմել է 6,332 մլրդ. դոլար, որը  
նախորդ տարվա համեմատությամբ 44,2%-ով աճ է արձանագրում: Ռուսաս-  
տանը համարվում է Իրանի ռազմա-տեխնիկական ոլորտի ամենախոշոր գոր-  
ծընկերը: 1995թ-ից մինչև 2002թ. երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը  
աճել է հինգ անգամ և հասել է 1 մլրդ դոլարի սանդղակը<sup>26</sup>:

կան եղյակը» Իրանի հետ տարվող բանակցություններում նոր առաջարկներ կներկայացնի: Հատկանշական է, որ դրանից հետո Միացյալ Նահանգները ցանկություն հայտնեց մասնակցելու Իրանի հետ տարվող բանակցություններին: Այս համատեքստում հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ 2006թ. մայիսի 31-ին լրատվամիջոցները ներկայացրին ԱԷՄԳ-ի տնօրեն Մուհամեդ է-Քարադեյի զեկույցը, որտեղ նա նշում էր. «Իրանը չի հանդիսանում միջուկային սպառնալիք միջազգային հանրության համար»<sup>21</sup>:

Եզրակացնենք. իր բնական անելի պաշարներով, տարածաշրջանային խնդիրներին ակտիվորեն մասնակցելու հնարավորությամբ, մրցակիցների խաղից դուրս գալով, շնորհիվ գիտատեխնիկական նոր նվաճումների և հզոր դաշնակիցների աջակցությամբ, ԻԻՀ-ն ձգտում է Մերձավոր և Միջին Արևելքում ձեռք բերել մեծ ազդեցություն, որը կնպաստի իր երբեմնի հզոր կարգավիճակի վերականգնմանը որչափ անհրաժեշտ է:

GOHAR ISKANDARYAN

**THE NUCLEAR PROGRAMME OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN  
AND THE SITUATION CONCERNING IT.**

The attention of international society among other world problems is now focused on the Islamic Republic of Iran. The basic problem is the nuclear program of Iran. It is noteworthy that though the mentioned program has been founded in 1970's with the support of the USA, France and Germany, but now these states accuse Iran of trying to make nuclear weapons. Although Iranian politicians declare that the main aim of their nuclear program is to make atoms for peace, the great states do not take these declaration trustworthy.

We think, that the goal of Iranian politics is to get real influence over the Middle and Near East countries by getting realized the nuclear program.

ԾԱՆՈԹԱԳՈՒԹՈՒՆՆԵՐ

1. Р.М.Тимербаев, Россия и ядерное нераспространение, М, 1999, с. 151.
2. Антон Хлопков, Иранская ядерная программа в российско-американских отношениях, Москва, 2001, Научные Записки ПИР-Центра №18, М., 2001, <http://www.pircenter.org/data/publications/nz18.pdf>
3. Международная жизнь, 1995, N 7, с. 20.
4. ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական քաժին (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի քաժին, ցուցակ 2, գործ N169, էջ 80, «Արրար» 24.07.1997.

5. А.В. Хлопков, В.Ф. Лата. Иран: ракетно-ядерная загадка для России. Вопросы безопасности. No 6 (140), июль 2003. <http://www.pircenter.org/data/publications/vb6-2003.html>
6. Р. Тимурбаев, Ближний Восток и атомная проблема, Ядерный контроль, N3, (69), т.9, с. 24.
7. Р. Тимурбаев, Ближний Восток..., Ядерный контроль, N3 (69), т.9, с. 25.
8. Mujahedin-e Khalq Organization, Muslim Iranian Student's Society <http://terrorism.wallst.ru/mek.htm>
9. Владимир Хлебников, Роль МАГАТЭ в решении актуальных проблем нераспространения ядерного оружия, Ядерный контроль, N1 (71), том 10, с. 89-90.
10. Там же, с. 90.
11. Там же, с. 91.
12. Владимир Хлебников, Роль МАГАТЭ в решении актуальных проблем нераспространения ядерного оружия, Ядерный контроль, N1 (71), том 10, с. 91.
13. Nuclear Agreement reached between Iran and the European Union (November 15, 2004) <http://www.iranatom.ru/reports/rep056.htm>
14. Интервью Э.Бежвинского <http://www.iranatom.ru/news/media/year04/november/zb.htm>
15. Сегодня Иран приостанавливает ядерную программу, 22 ноября 2004, <http://www.mideast.ru/new/index.php?base=rus&showme=891&rbshowme=18&action=show>
16. Иран продемонстрировал на параде баллистическую ракету средней дальности "Шехаб-3" <http://www.defense-ua.com/rus/news/?id=10331>
17. Буш объявил Иран главным спонсором терроризма [http://www.iran.ru/rus/news\\_iran.php?act=news\\_by\\_id&news\\_id=27347](http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=27347)
18. Основные моменты выступления Махмуда Ахмадинежада на саммите глав государств-членов ОИК в Мекке, <http://www.ima.ir/ru/news/view/line-63/0512097484201253.htm>
19. Sbu` Полный текст письма Президента Исламской Республики Иран Президенту Соединенных Штатов Америки, <http://www.ima.ir/ru/news/view/line-62/0605115150120344.htm>
20. Судьба иранского ядерного досье передается в руки России <http://www.gian.ru/analitics/20051123/42190552.html>
21. Лавров: Россия не заинтересована в международной изоляции Ирана, Раидо "Эхо Москвы", 12.01.06г., [http://www.iran.ru/rus/news\\_iran.php?act=news\\_by\\_id&n=1&news\\_id=36721](http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&n=1&news_id=36721)
22. Стенограмма ответов на вопросы СМИ Министра иностранных дел России С.В. Лаврова на пресс-конференции по итогам 2005 года, Москва, 17 января 2006 года, Сообщение №33-17-01-2006, МИД Российской Федерации, [www.iranatom.ru/news/media/year06/january/sten.htm](http://www.iranatom.ru/news/media/year06/january/sten.htm)
23. Будущий плацдарм США-Азербайджан, <http://www.pravaya.ru/look/4476>
24. Егор Шилов, Би-би-си, Вашингтон, Буш и Алиев обсудили Иран? [http://news.bbc.co.uk/1/hi/russian/news/newsid\\_4956000/4956248.stm](http://news.bbc.co.uk/1/hi/russian/news/newsid_4956000/4956248.stm)

25. А.В. Хлопков, В.Ф. Лата. Иран;  
<http://www.vjcenter.org/data/publications/vb6-2003.html>
26. Исламский Иран санкций не боится.  
<http://www.iranatop.ru/news/aeoi/year05/april/rolloff.htm>
27. Иран: предложения Евросоюза обсуждаемы. <http://www.iranatop.ru/news/iri/ear06/mav/comeu.htm>
28. Сенсационное заявление главы МАГАТЭ [http://www.iran.ru/rus/news\\_iran.php?act=news\\_by\\_id&\\_p=1&news\\_id=40174](http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&_p=1&news_id=40174)

ԱՐԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ-Ի ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ԱՍՊԵԿՏՆԵՐԻ ՇՈՒՐՁ (1982-1984 ԹԹ.)

1981-1982թթ. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը նշանավորվում է Շոգի անվտանգության խնդիրներից լիբանանյան ճգնաժամի և արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ դիվանագիտական ջանքերի ուղղորդմամբ՝ Նշյալ հակամարտության համապարփակ կարգավորմանը կասեցնող զարգացումները նպաստեցին 1982թ. հունիսի 6-ին Լիբանան ներխուժմանը՝ վերջինիս նկատմամբ իսրայելական ագրեսիայի (Արևել Շարունի «Մեծ նախագծի») իրագործմանը: Այն Իսրայելի կողմից մեծ տերության կարգավիճակի հասնելու նպատակով բազմափուլ ծրագրի իրականացումն էր, որը կոչվեց «Գալիլիայի խաղաղության ռազմական գործողություն»: Առաջին փուլում Իսրայելը պետք է օկուպացներ հարավային Լիբանանը՝ դուրս մղելով այնտեղ հաստատված ՊԱԿ-ի ռազմիկներին: Վերջինիս ռազմաքաղաքական ենթակառուցվածքի ոչնչացմամբ կապահովվեր պաղեստինյան գրոհներից Իսրայելի հյուսիսային սահմանամերձ բնակավայրերի անվտանգությունը: Թե՛լ-Ավիվի կարծիքով՝ պաղեստինյան ազգայնականության քաղաքական ու մտավոր կենտրոնի ոչնչացման արդյունքում կթուլանար ՊԱԿ-ի քաղաքական դիրքերն ու հեղինակությունը: Այնուհետև պետք է ամրապնդվեր Լիբանանի հարավում Իսրայելի դրամա իրականացնող լիբանանյան բանակի նախկին մայր Մաադ Հադդադի կառավարությունը:

Հաջորդ փուլում Իսրայելը պետք է ձգտեր թուլացնել Լիբանանի ձախ ուժերի՝ դիրքերը՝ փոխարենը ամրապնդելով երկրի քաղաքական կառույցներում իր հետ համագործակցության պատրաստ աջակողմյան ուժերի՝ դիրքերը: Աջերի շրջանում գլխավոր դերում պետք է հանդես գար «Քաթաիբ» կուսակցությունը, որն Իսրայելի հետ հաշտագիր ստորագրելու և դաշնակցելու նախապայմանով՝ Թե՛լ-Ավիվի աջակցությամբ «քաղաքական նոր վարչակարգ» (Բաշիր Ժմայելի նախագահությամբ) պետք է հաստատեր: ԱՄՆ-ի աջակցությունն իսրայելական ագրեսիայի հարցում ապահովելու նպատակով Իսրայելն այն պայմանավորում էր Մերձավոր Արևելքում (այսուհետ՝ ՄԱ) խորհրդայնամետ ուժերի՝ Արևելյան և ՊԱԿ-ի թուլացման հետևանքով: Սիրիայի ռազմաքաղաքա-

կան ազդեցության վերացումը Լիբանանում նախատեսվում էր երկրի տարածքից «Արցախի արևելյան զսպիչ ուժերի» (որի կազմում 1978 թվից մնացել էր միայն սիրիական զորաքանակը) դուրս բերման միջոցով<sup>8</sup>:

Թեւ-Ավիվի կարծիքով՝ լիբանանյան ներխուժումը քաղաքական ու հոգեբանական որոշակի փոխհատուցում կարող էր լինել Սինայից խորայնական ուժերի դուրս բերման դիմաց: Ազրեսիայի նպատակներից էր նաև Իսրայելի տնտեսական զարգացման մասնավորապես հյուսիսային Գալիլեային խմելու ջրով ապահովելու նպատակով Լիբանանի հարավի (մինչև «կարմիր գիծը» Լիթանի գետը) ջրային պաշարների օգտագործման հնարավորությունը<sup>9</sup>:

Ինչ վերաբերվում է ազրեսիայի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշմանը, ապա նախագահ Ռեյգանը և պետքարտուղար Ալեքսանդր Հեյզը համոզված լինելով, որ ՊԱԿ-ի և Իսրայելի միջև 1981թ. հրադադարը դատապարտված է ճախողման, Թեւ-Ավիվի լիբանանյան ներխուժման միջոցով հնարավոր էին համարում միաժամանակ երկու հիմնախնդրի՝ Լիբանանի ճգնաժամի և արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորումը<sup>10</sup>: Վաշինգտոնը կիսում էր Լիբանանում խորայնամետ ու արևմտամետ քրիստոնյա փաղանգավորների դեկավաթյամբ «ուժեղ կենտրոնացված կառավարություն» հաստատելու ուղղությամբ Իսրայելի նկրտումները<sup>11</sup>: Հեյզի կարծիքով՝ այն նպատակներ էր ազատ, բաց, ժողովրդավարական և ավանդական այլուրեքային հասարակության կայացմանը<sup>12</sup>:

Վաշինգտոնի համոզմամբ՝ հետպատերազմյան Լիբանանից սիրիական, ՊԱԿ-ի (որոնց ԽՍՀՄ-ի արքանյակներ էին համարում), ինչպես նաև իսրայելական ուժերի դուրս բերման փաստը կարող էր նպաստել մերձավորարևելյան խաղաղության նոր գործընթացի մեկնարկին՝ հեշտացնելով Միացյալ Նահանգներին նպատակահարմար ձևով Լիբանանի հիմնախնդրի կարգավորման և ՊԱԿ-ի ինքնավարության շուրջ վարվող բանակցային գործընթացները<sup>13</sup>: ԽՍՀՄ-ի արքանյակների պարտությունը կնսեմացներ համայնավարների հեղինակությունը ԱՄՆում և կիմաստագրվեր արաբական համատեքստում լիբանանյան հիմնախնդրի կարգավորման գաղափարը<sup>14</sup>: Խաղաղության բանակցություններում խորհրդային ու սիրիական մասնակցության կասեցման և Իսրայելի, Հորդանանի ու անկախության չհավակնող պաղեստինցիների ընդգրկման միջոցով ԱՄՆ-ին կվերապահվեր միանձնյա հովանավորի ու միջնորդի դերակատարությունը: Հետևաբար, Իսրայելի հետ (Եզիպտոսի օրինակով) Լիբանանի ներքաղաքական փոփոխություններով պարտադրված անջատողական հաշտագրի ստորագրման հավանականությունն ընդհանուր առմամբ համապատասխանում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին, որն ըստ երևույթին հնարավորություն կտար

հաջողությամբ շարունակել 1978թ. սկսված քեմիկալիայի գործընթացը<sup>15</sup>:

Այնուհանդերձ, իսրայելական ազդեցիկ սկզբում Սպիտակ Տունը «վնասի սահմանափակման» մտեցում որդեգրեց, որի համաձայն անհրաժեշտ էր կանխել Վաշինգտոնի արաբ դաշնակիցների՝ հատկապես Մատույան Արաբիայի և Եգիպտոսի քաջասական հակազդեցությունը, նվազագույնի հասցնել համայնավարների ազդեցությունը՝ արաբական աշխարհում և խուսափել ԱՄՆ-ԽՍՀՄ ճգնաժամի առաջացումից<sup>16</sup>: Այս մտեցումը քերևս պայմանավորված էր մերձավորարևելյան քաղաքականության շուրջ ԱՄՆ Պաշտպանության քարտուղար Կասպար Վայներբեգերի ու Ազգային Անվտանգության գծով հատուկ օգնական-խորհրդատու Վիլիամ Կլարկի՝ նախագահ Ռեյգանի ու պետքարտուղար Հեյզլի հետ ունեցած տարածաշրջաններով: Առաջինների համոզմամբ, Իսրայելի լայնամասշտաբ գործողությունները կարող էին հակաամերիկյան տրամադրություններ առաջացնել արաբական աշխարհում, սպառնալ Ծոցի պահպանողական ամերիկամետ վարչակարգերին և խորհրդային Միությանը հնարավորություն ընձեռել վերահաստատել իր ազդեցությունը տարածաշրջանում<sup>17</sup>: Կլարկն առաջ էր քաշում Իսրայելին գսպելու և սատարելու ընդառաջելու անհրաժեշտությունը, քանզի արաբական աշխարհում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդման նպատակով հարկավոր էր միաժամանակ ինչ-որ բան խոստանալ նաև արաբներին<sup>18</sup>: Եվ եթե Վաշինգտոնը նախապես համակրանքով էր վերաբերվում Լիբանանի հարավից իսրայելցիներին անհանգստացնող պաղեստինցիներին վտարմանն ուղղված 40 կմ. ներխուժմամբ իսրայելական գործողությունների սահմանափակ բնույթին, ապա պատերազմի առաջին իսկ օրերից իսրայելական զինուժի գերազանց հաղթանակը Նահանգների պաշտոնատար շրջանակների մոտ մտահոգություն առաջացրեց ԱՄՆ-Արաբական երկրներ հարաբերությունների հնարավոր վատթարացման և համայնավարների հավանական միջամտության տեսանկյունից<sup>19</sup>: Այնուհանդերձ, ի հեճուկս իսրայելական ուժերի կողմից Լիբանանի տարածքի 1/3-ը կազմող հարավի գրավման ու Թեյրութի պաշարման<sup>20</sup> դեմ Վաշինգտոնի բանավոր բողոքարկումներին և այլ բնույթի ժեստերին, ԱՄՆ-ը պատերազմի շարունակման նպատակով քաղաքական աջակցություն ցուցաբերեց Իսրայելին<sup>21</sup>: Նա ոչ միայն վետո դրեց Լիբանանում իսրայելական զորքերի շարունակվող ներկայությունը դատապարտող ՄԱԿ-ի ԱԽ ընդունած մի շարք բանաձևերի վրա<sup>22</sup>, այլ 1982թ. վերջին Իսրայելին 2.5 մլրդ. դոլլարի տնտեսական օգնություն հատկացրեց ԱՄՆ-ի 1983թ. նախատեսվող բյուջեից<sup>23</sup>:

Այնուհանդերձ, Իսրայելի արագ առաջխաղացումը և Իսրայելի ու Միդիայի միջև նշմարվող պատերազմը դուրս էին գալիս Վաշինգտոնի հետ իսրայելական պայմանավորվածությունների շրջանակից, որը

պաշտպանում էր Լիբանանից ՊԱԿ-ի դուրս բերման որոշումը, սակայն մտահոգված էր Լիբանանից խարայելական ուժերի հետագույն հետո հնարավոր անկարգությունների առաջացման հարցում<sup>24</sup>: Հետևաբար, Իսրայելի ներխուժման արդյունքում ՊԱԿ-ի և Լիբանանում սիրիական ուժերի կրած պարտությունը Միացյալ Նահանգների համար միաժամանակ թե՛ նոր հնարավորություններ ստեղծեցին, և թե՛ լուրջ խնդիրներ հարուցեցին: Մի կողմից, խորհրդային երկու դաշնակիցների՝ ՊԱԿ-ի և Սիրիայի պարտությունն ու Մոսկվայի անգործությունը նման ելքի կանխարգելման ուղղությամբ կարող էին ուժեղացնել ամերիկյան լծակները տարածաշրջանում՝ միաժամանակ թուլացնելով իր հակառակորդին<sup>25</sup>: Մյուս կողմից էլ, արաբ առաջնորդների և նույնիսկ Նահանգների եկրոպական դաշնակիցների քննադատության պայմաններում ԱՄՆ-ը ստիպված էր զգուշավորություն համղես բերել Բեյրութի հանդեպ Իսրայելի ճնշումն ուժեղացնելու և ՊԱԿ-ին արմատախիլ անելու թույլտվության ուղղությամբ<sup>26</sup>:

Ամերիկյան լրատվամիջոցներն ու նույնիսկ Կոնգրեսի որոշ անդամներ խստորեն դատապարտեցին քաղաքացիական զոհեր հարուցած (ագրեսիայի ընթացքում Լիբանանը տվեց 20 հազ. զոհ, 30 հազ. վիրավոր և կրեց 2 մլրդ. Իսրայելի վնաս) խարայելական ռազմաօդորոշումները և Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականությանը նեմ Նահանգներում հասունացող հասարակական դժգոհությունը դարձավ Հիլզի պաշտոնաթողության պատճառներից մեկը: Այն առավելապես կապված էր լիբանանյան ժգնածամի ճկատմամբ ամերիկյան կառավարության ներսում վերստին դիրքորոշումների տարամիտման հետ:

Արտաքին գերատեսչության ղեկավարի պաշտոնում Հեյզին վտխարինելու եկավ Պետքարտուղարության ֆինանսների գծով նախկին քարտուղար Ջորջ Շուլցը, որի պաշտոնավարության սկիզբը (1982թ. հունիսի 16) նշանավորեց ՄԱ-ում խաղաղության համապարփակ գործընթացի սկիզբը: Շուլցի կարծիքով՝ Լիբանանի ճգնաժամի, Բեյրութից ՊԱԿ-ի հեռացման խնդրի քարենաջող կարգավորումը կարող էր նպաստել տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը: Ուստի Լիբանանի հրադարարից (հուլիսի 5-ի) անմիջապես հետո Շուլցի՝ Պետքարտուղարության ՄԱ-ի գծով փորձագետների քիմի մշակած սարք-խարայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ գաղտնի ծրագրի մշակումը<sup>27</sup> նախագահին մերձավորաբեյրյան նոր նախաձեռնությամբ հանդես գալու նպատակ էր հետապնդում: 1982թ. սեպտեմբերի 1-ին, Մպիտակ Տան Օվալում գրասենյակից արված հեռուստառեկորդի ժամանակ Ռեյգանը հանդես եկավ մերձավորարևելյան խաղաղության «թարմ սկիզբ» նախաձեռնությամբ, որը միաժամանակ հստակ քայլ էր արաբական աշխարհի դժգոհությունը մեղմելու և ամե-



րիկյան քաղաքակառուցումն իսրայելականից տարրաշեջ ուղղությամբ<sup>26</sup>: Եվ քանզի պաշտոնավարության ստանձնումից ի վեր նախագահ Ռեյզանը մերձավորարևելյան խնդիրներում առաջնորդվում էր նախորդ վարչակարգերի որդեգրած քաղաքականությամբ, ուստի նրա նախաձեռնությունը հիմնված էր 1969թ. Ռոջերի ծրագրի<sup>29</sup> և 1979թ. Քեմփ Դևիդի համաձայնագրի վրա: Նրանում առավել հանգամանակից էին ներկայացված քաղաքական ու տարածքային խնդիրների կարգավորումներին առնչվող առաջարկները: Խաղաղության մոր գործընթաց նախաճյուղ ծրագիրը նպատակ ուներ արարական աշխարհին ցույց տալ, որ Միացյալ Նահանգները համակրանքով է վերաբերվում արաբներին և փորձում է արժագանքել նրանց դժգոհություններին: Խնդիրն այժմ Իսրայելի օրինական անվտանգության խնդիրները պաղեստինցիների օրինական իրավունքների հետ համատեղելու մեջ էր, որին, նախագահի կարծիքով, կարելի էր ավելի շուտ հասնել ոչ քե մարտադաշտում, այլ դիվանագիտական ճանապարհով և կողմերի միջև փոխզինման գնով<sup>30</sup>:

Ծրագիրն առաջարկում էր Քեմփ Դևիդի ուղեգծի համաձայն, հնգամյա անցումային շրջանում Իսրայելից ներքին իշխանությունը խաղաղ ու կարգավորված ձևով հանձնել Արևմտյան ափի և Գազայի պաղեստինցիներին՝ վերջիններիս ներքին գործերում «լիակատար ինքնավարություն» շնորհելով: Մակայն խաղաղության հասնելու հնարավորությունը բացատրվում էր ինչպես Գազայում ու Արևմտյան ափում անկախ պաղեստինյան պետություն ստեղծելու, այնպես էլ այդ տարածքների նկատմամբ Իսրայելի ինքնիշխանության կամ մշտական վերահսկողության հաստատման միջոցով: Հետևաբար, ԱՄՆ-ը հեն էր ինչպես Արևմտյան ափում ու Գազայում մեկնախա պաղեստինյան պետության ստեղծմանը, այնպես էլ Իսրայելի կողմից այդ տարածքների բռնակցմանը կամ մշտական վերահսկողության հաստատմանը<sup>31</sup>:

Ծրագիրն առաջարկում էր տարածաշրջանում խաղաղության և կայունության հասնելու նպատակով վերականգնել պատերազմից քայքայված Լիբանանը: Մակայն դա չէր նշանակում, որ ՄԱԿ-ի խաղաղությունը սկսվում ու ավարտվում էր Լիբանանում: ԱՄՆ-ի աջակցությամբ Լիբանանի վերականգնման գործընթացն արար-իսրայելական հակամարտության պատճառների արմատական կարգավորման ուղղությամբ քայլերից մեկը պետք է լիներ<sup>32</sup>:

Այնուհանդերձ, Ռեյզանի խաղաղության նախաձեռնությունն ի վերջո մերժեցին հակամարտությանն ուղղակի և անուղղակի մասնակից բոլոր կողմերը՝ Հորդանանի քաղաքացիական պատերազմից քայքայված Լիբանանի, Միջին Արևելքի, ԳՄԿ-ի առաջնորդ Արաֆատը, ԽՍՀՄ առաջնորդ Բրեժնևը՝ փաստացի կերպով Կաշինգտոնին զրկելով ինչպես արար-իսրայելական հակամարտության կարգավորման հնարավորությունից, այնպես էլ արար չափավոր վարչախմբերի վստահությամբ:

յունից: Լիբանանում հակամարտող ճակատներն էլ իրենց հերթին չկառողացան լուծել իրենց ներքին տարածայնությունները:

Մինչ այդ, 1982թ. օգոստոսի 7-ին ամերիկյան պատվիրակ Ֆիլիպ Հարիսի միջնորդությամբ կնքված պայմանագրի համաձայն, սլադեստինյան ջոկատները՝ Լիբանանում բնակվող կես միլիոն պաղեստինցիների կյանքի անվտանգության և Արևմտյան Բեյրութ Իսրայելի մտադրի կանխարգելման ուղղությամբ Վաշինգտոնի տված երաշխիքների դիմաց պետք է դուրս բերվեն Արևմտյան Բեյրութից: Այս գործընթացի վերահսկողությունը և անվտանգության ապահովումը օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 26-ը պետք է իրականացնեին իտալական, ֆրանսիական ու ամերիկյան զորակազմերից բաղկացած խաղաղապահայան՝ «Բազմազգ Ուժերը», որոնցում մեծաքանակը ամերիկյանն էր<sup>33</sup>: Սակայն ՊԱԿ-ի ռազմիկների և սիրիական ռազմաօդային ուժերի քրեական վերահսկողության իրականացումից հետո սեպտեմբերի 13-ից երկրից հեռացած «Բազմազգ Ուժերը» (ամերիկյան 1600 ծովային հետևակայիններ) ստիպված էին վերադառնալ սեպտեմբերի 14-ին Բաշիր Ժմայելի սպանությունից և սեպտեմբերի 16-ի զիշերը Իսրայելի աջակցությամբ փաղանգավորների կողմից Սաբրայի ու Շաֆիայի սլադեստինյան ճամբարների փախստականների նկատմամբ իրականացրած դաժան կոտորածներից և Արևմտյան Բեյրութից իսրայելական ուժերի հեռացումից հետո<sup>34</sup>:

Այսպիսով, ԱՄՆ-ը, որը նախկինում Լիբանանին հատուկ քաղաքական ու ռազմավարական նշանակություն չէր տալիս, վերջինիս հանդեպ հատուկ քաղաքականություն որդեգրեց: Վաշինգտոնը 1982թ. աշնանից ներքաշվեց լիբանանյան իրադարձությունների բարդ հորձանուտը և ստանձնեց Բաշիր Ժմայելի սպանությունից մի շաբաթ անց (սեպտեմբերի 21-ին) վերջինիս եղբոր՝ Լիբանանի նախագահի պաշտոնում ընտրված Ամին Ժմայելի արտաքին հիմնական հովանավորի դերակատարությունը<sup>35</sup>:

Երկրի պատմության մեջ առաջին անգամ քարձրագույն իշխանությունը ստանձնած փաղանգավորների նոր վարչակարգը որդեգրեց Լիբանանից բոլոր օտարերկրյա ուժերի դուրս բերման և փաղանգավորների տիրապետող դիրքերի պահպանմամբ հակամարտող կողմերի հաշտեցման հիման վրա երկրի վերամիավորման քաղաքականություն:

Միացյալ Նահանգները հույս ունեն ամրապնդել արևմտամետ Ժմայելի կառավարությունը, հատկապես նրա բանակի<sup>36</sup> վերակառուցման, ընդլայնման և իշխանության ամրապնդման միջոցով, ինչպես նաև նպաստել Լիբանանից սիրիական և իսրայելական զորքերի դուրս բերմանը՝ սահմանափակելով երկրում Սիրիայի ազդեցությունը: Թեև վարչակարգի կարծիքով Ամին Ժմայելը չէր կարող առավել արդյունավետ կառավարիչ լինել, քան նրա եղբայր Բաշիրը, այնուհանդերձ, նրա քա-

դաքական կողմնորոշումն առավել մոտ էր լիբերալիզմին քան ֆաշիզմին՝ և նրա անհրաժեշտությունը հայտնաբերվեց 1930-ական թվականներին: Այն պայմանավորված էր ոչ այնքան ԱՄՆ-ի համար Լիբանանի ռազմավարական նշանակության, որքան արտաքին գործընկերների առկայության հանգամանքով<sup>37</sup>:

Այսպիսով, Ամին Ժմաշեյի գլխավորած «Լիբանանյան ճակատ» օգտվելով ամերիկյան ու իսրայելական ռազմաքաղաքական աջակցությունից, վերածվեց տիրապետող ներքին ուժի<sup>38</sup>: Վերոնշյալին նպաստեցին ինչպես նախագահության, բանակի, և այլ առանցքային ինստիտուտների նկատմամբ փողանցակների վերահսկողության հաստատման, այնպես էլ Սիսցյալ Նահանգների կողմից «Զաթաիրեն-րի» և պետական ինստիտուտների նույնացման փաստը: Վաշինգտոնը՝ բավարարված լինելով լիբանանյան բանակի «արագ առաջխաղացմամբ», գտնում էր, որ բանակի, միլիցիայի և ժանդարմերիայի կազմակերպված ուժերը պարտավոր են կարգ ու կանոն ապահովել երկրի 2/3-ում<sup>39</sup>:

1982թ. վերջին ամիսներին և ողջ 1983թ. ընթացքում Սպիտակ Տունը փորձում էր բանակցել Լիբանանից օտարերկրյա՝ մասնավորապես սիրիական ուժերի դուրս բերման և այնտեղ արևմտամետ կառավարության կենսունակության ապահովման ուղղությամբ: Այս նպատակով ԱՄՆ-ն անհրաժեշտ էր համարում նախ՝ իսրայելալիբերալիզմին, այնուհետև՝ իսրայելափրիկական պայմանագրերի կնքումը՝ նախապատվությամբ տալով առաջինին և առավել ուշ՝ վալի հեռանկարով հետաձգելով երկրորդը<sup>40</sup>: Շուրջի համաձայնությամբ՝ Լիբանանում խաղաղության հնարավոր էր հասնել առանց Սիրիայի հետ դիվանագիտական երկխոսության: Սինդիեթ դժվար էր պատկերացնել ստանց վերջինիս հետ համագործակցության Վաշինգտոնի վարած լիբանանյան քաղաքականությունը: Նամանավանդ, որ Հաֆեզ ալ-Ասադի համար Լիբանանից դուրս գալու խաղաքարտը չափազանց մեծ էր՝ հատկապես Բարսելի ու «Բազմազգ Ուժերի» դեմ Սիրիայի կողմից նվազագույն ռիսկի ու ծախսերի գնով պահեստիմյան և լիբանանյան մարտիկներին ու միլիցիային օգտագործելու հնարավորության պարագայում: Դեռ ավելին, 1983թ. Սիրիայի և ԽՍՀՄ-ի միջև ստորագրված պայմանագրով նախատեսվող ռազմական (օդային պաշտպանության համակարգի) աջակցությունը Դամասկոսին գտնեցնել էր լիբանանյան իրադարձությունների վերահսկման որոշումը կայացնելիս<sup>41</sup>: արդյունքում Բարսելին առավել մեծ սպառնալիք ներկայացնելով, քան մինչլիբանանյան ագրեսիան: ԽՍՀՄ-ը զինվորական մեծաթիվ անձնակազմ ու տեխնիկա տրամադրելով Սիրիային՝ իր պատրաստակամությունն էր հայտնել միջամտելու՝ վերջինիս նկատմամբ ռազմական գործողությունների կիրառման դեպքում<sup>42</sup>:

Այսպիսով, Սիրիայի նկատմամբ ռազմափոփ ղեկավար աննպատակահարմարության պարագայում, Վաշինգտոնը պետք է հենվեր Լիբա-

ճանի դրամատիկ քաղաքական զարգացումների. կամ էլ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով Բարայելի ռազմական գերազանցությունը պահպանելու վրա: Հետևաբար, իսրայելական ազդեցության ընթացքում կենսական կարևորություն ներկայացնող բազմաթիվ դիրքերից դուրս մղված և ծանր ռազմական կորուստներ կրած սիրիական ուժերին շուրջ մեկ տարով լիբանանյան իրադարձություններում իբրև ամենաազդեցիկ արտաքին գործոն փոխարինելու եկավ Բարայելը<sup>43</sup>: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, դա բավարար մախապայաման չեղավ, որպիսի Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ 1983թ. մայիսի 17-ին ստորագրված լիբանանահիսթայելական պայմանագրի<sup>44</sup> համաձայն, սիրիական ուժերը դուրս քերվեցին Լիբանանի արևելյան ու հյուսիսային ռազմահանգրվաններից<sup>45</sup>: Այդ էր պատճառը, որ Վաշինգտոնը արդեն 1983թ. վերջին փորձում էր արդարացնել Բարայելի ազդեցիկ վերջինիս հորդորելով ոչ միայն շարունակել պահպանել իր ներկայությունը Լիբանանում, այլև օգտագործել իր ռազմական իշխանությունը՝ Սիրիային հակազդելու, Ամին Ժմայելի կառավարությանը սատարելու և Սիլաբալ Նահանգներին լիբանանյան ճգնաժամից ձերբազատելու հարցում աջակցելու նպատակով: Փաստորեն, Բարայելը համարվում էր ամերիկյան մերձավորարևելյան այդժամ արդեն ուժային քաղաքականության և ռազմավարության կենտրոնական տարրը<sup>46</sup>:

Այնուհանդերձ, Բարայելին շնագովեց կենսագործել Նահանգների՝ իրեն վերապահված քաղաքականությունը, քանզի Ասադն իր գործերը Լիբանանից դուրս բերելու փոխարեն աջակցություն ցուցաբերեց երկրում իրենց դիրքերի վերականգնման նպատակով Դամասկոսից ռազմաքաղաքական աջակցություն հայցող լիբանանյան շիաներին, դրուզներին, պաղեստինցիներին և զինված այլ խմբավորումներին<sup>47</sup>:

Ի վերջո, լիբանանյան կառավարությունը դատապարտեց Բարայելի հետ ուղղակի համագործակցության միջոցով Լիբանանից սիրիական ուժերի հեռացմանն ուղղված Ամին Ժմայելի ջանքերը, իսկ Լիբանանի մարտնչող խմբավորումներից կոալիցիաների կազմավորմանն ուղղությամբ վերջինիս գործադրած բազում ջանքերը ձախողվեցին մերթ մի խմբավորման, մերթ մյուսի կողմից՝ քուլացնելով մախազահի իշխանությունը<sup>48</sup>:

1983թ. ամռանը ԱՄՆ-ի կառավարության և իսրայելական հասարակության (որը մեղադրում էր Բարայելին իսրայելական գործընթացի կասեցման մեջ) ճնշումների տակ իսրայելական կառավարության կողմից իր զինուժի աստիճանական դուրս բերման (1983 թ. սեպտեմբերի 4-ից) պայմաններում սիրիական ռազմական աջակցությունից օգտվող դրուզները Շուֆում հարթանակ տոնեցին մարտիների նկատմամբ: Իսկ այս մարտերի մեջ ներքաշված «Բազմազգ Ուժերը» վերածվեցին լիբանանյան ձախերի հարձակումների քիլախի:

Հակառակ հակամարտությանը զինված միջամտության մտադրություն չունենալու վերաբերյալ Ռեյզանի հավաստիացումներին, արաբ-իսրայելական հակամարտության պատմության ողջ ընթացքում անաջին անգամ ԱՄՆ-ն արաբական կողմի հետ մտավ ուղղակի ռազմական առնակատման մեջ՝ Լիբանանի տարածքը ուժեղացնելով իր ներկայությունը Երևանի շրջանում Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ լիբանանյան բոլոր հակամարտող կողմերի միջև հրադադարի հաստատման վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը, որն ըստ էության արտահայտում էր Լիբանանի քաղաքական թատերաբեմում ուժերի նոր հարաբերակցությունը՝ նախանշելով ճգնաժամի կարգավորման գործում Վաշինգտոնի, Թեյ-Ալիվի ու նրանց լիբանանյան դաշնակիցների կրած ծախսերի և լիբանանյան գործերում Սիրիայի ու լիբանանյան ժայռերի կողմից նախաձեռնության ստանձնումը:

Իսկ 1983թ. սեպտեմբերի 25-ին Սիրիայի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ լիբանանյան բոլոր հակամարտող կողմերի միջև հրադադարի հաստատման վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը, որն ըստ էության արտահայտում էր Լիբանանի քաղաքական թատերաբեմում ուժերի նոր հարաբերակցությունը՝ նախանշելով ճգնաժամի կարգավորման գործում Վաշինգտոնի, Թեյ-Ալիվի ու նրանց լիբանանյան դաշնակիցների կրած ծախսերի և լիբանանյան գործերում Սիրիայի ու լիբանանյան ժայռերի կողմից նախաձեռնության ստանձնումը:

1983 թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը Ժնևում Լիբանանի հակամարտող կողմերի միջև Ազգային երկխոսության կայացման նպատակով գումարված համաժողովի (նախագահ Ամին Ժմայելի, ԱՓՇ առաջնորդ Վալիդ Ջուբրայի, Ռաշիդ Քարամեհի, Մուլեյման Ֆրանժիեի, «Ամալ»<sup>31</sup> շարժման ղեկավար Նաբիհ Բեռրիի, աջքրիստոնեական առաջնորդներ՝ Պիեր Ժմայելի, Քամիլ Շամունի, ՍԱՀ արտգործնախարար Աբդել Խալիմ Հադդադի և Սաուդյան Արաբիայի ներկայացուցչի մասնակցությամբ) արդյունքում վերահաստատվեց Լիբանանի իրեն արաբական պետության կարգավիճակը: Այս կանխադրությից ելնելով համաժողովն արտահայտվեց մայիսի 17-ի լիբանանահարայելական համաձայնագրի մերժման օգտին: Համաժողովի որոշմամբ Ամին Ժմայելը՝ Լիբանանից իսրայելական ուժերի դուրս բերման վերաբերյալ այլ բանաձև մշակելու նպատակով հրահանգավորվեց այցելել Վաշինգտոն, որը սակայն մերժվեց Ռեյզանի կողմից՝ առավել սրելով զինված հակամարտությունը:

Այսպիսով, 1983թ. երկրորդ կեսին Բեյրութի ամերիկյան դեսպանատան և Ժովային հետևակայինների (հոկտեմբերի 23-ին) շտաբակայանի նկատմամբ իրականացված ահաբեկչական գործերը, դրանց հետ կապված ԱՄՆ-ում աճող քննադատությունը, Սիրիայի վճռական գործո-

դառնալուց և կասեցման հարցում «Լաշինգտոնի անկարողությունը և ընդհանրապես, ներլիբերալական հակամարտության քաղաքական կարգավորման հարցում վերջինիս ձախողումը մեծ հարված հասցրին ԱՄՆ-ի դիրքերին: Ռեյգանի կառավարության պատրաստակները Լիբանանի ճգնաժամի կարգավորման առնչությամբ ամբողջությամբ փարատվեցին 1984թ. փետրվարին, երբ լիբանանյան բանակը կազմալուծվեց, շիաները հաղթանակ տարան Արևմտյան Բեյրութում՝ լրացուցիչ պատճառ և հարմար պատրվակ դառնալով Լիբանանում ամերիկյան ռազմական ներկայությանը վերջ դնելու համար, որոնց օրինակին շուտով հետևեցին «Բազմազգ Ուժերի» նրանց մյուս գործընկերները»:

Այս զարգացումներն էլ իրենց հերթին նպաստեցին, որպիսի ամերիկյան աջակցությունից զրկված և լիբանանյան ժողովրդի դեմ միայնակ հայտնված Ամին Շմայելը քաղաքական աջակցության նպատակով վերականգնի Սիրիայի հետ մարտնչների հին դաշինքը: 1984թ. մարտի 5-ին նախագահ Ամին Շմայելը՝ վերադառնալով սիրիական այցից, անվավեր հայտարարեց 1983թ. մայիսի 17-ի պայմանագիրը<sup>3</sup>: Փաստորեն, Սիրիան ոչ միայն վերականգնեց Լիբանանում ունեցած իր նախկին ազդեցությունը, այլև երկրից 1985թ. հունվարին խորապես կան ուժերի դուրս բերումից հետո վերածվեց տիրապետող արտաքին ուժի<sup>4</sup>:

Այսպիսով, ԱՄՆ-ի հեղինակությունը և նրա դիրքերը ՄԱ-ում, այնուհանդերձ, տուժեցին, իսկ նրա տարածաշրջանային հայեցակարգը դատապարտվեց ձախողման: 1974 թ-ից արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացը միանձնյա տնօրինող գերտերության աջակցությամբ ասպակիմաժ Բարայելը 1984թ. ընկրկեց, և այդ տասնամյակում առաջին անգամ Միացյալ Նահանգների հովանավորած արաբ-իսրայելական համաձայնագիրը ձախողվեց Խորհրդային Միության տեղական դաշնակցի՝ Սիրիայի կողմից:

AGHAVNI HARUTYUNIAN

ON SOME ASPECTS OF USA LEBANESE POLICY (1982-1984)

In 1981-82 USA Administration believing that the cease-fire between the PLO and Israel was bound to collapse, saw the invasion as an opportunity both to bring about a solution to the Lebanese crises and perhaps even to begin a new effort at resolving the Arab-Israeli dispute- withdrawal of all foreign forces-the Syrians, the PLO and Israelis and the establishment of a strong central government. Since war in Lebanon did break out, on 6 June 1982, the United State adopted a "damage limitation" approach; limiting the cost of negative reactions from America's Arab allies, especially Saudi Arabia and Egypt, minimizing Soviet influence entrance in the Arab World: and avoiding the danger of an American-Soviet crises, blowing Soviet prestige in the Middle East resulting from a Syrian and PLO set-back thus

overshadowing a notion of a solution to the Lebanese problem within an Arab context. President Reagan's speech on 1 September 1982 on a new diplomatic initiative for the Middle East, designed to renew the peace process, deal with the Palestinian issue, improve Israel-Egypt relations and provide impetus for Jordan join the peace process. The defeats of Soviet-allied Syria and the PLO in Lebanon and Moscow's poor performance in that conflict-also reinforced the idea that the US held the best cards in mediating the Arab-Israeli conflict. But Reagan's peace plan was finally rejected by all sides of conflict. Consequently, the US-Israel alliance was strengthened, recovering from the blows it had suffered during Israel's 1982 invasion of Lebanon, and Syria was again identified as the prime obstacle to regional stability. While further events showed that without cooperation with Syria and Lebanese factions the conflict could not be resolved anyway. Thus, from mid-1984 the US returned, at least partly, to her 1976 policy reaching the conclusion that Syria could contribute more to the stability of the central regime in Beirut than an American military presence suggesting that Syrian role could be considered "helpful" within" the context of Lebanon.

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Barry Rubin, *The United States and the Middle East: 1981-1982*, Middle East Contemporary Survey, 1981-82, Vol. 6 (NY, 1983).
2. Itamar Rabinovich, *The War for Lebanon 1970-1985*, Cornell University Press, Ithaca and London, 1985, p. 349.
3. Е.Д. Пырлин, "100 лет противоборства. Генезис, эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы", Москва, РОССПЭН, 2001, стр. 242. 1978թ. մարտի 15-ին Լիբանանի հարավ ներխուժումից հետո ճ.թ. հունիսին իսրայելական ուժերի դուրս քերումից հետո Թեղ-Ավիլը տեղում մի շարք քրիստոնեաբնակ վայրերում ստեղծած հինակետերը հանճեց լիբանանյան քանակի նախկին մայրը Սաադ Հադրադի զորամիավորումների վերահսկողությամբ: Վերջինս մի տարի անց հայտարարեց այդ շրջանում «Ազատ Լիբանանի պետության» ստեղծման մասին:
4. Լիբանանյան ժախերի՝ «Ազգային Շարժման» մեջ էր մտնում Լիբանանի Կոմունիստական կուսակցությունը, Կոմունիստական գործողության կազմակերպությունը, Լիբանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, Սիրիական ազգային-սոցիալիստական կուսակցությունը, Լիբանանի նասերականները՝ մտաբիրությունները, Արաբական Սոցիալիստական վերածնության՝ ԲԱԱԱ կուսակցության լիբանանյան մասնաճյուղը: Նշյալ կուսակցությունների մեջ որպես օրենք մտնում էին ինչպես մուսուլմաններ, այնպես էլ քրիստոնյաներ: Ազգային Շարժումն ուներ իր Կենտրոնական քաղաքական խորհուրդը՝ Քամալ Ջումրլաթի գլխավորությամբ, որի սպանությունից (1977-ի մարտին) հետո այն գլխավորեց Քամալի որդին՝ Վալիդ Ջումրլաթը: Այս մասին տե՛ս Հովհաննիսյան Ն.Հ., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982թթ.), Եր., «Հայաստան», 1982, էջ 23-24:

5. 1976թ. հունվարին «Հեզր ալ-Քաբաիբ ալ-Լուրմանի» «Լիբանանյան փառանգներ» կուսակցությունը, Ազգային լիբերալ կուսակցությունը (շամունականները), «Թանգիմը», «Սարոմական լիզան» հայտարարեցին «Ազատության և մարդու ճակատ» քաղաքական միավորում ստեղծելու մասին. որի նպատակն էր «կոմունիստական և պաղեստինյան սպառնալիքի դեմ պայքարը»: 1976թ. սեպտեմբերին նրանք ձևավորեցին «Լիբանանյան ճակատը», որի մեջ մտան «Լիբանանյան փառանգներ» կուսակցությունը (ԼՓԿ) և նրա ռազմական գործիավորումները, Ազգային լիբերալ կուսակցությունը (ԱԼԿ), «Լիբանանյան մայրիկ պաշտպանության» կազմակերպությունը: «Լիբանանյան ճակատի» նախագահը ԱԼԿ-ի առաջնորդ Ֆաճիլ Շամունն էր, իսկ ռազմական ուժերի հրամանատարը՝ ԼՓԿ-ի առաջնորդ Պիեթր Շմայելի որդի՝ Բաշիր Շմայելը. որն այդժամ լիբանանյան աջերի ամենագործող ղեկավարն էր: Փառանգավորներին և շամունականներին սատարում էին ոչ միայն ԱՄՆ-ը, Իսրայելն ու արևմտյան այլ երկրներ, այլև Սաուդյան Արաբիան: Փառանգավորները հանդես էին գալիս «Լիբանանի մարտության», «Լիբանանը լիբանանցիների համար» կարգախոսներով և դեմ էին երկրում պաղեստինյան մերկայությանը:
6. Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 350:
7. Կարապետյան Ռուբեն, Սիրիա-Ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2000, էջ 108:
8. 1976թ. հոկտեմբերի 16-ին Էլ-Ռիյադում Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Քուվեյթի պետության ղեկավարների և ՊԱԿ-ի գործկոմի նախագահի համատեղ համընդամեն ժամանակ որոշվեց հոկտեմբերի 21-ից մեծացնել Լիբանանում Անվտանգության Միջադարձային Ուժերի (այդուհետ՝ «Միջադարձային զսպիչ ուժեր») կազմը մինչև 30 հազարի: 1976թ. հոկտեմբերի 25-26-ը Կահիրեում անցկացվող արաբական երկրների ղեկավարների արտակարգ համաժողովի որոշմամբ այդժամ Լիբանանում գտնվող սիրիական 20 հազարանոց զորակազմը պաշտոնապես մտավ «Միջադարձային զսպիչ ուժերի» կազմի մեջ: Դրանով ԱՊԼ-ն ճանաչում էր լիբանանյան գործերում Սիրիայի առանցքային դերակատարությունը:
9. 1978թ. մարտի 15-ին Իսրայելի 30.000-ամոց բանակն «անվտանգության գոտի» ստեղծելու պատրվակով ներխուժում է Լիբանանի հարավ՝ 10 կմ. լայնությամբ և 25 կմ. երկարությամբ՝ մինչև Լիբանոսի գետը: Բացի ջրային պաշարներին տիրելուց, այն Պաղեստինի դիմադրական շարժումը կտրելու և Լիբանանի հարավը «Սեծ Իսրայելի» կազմում ընդգրկելու նպատակ էր հետապնդում: Այս մասին տե՛ս Լ.Լ. Կոլտոն, *Ливанский дневник, Актуальные вопросы международной жизни*, Издательство политической литературы, Москва 1980, стр. 80.
10. William L.Cleveland. A History of The Modern Middle East. (Boulder: Wetview Press, 1994), p.124.
11. Fred J. Khouri, The Arab Israeli Dilemma. (The Reigan Administration, Israel, the Arabs, and Palestinians, January 1981-March 1985). Syracuse University Press, New York, 1985, p. 341.



12. Itamar Rabinovich. "The War for Lebanon 1970-1985". Cornell University Press. Ithaca and London. 1985, p. 183.
13. Fred J. Khouri. նշվ. աշխ., էջ 436:
14. Moshe Maoz and Avner Yaniv. Syria under Assad, London Sydney in association with The Gustav Heinemann Institute of Middle Eastern Studies, University of Haifa. 1986, p. 217.
15. Հարությունյան Լիլիթ, «1983թ. մայիսի 17-ի Լիբանանահարյան համաձայնագիրը լիբանանյան հակամարտության միջազգայնացման համատեքստում», ՀՀ ԳԱԱ, Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2005, էջ 125-126:
16. Moshe Maoz and Avner Yaniv, նշվ. աշխ., էջ 217:
17. Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 126:
18. Ե.Մ.Պրիմակով, «Մի դավադրության պատմություն», Երևան, «Հայաստան», 1987, էջ 342-343:
19. Robert O Freedman, "The Middle East After The Israeli Invasion of Lebanon", Syracuse University Press, 1986, p. 70.
20. Don Peretz. The Middle East Today, The Republic of Lebanon, Fifth Edition. New York Westport, Connecticut London. 1988, p. 391. Իսրայելցիների արագ առաջխաղացմանը նպաստեցին ԱՄՆ-ի իսրայելամետ քաղաքականությունը՝ ամերիկա-իսրայելական ռազմավարական համագործակցությունը՝ «աշխատանքի քաժանմամբ», քեմիկալիդյան գործարքը, որի արդյունքում պատակովել ու թուլացել էր համաարարական-հակաիսրայելական ճակատը, սիրիա-իսրայելական պատերազմի սահմանափակ բնույթը, Իրան-իսրայելական պատերազմը, Ծոցի պահպանողական մաթթարյունահանող երկրների թույլ արձագանքը, խորհրդային զինուժի պարտությունն ու համայնավարների հեղինակության թուլացումը տարածաշրջանում:
21. Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 146:
22. Միջազգային հանրությունը դատապարտեց Իսրայելի գործողությունները: Արդեն հունիսի 5-ին ՄԱԿ ԱՆ ընդունեց 508-րդ քանաձևը, որը կոչ էր անում «հակամարտող բոլոր կողմերին ամհապաղ և միաժամանակ դադարեցնել Լիբանանում ռազմական գործողությունները»: Հաջորդ օրը ԱՆ միաձայն ընդունեց 509-րդ նոր քանաձևը, որով Իսրայելից պահանջվում էր «ամհապաղ և առանց նախապայմանների դուրս քերել իր ռազմուժը Լիբանանի միջազգայնորեն ընդունված սահմաններից դուրս»: Մակայն Վաշինգտոնի իսրայելամետ դիրքորոշումը թույլ չտվեց արդյունավետորեն օգտագործել ՄԱԿ-ի մեխանիզմը ագրեսիայի դադարեցման նպատակով:
23. Robert O Freedman, նշվ. աշխ., էջ 73:
24. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 125:
25. Barry Rubin, նշվ. աշխ.:
26. William L.Cleveland, նշվ. աշխ., էջ 125:
27. Պետքարտուղարի տաժած զգացմունքներն Իսրայելի նկատմամբ իր նախորդի համեմատությամբ հեռու էին քարեկամական լինելուց: Նա քննադատաբար էր վերաբերվում Իսրայելի հանդեպ լավատեսորեն տրամադրված Պետքարտուղարության «արաբագետներին»: Ջորջ Շուլցն ու

Ազգային Անվտանգության գծով քարտուղար Վիլիամ Կլարկը վարչակարգում արաբամետ գծի և արաբ-իսրայելական հակամարտության բանակցային ճանապարհով կարգավորման կողմնակիցներ էին: Կրեոլ պետքարտուղարի օգնական Նիկոլաս Վելտրիսի գլխավորած Պետդեպի ՄԱ-ի գործերով զբաղող բյուրոյի ազդեցությունը, նրանց համոզված էին խաղաղության հասնելու հնարավորությունների մեջ և փորձում էին վերականգնել Պետքարտուղարության կապերը ԱԱԽ և Սպիտակ Տան միջև:

28. Itamar Rabinovich, նշվ. աշխ., էջ 146:

29. Այս մասին տե՛ս 1. Mahmoud Riad, The Struggle for Peace in the Middle East. Quartet Books, London Melbourne, New York, 1981. p.137-158. 2. The Rogers Plan, Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise (December 9, 1969). Տե՛ս <http://www.jewishvirtuallibrary.org/isource/History/rogers.html>.

30. Robert O Freedman, նշվ. աշխ., էջ 71:

31. Fred J. Khouri, նշվ. աշխ., էջ 437:

32. The Reagan Plan, Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise, (September 1982), Տե՛ս <http://www.jewishvirtuallibrary.org/isource/Peace/reaganplan.html>.

33. Tabitha Petran, "The Struggle Over Lebanon", Chapter 18, The Summer of 1982, Monthly Review Press, New York, 1987, p. 282.

34. Moshe Maoz and Avner Yaniv, նշվ. աշխ., էջ 219:

35. Նույն տեղում, էջ 219: Ազգային հաշտեցման, Իսրայելի օկուպացիային վերջ տալու և Լիբանանի տարածքային ամբողջականության քաղաքականության որոնելու մասին քննարկումները և մտայնումները խորհրդարանականների աջակցությամբ Լիբանանի մախազահի պաշտոնում ընտրվեց փառանգավոր Ամին Ժմայելը:

36. 1976թ. ամռանը լիբանանյան բանակը բաժանվեց երեք խմբերի՝ Ահմդ ալ-Քաթիբի գլխավորած Լիբանանի հեղափոխական արաբական բանակի, որը միացավ ձախարկյալ հակաօդային զորքերին, Լիբանանյան արաբական բանակի ավանգարդների՝ Բեքաա հարթավայրում կազմավորված ակալաթիվ ծառայալ սիրիամետ ռազմական ուժի: Բեյրութում և երկրի կենտրոնում գտնվող բանակի մնացած մասի սպայակազմը մեծամասամբ քրիստոնյաներ էին, որոնց համակրանքը «Լիբանանյան ճակատի» կողմն էր:

37. Լիբանանյան զարգացումները տվյալ պահին գրեթե ամբողջովին կախված էին ամերիկափրիական հարաբերություններից: Այս մասին տե՛ս Moshe Maoz and Avner Yaniv, նշվ. աշխ., էջ 219:

38. ՊԱԿ-ի աջակցությունից զրկվելու և ներքին տարաձայնությունների պատճառով, «Ազգային ճակատն» ու ձախարկյալ ուժերը թուլացան՝ փաղանգավորներին բողոքելով երկրի կառավարումը: Չմայած Սիրիան և ՊՂԸ-ն (Պաղեստինի Դիմադրության Շարժումը) պահպանեցին իրենց ռազմական ներկայությունը Բեքաայի հովտում, երկրի հյուսիսում և Լեռնալիբանանի մի շարք շրջաններում, իրադարձությունների շրջափոխումը ազդելու հարցում նրանց կարողությունը նվազեց: Չախերի դիրքերը էապես թուլացել էին, որն արտահայտվեց 1982թ. հոկտեմբերին Չախերի

Կենտրոնական քաղաքների՝ իբրև նրանց համակենտրոնացնող մարմնի գոյության դադարեցման վերաբերյալ որոշման մեջ: Չախերի գործունեության հիմնական կենտրոնը՝ Արևմտյան Բեյրութը անցավ աջակողմյան ուժերի հետ սերտորեն կապված լիբանանյան քանակի վերահսկողությանը: Այս մասին տե՛ս *Новейшая история арабских стран (1917-1988)*, Академия Наук СССР, Издательство “Наука” Москва, 1988, стр.149.

39. Robert Sole, from Washington, *Le Monde*, April 12, 1983, p. 3. Բանակին զուտ «Քաթաիրի» միլիցիային օժանդակիչ գործառույթներ ընձեռելով, Ռեյզանի վարչակարգը նրան զրկում էր ազգային ինքնության որևէ հավակնությունից: Այս դիրքորոշման համաձայն՝ ամերիկյան ծովային հետևակայինը լիբանանցիներին ծառայելու էր իբրև տեղական մեկ այլ միլիցիա: Ամերիկյան զինվորական խորհրդատուները ստանձնել էին լիբանանյան նոր քանակի վարժեցման պատասխանավորությունը: Վաշինգտոնը մեծ քանակությամբ զինք ու զինամթերք էր տրամադրել, որոնց մեծ մասը նախատեսված էր ոստիկանական գործողությունների համար: Բանակը պետք է կայունություն հաստատեր իր կողմից վերահսկվող Լիբանանի տարածքում:
40. Moshe Maoz and Avner Yaniv, *Գշվ. աշխ.*, էջ 219:
41. William L. Cleveland, *Գշվ. աշխ.*, էջ 135-136:
42. Fred J. Khoury, *Գշվ. աշխ.*, էջ 435:
43. Don Peretz, *Գշվ. աշխ.*, էջ 392:
44. Շուրջ մայիսին մեկնեց ՄԱԼ Լիբանանի ու Իսրայելի միջև Լիբանանից իսրայելյան ուժերի դուրս բերման նպատակով համաձայնության ձեռք բերման նպատակով, որը նա մտադիր էր հետագայում օգտագործել Դամասկոսի ու Բեյրութի միջև նմանատիպ համաձայնագրի կնքման համար: ՄԱԿ-ի մի շարք մայրաքաղաքների միջև մաքրության անցողակներից հետո՝ 1983թ. մայիսի 17-ին նա կարող էր հայտարարել, որ Լիբանանի տարածքի մեծ մասից հեռանալու ուղղությամբ Իսրայելի հետ մասնակի համաձայնագիրը ձեռք է բերվել, որով նախատեսվում էր նաև սիրիական զորքերի գուցահեռ դուրս բերում:
45. Իսրայելն իր զորքերի դուրս բերումը պայմանավորում էր նախապես սիրիական ուժերի դուրս բերմամբ: Սիրիան էլ հրաժարվում էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի տարածքից՝ պայմանավորելով այն ՄԱԿ-ի ԱԼՆ 1982թ. հունիսին ընդունված համապատասխան քանաձեռքի հիման վրա իսրայելական զորքերի դուրս բերմամբ:
46. Fred J. Khoury, *Գշվ. աշխ.*, էջ 449:
47. Ամին Ժնայելի քարեփոխումները մերժեցին Լիբանանի շիաներից, որոնցից, Տրիպոլիի սումնի և ամգամ քրիստոնյա էլիտայից կազմված ընդդիմությունը՝ 1983 թ. հուլիսի 23-ին ձևավորելով «Ազգային Փրկության ճակատ» («ԱՓՃ») կոչվող մարտավարական դաշինքը, որի բնական արտաքին հովանավորը Սիրիան էր: Նրանց նգատակը լիբանանախորախական համաձայնագրի տասյալումն ու փաղանգավորների քաղաքական գերիշխանության վերացումն էր:

48. Питер Катьвокорессн. "Мировая политика после 1945 года". Книга 1. Москва "Международные отношения", 2000, стр. 515. Թե՛ս լիբանանյան խորհրդարանը 1983 թ. հունիսին հավանություն տվեց համաձայնագրի ստորագրմանը, այնուհանդերձ, այն չէր վավերացվում լիբանանյան ժախերի և Սիրիայի դիմակայության պատճառով: Լիբանանի ոչ միայն մուսուլման համայնքները, այլ շատ քրիստոնյաներ՝ ներառյալ հույն ուղղափառները, հույն կաթոլիկները, հայերը և հյուսիսային Լիբանանի մարոնիները (փաղանգավորներին «պատկանող») խիստ դժեմ էին պայմանագրին՝ Իսրայելին շատ մեծ հնարավորություններ ընձեռելու, Լիբանանի ինքնիշխանությունն իր սեփական տարածքի նկատմամբ սահմանափակելու, և Լիբանանին արարական համերաշխությունից ու թյալությունից զրկելու պատճառով:
49. Современные Соединенные Штаты Америки, Энциклопедический справочник, Москва, Издательство политической литературы, 1988, стр. 308. Բեյրութի ծովափին մոտեցրած ամերիկյան ծովային հետևակայինը և 6-րդ նավատորմի նավերը հրետակոծության ենթարկեցին Լեռնախրամանի դրուզների դիրքերը:
50. Polk William, "The Arab World Today", Harvard University Press, 1991, p. 455-457.
51. 1975թ. երկրի հարավում և Բեյրութի շիական արվարձանների շրջանակ շրջաններում հիմնադրվեց շիական շարժման զինված թևը՝ «ԱՄԱԼ» կազմակերպությունը («Դիմադրության լիբանանյան զուճարտակները» («Ալֆաթ ալ-մուրավիմա ալ-լուքնահիյա»), որը նաև «հույս» է նշանակում: Մինչ «ԱՄԱԼ»-ի ստեղծումը, շիաները Լիբանանի զինված խմբավորում չունեցող միակ համայնքն էին:
52. Itamar Rabinovich, Գլխ. աշխ., էջ 185-186: 1984թ. նոյեմբերին ԱՄՆ-ում կայանալիք նախազանգիական ընտրությունների համար վտանգավոր էր համարվում Լիբանանում ճգնաժողովի ու անհաջող զարգացումները:
53. Г. Мирский, Обзор, Ливан в 80-ые годы, Академия Наук СССР, Институт научной информации по общественным наукам, Отдел стран Азии и Африки, Москва-1987, стр. 32.
54. Don Peretz, Գլխ. աշխ., էջ 393. 1984թ. Լիբանանից «Բազմազգ ուժերի» հեռացումից հետո «Արաբական զուպիլ ուժերի» կազմի մեջ մտնող սիրիական 30.000-անոց բանակն իր հսկողության տակ առավ երկրի մոտ կեսը:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1980-ԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 1990-ԱԿԱՆՆԵՐԻ ՄԿՋԲԻՆ ԼԻԲԵՐԱԼՆՅԱՆ ԱՋ ՈՒԺԵՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1988թ. սեպտեմբերին յրազավ Լիբանանի նախագահ Ամին ժմայելի (1982-1988թթ.) պաշտոնավարման ժամկետը: Սակայն շարունակվող զինված հակամարտության պայմաններում այլպես էլ հնարավոր չեղավ նոր նախագահի ընտրության հարցում համաձայնության գալ ինչպես յիբանանյան աջ ու թերի, այնպես էլ ձախ շրջանակների՝ հետ: Արդյունքում, սեպտեմբերի 21-ին, յիբանանյան խորհրդարանը ձևափոխեց նոր նախագահի ընտրությունը: Ստեղծված պայմաններում հաջորդ օրն Ամին ժմայելի հանձնարարեց իր աշխատակազմի ղեկավար գեներալ Միշել Աունին ձևավորել ժամանակավոր «զինվորական կառավարություն»: Կառավարությունը պետք է կազմված լիներ հինգ սպաներից, որոնցից երեքը ներկայացնելու էին երկրի իսլամադավան համայնքները: Սակայն վերոնշյալ երեք նախարարական աթոռներն այդպես էլ մնացին թափուր, քանի որ որևէ սուեմի կամ շիա զինվորական չհամաձայնեց ներգրավվել ձևավորվող կառավարության կազմում: Սրա հիմնական պատճառը թերևս այն էր, որ Լիբանանի կառավարման հիմքում ընկած կրոնադավանական համակարգի համաձայն երկրի վարչապետի պաշտոնը մշտապես պատկանում էր սուեմի համայնքին: Այս պարագայում Աունի ժամանակավորապես վարչապետի պաշտոնում նշանակվելն ու կառավարությունը ձևավորելու նախաձեռնությունը դիտվում էին որպես ոչ օրինական, ինչը հակասում էր «Ազգային դաշինքով» ամրագրված կրոնադավանական համակարգի սկզբունքներին:

Հակառակ երկրի աջ ու թերի շրջանում թվացյալ միասնությանը «Լիբանանյան ճակատը» ևս միանշանակորեն չընդունեց Ամին ժմայելի՝ ժամանակավոր կառավարության կազմավորումն Աունին հանձնարարելու որոշումը: 1980-ականների վերջին ազերի զինված խմբավորումների ղեկավարության շրջանում ուժեղանում էր մեծիցսահմանության հաստատման համար մղվող պայքարը: Սամիր Ջուզանը, որը 1987թ. կրկին ստանձնեց աջ ու թերի զինված խմբավորումների հրամանատարությունը, փորձում էր իր վերահսկողությունը հաստատել ողջ «Լիբանանյան

ճակատի» նկատմամբ և յուրովի էր պատկերացնում Լիբանանում քրիստոնյաների, մասնավորապես մարոնիների, շահերի պաշտպանությունն ու նրանց գերակա դիրքերի պահպանումը<sup>10</sup>: Պատահական չէր, որ Սամիր Ջաջան ձգտում էր կյանքի կոչել 1975թ. բռնկված քաղաքացիական պատերազմի ընթացքում այդ ուժերի առավել ծայրահեղական, հատկապես «Քաթաիր» կուսակցությանը հարող որոշ արմատական շրջանակների պարբերաբար առաջ քաշած հետևյալ ծրագիրը. «Քրիստոնեական ինքնավար պետության» ստեղծում՝ արևելյան Բեյրութ կենտրոնով, որ գերծ կլիներ սիրիական ռազմական ներկայությունից և ամուր կապեր կպահպաներ Իսրայելի հետ: Այն ամբողջությամբ պետք է լիներ լիբանանյան ուժերի վերահսկողության ներքո: Կազմավորվելու էին ռազմական և քաղաքացիական կառույցներ, որոնց նպատակը «քրիստոնեական ինքնավարություն» գլխամանյան պետությանը փոխարինելն էր<sup>11</sup>:

1987-1988թթ. Սամիր Ջաջան ակտիվորեն ստանձնեց վերոնշյալ ծրագրի գործնական իրականացումը: Լիբանանյան ուժերի հրամանատարը նախ վերակազմավորեց իր զինված խմբավորումները՝ դրանց տալով կանոնավոր բանակի բնույթ, որ զենք և զինամթերք էր ստանում Իսրայելից, իսկ 1987թ. սկսած մասամբ նաև Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնից<sup>12</sup>: Վերջինս ցանկանում էր հնարավոր բոլոր միջոցներով թուլացնել իր մրցակից՝ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ ալ-Ասադի դիրքերը Լիբանանում: Ջաջայի նախաձեռնությամբ կազմավորվեցին նաև «քրիստոնեական ինքնավար պետության» քաղաքացիական և հասարակական կառույցները: Ստեղծվեցին սոցիալական, բժշկական, մաքսային և մի շարք այլ ծառայություններ<sup>13</sup>:

Սամիր Ջաջան իր քաղաքական նպատակ էր հույսել նաև երկրի ողջ քրիստոնյաներին «լիբանանականության» /"Lebanism"/ գաղափարի շուրջ համախմբումը: Այս նախագիծը ևս զարգացնում էին մարոնի ծայրահեղական քաղաքական և մտավորական որոշ շրջանակներ, որոնք նախատեսում էին երկազգային /bi-national/ քրիստոնյաների և իսլամադավանների ինքնավար հանրապետությունների կամ լայն ապակենտրոնացման ստեղծում՝ Լիբանանի դաշնային պետության համատեղությամբ<sup>14</sup>: Այս առնչությամբ, մասնավորապես, էֆին Սակրը՝ «Լիբանանյան ճակատում» ներգրավված մարոնիական քաղաքական կուսակցություններից մեկի՝ «Մայրիի պաշտպաններ» կուսակցության ռազմական թևի հրամանատարը, որն այժի էր ընկնում Լիբանանի ինքնությանն առնչվող հարցերում խիստ արմատական հայացքներով, նշում էր. «Լիբանանյան ազգը չի կարող մուսուլման արաբական, սիրիական կամ որևէ այլ, արաբական ինքնություն ունեցող ազգի հետ»<sup>15</sup>: Մարոնի պատմաբան ալ-Բուսթանին կոչ էր անում նեղացնել լիբանանյան պետության սահմանները, սահմանափակվելով միայն «քրիստոնեական

ինքնավար պետությամբ», ինչը նպատակ ունի պահպանել լիբանանյան ազգի քրիստոնեական բնույթը՝:

Նշենք, որ «Լիբանանյան ճակատի» ոչ բոլոր ուժերն էին հավանության արժանացնում վերոնշյալ ծրագրի իրականացումը: Մասնավորապես «Ազգային լիբերալ կուսակցությունը» կտրուկ քննադատության էր ենթարկում Լիբանանը դաշնային պետություն դարձնելու որոշ մարտնչական շրջանակների փորձերը: «Շամունականները» հանդես էին գալիս Լիբանանի միասնականության և ամբողջականության պահպանմամբ և այս հարցում սերտորեն համագործակցում էին հակադիր ձախճամբարի ղեկավար ուժի՝ հիմնականում դուզմեդից կազմված «Առաջադիմական ազնալիստական կուսակցության» ղեկավարության հետ<sup>12</sup>:

Վերադառնալով Միշել Աունի՝ նշենք, որ հանձնիս տուննի ազդեցիկ ղեկավար Մալիմ ալ-Հոսի, նա ուներ մրցակից, որը թեև մի քանի ամիս էր, ինչ արդեն պաշտոնանկ էր արվել, սակայն որևէ կերպ չէր ցանկանում հրաժարվել վարչապետի պաշտոնից և հանձնել գործադիր իշխանությունը: 1988թ. սեպտեմբերի վերջից Լիբանանում հաստատվել էր երկիշխանություն: Գործում էր երկու կառավարություն, երկու քաղաքացիական վարչակարգ և երկու կանոնավոր բանակ<sup>13</sup>:

Ստեղծված իրավիճակն իր իշխանության ամրապնդմանը ծառայեցնելու և վերջնականապես երկրի կառավարումն իր ձեռքում կենտրոնացնելու, ինչպես նաև 1989թ. փետրվարից Մամիր Ջաջայի իր նկատմամբ վերահսկողություն հաստատելուն ուղղված զինված հարձակումներին վերջ դնելու նպատակով, Աունը մայիսին հայտարարեց Լիբանանի տարածքը «Միլիտարիզացիայից ազատագրելու պատերազմ»<sup>14</sup>: Միլիան իր հերթին ցամաքային և ծովային շրջափակման ենթարկեց «քրիստոնեական ինքնավարության» այն շրջանները, որ գտնվում էին Միշել Աունի զինված խմբավորումների հսկողության տակ: Ի պատասխան զենքերայր ուժակոծեց արևմտյան Բեյրութում տեղակայված սիրիական ռազմական ուժերի դիրքերը: Միշել Աունն ընտրեց լիբանանյան ուժերի «Մանաչիր քո թշնամուն: Միլիան քո թշնամին է» կարգախոսը<sup>15</sup>: Որպես նպատակ նա հռչակեց Լիբանանի միասնականության և անկախության վերականգնումն ու օրենքի ուժի հաստատումը, որին հասնելու համար նա ակնկալում էր լիբանանյան ողջ քրիստոնյաների, ապա նաև իսլամադավանների աջակցությունը: Այս ընթացքում Աունի հեղինակությունը խիստ բարձրացել էր, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ վերջինս ծայրահեղ քննադատության էր ենթարկում և՛ աջ ուժերի և՛ ձախճների զինված խմբավորումների գործողությունները, որոնք չէին նպաստում Լիբանանում խաղաղության հաստատմանը և էլ ավելի էին խորացնում առկա պատակավածությունը<sup>17</sup>: Սակայն իր քաղաքական նպատակների իրականացման ընթացքում Աունը թույլ տվեց երկու ռազմավարական սխալ, որոնք էլ հենց կանխորոշեցին նրա պարտությունը.

1. Եւ հաւատում էր, որ արեւմտյան տերությունները, հատկապես ԱՄՆ ու Ֆրանսիան, հնարավորինս կաջակցեն իրեն Սիրիայի դեմ պայքարում: Գեներալը շատ լավ հասկանում էր, որ առանց արտաքին օժանդակության նա երբեք չէր կարող հաղթանակ տանել ինչպես հակասիրիական պայքարում, այնպես էլ այս ուժերի շրջանում մենիշխանության հաստատման գործում: Սակայն, ԱՄՆ-ը, ելնելով տարածաշրջանում իր հետագա ռազմավարական ծրագրերից, արդեն իսկ հավաստիացրել էր Սիրիային, որ սամերիկյան վարչակազմը պատրաստ էր «աչք փակել» Լիբանանում սիրիական ներկայության պահպանման մկատմամբ: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա վերջինս բավարարվեց միայն Սուեի «բանավոր աջակցություն» ցույց տալով:
  2. Աուճին այդպես էլ չհաջողվեց միավորել լիբանանյան աջ ուժերի ողջ ճակատը: Վերջինիս զինված խմբավորումները միայնակ, առանց աջերի ամբողջական ճակատի աջակցության, անկարող էին լուրջ պայքար մղել սիրիական ուժերի դեմ: Սիրիական զինված ուժերի դեմ հարձակումների ընթացքում զգալիորեն տուժում էին հատկապես Բեյրութի հյուսիսային արվարձանները: Արդյունքում, Աուճն իր «ազգային ազատագրման» պատերազմը, հակառակ Լիբանանի ամբողջականության և անկախության վերականգնման կոչերին, վերածեց սեփական իշխանության պահպանման պայքարի: Պարզ էր, որ նա ևս ձգտում էր «Լիբանանյան ճատակում» մենիշխանության հաստատմանը<sup>18</sup>: Այդուհանդերձ, մինչև 1989թ. օգոստոսի 15-ը, Աուճին հաջողվեց միավորել լիբանանյան 14 խմբավորումների, որոնք ձևավորեցին հակասիրիական ճակատ<sup>19</sup>:
- 1980-ականների վերջին ուժեղացել էր միջազգային հանրության, հատկապես ԱՄՆ-ի, լիբանանյան հակամարտության վերջնական կարգավորմանն ուղղված ջանքերը: Պատահական չէ, որ 1989թ. մայիսի 25-ին, նաև ԱՄՆ-ի ակտիվ աջակցությամբ, Արաբական պետությունների լիգայի 16-րդ համաժողովում որոշում ընդունվեց կազմավորել հանձնախումբ՝ Ալժիր, Մարտկոտ և Մատոյան Արաբիա կազմով, որ կոչված էր առաջիկա վեց ամիսների ընթացքում ուղի հարթել դեպի լիբանանյան ճգնաժամի վերջնական կարգավորումը<sup>20</sup>:
- 1989թ. սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 22-ը լիբանանյան խորհրդարանի ողջ մնացած 63 պատգամավորներից 58-ը Տաիֆում՝ Մատոյան Արաբիա, թմարկում էին Ազգային համաձայնության խարտիան: Նշենք, որ Մալիմ ալ-Հոսր, լիբանանյան ժախերն ու աջ ուժերի հրամանատարությունը՝ Սամիր Ջաջայի ղիխավորությամբ, նպատակ ունենալով վերջ դնել Լիբանանում երկարատև քաղաքացիական պատե-



րագծին, ճանաչեցին Տաիֆի համաձայնագիրը: Միայն Առնը հրաժարվեց լոնդոնյան այն: Նա փաստարկեց, որ վերոնշյալ համաձայնագիրը, որով Լիբանանի և Սիրիայի միջև հաստատվում էին հատուկ բնույթի հարաբերություններ, «օրինականացնում էր Սիրիայի Լիբանանի նկատմամբ հավակնություններն ու երկրի տարածքում սիրիական ռազմական ուժերի ներկայությունը»<sup>21</sup>:

Տաիֆի համաձայնագրի համաձայն՝ պահպանվող կրոնադավանական համակարգում տեղի էին ունեցել մի շարք բարեփոխումներ: Հաշվի առնելով երկրում մարանիների, սուննիների և շիաների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցությունը, տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխությունները՝ հատկապես շիաների, քվաքանակի կտրուկ աճը<sup>22</sup>, նախատեսվում էր մեծացնել իսլամադավանների մասնակցությունը երկրի կառավարման մարմիններում: Նվազեցվել էին երկրի մարտնի նախագահի լիսգորություններն ու ավելացվել սուննի վարչապետին՝ ու խորհրդարանի շիա նախագահինը: Հավասարեցվել էր խորհրդարանում իսլամադավանների և քրիստոնյաների համասնությունը: Նախկին 5:6 համասնությունը փոխարինվել էր 5:5-ով<sup>23</sup>: Ավելացվել էր նաև պատգամավորների թիվը՝ 99-ից հասցվել էր 108-ի<sup>24</sup>:

1989թ. նոյեմբերի 5-ին արդեն Լիբանանի տարածքում՝ Քուլայարում, Տաիֆի համաձայնագրի հաստատումից հետո, լիբանանյան խորհրդարանը նախագահ ընտրեց Ռեմե Մուաուադին, որը սակայն սպանվեց նոյեմբերի 22-ին: Երկու օր անց նոր նախագահ ընտրվեց Իսիաս Հրաուին, որը վարչապետի պաշտոնում կրկին նշանակեց Մալիմ ալ-Հոսին<sup>25</sup>:

1989թ. դեկտեմբերին, ստանալով երկրի նախագահի և վարչապետի աջակցությունը, լիբանանյան աջ ուժերի հրամանատար Սամիր Ջաջան ստանձնեց Աունին վերջնական պարտության մատնելու գործը: Ջինված բախումներ տեղի ունեցան աջերի զինված խմբավորումների և զենքրալ Աունի զորամիավորումների միջև, որոնք վերահսկում էին «քրիստոնեական ինքնավարության» մեկ երրորդը: Բախումները հատկապես սաստկացան 1990թ. ապրիլին, երբ Ջաջան պաշտոնապես իր հավատարմությունը հայտնեց նախագահ Իսիաս Հրաուինին և Սիրիայի հետ մերձեցման նրա քաղաքական ուղեգծին<sup>26</sup>: Աունի անգիջում դիրքորոշումը հանգեցրեց 1990թ. ապրիլ-հուլիս ամիսներին աջ ուժերի ճակատում ներմարտիական հակամարտության ուժեղացմանը, որի ընթացքում Աունը պայքարում էր լիբանանյան ուժերի նկատմամբ ամբողջական վերահսկողություն սահմանելու, ինչպես նաև «սպառնալից» տարածքում՝ Բեյրութից մինչև Ջուբայլ, իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար: Այս բախումների արդյունքում կային շուրջ 1000 սպանվածներ և 3000 վիրավորներ, ինչպես նաև զգալի ավերածություններ<sup>27</sup>:

Միջին լավագույն օգտագործող Ծոցի II ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի հովանու ներքո հակախրաքյան միջազգային կռախցիային միանալու գործունը, որով և ապահովեց Լիբանանում սիրիական ներկայության պահպանման նկատմամբ ամերիկյան վարչակազմի լուս համաձայնությունը: 1990թ. հոկտեմբերի 13-ին սիրիական ուսումնասիրի և ցամաքային ուժերն, արդեն ամբողջովին լիբանանյան կառավարության վերահսկողության տակ գտնվող բանակի, ինչպես նաև Սամիր Ջաջայի զխավորությանը լիբանանյան ուժերի զինված խմբավորումների հետ համատեղ, հաջողեցին վերջնական պարտության մատնել Աունին<sup>28</sup>: Վերջինս ստիպված էր երկար ժամանակ ապաստան գտնել Լիբանանում Ֆրանսիայի դեսպանատանն, այսուհետև ֆրանսիական սուզանավով տեղափոխվել Ֆրանսիա<sup>29</sup>: Երկարատև քաղաքացիական պատերազմն ավարտված էր<sup>30</sup>: Լիբանանը փորձում էր հնարավորինս արագ վերականգնել հակամարտող ուժերի միջև հավասարակշռությունը:

Նշենք, որ լիբանանյան աջ ուժերի ճակատում հակասությունները չէին սահմանափակվում միայն Սամիր Ջաջայի և Սունի միջև հակամարտությանը: Աջերի նկատմամբ մեկնչխանության հաստատման պայքարի վառ օրինակ էր նաև 1980-ականների վերջին կրկին սրված մրցակցությունը «Լիբանանյան ճակատի» երկու հիմնական ուժերի՝ «Շամունականների» և «Քաթաիբ» կուսակցության զինված խմբավորումների միջև: Այդ հակասությունների ուժեղացման արդյունքում 1990թ. հոկտեմբերին սպանվեց «Շամունականների» ղեկավար, Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունի որդին՝ Դենի Շամունը<sup>31</sup>: Այս ամենն ապացուցում էր այն իրողությունը, որ աջերի ճակատում նեղ անձնական շահերը դեռևս շարունակում էին գերիշխող լինել համընդհանուր պետական շահերի նկատմամբ:

Լիբանանյան ուժերի ղեկավարները, որ ստացել էին «պատերազմի լորդեր» անվանումը, իրենց ձեռքում էին հիմնականում կենտրոնացրել Միջին և Իսրայելի հետ սննդամթերքի, վառելիքի, զենքի և քնդամյութերի անօրինական առևտուրը, որ ապահովում էր խոշոր չափի եկամուտներ<sup>32</sup>: Այս գործում սերտորեն համագործակցելով Լիբանանում տեղակայված սիրիական զորամիավորումների սպաների հետ՝ լիբանանյան աջերի որոշ ղեկավարների հովանավորյալներն իրականացնում էին լայնածավալ մաքսանենգություն: Լիբանանից դուրս էին բերվում մեծաքանակ գողացված ապրանքներ և դրանք իրացվում էին Միջինում: Վերջիններս քաջալերում էին նաև Բեքաայի հովտում օփիումի աճեցումն ու կազմակերպում էին հերոինի առևտուրը<sup>33</sup>:

Ամբողջությամբ լիբանանյան ուժերի վերահսկողության տակ էր գտնվում Ջունիյի նավահանգիստը, որ դարձել էր երկրի վարչական մայրաքաղաքն ու առևտրային կենտրոնը:

Պատերազմի ավարտից հետո Լիբանանում օրենքի ուժի հաստատումը դարձել էր անհետաձգելի գործ: 1990թ. օգոստոսի 21-ին Լիբանանի խորհրդարանն ընդունեց որոշում, որի համաձայն երկրի սահմանադրությունը պետք է համապատասխանեցվեր Տաիֆի համաձայնագրի դրույթներին: 1991թ. մարտին բոլոր զինված խմբավորումները, բացառությամբ «Հիզբալլահի», որ շարունակում էր իր զինված պայքարն Իսրայելի դեմ երկրի հարավում՝ «անվտանգության գոտում», զինաթափվեցին: Հուլիսին վերականգնվեցին Լ. վերազինված լիբանանյան բանակն իր վերահսկողությունը հաստատեց Լիբանանի ողջ տարածքի նկատմամբ, բացառությամբ «անվտանգության գոտուց», որ դեռևս գտնվում էր իսրայելական վերահսկողության ներքո: Լիբանանյան հակամարտության մեջ ներգրավված բոլոր ուժերը, այդ թվում նաև աջերը, զրկվեցին իրենց ոչ օրինական եկամտի աղբյուրներին:

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո լիբանանյան ուժերը փոխակերպվեցին քաղաքական կուսակցության, որ պահպանվեց մինչև 1994թ. մայիս, երբ Ջունիյուն մարտիական եկեղեցում պայթյուն կազմակերպելու, ինչպես նաև մինչ այդ՝ 1990թ. հոկտեմբերին Դեմի Ըամունի սպանությունը կազմակերպելու մեղադրանքով բանտարկվեց այդ ուժերի ղեկավար Սամիր Ջաճան<sup>34</sup>: 1995թ. նա դատապարտվեց մահվան, որն ավելի ուշ փոխարինվեց ցմահ բանտարկության<sup>35</sup>:

1992թ. ամռանը, շուրջ 20 տարի ընդմիջումից հետո, երկրում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: Սիրիական վերահսկողության տակ ընթացող այդ ընտրությունները բոլորտեցին լիբանանյան ուժերն ու նրանց ընտրազանգվածի շուրջ 80%-ը<sup>36</sup>: Ընտրությունների արդյունքում ընտրվեց 128 պատգամավոր: Ավելացված խորհրդարանական տեղերը զբաղեցրեցին հիմնականում շիաները<sup>37</sup>:

Մինչ այդ, 1991թ. մայիսի 22-ին, նախագահներ Իլիաս Հրաուիմ և Հաֆեզ ալ-Ասադը ստորագրեցին լիբանանա-սիրիական եղբայրության և համագործակցության համաձայնագիրը, որ պարտավորեցնում էր երկու հարևաններին համակարգել իրենց արտաքին, պաշտպանության և տնտեսական քաղաքականությունները<sup>38</sup>: Այս համաձայնագիրը մեկ անգամ ևս ամրապնդեց այն հաստուկ բնույթի հարաբերությունները, որ առկա էին երկու երկրների միջև:

1991թ. վարվող պաշտոնական քաղաքականության համաձայն՝ զինված խմբավորումների մինչև 25 տարեկան բոլոր մարտիկները համայնքեցին կանոնավոր բանակի կազմը: Կառավարությունը լիբանանյան ուժերի 6.500 մարտիկների ևս ներգրավեց լիբանանյան բանակի շարքերում<sup>39</sup>:

Փաստենք, որ 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին լիբանանյան աջերի ճակատում մենիջիստության համար պայքարն ու հակասությունների սրումը հանգեցրին ճակատի վերջնական պատակա-

մանը: Այս գործընթացում զգալի դեր խաղաց մահ Տաիֆի համաձայնագրի ստորագրումն ու նրա դրույթների նկատմամբ լիբանանյան ուժերի ազդեցիկ ղեկավարներից մեկի՝ Սիշել Լուճի բացասական դիրքորոշումը: Վերջինս Տաիֆի համաձայնագրի ստորագրման նկատմամբ ունեցած առարկությունները փորձեց հնարավորինս օգտագործել ի նպաստ «Լիբանանյան ճակատում» և ընդհանրապես, երկրում սեփական իշխանության հաստատմանը՝ իր պայքարին, որպես համախմբող գործոն, հարորդելով հակափրիական բնույթ: Սակայն Լուճի «պատերազմը» ավարտվեց պարտությամբ, որի արդյունքը եղավ «Լիբանանյան ճակատում» բևեռացման գլուխկոտրոսի էլ ավելի խորացումը:

LILIT HARUTYUNYAN

ON THE DEEPENING OF CONTRADICTIONS IN "LEBANESE RIGHT FORCES FRONT" IN THE LATE 1980'S AND IN THE EARLY 1990'S

In the late 1980's and in the early 1990's the struggle for the hegemony and the deepening of contradictions between different right forces inside the "Lebanese Front" (headed by Samir Geagea) led to the "Lebanese Front's" disunification.

In this process the sensible role played also the subscription of Taif Agreement (signed in September 22, 1989), as well as General Michel Aoun's (one of the influential leaders of the "Lebanese Right Forces Front") negative attitude towards Taif's theses. Michel Aoun optimally tried to use his objections concerning Taif Agreement in favour of the confirmation of his own rule not only in "Lebanese Front", but also in whole Lebanon. In his struggle as a unification factor General Aoun used anti-Syrian slogans.

In 1990 Michel Aoun failed his "War of liberation against Syria". The result was the deepening of polarization process in "Lebanese Right Forces Front" and its final division.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լիբանանյան աջ ուժերի հիմնական կորիզը կազմում էին «Լիբանանյան փառանգներ» («Քաթաիբ») և «Ազգային լիբերալ» («Շամունականներ») կուսակցությունները, որոնց անդամները մեծամասամբ մարտնչներ էին: 1976թ. հունվարին աջերը միավորվեցին «Լիբանանյան ճակատում»:
2. Լիբանանյան ձախ ուժերում համախմբված էին «Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը», «Կոմունիստական կուսակցությունը», «Կոմունիստական գործունեության կուսակցությունը», «Լիբանանյան մասերականները», «Արաբական վերածննդի Բասս կուսակցության» լիբանանյան մասնաճյուղը և այլն, որոնք դեռևս 1969թ. միավորվել էին «Ազգային շարժման» մեջ:
3. Elizabeth Picard, Lebanon. A Shattered Country: Myths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, p. 155.

The Kemalist reforms, carried on in Turkey in 20-30s of the 20<sup>th</sup> century covered all the spheres of State life, including science and culture. In the field of history this period is marked by the rise of so called "new historical conception" which became the leading one for the Turkish historians during many decades.

The kind of history which the state promoted largely through the work of the Turkish Historical Society (Türk Tarih Kurumu) founded in 1930, followed the lines set forth by Kemal Atatürk. This official conception carried not scientific but much more propagandistic and nationalistic character and it hindered the emergence of alternative and impartial schools in Turkish historiography.

The article is analyzing the emergence of "new historical conception" in its relation with the peculiarities of foundation of modern Turkey.

ПРИМЕЧАНИЯ

1. См., напр. Зуданян М.К. Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970, Еремеев Д.Е. Этногенез турок, М., 1971.
2. См. напр. Тверитинова А.С. Фальсификация истории средневековой Турции в кемалистской историографии. "Византийский временник". VII, 1953, с. 9-31, Орешкова С.Ф. "Кризис" исторической науки и некоторые новые направления исторических исследований в современной Турции. В кн. "Великий Октябрь и Турция", тезисы и резюме докладов и сообщений научной конференции (1977, Тбилиси), М., 1977, с.61-65, Мейер М.С. Экономические проблемы Османской империи XVI-XVIII вв. в современной турецкой и западной историографии, "Социально-экономические проблемы генезиса капитализма", М., 1984.
3. См. напр. В.Lewis. The emergence of modern Turkey, London, 1962; D.Kushner. The Rise of Turkish Nationalism, London, 1977.
4. О кемализме см. Ամերիկայի պատմության համալսարանի հանրագրությունը 1920-1930-ական թթ., Երևան, 2001.
5. Atatürk'ün sbylev ve demecleri, Istanbul, 1945, s.193-194.
6. Aykut Şeref. Kemalizm. (CHP programının izahı), İst. 1936, s.20-25.
7. См. Мустафа Кемаль (Ататюрк). Путь новой Турции, М., 1934, т.4, с.333.
8. В.Lewis, op. cit., p. 339.
9. Оно было создано в 1931г. на основе существовавшего ранее Общества по изучению османской (турецкой) истории "Для

- осуществления систематических исследований в сфере новой исторической концепции", - как говорится в уставе общества.
10. О планах раздела Османской империи в годы I мировой войны см.: Шамсутдинов А.М. Планы раздела султанской Турции и использование ее в вооруженной интервенции Антанты против Советской России (1918-1919). - Турецкий сборник. М., 1958, с. 32-47. Его же: Национально-освободительная борьба Турции 1918-1923 гг., М., 1966, с.14-43.
  11. "The scourages of God" - St. Lane-Pool, Turkey, New York, 1914, p.3.
  12. В этой связи следует заметить, что концепция извечно отсталого Востока и передового Запада широко распространилась в Европе в XIX в. во время колониального порабощения многих стран Азии и Африки европейскими капиталистическими странами и создания колониальных империи - Британской, Французской, Германской и др. Теоретически она была обоснована в историко-философской схеме Гегеля, различавшего так называемые "исторические народы", к которым он относил древних греков и римлян, христианские народы Западной Европы, игравшие видную роль в истории, и "неисторические народы", бывшие лишь пассивными объектами исторического развития, к которым он относил население Востока. См. Гегель. Сочинения, т. 8.
  13. Islam Ansiklopedisi. 10 cüz. Ist. 1949, s.787.
  14. U.Igdemir. Yilların icinden TT Kurumu. Ankara, 1976, s.203.
  15. Ю.Тишанский, По новой Турции. ОГИЗ, 1933, с.120.
  16. Türk tarihinin Ana Hatları. Ist., 1930.
  17. Ibid.
  18. Birinci Türk Tarih Kongresi (Konferanslar ve müzakere zabıtları В дальнейшем TT Kongresi). Ist. 1932.
  19. Tarihien evvel ve tarih iccinde, I TT Kongresi.
  20. В географическое понятие Средняя Азия Афет Инан включает также Алтай и Памир.
  21. В дальнейшем основные положения этого доклада были развиты в кн. Dr. Afetinan. Türkiye Halkinin Antropolojik Karakterleri ve Türkiye Tarihi (Türk irkinin vatani Anadolu). Ankara, 1947.
  22. Слово "арий" как название индо-европейских племен, перекочевавших в Индию, появилось за несколько тысячелетий до появления первых турок на арене истории. См.: История Древнего Востока, М., 1979, с.349-350.
  23. Dr. Afetinan. op. cit., s.56.
  24. Там же, с.49.
  25. Там же.
  26. I TT Kongresi ..., s.7-8.
  27. Этот тезис нашел впоследствии отражение в т.н. "солнечной теории" происхождения языка.

23. В 30-ые гг. в Турции появились эже банки со звучными названиями "Сумербанк" ("Шумерский банк") и "Этибанк" ("Хеттский банк"). Современная наука, в частности, работы Б.Грозного доказали, что хетты говорили на языках индоевропейской семьи.
29. I TT Kongresi ..., s.117.
30. Там же, с.201.
31. Там же, с.6.
32. Tarih. Ikt., 1932.
33. Tarih, c.I. s.55-59.
34. Там же, с.69-71.
35. Там же, с.74-75.
36. Там же, с.103-105.
37. Например, Ж.Моргана, Э.Питтара и др.
38. Tarih, c.I. s.41.
39. См. история Древнего Востока, с.181-182.
40. U.Igdemir, Yilların icinden. s.203.
41. Еремеев Д.Е. Этногенез турок. М., 1971, с. 20.
42. См. Cohee S. Mustafa Kemal Atatürkün Milliyetçilik Anlavisini. "Yeni Forum". c.14. N289, Ankara, 1993. s.51.
43. Там же, с. 48-53.
44. Akcam T. Türkiyeyi yeniden düşünmek. авт. отт. кн., s. 4-6. The Cenocide of the Armenians in "Problems of Genocide", Toronto, 1997. p.361-362.

**ՔԵՆՒԱՄԻՆ ՄԱՒՆՑԱՆ**

**ԱՔԻԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅԸ ՎՐԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՄԵՋ (ՄԱՐՏ 1919թ. - ՓԵՏՐՎԱՐ 1921թ.)**

Համընդհանուր սկզբունքով ընտրված Արխագիայի ժողովրդական խորհուրդը (այսուհետև՝ ԱԺԽ) 1919թ. մարտի 20-ին ընդունեց «Արխագիայի ինքնավարության մասին Ակտը»<sup>1</sup>: Փաստաթուղթը չէր պարունակում որևէ սկզբունք, ինչը կհակասեր Վրաստանի կառավարության պաշտոնական տեսակետներին: 1919թ. փետրվարին Վրաստանի վարչապետ Ն. Ժորդանիան ասում էր. «Եթե ցանկանում ենք ոչ բռնի ուժով, այլ բարի կամքով ամրապնդել մեր օգտին ծայրամասերը, ապա պետք է ընտրենք նրանց համար հատուկ սահմանադրությունների մշակման ճանապարհը»<sup>2</sup>: «Ակտ»-ն ընթերցվել էր և հավանության էր արժանացել Վրաստանի Մահմանադիր ժողովի (այսուհետև՝ ՄԺ) 1919թ. մարտի 21-ի նիստում<sup>3</sup>: Նորընտիր ԱԺԽ-ի բացման մախոթյակին Վրաստանի կառավարությունը որոշել էր հայտարարել, որ. «Արխագիային իր բոլոր ներքին գործերում տրամադրվում է լիակատար ինքնավարություն: [Արխագիայի ժողովրդական] խորհուրդն իրավունք ունի վերցնել իր ձեռքը բոլոր վարչական ֆունկցիաները, ներառյալ զեմստվայի ղեկավարումը: Արխագիայի ինքնավար մարմինների լիազորությունների հստակեցված տեսակն ավելի հանգամանորեն հաստատված կլինի սահմանադրությամբ»<sup>4</sup>: Միաժամանակ անհասկանալի էր մնում, որ մի սահմանադրությամբ՝ Վրաստանի<sup>5</sup>, թե՛ Արխագիայի: Հետագայում այս երկմիտ ձևակերպումը լուրջ տարածայնություններ էր առաջացրել:

ԱԺԽ-ն ենթադրվում էր իբրև օրենսդիր մարմին<sup>6</sup>, սակայն մինչև Արխագիայի սահմանադրության հաստատումը նրա լիազորությունների շրջանը չէր որոշված: Այդ իսկ պատճառով ԱԺԽ-ն ուներ ներկայացուցչական ֆունկցիա, ինչը հաստատում էր Ն.Գ. մախարար Ն. Ռամիշվիլու ելույթն ԱԺԽ-ում 1920թ. փետրվարին, երբ նա բազմիցս անվանում էր այդ մարմինը՝ «ներկայացուցչական»<sup>7</sup>: ԱԺԽ-ի քարտուղար Գ. Կորոյո-

վի վկայությամբ ընդդիմությունն ամեն կերպ ցանույմ էր հայտային կարգավ օժտել ԱժԽ-ն «բարձրագույն օրենսդրական մարմնի» ֆունկցիայով, սակայն սոցիալ-դեմոկրատական իշխալ մեծամասնությունը հասնաճայն չլինելով՝ կասեցրեց այդ միտումը: Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (այսուհետև՝ ՎՍԴԲԿ) Արխագիայի ճյուղը դիտում էր ԱժԽ-ն իբրև մի մարմին, որն առաջին հերթին պետք է քաղաքականորեն համախմբեր երկրամասի բոլոր ազգությունները՝ 1919թ. մայիսի 13-ին ԱժԽ-ն ձևավորել էր տարածքային գործադիր իշխանություն՝ Կոմիսարիատ: Նրա կառավարման ներքո պետք է գործեին տեղական ինքնակառավարման մարմինները (Ձեռնտվո): Կոմիսարիատի ղեկավարումը հանձնարարվել էր Դ. Էմուվաթիին, որը զիջել էր ԱժԽ-ում նախագահությունը Վ. Շերվաշիձեին<sup>8</sup>: ՎՍԴԲԿ պաշտոնաթերթ «Էրթոբա»-ն նշում էր, որ «մեր հանրապետությունը դեռևս չի պարզել իր հարաբերություններն ԱժԽ-ի հետ... քացի դրանից Արխագիայում գոյություն ունեն չորս զավատական և երեք քաղաքային տեղական ինքնակառավարում: ԱժԽ-ն չունի իրավունքներ և պարտականություններ սահմանված չափ՝ ոչ միայն կենտրոնական հիմնարկներին, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: ԱժԽ-ի վերջին քայլերը բացահայտեցին երկու միտում: Սի կողմից յուրացնել ֆունկցիաներ, որոնք բնորոշ են ինքնիշխան պետությանը, մյուս կողմից նա ոտնահարում է ինքնակառավարման իրավունքը: Կենտրոնական իշխանությունը պետք է վճարվանորեն սահմանազատի ԱժԽ-ի գործնական լիազորությունները: Անընդունելի է, որ մեր պետությունը զիջի իր իշխանության մասնաբաժինը, ինչպես նաև անթույլատրելի է սահմանափակել ԱժԽ-ի օգտին տեղական ինքնակառավարման մարմինների ֆունկցիաները»<sup>9</sup>: Արխագիայի զենստվաները դժգոհ էին, քանի որ Կոմիսարիատը վերցրել էր իր վրա երկրամասի բարձրագույն զենստվայան մարմնի ֆունկցիա, այն էլ շատ լայն մեկնաբանելով իր լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ: Ձեռնտվաների բոլոր որոշումները հաստատման համար պարտադիր վերաքննվում էին Կոմիսարիատի կողմից<sup>10</sup>: ՎՍԴԲԿ-ն, որը հսկում էր երկրի կառավարությունը և Սժ, միանշանակ իրականացնում էր որթեգրված «դեմոկրատական պետության» գաղափարը, որի հիմքում պետք է գտնվեին զենստվաները՝ օժտված լինելով տեղական կառավարման մարմինների ֆունկցիայով: Քաղաքների և գավառների մակարդակով պետությունը զրկվում էր որևէ պաշտոնյաներ կամ կառավարման մարմիններ ունենալու իրավունքից: Վրաստանը քաժանվել էր զավատական զենստվաների, որոնք իրենց հերթին կազմված էին լինելու համայնքներից՝ «թեմի»<sup>11</sup>: Չմայած, որ Սժ-ում դեռևս քննարկվում էր «Ձեռնտվաների միության մասին» օրինագիծը, Արխագիայի զենստվաների խորհրդակցությանը որոշվել էր երկրամասի շրջանակներում ձևա-

վորել նրանց միությունը: Նմանադրվում էր, քե Կոմիսարիատի քոլոր-լիս-գորությունները կանցնեն այդ միությանը: Գավառական վարչակազմն արդեն գտնվում էր զեմստվանների տրամադրության տակ<sup>12</sup>: 1920 թ-ից գոյություն ունեւ Սուխումի շրջանի գավառական զեմստվանների Կեմտ-րոնական վարչությունը<sup>13</sup>: Հետևապես զեմստվայան ժողովներն ավելորդ էին համարում և՛ ԱժԽ-ի, և՛ Կոմիսարիատի գոյությունը: Մամուրզակա-նի (այժմ՝ Էլալիի շրջան) առաջին իսկ զեմստվայան ժողովում միաձայն որոշում էր ընդունվել, որը մատնագշում էր Թիֆլիսի հետ ամմիջական կապի հատատման անհրաժեշտությունը, առանց «սուխումյան իշխա-նությունների» միջնորդությամբ<sup>14</sup>:

Գ. Կորոյլովը կարծում էր, քե չափազանց աճած կառավարման մարմինները փոքր երկրամասն արտաքուստ վերածել էին առանձին պե-տության: Նա առաջարկում էր միաձուլել Կոմիսարիատը զեմստվանների հետ, իսկ ԱժԽ-ի նստաշրջանների քիվր կտրուկ նվազեցնել: Նրա կար-ծիքով այդ մարմինների գոյությունը չափազանց թանկ էր նստում երկ-րամասի բյուջեի վրա, քացի դրանից այդ հիմնարկները չէին կարող ինք-նուրույն կազմակերպել տեղական կյանքը<sup>15</sup>: Կորոյլովի հետ այդ հար-ցում համաձայն էր ԱժԽ-ի ընդդիմադիր անդամ Մ. Թարնավան՝ գտնե-լով, որ «ինքնավար» իշխանության կեղծ մարմինները՝ Ժողովրդական խորհուրդը և Կոմիսարիատն ունակ չեն որևէ բանում արտահայտել ինք-նուրույնություն: Նրանց գոյությունը կարելի է համարել ավելորդ»<sup>16</sup>:

Թիֆլիսի մամուլը կասկածի տակ էր վերցնում Աբխազիայի ինք-նավարության անբավարարության մասին Վրաստանի կառավարության հավատարմացումները: «Չկա Աբխազիա և՛ ինչպես երկրամաս, և՛ ինչպես Վրաստանի ղեմնկրատական հանրապետության ինքնավար միավոր: Աբխազիայի ինքնավարությունը, որպես իրողություն ղեռն գոյություն չունի և պետք է ստեղծվի»<sup>17</sup>, - գրում էր Սուխում գործուղված հաստուկ լրագրողը: Աբխազիայում տիրող կացության մասին Մ. Թարնավան ար-տահայտվում էր հետևյալ կերպ. «Քաղաքներում ստեղծված են զինվո-րական պարետություններ, Սուխումում՝ գնդապետ Տուխարելիի գլխա-վորությամբ «պաշտպանության շտաբ» կոչված շրջանային ռազմական վարչությունը: Գավառներում գորամասերը գործում են իրենց հայեցո-ղությանը՝ փոխարինելով վարչակազմը: Մի խոսքով՝ երկրի ռազմավար-յական կառավարումը գտնվում է վրացական կառավարության գործա-կանների ձեռքերում: Բոլոր հիմնարկները, չբացառելով տեղական նշա-նակության, ստանում են հրահանգներ և վերահսկվում են կենտրոնա-կան կառավարության կողմից»<sup>18</sup>:

Տարածայնությունների սկզբունքները պարզաբանել էր ընդդիմա-դիր Գ. Ալանիան, ասելով. «Մենչևիկներն (իմա՝ ՎՄԳԲԿ Աբխազիայի ճյուղը - Բ. Մ.) առաջարկում էին մարզային ինքնավարության որևէ տե-սակ: Մենք պահանջում էինք ամենայն ինքնավարություն»<sup>19</sup>: Այդ



սկզբունքների նորերանգությունը պարզ կերպով քաջատրվում էր ՎՄԴԲԿ-ի Արխագիայի ճյուղից առանձնացած «միջազգայնականների» խմբակցության 1919թ. նոյեմբերի 15-ի հռչակագրում, որտեղ մասնավորապես ասված էր, որ ԱԺԽ-ի նոր ֆրակցիան «...արդի քաղաքական կոնյուկտուրայի պայմաններում (հմա՝ Ռուսաստանում ընթացող քաղաքացիական պատերազմը-Բ. Մ.) ճանաչում և պաշտպանում է Վրաստանի ղեկավարական հանրապետության անկախությունը... Ներկա ժամանակ չկամխորշելով միասնական Ռուսաստանի պետության հետ կապի տեսակը և Արխագիայի ու Վրաստանի մերքին ինքնուրույնության չափի հարցը, սպագայում՝ քաղաքական իրադրության այլ պայմաններում, գտնում է ավելի նպատակահարմար և կողմ է արտահայտվում Արխագիայի և Վրաստանի մշակութային, տնտեսական ու քաղաքական զարգացման համար՝ միավորել երկրամասերը Ռուսաստանի ժողովուրդների ընդհանուր ընտանիքին»<sup>20</sup>։ ԱԺԽ-ում գործող ընդդիմությունը յայն ինքնավարության էր համաձայնվում Վրաստանի կազմում քանզի կրում էր սոցիալիստական բնույթ և, հետևապես, չէր կարող համակրել «Սպիտակ շարժմանը»<sup>21</sup> և անհամբեր սպասում էր նրա պարտությանը՝ Ռուսաստանին միանալու համար։ Արխագիայի ՆԳ կոմիսար Մ. Ուրիդիսն ասում էր, թե. «Սկզբնականապես արխագ ազգայնականներն Արխագիայի համար լիակատար անկախությանն էին ձգտում, սակայն համոզվելով այդ գաղափարի անկենսականության մեջ առաջ էին քաշել Արխագիայի և Վրաստանի հավասարության գաղափարը, որի դեպքում հարաբերությունները պետք է լինեին համադաշնային... Սահմանադրության նախագծի մշակման ընթացքում պարզվել էր, որ «անկախ սոցիալիստներին» խմբի նպատակն էր ստեղծել Վրաստանի հետ ժամանակավոր դաշինք, որպեսզի հետագայում՝ հարմար պահին, խզել կապը նրա հետ և շրջել Արխագիան դեպի այլ քաղաքական կողմնորոշում»<sup>22</sup>։ Արդի վրաց հետազոտողները, որպես ընդդիմության հակապետական և հակավրացական գործունեության օրինակ մեջբերում են Մ. Թարնավայի հուշերը։ Նա գրում էր. «Չհաշտվելով ազգային հարցում Արխագիայի նկատմամբ իրականացվող մեղմակցական կուսակցության քաղաքականությանը, ես դուրս եկա մեղմակցական կուսակցության շարքերից... և ստեղծեցի իմ ֆրակցիան... սոց.-դեմ. (միջազգայնականների)։ Գաղափարաբարեն առավել մոտ գտնվող «միջազգայնականների» և «անկախ սոցիալիստներին» ֆրակցիաները, այսինքն՝ ես, Ալունիան, Մարգարիան, Չանբան ու Ցագուրիան, վարում էին միասնական քաղաքականություն և ռազմավարություն Խորհրդային Ռուսաստանին (ՌՄՖՍՀ) միավորվելու համար»<sup>23</sup>։ Այդ նպատակով մենք պաշտոնապես բոլորում էինք Վրաստանի Սահմանադիր ժողովի ընտրություններն Արխագիայում, որպեսզի կրկին պետականորեն չկապել Արխագիան այդպես կոչված Վրացական ղեկավարական հանրապետության հետ։

Մենշևիկյան վրացական կառավարության հետ մեր շփումներում ինքնավարության և Արխագիայի սահմանադրության ընդունման հարցերում ձախողում էինք որևէ համաձայնության գալու հնարավորությունը, իրականացնում էինք մենշևիկյան կառավարության գործունեության քննադատության քաղաքականություն: Գործելով այդպես, մենք, միաժամանակ, ՌԱՖՍՀ-ի հետ կապ հաստատելու և նրա կազմ ընդգրկվելու հնարավոր միջոցներ էինք փնտրում»<sup>24</sup>: Այս հայտարարությունը հարկավոր է ընդունել որոշ վերապահումներով, քանի որ այն զրվել էր խորհրդային իշխանության տարիներին: Ռուսաստանի հարավում «Սայխտակ շարժման» վերելքի պահին, երբ 1919թ. գարնանն առաջացավ Այսրկովկաս Կամավորական բանակի ներխուժման վտանգը, Վրաստանի կառավարությունը որոշ չափով մեղմացրել էր իր քաղաքականությունը տեղի բուլշևիկների նկատմամբ, դիտելով նրանց որպես հնարավոր դաշնակիցներ ընդհանուր թշնամու առջև: Հետևապես, սոցիալիստական բնույթ և խորհրդային Ռուսաստանի վրա կողմնորոշում ունեցող ընդլիմությունն Արխագիայում, այդ պահին չափավորում էր իր պահանջները Վրաստանի կառավարության առջև և համագործակցում էր նրա հետ: Արխագիայում բուլշևիկներն օգտվում էին կիսալեզակ պայմաններից<sup>25</sup>: 1920թ. մայիսի 7-ի վրաց-խորհրդային պայմանագիրը ստեղծել էր առավել նպաստավոր պայմաններ կոմունիստների գործունեության համար Վրաստանում: Արխագների միջավայրում նրանք քաղաքում էին խորհրդային Ռուսաստանին միանալու գաղափարը<sup>26</sup>: Բուլշևիկներն ամեն կերպ ջանում էին ի շահ իրենց ծառայեցնել ընդլիմությունն ԱՄԽ-ում: Դրա վկայությունն է Ն. Լակոբայի<sup>27</sup> ընդլիմությանը տրված գնահատականը. «Նրանք օգտվելով պատվամեծական կարգերից, ամեն կերպ դատապարտում են [վրաց] շովինիստներին... պահպանում են գյուղացիական զանգվածներում տարերային դժգոհություն: Արխագական ժողովրդական խորհրդում մեր ընկերների խումբը... քարե-խիղճ կատարեց իր հեղափոխական պարտքը»<sup>28</sup>: Առխուժի շրջանային դատախազ Չխարտիշվիլին 1920թ. օգոստոսին հաղորդում էր, որ ցանկանալով միանալ խորհրդային Ռուսաստանին բուլշևիկների տեղական կազմակերպությունն աշխատանք է իրականացնում անջատողական տրամադրությունների հրահրման և արխագների ասպտամբությունը կազմակերպելու ուղղությամբ<sup>29</sup>: Ելնելով հայտնի նպատակներից բուլշևիկներն ձգտում էին վարկաբեկել անկախ Վրաստանի կազմում Արխագիայի ինքնավարության գաղափարը: Նրանց մասնուր գրում էր. «Արխագիայի տիրառնչակ ինքնավարությունը եղավ որևէ բովանդակությունից զուրկ դատարկ խայծ»<sup>30</sup>: Նույն ոգով էր արտահայտվում Ռ.Կ(ր)Կ-ի անդամ Մ. Ցազուրիան. «[Արխագիայի ժողովրդական] խորհուրդը սպառել է իրեն, լինելով ոչ կենսունակ մարմին... Մի՞թե մենք չէինք ասում, որ խորհուրդը պետք է Կենտրոնին իբրև թգատերև, որպես-

զի ցույց տրվի ինքնավարության գոյությունը»<sup>31</sup>: Այս ամենով արդի վրաց հեղինակները պնդում են, որ «բուշևիկները ձգտում էին սրել ազգամիջյան հարաբերությունները, համոզելով արխագներին, թե իբր Վրաստանը նվաճել է Արխագիան և Ռուսաստանին միամալու խորհուրդ էին տալիս»<sup>32</sup>: Իսկ «Արխագիայի ինքնավարության մասին Ակտի» պահանջների իրականացման ձգձգումները նրանք հետևյալ կերպ են բացատրում. «Կառավարությունը... իրազեկ լինելով անջատողականների նպատակների մասին, զրավել էր զգուշավոր դիրք և ամեն կերպ հետաձգում էր Արխագիայի Սահմանադրության ընդունումը»<sup>33</sup>, թանի որ մտավախություն չունեի, թե այն միջոց կհամդիսանա Վրաստանից առաձմանալու համար»<sup>34</sup>:

Տարածայնությունները ԱժԽ-ի ներսում մեծամասնության և ընդդիմության միջև թույլ չտվեցին կազմել սահմանադրության միասնական նախագիծ: Երկու կողմն էլ պատրաստ էին իրենց միջև ծագած տարածայնությունները կիսաբաժանել հարթել կենտրոնական իշխանությունների միջնորդությամբ<sup>35</sup>: 1919թ. աշնանը Թիֆլիսում միաժամանակ գտնվում էին ԱժԽ-ի անդամներից կազմված երկու պատվիրակություն: Առաջինը՝ ներկայացնում էր մեծամասնությունը, որի պաշտոնական բնույթն ընդդիմությունը չէր ճանաչում: Նրա կազմում էին սոցիալ-դեմոկրատներ՝ Մ. Ուրիբիան, Վ. Գուրջուան, Գ. Կոբոլյովը, Մ. Ցասալան և սոցիալիստ-հեղափոխական Մ. Գրիգորյանը<sup>36</sup>: Նրանց մանդատը նախատեսում էր ԱժԽ անդամների հետ համատեղ մասնակցել Արխագիայի սահմանադրության ձևավորման հանձնաժողովում, ինչպես նաև կենտրոնական և Արխագիայի իշխանությունների փոխհարաբերությունների պարզեցումը<sup>37</sup>: Եթե ընդդիմությունը բոլոր բերությունները մեկնաբանում էր Արխագիայի գործերին Թիֆլիսի իշխանությունների յափազանց միջամտությամբ, ապա ԱժԽ-ի մյուս թևն ընդհակառակ՝ Արխագիայում տիրող անմիջապահ կացությունը բացատրվում էր ոչ թե կենտրոնական իշխանությունների անգործությամբ, այլև նրա և երկրամասի միջև կապերի թուլությամբ<sup>38</sup>: Բացասական երևույթների վերացման համար ԱժԽ-ի մեծամասնությունն անհրաժեշտ էր գտնում մինչև սահմանադրության ընդունումը՝ կնքել ժամանակավոր բնույթ կրող համաձայնագրեր, որոնք կկարգավորեին «սննդամթերքի երևույթներն առաջացած կենտրոնական և տեղական իշխանությունների միջև»<sup>39</sup>: Հետևապես ԱժԽ-ի «վրացամետ» թևի կարծիքով՝ Թիֆլիսի և Մուխոմի միջև հարաբերությունների կարգավորման արդյունքում նրանք պետք է ավելի ամրապնդվեին՝ ի շահ երկու կողմի: Այս հայեցակարգից էր բխում 1919թ. հոկտեմբերի 4-ին կառավարությանը ներկայացված «Ձեկնույթը», որի բովանդակությունը հրապարակվել էր մասնաբաժանում<sup>40</sup>: Ընդդիմադիրների հանձնարարությամբ Թիֆլիս էին մեկնել Մ. Թարմալան, Ի. Մարգանիան, Գ. Ալոմիան և Մ. Ցագորիան: Նրանք հանդիպել էին կառավարության անդամների

հետ: Ժողովարան առաջարկել էր պատվիրակներին իրենց տեսակետներին տալ զրավոր ձևակերպում, ինչն էլ արվեց 1919թ. սեպտեմբերի 29-ին: Այս փաստաթղթի զգալի մասը մվիրված էր Արխագիայում Վրաստանի կառավարության ներկայացուցիչների գործակերպի առը ընճադատմանը: Հետագոտողների կողմից ընդդիմության «հուշագիրը» հրապարակվել է մասամբ, իսկ արխագիական հեղինակները մեջքերում են միայն նրա ընճադատական հատվածը<sup>41</sup>: Ի դեմս դրան, վրաց պատմաբաններն ուշադրություն են սևեռում կառուցողական մասի վրա, որտեղ ասված էր. «Մենք գտնում ենք, որ ստեղծված կացությունից, ոչ մեր մեղքով հղի լուրջ հետևանքներով, միակ ելքն է Արխագիայի կարգավիճակի ձևավորումը լայն ինքնավարության սկզբունքների հիման վրա: Փոխադարձ անվստահության վերացման և մեր ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման համար, մեր խմբի կողմից մշակված է ինքնավար Արխագիայի սահմանադրության միակնից, որպես միակ ընդունելի տարբերակ և՛ Արխագիայի, և՛ Վրաստանի շահերի համար»<sup>42</sup>: Վրաց սոցիալ-դեմոկրատների պաշտոնաթերթը խմբագրականում հայտնում էր, թե ընդդիմության միակնից «Վրաստանի և Արխագիայի միջև հաստատում է մտավորապես այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք գոյություն ունեն Ավստրիայի և Հունգարիայի միջև [1867-1918թթ.]: Թեև պարզ է, որ այդ տեսակի «ինքնավարություն» Արխագիայի բնակչությունը չի յուրացնի: Այդ «սահմանադրությունը», բացի նորանոր դժվարությունների, ոչինչ չի տա Արխագիային: Նա ունի միակ նպատակ՝ փոս փորել Վրաստանի և Արխագիայի միջև»<sup>43</sup>: «Էրթուրա»-ն նկատում էր, որ արխագիների շահերը պաշտպանելու համար Մուխոմի շրջանի վերածումն առանձին ինքնավար տարածքային միավորի կլինե՞ր անարդար երկրամասի բնակչության մեծամասնության նկատմամբ<sup>44</sup>: Ի վերջո երկու պատվիրակությունն էլ, մնալով անբավարար, վերադարձան Մուխոմ: Թիֆլիսում Կոմիսարիատի կողմից առաջարկվող և չափավոր բնույթ կրող Արխագիայի սահմանադրությունը՝ չարժանացավ որևէ ուշադրության: Այդ մասին լուրն ԱԺԽ-ի անդամների մոտ ճնշված տրամադրություն էր առաջացրել<sup>45</sup>: 1919թ. նոյեմբերի 15-ին Մ. Թարմալան զեկուցեց ԱԺԽ-ին, թե Վրաստանի կառավարությունն ավելի նեղ առումով է դիտում Արխագիայի ինքնավարական իրավունքների ծավալը, քան ԱԺԽ-ի ներսում «անկախ սոցիալիստներին» հակառակորդները և կասկած էր հայտնում կառավարության հետ վեջնական համաձայնության գալու հնարավորության մասին<sup>46</sup>: Այս տեսակի հայտարարությունները զրգռում էին հասարակական կարծիքն Արխագիայում: 1920թ. փետրվարին ԱԺԽ-ում հուզող հարցերի շուրջ հանդես եկավ Ն. Ռամիշվիլին, արտահայտելով կառավարության տեսակետները: Իր ելույթում, որն ուներ հայտարարական բնույթ, նախարարը ևս մեկ անգամ էլ վերահաստատեց խոստումը՝ տրամադրել Արխագիային ինքնա-

վարություն և պնդում էր Վրաստանի կառավարության այդ մտադրության անբակտեխության մասին<sup>47</sup>:

Վրաստանի ՍԺ-ի հետ համատեղ Արխագիայի սահմանադրության մշակման համար 1920թ. մայիսի 21-ին ԱԺԽ-ն ընտրել էր լիազոր պատվիրակություն, որի կազմում էին՝ Վ. Շերվաշիձեն, Դ. Էմոխվարին, Դ. Ջախարովը, Գ. Ջուխրայան, Մ. Թարնավան, Վ. Անչաբաձեն: Համաձայն 1920թ. հունիսի 24-ին նրանց տրված մանդատի՝ պատվիրակությունը պարտավորեցվում էր հետևել ԱԺԽ-ի կողմից հաստատված սահմանադրության նախագծի դրույթներին և հնարավոր չափով պիտի պաշտպաներ Արխագիայի լայն ինքնավարության սկզբունքը<sup>48</sup>: Թիֆլիսում պատվիրակության անդամները 1920թ. հունիս-հուլիսին հանդիպել էին ժողովի ղեկավար գործիչների հետ: Սահմանադիր ժողովի մի խումբ անդամներին լիազորել համատեղ աշխատանքի համար՝ պատվիրակության խնդրանքը մերժվեց այն պատճառաբանությամբ, թե Արխագիայի սահմանադրության համապետականից առաջ մշակումը հանդիսանում է վաղաժամ քայլ: Սակայն աբխազական բանագնացները շարունակում էին պնդել հավասար սկզբունքներով կազմված համատեղ հանձնաժողովի ստեղծման վրա, որը պիտի օժտված լիներ վճռական իրավունքներով: Սահմանադիր ժողովի նախագահությանը հուլիսի 1-ին հրած գրության մեջ ասված էր, որ Արխագիան «իրականում հանդիսանալով Վրաստանի ինքնավար մասը, մինչ այժմ չի ստացել իրավական ճանաչում, ինչը խոչընդոտում է ինքնավար մարմինների ստեղծագործական աշխատանքին»<sup>49</sup>: Կրքերի հանգստացման նպատակով առաջարկվում էր ընթացող ճատաշրջանում քննարկել հետևյալ հարցեր. 1) ճանաչել Արխագիան որպես Վրաստանի ինքնավար մասը; 2) Օժտել ԱԺԽ-ն օրենսդրական գործունեությանը զբաղվելու իրավունքով; 3) Որպես տեղական գործադիր իշխանություն ճանաչել Արխագիայի Կոմիսարիատը<sup>50</sup>: Համառ պահանջներից հետո ՍԺ-ն ի վերջո համատեղ աշխատանքի համար լիազորել էր մի խումբ իր անդամների: Առաջին իսկ օրից վրաց-աբխազական հանձնաժողովում առաջացել էին տարաձայնություններ: Վրացական կողմը հայտարարել էր, որ օժտված է միայն նախնական տեքստի մշակման իրավունքով՝ ՍԺ-ի սահմանադրական հանձնաժողովում նրա հետագա քննարկման համար: ԱԺԽ-ի պատվիրակությունը, ելնելով «Արխագիայի ինքնավարության Ակտի» 2-րդ կետի պահանջներից, պնդում էր համատեղ հանձնաժողովի լիազորությունների վճռական դերի մասին Արխագիայի սահմանադրության քննարկի մշակման գործում: Սակայն ԱԺԽ-ի անդամները, անբավարարված լինելով հանդերձ, ստիպված էին համաձայնվել վրացական կողմի պայմանին: Երկրամասի վերջնական իրավական վիճակը պետք է որոշվեր Վրաստանի ապագա սահմանադրությամբ և, որպես վերջինիս գումարելին՝ կազմվեր «Ինքնավար Արխագիայի կանոնակարգը»: Երկար վիճա-

բանություններից հետո ձևավորվեց միասնական նախագիծ, որը, ինչպես ասված էր ԱժԽ-ի բանագնացների հաշվետվության մեջ. «Հանդիսանում էր մինիմում պատվիրակության համար և մաքսիմում Սահմանադիր ժողովի [լիազորված] հանձնաժողովի համար»<sup>31</sup>: Տարածայնություններ առաջացնող «Կանոնակարգի» կետերը դուրս էին բերվել Աժ - սահմանադրական հանձնաժողովի ընդհանուր նիստի քննման, որն արխազական պատվիրակության ներկայությամբ երկու անգամ անդրադարձել էր խնդրին: Սակայն այդ նիստերին, Աժ վրաց պատգամավորների առարկությունների հետևանքով, մասնավորապես բնական պաշարների օգտագործման և մենաշնորհի մասին նախկինում որոշված հարցերի շուրջ, հարուցվեցին նորանոր վեճեր: Անարդյունք բանավեճից հետո Աժ սահմանադրական հանձնաժողովի նախագահությունը սահմանափակվեց վիճահարույց հարցերը նախագծի վերջնական մշակման ժամանակ լուծելու խոստումով և հրավիրել էր արխազ պատվիրակներին այցելել Թիֆլիս ևս մեկ անգամ: Մեկնելուց առաջ ԱժԽ-ի պատվիրակությունն ունեցել էր հանդիսական ժողովանիայի հետ: Վարչապետը տեղյակ էր պահվել, որ «Արխազիայի կառույցումն այսպեսի անորոշ և անպարզ վիճակում պատկերացվում է... ծայրահեղ անցանկալի, քանի որ նախ և առաջ հարվածում է Արխազիայի Կոմիսարիատի ուժին և կարծրությունը» և գործնականորեն «առաջացնում է արխազական ժողովրդի մեջ կասկածի և անվստահության զգացումներ»<sup>32</sup>: Պատվիրակները խնդրում էին, որպես նվազագույն ցանկություն, ընդունել «Ինքնավար Արխազիայի մասին կանոնակարգ» առանձին օրենքով: Ժողովանիան խոստացել էր դուրս բերել խնդիրը կատարության քննարկման: Մ. Ուրբիլիան «СлОВО» օրաթերթին տված հարցազրույցում ասել էր, որ «այս աշխատանքը պետք է ավարտել հմարավոր չավտվ շուտ, քանի որ Կենտրոնի հետ ստույգ սահմանադրական հարաբերությունների բացակայության պայմաններում յուրաքայտուր մանր հարցի շուրջ մենք ստիպված ենք շատ եռանդ կորցնել»<sup>33</sup>: Վերադառնալով Սուխում պատվիրակությունը սեպտեմբերի 10-ին ներկայացրել էր ծավալուն հաշվետվություն<sup>34</sup>: Արխազիայի սահմանադրության վերջնական տարբերակը կազմելու նպատակով 1920թ սեպտեմբեր-հոկտեմբերին ԱժԽ-ի համապատասխան հանձնաժողովը Աուխումում շարունակեց աշխատանքը: Հոկտեմբերի 16-ին մշակված բնագիրը հաստատվեց ԱժԽ-ի նիստում: Նույն օրը ԱժԽ-ն որոշեց Թիֆլիս ուղարկել նոր պատվիրակություն՝ շեշտելով, որ պատվիրակները պարտադրվում էին իրենց գործունեության մեջ առաջնորդվել 1919թ. մարտի 20-ի Ակտով և ԱժԽ-ի կողմից հաստատված նախագծով<sup>35</sup>: Այսպիսով ԱժԽ-ի կենտրոնամետ և ընդդիմադիր («հակավրացական») թևերի միջև կայացել էր համաձայնություն Արխազիայի հմարավոր կարգավիճակի շուրջ, ինչը նաև վկայում է պատվիրակության կազմի: Վ. Շերվաշիձեն, Դ. Ջախարովը, Վ.

Վուրջուան, Մ. Ուրիդիան, Ի. Փաշալիդին ներկայացնում էին մեծամասնությունը, իսկ Մ. Թարմավան, Դ. Ալանիան, Մ. Ցագուրիան, Մ. Բերուլավան լիազորվել էին ընդդիմադիր խմբավորումներին<sup>57</sup>: Այս հանգամանքը ևս մեկ անգամ ժխտում է ընդդիմության ընկալումը, որպես Վրաստանից տարանջատվելու համար հետևողական պայքարողների, ինչպես դա ներկայացվում է արդի հետազոտողների կողմից<sup>57</sup>: 1920թ. նոյեմբերի 6-ին ԱԺԽ-ի պատվիրակությունը ժամանել էր Թիֆլիս: Մակայն այս անգամ վրաց պաշտոնյաներն անհամարձեռն էին արխագ բանագնացներին և ձայնորում էին համատեղ աշխատանքը: Բողոքից հետո միայն պատվիրակներին նոյեմբերի 16-ին ընդունեց Ժողովանիան: Եւ ևս մեկ անգամ հաստատեց Արխագիայի ինքնավարության իրավունքը, քեպետ ընդգծել էր, որ ընդունել նրա սահմանադրությունն իրավագոր է միայն Վրաստանի ՍԺ, ինչը, ի դեպ, հակասում էր համատեղության գաղափարին «Արխագիայի ինքնավարության մասին Ալետում»: Մակայն Ժողովանիան համաձայնվելով, որ Արխագիայի սահմանադրության ընդունումը հանդիսանում է պահի հաստատական պահանջ, խոստացավ, չսպասելով Վրաստանի սահմանադրության հաստատմանը, անցկացնել իբրև առանձին օրենք ՍԺ-ում «Արխագիայի ինքնավարության մասին կանոնակարգը», որը Վրաստանի սահմանադրության ընդունման պարագայում կընդգրկվեր նրա մեջ<sup>58</sup>: Մակայն ինչպես հետևում էր պատվիրակների նոյեմբերի 19-ին արված հայտարարությունից, խոստումները չէին քավարարել նրանց<sup>59</sup>: Այս հայտարարությունը նշանակում էր, որ Վրաստանի հետ միություն կապելու հետևողական կողմնակիցներն ապրում էին որոշակի հիասթափություն և նրանց համախմբումն ընդդիմության հետ պիտի լիներ զգալի ազդակ կենտրոնական իշխանության համար: Նոյեմբերի 22-ին ՍԺ սահմանադրական հանձնաժողովի անունից նրա նախագահ Պ. Սակվարելի-ձեն հայտնեց ՍԺ նախագահությանը, որ Արխագիայի ինքնավարության մասին հարցն ընդգրկվել էր օրակարգի մեջ պաշտոնական հաստատման նպատակով: Նոյեմբերի 28-ին ՍԺ նախագահությունն իրազեկ էր պահել ԱԺԽ-ի պատվիրակության անդամներին, որ Վրաստանի սահմանադրության նախագծի քննարկումը կտևի ևս երեք ամիս, իսկ ինքնավարության մասին հարցը վճռվում է նրա 120-121 հոդվածներով: Նոյեմբերի 30-ին Ժողովանիան խնդրում էր ՍԺ նախագահությունից գտնել միջոցներ և արագացնել Արխագիայի սահմանադրության նախագծի քննարկումը<sup>60</sup>: Նույն օրը ՍԺ նախագահությունը հատրդեց ԱԺԽ-ի պատվիրակության անդամներին, որ ինքը բացարձակապես մերժում է 1919թ. մարտի 20-ի մատնանշված կարգը և առաջարկում էր բողոքովին նոր պայման, ըստ որի Արխագիայի ինքնավարության հարցը պետք է վճռվեր միայն Վրաստանի ՍԺ-ի կողմից: Հետևապես արխագական պատվիրակության անդամներին առաջարկվում էր մասնակցել գործըն-

բացի՝ ինչպես տեսնում ենք, կամ իտրիտակցական կարգով: Ընկա-  
կով, իսկ ԱժԽ-ն կատարելապես չեզոքացվում էր Արխագիայի: սահմա-  
նադրության ընդունելու գործից<sup>61</sup>: Դեկտեմբերի 5-ին պատվիրակություն-  
ը ետ կանչվեց Սուխում մանրամասն հաշվետվություն տալու մպատա-  
կով<sup>62</sup>: Մեկնելուց առաջ ԱժԽ-ի բանազնացմանը ներկայացրել էին  
գրություն Վրաստանի Սժ նախագահությանը, որը ևս մեկ անգամ էի-  
չեցնում էր հայտարարություն, քե «աչքի առաջ ունենալով, որ կենտրոնա-  
կան կառավարության և Արխագիայի ժողովրդական խորհրդի միջև  
հիմնովին տարբերություն է տիրում, պատգամատրությունը չի ցանկա-  
նում իր վստյ պատասխանատուքին վերցնել և վերադառնում է Արխա-  
գիայ...»<sup>63</sup>: 1921թ. հունվարին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի  
ներկայացուցչության ռազմական կցորդ Սիտինը տեղեկացնում էր  
Մոսկվա, քե. «Թիֆլիսից ԱժԽ-ի սլատվիրակության վերադարձից հետո  
Խորհուրդը դեռևս չի գումարվել: Չմայած, որ նրա անդամների մեծ մասը  
պնդում է Խորհրդի հրավիրման օգտին՝ Վրաստանի կառավարությունը  
վախենում է, որ ԱժԽ-ն առաջին իսկ ճիտին կխախտի կապը Վրաստանի  
հետ ի նկատի ունենալով 1919թ. մարտի 20-ի Ակտի պահանջների խախ-  
տումը... Այս ամենը վրդովում է զանգվածները Արխագիայում և ստեղ-  
ծում է բարենպաստ պայմաններ մեզ համար»<sup>64</sup>: Վրաստանի կենտրո-  
նական իշխանությունների հետ հնարավորին համաձայնության գալու  
կողմնակիցները գտնվում էին տարակուսանքի մեջ, ինչը վկայում էր Վ.  
Շերվաշիձեի կողմից հրաժարական տալու ցանկությունը<sup>65</sup>: 1921թ. հուն-  
վարի 4-ին ԱժԽ-ի նիստում մա ասաց, որ «մինչդեռ ժողովրդական խոր-  
հուրդը, որպես իր հիմնական խնդիր համարելով տեղում պետական իշ-  
խանության կազմակերպումը, փորձում էր բոլոր միջոցներով թույլ չտալ  
հուկատությունների դալում, սակայն ժամանակն ընթանում էր և այս  
հարցով արդեն նրեք պատվիրակություն էր ուղարկվել ժողովրդական  
խորհուրդի կողմից, իսկ Արխագիայի ինքնավարությունը մինչ այժմ ձ-  
ևակերպված չէ»<sup>66</sup>: 1920թ. դեկտեմբերի 29-ին Վրաստանի Սժ «փոքր»  
սահմանադրական հանձնաժողովը, առանց ԱժԽ-ի որևէ ներկայացուց-  
չի, վերջապես հաստատել էր «Ինքնավար Արխագիայի կառավարման  
մասին կանոնակարգ» կոչված նախագիծը, քեպետ որպես հիմք վերցնե-  
լով ԱժԽ-ի կողմից 1920թ. հոկտեմբերին ընդունված տարբերակը<sup>67</sup>:  
Ռուսաստանի Կարմիր բանակի ներխուժման պայմաններում 1921թ.  
փետրվարի 21-ին Սժ հավանություն տվեց «Ինքնավար Արխագիայի  
կառավարման մասին ժամանակավոր կանոնակարգին», որը պետք է  
գործեր մինչև Վրաստանի սահմանադրության վերջնական ընդունու-  
մը<sup>68</sup>: Եվ վրաց, և արխագ արդի պատմաբանները միասնական են այն  
հարցում, որ ուշացած այս որոշումն այլևս ոչ մի նշանակություն չուներ  
և, հետևապես, չէր կարող որևէ իրական ուժ ունենալ<sup>69</sup>:



Այսպիսով, 1918թ. հունիսի 8-ի և 11-ի վրաց-աբխազական դաշնագրերը<sup>70</sup> չունեցան որևէ գործնական նշանակություն՝ Վրաստանի մեջ Աբխազիայի կարգավիճակի հստակեցման հարցում, ուստի գործընթացը վերսկսվել էր միայն Վրաստանի ՍԺ-ի գումարումից հետո: Երկրամասն սբխազական ազգային ինքնավարության վերածվելն առաջացնում էր դիմադրություն նրա բազմազգ լինելու հետևանքով: Ըստ աբխազ լեզուի մասին գործիչների երկրամասի շուծված կարգավիճակի խնդիրն առաջացել էր Վրաստանի կողմից նրա բռնագրավման հետևանքով: Արդի աբխազ պատմաբաններն այդ տեսակետը վերածել են հայեցակարգի: Այսպիսով քաղաքականացվում է հիմնահարցը և անտեսվում են խնդրի իրավական արձանագրերը: Վրաստանի ենթադրյալ սահմանադրությունն օժտում էր զավառական Ջեմստվոն ինքնավար լիազորություններով: Փաստորեն յուրաքանչյուր զավառ վերածվում էր տարածքային ինքնավարության: 1919թ. մարտ ամսից Աբխազիայի «ինքնավար» մարմինները դիտվում էին իբրև զեմստվայական, ինչը, ի դեպ, 1918թ. դաշնագրերի դիմաց զգալիորեն նվազեցնում էր նրանց կարգավիճակը: «Ինքնավար» ԱԺԽ-ի և Կոմիսարիատի գոյությունը խլում էր Աբխազիայի զավառական զեմստվաներից լիազորությունների մի մասը, որի շնորհիվ նրանց և Վրաստանի այլ զավառների կարգավիճակում զգալիորեն անհավասարություն էր առաջանում: Աբխազիայում զավառական զեմստվաների վարչությունը նաև նեղություն էր գգում իրենց և կառավարության միջև ևս մի օղակի գոյության հետևանքով: Այսպիսի անհավասարաչափության հետ համաձայն չէին ոչ Կենտրոնում, ոչ էլ Աբխազիայի զավառներում: Աբխազիայի զավառական զեմստվաների իրավունքներն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ էր վերածել ԱԺԽ-ն օրենսդիր, իսկ Կոմիսարիատը պետական կառավարման մարմնի, ազատելով նրանց Ջեմստվոնի կարգավիճակից: Ուստի Աբխազիայի ինքնավարության գաղափարը ենթադրվող տարածքային փոխարեն կստանար քաղաքական բնույթ: Դրա հետ համաձայն չէին վրաց պետական և կուսակցական շրջանակներում, քանի որ համարում էին, թե դա կվճարի Վրաստանի ինքնաշխատությանը: Աբխազիայի ինքնավարության հայտարարական բնույթը բխում էր նաև վրաց քաղաքական շրջանակներում տարածված տեսակետից, թե երկրամասին իրական ինքնավարության տրամադրումը կհանգեցնի նրա տարանջատման: Աբխազիայի «ինքնավար» մարմինները հայտնվել էին միանգամայն ավելորդ օղակի դերում: Այս կարևոր հանգամանքը, որն ուներ օբյեկտիվ հիմք, չէն նկատել, և հետևապես չէն լուսարանել ո՛չ վրաց, ո՛չ աբխազ հետազոտողները:

BENIAMIN MAILYAN

THE QUESTION ABOUT STATUS OF ABKHAZIA IN ADMINISTRATIVE SYSTEM OF GEORGIA (MARCH 1919 – FEBRUARY 1921)

The Constituent Assembly of Georgia gives autonomy functions to regional organs of selfgovernment – called Zemstvo. Each region of Georgia were became territorial autonomy. "Autonomy" institutions of Abkhazia – National Council and Commissariats were considered as Zemstvo. Zemstvo's rights of Abkhazia regions were repressed by this. To even the rights of Abkhazia regions and the rest part of Georgia it was needed to convert the National Council to legislative Organ, forward the state governing to Commissariats, to free them off from the functions of Zemstvo. So Autonomy of Abkhazia would gain the political character instead of assumptive territorial one. Georgian politicians were not agree with this, which were beware of damaging the sovereignty of Georgia. Declarative character of Abkhazian autonomy arized because of the risk that it real autonomy is provided so it will lead to separation of Abkhazia from Georgia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ալտ»-ն Արխագիայի ժողովրդների անունից որոշում էր. «1) Արխագիան մտնում է Վրաստանի դեմոկրատական հանրապետության կազմը, ինչպես նաև ատոմում միաբերվելու, որի մասին տեղեկացում է Վրաստանի հանրապետության կառավարությանը և նրա Սահմանադիր ժողովին; 2) Արխագիայի ատոմումիայի Վոևոդայության կազմելու, ինչպես և կենտրոնական և ատոմում իշխանությունների փոխարարներին ներքև որոշելու համար, ընտրվում է խառն Վրաստանի Սահմանադիր ժողովի և Արխագիայի ժողովրդական խորհրդի կողմից՝ հալասար թուղ անդամների յանմանաժողով, որն մշակած հիմնական որոշումները՝ Վրաստանի Սահմանադիր ժողովի խորհրդի կողմից ընդունելուց յետոյ՝ մուցում է Վրաստանի դեմոկրատական հանրապետության Վոևոդայության մեջ» (Արխագիայի ավտոմումիայի մասին ակտ.- «Աշխատավոր», 27. 11. 1920, N 262: Նաև տե՛ս Ментешавили А., Сургуладзе А., Только факты и документы.- "Литературная Грузия", N 11, 1989, с. 155-156);
2. Н.Н.Жордания, За два года (1.03.1917-1.03.1919). Доклады и речи, Тифлис, 1919, с. 207-208.
3. Грузия и Абхазия: телеграмма Учредительного собрания Абхазскому народному совету в Сухум.- "Кавказское слово", Тифлис, 26. 03.1919, № 54.
4. Местная жизнь: автономия Абхазии.-"Грузия", 21. 03.1919, N 63.
5. История Абхазии.Учебное пособие, гл. ред. Лакоба С. З. Гудаута, 1993, с. 315.
6. Н.В. Рамишвили в Народном Совете Абхазии.-"Борьба", 14.02.1920, № 35.

7. Г. Королев, Письма из Абхазии.- "Борьба", 01.10.1919, № 222; там же, 03.10.1919, № 224.
8. Վրաստանի Կենտրոնական Պետական Պատմական Արխիվ (ՎԿՊՊԱ), ֆ. 1861, g. 2, q. 122, p. 1:
9. "გობთობა" քերթიგ ართათყვადი ხოჭადი უნი აბხაზსკი ვოპროს.- "Кавказское слово", 25. 07.1919, № 149.
10. Земская и городская жизнь.- "Борьба", 28.12.1919, № 297.
11. Доклад Н. Н. Жордания.- "Борьба", 17.12.1919, № 287.
12. Земская и городская жизнь.- "Борьба", 28.12.1919, № 297.
13. Դաշնակցականները և Սոխումի Հայոց ազգային խորհուրդը.- «Բանվորի ձայն», 03.10. 1920, № 40:
14. Земская жизнь. - "Борьба", 26. 06.1919, № 139.
15. Г. Королев. Письма из Абхазии (о положении и настроениях в Сухумском округе). - "Борьба", 01.10.1919, № 222.
16. М. Тарнава, Друзья и враги демократии Абхазии.- "Социал-демократ", Тифлис, 20.10.1919, № 87.
17. Абхазия. - "Слово", Тифлис, 20. 08.1920, № 188.
18. "Социал-демократ", 20.10.1919, № 87.
19. Д. Гамахария, Б. Гогия. Абхазия — историческая область Грузии (исторические документы, материалы, комментарии с древнейших времен до 30-х годов XX века). Тбилиси, 1997, с. 104:
20. Ելույն տեղում, էջ 111:
21. Պատմաբաններ Ջ. Գամախարիան և Բ. Գոգիան ամիմն գրում են, քն. «В защиту Деникина выступала фракция «независимых социалистов» (Д. Гамахария, Б. Гогия. Ելույն տեղում, էջ 90): ՀՅԴ-ի Վրաստանի Կենտրոնի մայրաքաղաք Տիբլիսում Ավետիսյանը գտնում էր, որ «սպիտակների» հոգեբանական ազդեցությունը տարածվում էր համարյա ամբողջ Սոխումի շրջանի վրա (Վանավորական Ռուսաստանը.- «Երբ աշխատավոր», 16. 08. 1919, № 166):
22. Абхазия.- "Слово", 05. 08. 1920, № 175.
23. 1920թ. մայիսի 7-ին Մոսկվայում Վրաստանի քաղաքացիների և Խորհրդային Ռուսաստանի կառավարության միջև կնքվել էր «Նախադրության պայմանագիր», ըստ որի ՌԱՖՍՎ-ն հրաժարվում էր վրաց ժողովրդի նկատմամբ բոլոր հերքելիսան իրավունքներից, որոնք մասկինում պատկանում էին Ռուսաստանին, և պարտավորվում էր այսուհետև չմիջամտել Վրաստանի ներքին գործերում, ինչպես նաև անվերապահորեն ճանաչում էր Սոխումի շրջանի տարածքը իրրև Վրաստանի Հանրապետության անբաժանելի մասը (Уратадзе Г. И., Образование и консолидация Грузинской Демократической Республики (исследования и материалы, серия 1, выпуск 29). Мюнхен: "Институт по изучению истории и культуры СССР", 1956, с. 103-104. Ментешавили А., Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921 гг.). Тбилиси, 1987, с. 172): Անշուշտ, ինչպես հաստատեցին հետագա զարգացումները, Մոսկվայի կոմունիստական կառավարությունը սույն պայմանագիրը կնքել էր եմբելվ մարտավարական

- նկատառումներից, սակայն, և հետագայում ՌՍՖՍՀ-ն Արխագիայի վերաբերյալ պաշտոնապես որևէ տարածքային պահանջ չէր ներկայացնում (տե՛ս Բ. Մախլան, Արխագիայի կարգավիճակի ձևավորումը խորհրդային պետականության պայմաններում (1921-1931 թթ.)-Մեթոսավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, եր.: 2004, էջ 188-203):
24. Քաղաքական կուսակցությունների արխիվ (Թբիլիսի), ֆ. 14, ց. 15, գ. 309 ք. 1-9, մեքք. ըստ «Свободная Грузия», 9 марта 1994.
  25. О положении в Абхазии.- "Жизнь национальностей", Москва, 16. 09. 1920, № 28.
  26. Վ.Կ.ՊՄԱ, ֆ. 1863, ց. 1, գ. 523, ք. 5, տե՛ս Գաмахария Д., Чания В., Аннексия Грузии и розыгрыш "абхазской карты".- "Свободная Грузия", 27. 06.1991, N 114.
  27. Խորհրդային Արխագիայի ղեկավար 1921-1936թթ.
  28. Н. Лакоба, Искры Октябрьской революции в Абхазии.- "К истории революционного движения в Абхазии". Сухум, 1922, с. 21, մեքք. ըստ История Абхазской АССР (1917-1937 гг.), под ред. Г. А. Дзидзария. Сухуми, 1983, с. 54.
  29. Г. А. Дзидзария, Очерки истории Абхазии (1910-1921 гг.). Тбилиси, 1963, с. 311.
  30. "Коммунист Грузии", 20.11.1920.
  31. История Абхазии, с. 317.
  32. Жоржوليани Г., Лекишвили С., Тоидзе Л., Хоштария-Броссе Э., Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии. Тбилиси, 1995, с. 26.
  33. Д. Гамахария, Б. Гогия. ԼՂԺ. ԺՀԺ., էջ 112:
  34. ԼՂԺԻ տեղում, էջ 102:
  35. Автономия Абхазии.- "Слово", 26.11.1920, № 270.
  36. Լրատվ. Արխագիայի մերկայացուցիչների գաղտնիք. - «Նոր ԺՀԺ» ԺՀԺ, 05. 10. 1919, № 208:
  37. Хроника.- "Борьба", 04.10.1919, № 225.
  38. Г. Королев. Письма из Абхазии. - "Борьба", 28.09.1919, № 220.
  39. Ответ делегации Народного Совета Абхазии.- "Борьба", 09.10.1919, № 229.
  40. Տե՛ս "Борьба", 20.12.1919, № 290; մույն տեղում, 21.12.1919, № 291; մույն տեղում, 23.12.1919, № 292:
  41. Б. Е. Сагария, Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.). Сухуми, 1970, с. 17. С. Э. Лакоба, Очерки политической истории Абхазии. Сухуми, 1990, с. 65-66. История Абхазии, с. 299, 316.
  42. "Социал-демократ", 06. 10. 1919, № 85. Д. Гамахария, Б. Гогия. ԼՂԺ. ԺՀԺ., էջ 101:
  43. Редакционная.- "Борьба", 09.10.1919, № 229.
  44. "Ժբոտմձ" բերրից արևմտալիան հողվածը տե՛ս Абхазский вопрос.- "Кавказское слово", 25.07.1919, N 149.
  45. Автономия Абхазии.- "Слово", 26.11.1920, № 270.
  46. Д. Гамахария, Б. Гогия. ԼՂԺ. ԺՀԺ., էջ 101:

47. Н. В. Рамишвили в Народном Совете Абхазии.-"Борьба", 14.02.1920, № 35. Արխիվ պատմաբանների համարում են, թե նախարարի ելույթն ընդդիմության նկատմամբ սպառնացող րովանդակություն ուներ (История Абхазии, с. 318), սակայն ինչպես ճիշտ նկատել էին վրաց հետազոտողները՝ որևէ սպառնալիք նրա մեջ չկար (Д. Гамахария, Б. Гогия.Նշվ. աշխ., էջ 102):
48. А. Ментешавили, Исторические предпосылки современного сепаратизма в Грузии. Тбилиси, 1998, с. 79, док. № 6.
49. Д. Гамахария, Б. Гогия.Նշվ. աշխ., էջ 105:
50. Նույն տեղում:
51. Նույն տեղում, էջ 461, վավ. № 254:
52. Նույն տեղում, էջ 462-463, վավ. № 254:
53. Абхазия.- "Слово", 05. 08.1920, № 175.
54. Д. Гамахария, Б. Гогия.Նշվ. աշխ., էջ 460-465, վավ. № 254:
55. Նույն տեղում, էջ 106:
56. Делегация Абхазии.-"Слово", 09.11.1920, № 255. «Աշխատավոր», 26. 11. 1920, № 261:
57. Ջ. Գամախարիան և Բ. Գոգիան գրում են, թե «նայտնի անջատողականներ» Մ. Թարմավան, Դ. Ալամիան, Մ. Տագուրիան, Ի. Սարգամիան և նրանց համախոհները պահանջում էին «լայն ինքնավարություն», որպեսզի ստեղծվի գործնական միջոց «Արաստանից մեկուսանալու համար (Д. Гамахария, Б. Гогия.Նշվ. աշխ., էջ 78, 81, 111):
58. Д. Гамахария, Б. Гогия.Նշվ. աշխ., էջ 108-109:
59. «Դեռ 1918թ. փետրարի 9-ին, երբ գոյություն ուներ Անդրկովկասյան յատուկ կոմիտե՝սակամ էր «Հռչակագրում»,-վրաստանն ու Աբխազիան իրար մեջ սրամանգիր կնքեցին, որի մեջ ընդհանուր գծերով ցույց էին տրած այն փոխարարներին, որոնք կարող էին գոյություն ունենալ այդ երկու պետական կազմաբաժանների միջև... Այդ փոխարարներին մերը ձևակերպեցին և յետագայում Աբխազիայի և վրաստանի կառավարության միջև 1918թ. յունիսի 8-ի համաձայնության մեջ: ...Այսպիսիք են այն հիմունքները, որոնք հաստատում են Աբխազիայի անվիճելի իրատունքները համարեն երեք տարայ ընթացքում: [ԱժԽ-Գ] ելմեով... պայմանագիրներից, ակտերից և կառավարության հաստատիացումներից, շարունակ պատգամատրություններ է ուղարկել Սահմանադիր ժողովը, որպեսզի վերջնականապես ձևակերպեն Աբխազիայի և վրաստանի փոխարարներին մերը: ...Կառավարության հաստատիացումները Աբխազիայի ատոմում իրատունքների մասին, գործնականում շատ էին հեռու իրականությունից... 1918 թվից սկսած հանրապետության կառավարությունը անելի ու անելի է լայնացնում իր իրատունքների ծառայը Աբխազիայի ատոմում կանգնի միջամտելու համար, յաճախ խախտելով նոյմիսկ այն իրատունքները, որոնց շուրջը [մախկնում] որևէ վեճ չէր յարուցում... Այս հակասությունները մի կողմից, հաստատիացումները և մի կողմից, կառավարության միջամտության շնորհիվ Աբխազիայում անվտանգություն և զրգում է ստեղծել ոչ միայն դեպի համապետական իշխանությանը, այլև նաև դեպի Աբխազիայի խորհուրդը: Մինչև այսօր [ԱժԽ-Գ] կասեցնում էր

այն քոլոր մետերը, որոնք ուղղած էին համրապետության կառավարության դեմ: Բայց... այս յուզումներն առաջացնող քաղաքականությունը, ստիպում են մեզ հրաժարել ապագայ այն պատասխանատվությունից, որը կարող են վերջին շրջանում հակասությունների հետևանք դառնալ: Վրաստանի և Աբխազիայի լիարժեքությունները միմյանց այսօր ձևակերպած չեն և, հետևապես, երկու կողմերի համար էլ իրարարմանը պարտադիր լինելի կարող: Սրա համար, [իմեյլով] համրապետության շահերի և երկու ժողովուրդների բարոյություն տեսակետից, ամերաժեշտ է շտապ միջոցներ ձեռք առնել համաձայնությունը ձևակերպելու համար: [ԱժԻ-Յ], ի դեմս իր վերջին պատգամաբանների, դիմում է Վրաստանի համրապետության կառավարությանը ցամաքային արտայայտում պարզ և հստակ շարադրած պատասխան ստանալ [լուս] 1919թ. մարտի 20-ի Ալկոյի ելույթներ, [ինչպես նաև] պահանջում է, որ ամերաժեշտապես հաասար թույլ Սահմանադիր ժողովի և Աբխազական ժողովրդական խորհրդի խառը յանձնաժողով կազմի Աբխազիայի ատոմոմիայի մասին մախազիծը քննելու և Սահմանադիր ժողով շտապ կերպով հաստատման մտցնելու համար: Մտտ երեք տարի շարունակ Աբխազիայի ժողովուրդը սպասում է այդ կոնստիտուցիային և մերկայ պատգամաբանությունը, ղեկավարելով համապետական շահերի տեսակետով, կարծում է, որ նոր յետաձգումների համար ոչ մի [ինձնավոր] պատճառ չկայ, [որոնց համար] Աբխազական ժողովրդական խորհուրդը [այնու] չի ուզում մեղքը իր վրայ վերցնել և այդ մասին յայտնում է Աբխազիայի ազգաբնակչությանը» (Աբխազիայի ինքնավարության շուրջը. - «Աշխատավոր», 26. 11. 1920, № 261):

60. Դ. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 109: 1920թ. դեկտեմբերին Ն. Ժորդանիան խորհրդարանում հանդես էր եկել ելույթով, որտեղ առաջ էր քերել պարտադիր պահանջներ ապագա սահմանադրության մկատմամբ, որի թվում էր Վրաստանում որևէ դաշնային միավորների քաջակայության սկզբունքները: Նա ասում էր, որ «մեր մպատակն է ստեղծել դեմոկրատական այնպիսի սահմանադրություն, որը ապահովելիս լինի ունիտար դեմոկրատիկ համրապետություն, որտեղ իշխանությունը պետք է քաժանաձ լինի կենտրոնի և... տեղական օրգանների միջև» (Վարչապետ Ն. Ժորդանիայի ճառը Սահմանադիր ժողովում. - «Աշխատավոր», 11. 12. 1920, № 274: Նույն տեղում, 19. 12. 1920, № 281):
61. Աբխազիայի ավտոմոմիայի շուրջը. - «Աշխատավոր», 09. 12. 1920, № 272:
62. Абхазия.- "Слово", 08. 12. 1920, № 280.
63. ՎԿՊՊԱ, ֆ. 1861, ց. 2, գ. 175, ք. 2: Աբխազիայի ավտոմոմիայի շուրջը. - «Աշխատավոր», 09. 12. 1920, № 272:
64. Борьба за Октябрь в Абхазии (1917-1921гг.). Сб. док. и мат., Сухуми, 1967, с. 172-173.
65. Դ. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 110:
66. История Абхазии, с. 319-320.
67. Դ. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 110:
68. ՎԿՊՊԱ, ֆ. 1833, ց. 1, գ. 863, ք. 93-95:
69. Դ. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 110: С. З. Лакоба, Очерки..., с. 78. История Абхазии, с. 320.

70. 1918թ. հունիսին Վրաստանի իշխանությունները ճանաչեցին Արխագիայի ինքնավար լայն իրավունքները, սակայն րաց մնաց Վրաստան-Արխագիա վերջնական փոխհարաբերությունների հարցը, որը, համաձայն ռաշնագրերի, պետք է վճեն Արխագիայի ենթադրվող Ազգային մոդրըրը (А. Ментешавили, Из истории взаимоотношений грузинского, абхазского и осетинского народов 1918-1921 гг. Тбилиси, 1990, с. 16. Նույնի՝ Исторические предпосылки., с. 79, док. № 2-3. Նույնի՝ Октябрьская революция., с. 117. С. З. Лакоба, Очерки., с. 66-67. Д. Гамахария, Б. Гогия. Նշվ. աշխ., էջ 414, վավ. № 225):

**ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ**

**ՄԱԿ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԶՈՒՄ  
ՕՐԻՆԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ  
2005 ԹՎԱԿԱՆԻՆ**

Այս ժողովածուի նախորդ պրակում ամփոփված մեր հողվածում մասնակիորեն անդրադարձ է եղել նաև Իրաքի նոր Մանամադություն նախագծի փաթեթին, որը այդ երկրի հասարակայնության հավանությանն արժանացավ 2005 թ. օգոստոսի 28-ին՝

Ինչպես ցույց տվեց իրաքյան իրականությունը, փաստորեն 2005 թվականը օրինաստեղծ կարևորագույն գործընթացների հանգուցալուծման տարեթիվ կարելի է համարել. այդ նույն թվականի հունվարին Իրաքի խորհրդարանական ընտրություններն էին, հոկտեմբերի 15-ին կայացավ նոր Մանամադության հանրաքվեն, իսկ դեկտեմբերի 15-ին անցկացվեցին երկրի Ազգային Ժողովի ընտրությունները:

Մույն հողվածի նպատակն է ցույց տալ ՄԱԿ-ի մասնակցությունը և կատարած դերը երկրի համար կարևոր և շրջադարձային այնպիսի ժամանակահատվածում, որը ընդգրկում է վերը նշված իրադարձությունների շրջան:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր անմիջական աջակցությամբ դրական դեր է կատարում, նպաստելով օրենքի իշխանությանը և ժողովրդավարության ճանապարհին, իրաքցիների համար դժվար ու բարդ իրադրության պայմաններում: Եվ պետք է նշել, որ այս ուղղությամբ առաջին քայլերը բավական հետաքրքրություն են ներկայացնում նաև զիտական լուսաբանման տեսանկյունից:

Անդրադառնալով ՄԱԿ-ի, Իրաքին վերաբերվող փաստաթղթերին, այս կազմակերպությունը կարևորում և առանձնացնում է 2005 թ. փետրվարի 16-ի թիվ 5124 միատի որոշումը, որտեղ ասվում է, որ Անվտանգության խորհուրդը շնորհավորում է Իրաքի ժողովրդին 2005 թ. հունվարի 30-ի ընտրությունների առիթով: Միաժամանակ արվում է այդ ընտրությունների գնահատականը: Այն է՝ «այս ընտրությունները ներկայացնում են Իրաքի համար պատմական պահը, հանդիսանալով դրական քայլ քաղաքական անցումային շրջանում»: «Զվեարկության միջոցով իրաքցիները ցույց տվեցին իրենց վերաբերմունքը օրենքի իշխանությանը, մեր-



ժելով բռնությունը: Նրանք ձայն ավեցին ժողովրդավարությանը և հաստատեցին սեփական իրավունքը՝ վճարակազմությամբ իրենց խնդիրներին տեղ կանգնելու գործում: Անվտանգության խորհուրդը շնորհավորում է Իրաքի ժողովրդին այս քայլի և ձեռքբերման առիթով՝ հաստատել իր իրավունքը ազատորեն որոշելու իր սեփական քաղաքական ապագան և մաղթում է շարունակել առաջ ընթացալ իր ընտրած քաղաքական ճանապարհով:

Անվտանգության խորհուրդը շնորհավորում է այդ ընտրություններում նորընտիր կոալիցիաներին և առանձին անհատներին<sup>2</sup>:

Նշվում է, որ ընտրություններն անցկացվեցին դժվարին պայմաններում, և Անվտանգության խորհուրդը ողջունում է Իրաքի ժողովրդի խիզախությունը, որը նա ցուցաբերեց, հաստատելով իր գորակցությունը ժողովրդավարությանը, հաշվի չառնելով տեռորիստներին: Անվտանգության խորհուրդը արձանագրել է տասնյակ հազարավոր իրաքցիների մասնակցությունը, ովքեր ներկայացել են որպես քեկնաձուներ, ընտրություններում կատարել ադմինիստրատիվ աշխատանքներ, անձնապես ապահովել ընտրական ճշտված ցուցակների առկայությունը նաև պահպանել ընտրությունների ընթացքը, ապահովելով անվտանգությունը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հատուկ նշանակություն է տալիս Իրաքի Անկախ ընտրական հանձնաժողովին՝ նրա ցուցաբերած համատարած և ընտրությունների ադմինիստրատիվ աշխատանքը իրականացնելիս կազմակերպչական հմտության համար: Անվտանգության խորհուրդը հավանություն է տալիս Գլխավոր քարտուղարին և Միացյալ Ազգերին, ընտրությունների մախապատրաստությունը հաջողությամբ անցկացնելու համար, ներառյալ կոնսուլտացիաները և լայն աջակցությունը իրաքցիներին: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Իրաքի գծով հատուկ ներկայացուցիչ Աշրաֆ Գազիի անձնական ակտիվ մասնակցության հետ մեկտեղ նշվում են նաև ՄԱԿ-ի Իրաքի գծով Օժանդակության առաքելությունը (UNAM), հատկապես ընտրական խորհրդատու ղեկավար Կառլոս Վալենզուելայի, ՄԱԿ-ի ընտրությունների Օժանդակության բաժանմունքի (EAD)<sup>3</sup> և նրա տնօրեն Կարինա Պերելլիի աշխատանքը և դրական արդյունքները:

Անվտանգության խորհուրդը ուշադրություն է հրավիրում նաև Իրաքի Անվտանգության ուժերի և Իրաքում բազմազգ զինված ուժերի զուլ-բստի արժանի դերին, ընտրությունների անվտանգությունն ապահովելու գործում:

<sup>2</sup> UN Assistance Mission for Iraq - UNAMI

<sup>3</sup> UN Electoral Assistance Division - EAD

Այդ ընտրությունները Իրաքի քաղաքական անցումային՝ այս փուլում կարևոր քայլ հանդիսացան, գտնվելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1546 որոշման շրջանակում: Անվտանգության խորհուրդը Անցումային ժամանակավոր Ազգային ժողովի դերը գնահատում է բարենաշուք և իր գործը կատարած, անհրաժեշտ համարելով Իրաքի նոր ժամանակավոր կառավարության ձևավորումը, որպես հաջորդ քայլ: Նշենք, որ սա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի տված պաշտոնական գնահատականն է:

Փաստորեն այս փաստաթուղթը ծրագրային է, քանի որ հաջորդականությամբ քվարկվում են այն օրինաստեղծ գործադրությունները, որոնք ի կատար ածվեցին և կայացան 2005 թվականի ընթացքում:

Նշված փաստաթղթում ասվում է՝ «Իրաքի Սահմանադրությունը նախագծվել է Անցումային Ազգային ժողովի գլխավորությամբ, որի վերջնաժամկետը կորվի 2005 թ. հոկտեմբերի ութերորդին: Այսինքն կհաջորդեն 2005 թ. դեկտեմբերի համընդհանուր ընտրությունները՝ նոր Սահմանադրության պայմաններում: Անվտանգության խորհուրդը իր շարունակական աջակցությունն է հավաստիացնում Իրաքի ժողովուրդին իր քաղաքական անցման, Իրաքի անկախության, սուվերենության, միասնության և տարածքային ամբողջականության ամրապնդման ապահովմանը»<sup>4</sup>:

Ուշադրության արժանի է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան կառույցների մասնակցությունը Իրաքի հասարակայնության տարբեր շերտերի հետ աշխատանքներում՝ նպատակ ունենալով իրազեկել նրանց, որպեսզի մարդիկ համոզված լինեն, թե ինչ նպատակ է հետապնդում երկրի նոր Սահմանադրությունը, և իրենց տված ձայների հանրագումարը ինչպիսի դեր կխաղա այդ գործում:

«Կարևոր և խիստ անհրաժեշտ համարելով Իրաքի հասարակայնության բոլոր խավերի մասնակցությունը քաղաքական գործընթացներում, Անվտանգության խորհուրդը գտնում է, որ կարիք կա աջակցելու քաղաքական ուժերի անցման շրջանի այն հաջող քայլերին, որոնք թխում են սահմանադրական գործընթացից, լիովին ապահովելով ընտրողների մասնակցությունը, ընտրությունների ֆինանսավորումը, որպես անհրաժեշտ պայման: Խորհուրդը ողջունում է այն հայտարարությունները, որոնք արվում են Իրաքի լիդերների կողմից այս ուղղությամբ և հատկապես խրախուսում է Իրաքի ժամանակավոր կառավարությանը և Իրաքի ժամանակավոր Ազգային ժողովին, որոնք իրականացնում են հնարավորը՝ Իրաքի հասարակայնության բոլոր հատվածները լայնորեն ներգրավելու այդ գործընթացին, կոչ անելով քաղաքական երկխոսության և ազգային համաձայնության, հույս ունենալով, որ բոլոր իրաքցիները կմերկայանան և ձայն կունենան քաղաքական գործընթացներում, որոնք ծավալվում են Իրաքի Սահմանադրության նախագծի շուրջ»<sup>5</sup>:

«ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարևորում է SRSG-ի՝ և UNAMI-ի ղեկավար դերը, որը արտացոլված է UNSCR\*\* 1546 որոշման մեջ, ի աջակցություն Իրաքի սեփական շահերի, այն դիտելով Իրաքի կառավարության կողմից ստանձնած պատասխանատվության դրսևորում, ազգային երկխոսություն ծավալելու նպատակով և ազգային սահմանադրության նախագիծը ստեղծելու գործում կոմսենսուս ապահովելու համար: Այս տեսանկյունից, Անվտանգության խորհուրդը անհրաժեշտ է համարում, որպեսզի ՍԱԿ-ը ինքն էլ պատրաստ գտնվի արագորեն աջակցելու միջազգային հասարակայնության անդամներին՝ կոնսուլտացիաներ անցկացնելով նրանց հետ և ՍԱԿ-ի կողմից տեխնիկական բնույթի աջակցություն ցուցաբերելով օժանդակի իրականացնելու այս գործը»:

Նշենք, որ Իրաքի նոր Սահմանադրության ընդունման գործընթացները ընթանում էին ընդդիմադիր ուժերի հետևողական հակազդեցության պայմաններում, երբ տեղ էին գտնում նաև տեռորիստական գործողություններ և այլ բռնություններ ու ճնշումներ: «ՍԱԿ-ի Անվտանգության խորհուրդը խստորեն դատապարտելով տեռորիստական գործողություններն Իրաքում, համարելով, որ դրանք չեն նպաստում երկրի քաղաքական և տնտեսական անցման շրջանի շահերին, կոչ է անում բոլոր նրանց, ովքեր դիմում են բռնի ուժ գործադրելու քաղաքական գործընթացը ձախողելու նպատակով, վայր դնել իրենց զենքերը և մասնակցել քաղաքական պրոցեսներին: Այն նաև հավանություն է տալիս Իրաքի իշխանությունների դիրքորոշմանը, որոնք պատասխանատվություն են կրում բոլոր նրանց համար, ովքեր մերժում են բռնի ուժը և ձգտում են ստեղծել քաղաքական մթնոլորտ՝ ինչը կնպաստի ազգային համաձայնությանը և քաղաքական մրցակցությանը խաղաղ միջոցներով հասնելուն»:

Կարևոր է ընդգծել նաև ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի համագործակցությունը Իրաքին մոտ կանգնած երկրների և ռեզիդնալ կազմակերպությունների հետ, ովքեր շահագրգիռ էին նպաստել այդ երկրում կայրգ ու կանոն հաստատելու միտումներին՝ օրինաստեղծ ճանապարհով:

«Անվտանգության խորհուրդը ընդգծում է քաղաքական գործընթացներում Իրաքին մոտ կանգնած երկրների և ռեզիդնալ կազմակերպությունների աջակցությունը շարունակելու կարևորությունը՝ համագործակցելով Իրաքի իշխանությունների հետ, վերահսկելու Իրաքի սահմաններով տրանզիտը և այլ բնույթի օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը Իրաքի ժողովրդին համուն անվտանգության

\* Special Representative Secretary – General's – SRSG.

\*\* United Nations Security Council Resolutions – UNSCR.

սպահովման և երկրի բարգավաճման նրանց գործադրած ջանքերի իրականացման»<sup>6</sup>:

«ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի UNSCR-1546-ի համաձայն, խորհուրդը իր աջակցությունն է հայտնում ֆեդերալ, դեմոկրատական, պլուրալիստական և ամբողջական Իրաքին, ուր հարգվում են մարդու իրավունքները: Այն ողջունում է միջազգային հանրությանը, Իրաքի ժողովրդին աջակցելու համար, որի նպատակն է խթանել և ավելացնել տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների Իրաքին ցույց տրվող օգնությունը, առաջիկայում իրագործելու քաղաքական անցման գործընթացները և ջանքեր գործադրել ազգային համաձայնության, տնտեսական վերակառուցման և կայունության օգտին, ինչպես նշված է UNSCR-ի 1546-ում»<sup>7</sup>, - նշված է 2005թ. փետրվարի 16-ի 5124 նիստի ընդունած փաստաթղթում:

Փաստորեն երկուսուկես տարի էլ անցել անգլո-ամերիկյան կոալիցիոն զորքերի Իրաք ներժուժումից: Եվ Իրաքի նոր Մահմանադրությունը պետք է ճանապարհ հարթեր այդ զորքերի իրենց երկրում գտնվելու պայմաններում: Խոճապային տրամադրությունները սովորական էին դարձել բնակչության շրջանում: Դրա սահմնկեցուցիչ օրինակներին է 2005թ. օգոստոսի 31-ի տեռորիստական խուճապը, որի հետևանքով ամբոխի գողը դարձան ավելի քան 600 ուխտավորներ: Շիա ուխտագնացների խաղաղ երթի ընթացքում խուճապի հետևանքով զոհվեց մուսավոր թվով 648 մարդ և հարյուրավոր մարդիկ վիրավորվեցին: Այս անգամ ողբերգության պատճառները զինված զոհայինների գործողությունները չէին և ոչ էլ տեռորիստական գործողություն էր իրականացված: Քազմահազարանոց ամբոխի ներսում ինչ-որ մեկը աղաղակել էր, որ ինքը տեսել է մահապարտ-տեռորիստներին:

Իրաքի մայրաքաղաք Բաղդադում էին հավաքվել համադրյա մեկ միլիոն ուխտավորներ, հարզելու համար շիաների յոթերորդ իմամ Մուսա ալ-Կազիմի հիշատակը: Օգոստոսի 31-ին նրանց մեծամասնությունը երթով շարժվեց ալ-Կազիմի շրջանում գտնվող «Ոսկե մզկիթ»: Հենց այն ժամանակ, երբ նրանք անցնում էին Տիգրիս գետի վրայի կամրջով, ամբոխում, ըստ ոստիկանության տվյալների, յուր տարածվեց, որ այնտեղ ուխտավայրում, գտնվում են շահիդ-ինքնասպաններ: Տազմապից խելակորույս հավատացյալները ջանում էին հեռանալ կամրջից ցամկացած հնարավոր միջոցներով: Առաջացած հրճուտոցի պայմաններում հարյուրավոր շիաներ զոհվեցին, մնացածներն էլ խեղդվեցին Տիգրիս գետի ջրերում, քանի որ կամրջի պատնեշները չլինումաղով ամբոխի ճնշմանը փլվեցին: Այս տեղեկությունը հայտնել է «Ալ-Ջազիրա» հեռուստաալիքը:

Այս ողբերգությունից երկու ժամ անառ, հենց կամրջի վրա անհայտ անձիք կրակ էին բացել արկերից շիա մահմեդականների ուղղությամբ:

մը, որոնք հասցրել էին հավաքվել «Ոսկե մզկիթի» շուրջ: Դրա հետևանքով յոթ մարդ զոհվեց<sup>10</sup>:

Իսկ ամերիկյան գործի քվակազմը գնալով ավելացվում էր: Հոկտեմբերի 15-ին նախատեսված Իրաքի Սահմանադրության համրաքվեի կապակցությամբ Պենտագոնը հավելյալ 14 հազար զինծառայող է ուղարկել Իրաք, դրանով ամերիկացի զինծառայողների քվակազմը դարձնելով 152 հազար: «Ազգ»-ը գրում է, որ Վաշինգտոնում այդ մասին լրագրողներին հայտարարել է անձամբ գեներալ Քարտեր Հեմը:

Այդ հավելումը զինուժով ամսպասելի չէր և նախատեսված էր, քանի որ 2005թ. օգոստոսին ԱՄՆ պաշտպանության նախարար Դոմինո Դամաֆեյդը հրապարակավ արտահայտել էր իր այդ մտադրության մասին: Դրանով նախարարը զորավիզ էր ԱՄՆ-ի նախագահին, նրա հետևյալ հայտարարությունների ոգուն՝ «Քանի դեռ ես ԱՄՆ-ի նախագահն եմ, մենք կմնանք Աֆղանստանում և Իրաքում, կպայքարենք անաբեկչության դեմ և կհաղթենք»: Այսպես է արտահայտվել Ջորջ Բուշը Այդահոյի նահանգում Ազգային գվարդիայի զինծառայողների և նրանց ընտանիքների առջև իր ելույթում<sup>11</sup>:

Իրաքն «ըստ երևույթին վերածվում է ճահճի», այս կարծիքն է հայտնել ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Կլինթոնը կամանց համար նախատեսված հանդեսներից մեկի իր հետ հարցազրույցի ընթացքում: Միաժամանակ նա նշել է, որ Իրաքի և Վիետնամի պատերազմների գլխավոր տարբերությունն այն է, որ ընտրություններին մասնակցեց իրացրիների կեսից ավելին, մինչդեռ «վիետնամցիները երբեք չօրինականացրին իրենց կառավարությունը»<sup>12</sup>:

Վերը նշված գնահատականը քվակազմ խոսուն և խորքային է, քանի որ սեղմ ու լակոնիկ համեմատությամբ, տարբումակ ասելիք է պարունակում: Հասկանալի է, որ խոսքը 2005թ. հունվարին կայացած խորհրդարանական ընտրությունների մասին է:

Ինչ վերաբերվում է Իրաքի նոր Սահմանադրության տեքստին, ապա այս փաստաթուղթը կազմված է Իրաքի երկու հիմնական համայնքների՝ շիաների և քրդերի ներկայացուցիչների կողմից, որոնք 2005 թ. հունվարին կայացած ընտրությունների ժամանակ հաղթանակ են տարել: Իսկ սուննիների համայնքի ներկայացուցիչները, որոնք Սադդամ Հուսեյնի ղեկավարության օրոք առաջնակարգ դիրքեր էին զբաղեցնում, հրաժարվեցին այդ փաստաթղթի տեքստն ընդունելուց, ընդդիմանալով, Իրաքի ֆեդերատիվ կառուցվածքի մտավախությունից դրդված:

Քրդական համայնքի առաջարկած պետության անվանումը՝ այն է Իրաքի Ֆեդերատիվ հանրապետություն, չընդունվեց և մերժվեց: Սակայն քրդական համայնքին հաջողվեց սուննիների առաջարկը շրջափակել, այն էր, Իրաքն անվանել «արաբական աշխարհի մի մասը»:

»: Երբորդ հողվածում ասվում է, որ Իրաքը «խլամական աշխարհի մի մասն է, նրա արաբական մասի քաղաքացիները համընդհանուր են արաբական աշխարհի մասը»: Միայն Քուրդիստանն է համարվում որպես ֆեդերալ մահանգ (հոդ. 115), բայց Սահմանադրությունը հնարավորության տեղ է բողոմում կազմավորելու մասնում ֆեդերալ ռեզիմենտի իրենց ինքնուրույն սեփական օրենքներով և անվտանգության սեփական համակարգով: Քուրդիստանում 137 հողվածի համաձայն, ուժի մեջ են մտնում այն օրենքներն ու որոշումները, որոնք հրապարակվել են սկսած 1992 թվականից, երբ այդ տարածքը ազատագրվեց Սադդամ Հուսեյնի իշխանությունից<sup>13</sup>:

Սակայն, չնոտանաք Իրաքի մավթի գործունը, որը կտվան է հանդիսանում ոչ միայն արտաքին հարաբերությունների որոշ շրջանակների համար, այլ մասն են հենց բուն երկրի ներսում ընթացող խնդիրների առանցքն է կազմում:

Իրաքի սուներիները գտնում են, որ երկրի այդպիսի կառուցվածքը եղի է պետության փլուզման սպառնալիքով և ունենալու է արաբական սուների համայնքի իրավունքները, նրան դնելով անհավասար պայմանների և անբարենպաստ վիճակի մեջ: Փաստորեն, սուներիները մտավախություն ունեն ասպագայում Իրաքի հարավում շիաների ռեզիմենտի հնարավոր ձևավորման համար, ուր գտնվում է իրաքյան մավթի 80%-ը:

Այսուհանդերձ, կարևոր մախապայման է Իրաքի բոլոր համայնքների համար անհրաժեշտ նոր Սահմանադրության մեջ՝ 109 հոդվածը հաստատում է, որ մավթը հանդիսանում է բոլոր իրաքցիների սեփականությունը բոլոր մահանգներում, և նրանից ստացված շահույթը բաշխվում է ղեկավարաֆիկ սկզբունքին համապատասխան:

«Թեև հիմնականում Սահմանադրության դրույթները իրապես հասկանալի են շիաների և քրդերի կողմը, այն տպավորությունն է ստեղծվում, որ սուներիները չափազանցում են Իրաքի կազմալուծման վտանգը: Այս երկրի արաբական հատվածը չի կարող կտրուկ բաժանվել՝ «սուներիները կենտրոնում», «շիաները հարավում», հենց թեև այն պատճառով, որ օրինակ Բաղդադում, որը գտնվում է երկրի կենտրոնում, ապրում են մեկուկեսից երկու միլիոն շիաներ: Հոծ համայնքով ապրում են միայն քրդերը, հյուսիսում: Թվում է, որ սուների ղեկավարները մտածված կերպով ավելի սրում են դաշնության խնդիրը, այն մպատակով, որպեսզի իրենց կողմնակիցներին դրդեն ձախտելու Սահմանադրության ընդունումը»<sup>14</sup>:

Պատմության ընթացքը և քաղաքական դաշտի պերսպեկտիվաները Իրաքում ժամանակ առ ժամանակ սուր բեռնացման ցայտուն պատկերներ են ուրվագծում: Այսպես՝ Իրաքի շիա ազգաբնակչությունը, որը երկրի բնակչության ընդհանուր թվի մոտ 60%-ն է կազմում «հարյու-

լրամյակներ շարունակ համարվել են «երկրորդ կարգի» մարդիկ, հասարակությունից տարանջատված: Միայն Մադրամ Հուսեյնի սուննիական դիկտատուրայի տասպալումից հետո նրանք զգացին, որ իրենց ժամը եկել է:

Շիաները օրինական ճանապարհով ձեռք բերեցին ձայների ճնշող մեծամասնություն Իրաքի արաբական հատվածում և ազդեցիկ դիրքեր գրավեցին երկրի Ազգային ժողովում ու կառավարության կազմում<sup>15</sup>:

Իրաքի նոր Սահմանադրության ընդունումով, այնուամենայնիվ դրական քայլ է արձանագրվում նաև տնտեսության ոլորտում, իրաքյան նավթի խնդրով համաշխարհային շուկաների հետ հարաբերությունների հատակեցման առումով նույնպես:

Եգիպտոսի «Ալ-Ահրամ» Զաղաքական և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի աստիճանագրող զինաշխատող Մադի Սոբխիի տվյալներով՝ Բաղդադի փլուզման օրը, ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ Դիք Չեյնի հայտարարեց, որ 2003 թ. վերջին Իրաքը կարտադրի 3 մլն բարել նավթ օրական: Համաձայն որոշ մասնագետների հաշվարկների և կանխատեսումների, արդեն 2006 թ. սկզբին երկիրը պետք է, որ օրական 5 մլն բարել նավթ արտադրեր: Մակայն իրականում իրաքյան նավթի հանույթը չարդարացրեց Վաշինգտոնի փայփայած հույսերը: Իրաքն այսօր՝ 2006 թվականին, ավելի քիչ նավթ է արտադրում, քան մինչև օկուպացիան: Նավթի հանույթը Իրաքում ընդամենը կազմում է 2 մլն բարել օրական, իսկ արտահանությունը չի գերազանցում ամբողջ 1,5 մլն-ը: Միայն 2004 թ. կեսերին գրանցվեց նավթի հանույթի համեմատաբար բարձր մակարդակ՝ մոտավորապես 2,5 մլն բարել օրական:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վերը նշված դիտարկումների հեղինակի հետևյալ գնահատականի վրա՝ «Իրավիճակը բարդացնում են Իրաքի Սահմանադրության նախագծում որոշ հողվածներ, որոնք կարգավորում են բնական ռեսուրսների օգտագործումը ռեգիոնալ սկզբունքով»<sup>16</sup>:

Այս միակողմանի մկարագրի ֆոնի համեմատությամբ, շատ ավելի իրատեսական է Վաշինգտոնի Արտաքին քաղաքականության գծով խորհրդի Մերձավորարևելյան ֆորումի ղեկավար Ջուդիթ Կիպպերի գնահատականը իրաքյան նավթի շուրջ որոշ դիտարկումներին միջազգային ասպեկտով և հեռանկարային անցումներով:

Նա այն միտքն է հայտնում, որ իրաքյան նավթի արտադրության նշանակությունը գնալով շարունակում է աճել, մկատի ունենալով նավթի գների բարձրացումը միջազգային շուկաներում, նշելով նաև Չինաստանի և Հնդկաստանի նման երկրների կողմից նավթի մեծ պահանջարկը և այն սթրեսային վիճակը, ինչը հատուկ է նավթային շուկային զուրպա առումով:

Այդպիսով չի արվել նաև ԱՄՆ-ը ցնցած «Կաարին» փոփոխության հետևանքով վնասի չափը: «Նավթարդյունաբերության վերականգնման և արտադրության ավելացման համար, ինչը իր հերթին տալիս է լրացուցիչ եկամուտներ երկրի վերականգնման համար, Իրաքին անհրաժեշտ է քաղաքական կայունություն և տնտեսական զարգացում: Պետությունը կարիք ունի ինվեստիցիաների, իսկ նրանք չեն հայտնվի, քանի դեռ խոշոր միջազգային մակարդակի ինվեստիցիաները և կոմպանիաները համոզված չեն լինի, որ իրենց ներդրումները և անձնակազմը անվտանգության պայմաններում են: Մոտակա ժամանակներս գլոբալ մակարդակի շուկան ստիպված է բավարարվել իրաքյան սև ոսկու սահմանափակ առաքումներով: Ասկայն երկարաժամկետ հեռանկարում (կարող է արդեն 5-10 տարի անց) այդ երկրում նավթարդյունաբերության կանխատեսվող բարեհաջող է»<sup>4</sup>:

Հետաքրքրություն է ներկայացնում «Վաշինգտոնը սպասում է Իրաքի աջակցությունը» հոդվածը, որի հեղինակն է Ռոբերտ Ա. Դոյլը՝ ԱՄՆ-ի պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի համար Իրաքի գծով կոնսուլտացիաներ վարող ղեկավարը: Նա է մշակել և իրականացրել Իրաքի, Իրանի, Լիբիայի և այլ երկրների դեմ ամերիկյան սանկցիաների ռեժիմները:

«Независимая газета» թերթին տված էկսկլյուզիվ հարցազրույցում նա պատմում է Իրաքում քաղաքական իրադրության մասին, որից անբաժան չէ նաև իրաքյան մակթի շուրջ հետաքրքրությունը:

Այն հարցին, թե ինչ վիճակում է գտնվում Իրաքի նավթարդյունաբերությունը այժմ, նա պատասխանում է՝ «Երկրի բյուջեն համեմատաբար մեծ չէ և նավթային սեկտորի մեջ այնքան էլ շատ ներդրումներ չեն թափանցել, այնպես, ինչպես պլանավորել էր կառավարությունը... Իրաքիները դեռ այնտեղ է այդ քննազավառի վերաբերվող հստակ որոշումներ ընդունեն և դա շատ կարևոր է, քանի որ նավթը ապահովում է երկրի եկամուտների մոտավորապես 80%-ը:

Ներկա պահին ոչ մի երկիր չի կարող Իրաքի նավթային սեկտորում ներդրումներ կատարել: Գործող օրենքը արգելում է արտասահմանյան ներդրումների մուտքը քաղաքի նավթային ռեսուրսների ոլորտ: Իրաքցիները դեռևս այնտեղ է մտածեն առաջիկայում, արդյո՞ք իրենց կառավարությունը ի վիճակի է զարգացնել նավթային սեկտորը իր ուժերով, թե արժե հետևել մակթի համայնքով զբաղվող շատ երկրների օրինակին և թույլատրել արտասահմանյան կապիտալի մասնակցությունը որոշակի բնագավառներում»<sup>5</sup>:

Մինչ մասնագետները իրաքյան մակթի շուրջ իրենց վտրձագիտական հմտություններն էին գործի դնում շահավետ լուծումներ առաջարկելով իրենց երկրների քաղաքական ու տնտեսական ծրագրերի տեսանկյունից, Իրաքում 2005 թ. հոկտեմբերի 15-ը նշանակալից երկրի մոր



Սահմանադրության հաղթարշավով, ինչը ոմանց համար նաև անսպասելի էր, անցանկալի: Արդեն հոկտեմբերի 19-ին, քվեարկությունից չորս օր անց, որոշված էր պաշտոնական արդյունքը մի առ ժամանակ հետաձգելուց հետո հայտարարել: Մանավանդ որ նախնական տվյալներով, երկրի ինքնակամ օրենքը արժանացել էր ազգաբնակչության մեծամասնության հավանությանը, բայց հենց այդ փաստը ինչպես նաև ընտրողների աննախադեպ ներկայանալը ընտրություններին, շատերի մոտ այն կարծիքն էր ստեղծում, որ ձայները հաշվելու ընթացքում հնարավոր է տեղ գտած լինեն բազմաթիվ օրինախախտումներ<sup>15</sup>:

Հայտնի իրողություն է, որ Իրաքի նոր Սահմանադրության նախագծի օգտին հանրաքվեից առաջ հանդես էին գալիս զլխավորապես շիա քաղաքական գործիչները, որոնք մեծամասնություն են կազմում երկրի ժամանակավոր կառավարության կազմում գտնվելով: Սուննիների ներկայացուցիչները դեմ էին և մինչև օրս էլ դեմ են Սահմանադրության նախագծին:

Ֆրանսայից ընդունված է, որ արդեն հինգշաբթի օրվանից՝ հոկտեմբերի 13-ին, իշխանություններն անվտանգության արտակարգ միջոցներ են ձեռնարկում՝ հանրաքվեի ժախտումը թույլ չտալու նպատակով: Մանավանդ որ նախադեպը կար՝ 2005 թ. հունվարի 31-ին օրենսդրական ընտրությունների տապալմանը միտված ահաբեկչությունից զոհվեց 30 մարդ, թեև այդ ընտրությունները Իրաքում կայացան<sup>16</sup>: Գալով Սահմանադրության հանրաքվեին, պետք է նշել, որ երկրում կային բացահայտ ընդդիմադիր ուժեր, որոնք ջանում էին ստանց այն էլ շիկացած մթնոլորտը ապակայունացնել:

Հոկտեմբերի 13-ին Բաղդադի հարավային արվարձաններում ոստիկանությունը ձերբակալեց «Ալ-դաիդայի» 65 անդամների: Հայտնաբերվեցին 17 ակամված ավտոմեքենաներ, որոնք պայթեցվելու էին հենց հանրաքվեի օրը: Համաձայն այդ աղբյուրի՝ Իրաքի իշխանությունները և ամերիկյան զորքերը որոշել էին հանրաքվեի օրն արգելել ավտոմեքենաների երթևեկությունը:

Իրաքի սահմանները, Բաղդադի օդանավակայանը արդեն փակ էին, միջնահանգային տեղաշարժերն արգելված: Քաղաքներում զենք կրելը օրենքով պատժվում էր: Ֆրանսայի տվյալներով, հոկտեմբերի 13-16-ը հայտարարված էին տոնական օրեր: Սահմանադրության մուտքը երկրի օրենսդրական դաշտ վեր էր ածվել համընդհանուր տոնահանդեսի, որի պատճառով դպրոցները, վարչական շենքերը և մեծ խանութները փակված էին, լինելով ոչ աշխատանքային օրերի շրջանակում<sup>17</sup>:

Չնայած սուննիների ուժեղ ընդդիմությանը, 2005 թ. հոկտեմբերի հանրաքվեն Իրաքում ավարտվեց զոհացուցիչ արդյունքով: Այդ մասին առաջին անգամ իրազեկվեց Բաղդադում Իրաքի անկախ ընտրական

հանձնաժողովի անդամ Ֆարիդ Այյարի կազմակերպած մամուլ ասուլիսում, նրա հայտնած տվյալներով «համրաքվեի ժամանակ Իրաքի Սահմանադրության նախագիծը ընդունվել է քվեների 78 տոկոսով»: Նրա տվյալների համաձայն՝ առավելապես սուննիաբնակ Սալսահեդդինի և Անրաքի նահանգներում փաստաթուղթը մերժել է ընտրողների 2/3-ը: Բայց Նիմվեի նահանգում, որի կենտրոնը նավթաուստ Մոսուլ քաղաքն է, Սահմանադրության նախագիծը ստացել է քվեների 55,1%-ը:

Իրաքյան 18 նահանգների արդյունքները վկայում են, որ Սահմանադրության վերջնական նախագիծը ընդունված է<sup>22</sup>:

Ուշագրավ է, և Ֆրանսային գործակալությունը նույնպես նշում է, որ սուննիների համայնքի սահմանադրությանը ընդդիմանալու հիմքում սահմանադրության «մասնատիչ» բնույթն է, քանզի դրանով նախատեսվում է Իրաքում դաշնային պետության ստեղծում: Միաժամանակ, հնարավոր է համարվում արդեն տարեկերջին՝ դեկտեմբերի 15-ին կայանալիք համընդհանուր ընտրությունների ժամանակ Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու տարբերակը<sup>23</sup>:

Ֆարիդ Այյարի իտսքերով, ընտրությունների այսպիսիները «ատույզ են և անպատ», քանի որ քվեների հաշվարկը կատարվել է «միջազգային չափանիշներին համապատասխան»:

Սպիտակ տուրը հոկտեմբերի 15-ը որակել է Իրաքի համար «պատմական օր»: Հակաիրաքյան ռազմական կոալիցիայի գլխավոր երկրները՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ողջունել են Սահմանադրության ընդունումը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նույնպես խոսել է «պատմական իրադարձության» մասին: Իրաքում ՄԱԿ-ի ներկայացուցիչը հայտարարել է, որ քվեարկության արդյունքները «ցուցադրեցին իրաքցիների քաղաքական ընտանցման աստիճանը»<sup>24</sup>:

Այս իրադարձությունը դեռ երկար ժամանակ կմնա քազմակարծիք քննարկումների և դիտարկումների կիզակետում:

Ռոբերտ Դոյլի կարծիքով՝ Իրաքյան Սահմանադրության ռեֆերենդումը հերթական քայլ հանդիսացավ Իրաքի քաղաքական գործընթացում, դեմոկրատական և կայուն, ներկայանալի կառավարություն ստեղծելու համար այդ երկրում:

Հունվարյան ընտրությունների հետ համեմատած, այս հանրաքվեին մասնակցելու նպատակով գրանցվել էր մեկ միլիոնով ավելի շատ ընտրող: Հնարավոր է, որ ամենամեծ ձեռքբերումը անվտանգության միջոցների կազմակերպումն էր՝ իրաքյան իրավապահ մարմինները ստանձնեցին այդ խնդիրը, և տեղամասերում հաշվված թվով ինցիդենտներ տեղ գտան, այն դեպքում, երբ հունվարյան ընտրություններում, երբ Ազգային ժողովի կազմն էր ընտրվում, պատահարների քիվը մի քանի հարյուր էր կազմում:

Յանկացած Սահմանադրություն կարող է փոփոխությունների ենթարկվել, համաձայն որոշակի պրոցեդուրաների: Եվ դա վատ չէ: Իրաքցիները պետք է զարգացնեն ինստիտուտներ, որոնք կհամապատասխանեն իշխանության տարանջատման սկզբունքին, ինչպես նաև հակասակամության և հակակշիռների զսպման սկզբունքին:

«Հուսով եմ, որ մենք ունենք հեռանալու ռազմավարություն: Չէ որ մենք չենք պատրաստվում հավերժ մնալ Իրաքում: Իհարկե, ես չեմ կարող ձեզ ներկայացնել մեր գրաֆիկը: Կարծում եմ, որ ով էլ հիմա կունկրես ամսաթվեր մշի, կսխալվի»: «Մակայն, իրաքյան իշխանությունները նույնպես ընդունում են այն դժվարությունները, որոնց մենք բախվում ենք: Նախագահ Ջալալ Մուլաթանին, վարչապետ Իբրահիմ ալ Ջաֆարին, արտգործնախարար Խոշիյար Ջիրաֆին աշնանը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի սեսիայում հայտարարեցին Նյու Յորքում, որ իրենց երկիրը հաջորդ տարի միջազգային աջակցության կարիք կզգա: ԱՄՆ-ը մտադիր է այդ աջակցությունը ցուցաբերել»<sup>25</sup>:

Այդ նույն ժամանակ անգլիացի լրագրող Գուին Դայերը գրում էր Իրաքում սահմանադրության հանրաքվեի և 2000-րդ ամերիկացու սպանության մասին:

«Իրաքում թեև արդյունաբերություն չկա, որ ծաղկի, փոխարենը ծաղկում է պատմության ուղեհիշման «արդյունաբերությունը»: Անցյալ շաբաթ նախկիններին ավելացան ևս երկուսը՝ բուրբուլիմ նոր սահմանադրությունն ու Իրաքում սպանված 2000-րդ ամերիկացի զինվորը»<sup>26</sup>:

Հետաքրքիր է այն մանրագնին վերաբերումները որով ուղեկցվում է Իրաքյան Սահմանադրությանը նվիրված հոդվածի յուրաքանչյուր նախադասությունը:

«Զվեների հաշվումն ու վերահաշվարկումը քաղաքացիական երկար ժամանակ խլեցին, մինչև ի վերջո գտան ճիշտ պատասխանը և հանրաքվեից 10 օր հետո՝ հոկտեմբերի 15-ին, Իրաքի ղեկավարները պաշտոնապես հայտարարեցին «ուրախ լուրը»<sup>27</sup>:

Երկրի 18 նահանգներից ընդամենը երկուսը՝ Անբարն ու Մալաիդ-դիհն էին դեմ քվեարկել Սահմանադրությանը:

Այս առիթով, անգլիացի լրագրող գրում է որոշակի հեզմանքով և տարակուսանքով՝ «Եթե մի երրորդ մասնակց էլ նույն ձևով վարվեր, հանրաքվեն վստահաբար կձայնակներ, քայց ինչ-որ հրաշքով այդ երրորդ նահանգը, որ անպայման դեմ կքվեարկեր, չկատարեց այդ քայլը:

Այդ երրորդ նահանգը Նիմվե է, որտեղ սումերներն են մեծամասնություն կազմում և, ինչպես հայտնի է, որանք դեմ են դաշնային ամերիկանետ Սահմանադրությանը: Անբարում բնակչության 97%-ն է «ոչ» ասել, իսկ Նիմվեում, որտեղ սումերները 68% են կազմում, ընդամենը, ըստ քվեները հաշվարկողների, 55% էր «ոչ» ասել: Տարօրինակ երևույթ:

Տարօրինակ, որովհետև Նիմվեի բնակչության մյուս մասը (24%) եզդիներ, քուրքմեններ, շաբաքներ և քրիստոնյա ասորիներ են, որոնք սուննիների պես կտրականապես դեմ են Սահմանադրությանը: Միայն 8%-ը կազմող քրդերն են կողմ դրան»<sup>24</sup>:

Շարունակելով իր դիտարկումները Իրաքի նոր Սահմանադրության օգտին քվեարկության արդյունքների շուրջ, Գուլին Դայիրը գալիս է հետևյալ եզրահանգման՝ «Բայց վերջին հաշվով գուցե այնքան էլ կարևոր չէ, որ Սահմանադրությունը որոշ «անպայտուն» օժանդակությունների միջոցով է վավերացվել, քանի որ Իրաքում պետություն չկա, որ Սահմանադրության կարիքը զգա: Կան նախարարություններ և որոշ իմաստով նաև բանակ, բայց պետություն չկա»<sup>25</sup>:

Մեջբերված նյութի տվյալները հաստատում են լուսաբանման առարկա դարձած և սույն հոդվածում առաջ քաշված այն իրողությունը, որ ՄԱԿ-ը իր որոշակի օժանդակությունն է ցուցաբերել Իրաքի ժողովուրդին օրինաստեղծ գործընթացներում, և իհարկե, նոր Սահմանադրության հանրաքվեի նախապատրաստական աշխատանքներում և վերջնական ընթացակարգում: «Անպայտուն» օժանդակությունների շարքում է ՄԱԿ-ի ենթակազմակերպությունների մասնակցությունը և ցայտուն դերը:

Պարզվում է, որ Իրաքում նախարարություններն առանձին կուսակցությունների «ավատություններ են» և դրանք կենտրոնական կառավարությանը չեն ենթարկվում: Իսկ պաշտոնյաների մեծ մասը զինվորականներ են, որոնք գործում են այն, ինչ կարող են, քանի որ գիտեն՝ մի քանի տարի անց իրենք այդ պաշտոններում չեն լինի, ժամանակավոր մարտիկ են այդ դիրքերում: Այդ նրանց իրականացրած քայլանքներն է պատճառը, որ Իրաքի միջին խավը զանգվածաբար լքում հեռանում է երկրից և հաստատվում Հորդանանում<sup>26</sup>:

Իրաքի նոր Սահմանադրության հանրաքվեի շուրջ նույնպես կարծիքները տարբերվում են:

Ռոբերտ Դոյլը ամերիկյան դիվանագիտական տեսանկյունով հակադրվում է անգլիացի լրագրող Գուլին Դայիրի կարծիքին և հետևություններին, մշված խնդրի պարագայում՝ «Սահմանադրության հանրաքվեն Իրաքում քաղաքական գործընթացներում հերթական քայլ հանդիսացավ, այդ երկրում դեմոկրատական և կայուն ներկայանալի կառավարություն ձևավորելու գործում: Հունվարյան ընտրությունների հետ եթե համեմատելու լինենք, այդ քվեարկությանը մասնակցելու նպատակով մեկ միլիոն ավելի իրաքցի է զրանցվել:

Հնարավոր է, որ ամենամեծ ձեռքբերումը անվտանգության միջոցների կազմակերպումն էր՝ իրաքյան օրինապահ մարմինները իրենց վրա վերցրին այդ խնդիրը»<sup>27</sup>:

Այն հարցին, թե որքան է նստում ամերիկյան հարկատուների վրա մերկայությունը Իրաքում, նա պատասխանել է՝ որ մոտավորապես երեսուն երկրներ են մասնակցում բազմազգ ուժերի կազմում, որոնք իրենց ավանդն են ներդնում Իրաքում անվտանգության ապահովման գործում: Մեծ ջանքեր է գործադրում ՆԱՏՈ-ն իրաքյան զինվորականների պատրաստման գործում: Հյուսիսատլանտյան խորհուրդը «վերջերս Իրաքում բացեց սպաների պատրաստման դպրոց»:

Բազմաթիվ երկրներ իրենց լույսն են ներդնում Իրաքի տնտեսության վերակառուցման գործում: 2006 թ. հունիսին Բրյուսելում հավաքվեցին ավելի քան 80 արտգործնախարարներ, որպեսզի քաղաքական աջակցություն ցույց տան երկրում իշխանության փոխանցմանը իրաքցիներին և հաստատեն իրենց շահագրգռվածությունը Իրաքի տնտեսության վերականգման խնդրում: Հենց այդ օրերին էլ Իրաքին խոստացել են տասներեք միլիարդ դոլար հատկացնել, չհաշված միջազգային ֆինանսական ինստիտուտների առաջարկները: Սակայն մեջ բերված թվերը մոլորաբան հակասական են, քանի որ Իրաքը ստացել է ընդամենը երեք միլիարդ դոլար<sup>32</sup>:

Եվ եթե Իրաքի տնտեսության վերակառուցումը ցանկալի է երկրի բնակչության բոլոր խավերին, ապա օտարերկրյա ռազմական մերկայությունը դիտվում է բոլորովին այլ ասպեկտով: Սահմանադրական հանրաքվեի առիթով, Գուին Դ-այերը հետևյալ տվյալներն է ներկայացնում՝ «Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը տեղական որոշ ակադեմիական կազմակերպություններին վճարել է, որ հարցում կատարեն Իրաքի բնակչության շրջանում: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ Իրաքի բնակչության 45%-ը պաշտպանում է հարձակումները «կոալիցիայի գործերի» (ամերիկացի, բրիտանացի) վրա: Մեկ տոկոսը միայն համոզված է եղել, որ օտար զինվորական միջամտությունը նպաստում է երկրում անվտանգության հաստատմանը»<sup>33</sup>:

Մեկ այլ աղբյուր նշում է՝ «իրաքցիների 82 տոկոսը դեմ է կոալիցիոն ուժերի մերկայությանը, իրաքցիների մեծ մասը լիովին արդարացնում է բրիտանացի զինծառայողների դեմ իրականացվող անձնասպան ահաբեկությունները: Այս հետևությունն է արվում Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության պատվերով Իրաքի վերաբերյալ պատրաստած զաղտնի զեկուցագրում: Չինական Միմհուս գործակալությանը հայտնի են դարձել փաստաթղթի որոշ տվյալներ: Այսպես, Իրաքում օգտուտսին անցկացված հարցումները վկայում են, որ բնակչության 65 տոկոսը պաշտպանում է բրիտանացիների վրա հարձակվող ահաբեկիչներին:

Օկուպացիոն գործերի մերկայության պատճառով իրաքցիների 67 տոկոսն իրեն անապահով է զգում: Բնակչության 72 տոկոսը չի

վատահում այդ գործերին, 43 տոկոսը կարծում է, որ երկրում իրավիճակը վատթարանում է»<sup>34</sup>:

«Մենք պատերազմական վիճակում ենք: Մայնված են 2025 ամերիկացի զինծառայողներ, պատերազմի վրա շարքաթակած ծախսում ենք ավելի քան 2 մլրդ դոլար: Կարծում են, որ ամերիկացիները այնպեք է իմանան, քե ինչպես ենք հայտնվել նման վիճակում», ընդգծել է դեմոկրատ սենատորների առաջնորդ Հարրի Ռեյդը<sup>35</sup>:

ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը ճապատուխի ժամանակ լրագրողներին ասել է, քե իրաքցի զրոհայիններն արժանի չեն կոչվելու «ապստամբներ», ինչպես նրանց հաճախ անվանում են լրագրողներն ու մեկնաբանները: «Երկար մտածելուց հետո ի վերջո հասկացա, որ «ապստամբ» կոչվելը նրանց տալիս է ավելի մեծ օրինակաճություն, քան իրենք արժանի են», ընդգծել է Պենտագոնի ղեկավարը:

Նրա կարծիքով, Իրաքում ամերիկյան զորքերի հակառակորդներին հարկավոր է անվանել «սահարեկիներ» և «հակակառավարական տարրեր»: Պարզվում է, որ որոշ դեպքերում օկուպացիոն ուժերի դեմ կռվող իրաքցի ապստամբներին հաճախ անվանում են նույնիսկ «հակա-իրաքյան» կազմավորումներ:

Այս հայտարարությունների ֆոնի վրա պետք է դիտել իտալացի լրագրող Ջիզեփինո Ռանուչչիի նկարահանած հետաքննական ֆիլմը՝ «Ֆալուջա, քողարկված քարը» վերնագրով, որի որոշ հատվածներ 2005 թ. նոյեմբերի 7-ին լրագրողները դիտեցին մամուլ ասուլիսում, իսկ ամբողջությամբ ֆիլմը ցուցադրվեց հաջորդ օրը, իտալական արքայազնային RAI – News 24 հեռուստաալիքով:

Ժապավենում նկարահանված ամերիկացի նախկին զինծառայողներից մեկը պնդում է, որ ինքը լսել է «զգուշություն պաշտպանելու» հրամանը, քանի որ կիրառվելու էր «սպիտակ ֆոսֆոր»: «Հետո ես տեսա կանաճ և երեխաների այրված մարմիններ», պատմում է այդ զինվորականը:

Մարտական գործողությունների ժամանակ ֆոսֆորի օգտագործումը թույլատրվում է միայն հակառակորդի դիրքերի վրա շաղ տալով, դրանք հայտնաբերելու նպատակով, նշում է իտալական AKI գործակալությունը:

Իտալացի լրագրողները նաև տեղեկություններ ունեն, որ Ֆալուջայի մոտ մղված մարտերում օգտագործվել է MK 77 տիպի նապայմ, որն արգելված է ՄԱԿ-ի միջազգայնացրվ:

2005 թ. փետրվարին Իրաքում առևանգված և ապա ազատ արձակված լրագրողուհի Ջուլիանա Ազոնան ֆիլմի հեղինակներին տված հարցազրույցում հայտարարել է, «Ֆալուջայից փախած մարդիկ ինձ քանիցս ասել են, որ քաղաքի համար ծավալված մարտերի ժամանակ

ամերիկացիները կիրառել են նապայմ և սպիտակ ֆոսֆոր: Ես ուզում էի այդ մասին պատմել աշխարհին, բայց առևանգիչներն ինձ զրկեցին այդ հնարավորությունից»<sup>36</sup>:

ԱՄՆ-ը մինչև օրս չի ստորագրել խաղաղ բնակչության դեմ որոշ զինատեսակների, այդ թվում ֆոսֆորային զենքի կիրառումն արգելող ՄԱԿ-ի միջազգային պայմանագրերը:

Ֆալուջայի զիջերային գրեհից հետո քաղաքի մոտ 300 բնակիչներ ստիպված եղան լքել տները: Գլխավորապես սուննիադինական այդ քաղաքում հիմնահատակ կործանվեցին բազմաթիվ շենքեր<sup>37</sup>:

Գալով ՄԱԿ-ի գործունեությանը, պետք է նշել, որ ամերիկա-իրաքյան զինված հակամարտությունը այս միջազգային կազմակերպությանը նույնպես որոշակի փորձություն դասեր մատուցեց:

BBC-ի տվյալներով, ՄԱԿ-ում դեկավար պաշտոնների հավակնող բոլոր անձինք այսուհետև պարտավոր են լրացնել եկամտունների հայտագրեր<sup>38</sup>: Նշելով ոչ միայն իրենց, այլև մերձավոր ազգականների (կանանց և զավակների եկամտունները): Վերջին հանգամանքը հատկապես այժմեական է ՄԱԿ-ի «Լավթի պարենի դիմաց» ծրագրի մի շարք սկանդալների կապակցությամբ<sup>39</sup>: Ինչպես տեսնում ենք, ՄԱԿ-ը իր ներքին կանոնադրությունը խտացնում է:

ՄԱԿ-ի հատուկ հանձնախումբը հրապարակել է իրաքյան «Լավթի պարենի դիմաց» ծրագրի շրջանակներում կատարված յարաշահումներին նվիրված զեկուցագրի ամբողջական տեքստը: Անցկացված քննության ընթացքում պարզվել է, որ 66 երկրների 2200 ընկերություններ նպաստել են, որ Սադդամ Հուսեյնի վարչակարգը 1,8 մլրդ դոլար ստանա շրջանցելով միջազգային պատժամիջոցները: «Լավթի պարենի դիմաց» ծրագրի գոյության տարիներին դրան մասնակցել է ընդամենը 4700 ընկերություն: Հրապարակված ցանկում զգալի տեղ են գրավում ռուսական և ֆրանսիական ընկերությունները:

Հակաիրաքյան պատժամիջոցների հետևանքներն իրաքցիների համար մեղմացնող «նավթ պարենի դիմաց» ծրագրի ընդհանուր արժեքն ավելի քան 100 մլրդ դոլար էր, որից 64 մլրդարդը նախատեսված էր իրաքյան նավթի վաճառքի և 39 մլրդարդը՝ պարենի մատակարարումների դիմաց:

Հրապարակված զեկուցագրում ընդգծվում է, որ Հուսեյնի վարչակարգը 11 մլրդ դոլարի հասնող անօրինական եկամուտ է ստացել նավթի մաքսանենգությունից: Փոլ Վոլկերը հայտարարել է, որ ամեն երկիր ինքը պետք է որոշի, թե կոնկրետ ում է դատական հետապնդման ենթարկելու:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանն աշխարհի պետություններին կոչ է արել պատժամիջոցներ ձեռնարկել Հուսեյնի վարչակազմին կաշառքներ տված ընկերությունների դեմ: Իսկ ԱՄՆ-ը այդ

ատիքով հայտարարել է, որ Վոլկերի զեկուցագիրը ցուցադրում է ՄԱԿ-ի քարեփոխումներն արագացնելու ամերիկացիներին հրահանգները<sup>38</sup>։

2005 թ. նոյեմբերի 8-ին ՄԱԿ-ը մեկ տարով երկարաձգեց Իրաքում բազմազգ ուժերի ներկայությունը։ Իրաքում ամերիկացիների հրահանգատարությանը զործող միջազգային կոալիցիոն ուժերի ներկայության վերջնաժամկետը սահմանված էր 2005 թ. դեկտեմբերի 31-ը։<sup>39</sup> Դեկտեմբերի կեսերին խորհրդարանական ընտրություններով մայիսից սկսված էր ավարտել քաղաքական անցումային գործընթացը Իրաքում։ Այս ատիքով, բազմազգ ուժերի ներկայությունը երկարաձգելու խնդրանքով ՄԱԿ-ին էր դիմել Իրաքի ժամանակավոր կառավարության վարչապետ Իբրահիմ ալ Ջաաֆարին։ ՄԱԿ-ի ԱԽ-ի բոլոր 15 անդամները միաձայն ընդունեցին 1637 բանաձևը, որը կոալիցիոն ուժերի մանդատը երկարաձգեց մինչև 2006 թ. դեկտեմբերի 31-ը<sup>40</sup>։

ՄԱԿ-ի որոշման մեջ ասված է, որ «Իրաքի կառավարությունը հաստատեց մայիսի ընտրությունների արդյունքները, կազմելով ընտրողների ցուցակները, որոնք տեղ կգտնեն 2005 թ. դեկտեմբերի 15-ին, խաղաղով խիստ կարևոր դեր, շարունակելու առաջ տանել ազգային երկխոսությունը և համաձայնությունը, մայիսից սկսված Իրաքի ժողովրդավարական ապագան, արժանանալով միջազգային հանրության հավանությանը՝ աշխատել Իրաքի կառավարության հետ մեկտեղ, սերտորեն օգնել նրան, հարգելով Իրաքի ժողովրդի ջանքերը»<sup>41</sup>։

Միաժամանակ ընդգծվեց, որ տեղաբնակից գործողությունները չպետք է կասեցնեն Իրաքի քաղաքական և տնտեսական վերափոխումների ընթացքը և Անդամ պետությունների պարտավորվածությունը 1618 (2005) որոշման համաձայն՝ 2005 թ. 4 օգոստոսի, գործին վերաբերվող այլ որոշումների և միջազգային պարտավորությունների հետ ուժի մեջ են մտնում<sup>42</sup>։ Գնահատելով ՄԱԿ-ի խաղաղասիրական և Իրաքի կայունությանը միտված քաղաքականությունը, նշեց, որ մայիսից սկսված շրջանը երկրում հեշտ ու խաղաղ չանցավ։ Բռնությունները շարունակվում էին։ Իրաքցիների ամձնասպան անարեկություններից սարսափած ամերիկացիները մեկ անգամ չէ, որ կրակ են քսցել խաղաղ բնակիչների վրա, նոյեմբերի 21-ի առավոտյան Բաղդադում ժամանակավոր ուղեփակոցի մոտ տեղադրված զննարկի կրակից սպանվեցին Ալ-Սաուսմերա ընտանիքի հինգ անդամներ։ Փրկվել էր միայն ավտոմեքենայի 22-ամյա վարորդը, որը տեսել էր իր ընտանիքի անդամների՝ 2 տղամարդու և 3 մանուկների զոհվելը<sup>43</sup>։ Իրաքի սոցիալ-քաղաքական իրադրությանը բնորոշ էին նաև արտասահմանցիների առևանգումները։ «Իրաքի իսլամական բանակ» խմբավորումը հատուկ տեսանկյուն էր վստահեցնում «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերությանը, որը փաստում էր՝ «բանակն» առևանգել է ԱՄՆ քաղաքացու, որը երկու օրից մահապատժի կենթարկվի, եթե ամերիկացիներն ազատ չարձակեն իրա-



քյան բանտերի կայանավորներին: Առևանգիչները ընդգծել էին, որ պատանդի անունը Ռոմադ Շույց է և նա «անվտանգության գծով խորհրդատու» է և Իրաքի վերակառուցման նախարարության աշխատակից<sup>44</sup>: Վերջինս այդ օրերին Իրաքում առևանգված երկրորդ ամերիկացին էր: 2005 թ. նոյեմբերի 26-ին առևանգվել էին պատերազմի հակառակորդ քրիստոնյա ոչ կառավարական մի կազմակերպության չորս անդամներ՝ մեկ ամերիկացի, երկու կանադացի և մեկ քրիտաստացի: Իր տնից առևանգվել էր ֆրանսիացի ճարտարագետ Բեռնար Պլանշը<sup>45</sup>:

Մամուլում տեղեկություններ երևացին նաև իրաքյան որոշ լրատվամիջոցներին ամերիկյան բանակի կաշառումների երևույթների մասին: Քարոզական հողվածները, որոնց հեղինակները ամերիկյան բանակի «տեղեկատվական գործողություններին» հատուկ ստորաբաժանումներն են, քարզանվել են արաբերեն և «Լինքոլն գրուպ» վտրո ընկերության միջնորդությամբ հրապարակվել են իրաքյան քերթերում<sup>46</sup>:

2005 թ. դեկտեմբերի 6-ին սուհեյբների հոգևոր խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, հրապարակելով ամսի 15-ի խորհրդարանական ընտրություններին շնամակցելու մասին իրենց ընդունած որոշումը՝ «Ուլեմայի (աստվածաբանների) խորհուրդը իշխանության ձգտումներ չի սնուցում, սակայն մերժում է զավթիչների ներկայությունը Իրաքում և նրանց քննադատելով առաջնորդվելու մտադրություն չունի»<sup>46</sup>:

Իրաքյան անարկայական հինգ խմբավորումներ «Ալ-Լաիդայի գլխավորությամբ առաջին անգամ հանդես եկան համատեղ հայտարարությամբ, դեկտեմբերի 15-ին Իրաքում նախատեսված խորհրդարանական ընտրությունները անվանելով «սատանայական»<sup>47</sup>: Նրանք կոչ էին անում շարունակել սրբազան պատերազմը և ինտերնետից չօգտվող իրաքցիների համար ծայրահեղականները տարածել էին թուցիկներ, որոնցում նշվում էր, որ «ամհավատների և նրանց կամակատարների դեմ պայքարը կշարունակվի»:

Ընտրություններից մեկ օր առաջ Իրաքում սկսվել էր նախնական քվեարկություն, որին մասնակցել էին զինվորականները, քանտարկյալները և հիվանդանոցների հիվանդները: RFI ռադիոկայանի տվյալներով Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնը հրաժարվել էր ընտրություններին մասնակցել<sup>48</sup>:

2005 թ. դեկտեմբերի 15-ին տեղական ժամանակով ժամը 7-ին սկսվեցին առաջին խորհրդարանական ընտրությունները, իսկ ընտրական տեղամասերի բացումից քիչ անց Ռամադի, Տիկրիտ քաղաքներում և այլուր որոտացին պայթյուններ: Տեղ-տեղ ընտրությունները ուղեկցվում էին ընտրական տեղամասերի գնդակոծությամբ:

BBC-ն տեղեկացնում էր, որ այդ առավոտյան անհայտ անձինք ակամակաբար են հանդիպում «կանաչ գոտին», որտեղ գտնվում են կառավարական հիմնարկները և օտար պետությունների ներկայացուցիչները:

Ռոյթեր գործակալության ընտրումներ, քվեարկությունը անցնում էր «լարված անվտանգության պայմաններում»: Իրաքի նախագահ Ջալալ Քալաֆանին հույս է հայտնել, որ երկրի ժողովուրդը «կպահպանի միասնականությունը»: Իրաքի քաղաքների փողոցներում պարեկում էին մոտ 150 հազար իրաքցի զինվորներ: Երկրում դեռ գործում էր 2005 թ. հունվարին կազմավորված անցումային խորհրդարանը: Մշտական օրենսդիր մարմնի ընտրության հաջորդ քայլը կառավարություն ստեղծելն էր՝ չորս տարի ժամկետով:

Ընտրություններին մասնակցեց վեցուկես հազար քեկնածու՝ 275 պատգամավորական տեղերի համար, որից 1/4 կանանց մասնակցությամբ: Ընտրություններին մասնակցեցին 307 կուսակցություններ և 19 ընտրական դաշինքների ներկայացուցիչներ<sup>49</sup>:

Չեհերի մասին տեղեկությունները կցկտուր են: Ընտրություններից երկու օր առաջ սպանվել էր իրաքի ազատ առաջադիմական կուսակցության առաջնորդ Սիդխար Դուլայմին: Բաղդադում պայթյունից սպանվեցին ամերիկացի չորս զինվորներ<sup>50</sup>:

Նոր «իրաքյան» բանակի 115 գումարտակներից միայն մեկն էր իր շարքերում ընդգրկել շիաների, սուննիների և քրդերի: Իրաքի իսլամական հեղափոխության զերազույն խորհուրդը՝ բաղկացած Շիա կրոնական կուսակցության անդամներից, վերահսկում էր երկրի ներքին գործերը և 110 հազարանոց ռադիկալական համակարգը: Ընտրությունների առիթով հատուկ հայտարարված էր, որ ոչ մի արար, եթե իրաքցի չէ, չի կարող մուտք գործել Իրաք, մինչև ընտրությունները չավարտվեն:

«Իրաքում մի քանի խաբուսիկ «չրջադարձային իրադարձություններից» հետո վերջապես գալիս է իսկականը՝ դեկտեմբերի 15-ի ընտրությունը, որն ինչ-որ քան, երևի թե որոշելու էր: Դժբախտաբար այն հաստատելու է, որ 1918 թ.-ից գոյություն ունեցող իրաքյան պետությունը իր վախճանին է հասնում և միայն Աստծուն է հայտնի, թե ինչով է վտխարվելու», - գրում է Գուին Դայերը Իրաքի ընտրությունների մասին «Իրաք» 1918-2006» հոդվածում<sup>51</sup>:

Գալով սուննիների վերաբերմունքին օրենսդրական գործընթացներին, նա գրում է՝ «Բնաս կուսակցության բռնի «զանգվածային» օտար ներխուժման հետևանքով, ամպայման առաջացնելու էր կառավարիչ դիմադրություն սուննիների շրջանում: Այս դիմադրությունն էլ առաջ է բերել աղանդավորական իրարանցումներ Իրաքում»<sup>52</sup>:

Դեկտեմբերի 15-ի խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքները առաջինը մերժեցին սուննի իրաքցիները: Երկրի 18 նահանգներից 11-ում հաղթել էր շիաների «Միացյալ իրաքյան դաշինքը»:

»: Շիաները չեն կարողանա կառավարություն կազմավորել, եթե չգործակցեն մյուս կուսակցությունների հետ, գտնում էին նրանք: Այսօրվան հարթամակը համազիչ էր՝ Քաղաքացիական և մերձավոր շրջաններում քվեների 89% մշակումը հենց առաջին օրերից փաստեց դրա մասին: Շիաները ստացել էին ձայների 58%, սուննիները 18,6%: «Միացյալ իրաքյան դաշինքը» մրցակիցներին հաղթեց մալեական և հարավի 8 ալ մահադեմներում: «Քուրդիստանի դաշինքը» հաջողության հասավ Իրաքի հյուսիսային երեք նահանգներում<sup>45</sup>:

Այս օրերին ամերիկյան իշխանությունները փորձեցին սիրաշահել սուննիներին: Ըստ ամերիկյան բանակի, ազատ արձակեցին չորս սուննի գործիչներ: Մինչդեռ իրաքցի փաստաբաններից մեկի տվյալներով ազատություն է շնորհվել 24 անձանց: Նրանցից երկուսը կին գիտնականներ են, որոնք անցյալում մասնակցել են Իրաքի կենսաբանական զենքի մշակման ծրագրերին: Ազատ են արձակվել նաև տրանսպորտի և բարձրագույն կրթության նախկին նախարարները, ձեռնարկատեր Մաթամ ալ Քաուզը, որը Հուսեյնի օգտին առևտուր էր արել, շրջանցելով հակաիրաքյան տնտեսական արգելքը: Խոսքը սանկցիաների մասին է: Ազատ արձակված որոշ անձանց տրվեցին անձնագրեր, երկրից հեռացվելու համար:

KARINE SAMVELYAN

**THE PARTICIPATION OF THE UNITED NATIONS  
IN LAW-BUILDING PROCESS IN IRAQ IN 2005**

The article deals with the analyses of the law-building process in Iraq during the 2005 year: the direct elections of the Transitional National Assembly on 30 January 2005, the drafting of a new constitution for Iraq and the recent approval of the draft constitution by the people of Iraq on 15 October 2005, the election by 15 December 2005 of a government pursuant to a newly adopted Constitution.

The United Nations role in Iraq in this period – very important factor.

Welcoming the beginning of a new phase in Iraq's transition and looking forward to the completion of the political transition process the United Nations should continue to play a leading role in assisting the Iraqi people and government with further political and economic development.

The participation of the United Nations contributing to coordination and delivery of reconstruction, development and humanitarian assistance, and promoting the protection of human rights, national reconciliation, as well as judicial and legal reform in order to strengthen the rule of law in Iraq.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարինե Աամվելյան, Քաղաքական իրադրությունն Իրաքում և ԱՄԿ-ի դիրքորոշումը (2004 թ. հունիս – 2005 թ. օգոստոս), Մեծավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, արևել. XXIV, Երևան, 2005, էջ 218-235:
2. United Nations Security Council, Press Release, Department of Public Information, News and Media Division, New York, SC/8627, 2 February 2006. Resolutions and Statements of the Security Council, S/PRST/2005/5 p. 138.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 139:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում:
10. Террористическая паника в Ираке, "Независимая газета", 1 IX, 2005, № 185, с. 6.
11. «Ազգ», 8, հոկտ., 2005, էջ 5:
12. Նույն տեղում:
13. Георгий Мирский, Угроза от конституции, "Независимая газета", Дипкурьер № 12, 10. X. 2005, с. 13.
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. "Независимая газета", Дипкурьер № 12, 10. X. 2005, с. 13.
17. Նույն տեղում:
18. "Независимая газета", Дипкурьер № 14, 14. XI. 2005, с. 14.
19. "Независимая газета", № 226, 19. X. 2005, с. 5.
20. «Ազգ», 19, հոկտ., 2005, էջ 5:
21. Նույն տեղում:
22. «Ազգ», 27, հոկտ., 2005, էջ 5:
23. Նույն տեղում:
24. Նույն տեղում:
25. "Независимая газета", Дипкурьер № 14, 14. XI. 2005, с. 14.
26. «Ազգ», 1, նոյեմբ., 2005, էջ 5:
27. Նույն տեղում:
28. Նույն տեղում:
29. Նույն տեղում:
30. Նույն տեղում:
31. "Независимая газета", Дипкурьер № 14, 14. XI. 2005, с. 14.
32. Նույն տեղում:
33. «Ազգ», 1, նոյեմբ., 2005, էջ 5:
34. «Ազգ», 25, հոկտ., 2005, էջ 5:
35. «Ազգ», 3, նոյեմբ., 2005, էջ 5:
36. «Ազգ», 9, նոյեմբ., 2005, էջ 5:
37. «Ազգ», 17, նոյեմբ., 2005, էջ 5:

38. «Ազգ» 20, հոկտ., 2005, էջ 5:
39. «Ազգ» 29, հոկտ., 2005, էջ 5:
40. United Nations Security Council. Press Release... S/RES/ 1637, Extension of Mandate of Iraq Multinational Force, 8 November 2005, meeting: 5300, p. 106-109. տես՝ նաև «Ազգ», 10 նոյեմբ. 2005, էջ 5:
41. Նույն տեղում, էջ 106:
42. Նույն տեղում:
43. «Ազգ», 23 նոյեմբ., 2005, էջ 5:
44. «Ազգ», 8 դեկտ., 2005, էջ 5:
45. Նույն տեղում, 2 դեկտ., 2005, էջ 5:
46. «Ազգ», 8 դեկտ., 2005, էջ 5:
47. «Ազգ», 14 դեկտ., 2005, էջ 5:
48. Նույն տեղում:
49. «Ազգ», 16 դեկտ., 2005, էջ 5:
50. Նույն տեղում:
51. «Ազգ», 15 դեկտ., 2005, էջ 5:
52. Նույն տեղում:
53. Նույն տեղում, 22 դեկտ., 2005, էջ 5:

**ՄԱՅԱԿԱՆ ՄԱՆԱԲՅԱՆ  
ՄՈՒԲԵՆ ԲԱՂՂԱՄԱՐՅԱՆ**

**ՉԻՆԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ**

Վերջին տարիների ընթացքում մրցակցությունը բնական ռեսուրսների, հատկապես հիդրոէլեկտրոէներգիայի և էներգակիների վերահսկման կամ դրանց կայուն մատակարարումներն ապահովելու համար գնալով ավելի մեծ տեղ է գրավում միջազգային հարաբերություններում: 2004-2005թթ. կտրվածքով նավթի, հեղուկ բնական գազի (ՀԲԳ) պահանջարկի և գնների, ինչպես նաև միջուկային էներգետիկայի դերակատարման նորովի ընկալման վերաբերյալ մամուլ հրապարակումները և գիտահետազոտական վերլուծությունները առաջնային տեղ զբաղեցրեցին համաշխարհային մամուլի էջերում՝ շատ դրվագներում երկրորդական քեմաների վերածելով այնպիսի միջազգային խնդիրների քննարկումներ, ինչպիսիք են՝ տարածաշրջանային ինտեգրացիան, գոբալ պայքարն անաբեկչության դեմ, իրաքյան պատերազմը, «գունավոր» հեղափոխությունները նախկին ԽՍՀՄ տարածքում և Իրանի միջուկային ծրագիրը: Որոշ հետազոտություններում էներգետիկ անվտանգության՝ խնդիրները ներկայացվում են նաև վերը քվարկված միջազգային գործընթացների համատեքստում՝ բացահայտելով դրանց փոխկապակցված բնույթը:

Չանագան օբյեկտիվ և սուբյեկտիվ կարծիքների համադրմամբ՝ կարելի է գալ այն եզրակացության, որ ներկայիս համաշխարհային գործընթացներում հումքային ռեսուրսների համար աշխարհատնտեսական մրցակցությունը նորից առաջնային դեր է ստանում՝ վերածվելով համաշխարհային ռազմավարական լիտվախությունների ելակետային պատճառի: «Էներգակիրների պահանջարկի կտրուկ աճով և էներգակիրների շուկայում տեղի ունեցող գնային արագ վայրկյալներում ներքին պայմանավորված՝ միջազգային մրցակցությունն էներգակիների համար աստիճանաբար ավելի լարված բնույթ է ստանում», նշվում է Չինաստանի Արդի Միջազգային Հարաբերությունների ինստիտուտի վերլուծության մեջ: ԱՄՆ Արտաքին հարաբերությունների խորհրդի կողմից 2005թ. դեկտեմբերին հրապարակված «Գլոբալ նավթային շուկայի մի-

տումները» հողվածում<sup>3</sup> ամփոփ ներկայացվում է համաշխարհային մակարկի շուկայի ներկայիս իրավիճակը 2004-2005թթ. մակթային շուկայում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում: Հողվածում մասնավորապես նշվում է, որ էներգակիրների համաշխարհային պահանջարկի մակարդակը, գրեթե հասնելով մատակարարման հնարավորություններին, հավելյալ լարվածություն է առաջացրել մակթային շուկայում: Սիջազգային իրավիճակի այս փոփոխությունը կտրուկ տեղաշարժեր է առաջ բերում խոշոր պետությունների արտաքին քաղաքական կեցվածքում և գործունեության մեջ:

Եթե տվյալ համատեքստում արևմտյան երկրների, մախլին խորհրդային տարածքի պետությունների և Հայաստանի անմիջական հարևանների տնտեսական և քաղաքական գործունեությանը հայաստանյան վերլուծական հրապարակումներում անդրադառնում են քավակահին հաճախ, ապա այս կապակցությամբ Ասիական-Խաղաղօվկիսանյան տարածաշրջանում (ԱՆՏ) տեղի ունեցող իրադարձություններին Հայաստանում անդրադառնում են օտարերկրյա մամլո հրապարակումների տեսանկյունից: Այս իրողությունը շատ անգամ քացառում է Հարավային Կովկասի վրա վերը նշված քաղաքատնտեսական տեղաշարժերի ազդեցության ամբողջական ընկալումը, քանի որ մեր տարածաշրջանում և դրա հարևանությամբ տեղի ունեցող վերադասավորումների ամբողջական պատկերից դուրս են մնում Չինաստանի, Հնդկաստանի և, որպես հետևանք՝ ԱՆՏ արագ տնտեսական և քաղաքական առաջընթացի հետևանքով տեղի ունեցած որոշակի զարգացումներ: Այն դեպքում, երբ հենց ԱՆՏ-ի սրընթաց զարգացման հետ կապված զանազան գործոններն են առաջացրել այս տեղաշարժերը Հարավային Կովկասում ներկա ուժային կենտրոնների ռազմավարական կեցվածքում և պատճառ են հանդիսանում արագորեն վափոխվող համագործակցության և գործընկերության զանազան վերածառնումների համար, որոնք, ըստ ամենայնի, կունենան երկարաժամկետ հետևանքներ: Այս հողվածում վորձ է արվում ներկայացնել համաշխարհային զարգացումներում տեղի ունեցող փոփոխությունները՝ ելնելով վերոհիշյալ տրամաբանությունից: Մեր վերլուծությունը հիմնականում կենտրոնանում է համաշխարհային էներգետիկ անվտանգության այն ասպեկտների վրա, որոնք զույսցել են Չինաստանի մակթային արդյունաբերության, մակթային պահանջարկի աճի և դրա արտաքին քաղաքական հետևանքների համադրությունից:

(Աղյուսակ 1) Նավթի համաշխարհային պաշարները 2004թ. դրությամբ/մյուր ռարել Աղբյուրը՝ OPEC Annual Statistical Bulletin (Vienna, Austria: OPEC, 2005)			
Հյուսիսային և Հավայի Ամերիկա	ԱՄՆ՝ 21,8	Մեքսիկա՝ 14,8	Վենեսուելա՝ 79,9
Արևմտյան եվրոպա	Նորվեգիա՝ 9,6	Մեծ Բրիտանիա՝ 4,5	
Արևելյան եվրոպա	Ռուսաստան՝ 90,1		
Մերձավոր Արևելք	Իրաք՝ 115	Սաուդյան Արաբիա՝ 264	ՄԱԷ՝ 97,8
Աֆրիկա	Լիբիա՝ 37	Նիգերիա՝ 35,9	
Ասիա	Չինաստան՝ 17,1		

Աղյուսակ 1-ում բերված են նավթի համաշխարհային հայտնի պաշարների վերաբերյալ OPEC-ի կողմից կատարված մոտավոր հաշվարկի տվյալները: Բացի ադուսակում նշված երկրներից, ներկայումս նավթի հարուստ պաշարներ ունեն մեծ Իրանը (132,5 մլրդ բարել), Բուվինյը (99 մլրդ բարել), Բաքարը (15,2 մլրդ բարել), Գաբոնստանը (39,6 մլրդ բարել) և մի շարք այլ երկրներ, որոնց պաշարները տատանվում են 0,5-ից 10 մլրդ բարելի սահմաններում: Այսպիսով, կարելի է փաստել, որ համաշխարհային նավթի հայտնի պաշարների գերակշիռ մասը կենտրոնացած է Մերձավոր Արևելքում: Բացի այդ նավթի հարուստ պաշարներ կան մեծ Ռուսաստանում, Աֆրիկյան մայրցամաքում, Հարավային Ամերիկայում և Կենտրոնական Ասիայում: Տնտեսության կառուցվածքային տեսանկյունից նավթի պաշարները կենտրոնացած են զարգացող կամ թերի զարգացած երկրներում, մինչդեռ նավթի սպառման հիմնական պահանջարկը, բնականաբար, առկա է զարգացած կամ արագ զարգացում ապրող երկրներում: Չարգացած երկրների տարածքում (ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Նորվեգիայում) առկա, ամենադյուրին և կայուն արտահանումներն ապահովող նավթի պաշարները վերջացում են: Նավթի և գազի արտադրության դինամիկան Սիանցյալ Նահանգներում, Չինաստանում և Հնդկաստանում կամ նվազում է, կամ գտնվում միևնույն մակարդակի վրա մախտրդ տարիների համեմատ, այն դեպքում, երբ էներգիայի սպառումն այս երկրներում կտրուկ աճ է արձանագրել: Գեֆիցիտը բավարարելու նպատակով այս երկրների կառավարությունները քայլեր են ձեռնարկում աշխարհի տարբեր տարածաշրջաններից համապատասխան ներկրումներ ապահովելու համար, ինչը նավթի վրջակետություն է առաջ բերում հատկապես Ասիական տարածաշրջանում:




Այս իրավիճակում զարգացած և զարգացող արդյունաբերական երկրները որոշակի կախվածության մեջ են ինչպես մեքսիկոյից, այնպես էլ վերջին երկու տասնամյակներում մավթի արահանումներն ավելացրած այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ռուսաստանը, Վենեսուելան, Նիգերիան և Մուդանը<sup>1</sup>։ Նավթային մատակարարումների հետ կապված իրավիճակը թևակոխել է մի փուլ, որտեղ մավթի մատակարարման իրավիճակն ամենամալկայունն է 1973թ. մավթային ճգնաժամից ի վեր։ Ներկայիս ճգնաժամը մալեզիայում կապված է էներգետիկների մատակարարման ժամկետային խնդիրների հետ<sup>2</sup>, քանի որ արդյի տնտեսական հարաբերությունների ինտենսիվ քննարկը ստիպում է միջազգային համայնքին ապահովել էներգետիկների կայուն ու անխափան, հետևաբար՝ մալեզիայի տարբերակված արդյունաբերությունը էներգամատակարարման համակարգ։

Վերածելով Չինաստանի և Հնդկաստանի ինդուստրիալիզացիային վառելիքի մեքսիկոյից պահանջարկի վերջին տարիների կտրուկ աճը, որոշ փորձագետներ գալիս են այն եզրակացության, որ տեսանելի ապագայում մավթի գները կսահայանեն անկանխատեսելի փոփոխությունների միտումը, պահանջարկ-առաջարկ համամասնության հավասարման պայմաններում, ամբարձրման պահանջարկ կլիմայական իրավիճակի, զանազան տնտեսական և քաղաքական ճգնաժամերի հետևանքներին մավթային շուկայի առավել զգայուն արձագանքներով պայմանավորված։ Այսպիսով, էներգետիկ անվտանգությունը կրկին գտնվում է միջազգային համայնքի ուշադրության կենտրոնում<sup>3</sup>։

Մավթային շուկայի կայունության գրավականը դարձնելով առաջին հերթին անվտանգության հետ կապված հարցերի գիտակցումը։ Ինչպես նշեցինք, միջազգային իրավիճակի այս փոփոխությունները ազդում են մավթի համաշխարհային գների վրա, որն իր հերթին անկայունության ազդանշաններ է առաջ բերում համաշխարհային տնտեսական աճի ապահովող մեքսիկոյի շուկայում։ Այսպես, օրինակ, 2006թ. հունվարի երկրորդ տասնօրյակում հուն մավթի մեկ քարեղի ֆյուչերսային գինը կազմեց 68 ԱՄՆ դոլար, մեկ շաբաթվա ընթացքում աճելով 7%<sup>4</sup>։ Իրանի միջուկային ծրագրի շուրջ և Նիգերիայում ծավալող իրադարձությունների հետ կապված<sup>5</sup>։

2003թ. սեպտեմբեր ամսին Նյու Յորքի առևտրական բորսայում հուն մավթի մեկ քարեղի միջին տարեկան գնի ստանդարտը կազմում էր 25 ԱՄՆ դոլար։ Կտրուկ աճ արձանագրելով՝ 2005թ. օգոստոս ամսին հուն մավթի գինը հասավ մոտ 70 ԱՄՆ դոլարի՝ հիմք հանդիսանալով զանազան վատատես մեկնաբանությունների՝ կապված ԱՄՆ և համաշխարհային տնտեսության զարգացման հետ։ Այսպիսի մեկնաբանությունները ելնում են այն համոզմանը, որ մավթային գների մասնօրինակ աճը 1973 և 1979թթ. էներգետիկ ճգնաժամների՝ ժամանակ հանգեցրեց

ԱՄՆ տնտեսական ռեցեսիային: Որոշ գնահատականներով՝ ներկայումս 70-ականների ռեցեսիային համարժեք ճգնաժամ կարող է առաջանալ եթե նավթի մեկ բարելի գինը հասնի 90 ԱՄՆ դոլարի սահմանը: Սակայն, լավատես մեկնաբանները դեմ են այս գնահատականներին և կամխատեսումներին՝ փաստելով այլ էներգետիկ աղբյուրների առկայությունը, մասնավորապես՝ հեղուկ բնական գազի (ՀԲԳ) աճող օգտագործումը զարգացած և զարգացող երկրների կողմից: Այնուամենայնիվ, ներքևում բերված գծապատկերի տվյալներից երևում է, որ հում նավթի գներն արդեն մոտ 3 տարի պահպանել են աճելու միտումը:



Հում նավթի գները 2004-2006թթ. (Աղբյուրը՝ New York Mercantile Exchange)

Հում նավթի գները 2004-2006թթ.

Փորձագետների որոշ մասը նշում է, որ նավթային գների աճը պայմանավորված է ոչ թե նավթային պաշարների մոտալուրտ վերջացմամբ ու, իբրև դրա հետևանք, պահանջարկի աճով, այլ OPEC-ի երկրների կողմից համաձայնեցված գնային քաղաքականությանը և նավթի արտահանման սահմանափակմամբ<sup>10</sup>: Մյուսները էներգետիկ ոլորտի հիմնական պրոբլեմը տեսնում են համաշխարհային տնտեսության արագ աճի պայմաններում համապատասխան էներգետիկ ենթակառուցվածքների հնացման, մաշման և անհամապատասխանության մեջ, հատկապես Ասիական տարածաշրջանում<sup>11</sup>, ինչպես նաև շատ երկրներում էներգետիկ անվտանգության պետական ռազմավարական ծրագրերի բացակայության մեջ:

Ընդհանուր առմամբ՝ վերլուծելով զանազան վտրձագիտական կարծիքներ, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ հեղուկ էներգակիրների շուրջ միջազգային իրավիճակի աշխուժացումը պայմանավոր-


ված է ոչ այնքան դրանց մատակարարման կամ առկայության նվազմամբ, որքան տարբեր ուժային կենտրոնների աշխարհաքաղաքական շահերի բախման կետերում համագործակցության նվազմամբ, տարածաշրջանային խնդիրներով և այլն: Չնայած նրան, որ նավթի որոնման և արտահանման տեխնոլոգիաների կիրառման նորամուտները նոր հնարավորություններ են ստեղծել էներգակիրների նոր աղբյուրների շահագործման համար (ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Ռուսաստանում, Ղազախստանում և Չինաստանում), սակայն, դրանց հետ կապված ծրագրերի իրականացումը մեծապես կախված է այս նավթային տարածքների շուրջ ընդհանուր հասարակական, քաղաքական և տնտեսական մթնոլորտից: Այս իրողությունը հատկապես վերաբերվում է Ասիական-Նախադոլկիանոսյան տարածաշրջանին (ԱՆՏ):

Ասիական-Նախադոլկիանոսյան Տնտեսական Համագործակցության (APEC) անդամ երկրների<sup>12</sup> էներգետիկայի նախարարների՝ 2004թ. հունիսին Սանիլայում կայացած 6-րդ հանդիպման ընթացքում ներկայացվեցին Ասիական-Նախադոլկիանոսյան էներգետիկ հետազոտությունների կենտրոնի (APERC) կողմից կատարված հետազոտության արդյունքները<sup>13</sup>: Հետազոտությունը հանգում է այն եզրակացության, որ ԱՆՏ տարածքի էներգետիկ կախվածությունը 1999-2020թթ. ընկած ժամանակահատվածում աճելու է մոտ 60% տարեկան մոտ 2%: Նույն ժամանակահատվածում ԱՆՏ էներգակիրների արտադրությունն աճելու է տարեկան 0.5%, իսկ կախվածությունը էներգակիրների ներմուծումից կաճի ներկայիս 36%՝ 2020թ. կազմելով 55%:

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ում բերված տվյալներից և դրա գծապատկերից Ասիական տարածաշրջանի երկրների նավթի սպառման ծավալներն անցյալ դարի 90-ականների վերջին՝ անցնելով Եվրոպական-Եվրասիական տարածքի երկրների սպառման ծավալներից, ներկայումս գրեթե հավասարվել են Հյուսիսային Ամերիկայի ցուցանիշին: Գծապատկերում երևում է նաև Չինաստանի նավթի սպառման ծավալների կտրուկ աճը 2001-2004թթ. ընթացքում: Օրինակ 2004թ. ՉՏՀ - նավթի սպառումը 2003թ. համեմատ աճել է 15.8%<sup>14</sup>: Նույն ժամանակաշրջանում նավթի արտադրության ծավալները Չինաստանում աճել են շատ ավելի դանդաղ տեմպերով: 2002թ. Չինաստանն, առաջ անցնելով Ճապոնիայից, նավթի սպառման ծավալներով գրավեց աշխարհում երկրորդ տեղը Միացյալ Նահանգներից հետո<sup>15</sup>:

(Աղյուսակ 2) Անհավան-Ֆրանսաբուլիանայում տարածաշրջանի մուլտիպլիկացիայի շուկայի ցուցանիշներ


Միջին տոմոս	Խնամական համաժողովարանի վարկեր										
	1994թ	1995թ	1996թ	1997թ	1998թ	1999թ	2000թ	2001թ	2002թ	2003թ	2004թ
Չինաստանի արտադրությունը	146.1	149	158.5	160.1	160.2	160.2	162.6	164.8	166.9	169.6	174.5
Չինաստանի սպառումը	149.5	160.7	174.4	185.6	193.3	207.2	230.1	232.2	246.9	266.4	308.6
Մալթիայի սպառումը	267.4	267.6	268.8	265	253.6	257.3	255.5	247.5	243.6	248.9	241.5
Հնդկաստանի սպառումը	67.4	75.2	81.1	86.5	92.5	100.3	106.1	107	111.3	113.1	119.3
Հունաստանի Ամբիկայի սպառումը	967.9	960.8	994.3	1012.3	1033.3	1058	1071	1071.6	1071.1	1092	1122.4
Եվրոպայի և Եվրասիայի սպառումը	946.6	939.1	930.9	936.1	942.7	937.9	929.5	934.6	931.4	940.8	957.3
Ասիայի սպառումը	809.2	854.5	891.3	926.6	906.6	948.3	983.2	984.2	1008.2	1037	1090.5



Անգլիա-Ֆրանսիայի էներգետիկայի տարածաշրջանի հաճախորդական շուկայի զարգացման հիմնական փոփոխությունները

ԱՄՆ-ը Անգլիա-Ֆրանսիայի էներգետիկայի տարածաշրջանի հետազոտությունների կենտրոնի կողմից 2002թ. հրատարակված «Էներգետիկայի շուկայում պահանջարկի 1999-2020թթ. կտրվածքով կատարված կախարհումների համաձայն, ԱՄՆ-ը անգամ երկրների էներգետիկայի պահանջարկի կառուցվածքում զգալիորեն մեծամասնություն է նվազեցնել, ինչը առաջին հերթին պայմանավորված է նրա էներգետիկայի արտադրության համազարկի մասնաբաժնի մեծացմամբ: Անգամ նախկին սպառումը նվազեցնելու ծրագրերի իրականացման դեպքում, որոնց մեջ մտնում են արդյունաբերությունում գազային էներգետիկայի կիրառումը, միջուկային էներգետիկայի զարգացումը, այլընտրանքային էներգետիկ աղբյուրների որոնումը և կիրառումը, տեխնոլոգիական նորամուծությունները և այլն, ներկայիս դրությամբ գրեթե անհնար է էականորեն նվազեցնել նախկին օգտագործումը զարգացող երկրների տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ավտոմոբիլային տրանսպորտը և նավթաքիմիական արդյունաբերությունը:

Վերջինիս դեպքում այս հանգամանքը կապված է նախկին վերանախնայման ցիկլի ընթացքում տարբեր արդյունաբերական դերի վաճառման արտադրության հանգամանքով: Քանի որ ԱՄՆ տարածաշրջանում կտրուկ աճում են ինչպես ավտոմոբիլային տրանսպորտի քանակը, այնպես էլ՝ նավթաքիմիական արդյունաբերության տարբեր ճյուղերը, հետևաբար անգամ այլընտրանքային էներգետիկ սպառման կառուցվածքի ձևավորման դեպքում, նախկին սպառումն աճելու է այլ էներգետիկայի սպառման աճի հետ մեկտեղ:



**ԱՄՏՀ ամրամն երկրների էներգետիկայի պահանջարկը**

Էներգետիկայի հայթայթման համար ծավալվող մրցակցությունը մտահոգություն է առաջացնում Միացյալ Նահանգներում, քանի որ դրա արդյունքում տեղի ունեցող քաղաքական վերադասավորումները կարող են վնասել ԱՄՏՀ-ում ԱՄՆ ռազմավարական շահերին: Այսպես, 2004թ. հունիսին ԱՄՆ Կոնգրեսի հետազոտությունների ծառայությունը (Congressional Research Service), վերլուծելով Հյուսիս-Արևելյան Ասիայում էներգետիկայի համար ծավալվող մրցակցությունը, մասնավորապես նշում է, որ ներկայումս համաշխարհային էներգետիկայի շուկայում տեղի ունեցող փոփոխությունները<sup>16</sup> պայմանավորված են Ասիական տարածաշրջանի էներգետիկայի պահանջարկով: Նշվում է, որ սա իր հերթին բխում է ԶԺՀ արագ տնտեսական աճի արդյունքում առաջացած էներգետիկայի մեծածախ պահանջարկից: Անդրադառնալով այս համատեքստում ԱՄՆ տարածաշրջանային շահերին հմարավոր վտանգներին՝ ծառայության վերլուծաբանները դրանց շարքում առանձնացնում են Ռուսաստանի Հեռավոր-Արևելյան էներգետիկայի պաշարների մատչելիությունն ապահովելու համար Չինաստանի, Կապոնիայի և Հարավային Կորեայի միջև ծավալված մրցակցությունը և, որպես դրա հետևանք, քաղաքական համագործակցության հմարավոր տեղաշարժերը: Նշվում է նաև, որ եթե այս երկրների համապատասխան քաղաքականության համատեքստում էներգետիկայի մատակարարման ապահովումը շարժապարհի տարածաշրջանի համընդհանուր անվտանգության համակարգին, ապա այս իրավիճակը շահերի բախում կարող է առաջացնել տարածաշրջանում: Միաժամանակ, ծառայության վերլուծա-

բաններն ԱՄՆ օրենսդրական և գործադիր մարմիններին այս կապակցությամբ շարադրված իրենց առաջարկություններում, խորհուրդ են տալիս քայլեր ձեռնարկելու համաշխարհային էներգակիրների մատակարարման հանգուցակետներում ԱՄՆ շահերի առաջնությունը պահպանելու նպատակով: Այս առումով օրինակ առաջարկվում է կանխել Չինաստանի և Հնդկաստանի կողմից ներկայումս ԱՄՆ կողմից ստեղծված ապահով մատակարարումների ցանցի «ամենատույց» շահագործումը, ինչպես նաև էներգակիրների ոլորտում համագործակցությունը խթանելու նպատակով նոր կապեր ստեղծել Չինաստանի, Հնդկաստանի, Հարավային Կորեայի և Շապոնիայի միջև<sup>17</sup>:

Ամերիկյան գիտական շրջանակների վերլուծությանը բնակամարտ արձագանք են գտնում Չինաստանի գիտահետազոտական հաստատություններում և մամուլում: «Ոլորշ արևմտյան վերլուծաբանների կարծիքով, էներգակիրների «մեծ պահանջարկը» Չինաստանում կվճարի համաշխարհային էներգակիրների կայունությունը, ինչպես նաև կխախտի նավթի և գազի աշխարհաքաղաքական հաշվեկշիռը: Այս տեսակետն արտացոլում է էներգակիրների մեծ սպառում ունեցող պետությունների շահադիտական մտորումները՝ իրենց անձնական շահերի պաշտպանության նպատակով»<sup>18</sup>: Բացի այդ, չին տնտեսագետները նավթի գնի կտրուկ բարձրացման պատճառը տեսնում են ոչ այնքան Չինաստանի աճող պահանջարկի մեջ, որքան խոշոր նավթային ընկերությունների կողմից արհեստական շուկայական շահարկումներում<sup>19</sup>:


Միաժամանակ, Միացյալ Նահանգների գիտահետազոտական շրջանակների կողմից առաջարկվում է Չինաստանին և Հնդկաստանին ներառել տարածաշրջանային էներգետիկ համագործակցության կառույցներում: Այսպիսի առաջարկներ է մասնավորապես հնչեցրել էներգետիկ ամփոփանքության ոլորտի հայտնի փորձագետ Սիկկալ Հերբերդը (ԱՄՆ Մենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի անդամների ճակատագրված իր գեկույցում<sup>20</sup>:

#### **Չինաստանի արտաքին էներգետիկ քաղաքականությունը**

Այսպիսով, վերոհիշյալից կարելի է փաստել, որ էներգետիկ ամփոփանքության ապահովման հարցը լրջագույն մարտահրավեր է Չինաստանի համար, քանի որ այն հարուցել է էներգետիկ պաշարների աշխարհի ամենախոշոր սպառողի՝ ԱՄՆ-ի մտահոգությունը: Ներկայումս հանդիսանալով էներգակիրների աշխարհի երկրորդ խոշորագույն սպառողը ԱՄՆ հետո՝ ՉԺՀ ավանդաբար ինքնաբավ է եղել էներգակիրների մատակարարման ապահովման հարցում: Երկրի հարուստ ածխի հանքավայրերը թույլ են տվել զարգացնելու ածխի վրա հիմնված էներգետիկայի ճյուղերը: Ներկայումս ածուխը կազմում է Չինաստանի էներգա-

կիրների սպառման մոտ երկու երրորդը: Միաժամանակ Չինաստանի կառավարությունը վերջին տարիներին որոշում ընդունեց ընդլայնելու հեղուկ բնական գազի (ՀԲԳ) կիրառումն արդյունաբերության մեջ՝ մավթից կախվածությունը նվազեցնելու, ինչպես նաև էկոլոգիական մալուխը: 60-ականների կեսից Չինաստանը հանդիսացել է Ասիական տարածաշրջանի ամենախոշոր մավթային արդյունահանող երկիրը՝ վերջին տարիների ընթացքում արտադրելով մոտ 3 մլն բարել օրեկան: 1980-ականների սկզբից ընթացող արագ տնտեսական վերելքը աստիճանաբար առաջացրեց մավթի պահանջարկի սրընթաց աճ: Արագ տնտեսական զարգացման արդյունքում մավթի պահանջարկը 1985-1995թթ. կտրվածքում կրկնապատկվեց՝ օրեկան մոտ 1.7 մլն բարելից աճելով մինչև 3.4 մլն բարել և 2004թ. դրությամբ հասնելով մոտ 6.6 մլն բարել օրեկան (կամ 308.6 մլն ստմա) սահմանին<sup>21</sup>: Ներկայումս Չինաստանի մավթային ներմուծումները կազմում են պահանջարկի մոտ 40%:

Չինաստանի հում մավթի ներմուծումը և արտահանումը 1992-2004թթ. Աղբյուրը՝ ՉԺՀ մաքսային վիճակագրություն



Չինաստանի էներգետիկ անվտանգության խնդիրները ընմելիս՝ հարկ է դիտարկել այն միտումը, որ եթե 1985թ-ին Չինաստանը հանդիսանում էր Արևելյան Ասիայի մավթի առաջին արտահանողը, ապա այսօր նա արդեն առաջին ներմուծողն է, իսկ մինչև 2020թ. չինական մավթային կարիքները պահանջելու են տարեկան մավթի այնքան քանակության ներկրումներ, որքան տարեկան արդյունահանում է Աստույան Արաբիան: Չնայած, որ Չինաստանն ունի ՀԲԳ զգալի պաշարներ, զանազան կանխատեսումներով 2010 թվականի դրությամբ ՀԲԳ պահանջարկը նույնպես կգերազանցի ՉԺՀ սեփական արտադրության ծավալները:



Վերտիչյայից բխում է, որ չմայած էներգետիկ կախվածությունը նվազեցնելու ջանքերին, Չինաստանը կախվածության միտումը շարունակվելու, իսկ զանազան էներգակիրների ներմուծման ծավալները աճելու են: Այս միտումն ունի վճռորոշ նշանակություն Չինաստանի ամբողջ կենսագործունեության և քաղաքականության համար: Ինտենսիվ ուղղակի ներդրումների արդյունքում սրընթաց արդյունաբերական զարգացումը 2003-2004թթ. դրությամբ Չինաստանի որոշ արդյունաբերական մասնագետներում առաջացրեց էնկտրակամության հովհարային անջատումներ<sup>22</sup>: Այս իրողությունը վնասում է ոչ միայն Չինաստանի արդյունաբերությանը, այլև այս երկրում տարեկան մոտ 50 մլրդ արտաքին ներդրում կատարող օտարերկրյա ներդրողներին:


Երկրի ներսում դեռևս գոյություն ունի տեսակետ, համաձայն որի պետք է շարունակել սեփական ռեսուրսների հաշվին տնտեսական պահանջմունքների բավարարման գիծը՝ մեծացնելով ներքին մակրո և գազային հանքերի արդյունահանման ծավալները և միաժամանակ զարգացնելով այլ էներգետիկ արդյունքներ՝ էներգետիկ ինքնուրույնությունը պահպանելու նպատակով: Բացի դրանից, այդ տեսակետը հաշվի է առնում այն պատմական փորձը, որ Արևմուտքի էներգետիկ կախվածությունը Միջին Արևելքից բերեց ի վերջո 1970-ականներին մավթային էմբարգոյի կիրառմանը, իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունները խորհրդային շրջանում հայտնվեցին փակուղային վիճակում: Ենթադրյալով իրավիճակների կրկնության հավանականությունը լուրջ սպառնալիքներ կառաջացնի Չինաստանի ազգային և տնտեսական անվտանգության համար: Այս տեսակետը պնդում է, որ էներգետիկ կախվածությունը ժամանակակից գլոբալ շուկայում անխուսափելի երևույթ է. ուստի, պետք է ապահովել Չինաստանի և նրա մավթային ընկերությունների ներկայությունը խոշոր մավթային շուկաներում:

Ներկայումս Չինաստանը ներմուծում է իր մավթը 20 երկրներից: 2004-05թթ.-ին Չինաստան ներմուծվող մավթի 60% գալիս էր հինգ երկրից՝ Սաուդյան Արաբիա, Օման, Անգոլա, Իրան և Ռուսաստան: Ընդ որում, 2004թ. Ռուսաստանից մավթային ներկրումները 2003թ. հետ համեմատ կրկնապատկվել էին՝ հասնելով 10.77 մլն. տոննայի: Սակայն, Մերձավոր Արևելքի տարածաշրջանը շարունակում է ներառել շինական մավթային ներկրման արդյունքների շուրջ 40%: Աֆրիկյան մայրցամաքից եկող ներկրումները կազմում են մոտ 20%: Մոտակա տարիներին Չինաստանի համար մավթային ներկրումների խոշոր արդյունքներ կդառնան Ռուսաստանը (խողովակաշարով և երկաթուղով), Միջին Ասիական (խողովակաշարով) և Աֆրիկյան<sup>23</sup> երկրները, ինչի մասին կխոսվի հաջորդիվ:

(Աղյուսակ 3) Չինաստանի հում նավթի ներկրման աղբյուրները (%)  
Աղբյուրը՝ ՉԺՀ մարտային վիճակագրություն

Տարածաշրջան \ Տարեթիվ	1999	2000	2001	2002	2003	2004
Սերձավոր Արևելք	46.1	53.5	56	49.5	50.8	45.4
Աֆրիկա	19.8	24.1	22.7	22.7	24.3	28.7
Ասիական-Ֆալաջովկ. Տ.	18.6	15.1	14.4	17	15.2	11.5
Եվրոպա և Արևմտյան Կիսագունդ*	15.4	7.2	6.9	10.6	9.5	14.3

\*Պան Ռուսաստան, Ղազախստան, Բրազիլիա, Արգենտինա, Վենեսուելա, Նորվեգիա



Միաժամանակ, 2004թ. Չինաստանի հարավային նահանգներում սկսվել է նավթի ռազմավարական պահեստի ենթակառուցվածքների շինարարությունը, որտեղ հնարավոր կլինի կուտակելու մոտ 20-30 օրվա նավթային պաշարներ: Հետագայում այս հզորությունները ծրագրվում է մեծացնել<sup>24</sup>:

Էներգակիրների պահանջարկի կտրուկ աճով առաջացած կախվածությունը արտաքին ներկրումներից ակտիվություն է առաջ բերել Չինաստանի էներգետիկ դիվանագիտության օրագարկում, ինքանելով էներգետիկ համագործակցության իրականացման տեմպերը<sup>25</sup>: Ինչպես

արդեն նշվեց՝ Չինաստանի էներգետիկ անվտանգության համար առաջնահերթ նշանակություն ունի Մերձավոր Արևելքի տարածաշրջանը և Չինաստանի կախվածությունը նավթային ներկրումներից ստիպում է Չինաստանին ակտիվացնելու դիվանագիտական ջանքերն այս տարածաշրջանում: 2004թ. ՉԺՀ նավթային ներկրումների ավելի քան 45% իրականացվել է մերձավորարևելյան երկրներից: Միայն Իրանից իրականացված նավթի ներկրումները 2004թ. կազմեցին ՉԺՀ ընդհանուր նավթի ներկրումների 11%: Չինաստանն ու Իրանը ստորագրել են մոտ 70 ԱՄՆ դոլարի գումարի յափավ նավթի և գազի արդյունահանման և առևտրի ոլորտում համագործակցության համաձայնագիր, որով Չինաստանը պարտավորվել է մասնակցել հսկայական Յադավարան նավթադաշտի զարգացմանը և 30 տարվա ընթացքում զնել 250 մլն տոնա ՀԲԳ, իսկ Իրանը՝ օրեկան Չինաստան արտահանելու 150 հզր բարել նավթ<sup>26</sup> 25 տարվա ընթացքում<sup>27</sup>: Ի լրումն դրա, շինական «Աինոպեկ» ընկերությունը 2004թ. ձեռք է բերել իրավունք շահագործելու Սաուդյան Արաբիայի ալ-Խալի ավազանի բնական գազի հանքերը: Հատկանշական է, որ սաուդյան նավթի մատակարարումները Չինաստանին աճում են, մինչդեռ ԱՄՆ-ի դեպքում դրանք նվազում են:

Չինաստանը հանդես է բերում նաև աճող հետաքրքրություն ավելի հեռավոր տարածաշրջաններից, մասնավորապես՝ Աֆրիկայից և Հարավային Ամերիկայից, էներգակիրների ներմուծման գործում: Այսպես, չինական CNPC ընկերությունը Աուդանում տնօրինում է նավթային կոնտրոլումի 40%՝ այնտեղից օրական արտահանելով մոտ 300 հզր. բարել նավթ: ՉԺՀ-ն շահագործված է նաև այլ աֆրիկյան երկրների, մասնավորապես՝ Անգոլայի, Հասարակածային Գվինեայի էներգետիկ պաշարների արտահանման մեջ: Հարավային Ամերիկայում Չինաստանը համագործակցություն է էներգետիկ բնագավառում հաստատել Բրազիլիայի, Էկվադորի և Վենեսուելայի հետ<sup>28</sup>:

Այստեղ հարկավոր է նշել, որ «էներգետիկ անվտանգության» հասկացությունն իր մեջ ներառում է ոչ միայն էներգակիրների աղբյուրների ձեռք բերման, այլ նաև մինչև օգտագործման վայր դրանց անվտանգ տեղափոխման տարրը: Չինաստանի աճող կախվածությունը Միջին Արևելյան նավթային ներկրումներից հարուցում է ՉԺՀ դեկալարության մտահոգությունը Հնդկական Օվկիանոսից Հարավ-Չինական ծով տանող ծովային ուղիների ապահովության կապակցությամբ: Փաստորեն Չինաստանի ամբողջ միջինարևելյան նավթը (ինչպես նշել էինք վերևում՝ 2004թ. կազմել է ներկրումների մոտ 45%) Չինաստան է բերվում Մալայան նեղուցով, որով անցնում է աշխարհի բոլոր նավթանավերի 15%<sup>29</sup>:

Չինաստանի արտաքին քաղաքականության ծրագրավորողները լավ են գիտակցում Հնդկական օվկիանոսի նշանակությունը ամբողջ Ա-

սիական-հարադավկիանոյսան տարածաշրջանի համար, քանզի Հնդկական օվկիանոսի ավազանում են անցնում ԱԽՏ-ի ծովային տեղափոխումների մայրուղիները: Միացյալ Նահանգները ի վիճակի են զսպել Չինաստանի գործողությունները Արևելյան Ասիայի տարածաշրջանում հենց նավթային արգելանքի հաստատման կամ Չինաստանի համար կենսական նշանակություն ունեցող Մալաքայի նեղուցների շրջափակման քայլերով: Սակայն, այս տեսակետը հաշվի չի առնում այն հանգամանքը, որ Չինաստանում քաջ գիտակցում են ներկայիս համաշխարհային տնտեսության փոխլրացնող և փոխկապակցված բնույթը: Չինաստանը ներկայումս հանդիսանում է ԱՄՆ ամենախոշոր արդյունաբերական ընկերություններից մի քանիսի հիմնական պատվիրատուն, ինչպես նաև տարեկան գնում է ԱՄՆ զանազան տարաբնույթի պարտատմաների քավակահին զգալի չափաբաժին: Եթե հաշվի առնել երկու երկրների փոխարարձ շահագրգռվածությունը, քաղաքական երկխոսության մակարդակը, տնտեսական կապերի ծավալները և էներգետիկ ոլորտում տեխնոլոգիաների զարգացումը, ապա տվյալ հարթությունում ուղղակի առնականումն ԱՄՆ և ՉԺՀ միջև գրեթե անհնար է: Սակայն, քանի, որ Չինաստանի ակտիվությունը էներգակիրների շուկայում պայմանավորված է ներկայիս համաշխարհային շուկայական հարաբերությունների տրամաբանությամբ, որտեղ ցանկացած տեսակի դիվերսիֆիկացումն ապահովում է հարաբերությունների կայունությունը, ՉԺՀ կշարունակի այս ուղղությամբ ջանքեր գործադրել և հակված կլինի իր էներգետիկ անվտանգությունն ապահովելու նոր տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների միջոցով, օրինակ՝ Շանհայի Համագործակցության Կազմակերպության անդամների՝ Ռուսաստանի և Ղազախստանի հետ փոխշահավետ էներգետիկ համագործակցության ձևով:

2006թ. ապրիլի վերջին սկսվեց Ռուսաստանի Արևելյան Արբիթրից Ասիական տարածաշրջան նավթի արտահանման խողովակաշարի շինարարությունը: Խողովակաշարը Իրկուտսկի շրջանի Թալշետ քաղաքի մոտ գտնվող նավթի հանքավայրը միացնելու է Ռուսաստանի հեռավորարևելյան ծովափնյա Նախտղկա քաղաքի մոտ գտնվող Պերեվոզնայա նավահանգստին: Խողովակաշարով տարեկան հնարավոր կլինի տեղափոխել տարեկան 80 մլն տոնա նավթ<sup>30</sup>: Նավթի հիմնական գնորդները կլինեն Չինաստանը, Վապոնիան և Հարավային Կորեան: Ծրագրի ընդհանուր գինը կազմելու է մոտ 15 մլրդ ԱՄՆ դոլար: Այս նախագծի իրականացման առանձնահատուկ կարևորությունը կայանում է նրանում, որ ինչպես Չինաստանը, այնպես էլ Վապոնիան, որը Մերձավոր Արևելքից ներկրում է իր նավթային պահանջարկի մոտ 90%, ստանում են նավթային ներկրումների այլընտրանքային աղբյուր՝ նվազեցնելով իրենց կախվածությունը Հնդկական օվկիանոսով անցնող ծովային ուղիներից: Բա-

ցի այդ, մավթամուղի առանձին ճյուղ է կառուցվելու դեպի Չինաստան, որը ռուսական Սկոլոտոդինո քաղաքից կձգվի մինչև շինական Դ-ացինը:

Այս փաստն ուշագրավ է այն առումով, որ 90-ականների վերջին Միջին Արևելքի մարտերից հանրապետության հարավում կառուցվող մավթամուղի շինարարության ծրագրերը մի քանի անգամ վտիոխություն են կրել: Սկզբում համաձայնվելով մավթամուղի անցկացնել Չինաստանով, որի դեպքում ՉԺՀ-ն կստանար մավթի գնման որոշակի առավելություն այլ երկրների նկատմամբ, Ռուսաստանն այնուհետև բանակցություններ սկսեց Վասպուրիայի հետ մավթամուղի դեպի Խաղաղ օվկիանոսյան ափ անցկացման վերաբերյալ: Չնայած, որ մավթամուղի այնուամենայնիվ կառուցվելու է դեպի Խաղաղօվկիանոսյան ափ, սակայն, 2006թ.-ի մարտին Ռուսաստանի և Չինաստանի միջև ստորագրվեց ենթակառուցվածքային համագործակցության համաձայնագրերի փաթեթ, ըստ որի բացի վերևում նշված մավթամուղի ճյուղավորումից, Ռուսաստանից Չինաստան կանցկացվեն երկու գազամուղ՝ տարեկան համապատասխանաբար 60 և 80 մլրդ խր/մ հզորությամբ: Գազի առաջին խմբաքանակը սպասվում է 5 տարի հետո<sup>31</sup>: Ինչպես նշել էինք Չինաստանում մեծանում է նաև բնական գազի պահանջարկը, որն այսօր կազմում է ենթակառուցվածքային 3%: Այս առումով հեռանկարային է համարվում Ռուսաստանի Իրկուտսկի շրջանում գտնվող Կովինկոս գազային հանքերի համալիրը, որը փաստացի տվյալներով այսօր աշխարհի ամենամեծ գազի հանքն է: Ընդհանուր առմամբ, Արևելյան Միջինում առկա գազի խոշորագույն հանքերը (մոտ 915 մլրդ խորանարդ մետրի հասնող պաշարներով) կունենան լուրջ ներդրություն Չինաստանի, ինչպես նաև ամբողջ Հյուսիս-Արևելյան Ասիայի երկրների զարգացման վրա: Սպասվում է, որ 2006 թվականին Չինաստանը ներկրելու է Ռուսաստանից 15 մլն. քարե նավթ:

Ներկայիս և ապագա ռուսական վարչակարգերի համար դեպի Չինաստան, ինչպես և ամբողջ Արևելյան Ասիայի շուկաներ ռուսական ենթակառուցվածքային արտահանումը ձեռք է բերում բացառիկ նշանակություն շուկաների դիվերսիֆիկացման տեսանկյունից: Բացի այդ, տվյալ նախագծի իրականացումը կմեղմացնի Հյուսիս-Արևելյան Ասիայի երկրների մրցակցությունը Միացյալ Նահանգների հետ արդեն մերձավորարևելյան մավթային ռեսուրսների համար, ինչը զսպող ազդեցություն կունենա նաև համաշխարհային մավթային զննելի համար:

Չինաստանի համար ենթակառուցվածքային կարևորագույն աղբյուր է դառնում Կենտրոնական Ասիան, որը կապահովի Չինաստանի ավելի մվազ ենթակառուցվածքային ինչպես մերձավորարևելյան երկրների, այնպես էլ Ռուսաստանի ենթակառուցվածքային: Չինաստանը տեսնում է Լազախաստանը որպես մավթի և գազի մատակարարումների ավելացման կարևոր աղբյուր ու տարանցիկ ուղի:

2005թ. դեկտեմբերին ավարտվեց Ղազախստանից Չինաստան Աթատու-Ալաշանքու 1000 կմ մակթամուղի շինարարությունը, որով հնարավոր կլինի Ղազախստանից Չինաստան տարեկան 20 մլն տոննա (140 մլն ռարեյ) մավթ արտահանել, իսկ 2005թ. հոկտեմբերին Չինաստանի Ազգային Նավթային Ընկերությունը (CNPC) 4.2 մլրդ դոլարով ձեռք բերեց կանադական Պետրոկազախստան (PetroKazakhstan) ընկերությունը, որը Ղազախստանում ունի մավթի հարուստ հանքավայրեր<sup>32</sup>։ Մա մինչ այժմ որևէ չինական ընկերության ամենախոշոր ձեռքբերումն է արտասահմանում։ Չինաստանի Ազգային Նավթային Ընկերության կողմից Պետրոկազախստանի ձեռքբերումից հետո միայն մեկ անսկա ընթացքում մավթի արտադրության ծավալները օրեկան 150 հզո ռարեյից հասան 200 հզո ռարեյի<sup>33</sup> (2004թ. Չինաստանը ներկրել է օրեկան 6.6 մլն ռարեյ մավթ)։ Փաստորեն, ի տարբերություն ռուսական, դազախական մավթի Չինաստան ներմուծման մախագիծը, որի արժեքը մոտ 10 մլրդ ԱՄՆ դոլար է, արդեն կյանքի է կոչվել։ Այդ մախագիծը Ղազախստանի համար աշխարհաքաղաքական այլընտրանք է ինչպես Թեմզիզ-Նովո-ռուսիյսկ, այնպես էլ Բաքու-Չեյխան մավթամուղերին։

Ռուսական Ռոսնեֆտ և Տրանսնեֆտ ընկերությունները 2006թ. ապրիլին, չսպասելով Թայշեռ-Նախոդկա մավթամուղի շինարարության ավարտին, սկսեց մավթի մատակարարումները Չինաստան նորակառույց Աթատու-Ալաշանքու մավթամուղով<sup>34</sup>։ Ծրագրվում է այս տարվա ընթացքում մատակարարումների ծավալները հասցնել օրեկան 1.3 մլն տոննայի։ Այս փաստերը վկայում են այն մասին, որ ներկայիս դրությամբ հանգուցալուծում են ստացել Ռուսաստանի և Չինաստանի միջև Ղազախստանում այս համառոտեքստում հնարավոր մրցակցության խնդիրները։ Մեր կարծիքով՝ այս երկրների միջև հաջող համագործակցության զբաղակաան են արդեն մոտ 10 տարի ընթացքով տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացները։

Այսպիսով, երկրորդ վերևում ներկայացված տվյալներից և կատարված վերլուծությունից, մենք կարող ենք համզել այն եզրակացության, որ էներգետիկ անվտանգության հետ կապված նոր միջազգային իրավիճակում Չինաստանը շարունակելու է քանքեր գործադրել իր էներգետիկ անվտանգության ապահովման և տնտեսական զարգացման համար անհրաժեշտ էներգետիկ ձեռքբերման գործում։ ԳԺՀ պետք է լիովին օգտագործի էներգետիկ պահանջարկով ստեղծված պատմական հնարավորությունը ստրատեգիական գնորդի իր առավելությունը լավագույնս օգտագործելու և այլ երկրների հետ համագործակցությունն ամրապնդելու նպատակով<sup>35</sup>։ Այս իրավիճակում մավթ արտահանող և մավթ սպառող երկրների միջև հարաբերություններում հնարավոր է զարգացումների երկու սցենար՝ ինտեգրացիա կամ առճակատում։ Միևնույն ժամանակ օբյեկտիվ աշխարհաքաղաքական և տնտեսական

իրողությունները պարտադրելու են ինչպես Չինաստանի, այնպես էլ յուրաքանչյուր այլ միջազգային խոշոր դերակատարի էներգետիկ անվտանգության ապահովման համար միացյալ ռաջիոնալ միջազգային ռազմավարության մշակում և իրագործում:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերոհիշյալ քայլերն իրենց լուրջ ազդեցությունն են քողարկում Հարավային Կովկասի տարածաշրջանում ըմբռցող գարգացումների վրա՝ հաշվի առնելով տարածաշրջանի դիրքը, դերակատարումը և նշանակությունը միջազգային էներգետիկ խաղաղաշուտում: Անդրադարձները Հարավային Կովկասի համար կունենան երկարաժամկետ բնույթ, քանի որ դրանք փոփոխություններ են մտցնում մեր տարածաշրջանում առկա հիմնական ուժային կենտրոնների պահվածքում: Էներգետիկ անվտանգության առանձնահատուկ կարևորությունը կարող է ինչպես մեղմացնել, այնպես էլ սրել մրցակցությունը էներգակիրների մատակարարման այնպիսի մայրուղիների շրջանում, ինչպիսին է Բաքու-Ջեյհան նավթամուղը: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության փոխկապակցված բնույթը, ինչպես նաև տնտեսության անվտանգության դերը գրեթե բոլոր երկրների ազգային անվտանգության համար, այս գործընթացները առաջին հերթին իրենց կղրևորեն որպես լարվածության գսպման մեխանիզմ:

MNATSAKAN SAFARYAN and SUREN BAGHDASARIAN

THE FACTOR OF ENERGY SECURITY UNDER THE CURRENT INTERNATIONAL DEVELOPMENTS: CHINA'S CASE

This paper discusses the issues of China's energy security under the light of the strengthening international competition for the hydrocarbons, which assumes strategic importance for all big international actors, and especially for China. Here are considered some of the aspects of international politics that came into light by the rapid change of world crude oil demand and supply equilibrium, and the implications thereupon. A special attention is paid to the issue of the energy security of China as one of the decisive factors of today's world economy and world politics. Describing the current trends in oil and natural gas market, the relations of China in energy area with its major partners, the authors come to a conclusion that China is seriously concerned with the issue of its own security energy and will continuously make further efforts to secure stable supply of oil necessary to satisfy the country's growing economy. The paper also considers some of the repercussions of these processes on South Caucasus.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Էներգետիկ անվտանգությունը» տարրեր տեսակի էներգիայի ամխափամ մատչելիությունն է քաղաքար քանակով և մատչելի գներով (United Nations Development Program, 2000)
2. Zhao, Hongtu New Features of Int'l Energy Security Situation, Contemporary International Relations, Vol. 15 No. 7, July 2005, China Institutes of Contemporary International Relations, Beijing, China, p. 20.
3. Bechner, Lionel, Global Oil Trends, December 30, 2005, Council on Foreign Relations: [http://www.cfr.org/publication/9484/global\\_oil\\_trends.html](http://www.cfr.org/publication/9484/global_oil_trends.html).
4. Kiesow, Ingolf, Quest for Oil and Geostrategic thinking, Energy and Security, The China and Eurasia Forum Quarterly, Volume 3, No.3, November 2005, Central Asia-Caucasus Institute & Silkroad Studies Program.
5. Bremner, Ian, Prices transform oil into a weapon, August 27, 2005, International Herald Tribune: <http://www.ihf.com/articles/2005/08/26/news/edbremmcr.php>
6. Running on empty? Prospects for future oil supplies, No. 14 November 2000, Baker Institute Study, James A. Baker III Institute for Public Policy of Rice University, p. 1
7. Zhao, Hongtu, New Features of Int'l Energy Security Situation, Contemporary International Relations, Vol. 15 No. 7, July 2005, China Institutes of Contemporary International Relations, Beijing China, p. 20
8. Sacfong, Myra, Crude sets fresh four-month high: Iran and Nigeria concerns send oil above \$67 a barrel, January 20, 2006, Market Watch
9. 1973 և 1973 թվականների էներգետիկ ճգնաժամների պատճառն էին համապատասխանաբար Արաբ-իսրայելական պատերազմի և իրանական հեղափոխության հետ կապված նավթային մատակարարումների խափանումները
10. Эдельмен, Морри, Подлинные проблемы нефтяного рынка (MIT), Regulation, "The Cato Institute", Vol. 27. № 1 (Spring 2004)
11. Morse, Edward L. and Jaffe, Amy Myers, Strategic Energy Policy Challenges for 21<sup>st</sup> Century, Report of Independent Task Force Cosponsored by James A. Baker III Institute for Public Policy of Rice University and Council on Foreign Relations, Council on Foreign Relations Press, p. 4: <http://www.cfr.org/content/publications/attachments/Energy%20TaskForce.pdf>
12. ԱՆՏՀ անդամ երկրներն են Ավստրալիան, Բրունեյը, Կամբոջան, Ինդոնեզիան, Վատրիան, Մալայզիան, Նոր Զելանդիան, Ֆիլիպինները, Սինգապուրը, Վարավային Կորեան, Թայլանդը, Միացյալ Նահանգները, Չինաստանը, Սերիլանդ, Պապուա Նոր Գվինեան, Չիլի, Պերուն, Ռուսաստանը, Վիետնամը, ինչպես նաև Սյանգանը և Թայլանդ՝ որպես առանձին տնտեսական տարածքներ
13. Fujitomy, Masaharu, APEC Energy Outlook and Security Issues, Presentation, June 2004, APERC: [http://www.ieej.or.jp/aperc/pdf/APERC\\_EMM\\_Summary.pdf](http://www.ieej.or.jp/aperc/pdf/APERC_EMM_Summary.pdf)
14. BP Statistical Review of World Energy, June 2005, p. 9
15. Ibid



16. Rising Energy Competition and Energy Security in North East Asia: Issues for US Policy, July 14, 2004, CRS Report for Congress, Congressional Research Service, Library of Congress: <http://ncseonline.org/NLE/CRSreports/04Jul/RL32466.pdf>
17. Morse, Edward L., The US and the Changing Geopolitics of Asian Energy, Presentation, Conference on Asian Energy Security and Implications for the US, September 29, 2004, National Bureau of Asian Research: <http://www.nbr.org/programs/energy/conferences/2004/presentations/morse.pdf>
18. Zhao, Hongtu, New Features of Int'l Energy Security Situation, Contemporary International Relations, Vol. 15 No. 7, July 2005, China Institutes of Contemporary International Relations, Beijing China, p. 26
19. People's Daily Overseas Edition, China's Oil Import Not to Blame For Global Price Hike, November 2005, Front Page: [http://english.people.com.cn/200511/28/eng20051128\\_224278.html](http://english.people.com.cn/200511/28/eng20051128_224278.html)
20. Herberg, Mikkal E., Asia's Energy Insecurity, China, and India: Implications for the US, July 26, 2005, Testimony, United States Senate Committee on Foreign Relations, p. 15-16: <http://www.senate.gov/~foreign/testimony/2005/HerbergTestimony050726.pdf>
21. BP Statistical Review of World Energy, June 2005, p. 9
22. Ailing, Zhang, Yanjia Wang and Alun Gu, Energy Updates of 2003-2004 in China, May 2004, Tsinghua University, Beijing China, Asian Energy Security Workshop organized by the Nautilus Institute for Security and Sustainability of Berkeley, California in collaboration with the Energy and Environmental Technology Center (EETC) at Tsinghua University, Beijing, China: <http://www.nautilus.org/archives/energy/AES2004Workshop/papers.html>
23. Herberg, Mikkal E., Asia's Energy Insecurity, China, and India: Implications for the US, July 26, 2005, Testimony, United States Senate Committee on Foreign Relations, p.5: <http://www.senate.gov/~foreign/testimony/2005/HerbergTestimony050726.pdf>
24. Storey, Ian, China's "Malacca Dilemma", China Brief, Volume VI, Issue 8, April 12, 2006, The Jamestown Foundation, p. 5
25. Շաո, Հոնգթու, Էներգետիկայի անվտանգության միջազգային իրավիճակը և Չինաստանի էներգետիկ ղիվանագիտությունը, Ամերիկյան միջազգային ուսումնասիրության կենտրոնի հրատարակած 2004/2005 Չինաստանի արդի միջազգային հարաբերությունների ինստիտուտ, էջ 45 (չինարեն, քարգամաձևով) Մնացածը Սաֆարյանի)
26. Համաձայնության համար՝ 2004թ. Չինաստանն օրհկան մերձուծել է 2.5 մլն քարիկ օրհկան:
27. Zweig, David and Bi, Jianhai, China's Global Hunt for Energy, Foreign Affairs, September/October 2005, Volume 84, Number 5, Council on Foreign Relations, p. 28-29
28. Չինաստանը պարտավորվել է մերձուծել 350 ԱՄՆ դոլար Վենեսուելայի նավթային ենթակառուցվածքների զարգացմանը և 60 մլն ԱՄՆ դոլար զազային նախագծերում
29. Storey, Ian, China's "Malacca Dilemma", China Brief, Volume VI, Issue 8, April 12, 2006, The Jamestown Foundation, p. 4

30. Radio Free Europe, Russia Starts Construction of Asian Oil Pipeline, April 28, 2006.
31. Sam, Knight, Putin fails to satisfy China's hunger for energy, Times Online, March 21, 2006.
32. The Associated Press, China Says Pipeline with Kazakhstan Complete, Hails Prospects for Closer Cooperation, Shanghai, China, 14 December, 2005.
33. An Bei, PetroKazakhstan Inc. fine after CNPC's takeover, Xinhua, Beijing, 13 January, 2006.
34. Blagov, Sergei, Russian Oil to flow to China even before pipeline completed, Eurasia Daily Monitor, Volume 3, Issue 84, 1 May, 2006, The Jamestown Foundation, p. 5.
35. Zhao, Hongtu, New Features of Int'l Energy Security Situation, Contemporary International Relations, Vol. 15 No. 7, July 2005, China Institutes of Contemporary International Relations, Beijing China, p. 26.

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԵՋՄԵԹԹԻՆ ԷՐԲԱՔԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԵՍԵԼԸ ԵՎ  
«ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1960 թ. ռազմական հեղաշրջմամբ թուրքիայում սկսվեց մի նոր ժամանակաշրջան, որն ընդունված է անվանել Երկրորդ հանրապետություն: 1961 թ. գինվորականների անմիջական հսկողությամբ ստեղծված երկրորդ սահմանադրությունն ամենախաղեսպ ազատություններ սահմանեց երկրում, որոնց շրջանակներում էլ ընթացան հետագա քսան տարիների քաղաքական գործընթացները: Քաղաքական քառերաբեմից հենացված Դեմոկրատական կուսակցությանը (հետայսու՝ ԴԿ) փոխարինեց Արդարություն կուսակցությունը (հետայսու՝ ԱԿ): Մուլեյման Դեմիրելը, ստանձնելով վերջինիս ղեկավարությունը, երկակի սկզբունքներ կիրառեց իսլամական շարժումների նկատմամբ: ԱԿ-ին մեծապես աջակցում էր մեծ հեղինակություն վայելող նորջու կոռնական միաբանությունը:

Միաժամանակ մաքըբենդի միաբանության անաջնորդներից մեկը՝ շեյխ Սեհնեթ Ջանիթ Քոթթուն, ձեռնամուխ եղավ իսլամական գաղափարական սկզբունքների վրա հիմնված կուսակցության ստեղծման աշխատանքներին: Հենց նրա խրախուսմամբ քաղաքական քառերաբեմ մուտք գործեց Նեջմեթթին Էրբաքանը, որն էլ հետագա երեք տասնամյակների ընթացքում կարևոր դեր խաղաց երկրի քաղաքական գործընթացներում: Դեմիրելի հետ Էրբաքանի անաջին ընդհարումը տեղի ունեցավ վերջինիս՝ Առևտրական պալատի նախագահ ընտրվելուց հետո, երբ Դեմիրելը հարցականի տակ դրեց քվեարկության արդյունքները: Ավելին, Դեմիրելն Էրբաքանին զրկեց խորհրդի անդամության իրավունքից: Էրբաքանի աջակիցները յոթշեցին հակահարված տալ Դեմիրելին՝ գալիք խորհրդարանական ընտրություններում աջակցելով Էրբաքանին, ով հայտ մերկայացրեց ԱԿ-ի համամասնական ցուցակով մասնակցելու համար: Մակայն Դեմիրելը մերժեց Էրբաքանի քեկնածությունը, այսպիսով սկիզբ դրվեց մախկին համակուրսեցիներ Էրբաքանի և Դեմիրելի երկարատև քաղաքական, գաղափարական և վերջին հաշվով, անհատական առնակատմանը: Էրբաքանն այնուհանդերձ Քոնյայում

ընտրվեց պատգամավոր և, առաջին անգամ մտնելով խորհրդարան. ա-  
դոքեց՝ արժանանալով բուռն քննադատության՝:

Շուտով մի շարք ազդեցիկ իսլամամետ քաղաքական գործիչներ  
որոշեցին հիշյալ Քոբբուհի համաձայնությամբ և Էրբաքամի գլխավո-  
րությամբ ստեղծել իսլամամետ Ազգային կարգի կուսակցությունը (այ-  
սուհետ՝ ԱԿԿ) (*Milli Nizam Partisi*): Նաքշըրենդի և մուրջու աղանդների  
մի քանի անդամներից բացի ԱԿԿ-ին միացան մաև մի շարք այլ հեղի-  
մակավոր քաղաքական գործիչներ, որոնց թվում էին Ահմետ Փաքքուն և  
Սյուլեյման Արիֆ Էմրեն: Վերջինս առժամանակ ստանձնեց կուսակ-  
ցության ղեկավարությունը. սակայն 1970 թ. փետրվարի 8-ին կայացած  
համագումարից հետո նրան փոխարինեց Էրբաքամը: Այս համագումա-  
րին հետևեց կուսակցության առավել ակտիվ գործունեության ծավալու-  
մը և հանրապետության տարբեր շրջաններում մասնաճյուղերի հիմնու-  
մը: Չնայած կուսակցության անդամների իրական թվի մասին տեղե-  
կատվությունը հակասական է. այնուհանդերձ, կուսակցությանը գլխա-  
վորապես աջակցում էր երկրի արևելյան շրջանների փոքր քաղաքների  
և գյուղերի բնակչությունը: Առաջին հայացքից կասկածելի գաղափարա-  
խոսություն չունեցող կուսակցության ծրագրային դրույթների հրապա-  
րակումից հետո պարզ դարձավ նրա հետապնդած իսլամամետ քաղա-  
քական օրակարգը: Կուսակցության 100 կետից բաղկացած ծրագիրը,  
որն ըստ Լսնդատի, «թերևս բարոյական խրատաբանություն էր հիշեց-  
նում», ակնհայտորեն խուսափել էր քեմալիզմի և աշխարհիկության  
քննադատությունից և, առհասարակ, ծրագրում իսլամ քառը բացակա-  
յում էր, որի փոխարեն ընտրվել էին զգուշավոր բառեր և արտահայտու-  
թյուններ: Ծրագիրը դեմ էր արտահայտվում «լայիցիզմի» այն սահման-  
մանը, որը հակասում էր իսլամին: Կուսակցությունը հանդես էր գալիս  
մաև կրոնական կրթության ընդլայնման օգտին: Այս կուսակցությանը  
վիճակված էր գոյատևել ընդամենը 16 ամիս:

1971 թ. մարտի 12-ին բանակի երկրորդ ներխուժումից հետո այս  
կուսակցության նկատմամբ դատական գործ հարուցվեց, իսկ նույն թվա-  
կանի մայիսի 20-ին երկրի Սահմանադրական դատարանն արգելեց կու-  
սակցության հետագա գործունեությունը, քանզի այն «ձգտում էր Թուր-  
քիայում վերականգնել աստվածապետական կարգեր»<sup>4</sup>: ԱԿԿ-ի քաղա-  
քական գործունեության արգելումից 17 ամիս անց՝ 1972 թ. հոկտեմբերի  
11-ին նրա 19 անդամներ հիմնադրեցին Ազգային փրկության կուսակ-  
ցությունը (հետայսու՝ ԱՓԿ) (*Milli Selamet Partisi*): Կուսակցությունը  
գլխավորեց ԱԿԿ-ի գլխավոր քարտուղար Սուլեյման Արիֆ Էմրեն, սա-  
կայն ակնհայտ էր, որ մորեյուկ կուսակցության իրական առաջնորդն  
Էրբաքամն էր: Վերջինիս առժամանակ Եվրոպայից հասնող գուտ  
արտաքին քողարկման նպատակ էր հետապնդում. քանզի նա մտահոգ-  
ված էր այն հանգամանքով, որ ԱՓԿ-ն ևս կարող էր արժանանալ ԱԿԿ-ի

ճակատագրին: ԱՓԿ հիմնադիրների շարքում էին այնպիսի ազդեցիկ քաղաքական գործիչներ ինչպիսիք էին Ռեջայի Քուրթուր, Քուրթուր Օզալը, Մուսթաֆա Օզալը: Երկրում գործող իսլամամետ շարժումները և մասնավոր աջակցություն իսլամամետ կուսակցության վերադարձը քաղաքական քաղաքականությանը: Կուսակցության պաշտոնաթերթը «*Milli Gazete*»-ն դարձավ կուսակցության գաղափարախոսության տարածման կարևորագույն լծակներից մեկը: 1973 թ. հունվարի 21-ին ԱՓԿ-ն գումարեց իր առաջին համագումարը, որի ղեկավարում է մտնում վերը ներկայացված նախագահ, իսկ մասնավոր էր քաղաքացիական պաշտոնապետ անդամագրված ԱՓԿ-ին:

#### 1. ԱՓԿ-ի քաղաքական վերելքը

Մինչ ԱՓԿ-ի հետագա գործունեության մանրամասներին անդրադառնալով՝ հարկ է ըմբռնել հետևյալ հարցադրումը, ինչպես՝ մեկնաբանել այն հանգամանքը, որ «երկրի սահմանադրական կարգերը սասանող» կուսակցության արգելումից ղեկավարվելով մեկ և կես տարի հետո երևան եկավ արտաքինից մեկ այլ, սակայն թե՛ տեսականորեն և թե՛ գործնականորեն նույն գաղափարախոսության կողմնակից, մեկ այլ քաղաքական ուժ: Թեև Շանկլանդը հակված է այն մեկնաբանել քանակի ակնհայտ միջամտության գործումով, «ի դեմս ԱՓԿ-ի՝ քանակը ցանկանում էր ստեղծել հակակշիռ ղեկը՝ «Ինքնիշխան ԱԿ-ի»»: Սակայն, մեր կարծիքով, էրքաքանի և նրա դեկլարատիվ գործող ԱՓԿ-ի վերադարձը քաղաքական քաղաքական ուժեր առավել ղեկավարում հավանություններ, ա) խոշորություն կոմունիստական ուժերի հնարավոր ակտիվացմանը և բ) հակադրել իսլամի ծայրահեղական դրոշմներին տարածմանը: Ասել է, թե քանակը վստահ էր, որ ԱՓԿ-ն կարելի է օգտագործել որպես միջոց երկրի ներքին անվտանգությունը խաթարող երկու հավանական վտանգների դեմ: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Շվեյցարիայից վերադառնալուց հետո Գլխավոր շտաբի գեներալներ Բաթուրը և Մուհամմադ Կալանջը Էրքաքանիին՝ տալով քաղաքական կյանքում հետագա գործունեության համապատասխան երաշխիքներ՝:

1973 թ. հոկտեմբերյան խորհրդարանական ընտրություններում (համաձայն 1961 թ. սահմանադրության Թուրքիայում գործում էր երկպալատ խորհրդարան՝ Սենատ և Ազգային ժողով) մասնակցում էր յոթ կուսակցություն: Նորաստեղծ ԱՓԿ-ն, առաջին անգամ մասնակցելով համապետական ընտրություններին, տպավորիչ հաջողության հասավ՝ ստանալով քվեների 11,8 % կամ 48 պատգամավորական մանդատ (Երկրի ԺԿԿ-ն ստացավ 33,3 % կամ 185, իսկ Գեմիքլի ԱԿ-ն 29,8 % կամ 150 պատգամավորական մանդատ, իսկ մյուս կուսակցությունները և անկախ թեկնածուները միասին ստացան 24,19 % կամ 68 մանդատ՝ Ստեղծվեց մի իրավիճակ, երբ առանց ԱՓԿ-ի գործնականում անհնար

եղավ կռիվից ինձ կառավարության ստեղծումը: Նման իրավիճակը մաև դրականորեն ազդեց կուսակցության հեղինակության վրա: Ընտրություններից մեկ շաբաթ անց Էմինն պաշտոնական հրաժարական ներկայացրեց և նրան վտխարինեց Ն. Էրբաքանը:

Փորձելով մեկնաբանել ԱՓԿ-ի հաղթանակի պատճառները՝ Լուսնաուն այն կապում էր մի շարք գործոնների հետ. որոնք զգալիորեն ազդեցին ԱՓԿ-ի քաղաքական վերելքին. դրանք էին՝ ԱԿ-ի հեղինակության անկումը, նրա կառավարման ընթացքում բանակի ներխուժումը քաղաքական դաշտ, տնտեսական անարդյունավետ քաղաքականությունը, լիքայի օրըստօրն աճող արժեզրկումը, ԱՓԿ-ի որպես նոր քաղաքական գործոնի բեմելը, նրա շրջահայաց և զգույշ մարտավարությունը և երկրի տարբեր հատվածներում աջակիցների մեծաթիվ բանակի ստեղծումը, ԱՓԿ-ի գաղափարական հիմնադրույթների ինքնատիպությունը, որն հիշեցնում էր քաղաքական իսլամի գլխավոր շարադրումն համեմատած սոցիալ-քաղաքական քարոզչությանը<sup>9</sup>: Սակայն հիշյալ գործոններին հարկավոր է հավելել նաև՝

ա) երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումների արդյունքում օտարված, ինչպես նաև՝ անհավասար մրցակցության, կոռուպցիայի և կաշառակերության զոն դարձած միջին և ստորին խավերի դժգոհության օրըստօրն հզորացող ալիքի գործոնը, որն ԱՓԿ-ն խելամտորեն օգտագործեց իր քարոզարշավի ընթացքում:

բ) ի տարբերություն վերոհիշյալ իսլամաձեռ քաղաքական կուսակցությունների՝ քարոզարշավի ընթացքում ԱՓԿ-ին տրամադրվեց ընդարձակ հնարավորություն սեփական ծրագրային հայեցակարգերը ներկայացնելու համար, որոնք ապացուցեցին, որ ԱՓԿ-ն իր նպատակների հարցում երկրի սահմանադրական կարգերի վտվտխություն չի նախատեսում, այն, առնվազն բացահայտ կերպով, ուղղված չէր քեմալիզմի և աշխարհիկ-հանրապետական կարգերի դեմ:

գ) թերևս վերջին գործոնը՝ հեղաշրջման արդյունքում ձախ գաղափարախոսության շարժումների վերացման փաստն էր, որոնք հանդես էին գալիս սոցիալական անարդարության դատապարտման, եկամուտների հավասար բաշխման կռիվով, իսկ ԱՓԿ-ն իր քարոզարշավի ընթացքում սոցիալական արդարությունը, եկամուտների անհավասար բաշխումը, հասարակության բարոյական մթնոլորտի անողջացումը համարեց կարևորագույն խնդիրներ և առաջարկեց լուծման ուղիներ:

ԱՓԿ-ն ձայների մեծամասնությունը ստացավ Թուրքիայի արևելյան և կենտրոնական մասերում՝ Էրզրում, Մարաշ, Արվաս, Բինգոլ, Գյումուշհանե, Ադրյանան, Ռիզե, Չորում և այլն, որոնք Թուրքիայի Տնտեսական զարգացման պետական խորհուրդը դասակարգել էր որպես երկրի նվազ կամ թերզարգացած գոտիներ, իսկ երկրի հյուսիսային ու արևմտյան՝ Աև ծովին, նեղուցներին, Էգեյան ծովին հարող մասերը:

ներում, որոնք տնտեսապես և սոցիալ-գարգացման ստույգ համարվում էին Թուրքիայի տնտեսության շարժիչ ուժերը, ԱՓԿ-ն պարտություն կրեց:

Ընտրությունների արդյունքում հարաբերական մեծամասնություն ձեռք բերած ԺՀԿ-ի առաջնորդ Էջևիթը սկսեց բանակցել խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի հետ: Գաղափարական և մարտավարական տարածայնություններն ԱԿ-ի և մյուս կուսակցությունների հետ դաշնակցային կառավարության հիմնումը դարձրին անհնար, ուստի և ԺՀԿ-ն ստղվեց դեպի ԱՓԿ-ն, որի հետ միասին հնարավոր էր խորհրդարանում ձեռք բերել 233 մանդատ և հարաբերական մեծամասնություն: Հոկտեմբերից սկսված բանակցություններն արդյունավետ ավարտ ունեցան միայն 1974 թ. փետրվարին, իսկ պայմանագրավորվածություններն ամրագրվեցին 14 էջից բաղկացած 109 հոդված պարունակող կոալիցիոն կառավարության գործունեության ծրագրում:

Էջևիթի գլխավորությամբ ստեղծված կառավարության առաջին ուշագրավ հանգամանքն այն էր, որ Աթաթյուրքի օրոք հետադիմական համարվող կրոնը, հինգ տասնամյակների ընթացքում ոչ միայն պահպանեց իր ակտիվ ներկայությունը թուրքական ազգային ինքնության, հասարակությունում բարոյական արժեքների պաշտպանի իր դերակատարությունը, այլ նաև վերածվեց քաղաքական ազդեցիկ ուժի: Քեմալիզմի ֆատագովները շտապեցին այդ կառավարությանը տալ ամենատարբեր դրակումները՝ «սպասարկողական կոալիցիա», «քաղաքական հերետիկոսության դրակում» կամ «պատմական անարդարություն»<sup>10</sup>, այն որակվեց նաև «երկրի իսլամամետ ուժերի պատմական ռևանշ»<sup>11</sup>: Կառավարությունում Էրբանյանն ստացավ փոխվարչապետի պաշտոնը, ԱՓԿ-ն ստացավ նաև մեկ պետնախարարի, Ներքին գործերի, Արդարադատության և տնտեսության ոլորտները տնօրինող մի շարք կարևոր նախարարությունների պորտֆոլներ:

Ծրագիրը նախատեսում էր տնտեսական լուրջ բարեփոխումներ, ամրագրվեց նաև քաղաքական բանտարկյալների համաներման կարևորությունը, նվազեցվեց ընտրական իրավունքի տարիքային սահմանագիծը՝ այն հասցնելով 18-ի: Փորձելով մեկնաբանել վերջին երկու կետերի ենթատեքստը՝ ակնհայտ է դառնում, որ երկու կուսակցություններն էլ ակնկալում էին կուսակցության անդամների քվի մեծացում, իսկ նոր տարիքային սահմանագծի շնորհիվ մոտ երկու մլն. երիտասարդներ ընտրական իրավունք ստացան, որոնց քաղաքական նպատակներով օգտագործման համար երկու կուսակցությունների գաղափարախոսությունը բավական գրավիչ էր երիտասարդության համար: 1970-ական թթ. վերջին, հենց այս փոփոխության պատճառով մեծ թվով երիտասարդներ ներքաշվեցին աջ և ձախ ժայռահեղական շարժումների մեջ: ԱՓԿ-ի նախընտրական քարոզարշավում կրթության ոլորտում անհրաժեշտ բարե-

կոխումների ամհրաժեշտության առաջ քաշված դրույթները և՛ ամրագրվեցին կոալիցիոն կառավարության ծրագրում, որտեղ ամրագրվեցին դպրոցներում բարոյական կրթությանն ուղղված դասընթացների կազմակերպման ամհրաժեշտությունը:

Հարկ է նշել, որ հակաաղբյուրների հիման վրա ստեղծված դաշինքի երկարատև գոյությունը գրեթե ամհավանական էր. և պատահական չէր, որ ընդամենը տասն ամիս անց այն դադարեց գոյություն ունենալ: Նպատակ չունենալով կենտրոնանալ այդ կառավարության գործունեության մանրամասների վրա՝ այնուամենայնիվ հարկ ենք համարում անդրադառնալ այն կարևոր, մաս հակասական քայլերին և նախածոնություններին, որոնք պատկանում էին Էրբաքանի կուսակցությանը:

1974 թ. մարտին ԱՓԿ-ն երկրի խորհրդարանին ներկայացրեց Քրեական օրենսգրքում փոփոխությունների իրականացման փաթեթ, որի կարևորագույն կետերից մեկը նախատեսում էր խստագույն պատիժ այն անձանց նկատմամբ, որոնք իրենց գործողություններում և խոսքում կանգնած էին Ալլահին, մրա մարգարեին և ընդհանրապես իսլամը: Ապրիլին պետությունը քննարկման ընթացքում պետականաբար էմբեռն տեղեկացրեց, որ այսուհետ Կրոնական գործերի վարչությանը տրամադրվող միջոցներն ավելացվելու են 75 մլն. ֆուրքական լիրայով, որպեսզի 4000 հավելյալ կրոնական պաշտոնյաների հնարավորություն տրվի աշխատանքի անցնել երկրի տարբեր մահանգներում: Նախատեսվում էր մաս պետական ռադիոյով հեռարձակվող կրոնական բովանդակություն ունեցող քարոզչության ավելացում, ինչպես նաև «հաջ»-ի թույլտվության տրամադրում ոչ միայն օդային, ինչպես մինչ այդ էր իրականացվում, այլ նաև՝ վերգետնյա տրանսպորտով:

4. ... <sup>me</sup>Rusaše ali <sup>me</sup>Haldinani KÁ bidini guni ardiše guni arqauše manuli qudulani šuhinasi MÁŠ.TUR <sup>me</sup>Haldie nipsidulini GUD II UDU <sup>me</sup>Haldie TAG UDU.ŠE<sup>me</sup> IM-a UDU.ŠE<sup>me</sup> UTU-nie <sup>sup</sup>ÁB <sup>me</sup>Arubanie... (M. Salvini, Ayanis, I, էջ 254, սեկցիա I, տողեր 8-10)

Ռուսան ասում է. Խալդյան դոմերի կողմից խնկապես հրաման, խնկապես arqauše է եղել տաճարում նոր. ուլ Խալդի աստծու պատվին թող մորթվի, ցուլ (և) երկու ոչխար Խալդիին թող զոհաբերվի, ոչխար գեր՝ Թեյշեբային, ոչխար գեր՝ Շիվիհին, կով՝ Վարուբանի դիցուհուն...

Այսպիսով, առկա փաստական նյութից հստակ երևում է, որ Ռուրարտում և հարևան երկրներում բնակչությունը զբաղվել է ոչ միայն սովորական, այլև տարատեսակ գեր ցուլերի, կովերի, ոչխարների և լծկան ձիերի աճեցմամբ:

Սակայն եթե սովորական ուլերի, ցուլերի և ոչխարների զոհաբերությունը պաշտամունքային արարողությունների ժամանակ եղել է համատարած երևույթ, ապա զոհաբերվող կենդանիների մեջ երբեմն հանդիպում են նաև UDU.ŠE-ներ, այսինքն՝ «գեր ոչխարներ», որոնք սովորական ոչխարներին զուգընթաց, սակայն առաջնահերթ, զոհաբերվում են սուկ բացառիկ դեպքերում, այն էլ հիմնականում ուրարտական դիցարանի գերագույն եռյակի՝ Խալդիի, Թեյշեբայի, Շիվիհի և գերագույն դիցուհի Վարուբանի պատվին:

Մյուս կողմից, հողվածի սույն բաժնի ողջ շարադրանքում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն աննառու փաստը, ըստ որի UDU.ŠE գաղափարագրերի կոմբինացիայի ŠE բաղադրիչը փաստորեն հանդիսանում է UDU erasini կոմբինացիայի ուրարտերեն erasini

«գեր» բառի շումերական համապատասխանությունը: Ընդ որում *erašini*-ն որպես UDU «ոչխար» գաղափարագրի մակդիր ուրարտական վիճակներում առայժմ հիշատակվում է ընդհանրապես երեք անգամ: Ահա այդ իրենցիկ տեքստերը.

1. ...[ali <sup>6</sup>Haldinani KÁ] UDU *erašini* ǁli [ali <sup>6</sup>palagi manuli ašdulini <sup>6</sup>Haldinie É]...(KYKH, 270, տող 7)
  2. ... ali <sup>6</sup>Haldinani <sup>6</sup>KÁ UDU *erasini* ǁli ali <sup>6</sup>palagi manuli asdulini <sup>6</sup>Haldinie É...(KYKH, 424, տող 14)
  3. ... ali <sup>6</sup>Haldina KÁ UDU *erašini* ali ǁli <sup>6</sup>palagi manuli asdulini <sup>6</sup>Haldini É...(Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 8-9)
- Հատկանշական է, որ GUD.ŠE «ցուլ գեր»-ը, GUP.ŠE «վաղ գեր»-ը, UDU.ŠE «ոչխար գեր»-ը, PIT.HAL.LU.ŠE «ծնված ձի գեր»-ը, մի կողմից, և UDU *erasini* «ոչխար գեր»-ը, մյուս կողմից, լիովին համընկնում են ոչ միայն իմաստային ստույգով, այլև բառակապակցությունների շարահյուսությամբ:

NICOLAY HAROUTHIOUNYAN

#### NEW OBSERVATIONS ON URARTIAN LEXICOGRAPHY

##### 1. Verb *aš(u)*-

*ašdubi KUR-ni-uki* of the Urartian text of the Topzawa bilingual, in all probability, corresponds to *ana KUR-ia erubu anaku* of the Assyrian version of the text, meaning "I entered the country". Based on this correspondence, the author considers the form *aš(u)*- as the Urartian translation of Ass. *erubu* "I entered" and offers the meaning "to enter" for the Urartian verb *aš(u)*-. This interpretation is corroborated by the identical sentences <sup>KUR</sup>Aššur <sup>LA</sup>A.SI <sup>ni</sup>šie <sup>KUR</sup>ebani-uki *ašdu* and <sup>KUR</sup>Aššur <sup>LA</sup>huradie <sup>KUR</sup>ebani-uki *ašdu* of the Khorkhorian inscription, which deal with the invasion of Assyrian troops into Urartu.

##### 2. Lexeme *erašini*

The Urartian inscriptions, along with the sacrifice of bulls, sheep and kids, sometimes mention that of *UDU.ŠE* "fat sheep". The mention of the latter and *UDU erašini* in identical contexts leads to the conclusion that *erašini* is likely to be the Urartian reading of the sumerogram *ŠE* "fat". The sameness of the syntactical position of *erašini* and *ŠE* is also to be noted.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Г.А. Меликишвили, УКН, 264, ուրարտ. տեքստ, տող 23:
2. Նոյն տեքստ, էջ 391:
3. Н.В. Арутюнян, КУКН, էջ 438:
4. W. von Soden, AHw, III, էջ 1134-1138:

5. F.W. K6nig, HchI, II, էջ 91, ծանոթ. 6, էջ 145, §8 և էջ 175:
6. W. von Soden, ANw, I, էջ 234-236:
7. H.B.Արություն, КУКН, էջ 437:
8. Ույնի, КУКН, 173, III, տողեր 1, 25:
9. J. Friedrich, Saucasia, 8, Leipzig, 1931, էջ 117, ծանոթ. 5:
10. И.М. Дьяконов, УПД, էջ 73, 87:
11. H.B. Արություն, КУКН, 424, տող 21:
12. M. Salvini, Ayanis, I, Roma, 2001, էջ 257, սեկցիա III, տող 8:
13. H.B. Արություն, КУКН, 270, տող 7. 415 տող 7, 9. 424, տող 16, 21. 425, տող 10:
14. M. Salvini, Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տողեր 9, 11, սեկցիա III, տող 8. սեկցիա IV, տողեր 6, 7:
15. Իրենտիկ այս տեքստերում ակնհայտ է, որ մի դեպքում առկա է ուրարտերենի <sup>16</sup>hurađi բառը, իսկ մյուս դեպքում՝ նրա <sup>16</sup>A.SI<sup>1658</sup> գաղափարագիր տարբերակը:
16. Г. А. Меликишвили, УКН, 143, տող 7:
17. F.W. K6nig, HchI, II, էջ 111 (97, III):
18. H.B.Արություն, НУН, էջ 39 և ծանոթ. 139. Ույնի, КУКН, 424, տող 14 և ծանոթ. 36:
19. M. Salvini, Ayanis, I, էջ 257, սեկցիա II, տող 9:
20. J. Friedrich, Or., IX, 1940, էջ 214-215:
21. Նույնի, НУН, էջ 275, 298:
22. H.B. Արություն, КУКН, 173, III, տող 43:
23. Այսպես ենք ճշգրտում Մ. Սալվինիի յիսնամյակոված <sup>16</sup>GI ըմբռնումը: DINGIR-ը գրության ց-ն ուրարտերենի տրական հոլովի ցուցիչ է: DINGIR-ը <sup>16</sup>NIN-ը նշանակում է, որ կենդանիների զոհաբերությունը վերաբերում է մի դեպքում սատվածներին, իսկ մյուսում՝ դիցուններին: Հմտ. քերես հենց այստեղ UDU.SE UDU DINGIR<sup>1658</sup> UDU.SE UDU <sup>16</sup>NIN: Ի դեպ հարցի լուծմանը շատ ավելի մոտ է և հաճելի տպավորություն է թողնում Ե. Գրեկյանի քերես երկակի <sup>16</sup>GI/DINGIR-ը ըմբռնումը և մեկնաբանությունը: Տես ՊԲԿ, 2004, N1, էջ 225, հակ. կողմ, տող 9, ինչպես նաև էջ 243 և ծանոթ. 102:
24. Տարրորինակ են Մ. Սալվինիի հապճեպ մտնեցումները, երբ մի դեպքում <sup>16</sup>Aniqa դիցանումը տրական հոլովի -ցի ցուցիչի հետ միասին բյուրիմագարաբ դիտարկում է որպես <sup>16</sup>Aniqugi (հմտ. վերոհիշյալ DINGIR-ը-ն), իսկ մյուս պարագայում՝ կռվի զոհաբերության պահին այն համարում է դիցունի (dea), իսկ ոչխարի ժամանակ՝ «աստված» (dio). M. Salvini, SMEA, XLIV/1, էջ 123:
25. M. Salvini, նույն տեղում, էջ 117, 122, հակ. կողմ, տողեր 2-13, 16-17:
26. Վերականգնումը մերն է: Հմտ. GUD <sup>16</sup>Rusaini DINGIR-ը <sup>16</sup>AB <sup>16</sup>Rusainie <sup>16</sup>NIN. SMEA, XLIV/1, էջ 122, հակ. կողմ, տող 9-10:
27. Վերականգնումը մերն է: Տես H.B.Արություն, КУКН, 407, հակ. կողմ, տող 30 և ծանոթ. 24:
28. Ճշգրտումները մերն են. Մ.Սալվինիի մոտ՝ UDU-ձե:

Հապավումներ

ՊՐԸ-Պատմա-րիախոսական հանդես (Երևան):  
ԿՄԿՆ – Н.В.Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.  
НУՆ – Н.В.Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966.  
ՄԿՆ – Г.А.Меликишвили, Урартские клинообразные надписи, М, 1960.  
ՄԲԸ – И.М.Дьяконов, Урартские письма и документы, М-Л, 1963.  
AHW – W.von Soden, Akkadisches Handwörterbuch (Wiesbaden).  
Ayans. I – A.Čilingiroğlu, Mirjo Salvini, Ayans, I, Roma, 2001.  
Hehl – F.W.König, Handbuch der chaldäischen Inschriften, I-II, 1955: 1957.  
HWb – J.Friedrich, Hethitischen Wörterbuch, Heidelberg, 1952.  
Or. – Orientalia (Roma).  
SMBA – Studi Micenei ed Egeo-Anatolici (Roma).



ՄԻԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔՆ ԸՍՏ 5-ԻԳ  
ԳՎՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐԻ

Հոգևոր կյանքի գաղափարը սուկ գաղափար չէ, քանզի այն դա-  
րեր շարունակ, զանազան ձևեր ու դրսևորումներ ստանալով, եղել է ամեն-  
նատարբեր մշակութային ու քաղաքակրթությունների մերթն առանցքն  
ու շարժիչ ուժը: Այն ազդել է ինչպես առանձին անհատների ներաշխար-  
հի, այնպես էլ ամբողջ ժողովուրդների և հասարակությունների արժեքա-  
յին համակարգի վրա: Սակայն, չնայած դրան, ճիշտ չէր լինի ասել, որ  
հոգևոր կյանքի գաղափարը համընդհանուր բնույթ ունի, և հավասարա-  
պես բարձր տեղ է զբաղեցնում բոլոր մշակութային արժեքային աստի-  
ճանակարգի մեջ: Կային մշակութային, որոնց համար բուն հոգևոր կյան-  
քը բնավ արժեք չէր ներկայացնում, և դրա, քերևս, ամենավառ օրինակն  
արդի քաղաքակրթությունն է: Ուստի գիտական մեծ հետաքրքրություն է  
ներկայացնում հոգևոր կյանքի զանազան քաղաքակրթական համատեքս-  
տերում ավել կամ պակաս կարևոր լինելու պատճառների համակողմա-  
նի ուսումնասիրությունը: Մասնավորապես, սույն հիմնահարցի հետա-  
զոտման համար հարուստ նյութ է տրամադրում հայ միջնադարյան մա-  
տենագրությունը, քանի որ հայ միջնադարյան մշակույթը պատկանում է  
այն մշակութային թվին, որոնց համար հոգևոր կյանքը զերագույն ար-  
ժեք էր: Այն իմաստավորում ու կարգավորում էր ինչպես անհատների,  
այնպես էլ ամբողջ ազգի կենցաղավարությունը:

«Հոգևոր» ածականը առաջացել է «հոգի» բառից, ուստի հոգևոր  
կյանքը ոչ այլ ինչ է քան մարդկային հոգու (բառիս ամենալայն նշանա-  
կությամբ) կյանքը: Ըստ այդմ բոլոր մարդիկ, անկախ իրենց ազգային և  
կրոնական պատկանելիությունից, օժտված են հոգևոր կյանքով ապրե-  
լու կարողությամբ: Սակայն քրիստոնեական հոգևոր կյանքն ունի իր  
անկրկնելի առանձնահատկությունները, որոնք բնորոշ չեն այլ կրոննե-  
րին: Այն սուկ մարդու սեփական ջանքերի և ճգնաճեղի արգասիք չէ, քա-  
նի որ մեծապես կախված է Ս. Հոգու շնորհից: Ուստի բուն քրիստոնեա-  
կան տեսակետից հոգևոր կյանքով ապրում է այն մարդը, ով իր հոգու  
մեջ է կրում Ս. Հոգու ներգործությունը, այսինքն՝ սուրբը: Ս. Հոգու սույն  
գործառույթը նշված է արդեն Հավատո հանգանակում, որտեղ ասված է,

որ Նա «...ընկեցավ ի սուրբսն»: Ս. Հոգու մասին եկեղեցական վարդապետությունը անմիջականորեն հիմնված է Հայտնության վրա: Այդ տեսակետից առավել մեծ նշանակություն ունեն Ս. Գրքի հետևյալ վկայությունները: «Հոգին է կենդանաբար, մարմինը ոչ մի բանով չի օգնում»: (Հովհ.Չ,63) «...Աստուծոց է մեր կարողությունը, որը և կարող դարձրեց մեզ նոր Ուխտի պաշտոնյաներ լինելու՝ ոչ թե գրով, այլ հոգով, քանի որ գիրն սպանում է, իսկ հոգին կենդանացնում»: (Բ Կոր. Գ, 6)

Ս. Հոգու շնորհի կենսաբար ներգործությունը քափանցում է հավատացյալ քրիստոնյայի սրտի մեջ, համակելով այն հոգևոր կյանքով և միավորելով նրան Աստծո հետ: Ս. Հոգին մարդկային բնության վերածննդի և նորոգման պատճառն է, որն ազատագրում է մարդուն մահվան և ապակնանությանը դատապարտված լինելուց: Ըստ Պողոս առաքյալի. «Եթե այդպես է, այլևս ոչ մի դատապարտություն չկա նրանց համար, որոնք Քրիստոս Հիսուսի մեջ են, որովհետև Քրիստոս Հիսուսով կյանք տվող հոգու օրենքը ինձ փրկեց մեղքի և մահվան օրենքից» (Հռոմ. Ը 1-2): Այս կյանք տվող հոգին ոչ այլ ինչ է քան Ս. Հոգին՝ Ս. Երրորդության 3-րդ դեմքը: Եթե վտրձելու լինենք որոշել Ս.Հոգու միջոցով տրվող գերբնական կյանքի էությունն, ապա այն կարելի է սահմանել որպես հավատի, հույսի և հատկապես սիրո լիություն, «...որովհետև Աստուծո սերը սփռված է մեր սրտերում Ս. Հոգու միջոցով»: (Հռոմ. Ե, 5): Այս կյանքը մարդու մեջ զարգանում է ոչ թե նրա հոգու զուտ բնական կարողությունների գործադրման շնորհիվ, այլ անհրաժեշտաբար պահանջում է Ս. Հոգու շնորհի աջակցությունը: Նրա օգնությամբ մարդն ի գործ է դառնում սիրելու Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով, ամբողջ մտքով և ամբողջ գործությամբ: (Տես Մարկ. ԺԲ, 29) Հենց Ս. Հոգու շնորհը նկատի ունեն Պետրոս առաքյալն, ասելով. «Արդարև նրա աստվածային գործությունը մեզ շնորհեց ամեն ինչ, որ վերաբերում է կյանքին և աստվածապաշտությանը՝ ճանաչեցնելով մեզ նրան, որ կանչեց մեզ իր փառքին և առաքինությանը, որոնցով մեծամեծ և քանկազին խոստումներ պարգևեցին մեզ, որպեսզի դրանցով հաղորդակից լինեք աստվածային բնությանը»: (Բ Պետ. Ա 3-4)

Սույն աշխատությունը նվիրված է լինելու 5-րդ դարի հայ մատենագրության մեջ, առաջին հերթին «Հաճախապատում ճառեր»-ում և Հովհան Մանդակունու երկերում տեղ գտած հոգևոր կյանքի ըմբռնումներին: Հայոց եկեղեցու հայրերը, օժտված լինելով տրամաբանելու հզոր կարողությամբ, այնուհանդերձ վերացական իմաստասերներ չէին: Նրանք, մախ և առաջ, հոգևոր հովիվներ էին, որոնց հիմնական նպատակը ժողովրդին ճշմարիտ հավատ և առաքինի վարք ուսուցանելն էր: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հոգևոր կյանքի մասին վարդապետությունը նրանց կողմից սխտեմատիկորեն չի շարադրվել, և հետագոսադը ստիպված է վերականգնել այն քարոզչական ու քա-

տագովական բնույթի երկերի մեջ առկա առանձին դրվագների հիման վրա: Քանի որ Հայոց եկեղեցու հայրերի վարդապետությունը Ընդհանրական եկեղեցու հայրերի վարդապետության անբաժանելի մասն է կազմում, իսկ վերջինս, իր հերթին, սերտորեն կապված էր անտիկ փիլիսոփայության հետ, մենք հարկատրաբար անդրադառնալու ենք մահ հոգևոր կյանքի մալսաքրիստոնեական ըմբռնումներին:

Հույն իմաստասերների մարդաբանական գաղափարներն, ընդհանուր առմամբ, ընդգծված դուալիստական բնույթ ունենին: Մաղկային անձը նրանց համար միասնական գոյացություն չէր, այն երկփեղկված էր, կազմված լինելով գոյաբանորեն տարասեռ բաղադրիչներից՝ մահկանացու և անմահ, երկրային և երկնային, ընդ որում առաջին բաղադրիչը նույնացվում էր մարմնի, իսկ երկրորդը՝ հոգու հետ: Այս գաղափարը պատկանում է օրփիեսականներին, որոնց վերագրվում է մահ «Մարմինը հոգու շիրիմն է» հանրահայտ ասույթը: Օրփիեսականներից այս դուալիստական մարդաբանությունը ժառանգել ու կատարելության է հասցրել Պլատոնը: Նրա իմաստասիրական որոնումների կենտրոնում է գտնվել մարդկային հոգու դրաման: Վերջինիս պատճառը հոգու անկումն էր, որի հետևանքով մահ ստիպված է հետանալ իր հայրենիքից՝ ճշմարիտ գոյի իդեալական աշխարհից, և քնակություն հաստատել նյութական աշխարհում, որը հոգու համար լրկ մի արտրասվայր է: Պլատոնի համար բուն մարդը հենց հոգին է, իսկ նրա կապը մարմնի հետ հակաբանական մի վիճակ է, յուրատեսակ հիվանդություն, որ պիտի բուժվի ապամարմնացման և հոգու իդեալական աշխարհ վերադառնալու միջոցով:

Մույն դուալիստական մարդաբանությունն իր դասական ձևը ստացել է նորալատոնական փիլիսոփայության մեջ: Այստեղ էլ ավելի սուր բնույթ է ստանում հակասությունը իդեալականի ու նյութականի, հոգևորի և մարմնականի միջև: Ի տարբերություն Պլատոնի, Պրոտինոսի համար նյութը պարզապես իմամալի էրոսների ընդունարան հանդիսացող դատարկ տարածություն չէ: Նա ուղղակիորեն նույնացնում է նյութն ու անգոյությունը, և մարդկային կյանքի իմաստն ու նպատակը տեսնում է հոգու և մարմնի ամբնական կապի խզման մեջ: Անհատական հոգին պիտի վերամիավորվի մալս Տիեզերական Հոգու, հետո Տիեզերական Մտքի, և ի վերջո՝ Սիակի հետ: Մարդկային հոգու մեջ Պրոտինոսը ընդգծում է նրա բանական բնությունը, ինչն օժտում է նրա մարդաբանությունը որոշակի իմտելկատուական երանգավորմամբ: Մակայն Պրոտինոսը չի սահմանափակվում հոգու և մարմնի միջև առկա գոյաբանական անդունդի փաստումով: Նա մշակում է հոգևոր վերելքի մի ամբողջ ուղի, որի շնորհիվ հոգին կարող է բարոյական մաքրագործման, մտավոր պայծառացման և էքստատիկ միավորման միջոցով վերամիանալ Նախապատճառի հետ: Այսպիսով, պլատոնական տիպի դուալիստա-

կան մարդաբանությունը սոսկ տեսական հայեցակարգ չէր. քանի որ նրա մեջ կար հոգևոր պրակտիկայի որոշակի մեթոդ, որի նպատակը մարդու կատարելագործումն էր: Սակայն պլատոնականները, մարդ ասելիս, նկատի ունեին ոչ թե հոգուց ու մարմնից կազմված միասնական անձը, այլ լույս այդ անձի հոգևոր, անմութական բաղադրիչը:

Քրիստոնեական մարդաբանության նախադրյալները միանգամայն այլ են: Քրիստոնեությունը մերժեց հույն իմաստասերների կողմից որդեգրված մարդու դուալիստական ըմբռումը: Չժխտելով մարդու մեջ առկա երկու տարասեռ սկզբունքների՝ հագու և մարմնի գոյությունը, եկեղեցու Հայրերը դիտում էին նրան իբրև ամբողջական միասնություն: Ի տարբերություն պլատոնականների, նրանք մարդու անձը երբեք չէին նույնացնում հոգու հետ, քանի որ մարդն իր բնությամբ անմարմին հրեշտակ չէ:

Քրիստոնեական մարդաբանության մյուս կարևոր առանձնահատկությունը նրա ներքին դիմամիզմն է: Եթե նորպլատոնականների համար հոգին և մարմինը անփոփոխ գոյացություններ էին, ապա քրիստոնեության մեջ մարդը մերգրավված է անկյալ վիճակից դեպի աստվածացում տանալ գործընթացի մեջ, որի վճռական փուլը մարտկությունը քավությունն էր Աստծո Որդու կամավոր խաչելության շնորհիվ: Քրիստոնեությունը, նորպլատոնականության նման, նույնպես համարում էր, որ մարդը, հրաժարվելով աստվոր կյանքից, պիտի վերադառնա հոգևոր աշխարհ (քրիստոնեության մեջ այն Երկնքի Արքայություն է կոչվում): Սակայն եթե նորպլատոնականության մեջ հոգին, իմանալի աշխարհի վերադառնալով, դուրս չի գալիս տիեզերական գոյի սահմաններից, ապա քրիստոնեա սուրբը, հոգևոր կատարելությանը հասնելով, դուրս է գալիս այդ սահմաններից, և չկորցնելով իր եղական բնությունը, շնորհի միջոցով աստվածանում է, հոգով և մարմնով հաղորդակից դառնալով Մ. Երրորդության անդրանցական կյանքին:

Մարդաբանական հայեցակարգերի սույն տարբերությունը շատ կարևոր է քրիստոնեական հոգևոր կյանքի էությունը ճիշտ ըմբռնելու համար: Ի տարբերություն նորպլատոնականների, Եկեղեցու հայրերը նյութը, և համապատասխանաբար մարմինը երբեք չարիք չէին համարում, քանի որ այն, աղարկված լինելով Աստծո կողմից, իր բնությամբ բարի է: Չարյաց արմատը մարդու ազատ կամքի, անձնիշխանության մեջ է: Չարիքն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ մարդու կամքը հրաժարվում է Աստծուց և ընդվզում է Նրա դեմ: Որպես հետևանք, մարդկային բնությունը խաթարվում ու հիվանդանում է, և մարդու ոգին, որ պիտի հայեր Աստծուն, երես է դարձնում Նրանից, և սկսում է արտապատկերել նյութական աշխարհը: Հետևաբար, չարիքը հարթահարելու և հոգեպես ապաքինվելու համար անհրաժեշտ է կամքի արմատական շրջադարձ, որ քրիստոնեության մեջ ապաշխարություն է կոչվում:

Հնարավոր չէ քերականաբար ապաշխարության կարևորությունը քրիստոնեական հոգևոր կյանքը սկսելու համար: Մտքի ազդեցության մեթոդները հոգևոր ուժերը ցրված վիճակում էին, ինչն անտարբերություն էր առաջացնում Աստվածի մատչելիության նկատմամբ: Ապաշխարողի համար Աստված իր կյանքի գերագույն արժեքն է դառնում: Անշուշտ, անկարելի է միանգամից ձեռքագաղթել մեղքի հետևանքը համադասարար հասկենտրոնությունից, սակայն ապաշխարած մարդու գիտակցության մեջ նրա «ես»-ն այլևս չի գրադեցնում կենտրոնական դիրքն, իր տեղը զիջելով Աստծուն: Մտքը հոգևոր մանկան պատճառ է, քանի որ այն հետացնում է կյանքի միակ աղբյուրից՝ Աստծուց: Ապաշխարության շնորհիվ քրիստոնյան պայքար է սկսում իր արատների ու կրքերի դեմ: Ապաշխարող մարդը նախ և առաջ պիտի լինի խոնարհ, քանզի «Աստված հակառակ է ամբարտավաններին, իսկ խոնարհներին տալիս է շնորհ»: (Ա Պետ. Ե 5) Նա պիտի գիտակցի իր հոգևոր անկման որչափ խորությունը, իր ճանաչողական անկարողությունն ու քայքայված ողորմելիությունը: Մեղքի այս խորին գիտակցումից առաջանում է հոգևոր լացը: Ըստ «Հանախապատմի»․ «Եր ճնշեալ զմիտսն ի զոջումն արտասուաց ի յիշատակս աւետեաց խնամայից պաղատանօք ետանդնասէր խանդաղատանօք հեղուլ զարտասուս շնորհալիցս առ ի մաքրութիւն մտաց և մարմնոց, որ զանմաքրութիւն ստացեալ անէին զչար և զաղտեղի զանկութիւնս: Ձի արտասուք ըզմեղացն հարուածոց դատմութիւն սրբեն և որջացուցանեն և գիտտանն ի բաց ընկննում ի մտաց և ի զգայութեանց. և լինի ընդ հովանեսու նախախնամական սիրոյ փրկչին, և ամենու յուսով զմիխթարութիւն: Արտասուք շարժեն զմիտս առ Աստուած և զարթուցանեն յափշտօթենէ մեղացն որպէս ի քնոյ, և վառեն ի զգուշութիւն զգաստութեան շահատրմ օգտից սիրով»:

Ապաշխարելով, մարդը հաղթահարում է հասկենտրոնությունը, և մտաք է գործում հոգևոր աշխարհ: Այս աշխարհի օրենքներն էսպես տարբերվում են նյութական աշխարհի օրենքներից, և այնտեղ չմտորվելու և չկործանվելու համար քրիստոնյան պիտի առաջնորդվի աստվածային շնորհով, որը նա պիտի հայցի աղոթքի միջոցով: Առանց աղոթքի քրիստոնյան չի կարող ստանալ մեղքերի թողություն: Ըստ ս. Հովհան Մանդակունու. «Ձի յորժամ անեննզ հաստով յամենայն սրտէ աղոթես առ Աստուած, ընդունիս մեղաց թողութիւն և յանցանաց քատութիւն. ընդունիս զերկնից զարքայութիւնն և զանբաւ բարութիւնսն»:

Իր էությունը ապաշխարությունը ոչ այլ ինչ է քան դարձ առ Քրիստոս: Այս դարձը քրիստոնյայի հոգևոր կյանքի համար վճռական նշանակություն ունի, քանի որ հենց դրանից է բխում սույն կյանքի առաջըքը համադասարար փրկագործ հավատը: Այս հավատի դասական բանաձևը պատկանում է Պողոս առաքյալին. « Եր ամեն բան, արդարև, վնաս են համարում մեր Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության վերաբեր-

մամբ, նրա համար ամեն ինչից գրկվեցի, և այդ բոլորը աղբ են համարում, որպեսզի շահեն Քրիստոսին և գտնվեն նրա մեջ, ոչ թե նրա համար, որ ունեն իմ արդարությունը, որ օրենքից է, այլ Քրիստոսի հավատից եղած արդարությունը, որ Աստուծոց եկող արդարություն է, որպեսզի ճանաչեն Նրան և Նրա հարության գործությունը ու մասնակից լինեն նրա չարչարանքներին, կերպարանակից՝ նրա մահվան, որպեսզի ըստ կարելույն հասնեն մեռելներից հարություն առնելուն»։ (Փիլ. Գ. 8-10)

Հետևաբար, սպաշխարությունը ոչ այլ ինչ է քան սեփական անձից լիակատար հրաժարում, և հետո նույնքան լիակատար նվիրվածություն Քրիստոսին, որպեսզի սրտի խորքում բնակություն հաստատած մեղքը իր տեղը գիջի Քրիստոսի սրբությանը։ Նա պիտի հավատով ընդունի Աստուծո Որդուն իր հոգու մեջ, և հաղորդակցվի Նրա հետ Ս. Հոգու շնորհի միջոցով։ Գրանից ըխում է, որ սպաշխարության և հավատի միջև սերտագույն կապ կա։ Եշտադիտ, փրկագործ հավատն անհնար է առանց կյանքի նախորդ, մեղսական ընթացքի վճռական մերժման, քանի որ այն անհարիր է Քրիստոսի անձի մեջ կատարյալ մարմնացում ստացած սրբության և առաքինության գերագույն իղեալի հետ։ Տեսնելով Քրիստոսի անբասիր սրբության լույսը, սպաշխարողը տեսնում է նաև իր հոգու սահմակեցուցիչ սպակամությունը, և դա նրա հոգու մեջ ամոթի և սգո զգացում է առաջացնում, արտասուք բխեցնելով նրա աչքերից։ Ըստ «Հաճախապատում»-ի, «Երանի, ասե՛, սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։ Որոց ընկալեալ են շնորհս ի Հոգւոյն որ ամ Աստուած. սէր քաղծալի, խնդիրս արտասուօք անմեկնելի լինել յԱստուծոյ սգաւորն, որ անձկայ շնորհօք տեսանել զանճանելիսն՝ որ սրբոցն տուա։ Այլ և զղջացեալսն է իմանալ սգաւորս, որք դառնան ի չարաչար վարուց ստոյգ խոստովանութեամբ; և հանասպազ արտասուօք խնդրեն զթողութիւն մեղաց յամենեցունց Տեսողէն, զի կարասցէն հասանել յօթևանս կենաց՝ որ լին է անզեղ ի մխիթարել և զուարթածաղիկ զուրախութիւնսն ընդ ճշմարիտ սգաւորսն ժառանգել զերանութիւնսն՝ որ յալիտենից մխիթարութիւնն է»<sup>7</sup>։

Այսպիսով, սպաշխարությունը քրիստոնյայի սրտից ջնջում է մեղսական հասկնտրոնությունը, և վերակենդանացնում է նրա մեջ ամ Աստված սիրո զգացումը։ Հոգևոր դարձի շնորհիվ քրիստոնյան հաղթահարում է աղամական մեղքի հետևանքով առաջացած ինքնասիրությունն ու ինքնահաճությունը, սակայն դա քրիստոնեական հոգևոր կյանքի լույս սկիզբն է։ Այսպիսարությունը մաքրագործել է նրա անձի հոգևոր կենտրոնը՝ սիրտը, սակայն նրա հոգու մյուս, ավելի մակերեսային շերտերում դեռ առկա են զանազան կրքեր և արատավոր հակումներ, որոնք խանգարում են աստվածային շնորհի մերթափանցմանը։ Այսպիսարելով, քրիստոնյան որոշում է կայացրել վճռականապես հրաժարվել մեղքից, և այդ որոշումն ի կատար ածելու համար անհրաժեշտ են համարում

հետևողական հոգևոր օգնքեր, որոնք հայրախոսական ավանդության մեջ ճգնափոխություն են կոչվում: Այսպիսի արտադրության հետևանքով քրիստոնյայի սրտում բնակություն հաստատած Ս. Հոգու շնորհը տակավին մի փոքր սերմ է, որ շրջապատված է կրքերի որոնով ու տատանվով, և ճգնաճեղի բուն նպատակն այդ հոգևոր մախիտի վերացումն է: Գճնաճեղը աստիճանաբար դուրս է մղում կրքերը մարդու հոգուց, և իր ետքումը այն ոչ այլ ինչ է քան քրիստոնյայի անձի համակողմանի սրբազործում: Առանց դրա քրիստոնյան չի կարող հասնել իր կյանքի վերջնական նպատակին, ինչպես վերամիսվորմանն Աստծո հետ: Դրա համար Ս. Հոգին պիտի բնակվի ոչ միայն անձի ինքնագիտակցող կենտրոնում՝ սրտում, այլև մարդու հոգու, մտքի, և անգամ մարմնի մեջ: Քրիստոնյան պիտի դառնա Ս. Հոգու տաճար, և հենց դրանում է նրա հոգևոր կյանքի կատարելությունը: «Արդարև կենդանի Աստուծոյ տաճար եք դուք, ինչպես ասաց Աստված. «Պիտի բնակվեմ նրանց մեջ և պիտի ընթանամ նրանց միջով. և նրանց Աստվածը պիտի լինեն, և նրանք պիտի լինեն իմ ժողովուրդը»: (Բ Կոր. Զ 16) Ընդ որում հարկ է շեշտել, որ խոսք այստեղ գնում է Ս. Երրորդության բոլոր Անձերի մասին: «Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կարսի, և իմ Հայրը նրան կսիրի, և նրա մտտ կգանք ու նրա մտտ կօթևանենք»: (Հովհ. ԺՂ 23) Աստծո բնակվելը մարդու մեջ անբաժանելի է Աստվածահայեցողությունից: Դա ոչ թե ֆիզիկական, այլ հոգևոր հայեցողություն է, որ ի հայտ է գալիս Ս. Հոգու շնորհի ներգործությունից: Ս. Երրորդությունը հոգին հարդարակից է դարձնում իր աստվածային սիրո և իմաստությանը, օժտելով նրան նոր ու գերբնական կատարելություններով, որոնց շնորհիվ նա ի գործ է դառնում քափանցելու աստվածային գոյի խավարում քայքայված խորհուրդների մեջ: Հասնելով այդ ճանաչողությանը, քրիստոնյան հասնում է նրանությանը, հաղորդակից դառնալով հավիտենական կյանքին Երկնքի Արքայությունում: Այս ամենի կարևորագույն նախադրյալը սրտի մաքրությունն է: Ինչպես գրված է «Հաճախապատումի»-ի մեջ. «Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիք, զի նոքա զԱստուած տեսցեն: Որ շնորհօքն Աստուծոյ հաստով և ճշմարտութեամբ, սրբութեամբ և արդարութեամբ զամենայն բիծս մարմնոյ և զմտաց սրբել զչարս ցանկութիւնս: Եւ մաքրել խորհրդով և անարատ մարմնով հայել ի փառս Տեսան իբրև ընդ հայելի տեսանել իմանալեօքն զիմանալի աստուածութեանն զոյս:»:

Այս հատվածից երևում է, որ հեղինակը սրտի սրբության ավետարանական պատվիրանն ընկալում է որպես մարդկային անձի համակողմանի մաքրագործման պահանջ, և դա բնավ զարմանալի չէ, քանի որ աստվածաշնչական մաքրաբանության մեջ սիրտը կենտրոնական տեղն է զբաղեցնում: Նրան վերագրվում են գիտակցության բոլոր գործառույթները՝ մտածողությունը, կամքը, զգացողությունը, սիրտ և խղճմտանքի դրսևորումները: Կարելի է ասել, որ Ս. Գրքում սիրտն առհասարակ ֆի-

զիկական և հոգևոր կյանքի կենտրոնն է: Դա մարդկային անձի քաղցր-ված միջուկն է. որի խորհրդավոր խորքերը հայտնի են միայն Աստծուն: «Տերը քննում է սմեների սրտերը. և նա զիտի բոլորի ստածումները»: (Ա Մնաց. 28. 9) Սլյուտը նաև կրոնական զգացմունքների հիմնական օրգանն է, և միայն նրա խորքում կարելի է զգալ Աստծո անմիջական ներկայությունը:

Մկանով սրտից. քրիստոնյան ճգնանքի միջոցով պիտի պայծառացնի, քաղցրացնի դարձնի նաև իր հոգեկան աշխարհի արտաքին շերտերը, ինչն անհրաժեշտ է ներքին անդորր ձեռք բերելու համար: Իր ետքամբ ճգնավորությունն իսկական հոգևոր պատերազմ է կրքերի, մեղքերի, և վերջին հաշվով՝ սատանայի դեմ: Հայրախոսական ավանդության մեջ մեղքերն ու կրքերը երբեք չէին համարվում բնական երևույթ, քանզի մարդն Աստծո կողմից անմեղ և կատարյալ է ստեղծվել: Մեղքը հակաբնական, հիվանդագին մի երևույթ է. որ դրսից է քաղցրացնել է մարդկային հոգու մեջ սատանայի գայթակղիչ ներգործության հետևանքով: Աստծո պատկերը լինելով, Ադամն օժտված էր Արարչին ճանաչելու և Նրա հետ միավորվելու կարողությամբ. ու եթե ներկայիս վիճակում մարդիկ գուրկ են այդ ունակությունից, դա պայմանավորված է սոսկ կրքերի առկայությամբ, որոնք, խաթարելով ու պղծելով հոգին, զրկում են վերջինս Աստվածիմացության իր բնական կարողությունից: Հայրախոսական գրականության մեջ կարելի գտնել կրքերի բազմակողմանի նկարագրություն ու մանրագին դասակարգում: Ըստ ս. Հովհանն Մանդակունու. «Եւ պատմութեանք պղծութեանցն այսոցիք, պոռնկութիւն, արծաթախրութիւն, յարակնութիւն, բանասրկութիւն, նախանձ, փառասիրութիւն, հպարտութիւն. այսոցիք և որք սոցիւն մնան են»<sup>5</sup>: Հարց է ծագում՝ ինչ՞ պիտի արվի սույն կրքերից ձերբազատվելու համար: Պատասխանը հետևյալն է՝ պետք է հարկադրել, ստիպել սեփական անձը իրաժարվել մեղսական կրքերից և բարին գործել, իսկ դա անհնարին է առանց ճգնանքի, որ իր ետքամբ ոչ այլ ինչ է քան հոգևոր սխրանք: Այն հաջողությամբ ի կատար ածելու համար տիտանական ջանքեր են պահանջվում, պոռն կարող են մի ամբողջ կյանք տևել: Գնանքի կարևորությունը նշված է նաև Ավետարանում: «Հովհաննես Մկրտչի օրերից մինչև այժմ արքայությունը բռնադատվում է, և հզորներն են հափշտակում այն»: (Մատթ. ԺԱ 12)

Հայոց եկեղեցու հայրերը իրենց երկերում տվել են զանազան կրքերի մանրակրկիտ նկարագրություն: «Չինչ՞ է պոռնկութիւն: Պոռնկութիւն է ցանկութիւն, որկորստութիւն, յագել քնոյ, դատարկութիւն, դատարկաբանութիւն, պաճուճանք մարմնոյ, և զեղումն և ընդ վայր ծաղր, անամօթութիւն, թուլութիւն, դանդաղումն»<sup>6</sup>: Մի խոսքով, պոռնկությունն այն ամենն է, ինչը հակառակ է ողջախոտությանը: Պոռնկության դեմ պայքարը քրիստոնեական ճգնակեցության կարևորագույն բաղադրիչ-



ներից մեկն է, քանի որ վերջինիս նպատակը մարդու հրեշտակներին նմանվելն է, իսկ հրեշտակները սեռ չունեն: Ծգնավորը պիտի ձեռք բերի կատարյալ ողջախոհություն, այսինքն՝ հոգու և մարմնի մաքրություն, և անտարբեր պիտի դառնա մարմնի բնական սեռական տարբերությունների նկատմամբ: Հայրախոսական ավանդության մեջ տարբեր միջոցներ են առաջարկվում պոռնկության փախուղ հաղթահարելու համար: Նախ և առաջ, ճգնավորը մշտապես պիտի վերահսկի իր տպավորություններն ու խորհուրդները: Այս խոհերը գիտակից կամային ջանքերի միջոցով կարող են հաղթահարել միայն փորձառու ճգնավորները, ուստի սկսնակներին խորհուրդ չի տրվում կենտրոնացնելու նրանց վրա իրենց ուշադրությունը: Եթե խորհուրդը, այնուամենայնիվ, կարողացել է թափանցել ճգնավորի սրտի մեջ, նա իր սրտում պիտի արթնացնի Աստուծո նրկությունը և չմոռանա, որ Աստված տեսնում է մարդկային սրտի խորհրդավոր խորքը, և Նա անպատճառ պատժելու է այս զագրելի մեզքը գործած մաքրում:

Հաջորդ կիրքն արծաթասիրությունն է: «Չինչ» է արծաթասիրություն: Արծաթասիրություն է անհաստություն, անյուսություն, անզթություն, անողորմություն, անյուսություն, ազահություն, արհամարհություն, անբարի ստություն, անձնահաճություն, և ոչ հայելի պատուիրանն Աստուծոյ<sup>7</sup>: Արծաթասիրության քվատոնեական բարոյականությանն անհարիր լինելը բազմիցս շեշտվում է Ս. Գրքում: «Գանձեր մի դիզեք ձեզ համար երկրի վրա»: (Մատ. 2 19) «...բոլոր չարիքների արմատը փողասիրությունն է, որին ոմանք ձգտելով՝ վրիպեցին հավատից և իրենք իրենց զցեցին բազում ցավերի մեջ»: (Ս. Տիմ. 2 10) Արծաթասիրի համար նյութական բարիքների դիզումը ինքնանպատակ և կյանքի իմաստ է դառնում: Այս կիրքը կարող է դրսևորվել ոչ միայն որպես փողամոլություն, այլև որպես զանազան, հաճախ ավելորդ և ոչ անհրաժեշտ իրեր ձեռք բերելու ցանկություն, որոնք պետք են լույ տվյալ անձի բարձր հասարակական կարգավիճակի մասին վկայելու համար: Մույն արատը հաղթահարելու համար պետք է գիտակցել, որ վաղ կուտակելով իբր թե ապագան ապահովելու համար, մարդը դրանով դրսևորում է իր թերահավատությունը Աստուծո փրկարար նախախնամության նկատմամբ, և արահամարտում է Քրիստոսի խոսքերը, որ ասել է. « Այսուհետև հոգ մի արեք ու ասեք՝ ինչ՞ պիտի ուտենք կամ ինչ՞ պիտի խմենք կամ ինչ՞ պիտի հագնենք, որովհետև հեթանոսներն են այդ բոլորը որոնում... Նախ խնդրեցեք Աստուծո քաղավորությունը և նրա արդարությունը, և այդ բոլորը ձեզ ավելիով կտրվի»: Մատ. (Ձ. 31,33)

Հաջորդ կիրքը բարկությունն է: «Չինչ» է բարկություն, բարկություն է հարստահարել զիս կամսն, հակառակություն, վիճություն, նենգություն, սուտ գիտություն, կարճատևություն, մեղկություն, ձանձրություն, ոչ բառնալ զբշնամանս մտօք, տալ և առնուլ<sup>8</sup>: Բարկությունը ծանր մեղք է, որ կա-

ըող արժեքը կը բոլոր բարի գործերը, և այն միշտ խիստ վտանգավոր է համարվել քրիստոնյա ճգնափորների համար: Բարկության նկատմամբ այդ բացասական վերաբերմունքը բացատրվում է վերջինիս անհամատեղելիության քրիստոնեական սիրտ հետ: Բարկությունը սերտորեն կապված է հպարտության հետ, և սովորաբար առաջանում է այն ժամանակ, երբ որևէ մեկն իրեն նվաստացած է համարում: Դրա հետևանքով ի հայտ է գալիս վրեժխնդիր լինելու ցանկություն, առնվազն ստորացնելով, իսկ եթե հնարավոր է, նույնիսկ ոչնչացնելով այնտամին: Բարկությունը միշտ ատելություն է ծնում, իսկ ատելությունը պարզապես անհամատեղելի է քրիստոնեական հավատի հետ: Բարկությունը խաթարում է ճգնափորի ներքին անդրերը և խաչնդուտ է դառնում աղոթքի համար: Ըստ ս. Նեղոս Սինայեցու. «Ձայրությունը դեմ բարկությանը և ոչ թե համբերությանը պատահանվելը ավելի է նյութում գայրություն և այսլիսով խռովեցնում է իմանալի աչքը և ասպակառնում սուրբ աղոթքի կարգավորությունը»<sup>9</sup>:

Այս արատից ձերբազատվելու համար հարկ է մախ և առաջ, աղոթել այն մարդու համար, որ բարկության պատճառ է դարձել, խնդրելով Աստծուն օգնել նրան: Պետք է բարեգործություն անել և օրհնել նրան: Խիստ կարևոր է զարգացել խոնարհության զգացումը, քանի որ բարկությունը սովորաբար առաջանում է հիվանդագին ինքնասիրության ու եսամոլության հետևանքով:

Մուս կիրքը փառավորությունն է կամ սնափառությունը: «Ձինջ<sup>10</sup> է փառատրությունն. փառատրություն է անզգամություն, սիրել զաշխարհս և որ ինչ յաշխարհի է, և լինել անուանի ի մեզ մարդկան, և կատարել զկամս յանդգութեանն»<sup>11</sup>: Ի տարբերություն որկրամոլության կամ շնության, սնափառությունն ավելի նուրբ կիրք է, ու նրանով սովորաբար տառապում են այն մարդիկ, որոնք, սանձելով մարմնական բիրտ կրքերը, արդեն հասել են հոգևոր զարգացման որոշակի մակարդակի: Սնափառ խորհուրդները խիստ վտանգավոր են ճգնափորի համար, քանզի նրանք, արտաքուստ յանդրադառնալով նրա վարքագծի վրա, ներքուստ այլասերում են նրան, բարեպաշտ քրիստոնյային դարձնելով երեսպաշտ փարիսեցի: Սնափառությունը կարող է աննկատելիորեն թափանցել ճգնափորի հոգու մեջ և նեղակտիսել նրա մտադրություններն ու գործողությունները, դրդելով նրան ճգնել ոչ թե առ Աստված սիրտ, այլ ինքնահաստատման ու մարդասանձության համար:

Այս կիրքը հաղթահարելու համար պետք է խուսափել ուրիշների կողմից ամեն տեսակի գովասանքից ու դրվատանքից: Գնալովորը երբեք չպիտի համարի, որ իրոք արժանի է նրան ուղղված գովաբանությունների, իրեն մեղավոր ու հանցավոր համարելով Աստծո առջև: Նույնիսկ եթե նա իրոք որոշակի հաջողություններ է հասել հոգևոր կատարելագործման ճանապարհի վրա, նա չպիտի մոռանա, որ քրիստոնեական պատվիրանները չափազանց բազմակողմանի և համապարփակ են, ինչի

հետևանքով նրանց կատարումը մարդու կողմից միշտ թերի և անբավարար է մնում, ինչը զրկում է սնափատությունը որևէ հիմքից և արդարացումից:

Եվ վերջապես, ամենավտանգավոր կիրքը՝ հայարտությունը: «Ջիմզ» է հայարտություն. հայարտություն է խստասրտություն, անհնազանդ լինել ամենեցուն, և քաջալեռել յիւր գորտիքին, և համարելով զինքն իմաստուն, և ամեն յար և նք զիւր կամսն, և արհամարհել զընկերն, և կարծել զինքեան իմաստուն զոյ, և ունելով զինքն իբրև ոչ իմիք կարոտ զոյ»<sup>1</sup>:

Այդ կրքի ետքումը գոյաբանական մվիրապետության ժխտման մեջ է, ինչը հանգեցնում է գոյի Նախապատճառի իշխանությանը չենթարկվելուն ու նրան չերկրպագելուն: Հայարտը համոզված է, որ իր գոյությունը նա ոչ մեկին պարտական չէ և անկախ է բոլորից և ամեն ինչից: Հայարտի համար նրա «ես»-ը, իր անձի փառքն ու մեծությունը գերագույն արժեքն ու կյանքի միակ նպատակն է հանդիսանում: Հայարտությունը, որպես կանոն, զուգակցված է լինում ծայրահեղ ինքնավատահայտության հետ, և հայարտին թվում է, որ իր բոլոր նպատակներին նա կարող է հասնել սեփական ջանքերի շնորհիվ, առանց ի վերուստ օգնություն ստանալու: Գճնավորի համար հայարտությունն ամենավտանգավոր կիրքն է, քանի որ այն աննկատելիորեն նենգավտիտում է նրա երկրպագության առարկան: Հայարտացած ճգնավորի սրտում Աստծո տեղը զբաղեցնում է նրա «ես»-ը, և նա, փաստորեն, սկսում է աստվածացնել ինքն իրեն: Հայարտությունն անկարելի է դարձնում հոգևոր իմացությունն, առանց որի հոգևոր կատարելության մասին խոսելն ավելորդ է դառնում:

Դրանից ձերբազատվելու համար ճգնավորը երբեք չպիտի մոռանա, որ առանց աստվածային շնորհի որևէ հոգևոր առաջընթաց պարզապես անհնար է, ու եթե որևէ մեկը որոշ հոգևոր կարողություններ է ձեռք բերել, որոնցից զուրկ են ուրիշները, ապա նա դրան հասել է ոչ թե սեփական ջանքերի ու ճիգերի, այլ ի վերուստ ստացված աստվածային օգնության շնորհիվ: Հայարտ խորհուրդներից ազատվելու համար պետք է ինչպես արտաքինապես, այնպես էլ ներքստ հնազանդեցնել իր անձը: Գճնավորը երբեք չպիտի մոռանա իր գործած մեղքերն ու հանցանքները, և, ըստ այդմ, իրեն մյուսներից վեհ ու քարձր չպիտի համարի:

Հարկ է նշել, որ քրիստոնեության մեջ ճգնաճյուղն ու կրքերի սամահարումն ինքնամայատակ չեն: Դրանք անհրաժեշտ են հոգևոր զգայարանների առողջացման համար, առանց ինչի խոսք անգամ լինել չի կարող Աստվածիմացության մասին: Քրիստոնեական տեսակետից ճշմարտությունը չի ստեղծվում մարդու կողմից, այն գոյություն ունի օրյեկտիվորեն, ու մարմնավորված է Քրիստոսի անձի մեջ: Հետևաբար մարդը, ձգտելով ճանաչել այդ ճշմարտությունը, պիտի յուրացնի, ընկա-

լի այն, իսկ դա անհնար է առանց առողջ հոգևոր զգայարաններ ունենալու. քանի որ մարդու ճանաչողական կարողությունը լիովին կախված է նրա ճանաչողական օրգանների ընդհանուր հոգեբանական վիճակից: Եզրանքն ու քրիստոնեական պատվիրանների կատարումը կազդուրում ու սրբազործում են այդ օրգանները. որոնք վերստին Աստվածիմացության կարողություն են ձեռք բերում: Պատահական չէ որ Ս. Հովհաննես Մանդակունին, ի թիվս մեղքերի այլ բացասական հետևանքների, հիշատակում է նաև սուտ գիտությունն ու կարճատևությունը: Վերջիններս ոչ այլ ինչ են քան մարդու մեղքով խաթարված քնական ճանաչողական կարողությունների վրա հիմնված իմացություն. որն ունի քնական ծագում, և հիմնված չէ հավատի վրա: Ուստի հավատի վրա հիմնված հոգևոր իմացությանը հասնելու համար անհրաժեշտ է ձեռքագառնել քնական գիտությունից, որը քրիստոնեական տեսակետից սուտ գիտություն է: Բնական ու հոգևոր գիտությունը ամենամատեղելի են. քանի որ հիմնված են միանգամայն տարբեր ճանաչողական մեթոդների վրա:

Քրիստոնեական հոգևոր կյանքի առանցքն, անշուշտ, աղոթքն է. որը միշտ գտնվել է Հայոց եկեղեցու հայրերի ուշադրության կենտրոնում: «Եւ արդ պարտ է ամենայն ժամուսնեցոց մեղօք և նեղեցոցն վշտօք և վտանգեցոցն ի թշնամեաց և աշխատելոցն ցավօք միշտ աղաչել և ժտել և խնդրել հանապազ անդադար ի ձեռն աղօթից և պաղատանաց, զի որք միամիտ մտօք և անճեճ հաւատովքն աղօթեն առ Աստուած, և խնդրեն զբարիքն, ընդունին զխնդիրս ամենայն, որպէս ընկալան հարքն մեր առաջինք»<sup>12</sup>. Աղոթքը քրիստոնեական հոգևոր սխրանքի զագարանակետն է հանդիսանում. առանց որի անհնար է մարդու միացումն Աստծո հետ: Սույն դրույքը ճիշտ ըմբռնելու համար հարկ է հիշել արևելաքրիստոնեական աստվածաբանության խիստ էական մի առանձնատարրություն մասին:

Եկեղեցու հայրերի համար բնորոշ էր Աստծո զաղափարի բացասական, ապոֆատիկ ըմբռնումը, որի համաձայն Աստված անճանաչելի է մտքի և անճանաչելի՝ խոսքի համար: Ուստի Աստծուն հնարավոր չէ ճանաչել ոչ զզգայարանների, ոչ էլ մտածողության միջոցով: Նույնիսկ ամենամոտր ու վերացական աստվածաբանությունը ի գորտ չէ հասնելու ճշմարիտ Աստվածիմացության, քանի որ այն հիմնված է ոչ թե հայեցողության, այլ դատողականության վրա: Մակայն Աստծո մտածողության համար անհասանելի լինելը քնալ չի ճշանակում, որ Աստված առհասարակ անճանաչելի և անմատչելի է մարդու համար: Մարդն, արարված լինելով ըստ Աստծո պատկերի և նմանության, տիեզերքում կենտրոնական տեղն է զբաղեցնում: Որոշ իմաստով մարդը նույնիսկ ավելի կատարյալ է, քան հրեշտակները, քանի որ վերջինները Աստծո պատկերի կրողներ չեն, ինչի հետևանքով նրանք ստակ Աստծո կամակատարներ են, մինչդեռ մարդը ստեղծվել է բոլոր արարածների վրա իշխելու համար:

Հարկ է նշել, որ ըստ Աստծո պատկերի արարված է համարվում ամբողջ մարդն իր ֆիզիկական մարմնով համոզեմ, և ինչպես արդեն նշվել է, քրիստոնեական տեսակետից անընդունելի է այն մանիքեական տեսակետը, որի համաձայն մարմինը չարիք ու մեղքի պատճառ է համարվում: Հետևաբար մարմինը, մաքրագործված լինելով մեղսական կրքերից, կարող է էական դեր խաղալ քրիստոնյայի հոգևոր կյանքում: Ինչպես արդեն նշվել է, մարմնի կարևորագույն օրգանը սիրտն է, իսկ աղոթքն, իր էությունը, սերտորեն կապված է հենց սրտի հետ: Քրիստոնեական ճգնաճեղքում, ավելին՝ քրիստոնեության բուն ոգին հնարավոր չէ պատկերացնել առանց աղոթքի, քանի որ քրիստոնեությունը ներքին, հոգևոր կյանքի կրոն է, ուստի «Աստուծոյ արքայությունը դրանց տեսանելի կերպով չի գաղիս, և չեն ասի, թե ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետև ահա Աստուծոյ արքայությունը ներսում, ձեր մեջ է»: (Վուկ. ԺԷ 21)

Իր էությունը աղոթքը մի արվեստ է, ընդ որում այն առավել բարդ և մուրը արվեստներից մեկն է: Ընդհանուր առմամբ, աղոթքի գործառնությունը երեքն են՝ Աստծուց մեղքերի թողության հայցում, հոգեկան անդորրի ձեռքբերում և Աստծո հետ միավորում: Ս. Հովհան Մանդակունու վերոբերյալ հատվածում խոսվում է լույ աղոթքի առաջին գործառնության մասին, ինչը միանգամայն հասկանալի է, հաշվի առնելով մեծ հայրապետի գրական գործունեության հիմնականում հովվական ուղղվածությունը: Սակայն մյուս երկու գործառնությունը մույնպես նրա օրոք հայտնի էին Հայաստանում, ինչի, թերևս, լավագույն ապացույցը դեռ 5-րդ դարում արված ս. Նեղոս Սինայեցու իմանալի և հոգևոր աղոթքին նվիրված խոսքի հայերեն քարգնամությունն է: Աղոթքի կենսական անհրաժեշտությունը քրիստոնյայի համար պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ առանց նրա անհասանելի է սրտի սրբությունը, որն, ինչպես գիտենք, ավետարանական երանության պատվիրաններից մեկն է: Շշմարիտ աղոթքը սրբագործում է սիրտը, ազատելով այն մեղսական խորհուրդներից և հնարավորություն ընձեռելով հայելու Ս. Երրորդության իմանալի լույսը, և այդ հայեցողության շնորհիվ վայելելու անմահ կյանքի հավիտենական երանությունը: Այստեղ կարող է հարց ծագել՝ ինչ՞ կապ գոյություն ունի սրտի և զամագան խորհուրդների միջև: Կարելի է ասել, որ եթե սիրտը հոգու էությունն է, ապա խորհուրդները հոգու ներգործություններն են, այսինքն՝ հուզու մեջ սկիզբ առնող այլազան մտքերը, հույզերը և զգացմունքները: Հոգևոր աղոթքի շնորհիվ խորհուրդները վերադառնում են սրտի մեջ և քարծրանում են դեպի Աստված: Այդ վերջնական նպատակին հասնելուց առաջ պիտի միասնական դառնա հոգին, քանի որ մեղքի հետևանքով հոգու ներգործությունները՝ խորհուրդները անջատվում են սրտից ու գրվում են, կենտրոնանալով ոչ թե Աստծո, այլ արարածների վրա: Դա անհնարին է դարձնում Աստվա-

ծիմացությունը: Ինչպես ասված է «Հանախասպատում»-ի մեջ. «...եթե ժամգով մեղացն աղանդեալ իցէ չար ցանկութեամբքն և չար խորհրդովքն և չար գործովքն, և ոչ սրբէ զխորհուրդս և զզգայարանն և նայի ի վեր ի ծառագայթս աստուածութեանն որ ի Քրիստոսն է արդարութեան արեգակն, ոչ տեսնէ զլոյսն մեծ ամենատարբ Երրորդութեանն, որ յիմանալիսն ծագէ և լուսատրե զամբոսն սրտի և զանարատն անդամօք: Չի ժառանգեսցեն զերանութիւնս կենացն անմահից. որ տայ զտեսաւատչեայ տեսութիւնն ի Քրիստոս Յիսուս»<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ հայրախոսական ավանդության մեջ մտքերն ու խորհուրդներն իրարից տարբերվում էին: Առաջինները նույնացվում էին մարդու մտածողությանը բնորոշ հասկացությունների, դաստորությունների և մտահանգումների հետ, մինչդեռ երկրորդները ավելի հուզական ու զգացական բնույթ ունեին: Ըստ այդմ, եթե մտքերի բնական տեղն ուղեղում է, ապա խորհուրդները պիտի ամփոփվեն սրտի մեջ: Քրիստոնյա սուրբը մյուս մարդկանցից տարբերվում է հենց նրանով, որ նրա մտախորհուրդներն անջատված են մտքից, ինչի հետևանքով նա ի գործ է մտածել արտաքին աշխարհի մասին, և միաժամանակ իր սրտում անդադար աղոթել Աստծուն: Սուրբ դառնալու համար քրիստոնյան նախ շնորհի միջոցով պիտի մաքրագործի իր սիրտն, ազատելով այն կրքերից: Հետո նա պիտի ձեռք բերի մտքի պայծառություն, և վերջապես, պիտի հասնի աստվածացման, և ըստ այդմ՝ փրկության: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ խոսելով քրիստոնյայի մաքրագործման, պայծառացման և աստվածացման մասին, չպիտի մոռանալ, որ դրանք առավելապես ոչ թե մարդու անձնական ջանքերի, այլ աստվածային շնորհի ներգործության արգասիք են:

Հոգևոր կյանքն ու դրա արգասիքը հանդիսացող կատարելությունն ի սկզբանե եղել են նորկտակարանային հայտնության ներքին առանցքը: Առաքելական ժամանակներից սա այսօր քրիստոնյաները կոչված են եղել նմանելելու իրենց երկնային Հորը, իսկ դա անհնարին է առանց հոգևոր ճգնաճեղի: Իր ետևում դա ստեղծագործական գործընթաց է, քանզի Նոր Կտակարանն, ի տարբերություն Հնի, օրհնագիրք չէ: Թեև Ավետարանն իր մեջ բազմաթիվ պատգամներ է պարունակում, այն չի կարող դիտարկվել որպես մի յուրօրինակ տեղեկատու, որի մեջ հավատացյալը կարող է գտնել բազում ու բյուրավոր կենսական հիմնահարցերի ճիշտ պատասխանները: Նման մոտեցումը կենսական լույս ձևակերպում փարիսեցիական քարայականությանը, որը միանգամայն խորթ է Ավետարանի ոգուն, քանզի վերջինս՝ Ս. Հոգու կողմից ներշնչված հույսի, հավատի, սիրո և ազատ խղճի գիրք է:

Ամփոփելով, փորձենք տալ քրիստոնեական հոգևոր կյանքի ընդհանուր բնութագիրը, ելնելով 5-րդ դարի հայ մատենագիրների վերաբերյալ տեսականներից:

1. Քրիստոնեական հոգևոր կյանքն ունի, նախ և ստաց, ներանձն բնույթ, քանզի Աստուծո արքայությունը մարդու մեջ է: Կարելի է ասել, որ ներքին կատարելությունը ճշմարիտ հավատացյալի համար պիտի լինի նրա կյանքի հիմնական նպատակը: Ի տարբերություն հրեականության, արտաքին օրինապաշտությունը մեծ արժեք չունի, և չի ապահովում մարդու փրկությունը, քանզի հակառակ դեպքում Փրկչի կարիք չէր առաջանա: Արտաքին բարեպաշտությունն, անշուշտ, չի մերժվում, սակայն դիտվում է լուկ որպես հիմք, որի վրա կարող է կառուցվել հոգևոր կատարելության ու սրբության վեհաքանդ շինությունը: Դեպի սրբություն ու փրկություն տանում է միայն ներքին, հոգևոր բարեպաշտության ճանապարհը:

2. Հոգևոր կյանքի կարևորագույն նախադրյալներն են սրտի կատարյալ մաքրությունն ու Ա. Հոգու շնորհի ներդրումները: Քրիստոնեյա ստորբ ոչ քն լուկ բարձր բարոյականության տեղ անճանալորություն է, այլ մի մարդ, որը մաքրագործվելով խտակրոն կյանքի ու ճգնափորության միջոցով դարձել է Ա. Հոգու, և ըստ այդմ՝ Ա. Երրորդության տանար է դարձրել: Սրբերն ընդունում և ըմբռնում են աստվածային Հայտնությունը, ապրում են նրանով և իրենց կյանքով ապացուցում են այդ Հայտնության ճշմարտագիտությունը:

3. Քրիստոնեական հոգևոր կյանքի առանցքն աղոթքն է: Այն հանգեցնում է ճգնափորի սրտում առ Աստված սիրտ առաջացման, ինչն, իր հերթին, հոգևոր կատարելության և սրբության կարևորագույն նախապայմանն է:

ARTHUR MATEVOSYAN

**THE CHRISTIAN SPIRITUAL LIFE ACCORDING TO THE ARMENIAN CHURCH FATHERS OF THE V CENTURY**

The idea of a spiritual life has not only theoretical, but also the huge practical value. During centuries it was the internal core and driving force of various cultures and civilizations. It rendered determining influence both on a private world of separate individuals, and on value system of whole peoples. Therefore the investigation of various forms and manifestations of spiritual life is of great scientific interest as without it our conceptions of the history of world culture in many respects would remain defective. The medieval armenian culture pertained to the number of those cultures in which the spiritual life was of great value. In this connection one can find the rich material for research in the works of the armenian Church Fathers of the 5-th century, mainly in "The diffuse discourses", attributed to St. Gregory Illuminator, and in the discourses of St. John Mandakuni. The basic conclusions of our article can be set out in the following three items:

1. The Christian spiritual life has, first of all, internal character. One can say, that for true believer the internal perfection should be the basic purpose of his life. In contrast to judaism, the christianity puts little value upon the external piety. It cant ensure the salvation of man, as otherwise the coming of Savior would be unnecessary. The external observance of the religious Law, certainly, is not denied, however it is considered as the basis on which can be raised the building of the spiritual perfection. Only the internal, spiritual way conducts to sanctity and salvation.

2. The preconditions for finding an original Christian spiritual life arc the perfect purity of heart and reception of grace of the Holy Spirit. The christian saint is not simply a highly moral person, but a person who purified itself by means of severe asceticism and a selfless life, and became a vessel of the Holy Spirit. The saint receives divine Revelation and proves Its validity by his whole life.

3. The core of Christian spiritual life is the prayer. It awakes love to the God in the heart of the devotee, that, in turn, is the major precondition for finding sanctity and spiritual perfection.

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Յանախապատում ճառք», Վարդաբազմատ, 1894, էջ 210:
2. «Տեսնում Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք», Վենետիկ, 1860, էջ 40:
3. «Յանախապատում ճառք», էջ 107-108:
4. Նույն տեղում, էջ 109:
5. «Տեսնում Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք», էջ 189:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. «Գանձասար», Ա, Երևան 1992, էջ 182:
10. «Տեսնում Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք», էջ 189:
11. Նույն տեղում:
12. «Տեսնում Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք», էջ 39:
13. «Յանախապատում ճառք», էջ 107-108:



**ՈՒՌԵՆ ՄԱՆԱՄԵՐՅԱՆ**

**ՍԻՐԻԱՆ 49 – 48 ԹԹ.-Ի ՀՌՈՍԵԱ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԳ. II-Ի  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ**

Հռոմում քաղաքացիական պատերազմի առաջին փուլը (49-48 թթ.) նշանավորվեց հռոմեա-պարթևական հակամարտության հանդարտմամբ: Խառանի ճակատամարտում (մ.թ.ա. 53 մայիս) հաղթանակ տարած պարթևները 51-50 թթ. ձեռնարկեցին Սիրիան՝ Արևելյան Սիջերկրածովքում Հռոմի հարստագույն մարզը նվաճելու փորձերը: Պարթևների երկու ներխուժումն էլ Սիրիա մատնվեց ծանր անհաջողության, համոլիպելով հռոմեական զորքերի՝ (Կրասոսի բանակից պահպանված երկու լեգեոնի) և տեղացի բնակչության՝ նախ և առաջ հելենիստական քաղաքների դիմադրությանը՝:

49 թ.-ի օգոստոս – սեպտեմբեր ամիսներին Գնեսո Պոմպեոսը պարթևական արքունիք առաքեց դեսպանություն Հուլիոս Կեսարի դեմ ռազմական դաշինք կնքելու առաջարկով<sup>2</sup>: Օգոստոսյան դիմաց Արշակունի արքայից արքա Օրոդես II (57-38 թթ.) հռոմեացիներից պահանջեց հանձնել իրեն Սիրիան<sup>3</sup>: Համաձայնություն չտալուց, Օրոդեսը կապանքների մեջ գցեց Հռոմի դեսպանին՝ Լուկիլիոս Հիտոսին: Այնուամենայնիվ, չնայած Սիրիայի նկատմամբ իր հավակնությանը և իր թշնամական վարվելաձևին Օրոդեսը ձեռնպահ մնաց Սիրիայի վրա հարձակումից: Պարթևները չփորձեցին գրավել Սիրիան նաև շուտով ստեղծված քարենպաստ իրադրության մեջ, երբ 49 թ.-ի աշնան կեսին Սիրիայի կուսակալ (պրոկոնսուլ) Սկիպիոնը, ակներևաբար, ենթարկվելով Պոմպեոսի պահանջին, դուրս բերեց Սիրիայից հռոմեական զորքերը՝ երկու լեգեոն և տեղացի բնակչությունից հավաքագրված հեծելազոր, որոնց առաջնորդեց դեպի Ասիա մարզը՝ փոքր Ասիայի արևմուտքում, այնտեղից Հունաստան՝ Պոմպեոսի բանակատեղը, հասնելու մտադրությամբ<sup>4</sup>:

Համաձայն հավաստի աղբյուրի տվյալների՝ Սիրիայի բնակչությունը այդ պահին խիստ տազնապաժ էր պարթևների հարևանությունից և վախենում էր պարթևների դեմ պատերազմից<sup>5</sup>:

Այսպիսով 49 թ.-ի աշնանից մինչև 48 թ.-ի վերջը (մերայայ սեպտեմբերը, երբ Կեսարը ավի իջավ Եգիպտոսում), այսինքն շուրջ մի տարի

Սիրիան միանգամայն անպաշտպան էր մնում պարթևների դիմաց: Սակայն Սիրիայի վրա հավակնելուց երբեք չհրաժարվող Օրոդեսը այդ ողջ ժամանակ ձեռնպահ էր մնում հարձակողական գործողություններից. պարթևները չէին անցնում Եփրատը: (Նրանք իրենց հաջորդ՝ Թվով երրորդ և չորրորդ ներխուժումները Սիրիա կատարեցին 46 և 41 թթ.):

Օրոդեսի այդ շեղարթյունը՝ Հռոմում քաղաքացիական պատերազմի առաջին փուլում (49-48 թթ.)՝ Սիրիայում հռոմեական զորքերի լիակատար քացակայության պայմաններում, քացատրություն չստացած փաստ է:

Պարթևների այդ դիրքը առանց մեկնաբանման է թողնված Ա. Շերվին-Ուայթի երկրում<sup>10</sup>: Ա. Բիվարը միայն հպանցիկ այն հիշատակում է<sup>7</sup>, Ռ. Ֆրայը այն շրջանցում<sup>8</sup>: Ա. Բոչչանինը, առանց վերծելու քացատրություն տալ Օրոդեսի դիրքորոշման պատճառներին, ենթադրում է. քե Պոմպեոսը իբր հաշտվել էր Սիրիայի՝ պարթևական նվաճման հնարավորության հետ<sup>9</sup>: Այդ սպասումիվքը չիրականացավ, և Պոմպեոսը, պետք է կարծել, քավականին հիմքեր ուներ վստահ լինելու՝ Սիրիայի՝ պարթևների հարձակումից ապահով լինելու համար:

Եղած աղբյուրներում որևէ ցուցման քացակայությունը Պարթևական տերության մեջ ներքաղաքական խորտումների վերաբերյալ՝ 49-48 թթ. (և ի դեպ հաջորդ տարիներին) հիմք է տալիս պնդելու, որ Օրոդեսի ռազմական զսպվածությունը սիրիական հարցում պայմանավորված պիտի լիներ պարթևական տերության արտաքին քաղաքական հարաբերություններով: Անհրաժեշտ է նկատի առնել 49 և 48 թթ.-ին Հռոմի և Պարթևատանի նկատմամբ Արտավազդի վարած քաղաքականությանը՝ այդ քաղաքականությունը քացահայտող փաստերը.

Հայոց արքայի զահակավման 6 և 7 տարիներով՝ այսինքն հենց 49 և 48 թթ. թվագրված են նրա դրամահատումները, որոնց վրա մա հանդես է գալիս «արքայից արքա» տիտղոսով<sup>10</sup>: Այսպիսով, մեր առջև կարևոր վկայություն է հայոց թագավորի կողմից Արշակունիների մենաշնորհը համարվող մեծատիրական տիտղոսը ընդունելու մասին<sup>11</sup>: (Տվյալ տիտղոսի առկայությունն արտացոլում էր իր կրողի միջազգային դրությունը՝ քաղաքական վերադասությունը հարևան թագավորությունների նկատմամբ<sup>12</sup> կամ դրան հավակնությունը)<sup>13</sup>:

Սույն քայլով Արտավազդը ազդարարում էր իր տարածքային հավակնությունների մասին՝ պարթևներին հպատակ Ատրպատականի և Հյուսիսային Սիջազեստի թագավորությունների նկատմամբ, որոնք նախկինում գտնվում էին Տիգրան Մեծի տիրապետության ներքո<sup>14</sup>:

Արտավազդի կողմից արքայից արքա տիտղոսի յուրացնելը 49 և 48 թթ.-ին անկարելի է դիտարկել մեկուսացված իր հարաբերությունների բնույթից Հռոմի հետ՝ նույն 49 և 48 թթ.-ին:

49 ք.-ին Արտավազը քաջահայտորեն աջակցեց Գնեսու Պոմպեոսին՝ նրա պատերազմում ընդդեմ Հուլիոս Կեսարի: Համաձայն Լուկանոսի պոեմի տվյալների, 49-ին Հայաստան ռազմական օգնություն ստանալու նպատակով ժամանեց Գն. Պոմպեոսի ավագ զորին՝ Գնեսու Պոմպեոս-հրոսերը<sup>17</sup>: Հ. Կեսարը 49-ի դրությամբ քվարկելով Պոմպեոսի քանակում օտարազգի կոնտինգենտները չի հիշատակում հայերին<sup>18</sup>: Ապպիանոսը նույնպես այդ պահի համար չի նշում Պոմպեոսի քանակում հայկական զինուժի ներկայությունը<sup>19</sup>: Մակկայն, 48 ք.-ի ամռանը Փառասարի ճակատամարտում, համաձայն Ապպիանոսի հաղորդման, արդեն մասնակցում էր Արտավազը արքայի առաքված հայկական հեծելազունը<sup>18</sup>: Արտավազի գործողությունները Հռոմի և Պարթևստանի նկատմամբ 49 և 48 թթ.-ին, անշուշտ քելադրված էին սեփական շահերը իրականացնելու ձգտմամբ՝ հռոմեա - պարթևական դիմակայության պայմաններում:

Հռոմեա - պարթևական ստրատեգիական շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար հռոմեական աշխարհակայության (մրցակցող տերություններից ուժեղագույնի) քաղաքացիական պատերազմում պատակաբեկ ստեղծում էր ընդհանուր առմամբ աշխարհաքաղաքական հեռանկարային կացություն՝ հղի գործողության որոշակի ազատության:

Հարկ է նշել այն հանգամանքը, որ 49 – 48 թթ. քալկանյան ռազմաբեմից Հայաստանի հեռավորության պատճառով Արտավազը ի վիճակի էր գերեզմանալու հռոմեական ներքաղաքական կոնֆլիկտի մեջ ներգրավվելուց: Այդ նրան ավելի դժուրին էր անել, քան 54-53 թթ.-ին խուսափել Կրասոսի հակապարթևական արշավանքին մասնակցությունից<sup>19</sup>:

Հռոմի հանդեպ դիրքորոշման մեջ խարխալելի է որոշակի հետաքրքրությունը: 49-48 թթ.-ին Արտավազի ցուցաբերած հակապարթևական տարածքային հավակնությունը հասնում էր պարթևական հավակնությունների հետ՝ Միդիայի հանդեպ, այսինքն չեզոքացնում դրանք, և առկա իրադրության մեջ միակ երևելի արտաքին քաղաքական պատճառ էր, որը պիտի կասեցներ անպաշտպան Միդիայի գրավվելը պարթևների կողմից:

53 ք.-ին իր դիրքով պարթևների ռազմական հաղթանակը ապահոված հայոց թագավորը, այժմ, սպառնալից դիրք գրավելով նրանց թիկունքին, իր դժկամությունն էր ցուցաբերում պարթևների առավել հզորացման՝ տարածքային աճի հնարավորության հանդեպ: Հետագայում պարթևներին այլևս չվիճակվեց նման քարեպատեհ իրավիճակ՝ և նրանք հարկադրված էին 46 և 41-38 թթ.-ին Միդիայի նվաճման իրենց փորձերում պայքար մղել այնտեղ վերահաստատված հռոմեական զորքերի դեմ:

Այսպիսով, Արտավազդի հակապարթևական դիրքորոշումը 49-48 թթ.-ին (փաստորեն պատերազմական իրադրությունը իր և Օրոդեսի միջև), թույլ էր տալիս հռոմեական կողմին դուրս բերել իր զորքերը Սիրիայից: Սակայն հարկ է նշել, որ հռոմեացիների համար տվյալ պարագաներում կարևոր նշանակություն էր ստանում դաշինքի վերահսկողությունը Արտավազդի հետ՝ հայոց թագավորի կողմից պրոհռոմեական դիրքորոշման հավաստումը: Հենց այդ դաշինքը հնարավոր էր դարձնում հռոմեացիներին՝ Պամպեսիան և իր կողմնակիցներին վստահ լինել Սիրիայի անձեռնմխելիության համար. այնտեղից Սկիպիոնի զորքերի դուրս բերելուց հետո: Դրանով իսկ ստեղծվում էր մի իրավիճակ, որի շահավետությունը Արտավազդի համար ակնառու էր:

Քաղաքական մերձեցումը Պամպեսի հետ թույլ տվեց հայոց արքայի 49-48 թ.-ին հանդես գալ փաստորեն որպես Սիրիայի անվտանգությունը և անհասարակ Արևելյան Միջերկրածովքում հռոմեական քիլոմետրի ապահովությունը երաշխավորող կողմ: Այդ քաղաքական արդյունքի նշանակությունը լիովին կգնահատվի, եթե նկատի առնենք, որ Արտավազդի կողմից այն ձեռք բերվեց՝ Հռոմեական աշխարհակալության անհաշտ քաղաքացիական պատերազմում՝ պատակովելու պայմաններում, մի պատերազմում որտեղ կողմերի ուժերի հարաբերակցությունը այդ պահին չէր խոստանում դրա արագ և որոշակի հանգուցալուծումը:

Այստեղ, հռոմեական շահի պաշտպանության քղի տակ արդեն զանազանելի է հաջորդ տարիներին՝ 36-34 թթ.-ին Արտավազդի հետամտած բուն մպատակը՝ Հայաստանի մեծատիրական դիրքի վերականգնում՝ Հռոմի և Պարթևստանի երկուստեք թուլացման համընթաց:

RUBEN MANASERYAN

**SYRIA IN THE ROMAN-PARTHIAN RELATIONS IN 49-48 B.C. AND THE ATTITUDE OF ARTAVAZDES II**

In the year 49 the King of Kings Orodes in negotiations with Pompey claimed the Syria as concession for his military assistance. After the departure of Roman troops from Syria in the second half of 49 and during the all 48, Orodes, in spite of his pretensions on Syria, abstained from its annexation. The causes of Orodes neutrality consist in threatening attitude of Artavasdes, King of Armenia, who renovated by this time his alliance with Rome – Pompey's party and adopted the title of King of Kings (testified on his coinage just in 49 and 48 years). So, Artavasdes advanced his pretensions on the parthian territories (Atropatene and North Mesopotamia) in the rear of Orodes. The alliance with Armenian king permitted Pompey to lead away from Syria roman troops (two legions under the command of Scipion) in order to carry

them in Greece. Artavasdes himself wasn't interested in the excessive growth of each of his powerful neighbours - Roman and Parthian Empires.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. А. Г. Бокшанин и Парфия и Рим. М. 1966, ч II, с. 60-67. A.D.H. Bivar Iran and the Arsacids – The Cambridge History of Iran, London 1983 (v. 3,1), p. 56.
2. Dio Cass. XLI 55, 3,4; Caes. Com de bel. civ. IV. III, 82.
3. Dio Cass, XLI. 55, 3,4.
4. Caes. Com. de bel. civ. III, 31.
5. Ibid.
6. A.N. Sherwin – White. Roman Foreign Policy in the East. 168 .C to A.D. I.Duckworth, 1984, p. 299.
7. A D N, Bivar. Op. cit.
8. R.N. Fryc The History of Ancient Iran. München, 1984, p. 233.
9. А.Г. Бокшанин, op. cit. с. 69,
10. Խ. Մուշեղյան, Արտավազդի յորեքրորամյանը, - ՊԲՀ, 1964, N 2, էջ 322, Ռ. Վարդանյան, Արտավազդ II-ի դրամները, Երևան, 2004, էջ 95-96:
11. Ռ. Մանասերյան, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 18, 21:
12. P. Л. Манасерян, Процесс образования державы Тиграна II – Вестник древней истории, 1982, N 2, с. 129, 131, прим. 33.
13. Պոմպեոսը 62 թ.-ին, վերահաստատելով Տիգրան Մեծի արքայից արքա տիտղոսը, սատարում էր արքայի հավակնությունները պարթևների կողմից գրաված Հյուսիսային Սիջակները և Ատրպատականի նվաճումը. տե՛ս H.Seyrig. Trésor monétaire de Nisibe – Revue numismatique. P. 1955, p. 120-121.
14. Արտավազդը դարձյալ սկսեց շեշտել իր արքայից արքա տիտղոսը 39-36 թթ.՝ պարթևների դեմ Ատրպատական Ամտոմիտի քանակի հետ իր համատեղ արշավի նախօրին. Տե՛ս մանրամասն Ռ. Մանասերյան, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 21-60:
15. Lucan, Pharsal. II, 630-637.
16. Caes. Com. de bel. civ. III, 4
17. App. Bel. Civ., XIV, 49
18. App. Bel. Civ., XIV, 71.
19. Ռ. Մանասերյան, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 12-17:

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԳՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԻՃԱԿԸ IV ԳԱՐԻ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախաքրիստոնեական Հայաստանում հայտնաբերված գրավոր մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը թույլ է տալիս այսօր որոշակիորեն խոսելու հինգ տեղածին և ևս հինգ ներմուծված գրահամակարգերի՝ կիրառության մասին:

Նյութական վկայությունների բացակայության հետևանքով այսօր դժվար է լիովին պարզել, թե ինչ իրադրություն էր տիրում Հայաստանի գրավոր մշակույթի շրջանում քրիստոնեության պետական կրոն հռչակման մոտոսրյակին, ուստի ստիպված ենք բավարարվել մատենագրական տեղեկություններով:

Դատելով պահպանված մատենագրական տեղեկություններից՝ Հայաստանի տաճարներում շարունակում էին կիրառվել հայալեզու մեհենագրերը՝ իսկ քաղաքական գրագրության ոլորտում քաղաքացիություն էր ստացել հունական այբուբենը<sup>1</sup>:

Քրիստոնեության պետականացումից հետո փոխվեց մաս Հայաստանի գրային իրավիճակը: Հայկական մեհենագրությունը, որպես մախարղ կրոնի գրահամակարգ, արգելվեց և դուրս մղվեց կիրառությունից, իսկ առանձին մեհենագրանոցը շարունակեցին կիրառվել հայ իրականության մեջ հմայագրերի, վարպետների նշանների և այլ գաղափարակիր-նշանների տեսքով («նշանագիրը իմաստնոց» ցանկերը միջնադարյան մատյաններում, իմաստակիր նշանները կիրառական արվեստում և այլն)<sup>2</sup>:

Տրդատ III-ի հրամանով արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում հաստատվեցին հունարենն ու ասորերենը<sup>3</sup>: Հունարեն ու ասորերեն դպրության կնիտոններ հիմնվեցին մաս Արշակ Բ-ի օրոք՝ Ներսես Մեծի մախածոնությունը<sup>4</sup>:

360-ական թվականներին, Մովսես Խորենացու հաղորդման համաձայն, Մերութան Արծրունու կողմից հունարեն դպրության արգելման և պարսկերենի պարտադրման վարժ է արվում (գիրք Գ, գլ. ԼԶ), ինչը, սակայն, հաջողությամբ չի պսակվում:

Ղազար Փարպեցին հայտնում է, որ Վեամշապուհից առաջ՝ Խոսրով արքայի օրոք շարունակում էին տիրապիտող դիրք ունենալ հունարենն ու ասորերենը. «Մանուկ հասակում սովորելով հունարեն դպրությունը, Մաշտոցը Հայոց արքա Խոսրովի արքունիքում գինվորական ծառայության էր և կարգված արքունի մատենագիր դպիրների խմբի մեջ, քանի որ արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց բազմալորների վճիռներին ու հրովարտականներին գործը կատարում էին ասորերեն ու հունարեն լեզուներով... Եկեղեցական արարողությունները և Մուրը Գրքի ըմբռնումները Հայաստանի վանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն, որից ոչինչ չէին հասկանում կամ օգտվում այսպիսի մեծ երկրի բնակիչները... Եվ երանելի այդ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լայիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ծայմով և ոչ թե մուրացած լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ բազմության սրտերը»<sup>7</sup>:

Մովսես Խորենացին վկայում է նաև, որ Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Արևելյան Հայաստանի արքունիքում Վեամշապուհ արքայի օրոք կիրառվել է պարսկերենն՝ իր գրով. «... այն օրից, որ Մեսրոպն արքունական դռնից հեռացավ, նա (Վեամշապուհ արքան) ոչ մի ճարտար դպիր գտնել չէր կարողանում, որովհետև պարսկական գիր էին գործածում»<sup>8</sup>: Իսկ իր ապրած ժամանակի մասին Մովսես Խորենացին տեղեկացնում է. «... կային պարսից և հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, գյուղերի ու գավառների, յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի ու դաշինքների, մանավանդ, սեպտիական ազնվականության ծագման վերաբերյալ»<sup>9</sup>:

Համադրելով Ազարիանցիի, Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու տեղեկությունները՝ կարելի է եզրակացնել, որ քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարտզության և ուսման ասպարեզներում ասորերենն ու հունարենի գործածման Տրդատ Գ-ի սահմանած կարգը վտվտվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով դպրություններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը: Այս իրավիճակում է, որ Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտով սկզբնավորվեց հայ նոր դպրությունը:

Հայ մատենագիրները տեղեկացնում են IV դարի Հայաստանում կոթողային արձանագրությունների մշակույթի առկայության մասին, ինչի ակունքները, հասկանալիորեն գալիս են նախաքրիստոնեական ժամանակաշրջանից<sup>10</sup> և շարունակվում մաշտոցյան դպրության առաջին իսկ դարում<sup>11</sup>: Բերենք այդ մասին վկայություններ:

Չենոբ Գլակի գրառմամբ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» էջերում պահպանվել են մեր նյութին առնչվող ուշագրավ տեղեկություններ, որոնք վերաբերում են Հայաստանում քրիստոնեությունը պետականացնելու դեպքերին: Հայոց վերջին՝ Արժան քրմապետի կողմնակիցների և նոր քրիստոնեացած քաղաքի ու յշխանների ճակատամարտից հետո ընդհանուր թաղում կատարվեց և հուշարձան կանգնեցվեց զոհվածների հիշատակին, որին «ասորի և հելլենացի գրով և յոյճ և իսմայելացի մշակով» զրեցին հետևյալը. «Տեղի ունեցավ առաջին պատերազմը. այստեղ է հանգում հույժ քաջամարտիկ Արժան քրմապետը, նրա հետ նաև հազար երեսուներ հոգի, որոնք կռվեցին հանուն Գլխանե կուրքերի և հանուն Քրիստոսի»<sup>12</sup>:

Մեքենոսին կից Անանուհի երկուսն հեղինակը վաղ շրջանի պատմության իր սկզբնաղբյուրների մասին հաղորդում է հետևյալը. «... Այնտեղ նայելով Մարաթա փիլիսոփա Մծուրնացու մատյանը [այն արձանագրությունը], որ նա գտավ սյան վրա դրոշմված, Մծուրն քաղաքում, Մանատրուկ արքայի ապարանքում, այլքունական տաճարի դռան հանդես, արքայական կայանի ավերակների տակ ծածկված, երբ որ այդ տաճարի սյուները պահանջեցին պարսից արքայի դուռը և երբ սյուների պատճառով քաջեցին ավերակները, հանդիպեցին արձանագրությանը՝ դրոշմված վեմի վրա՝ Հայոց և Պարթևաց հին քաղաքների տարիները՝ հունարեն գրությամբ: Սա գտնելով Միջագետքում, նրա աշակերտների մոտ, կամեցա ձեզ պատմել, որովհետև սա ունեցր այսպիսի վերնագիր՝ «Ես՝ Ազաթանգեղոս գրիչս, այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի Հայոց առաջին քաղաքների տարիները՝ քաղելով քաջն Տրդատի հրամանով», որի պատճենը կտեսնես քիչ հետո, իր տեղում»<sup>13</sup>:

Գրային հուշարձանների մյուս խումբը, որ գոյություն է ունեցել IV դարում, կազմում են այն գործերը, որոնք ստեղծվել (կամ քարգմանվել) են նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, չեն արգելվել նոր կրոնի քարոզիչների կողմից և հասել են մինչև V դար: Դրանցից, մասնավորապես, հիշատակելի են Մովսես Խորենացու օգտագործած սկզբնաղբյուրներից Մեթր Աբաս Կատինայի, Օղյունայ քրմի, Բարդաճանի աշխատությունները:

Հայագիտական ուսումնասիրություններում երկար քննարկումների առարկա է եղել (և շարունակում է մնալ) չորրորդ դարի օտարալեզու հայ գրականության խնդիրը, մատնանշվել են մի շարք աշխատություններ, որոնք, մեծագույն հավանականությամբ, պետք է ստեղծված լինեն IV դարում: Դրանք հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական թվանդակություն ունեցող գրական հուշարձաններ են, որոնց ստեղծման ամերաժեշտությունը թելադրված էր նոր կրոնի քարոզչական-գաղափարախոսական պահանջներով: Մեք այստեղ կանգ չենք առնի այս հիմնահարցին, քանի որ վերջինս դեռ պետք է դառնա հատուկ



ուսումնասիրության առարկա, և կրավարարվենք միայն այն աշխատանքների քվարկումով, որոնց IV դարում ստեղծված լինելը, մեր կարծիքով, կասկած չի հարուցում: Մասնավորապես, լուրջ հիմքեր կան եզրակացնելու, որ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մի քանի հատվածներ (Գրիգոր Պարթևի վարքը, Խոսրովի և Տրդատի պատմությունը, Հռիփսիմյաց վկայաբանությունը) IV դարում գրվել են հունարեն, իսկ V-ում քարգմանվել և խմբագրվել, IV դարում ասորերենով պետք է գրված լինեին Ջենոբ Գլակի երկի մի քանի հատվածներ, նույն դարում հունարեն պետք է գրված լինեն հետագայում «Կանոնագիրք Հայոց» ներմուծված մի քանի հատվածներ («Կանոնք սրբոյն Գրիգորի Պարթևի... յաւելումն ի Նիկիական կանոնս», «Կանոն Լուսատրչիմ», «Մանանայրոթի քիւն կարգաց»-ի վաղ շերտերը, «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա», Վրթանես կաթողիկոսի և Երուսաղեմի Մակար հայրապետի թղթերը և այլն), Արտիթես եպիսկոպոսի պատասխան թուրքը Մարկոս միայնակյացին, որն օգտագործում է Մովսես Խորենացին իր երկրորդ գրքի Զ գլխում. «Հարցումն տեսան Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակյաց» բնագիրը, Աշտիշատի ժողովի կանոնները և այլն<sup>15</sup>:

Չորրորդ դարի Հայաստանում ստեղծված գրային իրավիճակի մասին ուշագրավ երկու վարկած է առաջ քաշել Գ. Խ Սարգսյանը: Նա ընդունում է նախաքրիստոնեական Հայաստանում հայալեզու դպրության հնարավորությունը, անգամ շուրջ 500-ամյա պատմագրական անընդհատ ավանդույթի գոյությունը<sup>15</sup> և կարծում, որ չորրորդ դարում ևս հայալեզու դպրություն չի ընդհատվել, այլ արտահայտվել է հետերիոգրաֆիայի («այլալեզվագրություն») եղանակով: Վերջինիս համաձայն՝ օտարներից փոխառված գիրը կիրառվում էր բառերի նույն գծագրությամբ, սակայն կիրառողներն այն ընթերցում էին ոչ թե տվյալ գիրը ստեղծող ժողովրդի լեզվով, այլ իրենց լեզվի նույնիմաստ բառով<sup>16</sup>: Տարիներ անց նա հանդես եկավ նոր տեսակետով: Ընդունելով քարոզչության ընթացքում սինքրոն քարգմանության կարևոր դերը՝ նա առաջ քաշեց IV դարի Հայաստանում նաև հետերեպիկայի («այլալեզվախոսության») առկայության հարցը, ինչը մասնակիորեն որոշ ժամանակ կարող էր քավարարել գրի պահանջը: Ընդ որում, հունարեն և ասորարբան դպրոցների ծնունդը, Գ. Խ. Սարգսյանի կարծիքով, հայ իրակամության մեջ կարող է կապվել IV դարի հետերեպիկ ավանդույթի հետ<sup>17</sup>:

Հայագիտության մեջ շատ է արժանիք վեր օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյության խնդիրը: Առանց խորամուխ լինելու հարցի մեջ և վկայակոչելու այդ մասին նրանք տվյալներն ու հայտնված կարծիքները<sup>18</sup>, այստեղ քավարարվենք միայն նշելով, որ թեպետ տեսականորեն լիովին հնարավոր է նախամաշտոցյան Հայաստանում օտարագիր հայերեն գրության

գոյությունը, ներկայումս այդ մասին վկայող որևէ նյութական վկայություն չունենք (ինչպես որ չունենք նաև IV դարի հունարեն և ասորերեն ձեռագրեր կամ պատառիկներ, կտրոցներ, հետերիոգրաֆիայի մնուցներ)...

Եվ վերջում մի շատ քննարկված, բայց պատասխան չգտած հարցի մասին:

Հինգերորդ դարում հանրահայտ էր, որ գոյություն են ունեցել հայկական գրեր, և Մեսրոպ Մաշտոցն իր այբուբենի գյուտից առաջ ջանացել է գտնել ու կիրառել դրանք, այդ են վկայում Կորյունը, Մովսես Խորենացին և Կազար Փարպեցին<sup>19</sup>: Ի՞նչ գրեր էին դրանք:

Թերևս կարելի էր ենթադրել, որ խոսքը վերաբերում է մենեագրության մասին պահպանված եիշողությանը: Մակայն այն փաստը, որ մատենագիրները գործածում են «այփաբենների նշանագրեր», «տասնրի նշանագրեր» երերը, մղում է մտածելու, որ տեղեկությունները վերաբերում են ոչ թե բառա-վանկային մենեագրական համակարգին, այլ այբուբենին: Այս դեպքում պետք է պատասխանել մեկ այլ հարցի՝ հնարավոր է, արդյոք, IV դարում գոյություն ունեցած լինել հայկական այբուբեն: Փաստերի բացակայության պատճառով հարցին առայժմ հնարավոր չէ վերջնական պատասխան տալ՝ ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական: Մակայն արժե այստեղ հիշատակել հայագիտության մեջ գրեթե անուշադրության մատնված եթովպական ավանդազրույցը, որի համաձայն՝ Տրդատ Գ-ի օրոք երկու սրբակյաց հայեր՝ Թադեոսն ու Մարտիրոսը, ստեղծել են 24 տառանոց այբուբեն հայոց լեզվի համար<sup>20</sup>: Թե ինչ է քաջանված այս ավանդության հետևում, մնում է հետագա ուսումնասիրության խնդիր: Այդուհանդերձ, մնան տեղեկության գոյությունը թույլ է տալիս ենթադրելու, որ Տրդատ Գ-ի օրոք կարող էր ստեղծվել այբուբեն հայերենի համար, իսկ թե ինչու դա չի պահպանվել, այդ մասին կարելի է անել միայն ենթադրություններ, այն էլ մեծ վերապահումներով...

Ամփոփելուց առաջ ընդգծենք, որ հինգերորդ դարում գրական հայերենի մշակվածության բարձր մակարդակը և գրաբարի բառապաշարը ևս վկայում են հոգուտ հայերենի՝ նախամաշտոցյան դարաշրջանում (ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ IV դարում) երկարատև գրավոր մշակման ենթարկված լինելու իրողության:

Այսպիսով տեսնում ենք, որ Հայաստանի IV դարի գրային իրավիճակն ուրվագծվում է հետևյալ կերպ.

1. Տրդատ Գ-ի հրամանով քրիստոնեության պետականացումից հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում գործածվում են հունարենը և ասորերենը՝ իրենց այբուբեններով:
2. Տրդատ Գ-ի սահմանած կարգը փոփոխվել է Խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո. նշված երկու լեզուներով

- դպրություններին Արևելյան Հայաստանի պաշտոնական գրագրության համակարգում ավելացել է պահլավերենի (միջին պարսկերենի) կիրառությունը:
3. Արքունի գրագրության գոյությունը ենթադրում է արքունական դիվանների գոյություն, որտեղ պետք է պահվելին արտաքին հարաբերություններին, պետական-իրավական ակտերին վերաբերող և հասարակական կարևորություն ունեցող փաստաթղթեր:
  4. Հոգևոր քարոզչության և կրթական ասպարեզների առկայությունն ինքնին ենթադրում է ուսումնական, գիտա-կրթական ճեղքակնքի գոյությունը նշված լեզուներով:
  5. Շարունակում են շրջանառության մեջ գտնվել այն գործերը, որոնք ստեղծվել (կամ թարգմանվել) են մախաբրիստոնեական ժամանակաշրջանում և չեն արգելվել նոր կրոնի քարոզիչների կողմից (մաև հասել են մինչև V դար):
  6. IV դարի Հայաստանում առկա է կոթողային արձանագրությունների մշակույթը:
  7. Նոր կրոնի քարոզչական-գաղափարախոսական պահանջներով պայմանավորված՝ ստեղծվում են հիմնականում կրոնական, վկայաբանական-պատմողական բովանդակություն ունեցող գրական հուշարձաններ:
  8. Լուրջ հիմքեր կան ենթադրելու IV դարի Հայաստանում հետերիզոգրաֆիայի («այլալեզվագրության») և հետերոէպիկայի («այլալեզվախոսության») լայն կիրառության գոյությունը:
  9. Չի կարելի բացառել օտար (արամեական, հունական, ասորական, պարսկական) գրերով հայալեզու դպրության գոյության հնարավորությունը:
  10. Որոշակի վերապահումով, ելնելով եթովպական ավանդազրույցից, կարելի է ենթադրել, որ Տրդատ Գ-ի օրոք վարձ է արվել ստեղծելու այբուբեն հայերենի համար:

ARTAK MOVSISYAN

THE SITUATION OF WRITING CULTURE OF ARMENIA  
IN THE IV CENTURY

Under the king Trdat (Tiridates) III (298-330) the Christianity was adopted as a state religion, Armenian pre-Christian writing (*mehenagir*) was forbidden, after that Greek and Syrian became official languages of the Greater Armenia. Since 389 Pahlavic (middle Persian) became the official language in Eastern Armenia as well.

In article author shows the situation of writing culture in Armenia during the IV century, after adopting Christianity and before invention of alphabet by St. Mesrop Mashtotz.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տեղաձին գրահամակարգերը հն Հայաստանի վաղորդագրարկյան գաղափարագրությունը, Հայաստանի գծային գիրը, Վանի քաղաքագրության մեհենագրությունը, առեղծվածային հսկայազաննները և Հայաստանյան մոր սեպագիրը, իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում խեթա-լուվիական հիերոգլիֆիկան, ասորա-բաբելական և Վանի քաղաքագրության սեպագիր համակարգերը, արամեական և հունական այբուբենները (հանգամանորեն տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 8-40, 50-170, 200-212):

2. Այդ են վկայում հայ և օտար մատենագիրների մի շարք տեղեկություններ: II-III դարերի հույն պատմագիր Փիլոստրատոսը «Ապոլոն Տիանացու վարքը» երկում հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Պատմում են մուսուսիս, որ մի անգամ Պամփոլիայում բռնվել է մի հովազ, որի ոտկա մանյակի վրա հայերեն տատրով գրված էր հետևյալը. «Արշակ քաղաքի Նյուսիս աստծուն», այսինքն՝ Նյուսիս աստծուն նվեր Արշակ քաղաքից: Այս Արշակն այն ժամանակ հայոց քաղաքի էր և իր բռնած հովազը այդ կենդանու մեծության պատճառով նվիրել էր Պիոնիստին: Պիոնիստը ժողովուրդներից կոչվում էր Նյուսիս» (Հարությունյան Ի., Հայոց գրերը, Թիֆլիս, 1892, էջ 252; Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, I, Ե., 1981, էջ 619-620, քարգմ. Ի. Հարությունյանի): Խոսքը այստեղ 34-35 թվականներին քաղաքորած հայոց քաղաքի Արշակ Ա-ի մասին է:

Մեկ այլ հույն պատմիչի՝ Հիպոլիտի «Ժամանակագրության» մեջ, որը գրի է առնվել 234-235 թվականներին, սեփական դպրություն ունեցող ժողովուրդների մասին հաղորդում է. «... նրանք, որոնք ունեն դպրություն, հետևյալներն են. երբայցիները, լատինացիները, որով և հռոմեացիներն են վարում, սպանացիները, հույները, մարերը և հայերը» (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, I, Ե., 1981, էջ 621, քարգմ. Ա. Գ. Աբրահամյանի):

Նախամաշտոցյան Հայաստանում գրի ու գրակամության երկարատև ավանդույթի գոյության ամենախոստում փաստը Ազատագրության «Հայոց պատմության» մեջ պահպանված հաղորդումն է դպրության Տիր աստծո և նրա մեկնանի մասին. «Ապա ինքն իսկ (Տիրոս) քաղաքից ամբողջ զորքով հանրինք Վարդապատ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ քաղաքը ավերելու այնտեղ գտնվող Անահիտ դիցուհու քաղիքը և այն, որ Երզրանույն կոչված տեղերում էր գտնվում: Նայն մանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Ռոմեոյի (Արամազդի) գրչի Պիվան կոչված երազացույց, երազահան պաշտամունքի Տիր աստծո մարտարության ուսման մեղյանը և ամենից ատաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել» (Ազատագրության, Հայոց պատմություն (քնն. քննադիր Գ.Տեր-Մկրտչյանի և Ա. Կամայանցի, աշխ. քարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Նևոնյանի), Ե., 1983, ՃԸ, 778): Տիր աստծո պաշտամունքը հայոց նախաքրիստոնեական դիցարանում լավագույնս վկայում է այդ դարաշրջանում մեր ժողովրդի՝ սեփական դպրություն ունե-

նալու մասին: Առանց դպրության, քնակամարար, որևէ ժողովուրդ չէր կարող ունենալ դպրության աստծո պաշտամունք:

Ազաթանգեղոսի երկուս հայտնվում է մահ մախարրիստոնեական Հայաստանում նշանագրերի գործածության մասին, որոնք մախարրիստոնեական հայ դպրության գոյության տեսակետի կողմնակիցները համարել են հայալեզու, հակաաղանդական՝ այլալեզու: Առանց քննարկելու հայտնված կարծիքները՝ քերեմ Ազաթանգեղոսի երկու վկայությունները. «Արդ՝ հրաման է հասել ինձ՝ Ազաթանգեղոսի, որ մեծ Հորմ քաղաքից եմ, կրթված հայրենի գիտությունը, սովորել եմ լատիներեն (հռոմայերեն) ու հունարենը, ուսանել դպրությունը և ոչ խիստ անտեղյակ [մնացել] նշանագրերի արվեստին...» (Ազաթանգեղոս, Առաջաբան, 12) և «Այս ամենը (Գրիգորը) խոսեց այնպես կախված դրությանը, և գրեցին նշանագրերի ատենակալ դպիրները... գրեցին ու մատուցեցին այն թագավորին...» (Ազաթանգեղոս, Ը, 99):

Արժեքավոր տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին: Գրանցից ամենավաղ շրջանին վերաբերող կարելի է համարել Արամ մահապետի՝ արևմուտքում կատարած գործերի մկարագրությունը, երբ մա տիրելով Տիտանյանների մկաճած Սև և Միջերկրական ծովերի միջնատարածքին («զմիջոց երկուց ծովոց մեծամեծաց, գՊոնտոս և զՄկկիանոս»), հրամայեց տեղի բնակչությանը՝ «սովորել հայոց խոսքն ու լեզուն» («ուսանել զխոսս և զլեզուս հայկական»), տե՛ս Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց (աշխատութեամբ Մ: Արեղեան եւ Ս: Յարութիւնեան), Տիիսիս, 1913 (Նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Ե., 1991), գիրք Ա. գլ. ԺԴ): Հայոց լեզուն օտարներին սովորեցնելն, ինչ խոսք, հնարավոր էր միայն հայալեզու դպրության անկայության պայմաններում...

Պատմահոր մատյանում հիշվում է Բարդաճան պատմիչը (II-III դդ.), որը Հայաստան էր եկել քրիստոնեություն տարածելու, սակայն անհաջողության էր մատնվել: Լինելով Դարանաղյաց գավառի Անիի մեհենական արխիվում՝ մա «կարդաց մեհենական պատմությունը, որի մեջ մահ թագավորների գործերը: Նա իր կողմից ավելացրեց իր ժամանակի անցքերը, թուրքը թարգմանելով ասորերենի և ապա մրակից հունարենի» (Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԿԶ): Գ. Խ. Սարգսյանը և, մրամ հետևելով, Ա. Գ. Արրահայանը իրավացիորեն գտնում են, որ Անիում պալիտո մեհենական պատմության» սկզբնագրի լեզուն եղել է հայերենը (թագավորն էին հունարենն ու ասորերենը, քանի որ Բարդաճանը այն թարգմանել է հենց այդ լեզուների, տե՛ս Սարգսյան Գ. Խ., Նախամարտայան շրջանի հայ պատմագրությունը, ՊԲՀ, 1969, N 1, էջ 124; Արրահայան Ա. Գ., Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Ե., 1982, էջ 96-98): Լիովին ամհիմն են է. Ա. Պիլվազյանի և Լ. Գ. Խաչերյանի առարկումներն այդ կարծիքին, որոնք գտնում են, թե «մեհենական պատմության» լեզուն կարող էր լինել պարսկերենը (Պիլվազյան Է. Ա., Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության հարցի շուրջ, ՊԲՀ, 1962, N 4, էջ 158; Խաչերյան Լ. Գ., Հայ դպրութեան պատմությունը՝ քննական տեսութեամբ, հ. 1, Հայ դպրութեան սկզբնատրումը վաղմջական ժամանակներից մինչև հեթանոսական դարաշրջանի ասարտը (մ.թ.ա. VIII դ. - IV դ.

- մ.թ.), Անքիլիս, 2000, էջ 178-179): Պարսկերենը Հայաստանում (այն էլ միայն Արևելյան) կիրառվել է միայն 389 թ. հետո, այդ մասին տե՛ս ստորև:
3. Հայկական քաղաքացիական պաշտոնական գրագրության ոլորտում հունարենի և հունական այբուբենի կիրառման մասին տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի ..., էջ 111-163:
  4. Մովսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 129-142, 147-149:
  5. Ազաթանգեղոսի հաղորդման համաձայն, Տրդատ Գ-ն «Հայոց երկրի տարրերը կործանում էր համար տվեց՝ իր իշխանության նահանգներից, գավառներից ուսման համար մատաղ մանուկների քաղցրություն բերել է նրանց վրա հմուտ ուսուցիչներ կարգել... Նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հնչյունական» Ազաթանգեղոս, ՃԻ, 840):
  6. Ներսես Մեծ կաթողիկոսի մախաձեռնությամբ կատարված քարենորոգումների շարքում հիշատակում է «Հայաստանի բոլոր գավառներում հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ» հիմնելը (Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի), Ե., 1968, դպրություն Դ, գլ. Դ):
  7. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն (քնն. քննադիրը Գ.Տեր-Սկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Բ. Ուլտբաբյանի), Ե., 1982, դրվագ Ա, գլ. Ժ:
  8. Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԾԲ:
  9. Մովսես Խորենացի, գիրք Ա, գլ. Գ:
  10. Այդ մասին ունենք բազմաթիվ վկայություններ: Օրինակ՝ Տիգրան Բ-ի պատկերաքանդակով հունազիր մեծ կոթողը, որն ամենտացել է 1869 թ. Տրապիզոնի անգլիական հյուպատոսի կողմից Բրիտանական թանգարան ուղարկվելուց հետո կամ ճանապարհին (Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան Հայաստանի ..., էջ 117-118), Մովսես Խորենացու տեղեկություններն այն մասին, որ Մար Աբաս Կատինայի հավաքած պատմության մի մասը Վաղարշակ արքան հրամայել է «արձանի վրա դրչենք» (գիրք Ա, գլ. Թ), Վաղարշ Բ-ի որդի Խոսրով Ա-ն Կովկասյան լեռնակամեղի դեմ իրականացրած վրիժառու արշավանքից հետո կանգնեցրել է հունազեղու կոթող (գիրք Բ, գլ. ԿԵ), Տրդատ Մեծի թողած «հնչյունացի գրույթ» արձանագրության մասին (գիրք Բ, գլ. Լ, քննարկ ներկայումս ավելի ընդունված է Գառնիում թողած այդ արձանագրության հեղինակ համարել Տրդատ Ա-ին) և այլն:
  11. Դրա պերճախոս վկայությունն է Եղիշեի տեղեկությունը Ավարայրի ճակատամարտում զոհված հերոսների հիշատակին կանգնեցված գրակիր կոթողների մասին. «Բազում արձանք էին կանգնեալ յանուն նոցա եւ անուանք իրաքանչիւր նշանակեալ ի նոսա» (Եղիշեի վրան Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ քաղաքատոմարած ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ 203):
  12. Ջենոբ Գլակ Ասորի, Պատմություն Տարսուզ, գոր թարգմանեաց Ջենոբ Ասորի, Վենետիկ, 1889, էջ 31; Հովհան Մամիկոնյան, Տարսուզի պատմություն, Ե., 1989, էջ 41-42: Եթե ասորական և հունական գրերի կիրառությունը քրիստոնյա Հայաստանում համարախալտ իրողություն է, ապա այս

տեղեկության մեջ անակնկալ է «խամայիացի», այսինքն՝ արարական նշանների գործածության վկայությունը, որը, հավանաբար, հետագա դարերի հավերժ է, քանի որ արարներն իրենց մշակույթով, ինչպես հայտնի է, մեր տարածաշրջան են մտադր գործել հարյուրամյակներ հետո միայն... Գուցե կարելի է ենթադրել, որ սկզբնական քննադրում եղել է «խորայիացի», մասնավոր, որ երկաթագիր գրաբարում «մ» և «ր» տառերի գրությունը տարբերվում է ստորին մի մասնիկով:

13. Արգադյան Գ., Մեքենայի պատմությունը և Անանունի առեղծվածը, Ե., 1965, էջ 31-33:
14. Տն՝ Խաչիկյան Լ., Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եվիմիանի նորահայտ «Հարցման» առիթով), (արտատպված՝ ՊԲՀ, 1973, N 3-ից), Աշխատություններ, հ. Ա., Ե., 1995, էջ 28-44 և հոլանդ գրականությունը:
15. Մարգարյան Գ.Խ., Նախամենարայան շրջանի ..., էջ 122-126:
16. Саркисян Г. Х., К предистории армянской письменности, «Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում», Երևան, 1978, էջ 1-10 (նույնը՝ նաև ֆրանսերեն): Ուշագրավ այս վարկածը, սակայն, ցայսօր չի հաստատվել չորրորդ դարով թվագրվող որևէ հնագիտական փաստով:
17. Մարգարյան Գ.Խ., Հայոց գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի հայացքով, ՊԲՀ, 1990, N 4, էջ 22-30:
18. Դրանց մասին տն՝, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 460-673 (ուր հեղինակն ամփոփում է համարում օտարագիր հայերեն դպրության մասին տեսակետները); Արախանյան Ա.Գ., Նախամաշտոցյան հայ գիր ..., էջ 81-93 (հեղինակը գտնում է որ նախամաշտոցյան Հայաստանում արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս գրել են օտար լեզուներով, իսկ ներքին կարիքների համար՝ հայերեն, բոլոր դեպքերում գործածելով օտար տառանիշերը) և այլն:
19. Կորյունի հատորումից հասկացվում է, որ գործածությունից դուրս եկած հայկական գրերը գտել է Դամիել անունով ասորի եպիսկոպոսը. «Այն ժամանակ (Վոստյակոսի) արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դամիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի արիարակների նշանագրերը» (Կորյուն, Վարդ Ս. Սեսրոպ Մաշտոցի (աշխատությանը՝ Ա. Մաթևոսյանի), Ե., 1994, գլ. 5): Մովսես Խորենացին, անդրադառնալով նույն դրվագին, այդ գրերը կոչում է «զվաղնջոցն գտնալ / գրեալ նշանագիր տառից» (գիրք Բ, գլ. ԿԶ; ձեռագրերը պահպանել են և՛ «զտեալ», և՛ «զրեալ» տարբերակները (տն՝ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, 1913 (1991), էջ 326): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախնական քննադրում պետք է լինել «զտեալ», տն՝, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, էջ 107-108): Նույնն է հավաստում Ղազար Փարպեցին. «Եվ երանելի այդ Մաշտոցն այդ մասին երկար ժամանակ խորհում էր ու լալիս իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մորացածու լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ քաղմության արտերը» (դրվագ Ա, գլ. Ժ): Այն բանից հետո, երբ համոզվեցին, որ այդ նշանագրերը թավական չեն հայերենի հնչյունական

ողջ հարստությունը ճշգրիտ հաղորդելու համար, Մաշտոցն իր աշակերտներով գնաց Միջագետք՝ նույն Պանիկի մոտ՝ գտնելու պակասող տառերը, քայքայելով իր ականակաձև՝ շարունակեց պրպտումները, ինչի արդյունքը եղավ հանձնարից գյուտը...

20. Տաղավարյան Ն., Մագունն հայ տառից, Վիեննա, 1895. տե՛ս հավելիսծը:



**ԿԱՐԼԵՆԵ ՉԱՉԱՆԻ**

**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՔՈՒՐԴ  
ԺՈՂՈՎՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
(19-ԴՂ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)**

Մույն ուսումնասիրության հիմնական խնդիրներից է քարգմանական գրականության դերի գնահատումը քրդական մշակույթում, որը սկզբնավորվեց հայ մտավորականների կողմից 19-րդ դարի երկրորդ կեսին: Ինչպես արդեն նշել ենք, հայ մտավորականներից շատերն են զբաղվել հայերենից քրդերեն և քրդերենից հայերեն քարգմանությամբ: Մակայն սկզբնական շրջանում հայերենից քրդերեն քարգմանությունները կատարվել են կրոնական գրականությունից՝ քրդախոս հայ ընթերցողին այդ գրականությանը ծանոթացնելու նպատակով: Պարզ է, որ հայ մտավորականներից շատերը միևնույն ժամանակ ջանացել են նաև քրդերին ընտելացնել քրիստոնեական գաղղիարախոսությանն ու նրանց հեռու պահել մուսուլմանական քարոզչությունից: Բոլոր դեպքերում, հայերենից քրդերեն քարգմանությունները ամավերապես խթանել են քրդական մշակույթի և հատկապես քրդերեն գրական լեզվի զարգացումը:

Սեր պրպտումների ընթացքում քրդական մշակույթի պատմության մեջ առաջին անգամ ի հայտ եկան այնպիսի արժեքավոր գործեր, ինչպիսիք են կրոնական գրքերի քրդերեն քարգմանությունները: 19-րդ դարի կեսերին քրդերեն է քարգմանվել Նոր Կտակարանը, որը 1857թ.-ին հայաստան քրդերենով հրատարակվել է Կ. Պոլսում, Ա. Յ. Պոլսյանի տպարանում: Գիրքը բաղկացած է 398 էջից: Երկրորդ անգամ Նոր Կտակարանը քրդերեն տպագրվել է 1872թ. դարձյալ Կ. Պոլսում: Սակայն այդ երկու Կտակարաններում էլ նշված չեն քարգմանիչների անունները: Գրականագետ Գ. Ստեփանյանի կենսագրական բառարանից տեղեկանում ենք, որ հայ մտավորականներ Պետրոս Ամիրխանյանը, Ազատյանն ու Տեր-Ղազարյանը 1870թ.-ին Աստվածաշունչը քարգմանել են քրդերեն<sup>1</sup>: Պատմաբան Ա. Ալպոլսյանը, իր հերթին, «քրդական գիրն ու գրականությունը» հողվածում նշում է, որ Աստվածաշունչի առաջին քրդերեն քարգմանությունը կատարել է Դիարբեքիի վանահայր, հայաստա քրդերեն առաջին այբբենարանի հեղինակ Սկրտիչ Տիգրան-

յանը? Սակայն հայտնի է նաև, որ տվյալ ժամանակաշրջանում կրոնական գործերի, ինչպես նաև քրդերն վերոհիշյալ քարգմանությունները կատարվում էին Պոլսում գործող «Աստվածաշնչի ընկերության» նախաձեռնությամբ: Հետևաբար, սույն ընկերության անդամը լինելով, կարծում ենք, Սկրաիչ Տիգրանյանը այդ շնորհաշատ գործն ինքն է համձն առել և քարգմանել իր իսկ քրդերն հայատառ այբուբենով. (տես Մ. Տիգրանյան, Արեւմտահայ քրդերն և հայերն, Կ. Պոլիս 1860 թ.)

Ինչպես նշեցինք, 1872 թվականին Ստամբուլում ամբողջությամբ հրատարակվեց Ավետարանի քարգմանությունը: Այն բաղկացած է 624 էջից և 28 գլուխներից: Առաջին էջի վրա գրված է. «Ինչիլ խօսել է Սի խաւ էլ Մեխիհի նվիստանդըն» («Ետը Կտակարան անտոն Մեքոյ Յիսուսի Քրիստոսի): Այս երկրորդ քարգմանությունը, որն ավելի հաջող է, քան առաջինը, կատարված է քրդերնի կուրմանջի բարբառով, սակայն, հայկական որոշ տառեր, չհամապատասխանելով քրդերնի հնչյունաբանությանը, դժվարացնում են ընթերցումը: Ոչ մի տառ նշանակետերով չի հարմարեցվել քրդերնի հնչյունաբանությանը: Բոլոր դեպքերում, մեր համեմատությունից պարզվեց, որ քարգմանիչը լրիվ տիրապետել է կուրմանջիին և կատարել է բավականին դժվար, բայց հաջող քարգմանություն՝ պահպանելով ազգայնական և հոգեկենդանական հայեցակետերը: Եվ ամենակարևորն այն է, որ այս քարգմանությունում որոշակիորեն պահպանված են քերականական և ձևաբանական առանձնահատկությունները: Այդ ստույգ սա քրդերնի առաջին լուրջ մտնեցումն է հայ մտավորականության կողմից: Դրանով իսկ դրվեցին քրդերնի քերականության ուսումնասիրման հիմքերը:

Քրդերն հրատարակված երրորդ կրոնական գիրքը Մատթեոսի Ավետարանի սամձին քարգմանությունն է, որը բաղկացած է 148 էջից և լույս է տեսել 1891 թվականին Ստամբուլում՝ «Ինճիլա րապի մայի Յիսուս Քրիստոս քո Մատթեոս նվիսի» խորագրով:

Հայատառ քրդերն չորրորդ կրոնական գիրքը «Գործը Առաքելոցն» է, որը հրատարակվել է 1911 թվականին Ստամբուլում, և որի քարգմանիչը նույնպես մեզ հայտնի չէ: Այն բաղկացած է 138 էջից: Այս գիրքը քարգմանվել է էլ՝ ավելի հաջողված կուրմանջի բարբառով և ավելի ընթերցելի է: Ինչպես երևում է, քարգմանիչը արդեն ծանոթ է եղել մինչ այդ քրդերնով հրատարակված կրոնական գրքերին: Թարգմանությունում արդեն որոշ հայկական տառեր շեշտադրությամբ հարմարեցվել են քրդերնի հնչյունաբանությանը: Այստեղ արդեն քիչ են հանդիպում քուրքական և հայկական շարգմանվող բառեր: Թարգմանիչը ջանացել օգտագործել պարզ կուրմանջի բարբառը, որով հիմնականում խոսում են Թուրքիայի քրդերն ու հայերը:

Իսկ 1934 թվականին Բեյրութում «11 երգ ու շարական է Պը գուրմանջի» խորագրով հայատառ քրդերնով հրատարակվում է կրոնական

երգի քարգմանությունների մի ժողովածու, որը կազմել էր Ղ. Տեր-Ղազարյանը: Երգերը հիմնականում նվիրված են Քրիստոսին և նրա ծննդին:

Պետք է նշել, որ խնդրո առարկա քարգմանությունները խիստ արժեքավոր են և հարուստ նյութեր կարող են մատուցել ոչ միայն լեզվաբաններին, այլև գրականությանը, պատմությանը զբաղվողներին: Դրանք կարևոր են թե իրենց բառապաշարով, թե լեզվամտածողությամբ և թե իբրև գրական քրոնիկների ստեղծման աղբյուր:

Քրդական մշակույթի պատմության մեջ ուշագրավ ու արժեքավոր են հայ մտավորականության նախաձեռնությամբ այլ լեզուներից կատարված քարգմանությունները, որոնք հիմնականում տպագրվել են հայկական պարբերական մամուլում: «Արարատի» 1899 թվականի 12-րդ համարում տպագրված «Թարխուլ Արքայ կամ Շարաֆ Նամե քրդերի պատմությունը», կամ «Փառաց մատյան» ծավալուն հոդվածից տեղեկանում ենք մի հետաքրքիր քարգմանության մասին: Հոդվածի մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվում է, որ Դավրիժեցի հայոց վանատանականստ Աղա Ջաքարիա Նազարբեկյանցը հայտնել է հոդվածի հեղինակին, որի ներքայրը Արշակը, 1885-86թթ. Սոուջբուլաղում (Իրան), Մաքրի Մաքիթ խանի տանը, ռուսական հյուպատոսի խնդրանքով Շարաֆ Նամեի որոշ հատվածներ քարգմանել է ռուսերեն, իսկ ինքը նպատակադրվել է դա քարգմանել հայերեն: Այս հոդվածում Շարաֆ Նամեից արված մեջբերումները վկայում են այն մասին, որ հայ մտավորականները դեռևս 19-րդ դարի վերջերին ձեռնամուխ են եղել քուրդ ժողովրդի այդ արժեքավոր պատմության քարգմանությանը, այսպիսով ինչպես հայ, այնպես էլ ռուս ընթերցող հասարակությանը ծանոթացնելով այդ գործին:

Վերոհիշյալ հոդվածի տպագրումից հետո ինչպես «Արարատում», այսպես էլ հայկական մյուս պարբերականներում առավել հաճախակի են սկսում տեղ գտնել քրդական մշակույթին ու պատմությանը վերաբերող հոդվածներ ու հատորումներ, որոնց շարքում հատկապես աչքի են ընկնում օտար աղբյուրներից քրդական կյանքի վերաբերյալ քաղված քարգմանությունները:

Ինչպես հայտնի է, եվրոպական գիտնականներն ու ճանապարհորդներն ամերիկացիներն են ոչ միայն Հայաստանի և հայ ժողովրդի, այլև քուրդ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը, բանահյուսությանը և մշակութային այլ հարցերի: Հայ մտավորականներից շատերը բարձր գնահատելով նման նյութերը, իրենք էլ ջանասիրաբար զբաղվել են դրանց քարգմանությամբ և տպագրել հայ պարբերական մամուլում: Իրոք, սույն նյութերը քուրդ ժողովրդի մշակույթի պատմության արժեքավոր նմուշ լինելուց բացի, միաժամանակ նպաստում են հայ ընթերցողին քուրդ ժողովրդի պատմությանն ու մշակույթին ծանոթանալու գործին:

Պետք է նշել, որ մանանախայ հողվածների քարզմանության մասին ամենաառաջին «Սասնաց աղավնի» ամսագիրն է, որը 1864 թ. նոյեմբեր ամսվա իր համարում տպագրել է անգլիացի ճանապարհորդ Ջոն Սակ-դոնալդ Քլեյնի «ճանապարհորդություն ի Հայաստան» հոդվածը: Հեղինակը, ճանապարհորդելով Կարսի մինչև Բաղնիշ, մանրակրկիտ ցույց է տվել շրջանի քրդերի կյանքն ու նրանց փոխհարաբերությունները հայերի հետ՝ բարձր գնահատելով նրանց ազգային սովորությունները, հատկապես հյուրասիրությունը՝:

Այնուհետև իր 1876 թվականի 2-րդ համարում «Փորձ» ամսագիրը առաջին անգամ տպագրում է Ալբերտ Այնի «Montagne Kurde» (Քրդի լեռան) խորագրով քրդական կյանքի մասին պատմող վիպակը: Հայտնի է, թե այն ո՞վ է քարզմանի հայերեն, սակայն բոլոր դեպքերում, խմբագրությունը նպատակ է ունեցել ընթերցողներին ծանոթացնելու քուրդ ժողովրդի կյանքին, մշակութային հարցերին: Հանձինս վիպակի հերոս քուրդ Սեյիմ աղայի, մատնանշվում են քուրդ ժողովրդի վեհամեծքությունը, ազնվությունը, հումանիտական բարձր հատկությունները: Վիպակում մաս տեղ են գտել հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության, քուրդ ժողովրդի միատուկացի, ոչ միայն արևելքում, այլև Սեյիմի օջախում հյուրընկալված եվրոպացիների հոգին գերող բանասիրության մասին պատմող գեղեցիկ նկարագրություններ: «Ընդ որում, քուրդ աշուղը երգում է երեք լեզուներով՝ քրդերեն, պարսկերեն և թուրքերեն, նվագում է սազը, իսկ եվրոպացի հյուրերը կլանված լսում էին նրան»<sup>4</sup>:

«Փորձի» 1880 և 1881 թվականների մի շարք համարներում տպագրվում է Թեոդորոս Դեյոլի «ճանապարհորդություն Լազիստանի և Հայաստանի մեջ» հոդվածի քարզմանությունը, որն արժեքավոր է զուտ քրդագիտության տեսանկյունից: Հեղինակն ամրապարծել է Քյուրդիստանի աշխարհագրական բաժանմանը, քրդերի սոցիալ-տնտեսական վիճակին, քուրդ կնոջ և տղամարդու փոխհարաբերություններին, քրդական տարազին, ժողովրդական բանասիրությանը, քուրդ-եզդիների և հայերի բարեկամական կապերին<sup>5</sup>: Սույն հոդվածը հետագայում ամբողջությամբ, առանձին գրքով տպագրվում է հայերեն: «Փորձ» ամսագրում այնուհետև տպագրվում են մի քանի այլ հոդվածներ ևս, որոնք ժամանակին հետաքրքրել են հայ քրդագետներին և ընդհանրապես ընթերցողներին: Աղբյուրագիտական նյութերով հարուստ են Բ. Մանդրոյի «Կիլիկիա», Գ. Պատլի «Վանից մինչև Տիգրիս» հոդվածների քարզմանությունները, որոնցում մանրամասն տեղեկություններ կան Կիլիկիայի, Վանի և Ղարսի քրդերի միատուկացի, հայ քրդական հարաբերությունների մասին:

Հաջորդ արժեքավոր հոդվածը Ժան Տիեռլաֆուայի «Ուղևորություն ի Պարսկաստան» քարզմանությունն է, որը տպագրվել է «Բազմավեպի» 1894 թ. 4-6 –րդ համարներում: Հեղինակը բազմաթիվ օրինակներ

րով ցույց է տալիս Պարսկաստանի քրդերի սոցիալ-տնտեսական վիճակը, կենցաղը, պաշտամունքը: Քրդագիտության ուսումնասիրման առումով հետաքրքրական են նաև Շամուրի մի քանի հողվածներ, որոնք տպագրվել են «Բագմավեպի» մի քանի համարներում<sup>6</sup>:

1881 թվականին «Մեղու Հայաստանի» քերթը նախածեղմում է գնդապետ Ե. Լազարյանցի «Ղարձյալ մի քանի խոսք տաճկահայերի վիճակի բարվոքման մասին և մի հայացք Հայաստանի քրդերի և նրանց ծագման վերաբերյալ» ռուսերեն հոդվածի ֆարգմանությունը, որը տպագրվել էր «Кавказ» քերթի 1881 թ. դեկտեմբերի 24-ի համարում: Այդ հոդվածի ֆարգմանության հիմնական նպատակն ընթերցողներին Հայաստանում բնակվող քրդերի անցյալին և ներկային, Օսմանյան թուրքիայի կողմից վարվող քաղաքականությանը ծանոթացնելն էր<sup>7</sup>: Այս ծանրակշիռ և քրդագիտական հարցերով հարուստ հոդվածը լայն արձագանք գտավ հայ ընթերցողների ու մտավորականության շրջանակներում և 1882 թվականին ամբողջությամբ տպագրվեց «Մեղու Հայաստանի» քազմաթիվ համարներում<sup>8</sup>:

Աստիճանաբար ավելի մեծ քվով էին այդպիսի ֆարգմանություններ տպագրվում հայկական մամուլում, որոնք առավել հարստացնում էին քրդական մշակույթի գանձարանը: «Արձագանք» պարբերականում 1890 թվականին տպագրվում է ֆրասիացի անվանի պատմաբան, աշխարհագրագետ Էլիզե Ռեկլուի «Եզդի քրդեր» հոդվածը, որը մեծ հետաքրքրություն է առաջ բերում ինչպես հայ մտավորականությանը, այնպես էլ ընթերցողների շրջանում<sup>9</sup>: Եվ պատահական չէր, որ «Արարատ» ամսագիրը իր 1892 թ. N 23 ում տպագրում է հաջորդ` «Լազիստան, Հայստան ու Քուրդիստան» արժեքավոր հոդվածը, որը հետագայում, 1893 թ. Մայր Աթոռի միաբանության կողմից հրատարակվում է առանձին գրքով: Էլիզե Ռեկլուի յուրաքանչյուր ֆարգմանված գործը բարձր է գնահատվում հայ մտավորականության և ընթերցասեր հասարակության կողմից:

Քրդական մշակույթի հանդեպ հայ մտավորականության վերաբերմունքն արտահայտվում է քրդերենի լիարժեք տիրապետմամբ: Նրանց քրդերենից հայերեն կատարված ֆարգմանությունները բազմիցս տպագրվել են հայկական մամուլում: Նրանք շրջագայել են քրդական բնակավայրերում, ծանոթացել քուրդ ժողովրդի ճոխ բանահյուսությանը, հայատառ քրդերենով գրի ստեղծմանը և նրանց լավագույն նմուշները: Այս տեսակետից առավելապես աչքի է ընկնում հայ ակամավոր ազգագրագետ Ս. Հայկունին, որը քրդերենից հայերեն հարյուրավոր տողեր է ֆարգմանել:

19-րդ դարի վերջին այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարել նաև Սաղաթել անունով մի հայ մտավորական: Նա քրդերենից ֆարգմանել է «Մամ ու Չինե» քրդական վիպերգը և տպագրել «Լուսնայի»

1897 թ. երկրորդ գրքում<sup>10</sup>: Հեղինակը, հավատարիմ մնալով բնագրին, կարողացել է բանաստեղծական գրչով թարգմանել «Մամ ու Ջինեի» բոլոր երգերը, ընդ որում ոչ միայն «Մամ ու Ջինեն», այլև քրդական բանահյուսության բազմաթիվ այլ մուշներ հավասարապես հարազատ են եղել և՛ քրդին, և՛ հային: Դրանց մի մասը կրկին գրի է առնվել նրա կոմիգ:

Քրդական բանահյուսության լավագույն մուշները հավաքվել և նրանց մի մասը հայերեն է թարգմանել բանահավաք Ա. Սկրտյանը: Նա միևնույն ժամանակ գրադվել է քրդական բանահյուսության ուսումնասիրությանը, վեր հանել այդ գրականության արժեքները, հաճախակի մեջբերումներ անելով քրդական թարգմանություններից, բարձր է գնահատել քուրդ ժողովրդի մշակութային արժեքները և հատկապես քրդական ժողովրդական բանահյուսությունը: Քրդական մշակույթի պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նրա մի քանի ուսումնասիրությունները, որոնցից հարկ ենք հատարում կանգ առնել առաջին անգամ 1899 թվականին «Լուսնայում» տպագրված «Քրդական բանավոր գրականությունը» արժեքավոր հետազոտության վրա<sup>11</sup>:

Իր այս ընդարձակ հոդվածում հեղինակն ամերադառնալով քրդական բան ու բանին ստանձին-ստանձին կանգ է առնում քուրդ ժողովրդի բանաստեղծական խոսքի, հեքիաթների, ասացվածքների, առակների և այլ ժանրերի վրա, ցույց է տալիս նրանց ակունքներն ու ստեղծման շարժառիթները: Ամերադառնալով քուրդ ժողովրդի ստեղծագործական տաղանդին, հեղինակն իր հոդվածի հենց սկզբում գրում է. «Քրդերը օժտված են բանաստեղծական ձիրքով...»: Նա այնուհետև նշում է, որ քրդերն առանց լեռների, առանց գեղեցիկ բնության կյանք չունեն, նրանց ներշնչանքի աղբյուրը շրջապատող բնությունն է, մերթին ու արտաքին թշնամիների դեմ հերոսամարտերը, նրանց ստեղծագործական ոգեշնչման աղբյուրը գեղեցիկ, սևաչյա քրդուհին է՝ իր հավատարմությանը ու ազնիվ սիրով. «Պատերազմական խաղերի մեջ նա վատաբանում է քաջին, հաղթության պսակը տանողին, ծաղրով ծանակի առարկա է դառնում վիատվողը, երկչուդը»<sup>12</sup>:

Ամերադառնալով հերոսական երգերին, Սկրտյանը գեղեցիկ թարգմանությանը մեջբերում է կատարում և նույնիսկ մի քանի տեղ հայտառաք քրդերեն տեքստեր է ներկայացնում և տալիս է դրանց հայերեն թարգմանությունները: Նա կանգ է առնում հովվերգական՝ հիմնականում սիրային և արկածային ֆեմաների վրա: Այս դեպքում ևս նա տալիս է տեքստերի հայերեն թարգմանությունը: Քրդական ժողովրդական հովվերգական երգերից ուշագրավ է «Մամն ու Այշեի» վարպետորեն կատարված թարգմանությունը: Բարձր գնահատելով քրդական ժողովրդական ստակները, Ա. Սկրտյանը գրում է. «Մուսկների մեջ արտացոլվում է ժողովրդի աշխարհայացքը, իմացողությունը, փիլիսոփայությունը:

Դրանք ժողովրդի դարավոր փորձառության արդյունքներն են, եզրակացությունները: Ժողովրդի իմաստությունը, մտավոր և հոգևոր կարողությունը բանահյուսության ոչ մի ճյուղում այնքան խորը կերպով արտահայտված չեն, ինչպես առակներում»<sup>13</sup>:

Այս հեղվածը նյութերի ընդգրկման տեսանկյունից, նաև փաստերի օբյեկտիվությանը հայ մտավորականության կողմից քրդական բանավոր գրականության առաջին լուրջ ուսումնասիրություններից մեկն է, և կարևոր ներդրում է քրդական մշակույթի պատմության մեջ:

Ա. Սլյուսյանը նաև զբաղվել է քրդական ազգագրության հարցերի և միջցեղային փոխհարաբերությունների ուսումնասիրությամբ: Այս տեսակետից արժեքավոր է նրա «Իմիկներ» հեղվածը<sup>14</sup>:

Ինչպես նշեցինք, հայկական պարբերական մամուլը հաճախակի էր անդրադառնում քրդական ժողովրդական բանահյուսությանը, քարգմանաբար տպագրում նրա լավագույն նշումները: Ըստ արժանավայել պետք է գնահատել «Մուրճ» ամսագրի 1905 թվականի 5-րդ համարում լույս տեսած քրդական ժողովրդական «Ամարե կրճիղը» երգի քարգմանությունը: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այս երգը ստեղծվել է տպագրվելուց 30-40 տարի առաջ և «Ճիշտն Ղոտո» անունով մեծ տարածում գտել ոչ միայն քրդերի այլև հայ ազգաբնակչության մեջ<sup>15</sup>: Պետք է նշենք, որ երգը առ այսօր էլ լայն ճանաչում ունի. և ամենակարևորն այն է, որ քարգմանիչ Ա. Հովհաննիսյանը ոչ միայն այն քարգմանել է մեծ վարպետությամբ, այլև վերլուծել և տվել է երգի տվյալ ժամանակի պատմության, քրդական որոշ բաների հայերեն բացատրություններ<sup>16</sup>:

Քրդական ժողովրդական բանահյուսությունից հաջող ու արժեքավոր քարգմանություն է կատարել հայ մտավորական Ս. Մովսիսյանը: Նա քրդերից լսելով «Լեյլի և Մեջնուն» ժողովրդական վիպերգը, գրի է առել: Ապա այն քարգմանելով հայերեն՝ տպագրել է «Նոր դար» թերթի 1896 թվականի 141-142 համարներում<sup>17</sup>: Մովսիսյանն այն զրի է ստել հայ բանասացներից, որոնք լրիվ տիրապետել են քրդերենին և համարյա ժողովրդական բանահյուսության բոլոր նշումները պատմել են քրդերեն: Ինչպես ինքն է նշում, «Լեյլի և Մեջնուն» վեպը երգից Մշտ Բալադ գավառի Կոփ գյուղացի տանգրեթ (երգասաց) Մանուկ Ավդալյանը քրդերեն լեզվով»<sup>18</sup>: Հաստատապես կարող ենք ասել, որ սույն ստեղծագործությունը նոր տարբերակ է և առաջին անգամ գրի է առնվել հայ մտավորականի կողմից:

Հարկ է փաստել, որ 19-րդ դարում հայ մտավորականության կողմից քարգմանական գործում հանդես բերած նախաձեռնությունը ոչ միայն ջերմացրեց հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունները, այլև մեծապես նպաստեց քրդական մշակույթի և գրականության պատմության առավել խորությամբ ուսումնասիրմանը, նոր լույս սփռեց քրդա-

կան գրականության, հատկապես գրական լեզվի ուսումնասիրման գործի վրա, է՛լ ավելի հարստացրեց քրդական մշակույթը, նոր ուղիներ հարթեց հայ քրդագիտության մեջ՝ հնարավորություններ ընձեռնելով խորապես ուսումնասիրելու ոչ միայն քրդական մշակութային հարցերը, այլև քուրդ ժողովրդի պատմության հարցերը: Հայ ըմբեցողը էլ ավելի մոտիկից ծանոթացավ քուրդ ժողովրդի մշակույթի ու պատմության հարցերին:

KARLENE CHACHANI

THE ROLE OF TRANSLATIONS BY THE ARMENIAN INTELLECTUALS  
IN THE DEVELOPMENT OF THE KURDISH CULTURE  
(SECOND HALF OF XIX CENTURY)

The Armenian intellectuals have made multiple translations which promoted the development of Kurdish culture in the 2<sup>nd</sup> part of 19<sup>th</sup> century.

Such translations not only have warmed the relations between Armenian and Kurdish peoples on behalf of Armenian intelligentsia in the 19<sup>th</sup> century, but also highly have contributed to the Kurdish literature, particularly on the studies of literary language, have smoothed out the new ways in Armenian–Kurdish science.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեփանյան Գ., Կենսագրական քառաբան, հ. Ա, Երևան, 1997, էջ 84:
2. Մաշտոցի անվան մատենադարան, Ա. Ալպոլյաջյանի ֆ., թղթ. 4, վավ. 94:
3. «Մասնաց աղավթի», 1864, մոյնժեր, էջ 337-359:
4. «Փղոճ», 1876, N 2, էջ 305:
5. Նույն տեղում, 1881, N 5-6, էջ 100:
6. Բազմավեպ, 1894, N4, էջ 168, 1895, N8, էջ 362, N10, էջ 451, 1896, N4, էջ 158, N5, էջ 211, 313, 362, 403, 460
7. «Մերո չայաստամի», 1882, N128-38
8. Նույն տեղում, 1882
9. «Արձագանք», 1890, N10,27, 28:
10. «Լուսնայ», 1897, էջ 274-307:
11. Նույն տեղում, 1899, գիրք Ա:
12. Նույն տեղում
13. Նույն տեղում
14. Նույն տեղում, 1898, գիրք Բ, էջ 49:
15. «Մուրճ», 1905, N5, էջ 114:
16. Նույն տեղում:
17. «Նոր դար», 1896, N141:
18. Նույն տեղում, N142



ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԱՐԻԱՅԻՆԵՐԸ ՊԱՆԿՈՒՎԱՅՈՒՄ

Մեր վերջին հետազոտություններից մեկում ներկայացրել էինք մ.թ.ա. XIVդ. կազմված խեթական սեպագիր մի արձանագրություն, որը պարունակում էր Իսուվային (հայկ. Ծոփք) առնչվող երեք անձնանուններ՝ Դրանցից առաջինը աներկբայորեն խուրդիական էր (Կունարայի), իսկ մյուս երկուսը, ենթադրաբար, հնդարիական՝ Ուխտարնա ե Ուվա- [....]: Հողվածի՝ հրատարակության հանձնման պահին վերահիշյալ հնդարիական անձնանունները, հատկապես առաջինը (երկրորդի պակասավոր վիճակի պատճառով ենթադրությունը թեական էր), որակել էինք որպես «արիական»<sup>2</sup>:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ «արիական» հորջորջվող անձնանուն(ներ)ը չենք դիտարկել որպես դրա(նց)՝ մ.թ.ա. II հազ. Հյուսիսային Հնդկաստան մուտք գործած արիացիների կամ նույն ժամանակներում Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում (Հյուսիսային Միջագետք, Միդիա, Փոքր Ասիա, Պարսկաստան) վկայված «միտանական արիացիների» լեզվի դրսևորում: Քննարկվող անձնանունները որակվեցին որպես «արիական» գերազանցապես «միտանական արիներին» աշխարհագրական լայն ընդգրկման փաստի ճնշման տակ: Ընդ որում, ոչ պակաս կարևոր փաստարկ էր դիտվում ամենուրեք լավ վկայված խուրդի-արիական համակեցությունը (սիմբիոզ). այս երկու էթնիկական խմբերի կրողները սեպագրական աղբյուրներում մշտապես միասին են հիշատակվում:

Իսուվային և հարակից վերինեփրատյան շրջաններին վերաբերող խեթական տեքստերի հետագա հետազոտությունը հնարավորություններ է ընձեռում այս տարածաշրջանում մատնանշելու «արիներին» այլ հետքեր ևս:

Մ.թ.ա. XVդ. վերջերին – XIVդ. սկզբներին կազմված՝ խեթական արքա Առնուվանդաս I-ի և վերինեփրատյան երկրների միջև կնքված «կողմնակի պայմանագրում»<sup>3</sup>, որպես Իսուվայի հարևան Պախիտուվայի՝ ազնվականության ներկայացուցիչներ՝, հիշատակվում են մի շարք անձինք, որոնք խեթական արքայի կողմից հրավիրվել էին մայրաքաղաք Խաթթուսաս՝ ապստամբած Պախիտուվայի առաջնորդների դեմ արքայի

մեղադրանքները լսելու նպատակով: Ստորև ներկայացնենք պայմանագրի տեքստի համապատասխան հատվածը.

- Դիմային կողմ  
2) [...-d]u nu ka-a-aš a-pa-a-aš <sup>m</sup>Lu-pa-ki-u-ut-ta-a[š.....]-ta-aš <sup>m</sup>Ar-zi-u-ut-ta-aš  
3) [...-u]t-ta-aš <sup>m</sup>Wa-ar-ti-i-la-aš 2 LÚ<sup>MES</sup>[.....<sup>m</sup>(-)]hu-wa-as-sa-a-ta-aš BE-EL <sup>6</sup>UKUL

Վերոնկարյալ պախիստվացիներից երկուսի անունները՝ Arziutta և Lupakiutta, պարունակում են միևնույն –ut(š)a վերջածանցը (թերևս, նաև պակասավոր ...-u]t-ta-as-ը), որը խեթական և խուրրիական օճումաստիկում<sup>6</sup> այլևս վկայված չէ: Նախքան այս անձնանունները քննարկելը, անդրադարձ կատարենք դեպի Առաջավոր Ասիայի մեկ այլ տարածաշրջան՝ Սիրիա-Պաղեստին, որտեղ համաժամանակյա սեպագրական աղբյուրները հիշատակում են «միտանական արիերենով» բացատրվող տասնյակ անձնանուններ:

Տարբեր ուսումնասիրողներ առ այսօր հայտնաբերել են ավելի քան 40 անուններ<sup>7</sup>, որոնք թվագրվում են մ.թ.ա. XV-XIIIդդ.: Այդ ընդարձակ նյութերի շարքում կարող ենք առանձնացնել երկուսը, որոնց ստուգաբանությունը «արիերենի» հիման վրա որևէ կասկած չի հարուցում: Դրանք են՝ Indaruta<sup>8</sup> և Yamuta, որոնք կրում էին երկու մանր քաղաքական միավորների՝ Ակշապայի և Գուդդասունայի կառավարիչները: Այս անունները թեոֆոր կառուցվածք ունեն՝ Indar «Ինդրա» + -uta և Yamu «Յամի» + -uta. Ինդրան և Յամին վերայական դիցաբանում լավ վկայված աստվածություններ են: Ինչ վերաբերում է -uta վերջածանցին, ապա այն նշանակում է «սիրելի, X-ից պահպանվող/հովանավորվող», այսինքն Ինդարուտա = «Ինդրայի սիրելի/Ինդրայից հովանավորվող», Yamuta = «Յամիի սիրելի/Յամիից հովանավորվող»:

Այժմ վերադառնանք պախիստվական անձնանուններին: Հնարավոր է արդյոք դրանք ևս որակել որպես թեոֆոր կառուցվածք դրսևորող «արիական» անձնանուններ:

Arziutta (<sup>m</sup>Ar-zi-u-ut-ta-as). Վերին Եփրատի ավազանից արևմուտք՝ խեթական տեղության տարածքում այս անձնանվան հիմքը (arzi-) վկայված չէ. նույնը կարելի է ասել խուրրիական անձնանունների մասին<sup>10</sup>. Դա թույլ է տալիս քննարկվող անվան հիմքը փնտրել տեղական ինչ-որ լեզվում, նույնիսկ ժամանակագրորեն ավելի ուշ հատվածում:

Անհավանական չի թվում Գ.Ջահուկյանի կողմից առաջարկված համադրությունը՝ Վանի քաղաքության դիցաբանի <sup>6</sup>Aršibedini աստվածության հետ, որը վկայված է «Մեերի դռան» արձանագրության մեջ<sup>11</sup> և որի հիմքում մասնագետները իրավացիորեն տեսնում են ուրարտ.

arsibi բառը վերջինիս համահնչունությունը հայ. *արծիւ*-ի հետ թույլ է տվել այն ըխնցնելու հնդեվր. \*rg'irjio- հիմքից (d-ն ուրարտերենի վերջածանց է)<sup>12</sup>: Քննարկվող ուրարտական դիցանվան կապը *արծիւ*-ի հետ էլ ավելի է ամրապնդվում ԱՀմայակյանի դիտարկման շնորհիվ: Մեր-բար թեփեից հայտնաբերված բրոնզե երեք թիթեղների վրա արծիվը պատկերված է որպես գերազույն աստված Խաղդի սուրհանդակ, այնպես ինչպես այն առկա է այլ ժողովուրդների առասպելաբանական համակարգերում (օր., հունական, խեթական և այլ)<sup>13</sup>:

Այսպիսով, հնարավոր ենք համարում առաջարկելու պախխուվական arzi- բառահիմքը համեմատել ուրարտ. aršibi-, հայ. արծի բառերի հետ: Հնչյունական համապատասխանության խնդիր գրեթե չկա, քանի որ խեթական սեպագրական համակարգում z-ը կարող էր արտահայտել *q, g, ḫ* կամ շփական-աուլական որևէ հնչույթ:

**Lupakūtta** (<sup>m</sup>L-u-pa-ki-u-ut-ta). Այս անձնանվան երկրորդ վանկի ընթերցման հարցում մասնագետների շրջանում տարակարծություններ կան: Ա.Սեյալը 1930թ. տեքստի առաջին՝ մասնակի քարզմանարար ներկայացրած հրատարակության մեջ<sup>14</sup> այն ընթերցել էր pa: Ավելի ուշ Օ.Գըրին, նույնպես առանց հիմնավորման, առաջարկեց u<sup>15</sup>, որը և մտավ մասնագիտական հրատարակություններ. խեթական անձնանունների բառարանում և այլուր առկա է <sup>m</sup>L-u-ki-u-ut-ta-աձ ձևը: Վ.Խաչատրյանը մախընտրել է Ա.Սեյալի ընթերցումը<sup>16</sup>, որը միանգամայն ընդունելի է, սակայն ոչ միայն ս և ռ ճշանների արտաքին որոշ մնացորդներից բխող մեկնաբանության տեսանկյունից:

Խեթական սեպագիր և հիերոգլիֆային լուվիական մեծաքանակ անձնանունների շարքում *luk-ով* սկսվողները խապտ բացակայում են, որը չնայած չի կարելի լուրջ փաստարկ համարել, սակայն այնուամենայնիվ անհրաժեշտ է հաշվի առնել: Միանգամայն այլ է իրավիճակը *Lupakiutta*-յի պարագայում: *Lupakki* անվան ավելի քան մեկ տասնյակ հիշատակությունները թույլ են տալիս կողմնորոշվելու դեպի *Lupakiutta* ընթերցումը: Եվ որ մեր ընտրության հարցում առանձնակի կարևոր է, վերոհիշյալ *Lupakki* անվան կրողների մի մասը (եթե ոչ մեծ մասը), համաձայն տեքստերի, հստակորեն առնչվում է վերինեփրատյան տարածաշրջանին:

*Lupakki* անունը (որոշ դեպքերում՝ *Lubakki* ձևով) հանդիպում է առ այսօր հրատարակված շուրջ մեկ և կես տասնյակ խեթական տեքստերում: Այս անունը կրողներից միայն մեկն է փվագրվում հաստատապես մ.թ.ա.XIVդ.: Մյուս բոլոր դեպքերում տեքստերը վերաբերում են մ.թ.ա.XIIIդ., գերազանցապես Խաթթուսիյի III – Թուդխալիյաս IV ժամանակահատվածին (մոտավորապես 1260-1220-ական թվականներ):

Հնդ որում վերջիններից երեքը (թերևս, չորսը) վստահաբար առնչվում են Իսուվային: Մյուս դեպքերում, տեքստային ինֆորմացիայի սահմանափակ բնույթի պատճառով, դժվար է հետևություն անել դրանց՝ Իսուվայի հետ առնչակցության մասին, չնայած չի կարելի այդ բացատել: Ստորև ներկայացնենք Lupa-ki անունը կրող՝ Իսուվային առնչվող անձանց հիշատակող տեքստերի համառոտ բնութագիրը:

1) **KBօ XVIII 4** – Իսուվայի արքայի (անունը չի հիշատակվում) ցամաքը խեթական արքունիքի քարձրաստիճան պաշտոնյա GAL *QARTAPPI* («գլխավոր կառավար») Լուպակկիին<sup>17</sup>, որտեղ արքան վերջինիս դիմում է որպես «ին սիրելի հայր» (*ABI DÜG.GA-YA*): Արդյոք Լուպակկին Իսուվայի արքայի հայրն էր, վերոհիշյալ արտահայտությունից չի կարելի միանշանակ եզրակացնել, չնայած այդպիսի մեկնաբանությունը ճշմարտանման է ստորև ներկայացվող հաջորդ վկայությունից:

2) **KUB XXXI 68** – Մ.թ.ա.XIIIդ. երկրորդ կեսով թվագրվող տեքստ, որտեղ շարադրված են խեթական արքա Թուլիսայիս IV-ի դեմ կազմակերպված դավադրության մանրամասները<sup>18</sup>: «Գլխավոր կառավար» Լուպակկին հիշատակվում է որպես դավադրության մասնակիցներից մեկը: Նույն տեքստում նշվում է այն մասին, որ դավադիրների շարքերում էր նաև Իսուվայի արքան:

3) **KUB XL 80** – Իսուվայի արքա Արիշարրումայի կնոջ՝ թագուհի Կիլուշինեայի մահվան հանգամանքները պարզաբանող տեքստ: Ի թիվս այլ անձանց, հիշատակվում է Լուպակկին (*Lupa-ki* և *Lupa-ki* ձևերով):

4) **Korucutepe 6 (68-285)** – Մ.թ.ա.XIIIդ. Իսուվայի կարևոր հնավայրերից մեկից՝ Կորուցուտեպեից հայտնաբերված հիերոգլիֆային կնքադրոշմ<sup>19</sup>, ընթերցումը՝ *Lu-pa-ki*:

Սեր կարծիքով, իրավացի էր Հ.Գ.Գյուտերբլը, որ ժամանակին հարց էր քարձրացրել Կորուցուտեպեի կնիքի տիրոջ, KBօ XVIII 4-ի և KUB XXXI 68-ի Լուպակկի անունը կրող անձանց մույնականության օգտին<sup>20</sup>:

Իրոք, վերոհիշյալ չորս դեպքերում էլ Լուպակկին սերտորեն առնչվում է Իսուվային, ընդ որում նրա կնքադրոշմը առկա է Իսուվայի գլխավոր քաղաքներից մեկում. նա այստեղ պետք է որոշակի վարչական ֆունկցիաներ կամ առնվազն կալվածք ունենար: Թերևս, Կորուցուտեպեին այս պետության մայրաքաղաքն էր, քանի որ այստեղ առկա են նաև Իսուվայի արքա Արիշարրումայի և թագուհի Կիլուշինեայի կնիքները: Լուպակկին առնչակցությունը Իսուվայի արքայատոհմին հատուկ ուսումնասիրության կարիք ունի, սակայն ներկայումս կարելի է ենթադրել, որ խեթական արքունիքի «գլխավոր կառավարը» կարող էր լինել մեկը Իսուվայի ազնվականներից, որը մտել էր խեթական ժառանգության և նրա որդին հասել էր արքայական իշխանության: Թե Իսուվայի՝ առայժմ

մեզ հայտնի երկու արքաներից որ մեկի (Արիշարրումայի քե էխլիշար-րումայի) հայրն էր Լուպակկին, պարզ չէ: Լուպակկի անունը պարունակող մյուս տեքստերը, հնարավոր է, վերաբերում են խուվասի Լուպակկին (բացառությամբ, քերև, Սուպպիլուլիումաս 1-ի գորավարից [KBo V 6 և KUB XXXI 121]):

Ինչպես կարելի է ստուգաբանել Լուպակկի անձնանունը: Որքան մեզ հայտնի է, առայժմ միայն Ն.Սիբոնովն էր անդրադարձել այս խնդրին<sup>21</sup>: Առաջավոր Ասիայի տարրեր տարածաշրջանների գրավոր աղբյուրներում հիշատակվող արիական լեզվական իրողությունների շարքում մա ընդգրկել էր մաև վերոհիշյալ անձնանունը, համեմատելով այն հին հնդկ. *loṣāka* «չախկալի տարատեսակ», *loṣāsa* «չախկալ, աղվես» բառերի հետ: Այնուամենայնիվ, հեղինակը այնքան էլ վստահ չէր այս համադրության վրա, նշելով, որ Լուպակկի անվան հիմքում կարող էին ընկած լինել ասիական (ընդգծումը մերն է - Ա.Բ.) \**huba*, *hub(a)-ija*, կարիերեն *labios* բառերը:

Ակադ. Գ.Ջահուկյանը, քննարկելով հայերենի և խեթա-լուվիական լեզուների միջև առնչակցությունների խնդիրը, միջին խեթական տեքստերից մեկում հիշատակվող *Aliwāsu* անձնանվան հետ էր համադրել հայ. *արուես* բառը, որին կցված ծանոթագրության մեջ հարցականի տակ նշելով հետևյալը. «Հետաքրքրական է նշել, այս կապակցությամբ, մույն պայմանագրի՝ քերևս կենտումային լեզվի պատկանող *Lupakiu-ta-ḡ* *Aliwāsu*-ի համեմատությամբ(?)»<sup>22</sup>:

Երկրորդ համադրության առնչությամբ անհրաժեշտ է նշել հետևյալը: Խեթական արքա Առնուվանդաս 1-ի (մ.թ.ա. XV դ. վերջ – XIV դ. սկիզբ) օրոք կնքված սույն պայմանագրում<sup>23</sup> հիշատակվող *Aliwāsu* անձնանունը միայն արտաքննապես է նման հայ. *արուես*-ին: Այն քարոզ կառուցվածք ունեցող անձնանուն է, կազմված *ali-* (ամհայտ ծագում ունի) և լուվիերեն *wāsu-* «լավ, քարի» բառերից. երկրորդ քարոզորիչը լուվիերենում (մաև խեթերենում՝ *ašsu-*) շատ տարածված անձնանվանակերպ է:

Ինչ վերաբերում է հայ. *արուես*-ին, ապա այն ծագում է \**սլր-*, \**լսր-* հիմքից, որից հնդեվրոպական լեզուներում կազմված են շնագզիների անվանումներ (չախկալ, գայր, աղվես)<sup>24</sup>: Այսպես, ավեստ. *urpi-s* (լսրի-s) «շուն», *raopi-s* «աղվես, չախկալ», միջարևել. *rōpās*, նոր պրակ. *rōbāh* «աղվես», հին հնդկ. *loṣāśā* «չախկալ, աղվես», լատ. *volpes* «աղվես», իսպ. «գայր», հուն. *ἄλωπες* «աղվես» և այլն:

Փաստորեն, ակադ. Գ.Ջահուկյանը ճիշտ էր մկատել *Lupakitta* անվան առնչակցությունը վերոհիշյալ հնդեվրոպական բառահիմքին, սակայն *Aliwāsu* - *արուես* համադրության փաստարկի ազդեցության տակ այն չէր համադրել *Lupakki*-ի հետ:

Երբ Լուսակի անձնանվան հիմքում հնարավոր է տեսնել վերո-  
հիշյալ հնդեվրոպական հիմքը, ապա -k(k)-ն անհրաժեշտաբար պետք է  
դիտել որպես անձնանվանակերտ վերջածանց: Խեթական տեքստերում  
վկայված անձնանունների շարքում, որքան մեզ հայտնի է, ընդամենը  
տասներկուսն են ավարտվում -k(k)-ի, որոնցից ամենևին ոչ բոլորի հա-  
մար կարելի է վստահաբար առանձնացնել ենթադրելի -ki վերջածանց:  
Ստորև ներկայացնենք այդ ցուցակը<sup>25</sup>:

Akarkiš	(KUB XXIII 72)
Dulakki	(HKM 68)
Garnalaki	(CCT 1 34 - կապարովկական վտուի աքքադերեն տեքստ)
Hebattarakki	(KUB XXIV 14 – ժխապաշտամունքային տեքստ)
Nahhuwaški	(KUB XXVI 62)(անկա է նաև Nahhuwa անձնանուն)
Pašakki	(HKM 100)
Pahinakke և Pihinakki	(HKM 10,19)(կա նաև Pihina)
Pizzumaki	(HKM 17)(կա նաև Pizzumari)
Šuplaki և Šuplakiya	(HKM 106,107)
Tarwaški(š)	(HKM 73; KUB V 22; KUB XIII 35)
Tišpinki	(KBo III 13 – Պարասիի արքա՝ Աքքադի արքա Նարամսինի տեքստում)
Tiššinki	(KBo III 13 - Գուրսաուրայի արքա միևնույն տեքստում)

Վերոհիշյալ ցուցակում ուշադրության են արժանի հետևյալ դի-  
տարկումները.

- 1) Միայն երեք դեպքում է հնարավոր վստահաբար առանձնացնել  
-k(k) վերջածանցը, քանի որ միևնույն հիմքից վկայված են այլ կազմա-  
վորումներ (Nahhuwaški, Pahinakke/Pihinakki, Pizzumaki): Թերևս, սրանց  
շարքին կարելի է դասել նաև Pašakki-ն և Tarwaški(š)-ը<sup>26</sup>:
- 2) Անձնանուններից ոչ մեկի հիմքը հնարավոր չէ բացատրել խե-  
թա-լուվիական լեզուների հիման վրա<sup>27</sup>:
- 3) Այս անձնանունները կողմ մարդիկ ներկայացնում են այն աշ-  
խարհագրական տարածքները, որտեղ ենթադրելի է կասկական հոծ  
բնակչություն: Այսպես, ցուցակում ներկայացված տասներկու անուննե-  
րից վեցը վկայված են Մաշաա հյույսիս արևիսիում, որը գտնվում էր  
կասկական գոտու անմիջական հարևանությամբ: Նույնը հաստատ է  
նաև KUB XXVI 62-ում հիշատակվող երկու անունների համար: Akarkiš  
անունը կրում էր Իսուվայի առաջնորդներից մեկը, այսինքն, սա էլ խե-

թական չէր: Արքայի արքա Նարամսինի փոքրասիական արշավանքների մկարագրող տեքստի երկու արքաների (Tišpinki և Tiššinki) անուններին կցված տեղանունները տեղադրվում են Հալիսից արևմուտք՝ ժաման. Թուզ լճից հարավ-արևելք կամ արևելք<sup>28</sup>, այսինքն, խեթերի բնօրրանից դուրս: Ինչ վերաբերում է վերջին անվանը (Garnalaki), այս կապաղովկիական շրջանի տեքստերում չառ են ոչ խեթական անունները: Ինչպես էլ որ լուծվի ենթադրյալ -k(k) վերջածանցի լեզվական պատկանելության խնդիրը, դրա առկայությունը Լուպակի անձնանվան մեջ գրեթե հաստատ է վերը բերված նյութերի հիման վրա: Ավարտելով Լուպակի անվան հետ կապված մեկնաբանությունները, անհրաժեշտ է նշել դրան, մեր կարծիքով, ամօյվող ևս մեկ բանաձև: Խեթական տեքստում պաշտոնական ղեցաբանի՝ խուրրիական ծագում ունեցող կարևոր աստվածություններից էր ռազմի աստծո ֆունկցիաներով օժտված Նուպատիկը (տվորաբար գրվում է <sup>29</sup>Nu-pa/ba-ti-ik/g): Հյուսիսային Միջագետքի Նուզի խուրրիական քաղաքի տեքստերում այս անունը հիշատակվում է նաև <sup>30</sup>Lubadaga ձևով, որ վկայում է ո : I հեթթագայության առկայության մասին: Հատկանշական է, որ խուրրիական գերագույն աստված Թեշուրի կնոջ՝ Հալիս քաղաքի Խեթատ աստվածուհու հայտնի ծեսը ներկայացնող տեքստի տարբերակներից մեկում Նուպատիկի անունը գրված է առաջին հայացքից տարօրինակ եղանակով՝ <sup>31</sup>Lu-pa-ki-ta (KUB XXVII 13 Դինային կողմ I 6), իսկ մյուսում՝ <sup>32</sup>Lu-pa-[-:...] (KBo VII 27.9): Առաջին գրությունը կարող էր գրչի վրիպման արդյունք լինել: Հարկ է նշել, որ ո : I հեթթագայությունը բառակցքում վկայված է հենց Նուզիում (Lakišu : Nakīšu)<sup>33</sup>, ինչպես նաև տարբեր դիրքերում խեթական տեքստերում<sup>34</sup>: Նուպատիկ ղեցանվան և Լուպակի անձնանվան միջև հնարավոր կապի մասին ենթադրությունը չի հենվում միայն գրության նմանության փաստարկի վրա: Բանն այն է, որ Նուպատիկը ռազմի աստվածություն էր, իսկ գայլը կամ շունը հնդեվրոպական առասպելաբանության մեջ համդես են գալիս որպես ռազմի աստված և սերտորեն առնչվում են գերագույն աստծո հետ. սույն աստվածության ուղեկիցները գայլերն են<sup>35</sup>: Այնուամենայնիվ, առայժմ նպատակահարմար ենք համարում ձեռնպահ մնալ վերոհիշյալ Nupatik/Lupatik ղեցանվան և Լուպակի անձնանվան միջև կապ գտնելու ակնկալիքից, այն թողնելով միայն որպես աշխատանքային վարկած: Այսպիսով, հողվածում քննարկվող Arziutta և Lupakiutta անձնանունների -ut(t)a վերջածանցի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու դրանց «արիական» ծագումը:

Ամփոփելով սույն հետազոտությունը, անհնար է չըշել այս և մեր նախորդ հոդվածում քննարկվող «արիական» անձնանունների առկայությունից բխող հնարավոր եզրակացությունները:

Մ.թ.ա.XV-XIV դարերում Վերին Եփրատի ավազանում և դրա մերձակցությամբ տեղադրվող ջաղաքական միավորներում, այսպիսով, վկայված են հին հնդկերենով (վեդայական կամ սանսկրիտի փուլ) ստուգաբանվող մի շարք անձնանուններ, որոնց կրողները տեղական ազնվականության ներկայացուցիչներ են եղել: Այս երկու երկրներից պահպանված զգալի թվով անձնանունների լեզվաբանական քննությունը դեռևս չի իրականացվել, սակայն նախնական դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ այստեղ միանշանակ առկա են տարբեր լեզուների հետքեր (այլ հնդեվրոպական և խուրրիերեն):

Օրինակ, հստակ խուրրիական Ali-Sarruma, 'Anziliš, Kili, 'Kilušhepa, Tahišalli(?) և այլն<sup>33</sup>: Խեթա-ուրիական լեզուները ներկայացված են Šanta, Walwazi և այլ անուններով: Սրանց կողքին առկա են էլ ավելի մեծաքանակ անուններ, որոնց լեզվական պատկանելությունը առայժմ հնարավոր չէ պարզել. օրինակ, Agga, Aritku, Hateš, Hinis, Huruš, Kalimuna, Kasiyaraš, Kuwas, Mahuilu, Piğgana, Ušapa, Watahis և այլն:

Սույն իրողությունից բխող առավել հավանական ենթադրությունն այն է, որ ուսումնասիրվող տարածաշրջանը մ.թ.ա.II հազ. կեսերին իրենից ներկայացնում էր տարբեր էթնոլեզվական արեալների հանդիպավայր:

Ամիրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրելու նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա: Պախխուվայում, ինչպես նաև վերջինիս հարևան Իսուվայում արիերենի ներկայությունը կարող է հնարավորություն ընձեռել ավելի լրջորեն մտոենալու Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկում հիշատակվող հնդիկ եղբայրներ Դեմետրի և Գիսանեի ու նրանց սերունդների առկայությանը Տարոնում: Մատենագիրը սրանց գործունեությանն է վերագրել Աշտիշատի ու Քաղթե լեռան վրա գտնվող բազմաթիվ կառուցումներ: Այս ամոթությամբ անհնար է շրջանցել վերոհիշյալ տարածքի հետ խեթական աղբյուրում հիշատակվող Պախխուվայի մերձակցության, եթե ոչ նույնականության փաստը: Վերջինս, դատելով ըստ ամենայնի, պետք է գտնվեր Բյուրակնի լեռների շրջանում՝ ներառելով, թերևս, Տարոնի մի մասը<sup>34</sup>: Ոչ պակաս գրավիչ է Դեմետրի և Գիսանեի կողմից Վիշապ ջաղաքի կառուցման մասին հիշատակությունը, մի անուն, որ կարող է իր զուգահեռը գտնել Պախխուվայի ապստամբության առաջնորդի անվան մեջ (Ušapa):

P.S. – Թվում է, բոլոր հիմքերը կան վերամայելու ուրարտական արձանագրություններում վկայված որոշ քանակությամբ հատուկ անունների համար ժամանակին տարբեր մասնագետների կողմից առաջարկված ստուգաբանությունները: Հայկական լեռնաշխարհի տարբեր



շրջաններում և հարակից տարածքներում առնվազն մ.թ.ա. III հազ. կհ- սերից կանոնավոր կերպով հանդես եկող հնդիրանական (կամ հնդար- րիական) լեզուների հետքերը ինչ-որ կերպ պետք է պահպանվեին մեր տարածաշրջանի նյութերում: Այժմ վաղ է այդպիսի մի շարք դեպքերի համար հիմնավոր մեկնաբանություն առաջարկել, սակայն մշել որպես հնարավոր տարբերակ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է:

<sup>41</sup>Arubani/Arubani – Ուրարտական դիցաբանի գլխավոր աստ- վածություններից մեկը՝ զերագույն աստված Նադիի կինը<sup>42</sup>: Ս.Հմայակ- յանի կողմից համադրվել է միտաննական դիցաբանի «արիական» դի- ցախմբի \*Uruwana-ssii-ի հետ (= հնդկ. Վարունա)<sup>43</sup>:

<sup>42</sup>Selardi – ուրարտական դիցանուն (զրուսնի աստված)<sup>44</sup>:  
<sup>43</sup>Adaruta – ուրարտական աստվածություն<sup>45</sup>, որին Գր. Վափանց- յանը համարում էր սեմական Atar/Adar/Astor(et)/Astarta աստվածուհու հետ<sup>46</sup>: Ինչու սեմական, եթե ավելի հավանական է հնդեվրոպական – հնդարիական ծագումը, օրինակ, atar «կրակ, հուր» + -uta («հրածին» մո- տավոր հիմաստով):

<sup>44</sup>Ardini – ուրարտական տերություն գլխավոր սրբավայրը՝ Նալ- դիի պաշտամունքի կենտրոնը (= ասորեստ. արքայուհուների Musasir), որի անվանումը Գ.Ջահուկյանը բխեցնում էր ardi «աստված» բառից<sup>47</sup>:

<sup>45</sup>Վերոհիշյալ ցուցակը կարելի է ընդլայնել ի հաշիվ ոչ միայն ան- վանաբանական, այլև այլ բնույթի նյութերի:

ARAM KOSYAN.

#### ARYANS IN PAIHUWA

In one of the previous articles the author had pointed on the existence of two "Aryan" personal names in the cuneiform Hittite text of the XIVc. B.C. dealing with the country of Isuwa (*Uitarna and Uwa-...*) and one Hurrian (*Kumarpi*). Further studies had revealed two more names born by the elders of the neighboring Pahiwa – *Arziuta* and *Lupakiuta*. Both names are built with the well-known Old Ind. suffix *-ut(i)a*. As to the stem of these names, *Arzi-* could be compared with the Urartian (of Old Armenian origin) *arsibi*, the another – with the IE \**ulp-*, \**lup-* "wolf, dog, chakal".

#### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. A. K o s y a n. An Aryan in Isuwa. - Iran and the Caucasus, vol.10/2 2006, p. 1–6.
2. «Արիացի» և «արիերեն» տերմինները կիրառվում են մշելու հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական (կամ հնդարիական) լեզվախմբի անդամ որևէ լեզու (կամ դրա բարբառները): Հարկ է մշել, որ վերջին շրջանում սիրողական բնույթի որոշ հրապարակումներում «արիացի» տերմինը

կիրառվում է որպես «հնդեվրոպացի» տերմինի համարժեք: Ավելին, սույն հնդեվրոպացիները հավասարապես նշան են դնում «հնդեվրոպացի», «արիացի» և «հայ» տերմինների միջև, եզրակացնելով, որ քաղաքակրթության արշալույսին և նույնիսկ շատ ավելի վաղ արդեն գոյություն ունեցող մեծաքանակ «հայ ժողովուրդ», որից ժամանակ առ ժամանակ անջատվել են վերաբնակիչների խմբեր՝ սկզբնավորելով մնացած հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական ժողովուրդներին («Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» խորագրով հայագիտական գիտաժողովի քննարկ, Եր., 2004, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ):

3. Հրատ. A. H. S a y c e. Hittite and Moscho-Hittite. - Revue hittite et asianique 1, 1930, p.1ff. (քարգմանաբար); O. R. G u r n e y. Mita of Pahlhawa. - Liverpool Annals of Archeology and Anthropology 28, 1948, p.32ff. (քարգմ.): Վ. Խ ա շ ա տ ր յ ա ն. Հայաստանը մ.թ.ա. XV-VI դդ. - Եր., 1998, էջ. 87-93 (հատված. քարգմ.): Ա. Ջ ո ս յ ա ն. Անի-Կամակը խեթական դարաշրջանում. - Պատմա-քանակական Հանդես, 2002/3, էջ 227 (հատված.):
4. Պախտավայի համար հստակ տեղադրություն առայժմ հնարավոր չէ առաջարկել, քերտ, այն պետք է փնտրել Իստվայից արևելք, հյուսիս-արևելք՝ Բյուրակնի լեռների շրջանում (այս նրկի անվան գրություն ձևերը, տեղադրման և անվան ստուգաբանության վերաբերյալ առկա կարծիքները տես Ա. Ջ ո ս յ ա ն. Հայկական լեռնաշխարհի տեղանունները. Եր., 2004, էջ. 75-77, 116-117):
5. Տեքստի սկզբում առկա վնասվածքների պատճառով կորել է այն հատվածը, որտեղ պետք է նշվեր այստեղ հիշատակվող անձանց ելակետը: Ամենայն հավանականությամբ, սրանք պախտավայցիներ էին, քանի որ ամենավաղը կցված չեն համապատասխան տեղանուններ կամ կարգավիճակը բնորոշող տերմիններ, ինչը առկա է պայմանագրի երկրորդ մասում, որտեղ խեթական արքան դիմում է Իստվայի և մյուս շրջանների «ավանդներին»:
6. E. Laroche. Les Noms des Hittites. Paris, 1966; i d e m. Les noms des Hittites: Supplément. - Hethitica IV, 1981, p. 1ff.; S. A l p. Hethitische Briefe aus Maşat Höyük. Ankara, 1991, S. 48ff.
7. N. D. M i r o n o v. Aryan Vestiges in the Near East of the Second Millenary B.C. - Acta Orientalia XI, 1933, p. 140ff.; R. T. O' C a l l a g h a n. Aram Naharaim. Roma, 1948, p. 56ff.; M. M a y r h o f e r. Die Indo-Aryer im Alten Vorderasien. Wiesbaden, 1966 (passim):
8. 'en-da-ru-ta/'m-tar-u-da = Ind(ə)ra, որի համարժեքը առկա է Ռիգվեդայում՝ Indrota/Indrauta (M i r o n o v. loc.cit., p. 175f.; R. T. O' C a l l a g h a n. loc.cit., p. 61, 152): Ն. Միլոնովը նշում էր, որ Վերաներում վկայված է մահ. Indara ձևը: Նա միաժամանակ արիական ստուգաբանություն էր առաջարկում Ակշայա քաղաքանվան համար, որի կառավարիչը վերոհիշյալ Ինդարտան էր (Akšapa = հին հնդկ. \*akšapá «անասան» - p. 185):
9. 'ya-mi-u-ta (R. T. O' C a l l a g h a n. loc.cit., p. 61, 152):
10. I. J. G e l b, P. M. P u r v e s a n d A. A. M a c R a e. Nuzi Personal Names. Chicago, 1943.

11. Г. Б. Джукьян. О соотношении хайасского и армянского языков. — *Պատմալեզվաբանական հանդես* 1988/2, сс.71,81; Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ер., 2001, N.38 112, 1120.
12. И. М. Дьяконов. Заметки по урартской эпиграфике. — *Эпиграфика Востока* 4, 1951, с.115 прим.3; Э. А. Грантовский. Ранняя история иранских племен Передней Азии. М., 1970, с.293слл.; Г. Б. Джукьян. Урартские заимствования в армянском языке. — В сб.: "Культурное наследие Востока", Ленинград, 1985, с.369; У. Ф. Հմայալյանի մասին բազմաթիվ պատմական կրոն. եր., 1990, էջ 58 և այլն:
13. У. Ф. Հմայալյանի մասին նշված, էջ 59.
14. А. Н. Саусе. loc.cit., p.5.
15. О. Р. Гутней. loc.cit., p.33.
16. E. Laroche. *Les Noms*, 1966, p.107 (այստեղ նաև ստյմ անճմանվան տերտային հղումները):
17. Տերտային տառադրոմը և բարձրամոթյունը տես H. Kienel. *Nochmals zu Išua*. - *Oriens Antiquus* XV, 1976, S.86f.
18. Տերտային մասնակի հրատարակությունը և մեկնաբանությունը տես R. Stefański. *Studi ititi*. - *Athenaeum* 40, 1962, p.22ff.
19. H. G. Güterbock. *Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe*. - *Journal of Near Eastern Studies* 32/1-2, 1973, p.142, N.6.
20. H. G. Güterbock. loc.cit., p.142 n.24; նաև A. Ünal. *Hattušiliš III.1*, Heidelberg, 1971, S.119f. (ստացարկում է նույնացնել KUB XXXI 68, Korucutepe, KBo IX 31 և KUB XXIII 45-ի՝ Լուպակի անունը կրող անճանց). *J. de Roes*. *Who was Kilušepa?*. - *Jaarbericht van het Voorzatisch-Egyptisch Geselschap „Ex Oriente Lux“* 29, 1985-86, p.75 (այս Լուպակիի հետ է համադրում խեթական բազմոմն [Խաթթոսի 11-ի կիճը՝ Պողոսեպան] ասարկած KBo XVIII 1 նամակում հիշատակվող համանուն անճմալորոթյունը):
21. N. D. Mironov. loc. cit., p.205f.
22. Գ. Քահուկյան. Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, եր., 1987, էջ.340, ծանոթ.39.
23. A. Kempiński und S. Kosak. *Der Işmenğa-Vertrag, Die Welt des Oriens* 5/2, 1969-1970, S.191ff.
24. J. Pokorny. *Indogermanisches etymologisches Wörterbuch*, Bd.I, Bern und München, 1959, S.1179.
25. Այս ցուցակում հաշվի են առնված փոքրասիական անճմանոմների հետևյալ քառաբանների և նորահայտ տերտային նյութերը՝ E. Laroche. *Les Noms des Hittites*, 1966 (NH); i d e m. *Les noms des Hittites: Supplément*; S. A I p. *Hethitische Briefe aus Maşat Höyük, Cuneiform Texts from the British Museum* (CCT); J. - M. Durand et E. Laroche. *Fragments Hittites du Louvre*. In: *Atatürk Memorial*, Paris, 1982, p.73-107; G. Beckman and H. A. Hoffner. *Hittite Fragments in American Collections*. - *Journal of Cuneiform Studies* 37/1, 1985, p.1-60.
26. Tarwaski(š)-ի հիմքում Ալլիի հակված եր տեսնելու կապաղովկական ժամանակաշրջանի փոքրասիական դիցարանի աստվածներից մեկի՝

- Tarawa-ի անվանումը (S. A I p. Hethitische Briefe. S.99): Hebatarakki անվան մասնատման հարցում է. Lարոշը պայմանականորեն առաջարկում էր Hebat-arakki կամ Hebat-arakki (E. L a r o c h e. NH. p.348), այսինքն այստեղ հակված չէր առանձնացնելու խնդրո առարկա վերջածանցը: Ամեն դեպքում, այս անձնանունը վկայված է խորրիհրեն լեզվով գրված ծիսական տեքստում, որը, սույն անձնանվան հիմքում ընկած խորրիական Hebat աստվածուհու անվան հետ միասին, կարող է նշել դրա խորրիական, համեմայնողնաց, ոչ խեթական ծագումը:
27. Բացառությամբ, բերև, մախորդ ծամորագրության մեջ նշված Tarwas(š)-ի, որի աննշակցությունը Tarwa ղիցանվանը դժվար է ապացուցել:
  28. Այս մոտավոր տեղադրությունը հենվում է Ստրաբոնի կողմից հիշատակվող Garsaura տեղանվան (S t r a b o XII 537,538,568, XIV 663) հետ համադրման վրա (E. L a r o c h e. Etudes de toponymie anatolienne. - Revue hittite et asianique 69, 1961, p.82):
  29. V. H a a s. Geschichte der hethitischen Religion (= Handbuch der Orientalistik. Abt.1, Bd.15). Leiden, 1994. S.850ff.
  30. I. J. G e l b, P. M. P u r v e s a n d A. A. M a c R a e. loc.cit., p.94.
  31. Օրինակները տես H. K r o n a s s e r. Etymologie der hethitischen Sprache.I, Lief.2. Wiesbaden, 1963, S.58ff.
  32. Мифы народов мира. том 1, М., 1987, с.242.
  33. Խեթագիտական իրատարակություններում գերիշխում է այն տեսակետը, ըստ որի Բուտվան գերազանցապես խորրիարեան է եղել (I. S i n g e r. Hittites and Hattians in Anatolia at the Beginning of the Second Millennium B.C. Journal of Indo-European Studies 9, 1981, p.123; G. W i l h e l m. The Hurrians. Warminster, 1989, p.25; A. Ü n a l. Studies in Ancient Anatolian Magical Practices: The Hittite Ritual of Hantitassu from the City of Hurma Against Troublesome Years (CTH 395), Ankara,1996 p.9f.; Գա. Չ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, էջ 323): Հարկ է նշել, որ այս երթադրությունը հիմնականում հենվում է Բուտվայի մ.թ.ա.XIII դարի անվանադրական նյութերի վրա, որ իրոք պարունակում է խորրիհրեն անձնանունների հոծ շերտ. այս փուլում Բուտվայի իշխող դինաստիան խորրիական էր:
  34. Պախլիստվայի տեղադրության համար տես վերը ծանոթ.4:
  35. Н. А р у т ю н я н. Корпус, с.479сл. и 491.
  36. Ա. Հ մ ա յ ա կ յ ա ն. նշվ.աշխ., էջ.110-111.
  37. Н. А р у т ю н я н. указ.соч., с.490; Ա.Հմայակյան. նշվ.աշխ., էջ.48-50.
  38. Н. А р у т ю н я н. указ.соч., с.477.
  39. Г р. К а п а н ц я н. Об урартском божестве Адаруга. — В. Сб.: Историко-лингвистические работы, т.II, Ер., 1975, с.190сл.
  40. Գ. Չ ա հ ու կ յ ա ն. նշվ.աշխ., էջ.434.

МАКСИМ ХАМОЯН

К ТЕОРИИ СЛОВСОЧЕТАНИЯ  
(на материале курдского языка)

Задача разработки теории словосочетания ставит перед наукой ряд вопросов, среди которых значимыми и принципиальными являются следующие: Каков объективный метод исследования словосочетаний с подчинительной связью компонентов, соизмеримый с задачей их научного определения? Каково лингвистическое назначение подчинительных словосочетаний в языковой системе? И какова языковая модель образования подчинительных словосочетаний, демонстрирующая присущую только им структурно-семантическую организацию?

Правильное и четкое понимание сущности подчинительных словосочетаний как целых и целостных фактов языковой действительности, представляющих особый тип проявления языковой материи, непосредственно зависит от глубокого осмысления этих вопросов и обоснованного ответа на них. Между тем они как таковые не только специально не разработаны, но и в такой своей постановке не поставлены в науке, хотя их отдельные стороны постоянно находились и находятся в центре внимания исследователей.

Попытаемся в ограниченных рамках предлагаемой статьи представить наше понимание сущности этих вопросов при учете опыта и результатов изучения подчинительных словосочетаний разных языков.

Лингвистическая наука не располагает полноценным определением переменного (свободного) подчинительного словосочетания, которое образуется в условиях речи в составе предложения. Причина этому заключается, в первую очередь, в традиционном несоблюдении соизмеримости исследовательского направления с задачей научного определения словосочетания. В то время как вопрос определения синтаксического

словосочетания требует ответа — научного определения, основанного на характеристике его комплексной организации в целом, придаваемые ему определения обычно ограничиваются представлением отдельных частных признаков его внешней формы, т.е. формальной организации. Разные методики выделения и анализа словосочетания в этом аспекте обусловили, с одной стороны, появление в разных формулировках отдельных частных неполноценных определений и, с другой стороны, существенные расхождения в самой теоретической трактовке и интерпретации этой формы. Показательно, что и сами исследователи подчинительного словосочетания признают, что в определении словосочетания нет полного согласия и единства между разными научными грамматиками<sup>1</sup>.

Обращает на себя внимание тот факт, что синтаксическая наука, имеющая длительную историю существования, в исследовании словосочетания и освещении его сущности в общих чертах находится еще на своем полпути. В ней основные вопросы теории словосочетания не имеют однозначного решения, некоторые из них мало разработаны, являются спорными. А некоторые вопросы, которые касаются природы значения словосочетания, его референтной соотнесенности и лингвистического назначения и т.д., как таковые вообще не ставятся.

Как показывают результаты изучения синтаксического материала разных языков и, в частности, построенные на их основе характеристики — определения непредикативных подчинительных словосочетаний, внимание ученых по сей день сконцентрировано исключительно на их внешней форме, на разных аспектах этой формы, элементах ее внутреннего членения, соотношениях этих элементов и т.д. В этих определениях необоснованно господствует убежденность в том, что исследуется и определяется не форма словосочетаний, а их комплексная организация в целом. В зависимости от этого структурно-семантическая организация внешней формы словосочетания представляется не иначе как структурно-семантическая организация всего словосочетания. Результатом подобной трактовки внешней формы словосочетания является практикуемый до сих пор в научной и учебной литературе так называемый структурный, синтаксический анализ словосочетания, рассматриваемый как анализ целостной организации словосочетания, но в действительности являющийся анализом лишь

его материальной оболочки, позволяющим детализировать и выделить элементы внутреннего членения этой оболочки. В результате смешения формы словосочетания с его структурно-семантической организацией в целом определение формы словосочетания необоснованно представляется как определение всего словосочетания. Приводим некоторые из этих определений, встречающихся в научной и учебной литературе: «Словосочетание – грамматическое и смысловое объединение на основе подчинительной непредикативной связи знаменательных слов, между которыми имеются атрибутивные, объектные или обстоятельственные отношения»<sup>2</sup>. «Назначение словосочетаний: выражать отношения между понятиями, выраженными словами...»<sup>3</sup>. «Словосочетание – это смысловое и грамматическое объединение двух (или нескольких) полнозначных слов или форм слов, проявляющее их подчинительные свойства»<sup>4</sup>. Словосочетание – это «Соединение двух или более знаменательных слов (вместе с относящимися к ним служебными словами или без них), служащее для выражения единого, но расчлененного понятия или представления»<sup>5</sup>. «Словосочетание – это синтаксическая единица, образующаяся соединением двух или более знаменательных слов на основе подчинительной связи и тех лексико-грамматических отношений, которые порождаются этой связью»<sup>6</sup>, и т.д.

Согласно приведенным определениям, во-первых, подчинительные словосочетания образуются из двух или более знаменательных слов, между которыми имеются подчинительные отношения; во-вторых, внешней формой (материальной оболочкой) подчинительного словосочетания выступает сцепление форм слов, связанных формальной связью, называемой авторами определений синтаксической связью; в-третьих, план содержания подчинительного словосочетания составляет сцепление понятий, выражаемых словами – компонентами, связанными между собой смысловой связью, именуемой в определениях синтаксическим отношением, определяющим якобы значение словосочетания; в-четвертых, словосочетание является сцеплением формально-смысловых элементов, обладающим расчлененностью формы и значения; в-пятых, подчинительное словосочетание образуется по структурной, синтаксической модели и т.д.

Важно отметить, что все перечисленные особенности, приписываемые комплексной организации подчинительного словосочетания, относятся исключительно к его внешней форме. Круг вопросов, относимых теории словосочетания, таким образом, суживается формальными рамками его плана выражения и важные вопросы, касающиеся его плана содержания остаются вообще вне поля зрения. В результате, построенные на основе особенностей внешней формы словосочетания определения, в действительности являющиеся определениями формы словосочетания, квалифицируются как определения формальные, структурные и, стало быть, неполноценные.

Ознакомление с определениями, придаваемыми разными авторами словосочетанию, позволяет заметить, что словосочетание рассматривается как бы в самом себе и для себя. Но для языка как представителя отражаемой действительности образование словосочетания не самоцель. Оно предполагает соотношение словосочетания не с самим собой или соотношениями составляющих его слов, а с определенным, конкретным объектом действительности — денотатом, с особым понятийным содержанием — референтом. Оно не могло осуществиться, если бы в задачу словосочетания входило лишь отражение взаимодействия компонентов, которым, по мнению некоторых лингвистов, определяется синтаксическая семантика (значение), содержательная сторона словосочетания, и т.д.<sup>7</sup>

Несовпадения нашего понимания словосочетания со существующими взглядами на главные вопросы теории словосочетания сводятся к следующему:

1. Для разработки теории подчинительного словосочетания принципиально важное значение имеет исследовательское направление, для которого отправным моментом в изучении словосочетания является знание денотата, с которым оно соотносится.
2. Как уже отмечалось, не словосочетание, а форма словосочетания образуется из двух или более знаменательных слов, т.е. формой словосочетания является не сцепление форм компонентов, находящихся в формальных связях, а сцепление компонентов, находящихся в формальных и смысловых связях. Иными словами, то, что лингвисты до сих пор называют словосочетанием, в действительности, является формой словосочетания.



3. Словосочетание образуется не как сцепление формально-смысловых элементов — слов, (в котором формы слов находятся в формальных связях, а их значения — в смысловых), а как формально-смысловой элемент, имеющий форму в виде сцепления формально-смысловых элементов и единое значение, о котором и о характере объекта действительности, логическим представителем которого является это значение, ничего не сообщается в определениях.
4. Значение словосочетания определяется не отношениями компонентов и их взаимодействием, а отражением особого, до сих пор не выделенного наукой объекта действительности, о котором, как указывалось, ничего не сообщается в научной и учебной литературе.
5. Словосочетание образуется не по структурной (синтаксической) модели, допускающей расположение стержневого и зависимого компонентов непосредственно один за другим, а по особой структурно-семантической модели, интерпретация которой следует ниже.

В дополнение отметим, что в специальной литературе содержатся и такие определения подчинительного словосочетания, которые хотя и указывают на отдельные стороны его плана содержания, в частности на тот факт, что оно является единицей номинации, выражает расчлененное понятие и т.д., но в них опять-таки отсутствуют данные об объекте действительности, который обозначается словосочетанием, и о расчлененности понятия, являющегося отражением этого объекта.

Отметим некоторые из этих определений: "Вопросы грамматической сущности словосочетания, об объеме словосочетания, о его форме и значении ... в разных языках остаются мало изученными. Все признают, что словосочетание состоит не менее чем из двух полных слов, что оно организуется по законам и правилам соединения слов и их форм, присущим данному языку, и что оно выражает единое, хотя и сложное, расчлененное понятие, цельное значение"<sup>8</sup>.

"Таким образом, с чисто грамматической точки зрения простыми словосочетаниями должны быть признаны синтаксически организованные и семантически цельные сочетания

двух знаменательных слов, выражающие единое значение и способные быть обозначением предмета, действия, качества<sup>9</sup>.

“Словосочетание – это минимальное грамматически связанное объединение слов, основная функция которого номинативная”<sup>10</sup>, и т.д.

Эти определения также, как предыдущие не являются полноценными. В них не раскрывается сущность перечисленных признаков словосочетания. Они хотя и указывают на номинативность словосочетания, но абсолютно не касаются вопроса о природе и самом существовании референта словосочетания, незнанием которого определяется отсутствие обоснованности таких понятий, каковыми являются “расчлененность понятия”, “сложность понятия”, “цельность понятия”, “способность обозначать предмет, качество”, “семантическое распространение стержневого компонента” и т.д. в этих определениях. Но прежде чем представить обоснование нашего понимания всех этих вопросов, касающихся организации словосочетания, следует также отметить, что и сам термин “словосочетание”, которым пользуемся и мы, нуждается в некотором уточнении. Речевое образование, традиционно называемое словосочетанием в действительности не является сочетанием слов в их виртуальном проявлении. Оно представляет собой объединение синтаксических проявлений слов, к тому же в его построении нередко принимают участие и синтаксические проявления фразеологизмов, целых предложений и т.д.

Перечисленные возражения основываются на результатах рассмотрения подчинительных словосочетаний, с одной стороны, в плане их денотативной соотнесенности – в аспекте их связей с отдельным участком отражаемой действительности, который противопоставлен другим ее участкам, обычно представляемым соответствующими типами проявления языковой материи – лексическими и фразеологическими единицами, предложениями и паремиологизмами, и с другой стороны, с точки зрения занимаемого ими места среди разных типов проявления языковой материи, находящихся в преемственно-эволюционных отношениях, лежащих в основе формирования и существования языковой структуры<sup>11</sup>. Объектом исследования служат подчинительные словосочетания курдского языка.

Важность изучения подчинительных словосочетаний языков, в том числе и курдского языка, вытекает из того, что

они, будучи особым типом проявления языковой материи, отражают строго определенную сферу реальных действительности, а именно разные типы проявлений объектов действительности, которые не могут обозначаться лексическими и фразеологическими средствами — словами и фразеологизмами, специализированными исключительно по обозначению самих объектов. Что касается состояния изученности подчинительных словосочетаний курдского языка, то вопрос о них не только не решен, но и как таковой специально не поставлен в работах по курдской грамматике.

Подчинительные словосочетания курдского языка стали фигурировать в специальной курдоведческой литературе впервые в связи с исследованием категории рода имен существительных и средств ее выражения — так называемых изафетных показателей в изафетных (определяющих) конструкциях<sup>12</sup>. В дальнейшем подчинительные словосочетания все больше привлекали внимание исследователей в связи с разработкой проблем фразеологии курдского языка и разяснением отношений устойчивых и свободных словосочетаний с целью выделения их отличительных особенностей и т.д.<sup>13</sup>. В последнее время, при разработке вопросов теории курдского языка среди всех главных задач важное значение приобрела задача освещения сущности словосочетания, моделирования процесса его образования, его лингвистического назначения и т.д. Некоторые результаты решения этих задач содержат опубликованные работы автора, посвященные разработке отдельных общелингвистических проблем, касающихся социалингвистической потребности, проявления языковой материи, формирования языковой структуры, единого критерия построения лингвистических дефиниций и т.д.<sup>14</sup>

Объективное освещение сущности подчинительного словосочетания осуществляется путем его исследования в плане его сравнения с другими типами проявления языковой материи на основе метода социалингвистического анализа, позволяющего в деталях определить единство его социальной и лингвистической сторон<sup>15</sup>.

При сегментации курдской речи — предложения в общем ряду с другими элементами его внутреннего членения выявляются две структурные разновидности словосочетаний с подчинительной связью компонентов, которые несмотря на

сходство во внешней форме являются принципиально разными типами проявления языковой материи, отличающимися друг от друга разными моделями образования и присущими только им разными лингвистическими назначениями в языковой системе.

Одну из этих разновидностей составляют устойчивые, воспроизводимые в готовом виде словосочетания, которые возникают и существуют в качестве характеризующего, квалифицирующего или оценивающего обозначения объектов действительности и известны в курдской фразеологии как фразеологизмы со структурой словосочетания<sup>6</sup>.

Другую разновидность представляют свободные (переменные), каждый раз вновь образующиеся словосочетания – синтаксические единицы, обладающие специфической структурно-семантической организацией и особым лингвистическим назначением в языковой системе.

Для объективного разграничения этих двух разновидностей единиц, встречающихся в составе предложения, принципиально важно рассматривать их на общем фоне проявлений языковой материи в ряду с другими языковыми и речевыми единицами.

Отражаемая языковой материей действительность в реальности существует в своих отдельных конкретных проявлениях, которые познаются и обозначаются, как правило, знаменательными словами и/или соотносящимися с ними фразеологизмами – двумя известными и, как уже указывалось, единственными в своем роде специализированными типами единиц номинации, являющимися двумя разными типами проявления языковой материи. Примерами таких отдельных, конкретных типов проявления действительности, обозначаемых словами и фразеологизмами, являются, в частности, av (“вода”), pap (“хлеб”), ba (“ветер”), ava pep (“тихий, неприметный, но хитрый, коварный” букв. “тихая, спокойная вода”), axa sag (“могила, вечный покой”, букв. “холодная земля”) и т.д.

Вместе с тем сами типы проявления действительности в виде отдельных, конкретных объектов (предметов, явлений, действий, состояний, свойств и т.д.), обозначаемых исключительно словами и фразеологизмами, в свою очередь, в действительности существуют и функционируют лишь в своих особых проявлениях, обозначение которых, как уже сказано, словами

и фразеологизмами в их виртуальном проявлении оказывается невозможным. Они, т.е. проявления проявлений окружающей действительности, или иначе говоря, проявления объектов действительности, обозначаемых знаменательными словами и фразеологизмами, обозначаются принципиально иными средствами номинации, являющимися в своем роде проявлениями проявлений языковой материи. Дело в том, что языковая материя проявляется через свои разнообразные и разнообразные проявления и проявления самих этих проявлений не сама по себе, а из социальной потребности в реализации в языкотворческих и речетворческих целях путем ее самоопределения, направленного на ее приспособление к нормам и правилам создания речи, упорядочивания речевой деятельности, а также и на построение речевых единиц и создание на их основе языковых образований более сложного характера и т.д. Исходным и главным фактором, обуславливающим эту потребность, служит то, что отражаемая языковой материей действительность, существующая в своих проявлениях и проявлениях самих этих проявлений, требует своего адекватного языкового представления, определяющего необходимость в соответствующем проявлении языковой материи. В частности, в результате анализа соотношений проявлений отражаемой действительности и проявлений языковой материи возникла убежденность в том, что языковая материя служит средством представления этой действительности в различных формах ее проявления, среди которых отдельные места занимают проявления:

1. в форме познаваемых конкретных объектов – предметов, явлений, действий, состояний, их свойств и т.д., представляемых единицами двух подсистем языка – лексикологии и фразеологии;
2. в форме типов проявления познанных объектов, представляемых морфологическими и синтаксическими проявлениями слов и фразеологизмов, синтаксическими словосочетаниями и их морфологическими и синтаксическими проявлениями.

Таким образом, в языковой системе морфологические и синтаксические проявления знаменательных слов и фразеологизмов, синтаксические словосочетания и их морфологические и синтаксические проявления являются теми специализированными номинативными средствами, в задачу которых входит

обозначение типов проявления объектов действительности, как правило, обозначаемых только словами и фразеологизмами в их виртуальном проявлении.

Будучи обозначениями объектов действительности, знаменательные слова и фразеологизмы отличаются друг от друга тем, что слова являются номинативными единицами, а фразеологизмы — номинативно-характеризующими — квалифицирующими единицами.

Морфологические проявления слов и фразеологизмов, основанные на их морфологических категориях, составляют основную часть словоизменительной и фразоизменительной систем курдского языка, охватывающих всю парадигму спряжения глаголов и глагольных фразеологизмов, склонения имен существительных и субстантивных фразеологизмов.

Синтаксические проявления слов и фразеологизмов, основанные на их валентности — сочетательных свойствах, выступают обозначениями соответствующих типов проявлений объектов действительности, которые стоят за синтаксическими категориями (категории подлежащего, сказуемого, дополнения и т.д.).

Принципиально иную характеристику представляют подчинительные словосочетания.

Образование словосочетаний — это особое языковое явление, обусловленное потребностью в обозначении не отдельных предметов, а именно типов их проявлений, в своей совокупности образующих отдельную специфическую сферу объективной действительности. В отличие от знаменательного слова, которое возникает как обозначение объекта действительности на основе понятия об этом объекте, синтаксическое словосочетание образуется из потребности в обозначении типа проявления объекта действительности, обозначаемого его главным, стержневым компонентом. В этом легко убеждаемся, обращаясь к конкретным примерам.

Словосочетание *ava sag* ("холодная вода") — это речевое образование, обладающее статусом формально-смыслового элемента (знака). В своей минимальной конструкции оно имеет в качестве своей материальной формы сцепление двух знаменательных слов в их синтаксических проявлениях, выступающее описанием — характеристикой объекта *av* ("вода") на основе его признака *sag* ("холодная"), определяющей собой его

Նախաքրիստոնեական շրջանում գոյություն են ունեցել գուսանների բազմաթիվ տեսակներ: Օրինակ՝ ողբերգու գուսաններ կամ ողբերգակներ, որոնք հաճախ ստեղծագործել և խաղացել են քատրոններում, իսկ ողբասացները՝ քաղման ժեսերի ժամանակ: Նրանք կոչվել են նաև ձայնարկու գուսաններ: Մյ. սկսած՝ արգելվել է ձայնարկու գուսանների գործունեությունը, քանի որ քրիստոնեությունը չէր ընդունում քաղման ծեսի քատերակամացման երևույթը: Հենց նայն ժամանակաշրջանում ստեղծագործող «արվեստի այդ ջատագովների» բազմազանությունից ենթադրում ենք, որ նրանք սոցիալական տարբեր խավերի էին ծառայում՝ ժողովրդից մինչև ազնվականություն: Մենք չենք տարբերակում դրանց, չմայած, օրինակ, հայտնի է, որ հացկատակները հատուկ ծաղրածուներ էին, որ առավելապես իշխանական տներում էին ծառայում: Միմոսները, կատակգուսանները, խեղկատակները, հացկատակները, ծաղրածու գուսանները, կարավողները, վարձակները, որ քեթևաբարտ պարուհիներ էին, մեծ ժողովրդականություն էին վայելում:

Ազատ տեղափոխությունների և բազմաթիվ ժողովուրդների հետ լայն շփման պայմաններում մեր գուսանները բնականաբար մեկուսացած չէին:

Առնչվելով ասորական և հունական քատրոնների միմոսների հետ, նրանք կրել են նաև ուժեղ ազդեցություններ: Գ. Գոյանը նշում է, որ մեր թվարկության սահմանագծին նրանք բաժանվել են երկու տեսակի: Մի մասը պահպանելով գուսան անվանումը դարձել է հայկական միմոս, իսկ մյուս մասը՝ պահպանելով հանգերգու հայրերից և պապերից եկուսավանդությունները, ձեռք է բերել վիպասան անվանումը:

Վիպասանները և գուսանները շրջիկ կյանքով են ապրել: Հենց այդպես էլ կոչվել են՝ «շրջիկ գուսաններ»: Նրանք ծանոթ են եղել ոչ միայն ազգային վիպերգություններին, երգերին, անտունիներին, այլ նաև հարևան ժողովուրդների էպիկական և քնարական ստեղծագործություններին: Բազմաթիվ թեմաներ, մոտիվներ և պերսոնաժներ փոխառվել են հարևան ժողովուրդներից, խորապես մշակվել, յուրացվել, ապա՝ «ազգայնացվել»: Այդ երկարատև խմորումը և յուրացումը հենց այն մոդորակն է, որ կարելի է հայ գուսանական արվեստի ձեռքբերում կոչել: Եթե դրանք փոխառությունը ամենշամ փոփոխություններ է կրել, և չի պատվաստվել միջավայրին, ապա շուտ էլ մոռացվել է՝ մնալով միայն որպես գուսանի, վիպասանի կամ աշուղի հեղինակային գործ:



Բանահյուսության մեջ մոտացման երևույթին զուգահեռ ընթացել է նորի ստեղծման գործընթացը, երբ կերպարները, մոտիվները և քեմաները հաճախ վերածնվել են այլ անվանք և այլ համատեքստում: Օրինակ՝ «Ռոստամ Ջալ» պատումը 1915 թ. Արտաշես Բարսեղյանը գրի է առել «Նարեկցի» անգրագետ «Քոստանչի» Պատուր Պողոսյանից, պարզվում է, որ նա էլ իր հերթին այն վերցրել է հեքիաթասաց, հյուսն Ուստա Հարոնից:

Միջնադարյան հայ գուսանների ստեղծագործական երևակայությունը բացառիկ ընդգրկում է և բազմակողմանի: Նրանք արտացոլում են և հերոսական առասպելներ, և ժամանակակից տիրակալների սխրանքներն ու սոցիալ - պատմական իրադարձությունները: Գուսան - վիպասանները իրենց ստեղծագործություններում բազմաթիվ իրական ու առասպելական պատմություններ են համադրել, ներկայացրել ծիսական - պաշտամունքային, առասպելական պատկերացումներ, ռոմնթերևան են գալիս արեգակի, ջրի, մեռնող և հառնուլ աստվածությունների կերպարանքով:

Բազմաթիվ օտար, իրական - պատմական կերպարներ նրանց միջոցով մուտք են գործել մեր ժողովուրդի գրականություն. դրանք են՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Կոստովն ու Շիրինը և այլք: Այդ ամենի բազում տարբերակները «Շահնամն» էպոսի դասբաններին են: Հատկանշական է, որ «Շահնամն», «Քյոռոլին» լայն տարածում են ունեցել ինչպես Փոքր Ասիայում, այնպես էլ՝ Միջին Ասիայում: Հայտնի է, որ թուրքական արհեստավարժ երգիչ - օզանները և նեքթոլագիտներ - մադրահները իրենց խաղացանկում տեղ էին հատկացնում Ֆիրդուսու «Շահնամն»-ին և պարսկալեզու գրականության այլ ստեղծագործություններին՝ վերցված հատվածներին<sup>10</sup>:

Ավատատիրական շրջանում ստեղծագործող գուսանների ու վիպասանների գործունեությունը պետք է բաժանել երկու խմբի. առաջինը՝ ֆեոդալական վերնախավի գեղագիտական ճաշակը բավարարող գուսաններն ու վիպասաններն էին, իսկ երկրորդը՝ ժողովրդի ստորին խավերի հետ կապված գուսանները, որոնք ներկայացնում են պլեբսին ընդունելի արվեստը: Հարկ է նշել, որ պատմական իրադարձությունները բնկվում էին գուսանների գեղարվեստական մտածողության մեջ և հաճախ այնպիսի փոփոխություններ կրում, որ իրական պատմությունը անճանաչելի էր դառնում: Դա գուսանական արվեստի զարգացման ապացույցն էր, որը որքան բանահյուսական՝ նույնքան էլ գուսանի անհատական ստեղծագործության տարրերով էր հարուստ:

Անանուն հեղինակները՝ պահպանելով ժողովրդական հարուստ բանավոր ժառանգությունը, իրենց արվեստը տարածում էին ողջ Հայոց աշխարհի մեջ և փոխանցում հետագա սերունդներին: Օրինակ՝ էպոսը ամեն մի շրջանում տեղայնացվում էր: Ճիշտ է, հիմնականում պահպանվում էր:

նում էր եականը, սակայն ստանում էր միջավայրի և բնակավայրի լեզուն, կոտորիտը: Օրինակ այդ տարափոխությունների արդյունք է այն, որ Ռոստոմ Չալը հայոց պատումներից մեկում դարձել է Մհերի փոքր եղբայրը<sup>11</sup>:

Դարերի ընթացքում փոխվում էին էպոսի լեզուն և ավանդվելու ձևերը. այդ կապակցությամբ Գ. Լևոնյանը գրում է. «Գրաբարի կամ միջնադարի գրական աշխարհիկ լեզուն չի երևում այս վեպերի և հեքիաթների մեջ: Նրանք իրենց հետագայի պատմողների միջոցով ընդունել են գուտ բարբառային լեզու: Բացի դրանից, այս վեպերից յուրաքանչյուրն ունի մի քանի տարբերակ: Տարբեր և լեզվական, և կառույցի, և ժանրի տեսակետից: Մակայն կա մի մնայուն բան, որ նույն վեպի գործող անձինք իրենց բնութագրով մեզ ներկայանում են զրեթե միշտ միատեսակ»<sup>12</sup>:

Դժվար է հստակորեն նշել, թե երբ փլուզվեց գուսանների ինստիտուտը՝ ստեղծելով աշուղների, սագանդարների և ուղրակի ասացողների խմբեր, որոնց գործառույթը ավելի սահմանափակ էր և փաստորեն նոր կոնցեպտիվներ (conception) էր ներառում: Գուսանների նոր գործառույթը ենթարկվում էր ժամանակի հրամայականին, հարմարվում միջավայրին, սակայն մասնապես պահպանում իր ավանդույթները:

XVIII դարի կեսերից մինչև XIX դարի 80-ականները ժողովուրդը վիպասաններին ճանաչում էր որպես «մաղղ» (պատմություն) աստղ: Նրանք թուրք և պարսիկ իշխանությունների հետապնդումից ազատ լինելու համար միանում էին զգրարների խմբերին ու շրջում քաղաքներում, գյուղերում և ավաններում՝ որպես զգրար<sup>13</sup>:

Վիպասանները, որ վերածվել էին «մաղղ աստղների» և աշուղների՝ նոր կարգավիճակ ձեռք բերելով, շարունակում էին ավանդել ազգային ու հեթանոսական ավանդապատումները, հեքիաթները, էպոսը: Իրենց պատումներում նրանք հիշատակում էին հայոց հերոսական անցյալը, նրա քաջարի արքաներին ու զորավարներին: Սեր կարծիքով դա էր իշխող դասակարգի կողմից նրանց նկատմամբ ունեցած հակակրակների պատճառը: Գրարների և նրանց հետ շրջող «մաղղ աստղների» մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Մ. Հայկունին: Նա գրառելով «Մամասար և Բաղդասար» պատումը, նշում է. «Ցարը ունեցած հետաքրքրությունն այն եզրակացության հասած էմ, որ Մասունաց Դաւիթ և Մհեր դիցազնական վեպը Մոկացի զգրարներ տարածած են հեռու գավառներ, մասնափոխ մասամբ Կումացի և Ուզնեցի զգրարներ՝ սոքա իրենց արհեստը ուր որ ի գործ կը դնեն, անդ ևս կը պատմեն Մամասար և Բաղդասար, Դաւիթ և Մհեր մասնափոխ և այլ և այլ հեքիաթներ, գարուն, ամառ, աշուն Մոքա կը տարածուին Բշերի, Ռավանդա, Մահմուտանք, Մուշ, Բուլանդիս, Խրաք, Արծկե, Արճնեշ, Ապաղա և այլուր, իսկ ծնուն ևս կտարածուին ամեն կողմեր, իրաքանչիւր խումբ 5-10-15 հոգի կը լինին:

Այն խումբը առաջի տարին, որ գիտի մեզ գորարություն արած է, յաջորդ տարիներն ևս նույն խումբը պիտի անէ. որևէ մի օտար խումբը չի կարող այդ գյուղը մտնել<sup>14</sup>:

Գորարների և նրանց հետ շրջող «ճաղ ստղների» ճանապարհները ըստ տարվա եղանակի ձգվել են հյուսիսից – հարավ և արևելքից – արևմուտք: Հասկանալի է, որ նրանց ստեղծագործությունները տարածվում և պահպանվում էին լսարանի հիշողության մեջ, անշուշտ՝ կրելով քարքառային և տեղային ազդեցություն:

«Սասնա Շոեր» էպոսը՝ պահպանելով իր հիմնական բովանդակությունը, նորանոր շերտեր ու հավելումներ էր ստանում: Ինչպես նշում է Գ. Լևոնյանը. «Շատ դժվար է ասել, թե այս շրջանում բոլորովին նոր վեպեր կամ մոդուլներ պատմե՞լ են մեր գորար վիպասանները, բացի այն, որ կրկնել են հին դարերից, բերնից բերան անցնող վեպերը, նոր վարիանտներով ու նոր ավելումներով: Ոչ Սասնա Շոերի, ոչ մանավանդ Ռոստամ Զալի և ուրիշ օտարամուտ վեպերի հայկական ծննդյան դարը չի կարելի ճշմարտությամբ որոշել»<sup>15</sup>:

Ճիշտ է բազմաթիվ պատմական շրջաններից եկող շերտեր իր մեջ կրող էպոսը հարուստ է ժամանակախախտումներով, այնուհանդերձ, «Սասնա Շոերում» հիմնականում արտահայտված է հայոց պայքարը արաբական լծի դեմ: «Շահնամեն», ճիշտ է, արտացոլում է իրանցիների հերոսական պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև արաբական արշավանքները, սակայն ժողովրդի ընդերքում պահպանված գրույցների, ավանդապատմությունների ու պատմական իրադարձությունների գեղարվեստական արձագանքը Ֆիրդուսու կողմից իմի բերվել և շարադրվել է արաբական նվաճումների դեմ պարսից պայքարի արդյունքում: «Շահնամեն» մի ընդվզում էր բոլոր նվաճողների դեմ, ճիշտ այնպես, ինչպես հայոց «Սասնա Շոերը»:

«Սասնա Շոեր» էպոսի բազմաթիվ պատմություններում հիշատակվում են գուսանները՝ (աշուղները) սպիտակամորուս գուսան, «Քոլիմորուս» գուսան և «Գահել» գուսան, որոնք ուղարկված էին Խանդութ խաթունի կողմից: Վերջինս լսելով Դավթի սխրագործների մասին, սիրահարվել էր նրան և մի օր պատուհանից տեսնելով գուսաններին, պատվիրել էր գնալ Սասուն և իր գովքը անել Դավթին, փոխարենը առատ վարձատրություն խոստանալով:

Գուսանների մասին հիշատակություններ կան նաև «Շահնամեն»-ում: Դրանք իրանական աշխարհում հայտնի Բարպես (Վարպես Ս.Պ.) և Մարբեշ (Մարգիս Ս.Պ.) գուսաններն էին, որոնք ծառայում էին Խոսրով Փարվիզի արքունիքում<sup>16</sup>:

Դժվար է ժամանակագրական ստույգ տեղեկություններ գտնել բազմաշերտ էպոսներում, որովհետև դրանք անանուն գուսանների, վիպասանների, օգանների, մադրահների, սագանդարների, աշուղների և

այլ ժողովրդական երգիչների ու բանաստեղծների կողմից են ստեղծվել: Եթե անգամ «Շահնամն» հեղինակային գործ է և շարադրված է Ֆիլի- դուսու կողմից, այնուհանդերձ՝ այն ներառում է ժողովրդի մեջ ամրագր- ված բանավոր և պահպանված գրավոր բազմաթիվ պատմություններ: Ի տարբերություն իրանական աշխարհի, որտեղ հնագույն առասպելները պահպանում էին մոզայեզները, բոգորգաններն (մեծատուններ) ու դեհ- դան – ավատատերերը, մեր հոգևորականները թշնամամբար էին վերա- բերվում ինչպես գուսան – վիպասաններին, այնպես էլ նրանց ստեղծա- գործություններին:

Հասկանալի է հոգևորականության բացասական վերաբերմունքը գուսանական աշխարհիկ արվեստի նկատմամբ: Արաբական, քուրդա- կան և պարսկական իշխանություններն էլ իրենց հերթին խաչընդոտում էին հայոց փառասանած անցյալը վեր հանող պատմությունների տարածումը և ժողովրդի ոգին կոփող պատմությունները՝ Երվանդունիների, Արտա- շեսյանների, Մամիկոնյանների և այլոց մասին: Նրանց գործունեությու- նը արքունիքից աստիճանաբար դուրս մղվելով՝ սկսեց առավելապես ծառայել քաղաքների ու գյուղերի քնակչությանը:

Եթե նախաքրիստոնեական ժամանակներից սկսած գուսանները և վիպասանները, փանդիտի, քմարի, թմուկի, սրինգի և այլ երաժշտա- կան գործիքների նվագակցությամբ երգում, արտասանում և ցուցադրում էին որոշ հատվածներ «Վիպասանքից», «Պարսից պատերազմից», «Տարոնի պատերազմից», «Մասնա Շոերից» և այլ էպիկական ստեղծա- գործություններից, ապա նրանց արվեստը ժառանգող աշուղները, սա- զանդարները, ինչպես նաև «նաղը ասողները» ավելի համեստ էին ի- ռենց և՛ հնարքներով և՛ խաղացանկով: Փոխվել էր նրանց երգացանկը, գործունեության ոլորտը, և հետևաբար նաև լսարանը: Հին վիպասաննե- րին, գուսաններին փոխարինում էին աշուղները, պատմում Աշուղ Ղարի- բի, Շահ-Իսմայելի, Քյոտողլու, Քյարամի և Ասլու երգախառն հեքիաթնե- րը կամ սիրավեպերը<sup>17</sup>:

Բազմալեզու էր աշուղների երգացանկը: Նրանք երգում էին քուր- քերեն, պարսկերեն, հայերեն, արաբերեն, ինչպես նաև համեմատ էին ի- ռենց հայերեն երգերը բազմաթիվ օտարաձայն բառերով: Բիլինգվալիզմնե- րը նրանց ստեղծագործության պրակտիկայում առաջնային դեր ունենին:

«Աշուղ» եզրը նույնպես օտար ծագում ունի: Այն արաբերեն է (աշեղ), որ նշանակում է սիրահար: Եզրույթը իր մեջ ամբողջացնում է ժողովրդական բանաստեղծի, երգչի և երաժշտի միասնությունը: Հաճախ աշուղին անվանում են ասուլ – ասացող:

Գուսաններից եկող բազմաթիվ պատմություններ ժամանակի ըն- քացքում բանահավաքների շնորհիվ ամրագրվեցին որպես գրավոր գրա- կանություն: Այն հարուստ ժառանգությունը մեզ են հասցրել գուսաննե-

րը, վիսպասանները, աշուղները, ասացողները և լավ հիշողությամբ օժտված ամհատները:

Պատմական իրադարձությունների բերումով Հայաստանը բազմիցս բաժանված է եղել հարևան պետությունների միջև, գուրկ պետականությունից, սակայն այդ ամենով համոզեմով, զուսանական ինստիտուտը գործել և անընդմեջ զարգացել է՝ ամնչվելով հարևան ժողովուրդների հոգևոր մշակույթի հետ: Մշակութային վտխառնությունների և շվուսների արդյունք են բազմաթիվ ընդհանրությունները, որ անկա են «Սասունցի Դավիթ» և «Շահնամե» էպոսներում, ինչպես նաև էպիկական այլ ստեղծագործություններում և բանահյուսության մեջ:

Ցավոք միշտ անհամատեղելի են եղել եկեղեցու և զուսանական ինստիտուտի խաղաղ գոյակցությունը, քանի որ նրանք ներկայացրել են երկու հակադիր սկզբեր՝ կրոնական և աշխարհիկ: Սակայն նրանց միավորում են ազգային գաղափարները՝ լեզվի, հոգեկերտվածքի, պատմական ու մշակութային ժառանգության, բարքերի ու սովորությունների պահպանման ջանքերը:

Գուսանները և վիսպասանները իրենց պատմական ուղին անցնելով՝ ունեցել են բազմաթիվ զարգացումներ: Հետագա դարերում մամապես շարունակել են իրենց գործունեությունը, հետապնդելով եկեղեցու կողմից:

«Թե զինարդրոքի յերգերը, և թե հին վիսպական – առասպելական յերգերը, բնականաբար անարգ և խտտելի պիտի համարվեն հին խստակրոն յեկեղեցականներից. զի դրանք մի կողմից՝ կապված լինելով շվայտ ուրախության և արքեցության հետ՝ մարդկանց հեռացնում էին յեկեղեցու քարոզած ժուժկալության սկզբունքներից, մյուս կողմից՝ կենդանի էին պահում հին հեթանոսությունն իր առասպելներով, սովորություններով ու հավատալիքներով»<sup>18</sup>:

Իրականում, զուսանական ինստիտուտը դարեր շարունակ նպաստում էր նվաճված ու մասնատված Հայաստանում ազգային մշակույթի և հոգևոր ժառանգության առանձնահատկությունների պահպանմանը:

Այսպիսով՝ «զուսան» երևույթը անցնելով հազարամյա ճանապարհ, այսօր մեզ է հասել որպես երգիչ – կատարող և սնուն է մեր ազգային երաժշտությունը: Հետագայում զուսանական ինստիտուտը մասնատվելով՝ իր տեղը զիջել է քաղաքներին, կրկեսին, արհեստավարժ ասմունքողներին, երգիչներին, պարողներին ու պարուհիներին, որոնց արվեստում միշտ գերակշռում է ժողովրդական տարրը:

SAHAK PETROSYAN

ON THE TRANSFORMATION OF THE TERM "GOUSAN"

Gusan concept by its literary significance has wide diversity and has Parthian roots (gosana). Gusan term includes community of wandering, strolling and vagant musicians, rhapsodes and others. The institute of gusans has a significant place in Armenian and Iranian ethnic - cultural world and in the course of time it was developing and enriching by new views and reflections of life.

Medieval Armenian gusans' creative and luxuriant imagination is exceptionally capacious and versatile. They reflected heroic myths of current emperors courage and social-historical events.

Gusan-Rhapsodes have compared mythological histories with real events in their compositions, showing up many ritual- idolatry and mythical ideas, which originate in characters of sun, water, moribund and resurgent (Eternal) deities.

According historical events Armenia often was separated between neighbor countries and excluded of commonwealth, but in spite of it institute of gusan have continued its developing and had mutually relations with spiritual culture of neighbor nations. As a consequence of mutual relations and relationship are similarities between "Daredevils of Sasun" and "Shahaname" epics and other epical compositions in two neighbor nations philology.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետաքրքիր է նաև վրացերեն mgosani ձևը: Հմմտ. Հր. Աճառյան, Արմատական քառարան, հ. I, Եր., 1979, էջ 597-598: Ըստ Գոյանի «Գոսան» տերմինը իր ծագմամբ պարտական է Գիսանի աստծուն, որը Մեծ Հայքի Տարոն գավառում մեծնող և հառնող աստվածն էր՝ Թարան աստվածուհու զավակը և ամուսինը: Գիսանի քարզանքային նշանակում է «երկարամազ», Դ. Գոյան, Театр Древней Армении, т. I, М., 1952, էջ 315:
2. Նմանօրինակ տիպարանություն ունեն ռուսական իրականության մեջ հայտնի "мехонга", "освистый", "дударь", "дударня" և այլ հասկացություններ: З.И. Власова, Скоморохи и фольклор. СПб., 2001, Автореферат [www.dissertacion2.ru](http://www.dissertacion2.ru) էջ 5:
3. Տես՝ Աստվածաշունչ, «Լսիցեմ...զձայն գոսանաց...» Բ. Թազ, ԺԹ. 35: «Արարի ինձ գոսանա...», Ժողովուրդ, Բ. 8:
4. Տես՝ Մ. Խորենացի, «Հայոց Պատմություն», Գիրք Ա., ԺԴ., Թարգմ., մերած. և ծանոթ. Առ. Մալխասյանցի, Եր., 1997, էջ 39:
5. Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությանը Արմենուհի Մրասյանցի, Եր., 1962, էջ 209:
6. Տես՝ Գ. Լևոնյան, Թատրոնը հին Հայաստանում, (Պատմա-բանասիրական տեսություն), Եր., 1941, էջ 42:
7. Հմմտ. Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 45-58:
8. Հմմտ. Դ. Գոյան, նշվ. աշխ., էջ 211:

9. Հմմտ. Կ. Մելիք Օհանջանյան: «Ֆիրդուսի» Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Եր., 1934, էջ 159:
10. Հմմտ. E.I. Маштакова, Из истории сатиры и юмора в турецкой литературе, М., 1972, էջ 39:
11. Հմմտ. Բ. Խավարյանց, Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ, Պարիս 1901, էջ 9:
12. Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 89:
13. Հմմտ. Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 125, 126:
14. Տես՝ Էմինյան ազգային ժողովածու, հ. Բ, հավաքեց Ս. Հայկունին, Մոսկվա - Վարդաշապատ, 1901, էջ 3-17:
15. Տես՝ Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 128:
16. Տես՝ Фирдоуси, Шахнаме, т. VI, Перевод И. Б. Баку – Лахути и В. Г. Березова, М., 1989, էջ 481 - 485: Հ. Շ. Մազանդարանին անդրադարձել է այս անձնանուններին: Ըստ նրա Բարրադը՝ Բարրազ, Ֆահիբրադ, Ֆահիբրազ և Ֆեիտոզ ձևերով է հայտնի և հնարավոր է, որ պահլավերենում Bahi (a) badh է կարդացվել և քանի որ նախկինում՝ պարսից լեզվում ք և փ տառերի միջև տարբերություն չի եղել, ապա նաև փահլաբադ է հնչել: Եմթադովում է, որ այդ պատճառով Բարրադը Շահնամում հնչում է որպես փահլեան: Կարծում ենք դա հենց նույն վարպետն է, որով սովորաբար դիմում էին արհեստավարժ գուսաններին: Ինչ վերաբերում է Շահնամի պերսոնաժ Մարգիս (Մարրյաշ) գուսանին, ապա ըստ պարսից հետազոտող Մազանդարանի վերջինս տաղանդավոր մի հույն էր: Կան նաև ենթադրություններ նրա հայ լինելու վերաբերյալ (Շ. Բերտեխ): Երկտասարդ Բարրադի և ծեր Մարգիս միջև մրցակցությունը և՛ոտրով Փարվեզի արքունիքում ողորդական վախճան է ունեցել Բարրադի համար: Farhang – e Shahnameh, Persons and Places, Hossein Shahidi Mazandarani (Bijan), Tehran, 1998, էջ 101:
17. Հմմտ. Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 146:
18. Տես՝ Մ. Արեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Եր., 1931, էջ 177:

**ԼԻԼԹ ՍԱՅՐԱՄՏՅԱՆ**

**ՄԻՄԻՆ ԴԱՆԵՇՎԱՐ. ՆԱԽԱՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ  
ՀԵՏՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՖԵՄԻՆԻԶՄ**

Միմին Դանեշվարը արդի իրանական գրականության մեծահամբավ արձակագիրներից է, որի թե՛ կյանքն է թե՛ ստեղծագործական գործունեությունը, 20-րդ դարի երկրորդ կեսի Իրանին բնորոշ հասարակական քաղաքական մթնոլորտում ստեղծագործող կին գրողի դերի ուսումնասիրման համար կարևոր հիմք կարող են ծառայել: Դանեշվարը այն ինքնատիպ գրողներից է, որի ստեղծագործություններում մեծ նշանակություն ունեն ինչպես նախահեղափոխական, այնպես էլ հետհեղափոխական շրջանի գաղափարաքաղաքական հիմնահարցերը:

Արձակագիրը գրական աշխարհ մուտք գործեց 20-րդ դարի կեսերին, երբ երկրի հեղափոխական և քաղաքական շիկագունների մթնոլորտում սկիզբ էր առնում «սոցիալական ուղղվածությամբ» գրական շարժումը<sup>1</sup>, որը փոխարինելու էր գալիս դարասկզբին Իրանում մեծ տարածում գտած «պերսիանիզմը» կամ ազգայնական գաղափարական շարժումը<sup>2</sup>:

Անցյալ դարի 60-70-ականների գրականությունը Իրանում մեծագույն ուժ էր հասարակական գիտակցության զարգացման համար: Այդ տարիներին գրական ստեղծագործությունները, հատկապես գեղարվեստական արձակը, ընկալվում էին մաս որպես սոցիալական բնույթի փաստաթղթեր, որտեղ ուղղակիորեն և բազմակողմանիորեն ներկայացվում են տվյալ հասարակության տնտեսական, պատմական, քաղաքական, հոգեբանական հիմնահարցերը: «Ճշմարիտ գրականություն» ստեղծելու նախապայմաններից էր համարվում գրական տեքստերի մեջ սոցիալական արդարության կենսական տարրերի և Վարդկանց ցածր կենսակերպի հիմնախնդիրների արծարծումը:

1960-70 ական թվականների հասարակական-քաղաքական տեղաշարժերը և ընկալումները իրենց դրոշմը դրեցին Միմին Դանեշվարի գեղարվեստական ձեռագրի վրա: Ինչպես այդ տարիների յուրաքանչյուր ազատախոհ, ատաջաղեմ գրող, Դանեշվարը նույնպես ստանձնեց



“սոցիալական մարզարեի” դերը՝ ընթերցողների համար կանխատեսելով այն ապագան, որ պետք է գար:

Դեռևս 1947-ին լույս ընծայվեց Սիմին Դանեշվարի “Աթեշե Խամուշ” (“Մարած Կրակ”) պատմվածքների ժողովածուն: Թեև այն չարժանացավ մեծ ուշադրության, այնուամենայնիվ մնաց արձակի ժամերում պարսիկ կնոջ կողմից կատարված առաջին ստեղծագործական վերածերից մեկը: Երբ երիտասարդ Դանեշվարը Թեհրանի համալսարանում պաշտպանում էր պարսկական գրականության վերաբերյալ իր դոկտորական թեզը, նրա գիտական ղեկավար՝ Իրանում առաջին կին համալսարանական պրոֆեսոր, գրականագետ Ֆաթեմե Մայան բարձր գնահատեով հեղինակի առաջին պատմվածքներից մեկը, խորհուրդ տվեց նրան գրականագիտությամբ չզբաղվել և շարունակել ստեղծագործական ուղին<sup>5</sup>:

Մինչև 1960 թվականը արձակագիրը հիմնականում զբաղված էր գիտամանկավարժական աշխատանքով: Երկար տարիներ դասավանդելով Թեհրանի համալսարանում, Դանեշվարը այդպես էլ չարժանացավ պրոֆեսորի կոչման, ինչին ամեն կերպ խաչընդոտեցին ՄԱՎԱԿԻ հրահանգներն ու հետապնդումները<sup>6</sup>:

“Նույնիսկ այն մի քանի ստեղծագործությունները, որ մենք ենք ստեղծել, մեծ միակճում կարելի է համարել: Թող Սիմինա դը Բովուարը զառու մի քանի տարով ապրի այն կյանքով, ինչ ես եմ ապրել և եթե նրան հաջողվի մի տող անգամ ստեղծագործել, ես կվախեմ իմ ամուսնը”, - համարձակորեն խոստովանում է Դանեշվարը իր անցած ստեղծագործական քարտ ու դժվարին ուղղու մասին<sup>7</sup>:

Դանեշվարի վաղ շրջանի գեղարվեստական նախասիրությունների ու սկզբունքների, աշխարհայեցողության ձևավորման մեջ մեծ արժեք ունեն ամուսնու՝ Իրանի մեծագույն արձակագիր Ջալալ Ալի Ահմադի գաղափարաքաղաքական դիրքորոշումները: 1982-ին ի հիշատակ վաղամեռիկ ամուսնու՝ Դանեշվարը հրատարակեց ինքնակենսագրական նյութի հիման վրա գրված “Դորուրե Ջալալ” (“Ջալալի Մայրամուտը”) ինքնատիպ ստեղծագործությունը:

Ս. Դանեշվարը նախահեղափոխական շրջանի ստեղծագործություններում առաջնային տեղ են զբաղեցնում կանանց հիմնախնդիրները: Դա է փաստում պարսիկ հայտնի գրաքննադատ, բանաստեղծ Մոհամմադ Ալի Սեփանդի 1988-ին լույս ընծայված “Իրականության իմաստավորումը: Քսանյոթ պատմվածքներ, ժամանակակից Իրանի քսանյոթ գրողների կողմից” խորագրով դարակազմիկ անթոլոգիան, որտեղ Սիմին Դանեշվարը ներկայացված է, որպես արևելյան ավանդապահ կնոջ ծանր վիճակը լուսաբանող հեղինակ<sup>8</sup>:

Մակայն, ինչպես նշում է ամերիկացի հետազոտող Զ. Թալաթովը, նախահեղափոխական շրջանի պարսիկ կին գրողների ստեղծագոր-

ծություններ չունենին գեներալային ինքնություն: Կին հեղինակները հավատարիմ մնալով դարավերջին իշխող «սոցիալական ուղղվածության» գրականության կանոններին՝ կանանց թեման ներկայացրեցին. որպես սոցիալական հիմնախնդիրների անբաժանելի մաս<sup>9</sup>: Նախահեղափոխական արժակում դեռևս գերիշխող էին մնում սոցիալական ամառայնությունների գոհ, իրավագուրկ ու ստորացված կանանց «հմամայ»<sup>10</sup> կերպարները, որոնք իրենց ավանդական իմաստավորումն են գտել նաև Դանեշվարի մախահեղափոխական արժակում: 1961-ին միասնամասկ լույս ընծայվեցին արձակագրի «Շահրե Չուն Բեհեշտ» («Դրախտի մնաց թաղաքը») և «Սուրաթ Նահե» («Նաղատում») պատմվածքների ժողովածուները:

Իրանական հասարակության համար հրատապ սոցիալ-քաղաքական, քաղաք-էթնիկական, ինչպես նաև կանանց հիմնախնդիրները իրենց գեղարվեստական արժեվորումը ստացան հատկապես Դանեշվարի «Նաղատում» ժողովածույում գեղեղված «Բե Զի Սարան Զոնաս» («Էլ ո՞ւմ քարենեմ»), «Թասադոֆ» («Պատահար»), և «Սուրաթ Նահե» («Նաղատում») պատմվածքների մեջ:

Ինչպես նշում է հայտնի գրականագետ Ն. Ռանիմիյեն, հեղինակի վերջ ճշված պատմվածքները համախմբված են խաղատան մետաֆորիկ հասկացության մեջ<sup>11</sup>: «Պատահար»-ի տեսլիկ տեղեկություն, միայնակ ու լքված կինը «Էլ ո՞ւմ քարենեմ» պատմվածքից, «Նաղատում» Սև անվանումով հերոսը քանտարկված են իրենց սեփական մետաֆորիկ խաղատների մեջ, որոնց կյանքը պայմանավորված է անվերահսկելի պայմանականություններով և չափանիշներով:

«Պատահար» պատմվածքում Դանեշվարը մերկացնում է շահական Իրանում ձևավորվող «արևմտականացված և մոդեռն» կնոջ մոդ կերպարը: Նաղենն կամ «Նաղիան», վարձում էր կերպարամափոխվել, մնանակելով շրջապատում յուրաքանչյուր կնոջ, ով նախընտրում էր «արևմտամետ» կենսակերպը: Կնոջ երազանքը ցանկացած գնով շքեղ մեքենա ունենալն էր, ինչպես հարևանուհի Սաղեդեն, «ով իր թանկարժեք մեքենան վարելիս կրում էր սև ակնոցներ և սպիտակ ձեռնոցներ»: Նաղիան ջանում էր մեքենան կանգնեցնել օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների հարևանությամբ, նախընտրելով շփվել միայն արտասահմանցիների հետ, նա ծաղրում էր ավանդապահ կանանց, ովքեր հետևելով կրոնական սովորույթներին՝ դեռևս նախընտրում էին սև չաղրան: Նաղիայի ցանկապիտության, պերճաշուք ապրելակերպի տարերջը խափանեց ընտանեկան անդորրը, թողնելով ամուսնուն՝ սովորական գրասենյակային մի ծառայողի, պարտքերի ու հուսալքության մեջ: Նաղիայի կերպարով Դանեշվարը ամբողջացրեց շահական Իրանի «առաջադեմ կնոջ» իդեալը, ով իրականում չէր ընկալում «արևմուտք, մոդեռն, ազատություն» հասկացությունները, ով անտեսում

էր իր ազգային և կրօնական ավանդույթները, ներքուստ մնալով սեփական անլիարժեք բարոյությունների գոն:

Դանել վարի «Խաղատուն» խորագրով հաջորդ պատմվածքը խոսում է հասարակության մեջ խոր արմատներ ունեցող սոցիալական ու հոգեբանական խնդիրների մասին՝ պատկերելով երիտասարդ ու ամփոփոճ դերասանուհու հուսալքված ու անելանելի վիճակը, որն իր հիշողության պատճառով ստիպված էր հրաժարվել քաթեթակա մերկայացումներից: Հերթական երկրպագուներից մեկի հետ ունեցած «թեթև արկածի» պատճառով, դերասանուհին ցանկանում էր սպանել դեռ չծնված մանկանը, որի համար նույնիսկ գումար չէր կարող հայթայթել: Մակայն նույն քաղաքում Միլյան անունով դրամատուրգը օգնության ձեռք է մեկնում դերասանուհուն, շարունակելու վերջինիս քաթեթակա արվեստը: «Միլյան», որը բառացի նշանակում է սև, իրանական ժողովուրդների մոտ տարածված խելամիտ քաթեթակա կերպար է, որը մասնակցում է Շեքսպիրյան «խեղկատակի» հետ<sup>13</sup>:

Հեղինակի ռեալիստական խստաշունչ ոճով գրված այս պատմվածքը նպատակ ունի շեշտադրելու ապօրինի երեխային սպասող միայնակ կնոջ մկատմամբ հասարակության մեջ ընդունված բացասական ու անընդունելի վերաբերմունքը, միաժամանակ մասնակցելով՝ անհատի հումանիտական մտեցումը ցավագին այդ խնդրին:

Բավական ուշագրավ ճակատագիր ունի Դանել վարի «Էլ ու՛մ - բարեն՛մ» պատմվածքը: Ստեղծագործական երկու փուլերում հեղինակը այն ներկայացրել է տարբեր իմաստային մեկնաբանություններով: Պատմվածքի առաջին «Գիտակցության հոսքի» ոճային նախասիրտները շարադրված միայնակ ու ծեր կնոջ՝ Քոքեթի Մոթանի հիշողություններն են: Ամուսնուն, աշխատանքը, նույնիսկ սիրելի տնային սարդին կորցրած կինը՝ հայտնվելով բացարձակ հուսալքության մեջ, ստիպված էր միակ աղջկան ամուսնացնել բռնաբար մեկի հետ, որը հարկադրաբար գրկում էր նրան երկար տարիներ հարազատ մորը տեսակցելու իրավունքից: Այս իրադրությունը մեկուսացրել էր Քոքեթի Մոթանին համայն աշխարհից ու դարձել էր վերջինիս դատը, աղեկորուս հենկեկանքների ու հուսահատության պատճառը: Ինչքան էլ տարօրինակ է հնչում, այս ստեղծագործության մեջ, Դանել վարը բռնաբար տղամարդու կերպարին փորձում է դրական հնչերանգներ հաղորդել, կանանց համարելով տղամարդկանց «ոչ տղամարդկային» արարքների պատասխանատուն<sup>14</sup>:

Հեղինակի համոզմամբ, տիրող սոցիալական համակարգն ու անհատական դժբախտությունն են կնոջ միայնակության ու հոռետեսության պատճառը: Ավելի ուշ, հետհեղափոխական շրջանում, երբ կանանց հիմնահարցերը զերիշխող դարձան, ֆեմինիստական հիմնային-

դիրները շեշտելու միտումով, Դանեշվարը վերափոխեց պատմվածքի գաղափարական ուղղվածությունը<sup>15</sup>:

1969-ին լույս է տեսնում Դանեշվարի «Մավուշում» վեպը: Կնոջ կողմից պարսկերեն լեզվով առաջին անգամ երբևէ հրատարակված այս վեպը կոչված էր դասվելու պարսկական գրականության գլուխգործոցներից շարքին<sup>16</sup>: «Մավուշումը» ասպարեզ բերեց վիպասանուհու գրական դիմանկարի կարևոր գծերը: Վեպը անմասնադաս կառուցված էր և երկու տասնամյակ մնաց իրանական գրական աշխարհում, որպես բնութսե-լեր: Պարսկական գրականության պատմության մեջ սա միակ գիրքն է, որը միայն 1984-ին վաճառվել է 400 000 օրինակով<sup>17</sup>: Դիրքը քարզմնա-ված է մաև աշխարհի քաղաքի վեգումներով:

Այդ վեպը իր ժամանակների կենդանի արձագանքն է. Դանեշվարը պատմական հարուստ փաստանյութի վրա ցկարագրեց ազատագրական մաքառումներով լի ժամանակաշրջանի գեղարվեստական պատկերը: Վիպական գործողությունները տեղի են ունենում երկրայտ համաշխարհային պատերազմից հետո, Իրանի Ֆարս նահանգում, երբ երկրի ներքին և օտար ռեակցիոն ուժերի դեմ ազատագրական պայքարի հզոր ալիք էր քարճրացել: Վեպի գլխավոր հերոսուհու՝ Չարիի ընտանիքը այդ պատմաքաղաքական խմբումների անմիջական մասնակիցն էր: Հերոսուհու ամուսինը՝ Յուսուֆը, հարուստ հողատեր էր և ազատագրական շարժման առաջնորդներից, որը իր զինակիցների հետ ժողովրդական խավերին համախմբում էր ընդվզելու օտարերկրյա գաղութա-րարների լծի դեմ: Յուսուֆը նախատիպի հիմքով ստեղծված ժողովրդա-կան կերպար է, որն իր մեջ մարմնավորում է դեմոկրատական Իրանի ո-գին:

Վեպի սկզբնական հատվածում հերոսուհու համար ամուսնու գա-րադարաքաղաքական հայացքները խորք ու անհասկանալի էին: Չա-րին մեծ կարտով էր վերհիշում իր անհոգ մանկության և պատանեկութ-յան տարիները: Ի տարբերություն դարասկզբի Իրանի հազարավոր դե-տատի աղջիկների՝ Չարին հասակ էր առել ազատախոհ միջավայրում և պահպանել էր իր անհատական անկախությունը անգլիական միսիոնե-րական դպրոցում սովորելու տարիներին: Գլխավոր հերոսուհու միջոցով հեղինակը ասպարեզ է հանում կնոջ ներքին դրաման, նրա մտորումները կանանց միապաղաղ ու աններդաշնակ կյանքի մասին. «Եթե միայն կա-նայք կատավարեին աշխարհ, Կանայք, որոնք կյանք են արարում ու զի-տեն վերջինիս արժեքը: Նրանք զիտեն սպասման, համբերության, միա-պաղաղ մարդկային գոյության, ինքնագոհողության արժեքը: Եթե աշ-խարհը լիներ կնոջ ձեռքերում, այնտեղ պատերազմ չէր լինի»<sup>18</sup>:

Ժամանակները փոխվում էին և հերոսուհու գաղափարական հա-մուզմունքները նույնպես: Մովի ու ամտարբերության մատմված հի-

վանդներին ու քանտարկյալներին հաճախակի այցելելու ընթացքում, Ձարին սկսում է զիտակցել ամուսնու և նրա զինակիցների հեղափոխական ծրագրերի իմաստն ու ամհրաժեշտությունը: “Մավուշուն” վեպում Դանեշվարը վարպետորեն է ներկայացնում կնոջ հոգևոր կերպարանափոխումը: Քաղաքական խնդիրներից հետո, փխրուն, հոգատար ու նվիրված մոր կերպարից մինչև հեղափոխական գաղափարներով լի շարժման առաջնորդի, որն ամուսնու մահից հետո դառնում է շարունակել նրա հերոսական ուղին: Հերոսուհու քնորոշ հատկանիշը անձնական հավաստություններից վեր քարձրանալու և ազգային գոյության գաղափարին հավատարմորեն ծառայելու դրոշմն է: Եվ այսպես, վիպասանուհին իր “վերամկրտված” հերոսուհու՝ Ձարիի կերպարի միջոցով շարունակում է 1950-ականներին պարսկական արձակուրդային տարածում գտած՝ զինակից, հեղափոխական կնոջ ավանդական թեման, որը ժամանակին իրենց ստեղծագործություններում մեծ վարպետությամբ են իմաստավորել ճանաչված արձակագիրներ՝ Բ. Ալավին և Ա. Սադեղը<sup>19</sup>:

Խիստ խորհրդանշական իմաստ ունի “Մավուշուն” վեպի ավարտը: Հերոսաբար նահատակված Յուսուֆի հուղարկավորման արարողությունը Ձարին վերածում է մասսայական ցույցի: Որպես համաժողովրդական ցասման դրսեվորում՝ տասնյակ մարդիկ, զինակիցներ, գաղափարական համախոհներ են այցելում վերջին հրաժեշտը տալու և ողբալու նահատակված հերոսի մահը: Համազգային սգի վերածված այս պահը վիպասանուհին նույնացնում է պարսկական մեծ էպոսի՝ “Շահնամեի” առասպելական հերոս՝ Միավուշի անմեղ նահատակման հետ<sup>20</sup>: Միավուշի նահատակման մասին լեգենդները ստեղծվել են երկուսու վաղ անցյալում: Ազգային սովորույթ համարվող հերոսի հիշատակման օրերը անվանակոչել են “Մավուշուն”, որտեղից և ծագել է Դանեշվարի հանրաճանաչ վեպի խորագիրը<sup>21</sup>: “Նահատակության” գաղափարը դնելով աշխարհագրորդության հիմքում, Դանեշվարը պատմական իրականությունը արտահայտող հավաստումներով քացահայտում է Յուսուֆի հերոսական վարքագիծը: Հերոսության և նահատակության փառաբանումը հանդիսանում են “Մավուշուն” վեպի լեզվական համակարգի կոնստիտուտիվ տարրերը:

Ինչպես “Պատահար” պատմվածքում, այնպես էլ “Մավուշուն” վեպում, հատուկ շեշտադրում ունեն հակաարևմտյան տրամադրությունները, որոնք կրում են Ջալալ Ալե Ահմադի 1962-ին լույս ընծայված՝ հանրահռչակ “Ղարբադեզի” (“Արևմտաթունավորում”) աշխատության գաղափարական հայացքների ազդեցությունը: Ջալալ Ալե Ահմադը քննադատում էր շահի միապետական վարչակարգի կալմից որդեգրած արդիականացման արևմտյան մոդելը, որը ընթանում էր աստիճանական մեխանիզացիայով և ուժեղ վերահսկումներով<sup>22</sup>:

Վեպտուն արևմուտքը իր հակասական իմաստավորումն է՝ գտել անզգիացի հետախույզ Չինգեղի և մխլեռներական դպրոցի անզգիացի տնօրենու կերպարների մեջ, որոնք հակակրանք ու անվստահություն էին սերմանում տեղաբնիկների մոտ: Անդրդառնալով դարասկզբին Իրանում բացված արևմտյան մխլեռներական դպրոցների խնդրին, Դանեշվարը ընդգծում է միմյանց հակասող երկու կարևոր հանգամանք, առաջինը մասնատիպ դպրոցների դերն ու նշանակությունն էր պարսիկ կամանց կրթության և էմանսիպացիայի տարածման գործում, երկրորդը՝ մխլեռներական դպրոցում գործող արևմտականացված մեթոդներն էին, որոնք անտեսում ու ծաղրում էին մահմեդականների խոր արմատներ ունեցող ազգային ու կրոնական սովորույթները:

“Մավուշուն” վեպի ամենախիմրատիպ ու ուշագրավ կերպարներից է տիկին Ֆոթուհին, որի միջոցով վիպասանուհին արտահայտել է իրանական հասարակության մեջ ստեղծագործող կնոջ դրամատիկ ու ողբերգական ճակատագիրը: Տիկին Ֆոթուհին համարվել է կամանց իրավունքների պաշտպան, ժամանկի ազատախոհ, մտավորականներից մեկը, ով հրապարակայնորեն մի կողմ էր նետել “սև քողը”, իր ցասման ու բողոքի ձայնը բարձրացնելով տիրող կրոնական հետադիմական բարքերի դեմ: Դժբախտաբար, նրան վիճակված էր կյանքի մնացած տարիները անցկացնել հոգեբուժարանում, որտեղ իր դեղին տեսքում համատարեն կշարունակել շարադրել սեփական կյանքի պատմությունը: Հեռուտու համարմի և գրչի մետաֆորիկ “մերկությունը” հասարակությունը բնորոշեց, որպես հանցանք: Ինքնարտահայտումը վերածվեց ինքնակործանման, շարժումը՝ անշարժության, ձայնը՝ լռության, ներկայությունը՝ բացակայության: Վերջ ի վերջո հեռուտուին դատապարտվեց հոգեկան վտարանդիության, որտեղ սեփական մարմինն ու գրիչը կմնային հավերժ շղթայված: Տիկին Ֆոթուհին սպրտում էր հոգեբանական երկփեղկվածություն՝ իրական կյանքում չգտնելով իր կերտվածքին հարիր դաշնություն, նա հայտնվում է հոգեբանական խաթարման տիրություն: Ինչպես մեկնաբանում է Ֆ. Սիլամին տիկին Ֆոթուհին մարմնավորում է կնոջ ողբերգական ճակատագիրը, ով դրժում է լռությունն ու նրա մեջ փակված մնալու իրողությունը<sup>23</sup>: Հեռուտուին բռնոր ճնշված կին գողտների տուրքն էր, ով հիշեցնում էր ընթերցողներին, որ ինքնաարտահայտման գինը մահմեդական հասարակությանն մեջ ստեղծագործող կնոջ համար չափազանց բարձր է:

Դանեշվարի “Մավուշուն” վեպը, իր գաղափարական ու քեմատիկ ուղղվածությամբ առաջնային տեղ է զբաղեցնում մախահեղափոխական իրանական վիպագրության մեջ: Թեև վեպը ռեսալիտական ստեղծագործություն է, նրանում մեջ ընդված “երազի, հեքիաթի և առասպելի” պայմանական տարրերը օգնում են ըմբռնելու վեպի փիլիսոփայական-էթիկական և պատմական իմաստը<sup>24</sup>:

Այսպիսով, իրանական գրականության մեծամուտ արձակագիր Միմին Դանեշվարը իր հասարակական և գրական գործունեությանը հարագատ մնաց «տղիական ուղղվածության» գրական շարժմանը և գալիք տասնամյակներում իր լույսը սկսեց հետհեղափոխական պարսկական արձակի գարգացման ուղիներին՝ իր ստեղծագործություններում հատկապես շեշտադրելով կամանց հիմնախնդիրները:

Իրանի իսլամական հեղափոխությունից հետո կամանց գրականությունը ավելի քան երբևէ քաղաքականացված բնույթ ձեռք բերեց<sup>25</sup>: Ֆեմինիստական գիտակցությունն ու կամանց հիմնահարցերը գերիշխող դարձան պարսիկ կին հեղինակների ստեղծագործություններում. մույնիսկ ավագ սերնդի այնպիսի ճանաչված գրողներ, ինչպիսիք են Միմին Դանեշվարը և Միմին Բեհրահանին, իրենց ստեղծագործություններում ավելի հաճախ սկսեցին բարձրաձայնել կամանց իրավունքների ու նրանց իրավահավասարության խնդիրների մասին:

1987-ին տված իր հարցազրույցներին մեկում Ս. Դանեշվարը հատկանշեց այն փաստը, որ ֆեմինիստ է եղել իր ստեղծագործական գործունեության ողջ ընթացքում<sup>26</sup>: Հետհեղափոխական իրանական գրականության մեջ ստեղծված ֆեմինիստական խնդիրների դիսկուրսիվ համակարգը համարավորություն ընձեռեց Դանեշվարին պատասխանելու իր եության խորքերում շարունակաբար հորված, մտահոգիչ հարցերին: «Որպես պարսիկ կին, ես տառապել եմ վարչակարգի բռնապետական քաղաքականությունից, արևելք և արևմուտք հասկացությունների չարաշահումից, անդրոցեմտրիկ մշակույթի և ավանդապահ համակարգի սահմանափակումներից» այսպիսի բանավեճային շեշտադրումներով է հանդես գալիս հեղինակը, իր «Լամակ ընթերցողներին»<sup>27</sup> աշխատության մեջ:

Կամանց հիմնահարցերը յուրովի մեկնաբանելու միտումով արձակագիրը դիմեց մամականու, ինքնակենսագրության, հուշագրության ակնարկային ժանրաձևերին, որոնք մեծ մասսայականություն են վայելում հետհեղափոխական իրանական գրականության մեջ<sup>28</sup>: 1982-ին լույս տեսավ Դանեշվարի վաղամեռիկ ամուսնու՝ Ջալալ Ալի Ահմադի հիշատակին նվիրված «Դորուբե Ջալալ» («Ջալալի Մայրամուտը») խորագրով ստեղծագործությունը: Ինքնակենսագրական նյութի վրա շարադրված այս գրքի յուրաքանչյուր հատվածում ընթերցողը քացահայտում է սիրտ, ընտանիքի, ստեղծագործական այրատումների միջև կանգնած մեկ այլ կնոջ դիմանակար: Դանեշվարը հատկանշում է իրանական անդրոցեմտրիկ ըմտանկան համակարգը, որտեղ կինը պարտավոր էր լռելյայն տանելու բոլոր վիրավորանքներն ու նվաստացումները:

Եթե «Մավուշում» վեպի հերոսուհին կոչված է աջակցելու իր հեղափոխական ամուսնուն և շարունակելու նրա հերոսական ուղին, ապա «Ջալալի մայրամուտը» ստեղծագործության մեջ կնոջ ձայնը քո-

դագերծ է անում ամուսնուն, ցուցադրելով քաղաքական ակտիվիստի դիմակի ներքո թաքցված իրական տղամարդու կերպարը<sup>31</sup>:

Ինչպես «Ջալալի մայրամուտը», այնպես էլ Դանեշվարի շատ այլ հուշագրությունները մեծապես եզրեր ունեն 90-ականներին Իրանում մեծ ճանաչում գտած Շահին Համանիի «Փոշթե Դարիյեհա: Գովթեզու քա Համասարանե Հոմարմանդան»<sup>30</sup> («Պատուխանների հետևում: Երկխոսություն Արտիստների Ամուսնանների հետ») խորագիրը կրող գրքի հետ. որը Իրանի հայտնի մտավորականների և արվեստի գործիչների կազմակերպություններն ու անձնական կյանքը լուսաբանող ինքնատիպ ըմբռանի է: Իր բնույթով վիճահարույց այս աշխատությունը քննադատների շրջանում ունեցավ իր քաջասական արձագանքները<sup>31</sup>: Սակայն ընդգծենք, որ հետհեղափոխական գրականության մեջ մեծ մասսայականություն վայելող կին գրողների գրչին պատկանող հուշագրություններն ու ինքնակենսագրական պատմումները ունեն մեծ հասարակական նշանակություն և ամրապնդում էին նրանց պայքարը հանուն իրավահավասարության: Նմանատիպ ստեղծագործությունները վերափոխում են արվեստի և կանանց հիմնախնդիրների նկատմամբ ունեցած «սոցիալական ուղղվածության» գրական շարժման մեջ գերիշխող տեսակետները:

Ֆեմինիստական գրական շարժման մեջ լայն տարածում գտած ակնարկային ժանրաձևերը մեծ հաջողությամբ հանդես եկան նաև արդի պարսիկ վտարանդի կին գրողների ստեղծագործություններում, որոնք իրենց ճանաչողական և քաղաքական նկատառումներով առաջնային տեղ են զբաղեցնում արևմտյան գրաքննադատների և ընթերցասերների շրջանակներում:

Կանանց հիմնախնդիրները արտահայտելու նպատակով 1986-ին Դանեշվարը հրատակեց «Էլ ու՛մ քարեվեմ» պատմվածքի վերանշակված տարբերակը<sup>32</sup>: Պատմվածքի սկզբնական բովանդակության մեջ վերափոխված մի քանի պարբերությունները վկայակոչում են արձակագրի ֆեմինիստական գաղափարական շեշտադրումները: Պատմվածքի գլխավոր հերոսուհուն՝ ծեր ու լքված Քոքեայք Սուքանին, որի միակ դուստրը ամուսնու հարկադրանքով չէր այցելում միայնակ մորը, հուզում է այն դաժան իրականությունը, որտեղ կանայք չեն տնօրինում իրենց ճակատագրին: Ահա այն դրվագներից մեկը, որտեղ հագար օրհնանք ու լույս սփռելով դպրոցի տեսչուհու շիրիմին ծեր կինը վերհիշում է նրա իմաստուն ամեն մի արտահայտություն. «Բոլոր լույսերը, որ ճառագում են ձեր շիրիմին, քավարար չեն, տեսչուհի, դուք իրավացի էիք, որ կանայք հարյուր անգամ արժանապատիվ են քան տղամարդիկ...»<sup>33</sup>:

Մ.Դանեշվարի ստեղծագործական գործունեության հետհեղափոխական վայրը նշանավորվեց նաև նորարարական վիպագրությամբ<sup>34</sup>: Այսպիսով, Միմին Դանեշվարի ստեղծագործություններում իրենց իք-



նատիպ գեղարվեստական արժեքները ստացած կանանց հիմնական-  
դիրքերը, հատկանշեցին ֆեմինիստական գաղափարական ընկալումնե-  
րի նշանակությունն ու կարևորությունը արդի իրանական գրականու-  
թյան մեջ:

LILIT SAFRASYAN

**SIMIN DANESHVAR. FROM PREREVOLUTIONARY SOCIAL ISSUES UP  
TO POSTREVOLUTIONARY FEMINISM**

One of the most renowned contemporary Iranian women writers Simin Daneshvar has started to write and publish in the pre-revolutionary era. Her creative years coincide with the sociopolitical events of the early 1960s, which have had substantial effects on her works. Pre-revolutionary social climate, contributed to the formation of Daneshvar's general ideological views. Daneshvar gained tremendous success with her novel "Savushun", published in 1969, the first novel ever written by Iranian women. "Savushun" became a best-seller for over two decades being reprinted fifteen times.

Some of Daneshvar's pre-Revolutionary writings like "The Playhouse", "To Whom Can I Say Hello", and "The Accident" portray the plight of women in Iranian society. In depicting these women author places a greater emphasis upon the effects of class and foreign oppression than upon male domination. Daneshvar's women heroes publicize revolutionary political activism, and criticize western cultural infiltration, but in the same time, they overlook the role of patriarchy.

After the Islamic revolution Daneshvar becomes one of the leading female prose writers, who have become influenced and touched by the change of Iran's socio-political structure. In her post-revolutionary works, Daneshvar has abandoned her past forms and themes and has started to write personal stories from a feminist point of view. In her two stories such as "Jalal's Sunset" (1982), a biographical account of her relationship with her late husband Jalal Ale Ahmad, and "To Whom Can I Say Hello?" Daneshvar portrays male dominated, male centered society in which women are depressed.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. K. Talatof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, N. Y., 2000, p.69.
2. Ավիլի մամրամասն դրս մասին տես՝ K. Talatof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, New York, 2000, p.19-64.
3. Mohammad R. Ghanoonparvar, *Prophets of Doom: Literature as a Socio-Political Phenomenon in Modern Iran*, Lanham and London, 1984, p. 27.
4. Մինչ 'Դանեշվարը, իրանական արձակուրդ դեռևս 1945թ. լույս է տեսել պարսիկ հայտնի հասարակական գործիչ՝ Մադիամ Ֆիրուզի "Ավաանն վա Ավաանն ման" խորագրով ինքնագինսագրական պատմվածքը, որը նվիրված է Իրանի բոլոր իրավագրիկ մայրերին:

5. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, N. Y., 1992, p. 181.
6. *Ibid.*, p.183.
7. *Ibid.*, p.72.
8. Shu՝ Մոհամմադ Ալի Սեփանու, Բազ Աֆարիննի Վարդար: Բիսթ օ Հաֆթ Ղևսահ ազ Բիսթ օ Հաֆթ Նեվիսանդի Մոսսերն Իրան, Թեհրան, Նեզահ, 1988.
9. K. Talattof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, N. Y., 2000, p. 94.
10. Franklin Lewis, Farzin Yazdanfar, *In a Voice of Their Own: A Collection of Stories by Iranian Women since The Revolution of 1979*. Costa Mesa, CA, 1996, p. XVII.
11. Nasrin Rahimieh, *World Literature in Review: Iran*, *World Literature Today*, Vol. 64, No.4, 1990, p. 690-91.
12. Simin Daneshvar, *Daneshvar's "Playhouse": A Collection of Stories*. Trans. Maryam Mafi, Washington, D.C., 1989, p.32.
13. K. Talattof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, New York, 2000, p.99.
14. Shu վիպի առաջին տարրերակը՝ Միմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոհում, *Անֆրա*, 2, 1973, էջ 142-51.
15. Shu՝ Միմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոհում, Թեհրան, 1986, էջ 75-93.
16. Մինչ Միմին Դանեշվարի "Սավոլոմե" վիպի յույս ընծայումը, ֆրանսերեն լեզվով մի շարք պատմական վիպեր է գրել Թեհրանի համալսարանի ֆրանսերեն լեզվի և գրականության դասախոս, Ամին Փարթավանը:
17. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 183.
18. Симин Данешвар, *Смерть ради жизни*, Москва, 1975, с. 172.
19. М. Яукачева, *Женщина в персидской прозе*, Ташкент, 1964, с. 66-79.
20. Д. Комиссаров, *О Симин Данешвар и ее романе. - Симин Данешвар, Смерть ради жизни*. Москва, 1975, с. 270.
21. *Там же*, с. 241.
22. Pedram Partovi, *Autorial Intention and Illocutionary Force in Jalal Ali-I Ahmad's Gharbzadagi*, *Comparative Studies of South Asia, Africa and Middle East*, Vol.XVIII, 2, 1998, p. 73-80.
23. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 60.
24. Д. Комиссаров, *О Симин Данешвар и ее романе.- Симин Данешвар, Смерть ради жизни*, Москва, 1975, с. 271.
25. Farzaneh Milani, *Veils and Words: The Emerging Voices of Iranian Women Writers*. Syracuse, New York, 1992, p. 234.
26. Shu՝ Նասեր Հարիրի, Հոմար վա Արաբիաթի Էմրուզ, Բարբուլ, 1987, էջ 66.
27. Simin Daneshvar, *A Letter to Readers*, in *Daneshvar's Playhouse: A Collections of Stories*, trans. Maryam Mafi, Washington, D.C., 1989, p. 154-70.
28. Այդ մասին մանրամասն տես՝ Afsaneh Najmabadi, *Women's Autobiographies in Contemporary Iran*, Cambridge, Mass., 1990.
29. K. Talattof, *The Politics of Writing in Iran*, Syracuse, N. Y., 2000, p.160.

30. Տես՝ Եսահիմ Համանի, Փոշի Դարիչեհա: Գովթեզու բա Համսարանի Հոնարմանդան, Թեհրան, 1992.
31. «Կերոնիչյալ աշխատության մասին» սոցիալական ուղղվածության գրական շարժման համախոհ մի քանի գրաքննադատներ իրենց բացասական գրախոսականներով հանդես եկան ճամաչված գրական և մշակութային «Ադիմե» ամսագրում: տես՝ Նադրե Զեթար Ազ Փոշի Փանջարեհա, Ադիմե, 75, 1992, էջ 38.
32. Տես՝ Սիմին Դանեշվար, Բե Զի Սալամ Զոնամ, Թեհրան: Խարազմի, 1986, էջ 75-93.
33. Նույն տեղում, էջ, 82.
34. Sayer Mohammadi, An Interview With Simin Daneshvar. - Iran: Daily Newspaper, February 4 2002.

ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄԵԿ ԷՁ 17-րդ դ. ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. ՆԿԱՐԻՉ ՍԻՆԱՍ

17-րդ դ., Սեֆյան Իրանում հիմնավորված Արևելքի խոշորագույն գաղթօջախի՝ Նոր Ջուղայի քաղաքում ու հարստագույն կյանքի ան-քակտելի մասն էր կազմում նրա մշակութային համակարգը, որտեղ ա-ռանձնակի հնչեղություն էր հանդես գալիս տեղական գեղարվեստի ո-լորտը և մասնավորապես կերպարվեստի բնագավառը: Ոլորտ, որտեղ ժամանակի թելադրանքով հայկական միջնադարյան որմնակարչութ-յան կանոնիկ հիմնավորումները վերաիմաստավորվում են հաստոցային գեղանկարչության ու ստանում գաղափարական նոր արժեքավորում-ներ: Սիևնույն ժամանակ, իրանահայ գեղարվեստ ակտիվ ներթափան-ցող եվրոպական մշակութային մտածողությունն ու արտահայտչակա-նության միջոցներն իրենց զգալի ներազդեցությունը կրողն են նորջուղա-յեցի արվեստագետների գեղարվեստական ըմկալումների ու կողմնորո-շումների վրա՝ վերաիմաստավորելով ստեղծագործական մտեցումնե-րի չափորոշիչները: Իրանահայ գեղանկարչության մեջ «ծաղկոթ», «պատկերահան» և «նաղաշ» (արհեստավոր-նկարիչ) արտահայտու-թյունները փոխարինվում է «նկարիչ» բառիմաստով, որն հիրավի լիար-ժեք վերաբերվում է իր ժամանակի խոշորագույն արվեստագետներից մեկին՝ նկարիչ Մինասին՝:

Մինտսի կենսագրականի վերաբերյալ 17-րդ դ. ժամանակագիր-պատմիչ Առաքել Դավրիժեցին ներկայացնում է առավել սուղ տվյալներ, հիշատակելով, որ Մինասը, Բերիայում (Հալեպ) աշակերտել է մի «...ումն պատկերահան» վարդապետի մոտ, որը եղել է «սզգաւ ճռանկ»՝ և, որի մոտ Մինասը «...ուսաւ ի նմանե»<sup>2</sup>: Վերադառնալով Նոր Ջուղա՝ Մինա-սը զբաղվում է միայն գեղանկարչությամբ. «գործէր զարուեստն իւր զպատկերահանութեան»<sup>3</sup>:

Հալեպում ու՞մ մոտ կարող էր սովորել նկարչական շնորհ ունեցող Մինասը:

Հիշարժան է, որ ժամանակի Հալեպը արևելքի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկն էր, որտեղ իրենց հիմնավոր տեղն ու-նեին հայ վաճառականները՝ այդ թվում և ջուղայահայերը, որոնք «տի-

րող դիրք մը ունեին Հալեպի առետրական հրապարակին վրայ... իրենց դիրքով ու դրամով»<sup>6</sup>: Միևնույն ժամանակ, Հալեպի հայ համայնքում գործում էր խաշոր արհեստավորական միավոր՝ կաշեգործների, ջուլհակագործների, ասեղնագործությանը՝ զբաղվողների, փայտի գեղարվեստական մշակման, մանրանկարչության, ձեռագրային և այլ արհեստների տեր բարձրակարգ մասնագետներով<sup>7</sup>, որոնցից ռմանք անգամ ներագրավված էին պետական արհեստանոցների աշխատանքներում<sup>8</sup>: Առևտրա-արհեստավորական այս բազմատես համակարգի և ընդհանրապես տեղի քրիստոնյա համայնքի համակարգում իր որոշակի տեղն էր զբաղեցնում Մեքիթների համայնքը<sup>9</sup>, որոնց մեջ առավել ակնառու էր մեծանուն Մուսավիր նկարիչների ընտանիքը<sup>10</sup>: Մեքիթների համայնքի կրոնա-զաղափարական ինքնատիպ դրսևորումների առավել արտահայտիչ ոլորտն էր կազմում մեքիթ եկեղեցիների հարդարանքում կիրառվող սրբանկարչական բարձրարվեստ ստեղծագործությունները, որոնց առանձնահատկությունը կայանում էր նրանց քյուզանդական սրբանկարչական կանոնիկ կառուցվածքի և արևելյան (արաբական) մանրանկարչության զարդահորինվածքների յուրօրինակ համակցման մեջ՝ Մուսավիրների տեղի հիմնադիր Յուսուֆ (Հովսեփ) ալ-Մուսավիրի (?-1667)<sup>11</sup>, տեղի շառավիղներ Նիմաթուլայի և նրա որդիներ Ամանիայի (Համանիա) ու Ջիրգիզի (հայտնի է եղել և Կերգես-Հովհաննես, Ջորջոս, Շրճոս անվանակոչումներով)<sup>12</sup> բարձրարվեստ կատարողականով: Այս նկարիչների մոտ ժամանակի քելադրանքով առկա կլինեն նաև եվրոպական կերպարվեստից փոխառված որոշակի մոդերնիզմի միտումներ: Ըստ ժամանակային ընդհանրացման, հավանական պետք է համարել, որ նորջնդայեցի Միմասը աշակերտել է Յուսուֆ ալ-Մուսավիրին, որն եղել է բազմակողմանի գարգացած անձնավորություն, տիրապետել է հայերեն լեզվին<sup>13</sup>, իսկ նրա կաթախիկ լինելը և քյուզանդական արվեստի կողմնորոշումը հուշել են պատմագրին նրան անվանել «ֆռանկ»:

Միմասի մինչ օրս պահպանված աշխատանքներում հստակ արտահայտվում է արևելա-քյուզանդական մոդերնիզմի միտումը, սակայն և հայկական մտածողության հստակ դրսևորումներով, որոնք արվեստագետը համակցում է իրանական և մասմաթ եվրոպական գեղանկարչական մշակումների հետ՝ ստեղծելով անհատական ոճ:

Միմասի շնորհը փայլել է տարբեր բնագավառներում. հաստոցային նկարչություն, մանրանկարչություն, ձեռագրային նկարագրություններ «...և գրոց էր ծաղկող, զինչ և գիրք հանդիպէր՝ ոսկով և լազվարդով ծաղկեալ զարդարեր, քանզի զամենայն մասնատր արհեստ, որ այսմ նկարակերտ արուեստիս հետևի, զամենայն անթերի գիտեր»<sup>14</sup>: Նկարում էր քեմատիկ պատկերներ, ստեղծում բնանկարչական աշխատանքներ, զբաղվում տեղի եկեղեցիների հարդարային ներքին ձևավորումներով, կատարում աշխատանքներ հայ մեծահարուստների պալա-

րանքներում. «...մեծամեծքն Ջուդայեցուց տանին ի ծաղկեալ և ի պատկերագրել գյարկս ապարանից և տանց իւրեանց. այսպէս և խօջա Նազարի որդի խօջայ Սաֆրագն աարեալ ի տուն իւր առ ի զարդարեալ զապարանս իւր ծաղկօք և պատկերօք»<sup>13</sup>: Սաֆրագի ապարանքի նկարագրումները ցնցող տպավորություն են թողնում այստեղ այցի եկած շահ Սեֆու (1629-1642) վրա, որը. «...հայեր ի ծաղիկս և ի պատկերս՝ գոր նկարեալ կայր տեսանէր զի չքնաղ և զեղապանծ և յոյժ մմանակի կերպագրեսոր են ամենեքեան. սկսաւ հարցանել թագաւորն ի խօջայ Սարֆրագէն վասն նկարիչ վարպետին, թէ ուտի իցէ, և նա (Սաֆրագը-Ա.Ս.) ասաց. «Ի մերմէ ժողովրդեմն և ի չայոց ազգես է... և երամայնաց թագաւորն կռել զնա (Սինասին-Ա.Ս.) և իբրև եկն՝ հարցեալ թագաւորն տեղեկացաւ ամենայն որպիսութեանցն...»<sup>14</sup>: Գնահատելով նկարչի կատարողականը, սակայն և որոշակի քերականություններ ցրա վարպետության նկատմամբ «...վասն իւրեանց զբոսանաց ծաղու և իւրախութեան», շահը վարձում է հայ նկարչի կարողությունները նսնմացնել, նրան հանձնարարելով տեղում նկարել իր նախարարներից ասովել «...անգեղ և դժպատեհ...» դիմագծեր ունեցող Չրաղ խանին, որը նաև «...սա ի կատակս...սկսաւ թէքմերել զայս և զբերանն և այլայլել զկերպարանն և շրջմբջել կողմէ ի կողմն...»<sup>15</sup>: Այս լարված իրադրության մեջ Սինասն իրեն դրսևորում է որպես գծանկարի առաջնակարգ վարպետ, կարողանալով ոչ միայն կատարել շահի քնահանույթը՝ արագ նկարելով ներկաներին զվարճացնող Չերաղ խանի դիմանկարը, այլ և նրա կերպարը այնքան «...հար և մման էր համեմատութեամբ, որ ընդ թագաւորին ամենեքեան ի հանդիպին եղեալքն մեծաւ հիացմամբ զարմացեալք եղեմվասն ասովել մմանութեանն...»<sup>16</sup>: Կարճ ժամանակահատվածում մման աշխատանքի իրականացման համար, անխոս, հարկավոր էր ճեպանկարի վարպետ ինացություն և քարձրակարգ արհեստավարժություն, որին հիրավի տիրապետել է Սինասը: Առաքել Դավիթեցին, հատկապես շեշտադրում է նկարչի կողմից բնորոշին կատարյալ մմանակելու կարողությունը, որը հուշում է Սինասի և՛ պոռֆեսիոնալ զեղանկարչական ունակությունների և՛ մասնավորապես դիմանկարչի նեղ մասնագիտացման մասին, որով նա զնահատվում է որպես «...ստաւել չքնաղ և մմանագիր պատկերահանութեանն՝ յորովք ոմանք աշակերտեալ ուսան ի մմանէ, բայց ոչ ոք հաւասարեաց նմա, զի բնական ումեր շնորհս և տեսութիւն մասց...»<sup>17</sup>: Շնորհալի երկատասարդի դիմանկարի առաջնակարգ վարպետ լինելու մասին է վկայում և մեկ այլ դիպված, երբ Իրան ժամանած ոուսական դեսպանության կողմից շահ Սեֆուն մատուցվում է տափաստանային բազի, որին հսկում էր «...ոմն այր, որ...ազգեն և աշխարհեն Ռուսաց»<sup>18</sup>: Ըստի ցանկությամբ, պալատական նկարիչ Մահմադ բեկը, որն էր «...ազգաւ Պարսիկ, և զլուխ ամենայն պատկերահան և նկարիչ արուեստաւորաց և անուանի ամենայն

ագգս Պարսից...», նկարում է քոչմին բազմալանի հետ, սակայն «...ու ըստ որակին և անդամոցն համեմատ և մնան»<sup>19</sup>: Եռյնը կատարում է Սինասը և «...այնքան համեմատ որ քագատրն ինքն և ամենայն մախարարքն իր անպատմելի հիացմամբ սքանչացեալք՝ զարմացեալք կալին,....քագատրն հրամայեց պարզևս տալ վարպետ Սինասին տասն և երկու քուման դրամ ինամ և յտից մինչև ցզուխն խղաք (Քանկարժեք հագուստ-Ա.Ս.)»<sup>20</sup> և հաշվառվում է արքունապատկան զորախմբում (սա սկնկլալում էր հատուկ մպաստ և անգամ ցմահ քոչակ և ազատում ընդ-հանուր զինվորական ծառայությունից): Սինասի ստեղծագործական կյանքի այս առաջին քայլերը պահանջում են և ժամանակագրական ճշտում, որին օգնում է ավստրիական դեսպանության քարտուղար Ա. դամ Օլենարիսի գրառումն այն մասին, որ Ռուսաստանում, Վոլգա գետի մոտ, 1636թ. իրենք հանդիպել են Իրան մեկնող առևտրական քարավանի, որի կազմում է եղել ռուս դեսպան Ալեքսեյ Ռոմանչիկովը<sup>21</sup> և, որն իր հետ շահի համար տանելիս է եղել ռուսական տափաստանային բազմեր և մի բազմաամբ: «Նկարչական մրցույթի» իրադեպի ժամանակը ճշտվում է և այն հանգամանքով, որ իրանական արքունիքի նկարչական արվեստանոցների ղեկավար, մեծամուն նկարիչ Ռեզա Աբբասու մահից հետո (1635թ.), նրան այդ պաշտոնում վախարհում է Մահմադ ընկը, որը և Սինասի մրցակիցն է վերոհիշյալ մրցույթի ժամանակ: Նկատի ունենալով, որ Առաքել Դավրիժեցին չի մշտն Սինասի ծննդյան թիվը կամ տարիքը, մենք կարող ենք վերը հիշատակվածի հիման վրա կատարել Սինասի տարիքի մոտավոր հաշվարկը. եթե ելակետային ընդունենք նրա 16-17 տարեկան լինելը, երբ մա կարող էր մեկնած լինել Հայեպ: Այստեղ մա կարող էր գտնվել ոչ քիչ քան 1 կամ 2 տարի, ըստ որի կարելի է եզրակացնել, որ Սինասը ծնվել է 1617/18թթ.:

Վերը ներկայացվածն ըստ էության Սինասին բնորոշում է որպես երիտասարդ, սակայն և հասուն արվեստագետի՝ դիմանկարի կերպարա-հոգեբանական ժանրի կատարյալ տիրապետողի: Նրա այս կարողությունն առավել ցայտուն է ներկայանում նորջուղայեցի մեծահասակուստ Վելիջանյանների ընտանիքից Հակոբջան և Ռսկան եղբայրներին ներկայացնող կտավներում (Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանքի քանդակարան), որտեղ ծնկաչոք-աղոթողի դիրքով ներկայացված կերպարներն օժտված են ներքին դիմամիկ «շարժումով» և նրբորեն մոդելավորված դիմագծերով: Սինասյն ժամանակ, այս աշխատանքներում նկատելի է և եվրոպական գեղարվեստից վախճանված կառուցվածք, որի արտահայտումների գերակշռությունը ստիպում է անգամ Սպահանի քաղաքապետին, նկարչին տրվող հրամանագրում որոշ հարկերից ազատելու վերաբերյալ, հատուկ մշել, որ Սինասը «...երուպական նկարներ նկարող» է<sup>22</sup>:

Չմայած այն հանգամանքին, որ Մինասը ստեղծագործել է տար-  
բեր ժանրերով և եղել է բազմակողմանի մասնագիտացած նկարիչ, այ-  
դուհանդերձ ամենաբարձր գնահատանքի է արժանացել մասնավորա-  
պես նրա դիմանկարի վարպետ լինելու, որի մասին Առաքել Դավրիժեցին  
խոսում է ավելի հանգամանակից՝ նշելով, որ «...մարդոց՝ որոց ազգաց և  
իցէ, թէ Պարսից, թէ Հայոց, թէ Եբրայեցոց, թէ Հնդկաց, թէ Ֆոնանկաց, թէ  
Ռուսաց, թէ Վրաց, քանզի որում ազգի կերպարան, որ նկարէր, ամենևին  
յար և նման նկարէր. նոյնպէս և ի ներգործութիւնս և ի կիրս մարդ-  
կան...թէ ի ծիծաղել, թէ բարկանալ, թէ ի տրտմութեան, թէ յարբեցու-  
թեան, թէ յօրանջել, թէ ի խրախուրթեան, թէ ի մարտ պատերազմի և թէ որ  
իցէ կրիւք նկարէր զկերպարանս մարդոյ, որում ազգի և լինէր. ամենևին  
յար և նման նկարէր»<sup>25</sup>:

Դիմանկարչական և հաստոցային նկարներից գատ, Մինասի ար-  
վեստը փայլել է նաև որմնանկարչության բնագավառում (Խոջա Մահ-  
րազի ապարանքի պատերին պահպանված մի քանի քեկորներ): Մինա-  
սին վերագրվող մի քանի աշխատանքների գեղարվեստական առանձ-  
նահատկությունների համադրմամբ, կարելի է վստահաբար նշել, որ Նոր  
Ջուղայի որոշ ապարանքներում պահպանված ճակատամարտի տեսա-  
րաններով թեմատիկ աշխատանքները, բնապատկերները և նատյուր-  
մորտ ստեղծագործությունները ևս պատկանում են Մինասի վրձնին:  
Պետք է հստակեցնել, որ հատկապես ապարանքների որմնանկարները,  
որոնք ստեղծվում էին պատվիրատուի նախասիրությունից ելնելով և ու-  
նեին ստեղծագործման սահմանափակ հնարավորություններ (թելադր-  
վող թեմատիկան, նկարի համառոտ լինելը ներքին ղեկորի հետ, պատի  
տարածքի շրջանակները, պատի ծեփածոյի վրա նկարելու տեխնիկա-  
կան որոշակի բարդությունները ևն), շեշտում են Մինաս նկարչի կա-  
տարյալ վարպետության և նյութը զգալու կարողության փաստը: Մի-  
նասն այնքան անվանի էր, որ նրան էին դիմում անգամ պարսից վերնա-  
խավը ներկայացնող անձեր, իրենց ապարանքների հարդարային աշ-  
խատանքները կատարելու համար: Այս պարագայում կարելի է եզրա-  
կացնել, որ ամենայն հավանականությամբ նկարիչը եղել է կամ պալա-  
տական հաշվառման մեջ (հանրավոր է և պալատին կից նկարչական  
արվեստանոցում զբաղեցրել է ղեկավար դիրք և եղել է «մաղաչ բաշխ»-  
նկարիչների ղեկավար) և կամ մեզ անհայտ պատճառով, նրա գործու-  
նությունը վերահսկվել է և Մինասի կողմից այլ պատվերների կատա-  
րումը չի խրախուսվել արքունիքի կողմից: Մասնավորապես այս միտքը  
հաստատող վկայություններից է շահ Աբրահամ Ա-ին մերձավոր անձան-  
ցից մեկի՝ գորավար Շահվերդի խանի հրամանագիր-ուղերձը Մինասին,  
որը լինելով հղված մասնավոր անձի կողմից, ըստ էության արտահայ-  
տում է արքունիքի (ի դեմս շահի) տեսակետը. «...քանի որ լսուեց, որ  
ժամանակի յայտնի վարպետ Մինաս նկարիչը, իմ գործից ձեռք է քաշել



և ուրիշների համար է նկարչություն անում, և այն որ ըստեղ վարպետ Ռեզային սովորեցնելուց անփոքր և անուշադիր է, պետք է այնպես չանի, որ նրա համար ամաչողությունն ու անպատուությունն պատճառ դառնայ և նույնպես շատ ջանք և աշխատանք տանի, որ որևէ պատճառաբանություն չստի չլինի...»<sup>24</sup>: Այս գրառումը հետաքրքրական է մի քանի առումներով:

Առաջին. Սինասին համձնարարվել է ձևավորել մեծատոհմիկի ղրյակը, որի աշխատանքները մնացել են անավարտ, քանի որ նկարիչը զբաղվել է այլ պատվերներով (հնարավոր է հայերի ապարանքներում կամ որևէ հայկական եկեղեցում): Սիննույն ժամանակ, նկարիչը ունեցել է պարսիկ աշակերտներ, որոնց թվում է եղել արդեն վարպետի համարում ունեցող նկարիչ Ռեզան, որի ուսուցման մեջ Սինասը չի եղել հետևողական: Փաստվում է նաև, որ Սինասը ղեկավարել է պայատին կին նկարչական արվեստանոց կամ դպրոց: Եվ, որ առավել էական է, նրան զգուշացնում են մեծամուն նկարչին ամհարի պահվածքի համար և չքողարկված ակնարկում անցանկալի հետևանքների մասին:

Որպես նկարիչ, Սինասը չունի գեղանկարի տեխնիկական իրականացման ատանձին նախասիրություններ: Օգտագործում էր ջրային, յուղային և թուսակա ներկեր, ամուխ, ոսկեփոշի: Նկարում էր կտավի, քղթի, պղնձյա և փայտյա հատուկ մշակված տախտակների վրա. «...ձիթով պատկեր, և թե առանց ձիթոյ, և քարտիսի, ի կտառի, ի տախտակի, ի պղնձի, ի յոմն և այլ ինչ կերպի յոր և պիտոյանայր»<sup>25</sup>: Այդուհանդերձ, ինչպես ժամանակի յուրաքանչյուր արվեստագետ, Սինասը շարունակում է մնալ արհեստավորական կառուցվածքում. հմուտ էր «բազում և զանազան արուեստից» և անգամ «հմուտ էր բժշկական արուեստի» ոչ միայն որպես բժշկող, այլև դեղատոյսեր և սպեղանի պատրաստող<sup>26</sup>:

Սինասի քաջարժակ կարողությունների մասին են վկայում և պարսկալեզու արքունական հրամանագրերի և հայերենով գրառված ամուսնական պայմանագրերի մեջ կատարված վկայագրումները, որտեղ Սինասը բնորոշվում է որպես «ժամանակի ճշակավոր վարպետ», «եռչակված քրիստոնյա նկարիչ», «ժամանակի ճշակավոր վարպետ նկարիչ...», և որին «...Տուղայի համայն նկարիչները...իրենց վարպետն ու մեծը համարելով, չպետք է յիշեալի խօսքից ու խորհրդից դուրս գնան և...Սինասին իրենց վարպետը համարելով...խօսքը յարգեն»<sup>27</sup>: Այս պարագայում հետքերակա է այն հանգամանքը, որ 1639թ. Նոր Տուղայի նկարչական «ընկերակցության» ղեկավար է հիշատակվում «նկարչապետ Սիքայելը» (մեզ անհայտ է նրա ո՞վ լինելը-Ա.Ս.), սակայն և, որի անվան կողքին նշվում է Սինասը որպես «նկարչապետ»<sup>28</sup>, որին և անվերապահորեն պետք է ենթարկվեն քոլոր նկարիչները: Հետևաբար փաստվում է, որ նկարչական արվեստանոցի ղեկավարն ունեցել է սահ-

մանավանակ պաշտոնավարություն, որի գործունեությունը ևս վերահսկվել է ավելի լայն արտոնություններով օժտված Սիմասի կողմից: Սիմոնյն ժամանակ, նկատի ունենալով այն իրողությունը, որ մայրաքաղաք Սպահանում և Նոր Ջուղայում ստեղծագործում էին և եվրոպացի նկարիչներ (Ֆլամանդացի, գերմանացի, հոլանդացի, և այլն, անգլիացի ևն<sup>26</sup>), ապա առավել ծանրակշիռ է դառնում Սիմասին տրված իրավունքը: Կարելի է եզրակացնել նաև, որ Սիմասը հովանավորվել է իրանական արքունիքի կողմից՝ ստանալով գործունեության ամենալայն հնարավորությունները, որի կողմնակի վկայություններից է և վերը հիշատակված պալատական առաջին նկարիչ Մահմադ բեկի մասնավոր ուղերձը Ջուղայեցի նկարիչներին, որը սակայն և հնչում է որպես հրահանգ. «...Նոր Ջուղայի հայ նկարիչները եւ այլք, քանի որ...վարպետ Սիմասին իրենց վարպետն ու մեծն են համարում, պետք է...հրա խօսքից ու պատուէրից ոտք դուրս չդնեն և հակառակ բան չանեն»<sup>27</sup>: Անտառիկեի սա ոչ միայն խոսում է Սիմասի արքունապատկան գործունեության մասին, այլ և հրա կարողությունների բարձրագույն գնահատականն է, տրված ախոյանի կողմից:

Սիմասի ստեղծագործականն իր ամբողջության մեջ, արհեստավորությունից հասուն արվեստագետ ձևավորվելու փայլուն օրինակ է, որով իրանահայ գեղանկարչության մեջ ներառվեց աշխարհիկ մտածողությամբ կազմավորված արվեստ, մոր շունչ հաղորդելով իրանահայ և մասնավորապես 17-րդ դ. հայ կերպարվեստին:

Նոր Ջուղայի 17-18-րդ դդ. մինչ օրս հասած գեղանկարչական աշխատանքների հեղինակային լինելը շաղկապվում է հատկապես Սիմասի անվան հետ: Մակայն պետք է նկատի ունենալ, որ իրանահայ միջավայրի ակտիվ գեղարվեստական կյանքը չէ կարող բավարարվել հրա միանձնյա գործունեությամբ, որի մասին են վկայում «բոլոր հայ նկարիչներին» ուղղված արքունական հրամանագրերը, ինչպես նաև ձեռագրային աղբյուրներն ու մինչ օրս պահպանված որոշ գեղանկարչական աշխատանքների տակ կատարված մի քանի նկարիչների ու «պատկերահաններին» կողմից քողած ինքնագրերը<sup>28</sup>:

Այս նկարիչների կողմից թերևս հետաքրքրական է և մեկ այլ Սիմաս անունով նկարչի վերաբերյալ հիշատակումը, որը եղել է նորջուղայեցի հայտնի Ջոնայան տոհմից և, որը «...ինքնին առանց օրինատր վարժապետի ուսու գնկարչութիւն՝ որ քան գնկարչիս Պարսկաստանի ոչ մնայ յետադաս»<sup>29</sup>: Պարզ է, Սիմաս Ջոնայանը եղել է ինքնուս նկարիչ. «առանց օրինատր վարժապետի ուսաս» և իր ստեղծագործականով ավելի հարել է իրանական արվեստի մոդելավորումներին: Թերևս նկարչի այս ինքնատիպ գեղանկարչական ոճը ներկայացնող նկարների պահպանված օրինակների (Ամենափոքի վանքի քանդաքան, Սուքիասյանի, Ա.Տեր-Բարսեղյանի և Վելիջանյանների ապարանքներ ևն) պատմա-գե-

դարվեստական հետագա ուսումնասիրությունները կարող են ևս մեկ էջով համարել 17-րդ դ. իրանահայ կերպարվեստի վերաբերյալ մեր պատկերացումները:

Պատմա-գեղարվեստական այս իրողությունների կայքում, առանձնակի հնչեղությամբ են ներկայանում իրանահայ ստեղծագործողների գործունեությանը վերաբերվող քաղմարմույթ փաստերը Ռուսաստանում, որտեղ յուրօրինակ տեղ է գրավում 1671թ. Մոսկվայում ստեղծագործող հայերի հետ «Պեակուցիք» հայ նկարչի մասին հիշատակումը Նոր Ջուղայի պատմության հիմնարար ուսումնասիրող Հ.Տեր-Հովհանյանցի<sup>33</sup> կողմից և, որի մասին հիշատակում է նաև ռուս պատմաբան-գրականագետ Ս.Ն. Գլինկան՝ հայ ժողովրդի պատմությանը նվիրված իր ուսումնասիրության մեջ, նշելով «Поскучица» հայ նկարչի մասին<sup>34</sup> (անխոստ սա նույն «Պեակուցիք» է անվան ռուսականացված և աղճատված ձևով): Մակայն, քացի այս երկու հիշատակումներից, մեզ չհասողվեց գտնել «Պեակուցիք» նկարչի ով լինելը պարզաբանող որևէ այլ սկզբնաղբյուր, հիշատակություն, տեղեկություն կամ փաստ: Մոսկվե, մասնագիտական գրականության մեջ, այս նկարիչը նույնացվել է 1666թ. Նոր Ջուղայից Մոսկվա ժամանած տաղանդավոր հայ ստեղծագործող Աստվածատուրի (Բոզդան Սալթանով) անձի հետ<sup>35</sup>, որին սակայն և կարելի է վերաբերվել մեծագույն քերականությանը, ելակետային ունենալով հետևյալ նկատառումները.

- Ռուսական պետական ատյանների գրագիրները արքունիքի բոլոր անցուղարձերին վերաբերվող մատյաններում և մասնավորապես Մոսկվայի Կրեմլի Ջինապալատի արվեստանոցների աշխատանքների ցուցակներում արևելյան անունները գրառում էին ռուսականացված և վերածված տարբերակներով, որը և քաջատրում է «Պեակուցիք» հայի անվան անհասկանալի լինելը: Մա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ մենք գործ ունենք ոչ թե անձի անվան հետ, այլ դա նկարչի ընտրագրումն է.

ա) Ամունը կազմված է փոփոխությունների ենթարկված պրակ. Paik (փայիք)-«առաքյալ», «ներկայացուցիչ», «տրիանդակ» և արար. Seyr (սեյր)-«ուղարկել», «ուղարկված» բառերի համակցումից: Այսինքն. «ուղարկված ներկայացուցիչ» և կամ նույն իմաստով՝ պարսկ. Peygosil (փեյգոսիլ) բառը, որը ռուսականացված տարբերակով հնչում է «Պեակուցիք»:

բ) Պրակ. Peykar (փեյքար)-«նկար», «քանդակ», «դիմանկար», «ստեղծագործություն» և պրակ. Sar (սար) կամ Ser (սեր) - «գլուխ», «գլխավոր» բառերի համակցման ռուսականացված արտաբերումը, որից և պրակ. «peyk(o)ser»-«պեյք(ո)ցիք»-«Пескунитр»-«Պեյակ(ու)ցիք»: Այսինքն, Պեակուցիքը եղել է «նկարիչ» «ստեղծագործող», «նկարիչների գլխավոր»:



Միմա, Հակոբբեան «Անիջանյանի դիմանկարը»  
Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանքի թանգարան:

Այս պարագայում քերևա հիշարժան է մի դրվագ 17-րդ դ. հայ-ոտո-սական փոխադրությունների պատմությունից, որը քերևա կարող է առնչվել այս հայ ստեղծագործողի ինքնությունը պարզելուն.

1659թ. հայկական առևտրական ընկերության կողմից Մոսկվա է ուղարկվում հայ առևտրականների մի խումբ՝ ընկերության ղեկավար Սահրադ Շահրիմանյանի որդու՝ խոջա Ջաքարի գլխավորությամբ, որոնց առաքելության նպատակն էր Իրանից Ռուսաստան և Եվրոպա արտահանվող հում մետաքսի համար մաքսային և վաճառքի գեղջեր ստանալու համար պայմանագիր կնքելը և, որոնց 1660թ. ապրիլի 12-ին (Ջատկի տոնի Ավագ Հինգշաբթի օրը) ընդունում են պայատում<sup>37</sup>: Խոջա Ջաքարի կողմից Ալեքսեյ Սիխայովիչ Ռոմանով ուս աղբային մատուցած տարբեր ընծաների քվում էր և հռչակավոր «Աղամանդակոտ գա-հը»<sup>37</sup>, որի հետ տրվում է պղնձյա քիթեղի վրա կատարված «Խորհրդա-

վոր Հճբրիք» ներկայացնող մի աշխատանք: Մուտ հիշատակության համաձայն, աշխատանքը եղել է իրականացված փորվածքի հնարքով՝ արժեքապատման տեխնիկայի կիրառման գումարմամբ: Նկարը արժանանում է ռուս արքայի առանձնակի ուշադրությանը մասնավորապես ստեղծագործության տեխնիկական իրականացման առանձնահատկությանը, որը թերևս նորայն էր ռուսական գեղանկարչության մեջ: Գնահատելով աշխատանքի վարպետ կատարողականը, Ջաքարին առաջարկվում է Մոսկվա ուղարկել այդ նկարի հետինակին: Վեց տարի անց (1666թ.), Ջաքարը, իր ներկող այցի ժամանակ Մոսկվա, ռուսական արքունիքին ներկայացնում է երկու խնդրագրեր, որոնք մասամբ ունեն նույնօրինակ շարադրանք և որտեղ մասնավորապես նշում է, որ ռուսաց արքայի ցանկությանը «պղծե՛ք թանուքի վերայ (պղծյալ քիթերի վրա-Ա.Ս.)» նկարողին նրանք չեն բերել Մոսկվա, այլ հրավիրել են մեկ ուրիշին՝ նույն արվեստանոցի վարպետներին, որի «հունարն ամենու վերայ առավել էր» և որի անունն է «թանուքի վերան», իսկ ռուսերենով այդ անունը նույնն է ինչ «թուղթան»: Ջաքարը մանրամասնում է, որ այդ վարպետին համոզել են զայլ Մոսկվա և նրան կարող են տրամադրել երկու նկարիչ-աշակերտներ, որոնց նա կսովորեցնի այդ գործը և որից հետո միայն, եթե նրա կատարածից զոն մնան, ապա Ջաքարը կանի ամին ինչ, որ այդ նկարիչը զա Մոսկվա<sup>38</sup>: Այս խնդրագրերի առաջին հայացքից պարզ շարադրանքը այդուհանդերձ մեզ է ներկայացնում թերևս հակասական մտեցումներ, որոնք առժամի են ուշադրության.

ա/ Մոսկվա է ուղարկվել ոչ թե նկարի անմիջական հեղինակը, այլ Նոր Ջուդայում գործող արվեստանոցում աշխատող ավելի բարձրակարգ վարպետ, որի անունը թանուքի վերան է (այլ վավերագրերում հիշատակվում է ռուս. Такарепъ (Թաքվերեյ) տառադարձմամբ<sup>39</sup>), որի կարողություններին եթե զոն մնան, ապա նոր միայն Ջաքարը այդ վարպետին կուղարկի ետ Մոսկվա: Այսինքն նկարիչը բերվել է փորձնական, պիտի իրեն արդարացնի (այդ դեպքում ինչպե՞ս է «թանուքակարգ վարպետ»), ետ վերադառնա Նոր Ջուդա և, եթե ռուսական կողմը գտնի նպատակահարմար, նա նորից ետ կգա: Թերևս անհասկանալի տարբերակ է:

բ/ Նկարչին «Թանուքի վերան» անվանելը մեզ հուշել է դիտարկել բառի բացատրության հետևյալ տարբերակը. բառը թուրք. Tanr veren- (թանուք վերեն-«Աստծո տված») բառակապակցությունն է, որը հայերեն ներկայացվում է Աստվածատուր, իսկ Ջաքարի գրառած «պղծե՛ք թանուքի վերայ» արտահայտությունն իր մեջ պարունակում է բառակրկնություն, այսինքն պղծի վրա նկարված «պղծամկաթ», քանի որ պրակ. tanu(a)k (թանուք, թանաք) նշանակում է բարակ պղծյալ քիթեր, որը այստեղ ներկայացվում է տառափոխված ձևով: Այսինքն «Թանուքի վերանը» և «թանուքի վրա» բառիմաստները նույնն են և նշանակում են «պղծի

վրա նկարո վարպետ», որոնք և մեր կողմից նույնացվել են «Աստվածատուր» անվան հետ<sup>40</sup>, որի համար ելակետային է հանդիսացել և խոջա Ջաքարի ներկայացրած անվան «բուդդան» (ռուս. Богдан-Богом дан-ный-Աստվածատուր) համարժեք քարգնանությունը:



Այդուհանդերձ, որքան էլ այս տարբերակները թվում են հիմնավորված, մնում է անհասկանալի, «Թանրի վերան» նկարչի ո՞վ լինելը և մասնավորապես նրան Բրան ետ տանելն ու նորից Մոսկվա ուղարկելը: Եվ սա այն դեպքում, երբ Աստվածատուրը Մոսկվա ժամանելով նույն 1666թ., ընդունում է ուղղափառություն և նոր միայն ստանում Բոգդան Մալքանովը անունը, անմիջապես ընդունվում է աշխատանքի Կրեմլի Ջինապալատի արվեստանոցում և մնում Ռուսաստանում 37 տարի (մահ. մոտ 1703թ.):

Այս իրողության կողքին հիշարժան է Հ.Տեր-Հովհանյանցի հիշատակումը այն մասին, որ խոջա Ջաքարը, 1671թ. փետրվարի 14-ին ռուսական արքունիքին ներկայացրած իր երկրորդ խնդրագրով պնդում է հայ նկարիչ Պեակուցիրին (տես վերը - Ա.Մ.) շտապ ետ ուղարկել Պարսկաստան<sup>41</sup> (ցավոք, մեզ չհաջողվեց պարզել «Պեակուցիրին» վերաբերվող հիշատակությունների սկզբնաղբյուրը, առավել ևս, որ 1671թ. Մոսկվայում գտնեղծագործող հայերին վերաբերվող և ոչ մի վավերագրում չի նշվում խոջա Ջաքարի այս նույն թվականի այցի և նրա երկու

խնդրագրերի մասին տեղեկություն - Ա.Ս.)՝ Այդուհանդերձ, ընդունելով, որ խոջա Ջաքարը գուցե և եղել է Մոսկվայում, ինչու՞ է պնդում «Պեակուցիդ» նկարչին շտապ ետ ուղարկելու համար, առավել ևս, որ այս անձը հայտնի չէ:



Կարելի ընդունել այն տարայերակը, որ այս ամբողջական ճակատագրիչը քաջածանոթ է խոջա Ջաքարին և նրա խնդրանքով (գուցե՞ և պարտադրմամբ) է հայտվել Մոսկվայում: Այստեղ, գնահատելով այդ Պեակուցիդի քարձրակարգ նկարչական կարողությունները, չեն համաձայնվել նրան ազատել Մոսկվայի Կրեմլի Ջինապալատի արվեստանոցների աշխատանքներից՝ նպատակ ունենալով պզտազործել նրա վարպետությունը: Առավել հավանական է, որ այս վարպետ-նկարիչը եղել է հայտնի Նոր Ջուղայի գեղարվեստական միջավայրում, տեղում ունեցել է քարձր համարում, եղել է ճանաչված և հայ և իրանական միջավայրում, եղել մոտ շահական արքունիքի հետ, համագործակցել է պալատական գեղանկարչական արվեստանոցի հետ և կամ եղել է այդ մույն արվեստանոցների հայտնի դեմքերից և անգամ ղեկավարներից: Այս նկարիչն է քերվել Մոսկվա կարճ ժամանակով (գուցե զաղտնի իրանական արքունիքից) և, երբ մա այստեղ է մնացել ավելի երկար քան նախատեսված էր, տեղիք է տվել ասեկոսների կամ ստեղծել է անցանկալի լարվածություն Սպահանում և Նոր Ջուղայի հայկական գաղթօջաղում, որի պատ-

ճառով և խոջա Չաքարը պնդում է նրա անհապաղ վերադարձը: Այս մաքի և վերը շարադրվածի համադրության հենքի վրա, մենք հնարավոր ենք համարում ատաջադրել վարկած, որ Նոր Ջուղայից Մոսկվա է բերվել նկարիչ Մինասը (Պեակուցիդը), մասնավորեցնելով մի քանի նկատառումներով:

ա/ Մոսկվայում է գտնվում բարձրակարգ ունակությունների տեր նկարիչ, որի մասին է վկայում նրա անվան բացատրությունը. «նկարիչների գլխավոր», «նկարիչների ներկայացուցիչ» ևն:

բ/ Նոր Ջուղայից բերվել է ոչ թե «խորհրդավոր ընթրիք» նկարի հեղինակը, այլ մեկ ուրիշը (ոմն «Թանրի վերան»), որը եկել է ժամանակավոր և նրա ունակությունները ամհայտ են (?), որը դեռևս պետք է ստուգվի և գոհացնի ռուսական արքունիքին և սա այն դեպքում, երբ Ջաքարը հատուկ շեշտում է, որ այդ վարպետի «հունարն ամենու վերայ առավել էր»: Նշանակում է գիտի ով է: Մակայն՝ ՌՊՎ էր: Առավել ևս, որ նրան «համոզել» են Մոսկվա մեկնել (այսինքն նա չի ունեցել այդ հնարավորությունը և կամ չի ցանկացել հեռանալ Նոր Ջուղայից):

գ/ 17-րդ դ. Նոր Ջուղայի ձեռագրային որև հիշատակարան և կամ պատմագրական աղբյուր չի նշում Աստվածատուր նկարչի մասին, որը ևս տարօրինակ է, եթե ընդունում ենք խոջա Չաքարի պնդումը, որ Մոսկվա ուղարկված վարպետ «Թանրի վերանը» եղել է նկարչական արվեստանոցի հայտնի դեմքերից մեկը, եթե ոչ առաջինը:

Այս իրողություններին եթե հավելենք, որ 1671թ. Մինասը կարող էր լինել 49 կամ 54 տարեկան՝ իր ստեղծագործական վերելքի շրջանում և նրա մասին վերը շարադրված դիտարկումները նրա գեղանկարչական կատարյալ ունակությունների, ստեղծագործական կարողությունների վատ դրսևորումների վերաբերյալ, ինչպես և նրա կողմից տարբեր նյութերի և մասնավորապես պրնմի վրա նկարելու կարողությունը (արդյո՞ք «Թանրի վերանը» չէ), Նոր Ջուղայում նկարիչների գլխավոր լինելը և ամենակարևորը. իրանական արքունիքի հետ համագործակցությունը և անգամ գործունեության վերահսկողությունը, ապա հասկանալի է դառնում «Պեակուցիդ» և «Թանրի վերան» նկարիչների ընդհանրությունները և՛ Ջաքարի անհանգստությունը նրա երկարաժամկետ բացակայության համար:

Այնուհայտ է, «Պեակուցիդ» և «Թանրի վերան» նկարիչը (կամ նկարիչները) Բոգդան Սալթանովը չէ: Այդ դեպքում ո՞վ (կամ ովքե՞ր) է: Իրո՞ք Մինասը, թե՞....:

Վարկած, սակայն և դեռևս իր բացահայտմանը սպասող, որը կարող է հարստացնել մեր պատկերացումները 17-րդ դ. հայ կերպարվեստի հարստագույն պատմական իրողությունների վերաբերյալ:



ASHOT STEPANYAN

A PAGE ON THE HISTORY OF FINE ARTS OF IRANIAN ARMENIANS:  
THE PAINTER MINAS

In the XVII-XVIII centuries a considerable period of the Armenian history was closely related to Nor Jugha – the greatest Armenian colony of the Middle East, established in 1604/1605 in Iran. Surrounded by an alien cultural background here the Armenian culture, particularly the fine arts, received their further development. One of the main characteristics of Nor Jugha was the rise of popular painting with Minas as its most prominent representative.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ.Մ.Ղազարյան, Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ., Գեղամկարչություն, Եր., 1974, էջ 25-32; Ա.Ստեփանյան, Նոր Ջուղայի կենցաղային մշակույթը, Եր., 2000, էջ 84-90 ևն:
  - «Ֆռանկ» արտահայտությունը հավասարազոր վերաբերվում էր ընդհանրապես եվրոպական երևույթին և մասնավորապես կաթոլիկներին:
2. Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց. Աշխատասիրությամբ Լ.Ա.Նազարյանի, Եր., 1990, էջ 324:
3. Անը:
4. Բարզեն Ա.Աթոռակից Կարողկոս Մեծի Տանն Կիլիկիայ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիայ (1441-էն մինչև մեր օրերը): Ամբիփաս-Լիբանան, 1990, էջ 258:
5. Մ.Ղազարյան, Ա.Ստեփանյան, Հայեցի հայ գեղարվեստը, Երևան, 1997:
6. Դ.Ալիշան, Սիսան: Տեղագրութիւն Սիսնաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 412; Մ.Ղազարյան, Ա.Ստեփանյան, Նշվ. աշխ:
7. Մեյրիքեանը, 457թ. Քաղկեդոնի Տիեզերական Ժողովից հետո, Երուսաղեմի, Ամառայի և Եզիպտոսի քրիստոնյաների մի մասի խեղ կենդանեան հումանական եկեղեցու հետ և կնիավորվեն արևելաց կաթոլիկ երեք պատրիարքություններին մեջ:
8. Մոսավիթների արվեստը առավել ամբողջական ներկայացավ արվեստասեր հանրությանը 1969թ. Բեյրութում քաջված ցուցահանդեսի շնորհիվ (մոտ 110 աշխատանք). «Icones Melkites. Exposition le Musee Nicolas Sursock», Beyrouth, 1969.
9. М. М. Казарян, Об одной рукописи XVI в., Текст доклада на IV международном симпозиуме по грузинскому искусству. Тбилиси, 1983.
10. Մ.Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը..., էջ 128-132; Մ.Մ. Ղազարյան, Ա.Վ. Ստեփանյան, Նշվ. աշխ.:
11. Յուսուֆը որոշ նկարների տակ քոթե է հայերենով կատարված արձանագրություններ (Մ.Մ. Ղազարյան, Նշվ. աշխ., էջ 132), որոնք կարող էին ունենալ նվիրատվական նպատակ՝ հայկական եկեղեցուն դրվելու

- համար և կամ հայ համայնքի հետ ակտիվ շփումների արտահայտումներից էին (Ա.Ստեփանյան, Լոր Ջողալի..., էջ 96, ծանոթ. N40):
12. Առաքել Դավիթեցի, Երվ. աշխ., էջ 326:
  13. Աճղ, էջ 324:
  14. Աճղ:
  15. Աճղ, 325:
  16. Աճղ:
  17. Աճղ, էջ 326:
  18. Աճղ, էջ 325: Դեպքում համայնքի հետ, որպես ընծա, կենդանիներ ուղարկելը ընդունված չէ էր ռուսական արքունիքում: Այդորինակ ընծաները շատ բարձր էին գնահատվում հատկապես Իրանում, որտեղ միայն սիրիլյան թռչունների համար շահը վճարում էր 100, 200 և անգամ 1000 ոսկի. տես՝ Դ.Կ. Կոտոշիկին, О России в царствование Алексея Михайловича, СПб., 1840, с. 68; М.В. Фехнер, Торговля Русского Государства со странами Востока в XVI веке, М., 1956, с. 60 ևն.
  19. Առաքել Դավիթեցի, Երվ. աշխ., էջ 325:
    - «Ժնամք» շահի կողմից մեկ տարվա աշխատավարձի չափով տրվող դրամաշնորհին էր, որին բացառիկ դեպքերում արժանանում էին բարձրաստիճան զարատականները և զինվորական ղեկավարությունը:
  20. Աճղ, 412:
  21. Адам Олуарий. Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636, 1639 годах. М., 1870, с. 436.
  22. Լ.Չ. Սինասեան, Սի քանի գրառուր փաստաթղթեր ԺԷ. դարի նկարիչ Սինասից, «Բազմավեպ», 1982, N 1-2, էջ 191:
  23. Առաքել Դավիթեցի, Երվ. աշխ., էջ 326:
  24. Լ.Սինասյան, Երվ. աշխ., էջ 192:
  25. Առաքել Դավիթեցի, Երվ. աշխ., էջ 326:
  26. Աճղ:
  27. Լ.Սինասյան, Երվ. աշխ., էջ 191-192:
  28. Աճղ, էջ 191:
  29. Ա.Վ.Ստեփանյան, Երվ. աշխ., էջ 74-83:
  30. Լ.Սինասյան, Երվ. աշխ., էջ 192:
  31. Ա.Վ.Ստեփանյան, Երվ. աշխ., 92-94:
  32. Հ.Տեր-Հովհանյանց, Պատմություն Լոր Ջողալու, որ է Սպահան, Հ. Ա, Լոր Ջողալ, 1880, էջ 154:
  33. Աճղ, էջ 175:
  34. Н.С.Глинка, Обзорение истории Армянского народа. От начала бытия его до возрождения области армянской в российской империи. Ч.1, М., 1832 (репринт. Ер., 1990.), с. 238:
  35. Մ.Ղազարյան, Երվ. աշխ. էջ 50-97; Ա.Ստեփանյան, Լոր Ջողալի..., Եր., 2000, էջ 176-189:
  36. Հայ-Ռուսական հարաբերությունները XVII դարում. Փաստաթղթերի ժողովածու, Կազմ. Վ.Ա. Պարսադյան, Վ.Կ. Վուկանյան, Ս.Ա.Տեր-Ավակիմովա, Երևան, 1953, էջ 22-32:

- 37. Ա.Վ.Ստեփանյան, Նշվ. աշխ., էջ 164-175:
- 38. Հայ-Ռուսական հարաբերությունները XVII դարում...., էջ. 41-42.
- 39. Աճղ, էջ. 81-82:
- 40. Ա.Վ.Ստեփանյան, Նշվ. աշխ., էջ 176:
- 41. Հ. Տեր-Հովհաննյանց, Նշվ. աշխ.:

ՀԱՍՄԻԿ ԱՍԵՓԸՆՅԱԼ

ՍՏԱՍԲՈՒԼԻ «ԱՐԱՍ» (ARAS YAYINCILIK)  
ԵՐԿԼԵՉՎՅԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ  
2000-2006ԹԹ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(Գրացուցակի փոխարեն)

«ԱՐԱՍ»-ը գտնվում է Ստամբուլի նախկին հայաշատ Պերա հարավային թաղամասում, որն այսօր քաղաքի եվրոպական ճարտարապետության բավազույն օրինակ հանդիսացող և տուրիստական ամենափրփած վայրերից է: Հայկական, նաև հունական համայնքի նախկին, այսօրյա խտններամ բուրքական փողոցում, երբեմնի (100-ից քիչ տարիներ առաջ) հայկական շքեղազույն հարկաբաժինների, խանութների, տպարանների, հյուրանոցների, եկեղեցիների, վաճառատների, նկարչատների, բժշկական դաբանամասների, թոքատյան հայտնի պանդոկի, ճաշարանների, ծաղարանների փոխարեն «Արաս»-ը 1993 թվականից հրատարակչական իր հարևոր գործառնությունն է ծավալել, մասամբ պահելով այս փայրի հայկական շունչը՝ Մուրթ Երբորություն եկեղեցու, «Մարմարա»-ի, «Մամանակ»-ի խմբագրատների, «Թոքրուագ» գրականամասի, «Գրարի լաֆանկարելը» ճանաչված Արա Գյուլերի կենտրոնի ու արձագանքի հետ միասին:

«Արաս»-ը հիմնադրվել է 1993 թվականին: Այդ ժամանակվանից ի վեր բարգձմանը, խմբագրել ու հրատարակել են 70-ից ավել գրքեր հայերեն, բուրքերեն: Եվ այս ամենը ոչ թե պատահական, այլ ճշտված ու կշռադասված նպատակահայեցություններ, որոնք հրաշքեր չեն, մնալով արժեքով ու նաև՝ հոգու քննադրանքով: Հրատարակչության նպատակն է եղել կամայք հաստատել տարածաշրջանի տարբեր մշակութային միջև, հերթափոխումն ու փոխանցել մեր ճշակութային արժեքները ներկա ու ապագա սերունդներին, շարունակել զեռև Օսմանյան կայսրությունում խոր արմատներ ունեցած արևմտամեջ հրատարակչական մշակութային ավանդույթները, դառնալով մեր հազարամյակում այդ հարատու գյուղի ժամանակակից հանրապետական Ստամբուլում:

«Արաս»-ի մեծագույն արժանիքներից է մեր գրականության հրաշալի էջերի հրատարակությունը բուրքերենով: Բնականաբար դրանց գերակշռող մասը հայերենից կատարված քարգմանություններ են:

Դրանք ուղղված են ոչ միայն թուրքերին ու օտար ընթերցող շրջանակներին, այլև հայ ընթերցողներին, որոնց մի մասի համար թուրքերին ու կարդալի ավելի սովորական է այսօր: Այս տպագրությունները նպատակ են հետապնդում ծանոթացնել արևմտահայ գրականության հայտնի անուններին ոչ թե մեկ գրքով, այլ նրանց գործերի ժողովածուներով, որանով իսկ հնարավորություն ընձեռնելով ընթերցողներին հիանալ ու վայելել այդ հեղինակների գործերի բազմակողմանի ելույթներն ու տաղանդը: Այդպիսի հեղինակներից են արևմտահայ իրականության վերջին գյուղագիրներից Հակոբ Մնձուրին (Տեմիրճյան, 1886-1978)<sup>1</sup> և Սկրտիչ Մարկոսյանը (ծն. 1938թ):

Ծնունդով արմտացի Հ. Մնձուրու «Գիւղը կապրի իմ մէջ» պատմվածքների ժողովածուն (կից բառարանով ու ծանոթագրություններով, 192 էջ), տպագրվել է հայերեն: Մնձուրու, «Կարոտի գրականության այս առաքյալի» մյուս երկու ժողովածուները հայերենից կատարված թարգմանություններ են<sup>2</sup> և շարունակությունն են կազմում նրա մախտրոյ՝ «Արմտան, Երևանի մյուս ակիր» գրքի: Այս երկու գրքերում էլ գերիշխում է երգնկացու երգերը իր երկրի, նրա բնության մասին, այնտեղ ապրող տարբեր ազգերի՝ թուրքերի, քրդերի, հույների, լազերի, հայերի կյանքի, սովորույթների, պատմությունների վերհուշը:

Երկրորդ հայտնի անունը, տիգրանակերտցի Սկրտիչ Մարկոսյանը (1938), մեր ժամանակների արևմտահայ գրականության ամենահայտնի դեմքերից է, արժանավոր ժառանգորդը Հակոբ Մնձուրու արվեստի: Հիմնականում թուրքագիր այս գյուղագրի պատմվածքների ժողովածուները լույս են ընծայվել թուրքերենով<sup>3</sup>, իսկ «Մեր այդ կողմերը» և «Տիգրիսի ափերին» պատմվածքների ժողովածուները հայերեն: Այս գրքերի «հերոսը» 1950-ականների Տիգրանակերտն է իր բոլոր երանգներով, հրատարակչիների կարծիքով մաև մի տեսակ «օղորմի» հայաթափ Տիգրանակերտի հայության, սրտաճմիկ հիշատակարան ու կարտասկեզ ակնարկ իրենց բազմալայադար անցյալին:

«Արաս»-ը հայերենից թարգմանաբար հրատարակել է մի այլ հայտնի պոլսեցու, 1913 թվականից ամերիկաբնակ գրողի Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966)<sup>4</sup> «Աղունիկներս Խաբբերդում մնացին» ժողովածուն:

Հաջորդ թուրքերեն 2 հրատարակությունների հեղինակը Գրիգոր Ջեյհանն է (1926-1999)<sup>5</sup>: Չառայում ծնված գրողը հարազատ երկրի և ընդհանրապես Ամատոլիայի բանահյուսական ժառանգության և մարդկանցից իր լսած պատմություններն է ներկայացնում: Դրանք են՝ «Ջուրահավաքի երգերով ենք մեծացել» (“Seferberlik Türküleriyle Büyüdüm”) և «Դավաճանագիրը ծին պայանց, ընկավ մեր հսկից» (“Atmı Nalladı Felek Düştü Peşimizde”):

Համաշխարհային լուսանկարչության հայտնի անուններից Արա Գյուլերի (1928) «Բաբելոնեն վերջ պիտի ապրինք» (“Babil'den Sonra Yaşayacağız”)<sup>2</sup> պատմվածքների ժողովածուն լույս է ընծայվել և հայերեն բնագրով և թուրքերեն քարգմանությամբ:

Թուրքերեն հրատարակությունները, որոնք անհամեմատ մեծ քիվ են կազմում, միտված են թուրք և քրքախոս շրջանակներին ներկայացնելու արևմտահայ, նաև սփյուռքահայ գրական հայտնի դեմքերին ու երկերին: Դրանք նաև ժամանակակից ստամբուլահայ հեղինակների հայերեն գործերի թուրքերեններն են, երբեմն կատարված նույն հեղինակի կողմից: Այդպիսին է Երվանդ Կուպլյանի (1923) «Իր երկիրը կարտոտող խնցղահինգ» (“Memleketini Özleyen Yengeç”): Անդան Օզերի (1927-1984) «Ապրելու սպասումով» (“Yaşamı Beklerken”)-ը հեղինակի «Եվ» գրքի քարգմանությունն է<sup>3</sup>:

Ստամբուլահայ ժամանակակից գրական դեմքերի հրատարակություններից են Բաֆֆի Քեբապյանի (1945) «Նոստր Հալի բեյ. խոսիր» (“Konus Halil Bey Konuş”) և երիտասարդ հեղինակ Մակիմ Չելիքի (1968) երկու գրքերը՝ «Գունգալիդն ավազի ժամացույցում» (“Kum Saatinde Kumkapı”) ու «Օձի ճանապարհը» (“Yılanın Yolu”):

Մինչ եղեռնյան հեղինակներից քարգմանաբար հրատարակվել են Երվանդ Սրնաթեշխանյանի (1870-1915) «Չկնոսի սերը» (“Balıkcı Sevdası”)<sup>4</sup>, Գրիգոր Չոհրապի (1861-1915) «Նովելները» (“Öyküler”)<sup>5</sup>:

«Արաս»-ի թուրքերեն հրատարակությունների մի պատկանելի մասը Սփյուռքի մեր հույակավոր, հայագիր ու այլալեզու հայտնի գրողների գործերի ներկայացումներն են: Դրանցից ամենահարուստը Վիլյամ Սարգսյանի (1908-1981)<sup>6</sup> գործերն են: 5 զիրք՝ 2001-2004 թթ թվականների ընթացքում: Այն է՝ «Վախկոտները համարձակ են» (“Ödlekler Cesurdur”), «70000 սատրի» (“Yetmiş Bin Süryani”), (“Paris-Fresno Güncesi 1967-68”), «Իմ սիրտը լեռներում է», «Ապրելու ժամանակը» (“Yüreğim Dağlardadır, Yaşamak Vakti”) , «Մարդկային կատակերգություն» (“İnsanlık Komedi”):

Հայերենից թուրքերեն քարգմանաբար լույս է տեսել նաև սփյուռքահայ ամենահայտնի ու հնայից հեղինակներից Վահրամ Մավյանի (1926-1983) «Ամենուր հայ կա» (“Her Yerde Ermeni Var”) զիրքը<sup>11</sup>:

Թուրքերենով հրատարակված վեպերի թվում են Վահան Թորքվենցի (1889-1937) «Կորցրած տան ժառանգները» (“Yitik Evin Vâsileri”)<sup>12</sup>, Ջավեն Պիպերյանի (1921-1984) 2 գործերը՝ «Հայրս Սըրայի չմաց» (“Babama Aşkale'ye Gitmedi”) և «Միայնակները» (“Yalnızlar”)<sup>13</sup>, Պետր Լաջարյանի (1940) «Վերջին հայր» (“Son Ermeni”), որ անգլերենից է քարգմանվել: Դիարքեքիցի հոր ու աղանացի մոր ամերիկացուհի որդին եղեռնի, գաղթի պատճառով իր կորցրած ծնողների ու երկրի հետքերն է ուզում գտնել: Գրքի հերոսը՝ Արամը անցածի մասին քարգմանվել

հարցեր ունի, որ ամբարվել են իր մեջ ու վտրձում է կիսել ընթերցողի հետ: Այս հոգեբանությունը, ծնողների, հայրենիքի նկատմամբ տանջող պարտքի զգացումով դժվար ապրելու ևս մի ապացույց է ֆրանսահայ հայտնի լրագրող, գրող, Պատվո լեգեոնի ասպետ Շան Ջեհայանի(1944)<sup>14</sup> «Անհայրենիք»-ը (“Vatansız”), որը շատ շատերի նման եղևնից մազապուրծ Մարսել գաղթած իր ծնողների կյանքն է: Նրանց մանկանից հետո միայն Շան Ջեհայանը բարոյական պարտք համարեց գրել, հրատարակել բոլորիս մոջավանջային պատմության իր մասնիկը: Հեղինակի ցանկությունն է ֆրանսերենով ու թուրքերենով հրատարակված այս վեպը առաջիկայում նաև հայերենով լույս ընծայել:

Սեզ համար շատ կարևոր են հայերեն ու թուրքերեն լեզուներով նաև գիտական աշխատությունների հրատարակությունները՝ լինի հայագիտական, լինի թուրքագիտական: Սա չափազանց պատասխանատու ու ծանր գործ է: Այն ակնկալում է ծայրաստիճան լուրջ մոտեցում, մասնագետների ընտրություն, անհրաժեշտության դեպքում նաև հայ ու թուրք գիտնականների համագործակցություն: Այս առումով չափազանց օրինակելի ու բացառիկ հրատարակություն է պոլսահայ հայտնի մատենագետ, թուրքագետ Գևորգ Փամբուկյանի (1923-1996) գործերի հետմահու քառահատորյակը (“İstanbul Yazıları”, “Ermeni Harfleri Türkiye Metinleri”, “Zamanlar, Mekyanlar, İnsanlar”, “Biyografilerle Ermeniler”)<sup>15</sup>:

Այն հիմնականում ամփոփում է թուրքական պատմագիտական գրականության մեջ Գևորգ Փամբուկյանի թուրքերեն լեզվով հանրագիտարանային, տարբեր հեղինակավոր ամսագրերում հրատարակած աշխատությունները, հողվածները: Հատորներից մեկը նվիրված է հայաստան թուրքերեն գրականությանը: Հրատարակիչները, խմբագիրները մեծ աշխատանք են կատարել, անգամ ուսումնասիրել նրա ամտիպ արխիվները ու լույս ընծայել դրանց մի մասը: Հրատարակությունն իրականացնողների թվում երախտագիտության է արժանի հրատարակիչ, թուրք գիտնական Օսման Քոթերը: Ինչպես, դեռ անելիք շատ կա: Այնուամենայնիվ այսպիսի լուրջ գիտական ժառանգության հրատարակությունը ոչ միայն ապացույց է Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության խնդրում թուրքական գիտական շրջանակների մոտ հայկական մատենագիտության անվախարհելի նպաստի գնահատությունը, այլև թույլ է տալիս հուսալ նոր, հաջող գիտական ձեռնարկներ: Այս առումով չափազանց օգտակար կլինե՞ր(և հայկական, և թուրքական շահագրգիռ գիտական շրջանակների համար) հայերեն ու հայաստան թուրքերեն ձեռագրերում ամբարված քանկարժեք նյութերի հրատարակությունը: Դրանք Օսմանյան թագավորների, վեզիրների, առանձին կարևորագույն դեպքերի ու դեմքերի նվիրված պատմություններ են: Սի քան, որը չես կարող փոխարինել այսպիսով: Հանգամանք, առանց որի երբեք հնարավոր չի լինի գոնե մասամբ լիարժեք Օսմանյան պատ-

մություն ներկայացնել: Գ. Փամբուկյանի գործերի հրատարակությունը ու նրա նկատմամբ եղած թուրքական շրջանակների մեծ հետաքրքրությունը թույլ է տալիս մտածել, որ այնուամենայնիվ թուրք գիտնականների մի խավ կարողանում է սքափ վերաբերվել իրենց երկրի պատմական խնդիրների լուրջ, անկողմնակալ ուսումնասիրությանն ու լուսաբանմանը: Սա վերաբերվում է ոչ միայն պատմության, այլև գրականության խնդիրներին: Մենք նկատի ունենք հայատառ թուրքերենով ծով աշտուղական գրականությունը: Խոսքը վերաբերում է հնդկականների հարստությանը, նյութին, արևելյան երաժշտական ժանրային ձևերի բազմազանությանը, դրանց հայկական ու եվրոպական նուստրությանը: Նույնը կարելի ասել հայկական դիվաններում պահպանված հայերեն, օսմաներեն, հայատառ թուրքերեն բազմաթիվ վավերագրերին, որոնք հետաքրքրության անշափ մեծ շրջանակ են ներկայացնում: Հարստություն, որը չունի համարժեքը այսօրյա թուրքական իրականության մեջ: Կարծում ենք մեր գիտական որոշ հրատարակությունների թուրքերեն հրատարակությունները ևս կարևոր են թուրքիայի գիտական, մտավորական ընթերցող շրջանակների համար:

Թուրքերենով հրատարակությունների փվում են Երվանդ Օսյանի (1869-1926) համրահայտ «Ընկեր Փամբուկի» (“Yoldaş Pamukçuni”) երգիծավեպը<sup>15</sup>, Արամ Փեհլիվանյանի (1917-1979) բանաստեղծությունների «Ազատությունը երկու քայլ այն կողմ չէ» (“Özgürlük İki Adım Ötede Degil”) ժողովածուն, Հակոբ Արալանյանի (1934) «Անունս Հակոբ, երկիրս՝ Թուրքիա» (“Adım Agop Memleketim Tokat”) երկը, 1889թ.Նյու-Յորքում անգլերենով տպագրված հայ թողոքական հեղինակ Գրիգոր Պասաճյանի (1853-?) «Հասարակական և կրոնական կյանքն Արևելքում»<sup>16</sup> (“Şark'ta Toplumsal ve Dinsel Hayat”) աշխատությունը, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պրոֆեսոր, հայր Լևոն Չեքիյանի(1943) «Հայերն ու մոդերնիզմը» (“Ermeniler ve Modernite”)<sup>17</sup>, Արամ Անտոնյանի (1879-1951) «Բալկանյան պատերազմը» (“Balkan Savaşı”) մեծածավալ գործը<sup>18</sup>, Ռուհն Կրուսեի (1895-1952) «Հայերի պատմությունը» (սկզբից մինչև 1071թ. 752 էջ. “Ermenilerin Tarihi”) պատմագիտական գործը, Օշին Չիլիզգիրի (1945) խոհա-փիլիսոփայական «Սեր միջի քանդը» (“İçimizdeki Kara Delik”) երկը, Օսմանյան կայսրությունում 1863թ «Սահմանադրութիւն Հայոց 1839-1863թթ» (“Osmanlı Devletinde Ermeni Anayasası'nın Doğuşu 1839-1863”) ամերիկահայ պատմաբան Վարդան Արթինյանի (1932-2002) ծավալուն աշխատությունը: Եվրոպայի ամենսիրված քրիստոնյա սրբերից մեկի՝ Սուրբ Վլասի հայկական (Մրվագում ասյրած) ծագման (280-316թթ) մասին է Արման Չոխասճյանի (1930) հետազոտությունների ամփոփումը հանդիսացող (“Uslararası Üne Sahip Sivaslı Aziz Vlas”) կարևոր ու շատ հետաքրքիր գրքույկը<sup>20</sup>: Արսեն Ավագյան(1968) «Հայերը և Միություն ու Առաքաղիմություն-ը»<sup>21</sup>



քաղաքագիտական հետազոտությունը հայկական քաղաքական չորս կուսակցությունների և երիտթուրքերի վերոհիշյալ կազմակերպության մասին է (“Ermeniler ve İttihat ve Terakki”):

Ճանաչողական տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում Գեղամ Զեռովյանի(1924-1980) «Հայերի դիցաբանական պատմությունը» (Mitolojik Ermeni Tarihi) հետազոտական աշխատանքը : Այն Անատոլիայում հայ ժողովրդի ու հայերենի ծագումնաբանության շուրջ վերջին հարյուրամյակում կատարված գիտական հետազոտությունների միջև ակադեմիական կապ անցակցացնելու փորձ է: Գեղամ Զեռովյանը հեղինակ է նաև բազմաթիվ, որին կանդիդատական ատոր:

«ԱԲԱՍ»-ը ներկայացնում է նաև ստամբուլահայ նոր սերնդի ծաղրանկարիչներ Օհանի (Հովհաննես Շաշկալ, 1959) «Ան արկդ» (“Karaktu”) և Աբեթ Գըջըրի(1978) 2 ժողովածուները՝ «Փոքրամասնությունյան» (“Azminlyyan”), «Ես թուփիկ չեմ» (“Ben Topik Degilim”): Այս գործերի մեծ մասը տպագրվել են Սաամբուլի թուրքական հայտնի պարբերականներում, հայկական մամուլում:

19-րդ դարի հայտնի երաժիշտ Գառնիկ Կարմիրյանի(1872-1947) «Կյանքը և գործերը» ժողովածուն (“Karnik Garmiryani Hayati ve Eserleri”, 360 էջ), Շառլ Ազնավուրի(1924) վերջին գիրքը (Charles Aznavour, “Gecmiş Zaman Olur Ki”)-, ինչպես նաև հրատարակության աշխատակցուհի Թագուհի Թովմայանի (1952) խոհարարական մեծ մայրիկների խոհանոցից «Չեր սեղանը շեն լինի» գիրքը (“Sofranız Şen Olsun”) մեծ ընդունելություն են գտել:

Մտավորապես սրանք էին թուրքերենով լույս տեսած գրքերը, որոնց արժեքն ու նշանակությունը դժվար է գերագնահատել:

Գալով հայերեն հրատարակություններին, ասպ կարևոր են 10 000 բառ պարունակող Գեղամ Զեռովյանի Իշկուլի (1924-1980) «Հայերեն բառգիրքը» (2003թ.): Բառարանի առաջին հրատարակությունը եղել է 1962թ.: Այս հրատարակությունը խմբագրվել ու ծանոթագրվել է հեղինակի աշակերտներից մեկի՝ Արտաշես Մարկոսյանի կողմից, որը բառգիրքը վերանշակել է, լրացրել է հարյուրավոր թուրքերեն նոր համարժեքներով: 10 000 բառացանկի 6 հազարի հայերեն բառերի դիմաց տրվել են դրանց մոտ 10 000 թուրքերեն նշանակությունները: Անկարելի է չնշել Բառգրքի օգտակարությունը, նրա արժեքը հայերենն ուսումնասիրողների ու թարգմանչական գործով զբաղվողների համար:

Ստամբուլահայ գրական հայտնի ամուսններից խմբագիր, հրատարակիչ Ռուբեն Մաշոյանի(1928-1999) «Եվ այսպես այրեցանք» գիրքը(1998թ.), բաղկացած է 1950-ական քվականներից ի վեր գրված պատմվածքներից և իր ժամանակակից 7 հայտնի մշակութային դեմքերի մասին հուշագրություններից:

Երվանդ Կոպեյանի «Կեանքի լուսանցքէն»-ը հեղինակի պատմվածքների հերթական ժողովածուն է(2003թ.), այսօրվա Սասմբուլի պարզ մադկանցով, Թաքսիմի հրապարակով, Էփթալֆոս սրճարանով...

Պատմվածք-հուշագրություն է բազմավաստակ գրող, ուսուցիչ Վահրամ Պուրմայանի (1893-1978) «Հէգ թուրքի կտորներ» մեմագրություն հասարակը (2005թ): Այն ընթերցողին մասնակից է դարձնում հեղինակի ուխտագնացությանը ծննդավայր, երբեմնի հայաշատ Եփևումի-դիս, Ատարագար, Արմաշ ու այլ կենտրոններ, ուր հանդիպում եք ծանոթ ու անծանոթ շատ նվիրական անունների: Գրքին կից է ընդարձակ բառարան ու շահեկան ծանոթագրություններ:

Հայկախայ հայտնի գրող Թորոս Թորանյանը (1928) հեղինակ է ավելի քան 50 գրքերի: «Բարձրապատկանը կը կանչեն» (1997թ.) գրքի առաջին մասը հեղինակի 1996թ. Պոլիս այցելության ընթացքում տրված բանախոսություններն ու հուշերն են, իսկ, երկրորդ մասը պոլսահայ գրողներին ու գրական կյանքի անցողարժին նվիրված Թորանյանի 1995թ. գրված աշխատությունն է:

Կ.Պոլսի հասարակական, առևտրական, մշակութային կյանքում հայ ամիրաների խաղացած դերն անժխտելի է: Արևմտահայությունը շատ պարտական է սուրբանական պալատում ծառայած հայ երևելիներին, որոնց համար քարեգործություններով միմյանց հետ մրցելու իմաստը կայանում էր նրանում, քեռ՛վ ավելի օգտակար կլինեիր իր ազգին: Եվ դա ոչ միայն շնորհիվ իրենց հարստությանը, հայրենասիրությանը, այլ նաև սուրբանական պալատում նրանց ունեցած քարի համբավին ու կապերին: Նրանց են պարտական արևմտահայ իրականության մեջ մինչև օրս գործող կրթական, մշակութային, առողջապահական, քարեհիթական շատ ու շատ օջախներ, պատմական հուշարձաններ ու բազմաթիվ վերանորոգված վանքեր, եկեղեցիներ: Նրանք են կանգնած եղել արևմտահայ իրականությունում լուսավորական շարժման, «Ձաթթոնքի շրջանի», հայ տպագրական գործի, պարբերական մամուլի, գրահրատարակչական գործի, արվեստների, մասնավորապես թատրոնի, երաժշտության, ճարտարապետության, գիտության, արհեստների, գյուղատնտեսության, արդյունաբերության, վաճառականության և այլնի զարգացման ճանապարհին որպես լուսարարներ, հովանավորներ: Նրանք մեծագույն ծառայություններ են մատուցել Բ.Դեռնը, նրա արտաքին քաղաքականությանը, որպես դիվանագետներ, քարգմաններ և պալատական պաշտոնյաներ: Նրանց շնորհիվ շատ ու շատ պոլսահայ ու զավառաբնակ երիտասարդներ եվրոպայում կրթություն են ստացել, վերադարձել՝ իրենց պարտքը կատարելու հայրենիքում: Այդ երիտասարդներից շատերի գործունեությամբ է պայմանավորված եղել շատ ու շատ ճյուղերի զարգացումը Օսմանյան կայսրությունում: Նրանցից շատերը քարճրագույն պարզևների, պաշտոնների ու գիտական աստիճան-

ների են արժանացել մաս Թուրքիայից դուրս, տարրեր երկրներում, տարրեր պետությունների ու քաղաքների կողմից իրենց երկրին մատուցած ծառայությունների համար: Լրագրող Արա Ալիևյանի (1908-1976) «Յաղթանակի ճամբար» վեպը (2005թ.) նվիրված է Պեզդյան ամիրայի կյանքին, Օսմանյան կայսրության իր ժամանակի պետական ու սզգային նշանավոր դերի, մասնավորապես Սուլթան Մահմուդ Բ-ի հետ ունեցած ամիրայի մտերմության շրջանին: Սա զայիս է լրացնելու ամիրայական գերդաստանների մասին Սխիթարյանների հրատարակած հրաշալի նյութերը, առանձին գործերին, Վահան Ջարդարյանի «Յիշատակարան»-ում տեղ գտած հայ երևելիների կենսագրություններին, ամիրաներին նվիրված վերջին տարիներին Փարիզում լույս տեսած ֆրանսերեն հրատարակությունը:

Վիլյամ Սարոյանի երկրպագուների համար ուղակի նվեր էր Պետրոս Ջալյանի (1922-2005) «Դեպի Պիթիա» ստավարածավալ գիրքը (2003թ., 416 էջ, 135 նկարներ), ուր 1964թ. ծննդավայր ուխտագնացության ճանապարհված Սարոյանին ուղեկցող հեղինակը վերադարձնել էր ամենը նախ «Մարմարա»-ի մեջ, ապա՝ առանձին գրքով: Իրականություն էր դարձել հանճարեղ գրողի երկար տարիների մեծագույն ու նվիրական, տխրագույն երազը՝ ճամփորդություն դեպի հայրական տուն...

Շավարշ քհն. Պալումյանի (1915-1993) «Ու ես կերթամ»-ը (2005թ.) «Մարմարա» օրաթերթում 1964-70-ականներին լույս տեսած 57 հոդվածների վերամշակյալ գիրքն է՝ դեպի Արևմտյան Հայաստանի գավառները, հատկապես Անատոլի արևելյան ու հարավային նահանգներ քահանայական պաշտոնով կատարած իր ճամփորդությունների ամփոփումը: Այս ճամփորդական հուշերը կարևոր են նրանով, որ ամայացած, քորքացած ու քրդացած մեր բնակավայրերի շարքում ներկայացնում է դեռևս 40 տարիներ առաջ մասունքների մեծ մնացած, սակայն այսօր շատ ավելի նորացած ու էլի ամայացած հայկական Անատոլիայի հարազատ տեղերը: Այս գիրքը ևս յուրօրինակ տուրք է ծնողների ու ծննդավայրի նկատմամբ հիշողությունների: Հավելվածի «Յիշողություններս հատուածներ հօրս կեսնքի ողիսականներ»-ում հեղինակի որդին, բժիշկ Պարզև Պալումյանը հոր մասին կենսագրական է ներկայացրել, որը կարծես ծաղկեփունջ է քահանայի գերեզմանի «քարձրացած» հողաթմբին: Հավելվածի երկրորդ՝ «Ու ամուր ալ գացին» քաթինը գրքի հերթների հետագա ճակատագրի մասին է: Հուշեր, նկարներ, հուշեր... Եղևնի գահերի երկրորդ, երրորդ ու մաս հետագա սերունդների հոգու պարտքի արտահայտության անթաքույց ապացույցներ:

Ստամբուլի «Քուլիս» մշակութային, թատերական ամսագրի երկարամյա գլխավոր խմբագիր Հակոբ Այվազը (1911-2006) յուրաքանչյուր համարի վերջում ուներ երգիծական փնտրվող մի էջ՝ «Լուցիքա աու-

տու»։ Դրանց թիվը հասավ 280-ի։ Համանուն գրքույկում(2003թ.) տեղ են գտել դրանցից 48-ը։ Ավստր. որ ստամբուլահայ արվեստի հանրագիտարանային արժեքի այս ամսագիրը հեղինակի զառամյալ լինելու պատճառով անդարձ փակվեց։

Ստամբուլի մասին պատմության ամենահայտնի հեղինակը եղել է Հակոբ Սիրունին (Շուրլյան, 1890-1973)։ «Գարեգին պատրիարք Խաչատրեան» մենագրությունը (2003թ.) մախապես լույս է տեսել Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում։ Ուշագրավ այս մենագրությունը «ԱՐԱՍ»-ի հրատարակչի սաների կողմից նրախտագիտության ու հավատարմության տուրք է արձաշական իրենց հիմնադրին՝ Գարեգին պատրիարք Խաչատրյանի հիշատակին, նրա ձեռնարկում հանդիսացող Դպրեանքի 50-ամյակին։ Աշխատությունը հագեցած է կարևոր ժամոթագրություններով, Գարեգին պատրիարքի կյանքի ու գրական վաստակի մասին նոր տեղեկություններով։ Հակոբ Սիրունու մահվան 30-ամյակին ու «Նարեկ»-ի հազարամյակին զուգադիպող այս մենագրության մեջ ամփոփվում է նաև «Նարեկ»-ի սիրունիական սքանչելի մի վերլուծությունը։

Վաղուց ժամանակն է Կ.Պոլսո պատրիարքների լիարժեք ցուցակների, նրանց մասին աշխատությունների կազմակերպումը, հրատարակությունը։ Այն կարևոր մի մասն է ոչ միայն հայ եկեղեցու, այլև՝ արևմտահայության պատմության, շատ ու շատ հարցերի պատասխանները, բացատրություններն ակնկալող երևույթ իր ժամանակային ու մարդկային բաղդ առանձնահատկություններով հանդերձ։

Հուշագրության ժանրին է պատկանում «Օրագրություն սարկաւազի» գիրքը՝ Երուսաղեմի Հայոց պատրիարք Թորգոմ Արք.Մանուկյանի(1919) սարկավազության ու արեղայության շրջանի նաև պատմական արժեք ներկայացնող անցողիկաբարձր հարուստ շրջանի պատմությունները, գրի առնված 20-ամյա շրջանում։ Պատմական, ուսուցողական, իմաստասիրական ցուրեղով, իրենից հետաքրքիր աղբյուր են ներկայացնում այդ ժամանակի շատ իրադարձություններ։

«Արաս»-ը հրատարակել ու շարունակում է բանաստեղծական ժողովածուների հրատարակությունները։ Այդ հեղինակներից են Սարգիս Քեչյանը (Զանգու, 1917-2004) իր «Զարմանալի աշխարհ»-ով (2003թ.)։ 1940-ականների, հետպատերազմյան շրջանում պոլսահայ մի խումբ երիտասարդ մտավորականներ, ինչպիսին՝ Ա.Շավարշը, Հայկազուր Գալուստյանը, Ավետիս Ալեքսանյանը, Զավեն Պիպեռյանը, Ռուբեն Մաշոյանը, Խաչիկ Ամիրջյանը և ուրիշներ պոլսահայ գրական նոր շարժման հիմնադրում էին, հրատարակելով նաև մի շարք նոր պարբերաթերթեր։ Այս շարժումը կասեցվեց քաղաքական դժվարին ժամանակների պատճառով։ Այս կարևոր շրջանը կարծես թե սկսեց ադոտամալ մեր ժամանակներում։ Ահա ֆրանսահայ (մախկին պոլսահայ) հայտնի քա-

նաստեղծ, խմբագիր, հրապարակագիր Ս.Ք. Ջանգուի այս գիրքն իր արձակ էջերով, նամակներով լույս է սփռում արևմտահայ նոր գրականության համեմատաբար աղոտ այս էջերի վրա, թանկագին մատուցներ փրկում մոռացության մատնվելու ճանապարհին:

Հայտնի արտաբան Կարո Կարապետյանը (Ամել, 1922-2001) «Իրումն ժամանակի» բանաստեղծական սովորական հատորով(2002թ.) գալիս է լրացնելու յափածո իր 5 հատորների, հոգեբանական երկու վեպերի ու պատմվածքների շարքը: Նա 1988 թվականից Հայաստանի գրողների միության անդամ է և իր գրական գործունեությանը նույնքան հայտնի է, որքան բժիշկ:

«Եթե կը սիրեք բանաստեղծությունը, պետք չէ անծանոթ մնաք Ներսես Վանականի բանաստեղծություններում, ուր պիտի գտնեք թե ազգային, թե համամարդկային և թե կրոնական լարերը կտրք կտրքի: Ներսես սրբազան եկեղեցաշեն գործունեության կտրքին իր գրականությանը այ կը ծառայե հայ մշակույթի հարստացման», գրում է «ԱԲԱՍ»-ը Ներսես Արք. Պողոսյանի (Ներսես Վանական, 1937) «Յոյսի ամուսն թեևերով» ժողովածուի տպագրության առթիվ, ուր մեկտեղվել են հայ հոգևոր հայտնի գործչի ազգային ու հոգևոր զգացումների արտահայտությունները:

«Ամանուն երագ» գրքույկը(2000թ.) երիտասարդ բանաստեղծուհի Վերճինան Ջիֆլիտղի(1975) անդրամիկ ժողովածուն է, որ 50 բանաստեղծություններ է ամփոփում: Ապացույց, որ պոլսահայ գրական կյանքը նոր ծիլեր է տալիս:

Ի պատիվ «Արաս»-ի, չեն մոռացվում նաև մանուկները: Դրանք են «Ուզնիկ» (2005թ.), «Պարտեզ»(2003թ.) գրքույկները, բուլղարահայ մանկավարժ Անահիտ Օշական-Ոսկերչյանի «Ոսկի պտուկը» (1999թ.) և «Հայարտ չղջիկը» (2002թ.) գրքույկները, հայաստանաբնակ գրող Սերգեյ Վարդանյանի մանկական պատմվածքներն ամփոփող «Արեածաղիկը» ժողովածուն, որն արևմտահայերենի է վերածել Մաքրուհի Հակոբյանը: Հրատարակիչները կազմում և տպագրում են գրելավարժության ձեռնարկներ, իսկ ամենափոքրիկների համար՝ ներկելու արժանեք այբուրենի ծանոթությանը:

Հիմնականում այսպիսին է «Արաս» երկրեզվյա հրատարակչատան տքնաջան, հայրենասիրությանը աղեցուն աշխատանքի արգասիքը: Բոլորովին էլ անամպ ու խաղաղ, ընդգծված շահույթաբեր չի այն մթնոլորտը, ուր գործում են նրանք: Բազմաթիվ թարգմանիչների ներգրավում, կարևոր գործերի հրատարակում, նոր գրողների ներկայացում, հարգանքի տուրք-հրատարակություններ անցյալի գրողների հիշատակի ու նրանց գործերի նկատմամբ, կարևոր համագործակցության օրինակներ Ստամբուլի թուրք և մյուս մտավորական, հեղինակների, հրատարակիչների հետ:

«Արաս»-ն արդեն արժանացել է «պատմիսան դեպի հայ գրականություն» հորջորջմանը, որը լավագույն գնահատական է նրա առաքելության, բարի հիշատակ հիմնադրների գրող Սկրտիչ Մարկոսյանի ու նրա աշակերտների: Ամենայն բարիք ու նոր հաջողություններ հրատարակչության տնօրինությանը, տնօրինուհի Փայլինե Թովմասյանին, նրա յուրաքանչյուր մեղավազան աշխատակցին և իհարկե՝ բուն «ԱՐԱՍ» հրատարակչատանը:

HASMIK STEPANYAN

“ARAS” BILINGUAL PUBLISHING HOUSE IN ISTANBUL  
(2000-2006)

“ARAS” bilingual publishing house was founded in 1993 in Istanbul. Since then about 70 books have been translated, edited and published in Armenian and Turkish. The purpose of the publishing house was to establish a bridge between various cultures of the region, present and hand down our cultural values to the present and next generations, continue the traditions of West-Armenian publishing culture, the deep roots of which spring yet in the Ottoman Empire, thriving to become in the new millennium the representative of this richest heritage in republican Istanbul.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 1966թ. Երևանում մշվեց Հ.Մեծուրու ծննդյան 80 ամյակը: Այդ առթիվ 1968թ. Երևանում լույս տեսան նրա երկերը՝ «Կապույտ լույս» խորագրով:
2. Հ.Մեծուրու «Արինա, աղ ուն՞ա» (“Atina, Tuzun Var Mi?”) և «Քիլիկների դռները փակվեցին» (“Kapandı Kirve Kapıları”), “Armdan Fırat’ın Öte Yanı” գրքերը լույս են տեսել թուրքերեն՝ Սիվլա Կուլումճյանի և Լուրիան Քյուրքչյանի ֆարգամոթյամբ:
3. Թուրքերեն գրքերից «Գյալումնի քաղո» (“Gıyur Mahallesi”) (հիարքերի այս քաղում է ծնվել Սկրտիչ Մարկոսյանը), «Ասա Մարկոս, ո՞րտեղացի ես» (“Sbyle Margos Nerelisen?”), “Biletimiz İstanbul’da Kesildi” («Տնուց մինչև Ստամբուլ էս») գրքերը հիմնականում կենսագրական բնույթի են, ազգագրական հիմնադրված աղբյուրներ:
4. “Güvercinin Harekatı” և “Kaldı” գիրքը թուրքերեն է ֆարգամոթվել Սարգիս Սերոբյանը:
5. Երկուսն էլ գրված են թուրքերեն:
6. Գիրքը ֆարգամոթվել է Սիրվարդ Մալխասյանը:
7. Գիրքը ֆարգամոթվել է Կինան Չելյուկը (Ջաքարյան):
8. Գիրքը ֆարգամոթվել է Անի Պարոնյանը:
9. Գիրքը ֆարգամոթվել է Հերոն Արսուրը:
10. «Կախկոտները համարձակ են» անգլերենից թուրքերեն ֆարգամոթվել է Հովհաննես Քրդեղյանը: «7000սյուրյանը» ֆարգամոթվել են Հովհաննես Քրդեղյանը և Ավիգ Գյուրեմիրը: «Փարիզ-Ֆրեզնո...» ֆարգամոթվել է Քերիլ Էյուպոլում: անհիտոտ «Բժ սիրտը լեռներում է» և «Ապրելու ժամանակը» երկու ֆատերգությունները ֆարգամոթվել է Էջա Էրոլում: «Մարտկալին կատակերգությունը» ֆարգամոթվել է Քերիլ Էյուպոլում:
11. Թարգմանել է Կինան Չելյուկը (Ջաքարյան):
12. Հայերենից ֆարգամոթվել է Նաժդա Դեմիրճիոլում:
13. «Հայրս Աշտախ չմաց»-ը թուրքերենի է ֆարգամոթվել Սիրվարդ Մալխասյանը:

14. ֆրանսերենից թարգմանել է Մայրա Սարիսը:
15. Հայերենից թուրքերենի է թարգմանել Սիրվարդ Մալխասյանը:
16. Անգլերենից թարգմանել է Ալբուր Յըմազը:
17. Անգլերենից թարգմանել է Ալբուր Յըմազը:
18. Հայերենից թարգմանել է Ջավեն Դիպերյանը:
19. Այս մասին մանրամասն տես մեր հոդվածը «Պատմա-քանասիրական հանդես»-ի 2005թ հ.2-ում, էջ 316:
20. Ֆրանսերենից թարգմանել է Արուսյակ Օգժոբունովան:
21. Լույս է տեսել 2005թ.։ Դուստրենից ֆրանսերեն թարգմանել է Լյուդմիլա Դեմիսենկոն, ֆրանսերենից թուրքերեն՝ Մուստաֆան Շահանը:
22. Լույս է տեսել 2003թ.։ Հայերենից թարգմանությունը կատարել է Մարգիտ Սերոբյանը:
23. Լույս է տեսել 2005թ.։ Ֆրանսերենից թարգմանել է Էմիլ Արալ Ալբունբաշը:

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏՅԱՆ

#### ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՅԱՆԻՆ

Կեսարիայի հայոց հոգեւոր առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյանին եւ նրա գիտական-գրական վաստակը գնահատողներից է պատմաբան, բանասեր եւ հասարակական գործիչ Ա. Ալպոյաճյանը (1879-1962)<sup>1</sup> :

Ա. Ալպոյաճյանը, որ 1908-10 թվականներին Ա. Փրկիչ Ազգային հիվանդանոցի, «Ընդարձակ օրացոյց»ի՝ կազմող-խմբագիրն է եղել, առաջարկել է Պալյանին «Հայ վանորայք»ի հրատարակության պատրաստ հատվածները զետեղել օրացոյցի մեջ: Այդ մասին տեղեկանում ենք Պալյանի նամակներից<sup>2</sup>:

Տրդատ եպիսկոպոս Պալյանի եւ իր կրտսեր ժամանակակից ու հայրենակից Արշակ Ալպոյաճյանի միջեւ նամակագրությունն<sup>3</sup> սկսվել է 1905 թվականից, եւ ըստ պահպանված նամակների ժամանակագրության, շարունակվել մինչեւ 1913 թվականը<sup>4</sup>: Մաշտոցյան Մատենադարանում Ա. Ալպոյաճյանի թողունի մեջ բարեբախտաբար պահպանվել են այդ նամակները, ինչպես նաեւ այլ նյութեր՝ ուղղակի կամ անուղղակի կապված Տրդատ եպիսկոպոս Պալյանի կենսագրության եւ թագմածանր գործունեության հետ:

Նամակներից առաջինը ամբողջությամբ պատասխանն է Ա. Կարապետ վանքի վարժարանի ֆրանսերենի ուսուցչի քափուր պաշտոնում հարմար մեկին գտնելու՝ Տ. Պալյանի խնդրանքին. «...ուրախ կըլլամ եթե շատ ազնիւ, բարի, յարմարող ու համեստ բնատրութեամբ գաւառացի մէկը գտնէք, որպէս զի կարողանայ կենակցել մեր վարժարանի այժմեայ գաւառացի դասատուներու հետ»<sup>5</sup>: Սակայն քնկնածուն, որ Միհրան Հովհաննիսյանն<sup>6</sup> էր, մի շարք պատճառներով այնքան էլ չէր համապատասխանում առաջադրված պահանջներին, եւ Պալյանը 1905 թ. հոկտեմբերի 5-ի նամակով տեղեկացնում է, որ ֆրանսերենի ուսուցչի հարցն արդեն լուծված է: Երկու նամակ՝ գրված 1906, 1907 թթ. (թղթ. 52, վավ. 66/97, 66/102) շատ վատ են պահպանված, զրեթե անընթեռնելի են, տեղ տեղ երեւում են միայն առանձին բառեր: Հրատարակության պատրաս-



անելու համար յոթ մամակներից ընտրել ենք չորսը, որոնք վերաբերում են Կեսարիայի Ս. Կարապետ վանքի առաջնորդների ցանկին, Կեսարիայի եւ գաղթավայրերի հայկական վանքերին եւ հայերեն հնատիպ գրականությանը:

Ա. Ալպոյաճյանի հետաքրքրության շրջանակները այդ տարիներին մույնպես հաճախ համընկնում էին առաջնորդի զբաղումներին, եւ այդ ըմբռցքում առաջացած հարցերին պատասխաններ գտնելու համար նա դիմել է Տ. Պալյանին:

Կետադրությունը ճշտված-լրացված է: Ընդգծումները հեղինակին են:

Հրատարակվում են առաջին անգամ:

1.

Կ. Պոլիս, 17/30 Հուլ. 1905

Գերապատիւ Տ. Տրդատ եպս. Պալեան

ի Կեսարիա

Ձեր Գերապատության 5 Հուլ. 1905 թուակիր պատուական գրությունը այսօր իսկ ընդունած եմ եւ բովանդակութեանը տեղեկացած:

Արդէն լրագրական հրատարակութիւններ տեղեկացած էի Ս. Կարապետի վանքին վարժարանին ֆրանսերէնի ուսուցիչ մը անուանուած ըլլալը: Առաջիկային ուրիշ ամօրի մը եթէ պատենութիւնը ներկայանայ դարձեալ պատրաստ ենք ջանադիր ըլլալու Ձեր Սրբազնութեան հրամանները կատարելու:

Այս ամօրի ներփակեալ կը դրկեմ Ձեր Սրբազնութեան Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին Առաջնորդներու մեր կազմած ցուցակը, ինչպէս նաեւ Ս. Դանիէլ, Ս. Սարգիս եւ Թումարզայի վանքերուն վանահայրներէն մեզի ծանօթներուն ցանկերը: Անոնց անկատար եւ շատ պակասատր ըլլալը ինձի համար անձանօթ իրողութիւն մը չէ եւ ասիկա շատ բնական մըն է, վասն զի ես անիջ չեմ ունեցած տեղական քննութեան, ինչպէս նաեւ մասնատր մպատակ մը չեմ ըրած ինձի համար Կեսարիոյ թեմը, այլ ընդհանրապէս բոլոր թեմերու համար հաւաքած եմ ինչ որ ինձի հանդիպած է մատենագրական աշխատութեանց կամ ձեռագիրներու յիշատակարանին մէջ:

Այդ աշխատութիւնը հազիւ եօթը տարուան զորմ մըն է եւ ինչպէս որ Ձեր Սրբազնութեան ծանօթ է եօթը տարին զայն կատարելագործելու համար շատ անբնական ժամանակ մըն է: Ինչպէս պիտի տեսնէք այս ցուցակին մէջ օգտուած եմ Ձեր Ձեռագիրներու ցուցակէն: Սիւսյն Կեսարիոյ Հայ վանքերու վրայ Ձեր գրածներէն չեմ օգտուած (*Բիզանդիոնի հրատարակած*)՝ վասն զի եւն յիշատակեալ անուններուն պաշտօնավարութեան թուականները ճշտուած չեն:

Կը յուսամ թէ Չեր Գերապատութիւնը մեր ցանկը ստանալէ յետոյ պիտի քարեհաճի ամենաամձաքար քարեհաճութիւնը ունենալու մեր պակասները լրացնելու իր հաւաքումներէն, զմեզ երախտապարտ թողլով:

Նոյնպէս մեծապէս եւ անհունապէս շնորհակալ եւ երախտապարտ կըլլամ, եթէ Չեր Սրբազնութիւնը քարեհաճի նաեւ ուրիշ թեմերու համար ալ եթէ որեւէ նշանակեալ ցուցակներ կամ մօթեր ունի իմացնել, միշտ ի նկատի առնելով սա պարագան, թէ այդ սերմերը խոպան հողի վրայ մետուսձ սերմեր չպիտի թլլան եւ պիտի գործածուին արդիւնատրապէս՝ որչափ որ մեր կարողութիւնը կը ներէ:

Կանխաւ շնորհակալութիւններով եւ միշտ համակրութեամբ մատչելով ի համբոյր Ս. Աջոյղ մնամ որդիական ակնածամօք միշտ Արշակ Ա. Ալպոյաճեան

Յ. Գ. Յանկը ուշացնելու համար մերողամիտ եղէք, պատճառը պարզապէս մօթերու տետրակէն դասաորմամբ ընդօրինակելու աշխատութիւնն է, գոր իբր ձանձրանալի գործ կը ծուլանայի ընել:

Նոյն

ՄՄ. Ա. Ալպ. թողոճ, թղթ. 52, վաւ. 66/71, 2 թերթ

2.

Կ. Պօլիս. 24/8 1906

Գերապատիւ Տ. Տրդատ եպիսկոպոս Պալեան

Առաջնորդ Հայոց Կեսարիոյ

Կեսարիա

Բարձրաշնորհ Տէր.

Հուսկ ուրեմն Բիզանդիոնի 3073 թուին<sup>8</sup> մէջ կարդացի Չեր Սրբազնութեան Կեսարիոյ առաջնորդաց ցանկը: Անցեալ հոկտեմբեր ամիսէն ի վեր անհամբեր կը սպասէի Չեր Գերապատութեան խոստումի գործադրութեանը, ինչ որ կ'ուշանար: «Լա՛ւ է անագան, քան երբէք» ըստած է եւ ես այս ըսելով տարուան մը այս յապարտումի խնդիրը միանգամ ընդ միշտ կը վիակեմ, հրատարակելու շնորհը ըրած ըլլալուն համար շնորհակալութիւններս յայտնելով:

Սիայն թէ քանի մը նշանակելի կէտեր կան, որոնց վրայ Չեր Սրբազնութեան ուշադրութիւնը կը հրաւիրեմ:

1. Նախ Կեսարիոյ հայ ազգաբնակչութիւնը ԺՔ. դարու կամ անկէ քիչ առաջուան գաղթականութիւն մըն է, որ առաջնորդութիւնն ալ այսքան ուշ սկսած է: Նոյնպէս Ս. Կարապետի վանքը մո՞ր է աւելի, քան Ս. Սեռնիքոսի վանքը, գոր յիշատակած էիք:

Ասիկա լուսարանութեան արժանի կէտ մըն է:

2. 1287ին և 1307ին *Կոստանդինոսի Կեսարիոյ* կը յիշուի (տե՛ս - Չամ. Գ. հատ., էջ 284 և 309): ինչո՞ւ համար արդեօք դուրս ձգած էք այս անունը Չեր ցանկէն:

3. *Յովսէփի եպ. Աման օղլու - Սարմախցի* կը գրէք, թէ կը յիշուի 1693ին և 1705ին գրուած երկու ձեռագիրներու մէջ:

Այդ յիշատակարաններէն մէկը կարծեմ թէ, դարձեալ Չեր Սրբազնութեան հրատարակելի տուած այս տարուան «Լոյս»ի 143 էջին մէջ հրատարակուածն է՝: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ 1693ին գրուած յիշատակարանին մէջն ալ արդէ՞օք իբր ատաջնորդ յիշատակուած է: Վասնզի 1705ին անվրէպ կերպով Ատաջնորդ լինելը յայտնի է, սակայն միւսը ըստ իս կասկածելի, վասնզի պատճառներ կան տարակոյսի ենթարկող: 1702-1703 թուականներուն Յովսէփ վրդ. Աման օղլու ատաջնորդ է Թէրիք - տաղի, ինչպէս կը յիշատակէ իրմէն հագին կէս դար յետոյ ապրող Հ. Սիքայել վ. Չամիչեան իր հոսեհատոր գործին Գ. հատորին 744րդ էջին վրայ, ինչ որ Չեր Սրբազնութեան ուշադրութեանը կը ներկայացնեն:

Կը կարծեմ, թէ մինչև հիմա ստացած կ'ըլլաք Հանդէս Ամսօրեայի Յուլիս - օգոստոս ամսաթիւերը, ուրկէ պիտի տեսնէք, թէ *Սարգիս Սարաֆեան* պաշտօնավարած է ի Կեսարիա 1731-1735, ինչպէս իր կենսագրութենէն կ'երևի, եւ որ կարծեմ վաւերական կրնայ համարուիլ:

Այս չորս կէտերուն վրայ եթէ հաճէք երկտողով մը քացատրութիւն մը տալ, իտրպալէս երախտապարտ պիտի ձգէք զիս: Մանաւանդ - Յրդ - խիստ կը հետաքրքրէ զիս: Նոյնպէս Չեր մասնագիտութեանը վերաբերեալ խնդրոյ մը համար Չեր Գերապատուութեան աջակցութեանը կը կարօտիմ, կը յուսամ, թէ այս անգամ անոնց տարուան մը խիստ երկար ժամանակամիջոցով մը ուշ պատասխանելու - փութով կը հաճէք պատասխանել:

Չամիչեան իր պատմագրութեան Գ. հատորին 105րդ էջին վրայ կը պատմէ, թէ Շնորհալիի մէկ նամակին վրայ Յունաց Մանուէլ կայսրը փախիք յայտնած է Արեւելք ճամբորդելով աստուածաբաններու ուղեկցութեամբ երթալ տեսնուելու Շնորհալիին հետ, սակայն Արեւմտեան սահմաններու շվարթութեան պատճառաւ չէ կրցած երթալ: Սակայն իր տեղը դրկած է Լիզիոն Մաստո Թերիանէ անուն երեւիլի յոյն ախտուալծարանը, իրեն հետ տալով նաեւ *«գիւայր վանաց հայոց ի Փիլիպուպոլեաց [աշխարհ]է՞՞՞՞ գՅովսաննէս որոյ մականունն էր Ուրման* (յամի տ[եան]ն 1170)»:

Վանքերու համար Չեր ըրած հետազոտութիւններուն մէջ, անշուշտ, հանդիպած պիտի ըլլաք *վանքի մը յիշատակութեան, որ պէտք է անպատճառ զանուի կամ Կ. Պոլսոյ կամ Փիլիպպէի կամ Ռումէլի եւ Անատոլիոյ մի որ եւ մասին մէջ*:

Ես, որչափ որ գիտեմ Ամատուրի մեջ Յունական կայսրության բաժին եղող երկիրներու մեջ երկու վանք կայ, երկուքն ալ օսմանեան տիրապետութենէն յետոյ շինուած՝ 1. Էմկիւրի եւ 2. Արմաշ, իսկ Ռումէլի կողմը հայ վանքի մը գոյութիւնը բացարձակապէս անծանօթ կը մնայ մեզի:

Երոստա աշխարհամասին մեջ մինչեւ Լեհաստան երթալու է երկու հայ վանքի հանդիպելու համար:

Հետեւաբար, Չեր Սրբազնութեան ձեռնահաստութեան կը թողում այս խնդրոյն լուսարանութիւնը:

Եթէ կան Ռումէլի կողմը ուրիշ վանքեր սղ, գէթ անունները իմացնելու շնորհը ընէիք:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյղ՝ մնամ Չերդ Գերապատուութեան խոնարհ ծառան

Արշակ Ալպոյանճեան

Հասցես է՝

Արշակ Ալպոյանճեան

Գամանքօ խան ք. 12

Սթամպուլ

Կ. Պօլիս

ՄՄ, Ա. Ալպ. թողոն, թղթ. 52 վաւ. 66/84, 3 թերթ

3.

23 մայիս, 12

Գերապատիւ Ս. Տրդատ եպ. Պալեան

Մանիսա

Նախ Գերապատիւ Սրբազնութեանդ առողջութիւնը հարցնելէ յետոյ ներկայիս կուգամ ստիպողաբար խնդրելու Չեր աջակցութիւնը կարեւոր գործի մը համար:

Չեր Սրբազնութիւնը իր յօդուածներուն մեջ քէ ի *Բիզանդիոնի*<sup>1</sup> եւ քէ ի *Բանատէրի*<sup>2</sup> կրկին անգամ հաստատած է, քէ ունի իր քովը Արգարի Կ. Պոլիս տպագրած գիրքերէն մէկ օրինակ, որուն յիշատակարանն ալ հրատարակած է:

Արդ, կը խնդրեմ, որ այդ գիրքին մէկ էջը, կամ անոր լուսանկարը յանձնարարեալ ծրարով իմ հասցէիս խրկելու շնորհը ընէք: Լուսանկարելէ յետոյ անկտրուստ կը վերադարձնեմ Չեզի, ապահով կրնաք ըլլալ:

Գարձեալ Չեր Սրբազնութենէն կը խնդրեմ, որ *Հայ տպագրութեան պատմութեան* մեջ Չարբանէլեանի կողմէ իբր Արգարեան տպագրութեանց նշանադրոշմ ներփակ նշանը իրապէս տեսած է՞ք Չեր ձեռքը եղած տպագիր գիրքին վրայ: Այս մասին Չեր լուսարանութեան սպասելով անյապաղ, կանխայայտ շնորհակալութեամբ մնամ Գերապատիւ Սրբազնութեանդ խոնարհ ծառայ

4.

Կ. Պոլիս 6/19 Յունիս 1913  
Գերապատիւ Տ. Տրդատ եպ. Պալեան  
Մանիս

Հ/անդէս/ Ամսօրեայի 1897ի Սեպ.ի քիւին մէջ Ձեր Մաշտոցներու վրայ գրած յօդուածին մէջ յիշած էք 1676ին ի Մարսիլիա տպուած Մաշտոց մը:

Արդ, զիտքք թէ այս տպագրութիւնը ըստ գայթակղութեան եղած է քանասիրական աշխարհին մէջ, վասն զի 1676ին ըստ ամենայնի նման տպագրութիւն մ'ալ ի Չմիւռնիս կը յիշատակուի (տես Մատենագիտութիւն, Ջարբանդեան էջ 400-2, Եւր մատենագիտութիւն, Հ. Ղազիկեան, էջ 1783-1785, նաև Թեոդիկի Տիպ ու աստ, Աշխատանք<sup>13</sup> ու այլն): Արդ, փափաքելի է զիտմայ, թէ ոնէ տարբերութիւն կա՞յ այս երկու տպագրութեանց միջեւ: Չմիւռնիս ապուածը՝ Հ. Ղազիկեան ու Մարսիլիա ապուածն ալ Հ. Ջարբանդեան տեսած կը թուին, եւ իրենց մէջ բերած յիշատակարաններէն դատելով կատարելապէս նման են իրարու. միայն իմ ուշադրութիւնս գրաւեց անոնց դիրքին ու մեծութեան մասին եղած դիտողութիւն մը, որ շատ նշանակելի է: Հ. Ղազիկեան զիրքը կը նկարագրէ սապէս. «Գիրք տպագրութեան 8՝ մեծ լայնեղան, յաջորդազիր, բացի յառաջաբանէն ու յաջորդներէն՝ որոնք միջակ գրով են. թուրքը՝ թանձր ու սև. հասարակ տպագրութիւն»: Իսկ Թ. Ճերմակեան (Տես Աշխատանք, ք. 100) «Փոքր Մաշտոց» բացատրութիւնը կը գործածէ իր տրամադրութեան տակ գտնուած Մաշտոցին համար եւ յօդուածին շարունակութեան մէջ տեղ մը (Աշխատանք, ք. 103), Արշալոյս Արարատեանի<sup>14</sup> վկայութեան վրայ հիմնուած կը յայտնէ, թէ նոյն տպարանին մէջ «Մեծ Մաշտոց» մ'ալ տպուած է:

Ուրեմն, 1676ին երկու Մաշտոց տպուած է 'ի Չմիւռնիս, մին մեծ (Հ. Ղազիկեանի տեսածը) եւ միւսը վտքը (Թ. Ճերմակեանի տեսածը): Մարսիլիա տպուածը արդէօք լիտքադիր է, թէ՞ մեծադիր, զիտմալ հետաքրքրական է: Արդ, իբր տպագրութեան պատմութեան մեծապէս աշխատած եւ երկար պրպտումներով անոր կարգ մը գաղտնիքներուն թափանցած անձնատրութիւն մը կարելոք կը դատեմ զիտմալ նաև Ձեր Գերապատութեան կարծիքը: Կը հաստատա՞ք, որ 1676ին Չմիւռնիս ալ իր տպարանը ունեցած ըլլալ է:

Հոս դիտել կուտամ, թէ Մարսիլիոյ ու Չմիւռնիոյ տպարաններու առընչութիւնը շատ դիւրին պիտի ըլլար հաստատել, եթէ 1675-76 թուականներուն տպուած Գիրք այբուբենից, Արեւնտ համարողութեան, Գիրք վայելուի<sup>15</sup>, Գիրք Աշխարհաց<sup>17</sup>, Կանոնք զգուշութեանը պահելոյ

զանճն, Նուագարան Երանուհույ՝, Գրքայկ կարևոր գործերում՝ յիշատակարաններուն մէջ յիշուած ըլլային Մաշտոցի մէջ յիշուած անճերը, եւ կամ մանաւանդ 1676էն յետոյ Մարտիկա տպուած կարծուած գիրքերուն մէջ Սողոմոնը եւ կամ մանաւանդ Աւետիսը եւ Սկրտիչը եւ այլն, յիշուած ըլլային: Գծրադտարար ինճի անճանօք է 1677ի Մաղմուխն յիշատակարանը, որ կը յուսամ, թէ կրնայ լուսարանել այս խնդիրը: Մանաւանդ հինգ տարուան խորհրդաւոր լռութիւն մը կայ մէջտեղը 1677էն 1683, որմէ յետոյ դարձեալ ասպարէզ կուգայ Մարտիկոյ տպարանը տպելով Ալկն հոգեկան, Պարտէզ հոգեւոր, եւ Ժամագիրքը, որոնց յիշատակարաններուն մէջ չեմ գիտեր թէ Սողոմոն, Աւետիս եւ այլք կը յիշուին, եւ կը բացատրեն իրենց հինգ տարուան լռութիւնը: Եթէ կը յիշուին, ուրեմն Մարտիկայէն բնաւ հեռացած չեն եւ այս տպարանը շարունակուած է, իսկ Չմիտնիան կեղծիք մըն է: Ասկայն ինչո՞ւ այդ կեղծիքը, ասիկա անճանօք կը մնայ: Եթէ այս մասին հաճիք լուսարանութիւն մը տալ, զիս երախտապարտ պիտի թողուք:

Վերը յիշուած գիրքերէն ոմանց ճակատները կան մատենագիտութեան՝ մէջ, սակայն յիշատակարանները լրիւ չեն, այնպէս որ ինճի կարելի չեղաւ վճռական եզրակացութեան գալ:

Հաւատի եմ, որ այս խնդիրը Չեզ հետաքրքրած է եւ անոր մասին որոշ կարծիք մը կազմած էք: Կրնա՞ք ըսել, թէ Դոք ի՞նչ կը կարծիք այս մասին: Եթէ բարեհաճիք երկտողով մը Չեզ կարծիքը հաղորդել շատ երախտապարտ պիտի թողուք զիս՝:

Մատչելով ի համբոյր ս. Աբրոյ՝ մնամ որդիական ակնածանօք  
Արշակ Ա. Ալպոյաճեան  
ՄՄ, Ա. Ալպ. թողոն, թղթ. 52, վաւ. 66/179, 2 թերթ

KARINE AVETYAN

LES LETTRES ARCHAK ALBOYADJIAN TRDAT EVEQUE PALIAN

Dans les archives du Maténadaran de Machtots conservent sept lettres d'Archak Alboyadjian à Trdat évêque Palian. Nous avons choisi et nous avons préparé quatre lettres à édition, qui concernent des couvants du Césarée et la littérature arménienne incunable.

Publient pour la première fois.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այդ կապակցութեամբ տե՛ս նրա «Պատմութիւն հայ Կեսարիոյ» երկհատոր հիմնարար աշխատութեան էջերը՝ 945-56, 976-1030, 1130-50 եւ այլն:
2. Պայտանի գրած վեց մամակները Ա. Ալպոյաճեանին հաճմովս եմ տպագրութեան («Էջմիածին» ամսագիր, 2006, Ա):

3. Պահպանված նամակներից Տ. Պալյանի՝ 1905-1908 թթ. և Ա. Ալադյանի՝ 1905-1913 թթ. ատաղյան շրջանի նամակ-պատասխան, մնացածները կամ չեն պահպանվել, կամ գուցե այլ հավաքածուների մաս են կազմում:
4. Ալադյանի նամակները (թերևս պատճենները) գրված են բարակ թղթի վրա, տառերը խոնաղազ են դժվար ընթանելի են:
5. ՄՄ, Ա. Ալա. թղթ, թղթ. 49, վա. 66/2996, 1 թերթ:
6. Սիրան Հովհաննիսյան (1855-1926), արևմտահայ գրող, եղել է ուսուցիչ, վարել տեսչական պաշտոններ, գրադպրատն է գրական, բանասիրական ուսումնասիրություններով, հրատարակել է բանաստեղծական ժողովածուներ, ֆրանսերեն-հայերեն, հայ.-ֆրանս. բառարաններ, աշխատակցել է Փարիզի «Բանասէր», Կ. Պոլսի «Ճաղիկ» եանդեաներին, ունի անտիպ աշխատություն հայ բողոքականության ծագման մասին:
7. «Բնագանդիում» լրագիր, Կ. Պոլս, 1901, հմր 1360, 1375, 1376:
8. Տե՛ս Առաջնորդական յաջորդությունը Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց, «Բնագանդիում», 1906, հմր 3073, էջ 1: Հմտ. լրացված, ընդարձակ տարբերակը «Հայ վանորայք», Ձմյոտմիա, 1914, էջ 31-65:
9. Նկատի ունի «Եկեղեցական ձեռագիրը Կեսարիոյ վիճակին վանորէից, Ս. Եկեղեցեաց և ամհատից սնդական: Գ. Թալուսունի Ս. Թորոս եկեղեցիին» հոդվածը տե՛ս «Լոյս», 1906, էջ 143-44:
10. Բնագրում՝ աշխարհի նշանագիրը:
11. «Բնագանդիում», 1905, թիւ 2560, էջ 1:
12. «Բանասէր», Փարիզ, 1903, էջ 203-207:
13. «Աշխատանք» Լրագիր հասարակական, տնտեսական, քաղաքական: Ձմյոտմիա, 1910-1914: Տե՛ր և տմօրէն՝ Ս. Թորոսեան, 4 էջ:
14. «Արշալոյս Արարատեան» օրագիր քաղաքական, բանասիրական և առեւտրական, Ձմյոտմիա, 1840-1887: Հրատարակիչ՝ Ղ. Պարլազարեան, խմբագիր՝ Յարութիւն Ավանան:
15. Պալյանը հակված է կարծելու, որ 1676ին Ձմյոտմիայում տպարան չի եղել, այլ միայն 1759ին է հաստատվել տպարան, որտեղ մինչև-1762 թ. հրատարակվել է երեք գիրք, որից հետո մինչև 1834 թ. ավելի քան յոթանասուն տարի որեւէ տպարանի հիշատակություն հայտնի չէ: 1835ից արդեն հիմնվում է տպարան և տպագրական գործը զարգանում է Ձմյոտմիայում: Տե՛ս Հայ մամուլ Ձմյոտմիոյ մէջ 1676-1850, «Դաշինք», Քաղաքական և գրական մտքերը, Ձմյոտմիա, 1909-1919, Արտօնատէր Հրամո Մամուրեան, խմբ.՝ Մուրէն Պարթեւեան: 1911, հմր 688, էջ 1-2:
16. Գրքի լրիվ վերնագիրն է՝ «Գիրք վայելույ և հարկատր հանուրց», Մարսէլ, 1675:
17. Այս վերնագրով գիրք հրատարակուել է 1668 թվականին և ոչ Մարսեյում, այլ Ամստերդամում, Ոսկան Երևանցու տպարանում: Տե՛ս «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտության մեջ, էջ 55:
18. Գրքի լրիվ վերնագիրն է՝ «Նուագարան Երանուհոյ կուսին Մարիամու», Մարսէլ, 1676:
19. Գրքի ստույգ վերնագիրն է՝ «Գրուկ կարետր հանապազորդեան», Մարսէլ, 1676:

20. 1683-ին Մարսելում տպագրված գրքերից երրորդը ունի հետևյալ վերնագիրը՝ «Մովսես Նորենացի, Աշխարհացոյց: - Աղոսագիրք: - Համառոտ վիպասանութիւն», այլ ոչ «Ժամագիրք»: Տե՛ս Հայ գրքի մատենագիտություն, հատոր Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 88:
21. Նկատի ունի Ա. Ղազիկյանի «Հայկական մոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի» գիրքը, Վենետիկ, 1909:
22. Տարիներ անց Ա. Ալպոյաճյանը այս հարցին կրկին անդրադարձել է «Կրկնուած պխաներ» հոդվածով (Տե՛ս «Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի», 1930, էջ 294-305), որտեղ փորձում է պատասխանել իր առաջադրած հարցին՝ քացատրելով այդ հանգամանքը հայերի տպագրական գործունեության դեմ կաթոլիկ հոգևորականության և ֆրանսիական կառավարության հարուցած հալածանքներով:



**ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ**

**ՊԱՐՄԿԱԼԵԶՈՒ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՄԱԿՈՒԻ Ս.  
ԹԱԴԵՈՍ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

Մակվի Ս. Թադևոս Առաքյալի (այսուհետև՝ Ս. Թադեի) վանքը, որը հայտնի է նաև Արտագի վանք և Վարաքիլիսա անուններով, հայոց հնագույն վանքերից է: Նրա պատմության սկզբնաղբյուրներից շատերն են պահպանվել, որոնց հիման վրա ուսումնասիրություններ են կատարել հայ և օտար հետազոտողներ<sup>1</sup>:

Ջանի որ վանքը դարեր շարունակ գտնվել է իրանական իշխանությունների տիրապետության տակ, նրա պատմության սկզբնաղբյուրների մեջ հատուկ տեղ են գրավում պարսկալեզու սկզբնաղբյուրները և հատկապես վավերագրերը, որոնք հիմնականում պահպանվել են Երևանի Մատենադարանում և Թավրիզի Հայոց առաջնորդարանի թանգարանում:

Թավրիզի Հայոց առաջնորդարանի թանգարանի վավերագրերից Մակվի Ս. Թադեի վանքին վերաբերող մի շարք վավերագրերի պարսկերեն տեքստերը հրատարակվել են Իրանում 1971-72թ. տպագրված «Հուր» ամսագրի համարներում: Այս և մի շարք այլ (ընդամենը 18) պարսկերեն վավերագրեր ընդգրկվել են Ա. Հախնազարյանի ատենախոսության մեջ<sup>2</sup>:

Վանքի պատմությանը վերաբերող Մատենադարանի հրավարտակներից երկուսը հրատարակվել են Հ. Փափագյանի կողմից «Մատենադարանի պարսկերեն հրավարտակների» առաջին պրակում<sup>3</sup>: Այդ հրավարտակներից առաջինը Աղ-Կոյունլու Ռուսթամ փաղիշահի 1493թ. հրավարտակն է ուղղված Սարգիս կաթողիկոսին, որով կարգադրում է ներություն ցույց տալ Մակվի Ս. Թադեի վանքի վանահայր Ջաքարիա վարդապետին: Երկրորդը Մեֆյան շահ Թահմազ Ա-ի 1562թ. հրավարտակն է Մակվի Ս. Թադեի վանքի հանդի սահմանների ու ռոտզման կարգի և «Կարիզ, Մահլազան և Կորուղ» գյուղերից գանձվող եկեղեցական տուրքերի մասին:

Բացի վերոհիշյալ հրավարտակները Երևանի Մատենադարանում պահվում են Ս. Թադեի վանքին վերաբերող շուրջ 30 պարսկերեն վավե-

րագրեր, որոնց ուսումնասիրությունն ու հրատարակումը կարող է նոր մանրամասներով ու ճշգրտումներով հարստացնել նրա պատմությունը:

Ս. Թադևի վանքի ղեղարձակ թեմի ու վիճակի մեջ ըստ XVIII դարի կաթողիկոսական կոնդակների մտնում էին «Թավրիզը, Մուժանդարը, Տուխուրկանը, Մարաղան, Խոյը, Չորսը, Մակուն և դրանց բոլոր շրջակա գյուղերը՝ նաև Բայսազեանը, Սահաթը և Սիանդանունը»: Վանքին է պատկանել նաև Դարիզ, Մանիագան և Դորուղ (կամ Կորուղ) գյուղերի՝ չորսը՝ գանձելու իրավունքը<sup>7</sup>, որոնց նկատմամբ հավակնություններ է ունեցել նաև Դարաշամբի Մաղարդա (Ստեփանոս Նախավկայի) վանքը: Դարեր շարունակ այս գյուղերը երկու վանքերի վեճի առարկան են եղել<sup>8</sup>: Պահպանվել են մի քանի հրովարտականներ, որոնք հաստատում են այդ գյուղերից չորսը՝ հարկը ստանալու Ս. Թադևի վանքի իրավունքը<sup>9</sup>, ինչպես նաև՝ հրովարտականներ և կաթողիկոսական կոնդակներ, որոնք հաստատում են այդ գյուղերի գտնվելը Ստեփանոս Նախավկայի վանքի թեմի և վիճակի մեջ<sup>10</sup>:

Վանքն ունեցել է խոշոր կալվածքներ: XX դարի սկզբին Ֆրանգյանը Ս. Թադևի վանքի վանահոր վկայության հիման վրա թվում է հետևյալ գյուղերը որպես անցյալում Ս. Թադևի վանքին պատկանող բնակավայրեր՝ «Մըզրա<sup>12</sup>, Իմրի-դաշ<sup>13</sup>, Դարաքիլիսա<sup>14</sup>, Դիպակ-դաշ<sup>15</sup>, Աղբուլաղ<sup>16</sup>, Դարաթուրի<sup>17</sup>, Սոնա-Բուլաղ<sup>18</sup>, Աղբաշ<sup>19</sup>, Մանիագան<sup>20</sup>, Կորուղ<sup>21</sup>, Լուշիկ, Քեռերևան<sup>22</sup>, Չորս<sup>23</sup>, Ուսհան<sup>24</sup>»<sup>25</sup>: Ոչելով նրանցից յուրաքանչյուրի մոտավոր հեռավորությունը վանքից<sup>25</sup>: Սակայն այս գյուղերը, որոնցից շատերը դեռևս 1828թ. դեպի Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայկական տարածքները կազմակերպված արտագաղթի հետևանքով հայերից լքվել են ու այժմ կամ անբնակ են կամ՝ վերաբնակեցված իրանցի թուրքերի կամ քրդերի կողմից, տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով կամ տարբեր հարկերի գանձման իրավունքով են պատկանել Ս. Թադևի վանքին: Վանքի կալվածքների մասին առատ տվյալներ են պահպանվել հայերեն ու պարսկերեն վավերագրերում, ինչպես նաև հայոց ձեռագրերի հիշատակարաններում:

Դեռևս հնագույն ժամանակներից Ս. Թադևի վանքը իր բաժինն (ուսկկաթե<sup>26</sup>) է ունեցել Դարաքիլիսա գյուղի քյարիզից (ստորգետնյա ջրանցք), որ հաստատված է եղել 6 մասից 3-ի յավով:

Հայկական աղբյուրները սկսած 1656 թվականից մատնանշում են Վարազմակներում Ս. Թադևի վանքի ղեղարձակ կալվածքների գոյության վիճակը<sup>27</sup>: Մատենադարանի մի շարք կալվածագրերի բովանդակության համաձայն՝ 1663թ. գնվում ու Մակվի Ս. Թադևի վանքին վակ<sup>28</sup> է արվում Յոմրիդաշ գյուղի<sup>29</sup> 6 դանգ<sup>30</sup> մուլը, 1685/1686թթ.՝ Դարաքիլիսա գյուղի ամբողջովին<sup>31</sup>: 1680թթ. կազմված շարի<sup>32</sup> արձանագրությանը հաստատվում է ավելի վաղ շրջանում գնված Լուշիկ (Քեշիշիք) գյուղի վակֆային պատկանելությունը Թադևի վանքին<sup>33</sup>: Հայերեն մի քանի վա-

վերագրեր ևս վկայում են վանքի Նուշիկում ունեցած կալվածքների մասին<sup>34</sup>։ Նույն շրջանում կազմված մեկ այլ շար՝ ի արձանագրություն հաստատում է Շուրաք մագրայի<sup>35</sup> պատկանելությունը Ս. Թադեի առաջնորդ Սարգիս վանահորը<sup>36</sup>։

XVII դարի երկրորդ կեսին Ս. Թադեի կալվածքների մասին հաստուկ հոգ են տանում վանքի Իսահակ Մակվեցի և Սարգիս Կաֆայեցի առաջնորդները։ Նրանց նախաձեռնությամբ են գնվում վերը նշված կալվածքների մի մասը, նաև կազմվում համախոսականներ ի հաստատումն վանքին պատկանող կալվածքների։ 1679թ. կազմված հայերեն կալվածագրում քվարկվում ու հաստատվում են վանքի կալվածքները Նուշիկում, Վարազնակերտում ու Մակվում<sup>37</sup>։ Պարսկալեզու մեկ այլ համախոսական Մակվի, Չորսի, Սպանաստի ու Նոյի մի շարք հեղինակավոր անձանց ու պետական պաշտոնյաների անուններից հաստատում է, որ Մակվի մահալի Յոմրիդաշի Մուհամմադբենը, Ղարաքիլիսայի Քոնդեգբենը, Ռեյհանլուների Շուրաք և Դիբաքի Շամսիբենդ մագրայեները գնված լինելով Ղարաքիլիսայի Սարգիս ու Սահակ առաջնորդների հոգմից, օրինական կալվածագրերի հիման վրա պատկանում են նրանց<sup>38</sup>։

Կալվածագրերի հիման վրա հաստատվում են նաև վանքին պատկանող այգիների ու հողային կալվածքների գոյությունը Մակու<sup>39</sup> և Նոյ<sup>40</sup> քաղաքներում, Նոյի շրջանի Դիզա գյուղում<sup>41</sup>, «Կօհրօվանում»<sup>42</sup> և այլ վայրերում, որոնց անվանումները չեն նշվում<sup>43</sup>։

1824 թվականին Ս. Թադեի վանքի առաջնորդ Բարսեղ հայկապետը կազմում է վանքի Դեհիսարդանում, Նոյում և Բայազետում ունեցած կալվածքների ցուցակը։ Այդ ցուցակում հստակ նշվում են այդ շրջանում վանքի ենթակայության տակ գտնվող ութ հողային տարածքներ Դեհիսարդանում, Նոյ քաղաքում և նրա շրջակա «Քէնէլի, Յոնջալըխ» վայրերում<sup>44</sup>, ինչպես նաև նախկինում վանքին ենթակա, բայց այդ ժամանակներում արդեն վանքի տնօրինության տակից դուրս եկած կալվածքները Նոյի մոտ գտնվող «Փեռայ և Քէնէլխ» և Չորսի նահանգի «Տիզե» գյուղերում<sup>45</sup>։ Ցուցակից ակնհայտ է դառնում, որ վանքն ունեցել է մեկ տասնյակից ավելի տներ Նոյում ու Բայազետում, որոնք վարձով էին տրվում։

Ղարաքուլքի գյուղից հարկազանձումներ անելու իրավունքը Ս. Թադեի վանքին է շնորհվում 1814թ. թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանագրով<sup>46</sup> և հետագայում՝ XIX դարում, մի քանի անգամ վերահաստատվում այլ հրովարտակներով<sup>47</sup>։

Ընդհանրապես XIX դարի առաջին կեսում Միմեոն արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին Ս. Թադեի վանքը վերանորոգվում ու բարեկարգվում է՝ դառնալով Ատրպատականի Հայոց առաջնորդարանը<sup>48</sup>։ Ամենայն հավանականությամբ թագաժառանգ Աբաս Միրզան մտադիր էր Ատրպատականում ստեղծել նոր հոգևոր կենտրոն հայության համար ի հակադրություն Էջմիածնի, որը դարձել էր Ռուսաստանի ուժեղ ազդեցությամբ

յամ ուղղորդող մեկը: Վերանորոգման ընթացքում, որին լայն օժանդակություն էր ցուցաբերում Ատրպատականի կառավարիչ թագաժառանգ Աբաս Սիրզան, վանքի կենտրոնական ու արևմտյան պատերի սև քարերը վախարհիմվում են սպիտակով, իսկ նրա գլխավոր մուտքի վերևում պարսկերեն նասրասալիղով արձանագրվում է թագաժառանգի կողմից կատարված այդ կարևոր գործի մասին: Պահպանվել են Աբաս Սիրզայի հրամանագրերը՝ հրապարակված Ս. Թադեի վանքի առնչությամբ, որոնք վկայում են թագաժառանգի կողմից ինչպես վանքին ցուցաբերած նյութական օժանդակության<sup>49</sup>, այնպես էլ վանքի քառօրյա քանոն ուղղված այլ միջոցառումների ու հատուկ հոգածության մասին<sup>50</sup>:

Սույն հոդվածի շրջանակներում քարգմանաբար կներկայացվեն Մակվի Ս. Թադեի վանքի պատմությանը վերաբերող երեք անտիպ հրավարականներ:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի թղթապանակ 4-ի վավերագիր 118-ը Սեֆյան շահ Իսմայիլի 1516 թվականի հրովարտակն է՝ հրապարակված Մակվի Ս. Թադեի վանքի Ղարաբիլիսայի մագրայի ու նրա հակկարբի ճկատմամբ իրավունքների պաշտպանության նպատակով: Ի հաստատումն այս հրովարտակն էր հրապարակվել շահ Թահմասպի Ա-ի վերը նշված հրովարտակն, որն ընդգրկվել է Հ. Փափագյանի կազմած ժողովածուի մեջ որպես վավերագիր 16: Այն ամենայն հավանականությամբ Մատենադարանում ստացվել է Հ. Փափագյանի կազմած վերը նշված ատաջին պրակի հրատարակությունից ավելի ուշ, քանզի հակառակ դեպքում այն անկասկած կընդգրկվեր ժողովածուի մեջ:

Կաթողիկոսական դիվանի, թղթ. 4, վավերագիր 119-ը Սեֆյան շահ Սեֆի Ա-ի 1633 թվականի հրովարտակն է, տրված ի հաստատումն Աբտազի վանքին տրված նախորդ շահերի (Իսմայիլ Ա, Թահմասպ Ա և Աբաս Ա<sup>51</sup>) վերոհիշյալ հրովարտակներով նշվող իրավունքների: Այս հրովարտակում նշվում է նրա հրապարակման համար Նոր Ջուղայի հայ մեծահարուստ վաճառականներ Խոջա Նազարի և Խոջա Սաֆրազի կողմից արված միջնորդության մասին, մի հանգամանք, որ մատնանշում է Սպահանի հայ ազդեցիկ անձանց կարևոր դերը հայոց վանքերի իրավունքների պաշտպանության գործում: Հարկ է նշել, որ վերոհիշյալ Խոջա Նազարի անունը նշվում է նաև շահ Սեֆիի 1629 և 1631 թվականների հրովարտակներում, որոնցից առաջինը հրապարակվել էր Էջմիածինը տարեկան 100 թուման փիշքեշի պարտավորությունից ազատելու<sup>52</sup>, իսկ երկրորդը՝ Դարաշամբի Ստեփանոս Նախավկայի վանքից զանձվող հարկերի և վանքի վանահայրությունը Պետրոս վարդապետին հանձնելու կապակցությամբ<sup>53</sup>:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի երկու հրովարտակներ տրված են Ս. Թադեի վանքին Նադիր (1735-1747թթ.) և Իբրահիմ շահերի (1748 – 1749թթ.) անուններին<sup>54</sup>: Այս հրովարտակները հաստատ-

տում են Ս. Թադեի վանքի ազատված լինելը հարկերից և հրահանգում տեղական իշխանություններին իրանա-թուրքական սահմանագծին տեղի ունեցող անհանգստությունների ժամանակ վանքի հոգևորականներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերել: Այս հրովարտակները, որ հրապարակվել են առաջինը՝ 1743, իսկ երկրորդը՝ 1748 քվականներին, ունեն գրեթե նույն բովանդակությունը. այսինքն՝ Իբրահիմ շահի հրովարտակը հրապարակվել է ի հաստատումն Նադիր շահի հրովարտակի: Սակայն այս վավերագրերից առաջինը շահական հրովարտակի պատճենն է, իսկ երկրորդը՝ բնագիրը, որը մեզ է հասել ավելի լավ վիճակում, քան նախորդը: Այս պատճառով ստորև ներկայացնում ենք միայն շահ Իբրահիմի հրովարտակը:

Թարգմանություն

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 118  
բնագիր, մեծ. 19 x 42սմ, գիր՝ շիրասքե - դիվանի  
Հանուն ռոբրմած և գթառատ Ալլահի

Ո՛վ Մոհամմադ, ո՛վ Ալի  
Հաղթական Իսմայիլ Բահադուր,  
Սեր խոսքը.  
[Շահ Իսմայիլ Ա-ի կնիքը]

Օրեդս Կարապետ վանահայրը տեղեկացրեց, որ Արքավինի<sup>55</sup> ռայաթները<sup>56</sup> հողագործությանը են գրադվում Կարաքիլիսայի մագրայեում, որը իրենց օրինական մուլքն<sup>57</sup> է, քայց քսեհրայե<sup>58</sup> չեն վճարում: Ուստի կարգադրվեց, որպեսզի շար՝ին համապատասխան օրինական քահրայեն ... վճարեն խնդրարկուին: Նմանապես տեղեկացրեց, որ որպես Կարաքիլիսա մագրայեի հակկարե Արքավինի գետից նրան հատկացված է եղել վեց մասից երեքը: Մինչդեռ այժմ Արքավինի հողագործները շար՝ին ու ընդունված կարգին հակառակ խանգարում են հնուց հաստատված ձևով հակկարեի տնօրինմանը:

Ուստի կարգադրվեց, որպեսզի ըստ շար՝ի հին կարգով նշված մագրայեի հակկարեն հատկացվի և ըմբոստություն ու հակառակություն տեղի չունենա: Մակվի ու Չալլրանի<sup>59</sup> դագինները<sup>60</sup> պարտավոր են այս կապակցությամբ շար՝ին համապատասխան գործադրել և ոչ մեկին ըմբոստանալու հնարավորություն չտալ: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և շար՝ի ետքամբ առաջնորդվեն:

Գրվեց 922 քվականի զի դասդի ամսի 9-ին<sup>61</sup>:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 119,  
բնագիր, մեծ. 18 x 40սմ, գիր՝ ցասթապիտ - շիքասթե  
Իշխանություն Ալլահինն է:  
Շահ Իսմայիլը, թող արժանանա նա [աստծո] ողորմածությանը  
Իմ մեծ պապ շահ Թահմասպը, թող հողը նրա վրա թեթև լինի  
Իմ հայր շահը, թող Ալլահը նրա հոգին լուսավորի  
[Շահ Մեֆի Ա-ի կնիքը]

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.  
Ինչպես քրիստոնյա մեծատուններից լավագույն [Նոր] Ջուղայի  
Նոջա Նագարն ու Սաֆրագը տեղեկացրեցին, Վարաքիլիսա մագրային,  
որի սահմաններն են Անգուրակի լեռնանցքը, Ղրիթուլաղը<sup>62</sup> և Հունաքի  
գերեզման[ոց]ը, որպես մուլք իրենց [վանքին] է պատկանում: [Նրանք]  
ներկայացրեցին դրախտաբնակ աշխարհակաղ Նորին Մեծության պար-  
տադիր գործադրության ենթակա փարվանչեն<sup>63</sup>, որ հրապարակվել էր ի  
հաստատումն իր նախնիներ նախկին քաղաքապետների հրովարտակների:  
Ըստ նրա՝ Արքավին գյուղի գետից նշված մագրայի հակկարեն հաս-  
տատված է վեցից երեք մաս[ի] չափով: Եվ [նրանք] խնդրեցին Նորին  
արքայական Մեծության ստորագրությունը: Ուստի կարգադրեցինք, որ-  
պեսզի այնպես, ինչպես, որ հին ժամանակներից մինչ այժմ հաստատ-  
ված ու ընդունված է եղել, նույն կարգով որոշված համարենք. Արքավին և  
այլ գյուղերի ռայաթներից ոչ մեկը ապօրինաբար նշված մագրայի հո-  
ղային մուլքերը մուտք չպետք է գործի, նրանց հաստկացված հակկարենի  
նկատմամբ հավակնություններ ունենա և հին կարգովանող խախտի:  
Քանի որ աշխարհակալ միսպետի հրամանագրում նշված է, որ հնուց ի  
վեր Վարիզ, Մահլազան և Վորուղ գյուղերի չրաղլըղը պատկանել է Վա-  
րաքիլիսային, ուստի թող Վարաշամբի ռայաթներն ու քեղխուղաները<sup>64</sup>  
ստնձգություններ չկատարեն և հին օրենքն ու կարգը չխախտեն: Այս-  
պիսով անհրաժեշտ է, որպեսզի նույն օրենքին համապատասխան վար-  
վեն, նրանց ունեցած և այս կապակցությամբ հրապարակված դրախ-  
տաբնակ Ջանշիտի փառքին արժանի Նորին Մեծություն շահի ու երկնա-  
յին դրախտում բնակվող բարեբախտ տիրակալի մինչ այժմ գործող  
հրամանագրի բովանդակությանը հակառակ չվարվեն: Նոյն և Սակվի  
օրային<sup>65</sup> հաքիմներն<sup>66</sup> ու քիուլդարները<sup>67</sup> թող զրվածին համապատաս-  
խան կարգադրված համարեն և նախկին հրամանագրերի բովանդա-  
կությունն ու հին կարգը զանց չառնեն: Եվ այս թող ընդունեն որպես  
խիստ կարգադրություն, նրան չհակառակվեն և ամեն տարի նոր հրա-  
մանագիր չպահանջեն:  
Գրվեց 1042 թվականի ռաջաբ ամսին<sup>68</sup>:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 131  
բնագիր, մեծ. 27.7 x 44սմ, գիր՝ մասթաալիտ – շիրասթե  
[Իբրահիմ շահի կնիքը]  
Օկա Աստված բացի Ալլահից  
Նրանց է իշխանությունն ու զորությունը

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.  
Քրիստոնյա քահանաներից ու վանականներից լավագույն Դա-  
րաքիլիսայի Սինաս<sup>69</sup> խալիֆայի<sup>70</sup> հանդեպ ունեցած շահական ողորմա-  
ծությունն ու անսահման զթարտությունը [հաշվի առնելով] նրա մվիր-  
վածությունն ու ծառայությունները, նաև այն, որ ըստ հանգուցյալ մեծ  
հորեղբոր, թող հողը նրա վրա թեթև լինի, և Իրանի ու Ռումի (Օսմանյան  
Թուրքիա) դրախտարճակ միասնությունների<sup>71</sup> բովանդակությ-  
յան, Դարաքիլիսա գյուղը եղել է հիշյալ վանքի վակֆը, իսկ գյուղի բնա-  
կիցները, լինելով նրա սպասավորները, մուսաֆ են եղել դիվանի մութա-  
վազջեհասթից<sup>72</sup>, Մեր արքայական Մեծությունը նույնպես կարգադրե-  
ցինք նրանց դիվանի<sup>73</sup> պարտավորություններից, ինչպիսիք են ջիզյան<sup>74</sup>,  
այլ մութավազջեհասթն ու սադերասթը<sup>75</sup>, ավարիզասթը<sup>76</sup>, չորանրեկի<sup>77</sup> և  
այլն, մուսաֆ ու մուսալլան<sup>78</sup> ճանաչել, որպեսզի իրենց հարկերը հիշյալ  
մուլքերի եկամտունների հետ ծախսեն ճշված վանքի ու նրա բնակիչների  
վրա: Բացի հիշյալ գյուղից, որտեղ էլ, որ այդ վանքի վակֆային մուլքերը  
գտնվելիս լինեն, նույն կարգով մուսաֆ ու մուսալլան հայտարարեցինք:  
Երևանի ամիրները<sup>79</sup> թույլ հիշյալ գյուղի ու ճշված վանքի այլ վակֆային  
մուլքերի հարկերը իրենց արվաթ-ե ջամից<sup>80</sup> հանեն և ոչ մի դիմար չպա-  
հանջեն: Սուրհանդակները, ճանապարհների հսկողներն ու հարկահա-  
վաքները թող վանքի առևտրական կամ այլ գործերով տարբեր կողմերը  
զնաջող-եկող սևագուլիներին ճանապարհին ու վիլայեթներում<sup>81</sup> չմեղեն:  
Քանի որ հիշյալ գյուղը գտնվում է Ռումի ու Քրդստանի սահմանագծի  
վրա, և հաճախ ավազակներն ու ավարառուները ռտնձգություններով  
մեղում են նրանց, ուստի Երևանի, Խոյի ու Գումրուլի հաքիմները թող  
նրանց մերխուժման ժամանակ [վանքին] անհրաժեշտ օգնություն զու-  
ցաբերեն: Վիլայեթների հաքիմները պետք է թույլ տան, որպեսզի նրանք  
միմյանց հետ ըստ իրենց սովորության ու կարգի վարվեն և այս կապակ-  
ցությամբ նրանց չմեղեն: Գնաջող-եկողներից թող առանց դատական  
հիմքի դիմար ու հացահատիկ չպահանջեն ու չանհանգստացնեն: Որ-  
տեղ էլ, որ այդ գյուղից ցրվածները լինեն, ոչ ոք չպետք է նրանց ետ քե-  
րելուն խոչընդոտի, այլ պետք է զաղթեցնի նրանց հին բնակավայրը, որ-  
պեսզի [այնտեղ] բնակվեն և հանգիստ գրադվեն հավիտենական պե-  
տության հարատևման համար աղոթելով: Այս թող ընդունեն որպես  
խիստ կարգապարտություն և այն իրենց պարտականությունը համարեն:  
Գրվեց 1161 թվականի սրբազան մուհարամ ամսին<sup>82</sup>:

Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 118

بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِیْمِ

یا محمدیا علی

الحکم الله


ابو العظفر اسمعیل بهادر سیوزو- یز

[مهر]

درین وقت فراید مرحاسیای معروض داشت که رعایا ارکوبین زراعت در  
مزرعة قراکلیسیاه که ملک شرعی متصرف فیه اوست می نمایند و بهرچه  
تربیه بدو زمینسانند بنابرین مقرر شد که حسب ششدرج بهرچه شرعی ...  
برای رساند و همچنین نمود که جماعه مزرعة قراکلیسیا از رودخانه  
ارکوبین از شش سهم سه سهم یاق معرر بوده و اکنون مزارعان ارکوبین  
بخلاف شرع و دستور معهود مزاحم جماعه قدیم مستمره انجا می شوند که  
بنابرین مقرر شد که بوجه شرع بدستور قدیم جماعه مزبوره مذکور را  
رسانند و تصرف و تداوم نورزند بعهده قضات ماکویه و حدود چالدران که  
درین باب ایراد شرعی نموده و مجال نمود احدی ندهند و قدغن دانند و  
محضر شرع را قنوه دانند.

تجدیداً فی ۹ شهر ذی قعدة سنة ۹۲۲.






Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քոթ. 4, վավերագիր 119  
الله، ملك، الله

شاه اسلام بن علي الرحمة الغفران  
جد پورگوارم شاه اسلام بن علي طاب تراه  
شاه بابام اتارالله برهانه

[مهر]

فرمان همايون شد آنگه چون زبدة الصواب المسيحية خواجه نظر و  
سرافراز جولاهي بمرض رسانيدند كه مزرعة را كاهن بيا محدود بحدود  
كدوك انكورك و قرح بون و مقبرة هناك از راه ملكيت تعلق پانچنان دارد و  
پروانچه مطامع نواب گيتي ستان هردوس مكان كه با مشاي فرانس ۱۷۱۷  
اجداد ماضيه همايون كه صادر گشته ابران نمودند مشتمل بر ۱۷۱۷  
مزرعه منكور از رودخانه قريه ارگوبن ان شين سهم سه سهم مقرر است و  
۱۷۱۷ اي امضا نواب هم ايون كردند پنايرين معزز فرموديم كه بدست  
كه از قديم الايام الی الآن مقرر و معمول بوده بهماندستور مقرر داشته  
احدي از رعایا قريه ارگوبن و غير ذلك مطلقا بغير حق و خلاف حساب در  
املاك اراضي محدوده مزرعه منكور مدخل نداشته پيرامون حقابه مقرر  
ايشان نگردد و از دستور سابق و قاعده قديم تجاوز ننمايد و چون در حكم  
نواب گيتي ستاني قيد است كه از قديم چراغق قريه فریز و مهنهين و قروق  
تعلق بقراكليسيا داشته ازان و رعایا دره شاملق دران مدخل نداشته از  
قاعده قديم و دستور سابق تجاوز ننمايد پنايرين مي بايد كه بهمانقاعده  
۱۷۱۷ از مضمون حكم اعليحضرت شاه جمجاه چنه مكاني و خاقان  
صاحبقران ايون اشياني كه درين نواب عز صدور يافته در دست داشته  
ند و الی غايه معمول بوده باشد تجاوز ننمايد حكم و توولداران الكا  
خوي و متخو ح... دستور مقرر داشته از مضامين احكام ماضيه و  
۱۷۱۷ در نگردد و درين باب مدغم داشته از فرموده خلف نوزند و  
هن ساله حكم ۱۷۱۷  
تحريرا في شهر رجب سنة ۱۰۴۲



Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 131


[մهر] بسم الله، سلام علی ابراهیم ۱۱۶۱

لا اله الا الله

اله اك، القوه الله

فرمان همايون شد آنکه بتاس شفعه شاهانه و مرحمت بیغایت خسروانه در باره زیده العسین و الزهینین مناس خلیفه قراکلیسیا و حسن اخلاص و خدمت گذاری او و نظر بمضامین ارقام نواب غفران مآب عم بزرگوارم طاب ثراه و سلاطین جنت مکین روم و ایران قریه قراکلیسیا وقف کلیسیای مزبور و ... قریه مذکوریه، اینکه خدمه آنجا می باشند از متوجهات دیوانی معاف می بوده اند نواب همايون ما نیز بدستور ایشان را از تکالیف دیوانی از قبول جزیه و سایر متوجهات و صادرات و عوارضات و چوپانپرگی و غیره معاف و مسام فرمودیم که متوجهات: خود را با منافع املاک مزبور ... کلیسیا ... بخور و ساکنین آن نمایند، و سوائی هریه مزبور هر جا که املاک، وقفی کلیسیای مزبور بوده باشند بهمان دستور معاف و مسام فرمودیم عمال ایروان متوجهات قریه مزبور و سایر متصرفی وقفی کلیسیای مذکور را از ابوابجمعی خود وضع نموده دیناری مطالبه نمایند و چنانچه از سیاه کلههان کلیسیای مزبور بجهت داد و ستد، و سایر امور باطراف و جواب آمد و شد نمایند جایباران و مستحقین و راهداران شوارح عرض راه و ولایات متعرض آنها نشوند و چون هریه مزبور در سرحد روم و کردستانات و اتم و اکثر اوقات اوباش و قطاعان طریق دست انداز بانها کرده ... میرسانند حکام ایروان و حوی و دنیلی در حین ورود آنها امداد و اعانت لازمه بعمل آورند و حکام ولایات گذارند که آنها برویه و دستور خود با یکدیگر ... کرده درینخصوص متعرض ایشان نشوند و متزددین بدون وجه دیوانی دیناری و حبه از ایشان مطالبه نکرده مزاحمه، نرساند و در هر جا که از متفرقه قریه مزبور بوده باشد احدی در باب خوجانیدن ... آنها نکرده خوجانیده روانه مکان اصلی خود نمایند که در مخزن قدیم خود ... و مرفه الحال بدعای دیوان دولت ابد مدت ایشان نمایند. دریه مواد از جوانب قدغن قزم دانسته و در جهان شناسند.

تحریراً فی شهر محرم الحرام سنه ۱۱۶۱



KRISTINE KOSTIKYAN

THE PERSIAN DOCUMENTS ON THE MONASTERY  
OF ST. THADDEUS IN MAKU

The article contains a short review of the present state of the study of Persian historical documents referring to the history of the monastery of St. Thaddeus the Apostle. The information of the Armenian and Persian historical documents represented by the author in the article, state of the belonging of the Mazrayehs of Qarakilisa, Yomridash, Dibak and Reyhanlu Villages in XVII-XVIII centuries to the monastery of St. Thaddeus, also of the existence of some land and other estates of the monastery in other villages and towns of Azerbaijan in Iran. The existence of some estates in Varaknakert and Nushik, now non-existent Armenian villages of Azerbaijan in Iran is evident from the content of several deeds of purchase. The right of the monastery to have the chiraqliq tax from the villages of Qorug, Mahlazan and Krcrets, confirmed by some royal decrees was often disputed by the monastery of St. Stepannos Nakhavka and granted to this monastery. The right of having the state taxes of Qaratulki Village was granted to the monastery in 1814 by the decree of crown prince Abbas Mirza and later, in XIX century, confirmed for several times by the decrees of other rules.

Author presents three unpublished Persian decrees referring to the history of the monastery issued by Safavid shahs Ismayil I in 1516 and Safi I in 1633, shah Ibrahim in 1748 with their Persian texts, Armenian translations and necessary commentaries in the article.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1942, էջ 457-500; Kleiss W., Das Kloster des Heiligen Thaddäus in Iranisch Aserbaïdjan, Sonderdruck aus Istanbul Mitteilungen, Tübingen, 1967 և այլն:
2. Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Aserbaïdjan in Iran, (Diploma Ingenieur Armen Haghazarian, Aachen, 1973:
3. Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, Երևան, 1956 վավ. 7, 16:
4. Մ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 254:
5. Մ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 8:
6. Խոսքն ամենայն հավանականությամբ հայոց կաթողիկոսների կոնդակներում ծամանակ առ ծամանակ Մ. Ստեփանոս Նախավկայի վանքի քեմի ու վիճակի մեջ հիշատակվող «Դորոխ, Մահազան և Կրեթեց» գյուղերի մասին է (Հ. Ոսկյան, շվ. աշխ., մաս Բ, էջ 607, 639):
7. Չղրաղյղ - «Բառացի» գրասվտություն համար», եկեղեցիների համար գանձվող մոմի դրամ» (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 118):
8. Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 62:
9. Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 62, 93:

10. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 119; Հ. Ռ. Փափագլան, նշվ. աշխ., պրակ I, վավ. 16; Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, doc. 11:
11. Տես Մեղրիսի կաթողիկոսի (1593-1599, 1600-1624), Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսի 1712թ. կոնդակները (Հ. Ռակյան, նշվ. աշխ., էջ 607, 639); նաև այլ կոնդակներ՝ ՄՄ, թղթ. 244, վավ. 248, 254, 260 և այլն; նաև շահ Մուրթան Հուսեյնի 1696թ. հրովարտակը (Զ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, վավ. 58, էջ 136):
12. Աղբյուրներում Մզրա անվամբ քննակալարի մասին որևէ հիշատակության չենք հանդիպել: Ամենայն հավանականությամբ սա մազրայի քառի աղվադված ձևն է, որը հանդիսանալով հասցանառիկի հողը կամ մայր գյուղին պատկանող գյուղակը նշվում է Ս. Թադիին պատկանող մյուս գյուղերի հետ, ինչպես օրինակ Ղարաքիլիսայի մազրայի, Յոմրիդաշի մազրային և այլն:
13. Յոմրուդաշը կամ Յոմրիդաշը Մակվի մահանգի (շահրեսթան) Սիլյահ Չեշմե գավառի (ռախշ) Բարաջիքի շրջանի (դեհեսթան) գյուղերից է, որ գտնվում է Սիլյահ Չեշմեից 26կմ դեպի հյուսիս արևելք (ՏՔՄ Կ. 1330, «ان آذربایجان», 564):  
(فرهنگ جغرافیائی ایران, جلد 4, استان آذربایجان, ایران):
14. Ղարաքիլիսա գյուղը Ս. Թադիի վանքին կից գտնվող գյուղն է, որը ներկայումս մտնում է Մակվի մահանգի Սիլյահ Չեշմե գավառի Չաղդրանի շրջանի մեջ, Սիլյահ Չեշմեից 15 կմ դեպի հյուսիս-արևելք (ՔՔՔ Կ. 1330):  
(فرهنگ جغرافیائی ایران, جلد 4, استان آذربایجان, ایران):
15. Ամենայն հավանականությամբ խոսքը XX դարում Մակվի մահանգի Սիլյահ Չեշմե գավառի Չաղդրանի շրջանի մեջ մտնող Դիպակ (دیبک) քննակալարի մասին է, որը գտնվում է Սիլյահ Չեշմեից 20 կմ դեպի հյուսիս արևելք (ՔՔՔ Կ. 1330):  
(فرهنگ جغرافیائی ایران, جلد 4, استان آذربایجان, ایران):
16. Աղբյուրը - գյուղ Մակվա խանությունում: Գտնվում է Մակու քաղաքից 46 կմ հարավ, Կոռուրի ավազանի մի առվակի ափին, քարձրադիր ու գեղատեսիլ վայրում (Հայաստանի և հարակից շրջանների քառարան, հ. I, Երևան, 1986, էջ 166):
17. XX դարում այս գյուղը նշվում է Մակվի մահանգի Սիլյահ Չեշմե գավառի Բարաջիքի գյուղերի քվում, Սիլյահ Չեշմեից 20 կմ դեպի արևելք (ՔՔՔ Կ. 1330):  
(فرهنگ جغرافیائی ایران, جلد 4, استان آذربایجان, ایران):
18. Սոմարուզղ (կամ Սոմարուզաղ - سوماروچ) քննակալարը XX դարում նշվում է Մակվի Սիլյահ Չեշմե գավառի Բարաջիքի շրջանի վարչական տարածքում՝ Սիլյահ Չեշմեից 22.5 կմ դեպի հարավ-արևելք (ՔՔՔ Կ. 1330):  
(فرهنگ جغرافیائی ایران, جلد 4, استان آذربایجان, ایران):
19. Աղբյուրը, գյուղ Մակվա խանությունում: Գտնվում է Մակու քաղաքից 33 - 34 կմ հարավ-արևելք, Ջանգիմարի ավազանի մի գետակի ափին, մեղ հովտում (Հայաստանի և հարակից շրջանների քառարան, հ. I, էջ 170):
20. Մահլազան - գյուղ Իրանի Ատրպատականի խոյ գավառում, Մակուի գավառի սահմանի մոտ: Անցյալում եղել է մեծ ավան: Հիշատակված է «Ցուցակ ձեռագրաց»-ում (էջ 189): 1890-ական թթ. ուներ 20-30 տուն հայ

- քնակիչ, XVII դարի մի կիսովից եկեղեցի և հին գերեզմանատուն: Այստեղի հայ բնակչությունը 1828-29թթ. գաղթել է Նախիջևանի գավառը և այժմյան ՀԱՍՀ Միսիսի շրջանի Մալվադ գավառը (Հայաստանի և հարակից շրջանների քառաբան, հ. 3, էջ 653):
21. Դոդոնով – Մակվի խամոթյունում, Ս. Թաղիի վանքից մոտ 15 կմ հեռավորությամբ (Հայաստանի և հարակից շրջանների քառաբան, հ. 3, էջ 578):
  22. Խոսքը ամենայն հավանականությամբ Գոհարան (կամ Կոհրովան) գյուղի մասին է, որը XX դարում նշվում է Խոյի նահանգի էջվոլի գավառում, Խոյից 5.5 կմ դեպի հյուսիս-արևելք (فردوسی، جلد ۴، استان آذربایجان، ۱۳۳۰ م، ۲۶۹): Պահպանվել է նաև մի կալվածագիր, ըստ որի 1741 թ. Ս. Թաղիի վանքը գնել է մեկ կտոր այգի Գոհարան գյուղում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, քրթ. 4, վավ. 40):
  23. Չորս - Ավան, գյուղաքաղաք, քերդական Իրանի Ատրպատական նահանգում, Խոյի գավառում, Չորս գավառակի կենտրոնը, Խոյ քաղաքից 37 կմ հյուսիս: XIX դարի սկզբներին ուներ 200 տուն պարսիկ և հայ բնակիչ (Հայաստանի և հարակից շրջանների քառաբան, հ. 4, Երևան, 1998, էջ 271):
  24. XX դարում Ռեյխանլու անվամբ բնակավայր է նշվում Մակվի նահանգի Միլլահ Չեչմե գավառի Չաղրանի շրջանում, Միլլահ Չեչմեից 9 կմ դեպի հյուսիս արևելք (فردوسی، جلد ۴، استان آذربایجان، ۱۳۳۰ م، ۲۴۹):
  25. Ֆրանգեան, Ատրպատական, Թիֆլիս, 1905, էջ 30 - 31:
  26. Հակկարե - «Այսպես էր կոչվում ջրի այն բաժինը, որ հատկացվում էր տվյալ հողամասի, հանդի, այգու և, առհասարակ, որևէ մշակելի տարածության ոռոգման համար» (Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, էջ 111):
  27. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, քրթ. 242, վավ. 138, 139, 145; Ժամանակագրություն, ՄՄ, ձեռ. 8233, էջ 259:
  28. Կակֆ - کف - Բառացի նշանակում է «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին մվրված՝ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, մվրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այնուհետև ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսիք ազատվում էին պետական հարկերից (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 120):
  29. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, քրթ. 4, վավ. 120, 121:
  30. Դանգ - دانگ - Կալվածատիրական՝ մուլքային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր «մուլք», դիվանում էր որպես մի ամբողջություն և, ծանրության մասը միավոր «միսդար»-ի նման բաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլքերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր «շեշդանգ» - «شش دانگ» (վեց դանգ), այնպես նաև մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որ անվանվում էր «բասուջ» (Հ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ II, Երևան, 1959, էջ 213):



31. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 127:
32. Շար՝ - شرح - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները (Վ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, էջ 117):
33. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 125:
34. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 139, 143:
35. Մազրայի - مزعمه - հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին:
36. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 134:
37. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 139:
38. Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ք, վավ. 189:
39. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 144:
40. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 161:
41. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 129:
42. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 40, թղթ. 242, վավ. 159:
43. Կան այնպիսի հայերեն կալվածագրեր, որոնցում նշված չէ կալվածքի գտնվելու վայրը, այլ նշվում է միայն նվիրատուի անունն ու կալվածքի շնույթը. հողային տարածք, տուն կամ այլ անշարժ գույք (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 140, 150, 155, 172):
44. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 492ա, էջ 1:
45. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 50, վավ. 492ա, էջ 2:
46. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 138:
47. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 139, 140, 149; նաև՝ Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaïdjan in Iran, doc. 14:
48. Ֆրանգեան, նշվ. աշխ., էջ 30:
49. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 137:
50. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 135, 136, 143:
51. Շահ Մրաս Ա-ի ամունից 1611թ. հրապարակվել է հրովարտակ, որը վերահաստատում է Դարաքիլիսա մազրայի վանքի կալվածք լինելը, նաև Դարիզ, Մախազան, ու Դարուզ գյուղերի շրջափակի պատկանելությունը Ս. Թադիի վանքին և արգելում Դարաքամրի Մաղարդա վանքի հոգևորականների ռոնձգությունները դրա նկատմամբ (Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaïdjan in Iran, Doc. 11, հղում՝ «Հուր» ամսագիր, տետր 3-4, 1971):
52. Վ. Գ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ 1, վավ. 19:
53. Նույն տեղում, վավ. 20:
54. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 41, 131:
55. Արքային կամ Արքային (Արքուն) անունով մի գյուղ ներկայումս նշվում է Մակվի մարզի (شهرستان) Սիլահ Չեշմեի գավառի (بخش) գյուղերի թվում, Սիլահ Չեշմեից 19 կմ դեպի հարավ-արևելք (ص ۱۳۴, استان آذربایجان, جلد ۴, استان آذربایجان, جلد ۴, شهرستان ماکو):
56. Ույաթ - جمعیت - Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով:



ատանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր երթերի ու զորաշարժերի ժամանակ հատուկ թմրուկներով թմրկահարել (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 123):

66. Հարիմ - کاهن - Գավառապետ, քաղաքացիական դատավոր (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 111):
67. Թիուղար - تیولدار - Այսպես էին կոչվում այն քարձրաստիճան զինվորականները, պետական պաշտոնյաներն ու ամիրները, որոնք ռոմիկի դիմաց ստանում էին շրջանից, գյուղերից կամ ատանձին գյուղից գանձվող ամբողջ պետական հարկերի կամ նրանց մի մասի գանձման իրավունքը, որպես «թիուլ»: Խոշոր թիուղարներն իրենց տրված օրինակների բնակչության նկատմամբ, թիուղարության ժամանակաշրջանում հաճախ ունենում էին նաև վարչական ու դատական իրավունք (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 109):
68. 1633 թվականի հունվարի 12 - փետրվարի 11:
69. Մինաս վարդապետը Արտազի վանքի նախկուպոս էր օրհնվել Էջմիածնում 1741 թ. ապրիլին (Ժամանակագրություն, ՄՄ, ձեռ. 8233, էջ 78ր): Ամենայն հավանականությամբ այս Մինաս վարդապետին է վերաբերում Ս. Թադևոս Առաքյալի տապանաբարերից հետևյալի գրությունը. «Տասպան սա է եղևելի Մինաս անուն վարդապետի, որ յաջորդեսց տանս Մեծին Ներգաղմանց ժամանակի. ծառայ էր սա տեսում Մեծի Չաքարիս վարդապետի ՌՄ» (1751) (Das Armenische Thaddäuskloster in Der Provinz West Azerbaïdjan in Iran, p. 198):
70. Խալիֆա - خلیفه - Իրանում XVI - XIX դարերում խալիֆա էին անվանում հայր կաթողիկոսներին, համարելով նրանց քրիստոնյաների մարգարեի՝ Քրիստոսի հաջորդը: Այդ տիտղոսով մեծարվում էին նաև թեմական առաջնորդները և նույնիսկ վանքերի վանահայրերը (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 220):
71. Ռաղամ - راقم - Պաշտոնական գրություն, քաղաքական հրովարտակ (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 119):
72. Մութավաջջեհաթ - متوجهات - կամ վջուհաթ - «վաջի - «ջ»: Այս անվան տակ հասկացվում էին առհասարակ այն բոլոր հարկերը, որոնք գանձվում էին կանխիկ դրամով: Արքայությունում հանդիպում է նաև «թավաջջեհաթ - توجهات» ձևով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 121):
73. Դիվան - دیوان - Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա քարձրագույն օրգանի իմաստով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 108):
74. Ջիզյա - جزیه - Ոչ մուսուլման ռայաթներից (քրիստոնյաներ և հրեաներ) գանձվող գլխահարկ, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս աշխատունակ տղամարդուց: Յուրաքանչյուր գյուղից գանձվող ջիզյան հաշվված էր և ընդհանուր գումարով հարկային մատյաններում գրանցված՝ տվյալ գյուղական համայնքի անունով (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 118):
75. Սադիրաթ - صادرات - արտակարգ հարկեր:

76. Ավարիզաթ - عوارضات - Այս տերմինի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը ևս շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 105):
77. Չորանրկի - چورانه - Տերմինը տրված է տեղական քյուրթական արտասանությամբ, պարսկական արտասանությամբ պետք է կարդալ «չուփանրեկի»: Սա մեծ մասամբ կամխիկ դրամով գանձվող այն հարկն էր, որ գանձվում էր մանր եղջերավոր անասուններից (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 228):
78. Մուաֆ և Մուսալլամ - مضاف، مضاف - համանիշներ. Հարկերից ազատված, հարկային իմունիտետ վայելող. գործածված է ինչպես անհատների, այնպես նաև օբյեկտների վերաբերյալ (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 116):
79. Ամիլ - اميل - Դրանք այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցամաքներն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այնմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 104):
80. Արվար-ի ջամ - ارباب جمع - Այսպես կամ միայն «ջամ» - جمع էր կոչվում հարկերի հաշվառման այն ժևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին քերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում որքան հարկ պետք է վճարի և դրանից որքանը ո՞ր հարկի հաշվից (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 103):
81. Վիլայեթ - ولايت - Երկիր, երկրամաս, նահանգ: Արդյունքներում և վավերագրերում գործածվում է փոփոխակի իմաստով: Երբեմն «վիլայեթ» անվան տակ հասկացվում էր մի ամբողջ երկիր, երբեմն ընդարձակ նահանգ, իսկ երբեմն նույնիսկ մեծ գավառ (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 121):
82. 1748թ. հունվարի 2 - փետրվարի 1:

ՄԱՄՎԵԼ ՄՈՒԲԱՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՈՒ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ԱՂԲՅՈՒՐ\*

«Աղետների յուշագիրը» օրագրության հեղինակ Հայկ Տեր-Աստվածատրյանի և անվանի հայագետ-թարգմանիչ Թադ. Ավդալբեգյանի ծանոթության ու ունեցած շվտմաների վերաբերյալ կենսագրական տեղեկություններ չունենք, քայց մի քանի կողմնակի իրողություններ կարծեք քե հավաստում են այդ Թադ. Ավդալբեգյանը Էջմիածնի Գեորգյան ճեմարան է ընդունվել 1895թ., իսկ Հ. Տեր-Աստվածատրյանը 1904թ. հրատարակած «Բառարան հայ կենսագրութեանց» գրքի առաջաբանում ասում է, որ նման աշխատանք ձեռնարկելու միտքը ինքը հղացել է 1896 թվականից, երբ ուսանում էր հիշյալ ճեմարանում: Երկրորդ պարագան իրենց գործունեության առաջին տարիներին փաստորեն նույնական խորագրեր ունեցող աշխատությունների հրատարակումն է. և հիրավի՝ Հ. Տեր-Աստվածատրյանի «Ճաշատուր Աբովյան» /1905, 30 էջ/ և «Միքայել Նալբանդյանց» /1908, 30 էջ/ փոքրածավալ մենագրությունների դիմաց այդ իսկ զեմբերին վերաբերող հետազոտություններ է հրատարակել նաև Թադ. Ավդալբեգյանը՝ «Ճաշատուր Աբովյան. գրական-պատմական վերլուծություն» /1913թ./ և «Միքայել Նալբանդյան. գրական-պատմական վերլուծություն» /1913թ./, «Հանգույցի լուծումը. Միքայել Նալբանդյանի աշխարհայացքի բնորոշման խնդրի շուրջը» /1914թ./:

\* Դասակից սաների ընդհանուր հետաքրքրությունները ձևավորվում են նրանց ուսուցիչների ներշնչումներով, իսկ 1894-1899 թվականներին ճեմարանի տեսչությունը վարում էր հայագիտական հրատարակություններով քաջ հայտնի Կարապետ Կոստանյանը, որը Ե. Տեր-Միմասյանի վկայությամբ «կազմել էր այն ժամանակվա պայմաններում մի լավագույն ուսուցչական խումբ, որի անդամներն էին հայտնի գիտնականներ Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին Հովսեփյանը, քանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, հռչակավոր մանկավարժ Սեդրակ Մանդլինյանը, հանճարեղ երաժիշտ Կոմիտասը, Գևորգյանիսյան իր ու-

\* Սկիզբը տես «Մեթոմվոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Երևան 2004, էջ 226-240:

սումն ավարտած Նիկ. Զարամյանը, Մանուկ Աբեղյանը, (վերջին տարում), հրապարակախոս և գրականագետ Միմաս Բերբերյանը, մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչ Պետրոս Տիգրանյանը, հմուտ գրաբարագետ Սեթ Հարությունյանը, պատմության և գերմաներենի դասատու քանասեր Ստեփան Կանայանը և ուրիշներ»<sup>\*\*</sup> :

Հայկ Տեր-Աստվածատրյանի հետաքրքրություններն և հմտությունները կերպավորվել են այս միջավայրում և այս երևիքների հայացքի ներքո, ուստի ստորև բերվող նրա հրապարակումների ցանկը լիովին պատճառաբանված է ու հասկանալի.

1. Չան-գիլյում: 600 տուն յառաջաբանով և ծանօթություններով, ժողովեց՝ Հայկ Տեր-Աստվածատրեան, Պարիս, 1903, 42 էջ:
  2. Բառարան հայ կենսագրությանց. 1401-1904, պրակ Ա, Թիֆլիս, 1904, 181 էջ:
  3. Խաչատուր Աբովեան, Տիֆլիս, 1905, 30 էջ:
  4. Հայ վաճառականությունը Ռուսիայում. պատմական տեսություն վավերաբոլորով, Է-ՇԸ դար, Պարիս, 1906, 54 էջ:
  5. Սիքայել Նալբանդեանց, Թիֆլիս, 1908, 30 էջ:
  6. Նախապատմական կեանք կամ նախնի դարերի մարդը, Թիֆլիս, 1908, 32 էջ:
  7. Ուրարտու և հայերի հայրենիքը քարտեզով, Թիֆլիս, 1908, 32 էջ:
  8. Համառոտ Հայոց պատմություն /3-րդ տպագրություն/: Սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1909, 227 էջ:
  9. Դասագիրք եսպերանտո /միջազգային/ լեզուի, Թիֆլիս, 1909, 64 էջ:
- Չենք կարծում, թե քվարկածով ավարտվում են «Աղետների յուշագիրք» գրելուց առաջ Հ. Տեր-Աստվածատրյանի ունեցած հրապարակումները, քայց նրա պատրաստության ու հետաքրքրությունների շրջանակը պարզելու միանգամայն զոհացուցիչ պատկեր են ներկայացնում: Ամենից առաջ վկայված ենք տեսնում ազգային հիմ ու նոր պատմությանը, գրականությանը ու քանարկեստով զբաղվելու նրա մղումը, իսկ այդ նշանակում է, թե հուշագրության էջերում եղած նրա գնահատություններն ու ամփոփումները սուկ օրվա անցուղարձից կատարված եզրակացություններ չեն: Հայկ Տեր-Աստվածատրյանը հրաշալի գիտե, թե իրողության գրառած զարգացումները պատմականորեն ինչ կեցվածքի ու հարաբերակցության ծնունդ են և իրենցով ինչ ապագա են պայմանավորում մայր ժողովրդին: Ի դեպ, դեռ ուսանողական տարիներից նա հետամուտ է դեպքերի ու հանգամանքների, ազգային արժեքների վերկուսակցական գնահատությանը: «... ես առհասարակ ինձ, - գրում է նա «Բառարան հայ կենսագրությանց» առաջաբանում, - հեռու եմ պահել

<sup>\*\*</sup> Երվանդ Տեր-Մինասյան, հուշեր իմ կյանքից, Երևան, 2005, էջ 35:

դատություններից, կուսակցություններից և աշխատել են տալ այն բոլոր մանրամասները, որ այս կամ այն աղբյուրի միջոցով հասել է ինձ» (էջ Ե): Քիչ անց նորից հիշեցնում է. «... կրկնում եմ, որ ես մտադիր եմ այս գործն շարունակելու առանց կուսակցությունների խտրության և ամեն մի գործունյա մարդու համար գրելու այն, ինչ որ ինքն է» (էջ Ե):

Մեր հեղինակը այդպես կարող էր վարվել և իրոք էլ կեցվածքը չի փոխել մատենագրության պատմության հարցեր արծարծելիս, բայց հուշագրության շարադրության տարիներին գրեթե ամենաբարձր այդ կեցվածքը անխախտ պահելը: Նախ՝ կուսակցական մտեցումների տարբերությունները որոշակի թուլացնում էին միասնականություն պահանջվող վճռականությունը, իսկ օրակարգ եկած խնդիրները ծայրահեղ բախտորոշ էին ցեղասպանություն ապրած ժողովրդի մնացորդացը ինքնակա գոյություն ապահովելու համար: Դեպքերի ըմբռնումը ըմբռնելու և իր մասնակցությունը բերելու շահագրգռությունը ստիպել է նրան եղած ազգային կուսակցություններից նախընտրելի համարել ժողովրդական ամուն և սկզբունք որդեգրածը, անդամակցել նրան և մույնիսկ որոշ դերակատարություն ունենալ:

Ստորև ներկայացվող դրվագը վերաբերում է Այսրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչների միմյանց համդեպ ունեցած վերաբերումներին ու մտայնություններին և ապա՝ թուրքերի հետ վարած քանակ-ցություններում այդ ամենի դրսևորումներին: Հ. Տեր-Աստվածատրյանը վերլուծումների մեջ բավական զուսպ է, ուստի հաճախ գերադասում է ժամանակագրի սկզբունքով ներկայացնել իրար հաջորդող դեպքերը, որոնց իմացությունը այսօր մեծապես լրացնում է մեր պատկերացումները շուրջ հարյուրամյա անցյալի վերաբերմամբ: Կարելի է և ավելի մասնորոշումներ համոզվում ես, որ այն ժամանակ ձևավորված կողմնորոշումներն ու մտայնությունները էական վտիտխություն չեն կրել և այսօր էլ իբրև գործոն աշխատում են:

#### 7 մարտի

*Պատուիրակությունը.* Տրապիզոն 14 մարտի (ն. տ. և ըստ հ. տ. 1/III). - «Օսմանեան կայսերական կառավարութեան պատուիրակութիւնը պատիւ ունի յայտարարել, որ իր կառավարութիւնն անկեղծօրէն տրամադիր է բարի հարևանական յարաբերութիւններ հաստատել Անդրկովկասում կազմակերպուող հանրապետութիւններին հետ:

Օսմանեան պատուիրակութիւնը խնդրում է Անդրկովկասեան պատուիրակութեանը՝ ճշգրիտ յայտարարութիւններ անել յիշեալ հանրապետութեան եութեան, ձևի, քաղաքական ու վարչական կազմութեան մասին և հարցնում է, թէ այդ վերջինը կատարե՞լ է պետութեան կազմութեան համար միջազգային իրաւունքով պահանջուող պայմանները:

*Անդրկովկասի պատուիրակութիւնը պատասխանել է՝*

«Անդրկովկասեան Սէյմի պատուիրակութիւնը պատիւ ունի հետևեալ յայտարարութիւն անել՝ մարտի 14-ին օսմանեան կառավարութեան պատուիրակութեան կողմից արուած հարցումին:

Անդրկովկասի կառավարութեան եութեան, ձևի և քաղաքական վարչական կազմակերպման հարցը հերթի է դրուած՝ նրան լուծելու հեղինակատր միակ մարմնի՝ Անդրկովկասեան Սէյմի կողմից, որ ստեղծուած է ընտրական ընդհանուր իրաւունքի հիման վրայ ժողովուրդների կամքի ազատ արտայայտութեամբ: Բոլշևիկեան յեղաշրջման թուլից սկսած (27 հոկտ. 1917թ. հ. տ.) Անդրկովկասի տերրիտորիայի վրայ դադարեց ռուսական կենդրոնական իշխանութեան գործունէութիւնը և մի նոր անկախ կառավարութիւն յատաջ եկաւ, որ այժմ պատասխանատու է Սէյմի առաջ:

Անդրկովկասի այդ կառավարութիւնը մտաւ միջազգային յարաբերութիւնների շրջանակի մէջ՝ ընդունելով Օսմանեան կառավարութեան առաջարկը նրան հետ հաշտութիւն կնքելու անկախ բանակցութիւններ մղելու մասին:

Յետագայում Սէյմն ու Անդրկովկասեան կառավարութիւնը մի նոր քայլ արին այդ ուղղութեամբ, պատերազմող պետութիւնների արտաքին գործերի միջխտրութիւններին բողոքի հետագիր ուղղելով Բրեստ-Լիտովսկի հաշտութեան դէմ, Անդրկովկասին վերաբերող մասում առանց իրենց գիտութեան և հասանութեան կնքուած պայմանագիրը զուրկ համարեցին միջազգային իրաւունքի տեսակետից որևէ ճշմանկութիւնից և ոչ-պարտադիր իրենց համար:

Տրասպիզոնի ներկայ հաշտութեան խորհրդակցութիւնը նոյնպէս միջազգային իրաւական կեանքի մի ակտ է: Այդ կերպով, Անդրկովկասը փաստօրէն մի պետութիւն է հանդիսանում, քէև իր անկախութեան մասին պետութիւններին պաշտօնական հաղորդագրութիւն չէ արել:

Անդրկովկասեան պատուիրակութիւնը մեծ գոհունակութեամբ է նկատում Օսմանեան կառավարութեան անկեղծ մտադրութիւնը՝ թխրքիայի և Անդրկովկասի միջև բարի հարևանութեան յարաբերութիւններ հաստատելու մասին և կատարեալ յոյս է յայտնում խորհրդակցութեան ցանկալի արդիւնքի մասին»:

*Հւց.* - Հացի պակասութիւնն օրեցօր զգալի է դառնում, արդէն բերքերի մէջ գրում են, որ Պարենատրման կոմիտէն ուզում է գրուանքան դարձնել 96 կոպ:

*Սարիղամիշում*, մարտի 5-ին յայտարարուած է պատերազմական դրութիւն գններալ Օդիշիլիճէի հրամանով:

*Գ.նն. Օդիշիլիճէ.* - Խօսում են, որ Էրզրումի գրատունը հետևանք է գններալ Օդիշիլիճէի դաւերի, նա հրաման է արձակել, որ մեր զօրքերը քաշուեն դէպի պետական սահմանները, որով խտովութեան սերմեր է ցանկ Էրզրումի զօրամասի մէջ, որը երկսի է բաժանուել՝ ետ քաշուող-



ներ և ետ չբաշտողներ, որի հետևանքն եղել է և Անդրանիկի կենսաբի դեմ կատարած մահափորձը: Միտի հայեր, մենք վրացիների հետ երբէք փփառ եփել չենք կարող ...

**Արդահան.** - Մահմեդականները (տեղացիները) գրաւելով Արդահանը, քրդերի հետ միասին մախապատրաստական գործողութիւններ են սկսել Կարսը գրաւելու համար, ուր դիմում են նրանք մեծ մասսաներով: Կարսից յարձակողներն ղեկ են առնելու հայ-յուճական մի զորախումբ պատերազմական կատարելա պատրաստութեամբ:

**Բաթում և Մալաթիա.** - Սև ծովի մալաթիայի այն մասը, որ կանգնած էր Բաթումի մահաճակատում, բոլորիկ մալաթիայի տրամադրութեան տակ լինելով, մալաթիաներն ուզեցել են վաճառել Թիւրքիային, սակայն այդ հասնելով Բաթումի կառավարութեան ակամօք, 5-ին մարտի առաւօտեան 4-5 ժամին նրանց շրջապատել են և քննաօթսւյին մարտից յետոյ մի շոգեմաւ ծովատոյգ անելով՝ մնացածները գրաւել են և բոլոր մալաթիաներին ձերբակալել:

**Կարս-**ից հետագում են, որ շրջանը լցուած է թուրք-թաթար, թուրք և քուրդ հրոսակախմբերով, որոնց շնորհիւ բոլոր ճանապարհները փակուած են և կտրուած հետագոթելիքը, այնպէս որ ոչ մի տեղեկութիւն չկայ շրջանից: Մերդեմնիկում կռիւ է տեղի ունենում, իսկ Օլթու դրութիւնն անյայտ է:

**Արդանուջը** գրաւուած է թիւրք զօրքերով, քաղաքը պաշտպանող յունական զօրամասը գերի է վերցրած:

**Անդրանիկը** հրաժարական է ներկայացրել:  
**Հայաստանի Ապահովութեան խորհուրդն** ամեն տեղ հետագրել է հետևեալ շրջաբերականը. «Էրզրումը թողնուած է, այդ հանգամանքը բացասական ազդեցութիւն չպէտք է գործէ հայրենիքը պաշտպանելու գործի վրայ: Լիովին քաւարար ոյժեր կան գործը շարունակելու և դրութիւնը կանոնաւորելու, ուստի առաջարկում ենք ձեզ՝ կրկնապատիկ եռանդով շարունակել աշխատանքը, կատարելապէս համոզուած, որ մեր նպատակը կիրագործուի»:

**Կառավարութիւն.** - Անդրկովկասեան կառավարութեան մէջ մեծշէկները ստանում են 5 տեղ, մուսավաթը՝ 4, դաշնակցութիւնը՝ 3 և սօցիալ յեղափոխականները՝ 2, 1-ական պատգամատու ունեցող կուսակցութիւններին բոլորովին տեղ չի տրուած:

**Այսպիսայի ու Արաբումանի** բոլոր ճանապարհները բռնուած են մահմեդական արագակախմբերով, որոնք թալանում են, տկտրացնում ամենքին, իսկ պատահող հայերին սպանում:

**Դարպազեագի** հայերը նոյն դրութեան մէջ են, ամբողջ գաւառը մնացել է մահմեդական արագակախմբերի ձեռքին:

**Մէլ.** - Մարտի 5-ի նիստը պատմական նիստ էր և այդտեղ արդէն պարզուեց, որ բոլոր կուսակցութիւնները համարեա միաբերան մեղադ-

քում են մանեղականներին իրրև երկիրն անարխիայի մասնողների, որտեղ և գլխավոր թելը Արդանանի շրջանում կատարում աներեստ-թիւններն են, որից յետոյ քաղաքը գրասել են ոչ թէ թիւրք կանոնատր գորքերը, այլ ռուսահպատակ մանեղականները: Մանեղական պատ-գամատրների լրբութիւնն այնտեղ է հասել, որ իրենց կազմակերպած ա-լազակախմբերի ու կանոնատր անարխիայի թելը թողնելով պահանջում են պաշտպանել մանեղականներին յարձակումներից:

*Մարտի 3-ին Թիֆլիսում* բացուեցաւ Հայ ժողովրդական կուսակ-ցութեան քաղաքական Ակումբը: Խօսել է Սիքայել Պապաջանեանցը:

**8 մարտի**

*Քարվանսարայից* 6 մարտի հեռագրում են. «Փետրուարի 8-ին Շամշադնի շրջանի Չիմար գիւղից Ղարաբաղի կողմը գնացած հայ զի-նուտրները, թուով 54 հոգի, Ջիղդախան գիւղի և Չեզամ գետի միջև զինա-թափ են արուած բռնորը և մորթուած թիւրքերի կողմից»:

*Հայ-պարսկական յարաբերութիւնները.* Թիֆլիսի թիւրքերի թաղից վերջերս հայերն սկսեցին զարթել հայկական թաղերը, որ մեծ անհանգս-տութիւն է պատճառել թաղի պարսիկ բնակչութեան, ուստի վերջինս դի-մել է պարսկական բնդիւհանոր հիւպատոսին, որը այդ առիթով տեսնուե-ցաւ Հայոց Ազգային խորհրդի նախագահ Աւետիս Անարոնեանի հետ:

Ա. Անարոնեանը հաստատիացրել է Շարիֆ-ուդ-Ղուլիին, որ հայ ժողո-վուրդը երբէք չի անի ոչ մի տխուր քայլ, քայց հարկատր է վերջ տալ այն պրովակացիային, որ լայն տեղ է գտնում թէ Ատրպատականում և թէ այստեղ թուրք ու պարսիկ մասսաների մէջ հայերի դէմ:

*Հոգևորականներ - զինուոր.* Գրչակ Սիքայել Աստուածատրեանը «Հորիզոն»-ի մէջ առաջարկում է զինուորակոչի ենթարկել հայ հոգևորա-կաններին: Այստեղ ի հարկէ զարմանալու ոչինչ չկայ, եթէ ես անկացնեմ, որ այդ Մ. Աստուածատրեանը «տէրտէրի տղայ» է:

*Ռումանեայեր.* - Ռումանիայից դուրս են եկել մօտ 3000 հայ զաղթականներ, որոնցից 7 մարտի Թիֆլիս հասան մօտ 25 հոգի, մնա-ցածները գտնուում են Բաթումի և Օդեսայի շրջանում:

*Հասպուրականի հայութիւնը* Վանում կազմակերպել է ժամանա-կատր հայկական կառավարութիւն և սկսել է գործել որպէս տեղական իշխանութիւն հայերէն լեզուով: Կուսակցութիւնները համաձայնութեան են եկել, և նահանջի մասին խօսք անգամ չի լինում: Վանի նահանգային կօմիսսարն է Կոստանդին Համբարձումեան, Ջինուորական գործերի կօ-միսսար՝ Գրիգոր Բուլղարացի, Երբքին գործերու՝ Հմայեակ Մանու-կեան, Երկրագործութեան՝ Արմենակ Մաքսապետեան, Ելմտային՝ Մամուլ Մեսրոպեան, Հանրային խնամատրութեան՝ Հայրապէտ Տով-հանիսեան, բժ. Ե. Ա. Տէր-Թովմասեան՝ Բժշկա-առողջապահութեան,

Պարենատրման գործերու՝ Չաւէն Կորկոտեան, Պօստ-հեռագրական՝ Ս. Ջաւրեան:

*Կարատրգանը* 6/III գրաւել են քիւրքերը:

*"Возрождение"*. - Այս վրացոց ռուսատառ քերթը, որ յատկապէս վրացի իշխանների և քիւրք-թաթարների միացեալ պրատկատոր խմբի քերթն է և հայերի դէմ գրեթէ էր գրադուած, փակուած է Անդրկ. Կօմիս-սարխատի հրամանով, որովհետև վերջերս ոսղակի գրել էր, թէ վրացիներին ինչ, որ տաճրիկները իղեն հայերից Կարսը և թէ նոյնիսկ գրաւեն բո-լոր հայկական գաւառները, միայն թէ Վրաստանն ստանայ արտօնօմիա և Բաքուը մնայ վրացիներին:

*9 մարտի*

*Վասպուտրականի հայկական կառավարութիւնը* կազմուել է ռուս գորքերի հեռանալուց յետոյ, և կօմիսարները գործի են անցել արդէն փետրուարի 1-ից: Վանից Իգդիր ճանապարհները բռնուած են քուրդ հրոսակախմբերով:

*Մէյն*, 7 փետր. քննուեալ էր Հողային հարցը, և Հողային օրինագիծն ընդունուեալ է միաձայն:

*«Աշխատատր»* քերթը ժամանակատրապէս դադարել է հրատա-րակուելուց խմբագրութեան կարգադրութեամբ, իսկ «Հորիզոնն» այսօ-րուանից լոյս է տեսնուեալ մեծագրած դիրքով:

*Հայ-փայտականներ.* - Սարիղամիշ են հասել 10000 հայ փայտականներ:

*Կարատրգան.* - Մերոնք ետ են իւել քիւրքերից Կարատրգանը:

*Հաշտութիւն.* - Տրապիզոնից 9-ին մարտի հեռագրուեալ են, որ Թիւր-քիան Բրեստ-Լիտովսկի դաշնադրութիւնը համարուեալ է պարատրեցու-ցիչ նաև Անդրկովկասի համար և այդ հոգուով էլ խօսուեալ են նրանց պա-տուիրակները:

*Ալէքսանդրապօլից* 8 մարտի հեռագրուեալ են, որ Ազգային խորնր-դի հեռագրի հիման վրայ գեներալ Նազարբէկեանը մարտի 1-ին Ալէք-սանդապօլն ու գաւառը յայտարարել է պատերազմական դրութեան վրայ, հրամանով բոլոր զինուորական կօմիտէները վերացուած են, հա-սարական-իդալովիական հիմնարկութիւններին հրամայուած է շխտուել զինուորական իշխանութեան կարգադրութիւնների մէջ:

*Արապցիա.* - Քաղաքում պաշարողական դրութիւն է յայտարարու-ած: Քաղաքի շրջանում կռիւ է տեղի ունենուեալ բուրքերի և հայ-վրացի միացեալ գորքերի միջև: Ածխորի մօտ էլ նոյնն է կատարուեալ:

*Գեմ.* *Նազարբէկեանը* հեռագրով խնդրուեալ է շուտով գնացքներ ու-ղարկել Սարիղամիշից դուրս բերելու միլիոնաւոր կարողութիւնը:

*Հայոց Ազգային Խորհուրդը* - Խորհրդի անդամներն իրենց գլուխ ունենալով Ա. Ամարոնեանին 5 մարտի մեկնեց[ին] Ալեքսանդրապոլ, որտեղից 8-ին գնացել են Սարիղամիշ:

*Պետերգորսկում* 20 փետրուարի եղել է Հայկական համագումար, որ բացել է Պ. Ա. Պետրոսեանը, որից յետոյ ընտրուել են նախագահներ Արիստակես, Ստեփանեանց, Քալանթար և Միլիք-Ամիրզադեանց: Քննուող հարցերն եղել են՝ 1. Ֆինանսական, 2. Չինատեխնիկական, 3. Պարենատրաման, 4. Ընդհանուր գործեր:

*Միխայիլ Ալեքսանդրովիչ* - Քաղաքումս յամառ լուրեր են պտտում, որ գերմանացիք կայսր են հրատարակել Նիկոլայ Բ-ի եղբայր Միխայիլ Ալեքսանդրովիչին, որը ուզեցել է հրաւիրել Սահմանադիր ժողով, սակայն վերջերս որոշել է հրաւիրել 4 Պետական դումայի կազմերը, որպէսզի խորհրդակցեն Ռուսաստանը յայտարարելու կատարեալ Սահմանադրական կառուարութիւն և ընտրելու պատասխանատու միջնատրներ: Ասում են, որ Պետրգորսկում ու Մոսկուան արդէն նրա իշխանութեան ներքոյ են և հետզհետե գրաւում են նորանոր քաղաքներ:

**10 մարտի**

*Թիւրքիայի մտադրութիւնը* Ռուստովից 8/III հեռագրում են. «Լոնդոնի թերթերը հաղորդում են, որ Թիւրքիան կամենում է գրաւել ամբողջ Անդրկովկասը: Նա մտադիր է Վրաստանին տալ անկախութիւն, իսկ Անդրկովկասի միւս մասերը միացնել Թիւրքիային»:

*Էրզրումի գրաման* գլխաւոր պատճառն եղած է թէ գոյամասերի և թէ զանազան անհրաժեշտ աշխատանքների անկազմակերպ վիճակը և փոխայրական միջոցների պակասութիւնը: Բանից դուրս է գալիս, որ Էրզրումում ապրանքատար ատօմօրիւնների սարսափելի պակասութիւն է եղել:

- Լուրեր են պտտում, որ Հաշտարար պատուիրակութիւնը վերադառնում է Տրապիզոնից, որովհետև անյաջողութեան է հանդիպել:

- Հայերի մի ստուար քազմութիւն, որ Արդանուջից գաղթելիս է եղել Բաթում, գերի է ընկել տեղական աջառացի ավազակախմբերի ձեռքը, որոնք և գրաւել են Արդահան, Արդուին և Արդանուջը:

**11 մարտի**

*Բայազէթ* - Փետրուարի 17-ին, 18-ին և 19-ին կատաղի կռիւներ են տեղի ունեցել Բայազէթում գտնուած ռուս զօրքերի և միւս կողմից ջալացի քրդերի ու Մակուի թուրքերի միացեալ խմբերի հետ: Կռիւներում սպանուած են մօտ 600 զինուոր, մնացածները փախել են:

*Գանձակում* հայերի դուրսիւնը մնում է վտանգուած, հայերը վախից թուրքերի թաղը չեն գնում, մինչդեռ թուրքերն անվախ շրջում են հայկական քաղում: Պարենատրումը գնում է թուրքերի թաղեր, և հայերը

սովի են մատնում ու 13 վազոն մաքից 1 գրուանքա անգամ շեն ստացել: Վայն եկել է մեզ, եթէ Անդրկովկասը Մէյմերով կառաւարտի:

*Էրզրումի* կողմեր Ձիվինի մօտ հայկական զօրամասերը ցրուել են քրդական հրոսակախմբերին: Քարաքուրտի մօտ բնակչութիւնը նոյնպէս ընդհարուել է քրդերի հետ և ցր(ու)ել նրանց խմբերը:

*Պետրոզդարից* Դ. Դ. Դ-ճնկոյից ստացուած է հետագիր, որի մէջ ի միջի այլոց հաղորդում է, որ Արդահանի, Կարսի և Բաթումի պաշտպանութեան համար ժող. կօմիսարները պատրաստ են օգնութիւն հասցնել Կովկասին: Հետագիրը տուած է 7/20 մարտի Պետրոզդարից:

- Սիքայել Բաբաջանեանը, թուրք Բերթոլը և վրացի Վեչապելին իբրև պատգամատրներ դրկուած են Շուշու և Ջանգեզուրի կողմերը տեղական կեանքի ու դրութեան հետ ծանօթանալու և պղտորուած մտքերը խաղաղացնելու համար:

*Կարծիք*. - Այսօր խօսեցի Թիֆլիսի մօքալար Սիրիման Դաւիդիչ Սիրիմանեանի հետ քաղաքական դրութեան մասին: Նա սօցիալիզմի այս ձևով իրագործումը ուտայիւս է համարում: Բօլշևիզմը գերմանական ազննտուրա էր, քայց նա կարծում է, որ նրանք այնքան առաջ գնացին, որ կարծես նոյնիսկ իրենց ծայրայեղ գաղափարի պաշտպաններ հանդիսացան:

*Հաշտարար պատուիրակութիւն*. Տրապիզոնից Թիֆլիս եկան երեք անդամներ պատուիրակութեան՝ Յովհաննէս Քաջագունի, Հայրաբով և Լ. Ասիսիշվիլի: Պարզում է, որ տաճիկ պատուիրակութիւնը բանակցութիւնների շարունակութեան մէջ հիմնական պայման է դնում Անդրկովկասը շտապ անկախ յայտարարելը, Կարսը, Արդահանը և Բաթումը պահանջում են առանց այլևայլութեան: Այս բոլորը կը գեկուցուի Մէյմին և ապա ստանալով նոր հրահանգներ, պատուիրակները նորից պիտոյ է վերադառնան Տրապիզոն բանակցութիւնները շարունակելու:

*Կարսից* հաղորդում են, որ մեր հետախոյզները հասել են մինչև Քեօֆրի-քեօյ:

*Ալաշկերտում և Խնուսում* հղած ազգաբնակչութիւնը՝ հայերը արդէն առանց վնասների ու մարդակորսաի քաշուել են դէպի Կարսի և Ալեքսանդրապօլի շրջանները, իսկ զօրքն ու կամաարական զնդերը դեռ մնում են և չեն ուզում նահանջել:

#### 12 մարտի

*Կարաաղզան*. - Մարտի 10-ին թիւրք կանոնադր զօրքերը թնդանօքներով յարձակուել են և ետ են խել Կարաաղզանը:

*Պետրոզդարից* հետագրում են, որ Սիխայի Ալեքսանդրովիչը բանտարկուած է և արսորի է մատնուելու Պերմի նահանգը: Նայն վիճակն է սպասում մահ և Ռոմանովների աամ միս անդամների:

Կառավարություն. - Ե. Պ. Գեղեկյորին արդեն կազմել է միջխտ-  
րությունը Ե. Պ. Գեղեկյորի նախագահ կոմիսարիատի և զինուորական  
միջխտություններ, Ն. Վ. Ռամիշվիլի ներքին գործոց, Ա. Բ. Չխենկելի  
արտաքին գործոց, Խոմերիկի երկրագործություններ, Խ. Ա. Կարծիկեան  
ֆինանսների, Ուտրբեկով՝ ժողովրդական կրթություն, Խան-Խոյսկի  
արդարադատություն, Ա. Բ. Խասիսեան՝ պարենատրաման, Մ. Գ. Հա-  
ջինսկի՝ առևտրի և արդյունաբերության, Վ. Գորեչիս՝ ծովային գործոց,  
Ղ. Տեր-Ղազարեան՝ աշխատանքի, Լ. Բ. Բերտրով՝ փոստի և հեռագրա-  
տան, Հ. Բ. Օհանջանեան՝ պետական անողջապահություն, Բ. Հայդա-  
րով՝ պետական վերաստուգման և Յովհաննես Բարազնունի առանց  
պորտֆելի: Այս բոլոր անձինք տուել են իրենց համաձայնությունը և  
13/III միտին ցուցակը կներկայացուի Աշմին ի գիտություն և տեղեկու-  
թյուն: Այս ցուցակով 5 հոգի վրացի են (4 էսէկ, 1 էսեր), 5 հոգի հայ են (4  
հոգի դաշնակց, 1 հոգի էսէկ) և 6 հոգի թուրք են, որովհետև Մելիք-Ասլա-  
նովն էլ նշանակուած է ճանապարհների հաղորդակցության կոմիսար:

13 մարտի  
Տրապիզոնի կոնֆերենցիան. - Առաջին միտող տեղի է ունեցել  
մարտի 1-ին (14 մ. տ.), 3 ժամին առանձին յարմարուած բնակարանում,  
որումն ճառերից յետոյ թիւրք պատգամատրները դրել են Անդրկովկա-  
սի կառավարության հարցը: Այնուհետև միտներում եղել են մտքերի փո-  
խանակություններ: Երբ հարցը դիպել է Անատոլիայի և Հայաստանի ժո-  
ղովրդների ինքնորոշման, Թիւրքիոյ պատգամատրներն ամենախիստ  
կերպով բողոքել են այդ բանի դէմ:

Մէլիքի այսօրուայ միտումն պէտք է քննուէր հաշտարար պատուի-  
րակութեան զեկուցումն ու նոր տրուելիք յանձնարականները և կառա-  
վարութեան կազմակերպման հարցը:

Տարօրինակ լուր. - Չը գիտեմ որքան հաստատ է այս լուրը, բայց  
ինձ յաղորդեց սղմախնցի Կօլա (Նիկողայոս) Մամուլեանը, որ ծառայում  
է Հոդային կոմիտեան, որ իբր հայերը դեռ մի ամիս առաջ մի առանձին  
պատգամատրութիւն են ուղարկել Գեմանացոց Վիլիէլմ կայսեր մօտ և  
խնդրել են նրանից հովանաւորել թիւրքահայերին և կովկասահայերին և  
իր պրոտեկտորիատով տալ նրանց հնարատրութիւն իրենց երկիրը կա-  
ռավարելու: Ասում է այս աստղը, որ իբր թէ այդ լսել են վրացիները, նե-  
ղացել են այդ սեպարատ քայլից, և Ն. Ժորդանիան հարց է դրել անմի-  
ջապէս նոյն տեսակ դիմումն անել նաև վրացիների կողմից: Ի հարկէ իմ  
կարծիքով միակ խելօք և մտածուած էլքը այս է, բայց կայ և ռուսերն մի  
զեղեցիկ ստա՞ծ՝ "Свежо предание, да верится с трудом" (Աւանդու-  
թիւնը թարմ է և դժուար է հաւատալ): Հաւատալ, որ հայերն այս արել են՝  
շատ դժուար է, որովհետև հայերը յղկացած են ռուսական օրինմտա-  
ցիայով, որից մեզ համեմը շատ դժուար է: Եթէ նոյնիսկ Վիլիէլմը համա-

ձայնով, այնուամենայնիւ նա հազիւ թէ կարողանայ մեզ պաշտպանել ոչ միայն թուրքերից, այլև նրանցից «ըտթար» վրացիներից: Եթէ այս նրկու ազգերից մեզ հետ մեկը կռուէր՝ մենք կը ջարդէինք, բայց ամենքը մեզ վրայ են նրկարացնում իրենց ձեռքերը՝ տաճիկ, քաթար, քուրդ, թուրք, աջառացի, ինգուշ, լիզզիճ, վրացի, իմերէլ, մենգրէլ, գուրիցալի և հազար ու մի շուն ու շան-որդի: Ասացէ՛ք, անխիղճ մարդիկ, որի հետ կռուենք:

**14 մարտի**

**Գանձակից** Սէյմի պատգամաւորութեան նախագահ Գերասիմ Մախարաձէն հաղորդում է, որ որոշել են 219-րդ գնդի զէնքը, որ պահուում էր հայկական թաղում, յանձնել մահմեդականների Ազգային խորհրդին (ինչպէս առաջ կարգադրել էր Անդրկովկասի կոմիսարիատը այդ զէնքերը պետք է յանձնուէին քիւրքական դիվիզիային, և հայերը չէին ուզում անել լաւ զինել առանց այն էլ լաւ զինուած թուրքերին, ուրեմն սրանով նրանք տարան), իսկ հայերին տալ այն պարենաւորումը, որ նրանց հասնում է, և չէին տալիս մինչև այժմ: Մարտի 9-ին ընդունուել են պայմանները երկու կողմից:

**Սարախլո** կայարանում թուրքերը 10/III քալանքեցին 1 վազոնից 60 գնդացիք իրենց լեւտաններով: Այդ պատճառով Թիֆլիսից ուղարկուեցան երկու գրահապատ զնացքներ և զօրամաս. եղել է կռիւ և առայժմ ետ է իջուած 25 գնդացիք:

**Սէրն** 13/III նիստում ընդունուել է նոր կառավարութեան կազմը: Հաշտարար պատուիրակութեան նախագահ Չխեմկելիին տուած են առանձին արտօնութիւններ իւրովսան ամերու կարևոր քայլեր հաշտութեան գործում, պնդելով որ հաշտութիւնը պետք է լինի նախկին սկզբունքներով և պատուաւոր:

**Փայտակաճաններ**. - Մինչև մարտի 11-ը Իզդիբ են հասել 22000 փայտակաճաններ, որոնք եկել են Մանազկերտի, Ալաշկերտի և Ղարաքիլիսի շրջակայքից, դուրսիւնը վատ է և սով է սպառնում նրանց:

**Թուրքական անաստաւածութեան նմուշք**. - Մարտի 12-ին Երկրային խորհրդի նախագահութեան ներկայացուած է հետևեալ նամակը. «Մայն մարտի 10-ի երեկոյեան ժամը 9-ին, սրտատար զնացքի Բագից Թիֆլիս գալու ժամանակ, Գանձակ կայարանում մերս մտան մի քանի թուրքեր, որոնք սկսեցին ստուգել ուղևորների անցագրերը: Ստուգման ժամանակ զնացքում երևան եկան 3 հայեր, որոնց թուրքերը բռնի ուժով դուրս բերին զնացքից, չնայած հասարակութեան խնդրոյին և քախան-ձանքներին, և տեղնուտեղ, ուղևորների աչքի առաջ, կայարանի պետնում տապալեցին նրանցից մեկին, 6 հոգի բռնեցին նրա ձեռքերից ու ոտներից, իսկ եօթներորդը սկսեց դաշույնով կտրել նրա կոկորդը: Դժբախտ հայերի աղաղակը ստակալի էր: Ես որ իբր քթիչկ մասնակցել եմ 2 պատե-

րագմների և սովոր են զանազան տեսարանների, կեսանքունս նման բան չեն տեսած և չեն ասքած:

Բուրբ ուղևորները լավիս էին, հեծկլտում և խնդրում էին խնայել, բայց սազակներն անողոր մնացին: Նոյն դժբախտ գիշերուայ ժամը 2-ին անի վատ մի տեսարան տեղի ունեցաւ միևնոյն գնացքում: Գանձակից մի քանի կայարան դէտը, 5 հոգի թուրքեր բռնեցին մի ռուս կնոջ, նրա ամուսնու ներկայութեամբ տարան արտաքնոց և բռնաբարեցին: Երբ ամուսինն և ուղևորները սկսեցին խնդրել, որ թուրքերը հանգիստ թողնեն կնոջը, թուրքերը հանեցին ատրճառակները և ուղղեցին կնոջ ամուսնու և ուղևորների վրա՝ սպառնալով, որ կկրակեն նրանց վրայ, ով որ որևէ բան խնդրէ նրանցից:

Վկաներ - սուգ թժիշկ Անդրկովկասեան 6-րդ հրացանաձիգ գնդի և նոյն գնդի ֆելդշերը, թժիշկ՝ Օ. Կ. Տաբակին, ֆելդշեր՝ Վ. Ջախարով:

Այս նամակից յետոյ դու և ես, ընթերցող, հաստատանք, որ Գանձակում Մէյմի պատգամատրութիւնը խաղաղութիւն է հաստատել մարտի 9-ին, իսկ դէպքը տեղի է ունեցել մարտի 10-ին:

#### 15 մարտի

14-ին մարտի Թիֆլիսից մեկնեցին խաղախութեան բանակցութիւններ մղող պատգամատրութեան Թիֆլիս եկած անդամները, որոնք էին Մէյմի գեկուցում տալու, իսկ 13/III Մէյմի վճռի համաձայն Տրապիզոն Ա. Ի. Չիւնկելու հետագրով յայտնուած է, որ արտւում են լայն իրաւատրութիւն հաշտութեան պայմաններն առաջ մղելու:

*Նուխու դէպքերը.* - Բազուից Հայոց Ազգ. խորհուրդը 11/III հեռագրում է՝ «Ստացուած է հետագիր Նուխուց: Հաւաքած տեղեկութիւնների համաձայն քարուքանդ եղած հայոց գիւղերի վնասները, բացի այրուած ինչքից ու՝ ի բաց առեալ Ջարարքադա գիւղից, հասնում է մինչև 1 1/2 միլիոն բուրլու: Ինչպէս վախճատականները, նմանապէս և քաղաքի չքատր դասակարգը խիստ կարիքի մէջ են»:

*Ձէթունի գունդը.* 14-ին փետրուարի ցերեկուայ ժամը 1-ին պալատի առաջ եկան զինուորական կարգով ու երաժշտութեամբ Ձէթունի հուսարների գունդը, Խանաթրի զօրամասը և Մաքուեան հետևակ գունդը և գնդապետ Մադիրկովի հրամանատարութեամբ շարունեցան երկու կարգ: Պալատից դուրս եկան Ե. Պ. Գեգէկօրին, Խ. Կարճիկեանը, Ղ. Տեր Ղազարեանը, Յ. Քաջազնունին և այլք: Իսկոյն երաժշտախումբը նուազեց «Հանդիպումը» և «Մեր Հայրենիք»-ը, և զինուորները հրացանները բռնեցին առաջ և ուղղահայեաց: Գեգէկօրին մի ճառով դարձաւ զինուորներին և յիշեցրեց, որ նրանք կոչուած են մախ յեղափոխութեան և ապա հայրենիքի պաշտպանութեան համար և համոզուած է, որ այդպէս էլ կը լինի: Խոստացաւ զինուորներին տալ հեռագիծ հրացաններ համաձայն խնդրի: Ճառից յետոյ, երկարատև հուռայից յետոյ, երաժշտա-



խմբը նույնպես «Մեր Հայրենիք»-ը և յետոյ կարգով վերադարձան իրենց տեղերը: Սպաների շարքում կան քաակամայակի ռուսներ:

*Բոլշևիկների կերած հաշտութեան պայմանագրի մէջ* ասուած է Անդրկովկասի վերաբերեալ հետևեալը.

«Ռուսաստանը գործադրելու է իրենից կախուած ամեն միջոց՝ ապահովելու համար Անատոլիայի արևելեան գաւառների շուտակոթ պարպումը և Թիւրքիայի օրինական վերածնութիւնը. Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանները պէտք է նմանապէս անյապաղ պարպուին ռուս զօրքերից: Ռուսաստանը պէտք է յիստունի այդ շրջանների պետական միջազգային իրաւական յարաբերութիւններին, այլ բնակչութեան կթողնի նոր կազմ սահմանելու այդ պետութիւնների, մասնատրասպէս Թիւրքիայի համաձայնութեամբ»:

*Արդահանի դէպքերը.* - Յունուարի սկզբներին Արդահանից հեռացել է ռուս զարմիզոնը, և բոլոր զինուորական հիմնարկութիւնների գոյրերը մնացել են անպաշտպան, ուստի շտապով կազմակերպուել է 50-60 հոգոց պահակ՝ գոյրերի վրայ հսկելու: Մի քանի օրից յետոյ կազմակերպուել է հայկական վաշտ, որը յունուարի 20-ից իր վրայ է վերցրել գարնիզոնի ծառայութիւնը: Այս օրերին տեղական քիւրքերը յայտարարել են, որ իրենք էլ ուզում են զօրամաս կազմել, որին բոլոր ազգերի ներկայացուցիչները շատ համակրանքով են վերաբերուել և 200 հոգու համար որոշել են հագուստներն պահել: Մինչ վերտը սկիզբը ամեն ինչ խաղաղ էր անցնում: Փետր. 6-ին քաղաքում լուր տարածուեց, որ Փոցխովի շրջանից դէպի Արդահան են շարժում 1500 զինուած քիւրքեր: Այս լուրը վախ առաջացրեց, սակայն քիւրքերը խոտտացան նրանց քաղաք ներս շքողնել, սակայն 7/11 5-600 քիւրք զինուած քաղաք մտան, մնացեալները մնացել էին զիւղերում: Մրանք պահանջեցին զէնքերը և հանգստացան, քայց քաղաքում քային 250 հոգի, մնացեալները զնացին: Այդ օրերում քալանուեցան հայ և յոյն զիւղեր: Մարտի 3-ին քաղաքը լցուեց քիւրքերով և նրանց պահանջով՝ որ Արդահանը քիւրքաց քաղաք է, զինաթափ արուեց հայկական վաշտը: Քրիստոնեայ ազգաբնակչութիւնը որոշել է քողնել ամեն ինչ և գաղթել, սակայն ո՛չ մի ճամապարհ չկայ, և այս թուպէլա խեղճերը վտանգի ու սարսափի մէջ են:

*Շարուր.* - Շարուրի գաւառի մի շարք հայ զիւղեր ոչնչացուած են և բոլորովին այրուած: Ասքաստարան որոնող ազգաբնակչութիւնը տեղատրվեց Խանուխեար զիւղում, որը 11 օր է շրջապատուած է քրդերով և քուրքերով: Փետրուարի 28-ից այնտեղ տեղի են ունենում ուժեղ կռիւներ՝ Մաշադի Ալասկեար Համգակի գլխատրութեամբ: Թուրքերը կտրել են Շարուրի հայերի խմելու ջուրը: Վտանգը սարսափելի է, և եթէ Մէյմը միջոցներ չառնի, բոլորը կմորթուեն: - Մէյմը հողի հարցով է զբաղուած (~ ~ ~):

*Օլբին գրառած.* - 13/III քիւրքերը գրաւել են Օլբին և առաջ են խաղում:

**16 մարտի**

*Օլբիից* տաճիկները առաջ են գալիս և երևի շուտով կմտնենան Կարաին: Կան պնդողներ, որ նրանք շուտով կպաշարեն և Կարսը: Ասողներ կան, Կարսը իր ռազմամթերքով և պարենատրութեամբ կարող է դիմանալ միմիայն վեց ամիս:

*Քազուի Հայոց Ազգային խորհուրդի* ճիւղը հետագրում է բոլոր Ազգային խորհուրդներին, Սէյմին և Անդրկովկ. կօմիսսարիատին, որ Քազում հաւաքուել են մի քանի հազար հայ զինուորներ (որոնք վերադարձել են Պարսկաստանից), որովհետև Քազու-Թիֆլիս ճամապարհը փակ է: Նման զինուած մասսայի ներկայութիւնը վտանգալից է, ուստի խորհուրդը պահանջում է քանակ ճամապարհը, որովհետև որոշ տուեսլների հիման վրայ քուրքերը փակել են ճամապարհը՝ քիկունքում անիշխանութիւն առաջ բերելու և ճակատի պաշտպանութեան գործը խանգարելու նպատակով: - Սէյմը ... չէ՞ որ քուրքը թեզական է ...

«Աղբրէջան» քուրք-պարսիկ քերթի ասելով՝ ամբողջ Պարսկաստանը հետզհետեւ լցում է անզինական զօրքերով, որոնք բաց կերպով դէպի Անդրկովկաս են շարժում:

**17 մարտի**

*Թիւրքերը* Սարիղամիշի շրջանով առաջ շարժուելով գրաւել էին հայկական գիւղերը, ի միջի այլոց և Քաշքեյ (Քաշի գետ), սակայն մեր առաջագնդերը նրանց դուրս են քշել այնտեղից: Քաջի այս, մերտնք գրաւել են Քարաքուրդից 7 վ. վրայ եղած Եղուն-Հասան գիւղը:

«Կարմիր Օրեր» քերթը փակուած է կառավարութեան կողմից:

**18 մարտի**

Ղ. Արայեանի կինը Նատալիան վախճանուել է ամառս 17-ին և այսօր քաղուեցաւ Վերայի գերեզմանատանը:

*Չաքաքալայից* փախչելով՝ Թիֆլիս հասավ մի պատգամատրութիւն, որը յայտնում է, թէ Չաքաքալայի հայկական գաղութը շրջապատուած է տեղական քուրքերով և գտնում են գերութեան մէջ:

*Մուրմալու* գաւառում խաղաղութիւն է վերահաստատուած, որովհետև հայերը մաքրագարդեցին բոլոր քուրքական գիւղերը, որոնք հանգիստ չէին տալիս տեղական հայութեան:

*Երևանի պարսից հիւպատոսը* մի շարք ներկայացուցիչների հետ դիմել է Արամ փաշային և խնդրել Ջուֆա-Երևան երկաթուղագիծը առնել Հայոց Ազգային խորհրդի պաշտպանութեան տակ:

Վրաց «Չվեճի ռեսպուբլիկա» քերթը հաղորդում է, որ վրաց կամա-տրական գործի շարքերն են մտնում վրացի-գրիգորեանները (իմա՝ Վրաստանի հայերը), որոնց իբր թէ մերժում են և առաջարկում, որ նրանք գնան Հայկական գեղերը, և իբր թէ նրանք ասում են թէ նրանք վրացի են և չեն գնալ: Առակս ուսուցանե, որ հայերը գալով Վրաստան դեռևս վրաց քաղաքներին օրով, հե՛նց սեփական պետություն ունեցող մի երկրի ազգութեան մի մասին կրօնափոխ են արել: չը գիտեմ մի այլ շրջան նրանց քաղաքութեան անկումից յետոյ, որ վրացիք Լուսավորչի հաւատ ընդունէին, ուրեմն և դա երևի տեղի է ունեցել սեփական պետու-թեան օրերում: Սա ճիշտ որ վրացական տուտուցութիւն է:

**19 մարտի**

- Այսօր լուրեր են պտտում, որ անգլիացիները ցանցապատել են ամբողջ Պարսկաստանը և թէ դէպի ուր են արշաւելու՝ յայտնի չը: Պատ-մում են, որ նրանք մօտ 200.000 զինուոր են բերել Պարսկաստան: Այս լուրի հետ ասում են, որ տեղական թուրք-թաթարները աչքի առաջ ունե-նալով այս հանգամանքը, դիմել են Թիւրքիային և խնդրել, որ Թիւրքիան համաձայնուի հաշտուել քաւականաճալով 1914 թ. սահմաններով: Սի ուրիշ աղբիւրից էլ հաղորդում են, իբր թէ հաշտութեան կօնֆերենցիան Տրապիզոնում համաձայնութեան է եկել, որի հիման վրայ Բաքումը յայ-աարարում է ազատ նավահանգիստ, իսկ Կարսն ու Արդահանը դառ-նում են Թիւրքիոյ սանջակներ: Որքան ճիշտ են լուրերը, երաշխատը չեմ:

- Երկու ամիս է մենք՝ երկաթուղու ծառայողներս ռոճիկներ չեմք ստանում, քառացի կերպով քաղցի ենք դատապարտուած:

**20 մարտի**

**Արիւնհեղութեան Բազում.** - Զաղաքումս յամառ լուրեր են պտտում, որ Բազումի բօյլեկները միանալով Պարսկաստանից Կասպից ծովի վրայով եկած հայ զինուորների հետ և տեղական դաշնակցական-ների հետ, սկսել են զարհուրելի կոտորած թուրքերի, որովհետև վերջին-ներս չեն համաձայնուել զենքը վայր դնել՝ զինաթափ լինել և միջոցներ ձեռք առնել քանալու Բազում-Թիֆլիս գիծը, որի վարդավ հայերին չեն թող-նում երթևեկել և սպանում են, գնացքները կողոպտում, կանանց առևան-գում: Լուրերն ասում են, որ քաղաքում գործում է բօյլեկների արտիլյե-րիան: Ըստ ռմանց սպանուածների թիւը հասնում է իբր թէ 2000 հոգու: Ասողներ կան, որ Բազում մաքրելուց յետոյ դրանք դիմելու են դէպի Գանձակ:

**Ռազմաճակատ.** - Մարիլամիշի կողմերում մերոնց դրութիւնը մխիթարական է. առայժմ մեր առաջագնդերը հալածում են թիւքական և քրդական խմբերին, որոնք ներկայումս գտնում են Բայրուսի Ջանիմի

մօտեքք: Մինչև Ղարաքիլիսա Ալաշկերտի հովտում քրդեր ու քիւրքեր չկան, որովհետև Քայազէթից դրկուած գօրամասերն առանց արգելքի անցել են այդ տարածութիւնը: Քարաքուրթի մօտ քիւրքաց գօրքը գտնուում է 5 վերստի վրայ և առաջ է խաղում:

*Խարկովի հայերը* մի քանի ժողովներ են արել, գրուել են 200 կամատր և հաւաքել են 250.000 ռուբլի, նաև շատ քանակազին իրեր և զէնքեր: Տեղական հայ հարուստ Քեօսայեանը նուիրաբերել է 115.000 ռուբլի:

*Հաշտարար պատուիրակութեան* Թիֆլիսից վերադարձած անդամները 16-ին մարտի հասել են Տրապիզոն: Խաղաղութեան ոչն ու այն այս օրերս կվերջանայ:

*Մարտիայի* քիւրքերից 60 գնդացիք իւելիս գլխավոր դեր խաղացել են մեր լօտեցի քաջերը, որոնք մի շարք թուրքական գիւղեր են այրել:

*Շամախի*. - Շամախիում երրորդ օրէ կռիւ տեղի ունի մի կողմից քոյշկիկ-հայկական բլօկի և միւս կողմից քուրքերի միջև, քազմաքիվ գոհեր կան, հաղորդակցութիւնը ընդհատուած է: Բլօկին օգնելու համար Բազուից քոյշկիկական զինուորական ոյժ է ուղարկուած:

*Կարբուս* յայտարարուած է պաշարողական դրութիւն: Կօմենդանտի հրամանով կանայք և երեխաները պետք է հեռանան քաղաքից, իսկ տղամարդիկը պարտաւոր են մասնակցել բերդի պաշտպանութեան գործին: Քաղաքում էժանութիւն է տիրում, ալիւրը 35 ռ. փութը, մի գատ 12-15ր., իսկ մեզնում՝ Թիֆլիսում ալիւրի փութը 85-120ր. է գնահատում:

*Կրասնավոյսկում* Չինուորական և Բանուորական խորհրդի կարգադրութեանը զինաքափ է արուած Հայկական դրուժինան, որ ունէր 75 մօսին և 21.000 փամվուշտ: Այս բոլորը խել են դրուժինայից և յայտարարել, որ ազգային գօրամասերի կազմակերպումը չեն ընդունում: Այսպէս ամէն մի շուն ու շանորդի ներկայ ռուսական պետութեան մէջ իրեն յայտարարելով կառավարութիւն, ինչ ուզում է՝ անում է...

*Հին Նախիջևան*. - Մօտ երկու շաբաթ է Նախիջևանի գաւառում կռիւներ են տեղի ունենում, քրքական շարժման գլուխ է կանգնած Շահար Կուլի խանը, որ պարագլուխն է Նախիջևանի քաղաքական գործիչների այն խմբակի, որ ձգտում է ինքնորոշման սկզբունքի հիման վրայ Նախիջևանը միացնել Պարսկաստանի հետ:

*Թիֆլիս* վերադարձաւ Հայոց Ազգային խորհրդի նախագահ Անտիք Միարոնեանը, որ գնացել էր Ալեքսանդրապօլ և Մարիդամիչ:

*Նուխուց* հաղորդում են, որ հայ փախստականները սովամահ են լինում:

*21 և 22 մարտի*  
«Խնուսի, Դուքայի և Մանազկերտի շրջանները փախստականները ամբողջովին հասել են Իզդիլ (մարտի 18-ին հեռագրում են Իզդիլ-

րից), մնացած փախստականների մի մասը յարձակման է ենթարկվել Ղարաքիլիսէի շրջանի Շլաստր գիւղի քրդերի կողմից, սպանուած է եօթը մարդ: Չմայելով ծանր պայմաններին, գաղթը կատարուել է հանգիստ: Փախստականների հետ եկել են նաև վերոյիշեալ շրջանների կօմիտաս-րիստի բոլոր պաշտօնեաները: Խնուսի շրջանային կօմիտասրիատը Իգ-դիրում ժամանակատրապէս վերանորոգել է իր գործունէութիւնը փախստականներին տեղափոխելու համար: Ըստ երևոյթին հարկ կը լինի տեղա-տրել Սուրմալուի գիւղերում: Աշոտ Իսրայէլեան»:

*Չարսբալա*. - 18 մարտի քիւրքական դրօշակի համար (?) պա-տանդ վերցուցին հինգ հոգի, դրանց բում քահանան և Ստամբուլցեա-նը: Ժողովուրդը գրկուած է մեծ պատուայ ժամասացութիւնից: Աշակերտ-ները դասադուլ արին, առայժմ դպրոցը փակ է:

*Արասթումանի* հայութիւնը անաբեկուած է տեղական քիւրքերից: *Ալիքսանդրապօլի* շրջանի քուրք ազգաբնակչութիւնը վերջերս հետզհետէ սկսել է քաշուել դէպի Թիւրքիա:

*Չալալ-օղլու* շրջանի քուրքերն էլ սկսել են շարժուել:

*Բալաջարի և Բագուի* միջև կռիւ է բօլշևիկների և քուրքերի միջև, փետրուարի 24-ին Բագուի կայարանում Բագուի Բ. Ջ. և Ն. պատգա-մատների խորհրդի կօմիտէի կարգադրութեամբ ձերբակալուել է Թիֆլիսից եկող մահմեդական դիվիզիայի շտաբը՝ շտաբի պետ գեներալ Տալիշինսկու գլխատրութեամբ: Մահմեդականները դժգոհութիւն յայանցին, ընդունելով, որ այդ քայլը իրենց ինքնորոշման դէմ է: Բագու-ւի միջկուսակցական կօմիտէն մի պատուիրակութեան միջոցով խնդրեց ազատ արձակել դրանց, բայց Բանտը., Ջին. և Նասատ. պատգ. խորհուրդը համաձայնուեց երաշխատութեամբ բաց թողնել միայն շտաբի մի մահմեդականին (մնացածներն են ռուսներ, վրացիները և այլն) գեներալ Տալիշինսկուն, պահանջելով, որ դրա համար երաշխատը լինեն մահմեդական սոցիալիստական կազմակերպութիւնների ներկա-յացուցիչները: Երաշխատել են դօքտոր Նարիմանովն և Մ. Գ. Վեզիրով՝ զիջանելով Միջկուսակցականի խնդրին, սակայն գեն. Մ. Տալիշինսկուն հարցաքննելուց յետոյ Վեզիրովը (սոց.-յեղ.) հրաժարուել է պատասխա-նատու լինել, և ասում են, որ Նարիմանովն էլ («Հումմէթ») ուզում է հրաժարուել:

Այժմ ստացուած է հետագիւր, որ Բալաջարիից կռիւն անցել է Բագու, և բօլշևիկները մեծ ջարդ են տալիս քուրքերին իրենց թաղերում: Կռիւն սկսուել է 18 մարտի, որի համար սկսել է գործել թեղափոխու-մբը: Ըստ թաթարներ են գերի վերցուած: Բերդը գրաւել են նասատի-ները: Երեկոյեան 7 ժամին հաշտութիւն եղաւ այն պայամանով, որ քուրք-թաթարները զենքերը յանձնեն և երաշխատրել Բագու-Թիֆլիս

\*\*\* [Բանտորներ, զինտորներ և նասատիներ]:

երկաթուղու ազատութիւնը: Բայց 19-ին առաւօտից քննաճարհներն սկսեցին գործել, ասում են, որ մինչև որ բուրքերը զենքերը յաճճեն քաղաքը կքանդեն. Կիշի կայարանի մօտ բուրքերը հանելով երկաթգծերը՝ գնացքը խորտակուել է (N 4 գնացք): Շատ բուրքեր են սպանուած: Բօլշևիկներին կողմ են բոլոր ազգեր՝ քացի մահմեդականներին: Գերուած բուրքերին ներս են քշել թատրոններ և սինեմատօգրաֆներ և այնտեղ են պահում: Բօլշևիկներին օգնում են մաւստիները: Տեղական ամբողջ գօրքը բօլշևիկներին հակուեցաւ: Հայերը կօրրեկա են, հայկական պահակախումբը չի թոյլ տալիս վիրատրել բուրքերին, գերիներին լաւ են պահում: Պատճառը յայտնի չէ, քայց ասում են, որ հարկատու եղաւ զինաքաֆ անել մօտ 70 մուսուլման դիվիզիայի զինուորներին, որոնք ծովով ուր որ գնալու էին՝ նրանք շհամաձայնուեցան, և գործն այս կերպարանք ստացաւ: Ասում են, որ գլուխ են կանգնած Շահմեհանը, Ջաֆարիձէն, Սուլաքը, և առհասարակ կօմիտեղ: Բօլշևիկներն ունին մի քրօնկիկ, քաղաքը մասամբ տեղ-տեղ միայն կողոպտում է: 20-ին կռիւը շարունակում էր: Սև քաղաքից հրացանաձգութեան ձայներ են լսում, ինչպէս երևում է Սպիտակ քաղաքում կռիւ է: Սաքունջու կողմից հրդեհի տեսարան է քացում: 21-ին մարտի բօլշևիկները մահմեդականներին պահանջ դրին՝ յանձնել ամբողջ զենքը, ընդունել և ճանաչել ժողովրդական Կօմիտեարների իշխանութիւնը, ցրուել Գիկայա դիվիզիան (Հայրենի գօրախումբը բուրքերի), վերականգնել Բագու-Յիֆլիս երկաթուղին և մինչև Պետրովսկ երթևեկութիւնը: Ժամանակամիջոցը տրուած է մինչև ցերեկուայ 3 ժամը 21/III: Եթէ այս չը կատարեն, կօմիտեն պատասխանատութիւնը թողնում է մահմեդականների վրայ: Մահմեդականները սարսափելի զվաւած են, ընդդիմանալ չեն կարող: Այրում են մի քանի մեծ տներ քաղաքական մասում, շատ տներ են այրուած, այս թուպէիս (21/III 12 1/2 ժամին ցերեկուայ) այրում է վերևի քաղաքը բուրքական մասում: Այսօր ֆուրգոններով հաւաքում են սպանուածներին, սպանուած են 1000-ից ատելի և ատելի վիրատրներ կան և գերիներ: Թուրք զինուորներն ուզում էին թափուել քաղաք, սակայն անկարելի է մտնել, որովհետև քաղաքն ամեն կողմից խիստ մեծ ուժերով ապահովուած է: Բօլշևիկները քաղական ուժեղ են, և նրանց օգնութեան են զալու առանձին ոյժեր Կրասնավօղսկից և Աստրախանից:

*Մէյնը* տակը լցրել է, սկսեց քննել այս դէպքերը, սակայն շուտով փակուեց, և նախագահութիւնը պէտք է քննութեան առնի: Ասում են, որ միջոցներ ձեռք կառնեն այդ քանի առաջն առնելու:

*Միջոցից՝* Բերեօզովկայի թուրքահայ գերիները թուով 100 հոգի խնդրում են իրենց ազատել, որ գան Կովկաս:

*Անգլիական գօրքերը Պարսկաստանում* - Ասում են Էնգելի են եկել անգլիական գօրքեր 600 ատօմօրիով: Անգլիական գօրքերը բռնել են զնացած ռուս գօրքերի վայրերը և ջարդել են Քուլուկ-խանի 5000-հոգ

գործը, իսկնը գերի է վերցրւած: Ընդհանուր հրամանատարն է գեմ. Հենդերսոնը, որ ներկայումս գտնուում է Բազում: Անգլիացիները պահանջել են Պարսկաստանից ժամանակատրապէս հնազանդուել իրենց հրամանատարութեան բոլոր հրամաններին:

*Ապրիլի 1-ից* մտցում է նոր տոմար, այդ օրը նշուելու է 14 ապրիլի: *Հրեաներ, արաբներ և հայեր.* - Times թերթն այս վերնագրով մի յօդուածով առաջարկում է այս երեք ազգերին միանալ որպէսզի աւելի շուտով ձեռք բերեն իրենց ազատութիւնը: Այդ առթիւ Լօնդոնում եղել են միջինգներ: *Vossische Zeitung*-ն էլ ասում է իբր թէ Թիւրքիան ուզում է իրագործել հրեական ինքնավարութիւնը: Հատուակներ:

*Պատգամատրութիւն.* - 21/III Բազու մեկնեց պատգամատրութիւն (Ս. Տիգրանեան, Մելիք-Եզանեան, Օնիաշվիլի, Մանուղով և Հայդառով), որ նպատակ ունի հարթելու բոլշևիկներին և թուրքերի միջև առաջ եկած միջադէպը: Ես կարծում եմ, որ բոլշևիկները դրանց դուրս կանեն և չեն էլ ընդունի, ինչպէս չեն ընդունել Սէյմը:

Մակայն մեզանում դեռևս հիմնականում անհասանելի են մնում թուրքական վավերագրերը: Մույն հրապարակումը առաջին քայլն է այդ բացը լրացնելու ուղղությամբ:

Թարգմանաբար ներկայացվում են, մանրամասն ծանոթագրվում ու վերլուծվում են 1920թ. նոյեմբերով թվագրված մի շարք կարևոր վավերագրեր: Դրանք թուրքական պետական և ռազմական բարձրագույն մարմինների ղեկավարների՝ զինված ուժերի Գլխավոր սպայակազմի պետ և հետագայում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Իսմեթի (Ինչյոնյու), արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհթարի (Մուլառոյու) և Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազըմ Քարաբեքիրի միջև ծածկագրված գրառության պատասխիկներ են, ինչպես նաև Թուրքիայի Ազգային Սնծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Մուսթաֆա Քեմալի (Աթաթյուրք) ղեկավար դերը արտացոլող փաստաթղթեր: Ընդգրկվել են նաև Բաքվում գործող Թուրքական Կոմունիստական Կուսակցության (ԹԿԿ) երկու հակամարտող ղեկավարների գաղտնի մամակները Քեմալին ու Քարաբեքիրին: Ըստ էության, այդ նա-

մակների հեղինակները գործում էին որպես ազգայնական ուժերի գործակալներ:

Վավերագրերը հիմնականում եղել են զաղտնի կամ հույժ զաղտնի, նրանցից մի քանիսը ծածկագրեր են: Այդ համագամաքը հաղորդում է նրանց քաջատիկ կարևոր նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս ծանոթանալ Օսմանյան կայսրության վրատակների վրա ձևավորվող մոր՝ հանրապետական Թուրքիայի «հիմնադիր հայրերի» Հայաստանի նկատմամբ քաղաքականության իրական նպատակներին, մտեցումներին, գնահատականներին, ինչպես նաև նրանց գործելակերպին ու կիրառվող հմարքներին: Այս այն դեպքն է, երբ նրանք կարիք չեն ունեցել քաջովել շրջանատուն դիվանագիտական արտահայտությունների հետևում, ինչի մեծ վարպետն են եղել բոլոր ժամանակների թուրք կառավարիչները, և ձևակերպել են իրենց մտքերը ամենայն հստակությամբ:

Մասնավորապես, վավերագրերը անհերքելիորեն վկայում են, որ Թուրքիայի գերագույն նպատակը պատերազմի վերջին վազում եղել է Հայաստանի ոչնչացումը՝ որպես ինքնուրույն գործունի: Այսպես, համաձայն ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Անհեթ Մուհթարի Քարաբեքիրին նոյեմբերի 8-ին ուղարկված ծածկագրում տեղ գտած հստակ ձևակերպման, «քացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի»<sup>22</sup>:

Ցավոք, հայ քաղաքական ընտրանին ի գործու չեղավ ժամանակին քացահայտել այդ նպատակադրվածությունը, ինչը և զգալի չավելավ պայմանավորեց Հայաստանի պարտությունը նաև դիվանագիտական ճակատում: Թուրքիայի հետ խաղաղության մասին քանակցություններ վարելու նպատակով կազմված պատվիրակության ղեկավար ու նախկին վարչապետ և արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյանը հետագայում իր հուշագրություններում խոստովանում էր. - «...Մեր պատվիրակությունը կը կարծեր, որ թուրքերը կը ցանկանան կենսունակ Հայաստանի մը ստեղծումը, որը օգտակար էր իրենց պետական շահերու տեսակետեն, ինչպես որ այդ մասին շարունակ կը հայտարարեին թուրք պետական գործիչները»<sup>23</sup>:

Վավերագրերը ցույց են տալիս, որ քննադատականների իրական պատկերացումները Թուրքիայի պետական շահի վերաբերյալ տրամազծորեն այլ էին: Նրանց իրական նպատակները պարզեցնող համար կարևոր նշանակություն ունի Մուսթաֆա Քեմալի ելույթը ԹԱՄԺ-ի 1920թ. նոյեմբերի 18-ի փակ նիստում, որտեղ նա, հենվելով Գլխավոր սպայակույտի եզրահանգումների վրա, նշում է, որ Հայաստանի դեմ ուղղված գործողությունները նպատակ ունեն գամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ<sup>24</sup>: Այդպիսով, հերքվում է ավելի ուշ, 1927թ.,

նույն Աթաթյուրքի արտասանած հայտնի “ճառում” ի լուր աշխարհին ծանուցած Հայաստանի դեմ պատերազմի պատճառի “պաշտոնական” մեկնաբանությունը. – “1920թ. աշնանը հայերի կողմից իրականացվող վնասարար գործողությունները դարձան անտանելի: Որոշում ընդունեցինք զմալ Հայաստանի վրա”<sup>6</sup>:

Լավատեղյակ թուրք հեղինակները գրում են, որ Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու ծրագրի հեղինակը հենց Մուսթաֆա Քեմալն էր: Եւս ղեռնա 1920թ. փետրվարին հանգել էր եզրակացության, թե “կովկասյան պատը” այսինքն՝ Հայաստանը, հետևից պիտի քանդվի<sup>6</sup>: Քեմալականների բացահայտ պանթյուրքիստական նպատակները հաստատվում են նաև վերևում արդեն նշված վավերագրով<sup>7</sup>: Ակնհայտ է, որ այն զաղտնի ծածկագրերը, որոնք ուղարկվում էին Անկարայից արտգործնախարարի պաշտոնակատար Մուսթաֆա Քեմալին ստորագրությամբ, արտահայտում էին առաջին հերթին հենց Մուսթաֆա Քեմալի մտնեցումները ու զննահատականները:

Թուրքական վավերագրերը վկայում են, որ սկսելով պատերազմը թուրք պարագլուխները ունեին ավելի “համեստ” նպատակ՝ ոչնչացնել ոչ թե Հայաստանը, այլ միայն նրա զինված ուժերը: Այդ է փաստում սեպտեմբերի 20-ին Գլխավոր սպայակազմի պետ Իսմեթ Քեյի արձակած հրամանը Հայաստանի դեմ հարձակում ձեռնարկելու վերաբերյալ: Դիմելով Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը նա գրում է. – “Մեր բուն նպատակը հայկական զինված ուժերի ոչնչացումն է”<sup>8</sup>: Հրամանում նշված է, որ այդ փաստաթղթի համար հիմք է ծառայել ԹԱՄԵ-ի համապատասխան որոշումը, որը ստացել է նաև կառավարության հավանությունը<sup>9</sup>:

Մակայն հետագայում, մի քանի ճակատամարտերում պարտության մատնելով հայկական բանակին և տեսնելով, որ Հայաստանը մեկուսացված ու լքված է իր դաշնակիցների կողմից, Թուրքիայի ղեկավարությունը սկսեց վավախություններ մտցնել իր ծրագրերի մեջ: Այդ գործընթացը, որը կարելի է համարել թուրք – հայկական պատերազմի առանցքային իրադարձություններից մեկը, տևեց մի քանի օր և առաջացրեց վեճեր քեմալականների ղեկավար շրջանակներում: Թուրքական աղբյուրները հնարավորություն են տալիս պարզաբանել նրա որոշ մանրամասներ:

Քարաբեքիրի հուշերից պարզ է դառնում, որ նա Կարսի գրավման հաջորդ օրը, հոկտեմբերի 31-ին, հեռագրով հայտնում է քեմալականների ռազմական նախարար Ֆեվզի փաշային (Չարմաք) իր տարած հաղթանակի մանրամասները, նշելով, մասնավորապես, որ բռնագրավված ռազմավարի քանակը այնքան մեծ է, որ կարող է բավականացնել տասը տարի պատերազմ մղելու համար<sup>10</sup>: Ուշագրավ է, որ Քարաբեքիրի այդ հեռագիրը ստանալուց երկու օր հետո, նոյեմբերի 2-ին, ԹԱՄԵ-ի կառու-



վաղությունը դիմում է Հայաստանի կառավարությանը, առաջարկելով անհապաղ սկսել բանակցություններ՝ խաղաղության հաստատելու նպատակով<sup>11</sup>: Այդ փաստաթուղթը գրված է քավական փափուկ ոճով, չի պարունակում վերջնագրային բնույթի դրույթներ և, ըստ էության, խաղաղության բանակցություններ սկսելու առաջարկ է:

Քեմալականների կողմից խաղաղության բանակցությունների վերաբերյալ մեծանուն զգուշավոր առաջարկով Հայաստանին դիմելը վկայում է, որ այդ պահին նրանք դեռևս լուրջ մտավախություններ ունեին, որ Կարսի գրավումը կարող է հանգեցնել ծանր դիվանագիտական քարոզությունների և այդ պատճառով փորձում էին մեղմել իրենց ռոնձոգությունները Հայաստանի տարածքի նկատմամբ: Ինչպես վկայում է իր հուշագրություններում Իսմեթը, Անկարայի քաղաքական շրջանակները միանշանակ մտեցում չունեին Հայաստանում Քարաբեքի բանակի սրբնթաց առաջխաղացման նկատմամբ: Կային գործիչներ, որոնք կարծում էին, թե այդ հաղթարշավը կարող է վնասակար լինել ընդհանուր և վերջնական հաղթանակի հասնելու տեսանկյունից<sup>12</sup>: Այդ նույն օրերին ԹԱՄԺ-ի մի քանի պատգամավորներ նույնիսկ հանդես եկան հարցապնդմամբ, պահանջելով քաջատրություններ, թե ինչու՞ կառավարությունը Հայաստանի դեմ պատերազմը ընդլայնում է առանց ԹԱՄԺ-ի թույլտվության<sup>13</sup>: Այս ամենը վկայում է, որ այդ օրերին քեմալականների ղեկավար շրջանակներում առաջացել էին տարածայնություններ Հայաստանի նկատմամբ հետագա գործողությունների վերաբերյալ:

Սակայն Քարաբեքի խորթ էին մեծ տատանումները: Նա համոզված էր, որ պիտի շարունակել առաջխաղացումը դեպի Հայաստանի տարածքի խորքերը, դեպի Ալեքսանդրապոլ, և միայն դրանից հետո սկսել խաղաղության բանակցությունները: Այդ պատճառով նա որոշում է սկսել գործել ինքնուրույն, անտեսելով կառավարության դիրքորոշումը: Նոյեմբերի 3-ին, թողնելով Կարսում միայն հազար հոգիանոց զինված ջոկատ, որը կազմված էր նախորդին Սամսունից ժամանած «կամավորներներից», որոնք շտապել էին միանալ կանոնավոր բանակին թաղանթառ ճպատակով, Քարաբեքի իր հրամանատարության տակ գտնվող բանակի առավել մարտունակ զորամիավորումներով սկսում է առաջխաղացումը դեպի Ալեքսանդրապոլ՝ այդ կարևորագույն քաղաքը նույնպես գրավելու նպատակով<sup>14</sup>:

Միաժամանակ, դեռևս վստահ չլինելով, թե կարող է միայնակ շարունակել պարտության մատնել հայկական բանակի նահանջող ստորաբաժանումներին, Քարաբեքի որոշումը դիմում է խորհրդային 11-րդ բանակի հրամանատարությանը<sup>15</sup>: Այդ նամակը առաջին հերթին քաղաքական բնույթի փաստաթուղթ է, որտեղ նույնիսկ թույլ է տրված իրականության կոպիտ խեղաթյուրում. Քարաբեքի փորձելով համոզել ռուսներին, որ Հայաստանը ազդեցոր պետություն է, որ քեմալականները

պատերազմը նրա դեմ զուտ ինքնապաշտպանական գործողություն է. պնդում է, թե հայերը սեպտեմբերի 24 – ին սկսած “ընդհանուր հարձակման” արդյունքում “զավթել են Էրզրումը”, ինչը չէր համապատասխանում իրականությանը<sup>16</sup>: Մակայն ուղերձի բուն նպատակը շատ ավելի կոնկրետ էր. առաջարկվում էր “դաշնակից Խորհրդային Ռուսաստանին” օժանդակություն ցույց տալ Թուրքիային և “վճռական միջոցներ” ձեռնարկելով՝ վերջ տալ “դաշնակների տիրապետությանը”<sup>17</sup>: Փաստորեն, սա առաջարկ էր ռուսներին անհասկալի մոր ռազմականատ քայքայ Հայաստանի դեմ: Ռուսական կողմի պատասխանի մասին տվյալներ չկան:

Քարաբեքիը չէր սխալվում, հայկական զորքերը դեռ չէին կորցրել իրենց մարտունակությունը: Արդեն հաջորդ օրը Բրզալախյախի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական քանակը կատաղի դիմադրություն ցույց տվեց և զգալի կորուստներ պատճառեց հակառակորդին: Միայն երեկոյան այն կազմակերպված լքեց դիրքերը և նահանջեց<sup>18</sup>:

Քարաբեքիի առաջխաղացումը նախապես չէր համաձայնեցված Անկարայի հետ. ինչպես ինքն է նշում իր հուշագրություններում, Ալեքսանդրապոլի վրա հարձակման մասին “ես տեղյակ պահեցի (ընդգծումը մերն է, Ռ. Մ.) Գլխավոր սպայակալուտի հրամանատարությանը”<sup>19</sup>: Թերևս, նա համոզված չէր, որ ներկա վաղուտ կառավարությունը կարտոնի նրա հետագա հարձակվողական գործողությունները:

Անկարայի կառավարության զգուշավոր դիրքորոշման պատճառը արտաքին գործուն էր: Ըստ էության, քեմալականների ղեկավարները հաշվի էին առնում երեք երկրների դիրքորոշումը՝ Մեծ Բրիտանիային, Խորհրդային Ռուսաստանին և Վրաստանին: Նրանցից ամենակարևորը, անտարակույս, երկուսն էին՝ Մեծ Բրիտանիան և Խորհրդային Ռուսաստանը: Մակայն դեռևս վերջնականապես պարզված չէր նաև Վրաստանի դիրքորոշումը: Կառավարական շրջանակներում կար մտավախություն, որ վրացիները, օգտվելով իրադրությունից, կարող են զավթել փաստացի անպաշտման մնացած Կարսը: Մանավանդ, ինչպես վկայում է իր հուշերում Քարաբեքիը, մոյսերի 3-ին նա ստացել էր Արդահանում տեղակալված վրացական քանակի հրամանատարի վերջնագրային բնույթի ուղերձը, որտեղ ընդգծվում էր, որ եթե թուրքերը դուրս գան Կարսից և անցնեն վրացիների նախանշած գիծը, ապա վերջիններս կհարձակվեն նրանց վրա<sup>20</sup>:

Հաշվի առնելով վերևում նշված հանգամանքները, Գլխավոր սպայակալուտը, ստանալով Քարաբեքիի փաշայի զեկույցը Ալեքսանդրապոլի գրավումը նախապատրաստելով վերաբերյալ, հրամայում է. “Այդ գործողությունը վտանգավոր է: Վրացիների հարձակումը Կարսի վրա չի կարելի բացառել: Այդ պատճառով պիտի անհասկալի վերադառնալ

Կարս<sup>21</sup>: Քարաքերքըրը անհամաձայնություն է հայտնում Գլխավոր սպայակալուտի այդ հրամանի հետ, չի ենթարկվում նրան և շարունակում է առաջ շարժվել Ալեքսանդրապոլի ուղղությամբ: Նրա պատասխանը հետևյալն էր. “Շիշտ չեմ համարում թողնելով հետապնդվող և արդեն պարտված թշնամուն՝ հնարավոր նոր թշնամու գործողությունները խոչընդոտելու նպատակով նահանջել Կարս: Եթե վրացիները խկապես այդպիսի մի գործողություն ձեռնարկեն, ապա ես հայերին մեկ հարված ևս հասցնելուց հետո կվերադառնամ վրացիներին և քիկունքից հարվածելով՝ նրանց նույնպես պարտության կմատնեմ: Առաջխաղացումը շարունակում եմ”<sup>22</sup>:

Ծածկագրերի վերը նշված փոխանակումը Անկարայի ու Քարաքերքի միջև տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին: Արդյունքում, թուրքական զորքերը, չենթարկվելով Գլխավոր սպայակալուտի հրամանին, նույն օրվա երեկոյան դիրքեր գրադեցրեցին Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք գտնվող բարձրությունների վրա և այդպիսով անմիջական վտանգ ստեղծեցին քաղաքի համար: Հաջորդ օրվա առավոտյան Քարաքերքըրը ստացավ Հայաստանի կառավարության առաջարկը զինատղար հաստատելու մասին, որը ուղարկվել էր դեռևս նոյեմբերի 3-ին: Քարաքերքըրը այն փոխանցեց իր ղեկավարությանը և չապաստելով նրանից համապատասխան ցուցումների, անհապաղ ներկայացրեց հայկական կողմին վերջնագրային բնույթի մի շարք պահանջներ: Հաջորդ օրը, նոյեմբերի 7-ին, հայկական կողմը, ընդունելով վերջնագրի պայմանները, Ալեքսանդրապոլը հանձնեց թուրքերին<sup>23</sup>: Այսպիսով, Քարաքերքի ինքնագլխ գործողությունները պսակվեցին անմախաղեպ հաջողությամբ: Պատերազմը, փաստորեն, ավարտված էր:

Քարաքերքի այդ հաջողությունը, փաստորեն, արագացրեց կառավարության և Գլխավոր սպայակալուտի կողմից Հայաստանի հետ պատերազմում թուրքիայի վերջնական նպատակների վերաձևակերպման գործընթացը: Այն խտացված ձևով արտահայտվեց զինատղարի վերաբերյալ հայկական կողմին ուղղված երկու վերջնագրերի տեքստերում<sup>24</sup>: Առաջինը, թվագրված նոյեմբերի 6-ով, պարունակում էր ավելի մեղմ պահանջներ, քան թե երկրորդը, որը ներկայացվել էր ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին: Նրանցից առաջինը արդյունք էր Քարաքերքի “ինքնագործունեության”, որի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էր ծառայել արդեն հիշատակված Անկարայի կառավարության նոյեմբերի 2-ի համենատարար ավելի մեղմ պահանջներ ներկայացնող նոտան, իսկ երկրորդը գրված էր քննադական շարժման պարագլուխների կողմից կատարված իրադրության վերագնահատումներից հետո: Նրա համար հիմք էր ծառայել ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Սեմեթ Մուխթարի նոյեմբերի 8-ով թվագրված հույժ զաղտնի ծածկագիրը, որի հասցեատերը

Քարաբեքիդն էր<sup>25</sup>: Այստեղ մանրամասն ներկայացված են այդ վերագնահատումների արդյունքում վերջնական ձևակերպում ստացած մտեցումները, իչպես նաև բացատրված են դրանց շարժառիթները:

Ուսանելի է համեմատել այդ ծածկագրված փաստաթուղթը նույն օրվա ընթացքում և նույն դեկավար գործչի կողմից ստորագրված մեկ այլ պաշտոնական փաստաթղթի հետ՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը ուղարկված և Թուրքիայի կողմից առաջարկվող խաղաղության ընդհանուր պայմանները պարունակող նամակի հետ. այսինքն դիվանագիտական քննարկի վավերագրի, որը նախատեսված էր «արտաքին օգտագործման» համար<sup>26</sup>:

Այսպես, օրինակ, եթե առաջինը շեշտում էր, որ Հայաստանը որպես ինքնուրույն գործող պետի ոչնչացվի, ապա երկրորդում խոսվում էր այն մասին, որ Թուրքիան ամեն ինչ կանի, որ օգնի Հայաստանին սննդամթերքով և կաջակցի նրա տնտեսության զարգացմանը: Հայաստանի կառավարությանը ուղղված նամակում նշվում էր, քե «թուրք – հայկական սահմանի որոշումը պետի լինի պարզ վիճակագրության ու հանրաքվեի հարց»<sup>27</sup>, իսկ ծածկագիրը բազատրում էր դիվանագիտական հնարքներից հեռու փաշային, որ այդ առաջարկի նպատակը «քիսում է սահմանի որոշմանը խաչընդոտելու ձգտումից»...

Հենվելով Անկարայից ստացված նոր ցուցումների վրա Քարաբեքիդը և ներկայացրեց չափազանց ծանր պայմաններ պարունակող երկրորդ վերջնագիրը:

Հաղթանակը Հայաստանի դեմ պատերազմում արդյունք էր մաս քեմալականների լավ մտածված ու ճկուն դիվանագիտության: Սովորաբար, մեզանում ընդունված է դատել թուրքական դիվանագիտության մասին հենվելով նրա ձեռք բերած արդյունքների վրա: Սույն հրապարակումը հնարավորություն է տալիս ծանոթանալու այն մտեցումներին ու դատողություններին, որոնցից քիսել են թուրքերի գործողությունները դիվանագիտական քատերաբեմում: Այդ առումով հետաքրքրություն է ներկայացնում Հավելվածում զետեղված և նույնպես Մուհթարի ստորագրությունը կրող վավերագիրը, որտեղ ներկայացված են Անկարայի կառավարության կողմից մշակված և Հայաստանի հետ առնչվող հարցերի շրջանակներում բուշևիկյան Ռուսաստանի նկատմամբ կիրառված դիվանագիտական մարտավարության մի շարք կարևոր դրույթներն ու գործելակերպի բացատրությունները<sup>28</sup>:

Այսպես, Քարաբեքիդ փաշայից պահանջվում է, որ նա ռուսների հետ քննարկումներում լինի «փախուկ» և չմոռանա, որ Խորհրդային Ռուսաստանը քեմալական Թուրքիայի միակ դաշնակիցն է: Միաժամանակ Մուհթար քեյը նրան բացատրում է, քե ինչպես պետի օգտագործելու ուս բուշևիկների վախը անգլիացիներից՝ համոզելով նրանց, որ եթե վանը և Բիթլիսը անցնեն հայերի հսկողության տակ, ապա այդ «մեծա-

պես կուժեղացնի անգլիացիների դիրքերը Արևելքում»<sup>29</sup>։ Որքան էլ զարմանալի կարող է թվալ, այս պարզունակ «աշխարհաքաղաքական» փաստարկները հասնում էին իրենց նպատակին...

Ուշագրավ է Քեմալի հրամանը պարունակող սույն հոդվածի Հավելվածի թիվ 7 փաստաթուղթը, որի բուն իմաստը հնատավոր է ըմբռնել միայն ծանոթ լինելով նրա նախապատմության հետ<sup>30</sup>։ Սկսած 1920թ. ամռանից և մասնավորապես հայ – թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ձեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ էին եկել որոշ ընդհանուր եզրեր<sup>31</sup> և սկիզբ էր դրվել գաղտնի շփումների դիվանագիտությանը<sup>32</sup>, իսկ մինչ այդ Անկարայի սերտ հարաբերությունները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել և շփումները ընդունել էին անկանոն բնույթ։ Թուրքական առքյուրները նշում են, թե քեմալականները կարողացան ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից։ Հենվելով այն հանգամանքի վրա, որ հոկտեմբերի 21-ին Կ.-Պոլսում անգլիացիների հավանությանը իշխանության էր եկել հիմնականում Մուսթաֆա Քեմալի կողմնակիցներից կազմված նոր կառավարություն, որը ցանկություն էր հայտնել պատվիրակություն ուղարկել Անկարա և բանակցություններ սկսել ազգայնականների կառավարության հետ, նրանք ռուսների մտտ ստեղծեցին այն կարծիքը, որ այդ կառավարությունը, կատարելով անգլիացիների առաջադրանքը, պիտի ձգտի «Անատոլիայի շարժումը քաշել անգլիացիների կողմը, նրան կտրելով բոլշևիկյան ու իսլամական աշխարհներից»<sup>33</sup>։ Քեմալականների այդ քայլը հասավ իր նպատակին. բոլշևիկները սկսեցին ավելի «նրբանկատորեն» հարաբերվել իրենց դաշնակցի հետ և դրսևորեցին ավելի մեծ պատրաստակամություն գնալ զիջումներ<sup>34</sup>։ Սիսիական, ԹԱՄԾ-ի կառավարությունը ջանք չէր խնայում գաղտնի շփումների միջոցով և խաղաղակցելով բոլշևիկյան Ռուսաստանի հետ իր դաշնակցային հարաբերությունների փաստը համաձայնության եզրեր շոշափել անգլիացիների հետ<sup>35</sup>։ Թուրք հետազոտող Սալահի Սոնյելը, հենվելով անգլիական արխիվային փաստաթղթերի վրա, գրում է, թե 1920թ. օգոստոսի կեսերից սկսած, այսինքն Սևրի դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո, Մուսթաֆա Քեմալը իր գաղտնի ներկայացուցիչների միջոցով փորձ է արել համաձայնության գալ անգլիացիների հետ, նույնիսկ խտստանալով նրանց հրամանատարության տակ դնել Քարաբեքի Վովկասյան բանակը և օգոստոսի 20-ին այն բոլշևիկների դեմ<sup>36</sup>։ Նշենք, որ Քեմալը վարձում էր ներագրել անգլիացիների վրա նաև Խտալիայի միջոցով, որի ներկայացուցիչների հետ նույնպես հաստատել էր գաղտնի կապեր։ 1920թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին դրանք իրականացվում էին Քեմալի ոչ պաշտոնական ներկայացուցչի միջոցով<sup>37</sup>։ Սակայն նոյեմբերին նա ուղարկեց Հռոմ իր պաշտոնական ներկայացուցիչ՝ ներքին գործերի նախարար-

րին: Մուրճանական կառավարության ղեկավարողը Հռոմում Ֆերրուի բնյոց հայանում էր Կ.-Պոլիս, որ այդ այցին իտալական կառավարական շրջանակների կողմից տրվում մեծ նշանակություն<sup>38</sup>: Այդպիսով, ապահովվեց ատավել քարենպաստ դիվանագիտական մթնոլորտ Հայաստանի դեմ պատերազմում Թուրքիայի տեսանկյունից ռազմավարական նշանակության նպատակների հասնելու համար: Օգտագործելով այդ հանգամանքը քեմալականները, մասնավորապես, հրաժարվեցին հայ – քուրդական բանակցություններում Ռուսաստանի միջնորդությունից, ինչի համաձայնությունը նրանք նախորդ տվել էին<sup>39</sup>: Սակայն երբ պարզ դարձավ, որ Ռուսաստանը ավելի վճռական դիրքորոշում է որդեգրել և գործ է ստցնում Հայաստան, ամմիջական շփման մեջ մտնելով Քարաբեքիի բանակի հետ, այդ հնարքը ժամանակավորապես կորցրեց իր նշանակությունը և նույնիսկ սկսեց դիտարկվել որ վտանգավոր հետևանքներով եղի: Այդ պայմաններում և հետևեց Հավելվածի թիվ 7 վավերագրում տեղ գտած Մուսթաֆա Քեմալի կտրուկ հրամանը՝ բոլոր հնարավոր միջոցներով հերքել լուրերը անգլիացիների հետ համագործակցելու մասին:

Այդ շրջանում ակտիվ գործունեություն էր ծավաղել Մուսթաֆա Մուվիհին, որը 1920թ. մայիսին բնակություն հաստատելով Բաքվում, կարողացել էր դառնալ քուրդական կոմունիստական շարժման հեղինակավոր առաջնորդ<sup>40</sup>: Նա միանգամայն կիսում էր քեմալականների մտտեցումները Հայաստանի նկատմամբ<sup>41</sup>: Մեր կողմից քարգմանաբար ներկայացվող նրա նամակը Մուսթաֆա Քեմալին (վավերագիր թիվ 8) վկայում է, որ ԹԿԿ-ն Մուսթաֆա Մուվիհիի ղեկավարությամբ իրականում գործում էր որպես քեմալականների ռազմական գործողությունները Հայաստանի դեմ սատարող քարոզչական, լրահավաք և հետախուզական կառույց: Միաժամանակ, նա միջնորդի դեր էր ստանձնել Բաքվում գտնվող ռուս բոլշևիկների ղեկավարների և քեմալականների ներկայացուցիչների միջև: Մասնավորապես, ինչպես երևում է Մուսթաֆա Քեմալին հղած նրա նամակից, Մուսթաֆա Մուվիհին ոչ միայն կազմակերպել էր Բաքու ժամանած ԹԱՄԻ-ի կառավարության ներկայացուցիչ Սեմ-դուհ Շևքեթի հանդիպումը Ի. Ստալինի հետ, այլ նաև հնարավորություն էր ստացել ներկա լինել նրանց գրույցին<sup>42</sup>:

Քարաբեքիի վաղեմի ղեկերոջ՝ այդ շրջանում Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Իսմեթ բեյի անձնական նամակը (վավերագիր թիվ 6) հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ պարզորոշ ցույց է տալիս, որ հաղթանակը Հայաստանի նկատմամբ, ըստ էության, փրկեց Օսմանյան կայսրության իշխանությունների դեմ ապստամբած ազգայնականներին<sup>43</sup>:

Բնութագրելով հայ-քուրդական պատերազմի ժամանակ Քարաբեքիի գործունեությունը պիտի հաշվի առնել այն հանգամանքը, որ նա,

ըստ էության, խաղում էր երկակի խաղ. ցուցադրելով հավատարմություն Մուսաֆա Քեմալին, նա միաժամանակ չէր խզում իր կապերը այդ շրջանում ակտիվ գործունեություն ծավալած, ներտնտեսական պարագլուխներից՝ տխրահռչակ Էնվերի փաշայի հետ<sup>44</sup> և նույնիսկ որոշ դեպքերում գործում էր համաձայն վերջինիս ցուցումների<sup>45</sup>։ Էնվերը իր հերթին ամեն կերպ աջակցում էր Քարաբեքիրին։ Մասնավորապես, իր ղեկավարությամբ Բաքվում ստեղծված «Թուրքական կոմունիստական կուսակցության» հիմնադիրներից հայտնի ներտնտեսական գործիչ Ֆուաթ Մաբիթը<sup>46</sup> (Աղաջը) գործում էր որպես Քարաբեքիրի «կապավոր պաշտոնյա» և ուղարկում էր նրան զեկուցագրեր։ Դրանցից մեկը, որտեղ անդրադարձ կա հայ-թուրքական պատերազմին, քարզմանաբար զետեղված է սույն հոդվածի Հավելվածում, որպես քիվ 5 վավերագիր<sup>47</sup>։

Ներկայացվող վավերագրերի մեծ մասը վերցված է Հայաստանի դեմ պատերազմելու նպատակով ստեղծված Արևելյան ռազմաճակատի կրթամաստար՝ Քյազըմ Քարաբեքիր փաշայի գրչին պատկանող գրքերից<sup>48</sup>։ Նրա ղեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավազակախմբեր, ներս խուժեց Հայաստան, ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն։ Այդ «ներտնտեսականների» համար Քարաբեքիրին շնորհվեց *Ֆեդիի* (զենեղալ-նյտեմանտի) զինվորական կոչում<sup>49</sup>, իսկ պատերազմի ավարտից հետո նա պարզևատրվեց «Կամաչ և կարմիր ժապավեններով Անկախության մեդալով»<sup>50</sup> և մտավ հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ որպես «Արևելքի նվաճող»<sup>51</sup>։ Իր անկախ հայացքներով աչքի ընկնող թուրք պատմաբան Ջեմալ Քուրթալը ժամանակին Քարաբեքիրի գործունեությանը տվել է ավելի իրական գնահատական, քննադատելով այն որպես «Հայաստանի ոչնչացում»<sup>52</sup>։

Ասկայն այդ փառամուր թուրք փաշան չգոհացավ իր պետության կողմից ստացած պարգևներով։ Նա որոշեց ուսումնասիրել իր իսկ կողմից սրի քաշած ժողովրդի պատմությունը և քաջատրել նրան, թե նա «որտեղից է եկել և ուր է գնում»<sup>53</sup>։ Ինքնավստահաբար հայտարարելով, որ ծանոթ է հայերի մասին գոյություն ունեցող համարյա ողջ գրականությանը<sup>54</sup>, Քարաբեքիրը հանգեց մի «եզրակացության», որը նույնիսկ հայերի նկատմամբ թուրքական վերնախավի ամենատարբեր ներկայացուցիչների կողմից տասնամյակների ընթացքում արտահայտված տեսակետների շրջանակում աչքի է ընկնում քաջատիկ ցինիզմով։ Պատմության խորքերը «թափանցած» թուրք փաշան պարզելով, որ «գոյություն ունեն ապացույցներ հայերի» թուրքական ծագում ունենալու մասին<sup>55</sup>, պահանջեց. «Հայերը պիտի անեն հետևյալը. մամուլով նրանք պիտի սեր տարածեն թուրքի նկատմամբ...»<sup>56</sup>։

Չխորանալով Քյազըմ Քարաբեքիր փաշայի քաղաքական հայացքների ու գործունեության մանրամասների մեջ նշենք միայն, որ նրա

հարաբերությունները Մուսթաֆա Քեմալի հետ սկսած ազգայնական շարժման տարիներին լարված են եղել, քանի որ Քարաբեքիը համարել է, որ Քեմալը նսեմացնում է իր որոշիչ դերը Հայաստանի նկատմամբ ձեռք բերած հաղթանակում, իսկ վերջինս էլ իր հերթին խանդով է վերաբերվել Քարաբեքիի փառքին ու հեղինակությանը<sup>57</sup>: 1926թ. Քարաբեքիը նույնիսկ մեղադրվել է Քեմալի դեմ մահափորձ նախապատրաստող երիտթուրքերի հետ համագործակցելու մեջ ու ձերբակալվել է<sup>58</sup>:

Այդ ամենի պատճառով Քարաբեքիի հեղինակած հինգ տասնյակ գրքերից շատերը, մասնավորապես նրանք, որտեղ խոսվում է Հայաստանի դեմ պատերազմի և հետագա իրադարձությունների մասին, արգելվել են և հրատարակվել են միայն նրա մահից հետո: Այսպես օրինակ, 1933թ. տպագրության պատրաստված “Մեր անկախության պատերազմի հիմքերը” խորագիրը կրող նրա հուշագրությունների գրքի բոլոր օրինակները արտակարգ լիազորություններով օժտված Անկախության դատարանի որոշմամբ տպարանից բռնագրավվել և ոչնչացվել են<sup>59</sup>: Խուզարկվել է նաև Քարաբեքիի տունը և բռնագրավվել է նրա անձնական արխիվի զգալի մասը, սակայն ձեռագրերը և վավերագրերի քննարկները չեն հայտնաբերվել<sup>60</sup>: Արխիվի փրկված մասը սկսվել է հրատարակվել միայն Աթաթուրքի ու Քարաբեքիի մահից հետո: Այդ հրապարակումներից առանձնահատուկ է “Մեր անկախության պատերազմը” հուշագրությունների հսկայածավալ (1171 էջանոց) գիրքը, որը հրատարակել են նրա դուստրերը: Նրանք առաջարկում ենում են, որ ձեռագիրը տպագրվում է մույնությամբ, առանց տառ անգամ փոխելու<sup>61</sup>: Գիրքը լույս տեսավ 1960թ. հուլիսին, երբ երկիրը դեռ չէր հասցրել հանդարտվել մայիսին տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո<sup>62</sup>: Թերևս, այդ հանգամանքը նպաստեց Հայաստանի նկատմամբ թուրքական քաղաքականության իրական նպատակները քացահայտող վավերագրերի երևան գալուն<sup>63</sup>:

Հետագայում լույս տեսան Քարաբեքիի հեղինակած մի շարք գրքեր ևս: Դրանցից ներկա հրապարակման տեսանկյունից օգտակար էր նրա այն աշխատությունը, որտեղ առաջին անգամ թուրքական պատմագրության մեջ հարուստ և նոր աղբյուրագիտական հենքի հիմքի վրա քացահայտվում էր երիտթուրքական կուսակցության նշանակալից դերը քեմալական շարժման մեջ<sup>64</sup>: Քարաբեքիի դուստրերը, որոնք հրատարակիչներն են նաև այս հատորի, հատուկ ընդգծում են, որ իրենք նրա թողած ձեռագրից հրապարակում են մույնությամբ, “ոչ մի քստ չավելացնելով և ոչ մի քստ դուրս չթողնելով”<sup>65</sup>: Ըստ էության, նրանց այդ մտեցումը, հերավորություն տվեց զիտական շրջանառության մեջ դնել թուրք – հայական պատերազմի հետ ամմիջականորեն առնչվող քաղաքական թուրքական արխիվային վավերագրեր:



Օգտագործել ենք նաև Թուրքիայում լույս տեսած մի շարք այլ հրապարակումներ, մասնավորապես, Մուսթաֆա Քեմալի կողմից ստորագրված վավերագրերը կամ նրա խորհրդարանական ելույթները պարունակող ժողովածուները<sup>66</sup>: Այդ հրապարակումները կարևորվում են նրանով, որ հնարավորություն են ընձեռում ծանոթանալ ազգայնական շարժման առաջնորդի մտեցումները արտացոլող այնպիսի վավերագրերի հետ, որոնք տեղ չեն գտել իր իսկ կողմից խմբագրված և պաշտոնական պատմագրության կողմից կանոնականացված «Ճատու»<sup>67</sup>: Մասնավորապես, այստեղ հրապարակված չէ քեկուզ մեկ փաստաթուղթ, որը կվերաբերվեր քուրդ – հայկական պատերազմին<sup>68</sup>: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նշում է մեր կողմից օգտագործված ժողովածուներից մեկի հրատարակիչը, այնտեղ տեղ գտած վավերագրերը «Աթաթուրքին ճանաչել ցանկացողների համար կարևոր և հավաստի աղբյուր են»<sup>69</sup>:

Կարծում ենք, քարգմանաբար ներկայացվող վավերագրերը պատկերացում են տալիս այն լայնածավալ ու բազմաբնույթ գործունեության վերաբերյալ, որ ծավալել էին քեմալականները քուրդ – հայկական պատերազմի եզրափակիչ փուլի ընթացքում: Նրանք օգնում են ավելի հստակ և առարկայական դարձնել մեր ընկալումները Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից մշակված և իրականացված ծավալալայաշտական քաղաքականության առանձին դրսևորումների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն են տալիս հասկանալ քուրդական վերնախավի մտածելակերպի որոշ առանձնահատկություններ:

ՀԱՎԵԼ ՎԱԾ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

1

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուհթար բեյի<sup>70</sup> ծածկագիրը Արևելյան ռազմաճակատի հրամատար Քյազըմ Քարաբեքիր փաշային (8 նոյեմբերի 1920թ.)<sup>71</sup>

Անկարա  
8/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը

Կասկած չկա, որ Հայաստանի զինադադարի առաջարկը այս պահին, երբ նա մեկուսացված է և արևմտյան, և արևելյան աշխարհներից, նպատակ ունի խուսափել վրա հասնող աղետից: Ուժեղամարտն այս Հայաստանը, բնականաբար, կաշխատի իրականացնել Սևրի պայմանագրով իր վրա դրված Արևելքի հետ մեր կապը կտրելու պարտականությունը, ինչպես նաև հույների հետ համատեղ կիսաթարի մեր կյանքն

ու զարգացումը: Անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահ-մեղական շրջանակի կենտրոնում, այդ դաժան ժանդարմի պարտակա-նությունից արտի համոզմունքով հրաժարվի և որոշի իր քայլերը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ: Այդ պատճառով, բացար-ձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականացնի ու նյու-թասպես մեջտեղից վերացվի: Դրա հետ մեկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախված է մեր հզորության ընձեռած հնարավորու-թյունից և ընդհանուր քաղաքական իրավիճակից, քաղաքականությունից, ապա անհրաժեշտ է վերևում նշված կարևոր նախապայմանների համա-ձայնեցված նախապատրաստում: Դրանից բխում է, որ ընդարկման ա-ռարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի զինադադարի համաձայ-նություն արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադա-դարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղա-սեր երևալուն: Սակայն իրականում նրանց արդյունքը պիտի լինի մեր նպատակի աստիճանաբար նախապատրաստման ու հատուցման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է գորացրել հայկա-կան բանակը և բռնազրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրա-վունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա և այդպի-սով մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանին կասյող բոլոր ճանա-պարհները: «Մերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քաղաք-կան ու փավտակ ձևով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի այքերում մշտա-պես խաղաղասեր երևալու պայմանով:

Հայկական կառավարությանը հանձնելու նպատակով այսօր Չեզ ուղարկված զինադադարի պայմանների<sup>72</sup> առաջին կետով սահմանի վե-րաբերյալ հանրաքվեի սկզբունքի ընդունումը բխում է Հայաստանի հետ սահմանների վերջնական որոշմանը խոչընդոտելու ձգտումից: Կարող եք ժամանակավորապես ընդունել Քրեմա Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ գրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչըն-դոտել քանակությունների փակուղի մտնելուն: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնացող մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով: Պիտի պայմանագրի մեջ մտցնել կետեր, որոնք կապահովեն հնարավորինս արագ քշմանու ձեռքից զենքի բռնազ-րավումը և նրա բանակի զորացումը: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր

գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի բուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն բուրքական պետություն:

Կառավարության իրական նպատակը պարունակող այս հրահանգը գաղտնի է: Այն նախատեսված է միայն Չեզ համար:

Խնդրում ենք գրավոր հայտնել այս գաղտնագրի լրիվ վերծանման մասին:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար  
Ահմեթ Մուխթար

2

Մուսթաֆա Քեմալի ելույթը Թուրքիայի Ազգային Սեծ Ժողովում Էրզրումի պատգամավոր Իսմայիլ բեյի<sup>75</sup> և իր ընկերների Հայաստանի հետ խաղաղության պայմանների վերաբերյալ գրավոր հարցազննման և արտաքին գործերի վտխմախարար Մուխթար բեյի պատասխանի կապակցությամբ (18 նոյեմբերի 1920թ.)<sup>76</sup>

Մուսթաֆա Քեմալ փշ.<sup>75</sup> (Անկարա). – Ուզում եմ հիշեցնել մի կետի մասին և ժողովին ծանոթացնել ռազմական խնդիրներին վերաբերող տեղեկություններին, որոնք ես ստացել եմ ռազմական գերատեսչությունից: Ինչպես նշում է մեծապատիվ պարոնը<sup>76</sup>, հայերը ընդունել են նախապես առաջարկված զինադադարի պայմանները: Այդ զինադադարի պայմանների հիմքում դրված են եղել երկու հիմնարար դրույթ: Առաջինը, զենք բռնագրավելի հայկական բանակից: Երկրորդը, ելնելով գոյություն ունեցող իրադրությունից ստեղծել չեզոք գոտի այն գծի միջև, մինչև որը կնահանջի հայկական բանակը, և այն սահմանի միջև, որը մենք հետագայում պիտի պաշտպանենք: Մակայն դրանից հետո վերսկսվեցին ռազմական գործողությունները: Նախկին զինը շատ առաջ տարանք: Նախկինում գտնված դիրքերից մեր զորքերը առաջ ընթացան ոչ միայն արևելյան ուղղությամբ, այլ նաև կենտրոնից, ներառյալ Շաքախից, դեպի հարավ: Այդ պատճառով, զինադադարի մասին համաձայնության այն մասը, որը վերաբերում էր սահմաններին, իհարկե, ենթարկվեց վավտությունների: Դրա վերաբերյալ մեր Գլխավոր սպայապետը հանդես եկավ մի քանի նոր առաջարկներով: Նրանցից մեծ մասի մեջ առանձնապես կարևոր դրույթներ չկան. այս մեկը նոր գծից մի քիչ ավելի արևմուտք է, այն մյուսը՝ մի քիչ ավելի առաջ է: Մակայն այնտեղ նոր տեսակետ էլ է պաշտպանվում: Այն հետևյալն է. հարավից Ադրբեջան տանող ճանապարհները պիտի լինեն լիովին անվտանգ: Ահա այս-

պիսի առաջարկ ունի Գլխավոր սպայակույտը, պարտնայք: Ձինվորականները ճիշտ ժամանակին հանդես եկան իրենց առաջարկով:

3

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուխար քեյի ծածկագիրը Քյազըմ Քարաբեքիր փաշային (20-21 նոյեմբերի 1920թ.)<sup>77</sup>

Անկարա  
20-21/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամատար Նորին Գերագնացություն

Քյազըմ Քարաբեքիր փաշային

Ի պատասխան 13/11/1336<sup>78</sup> հեռագրի<sup>79</sup>

1...

2 - Տարածվել են լուրեր, թե Արևելյան ռազմաճակատում մեր հաղթանակների անվերջանալի շարանի հետևանքով հայկական լրագրերը սգո սև շրջանակներով են լույս տեսել, իսկ մահմեդականները չափազանց ուրախ ու խանդավառ են: Եվրոպայի հետ շփումների պակասը և կապի դժվարությունը խոչընդոտում են Կովկասի իրադարձությունների արձագանքի մասին ավելի լիարժեք տեղեկություններ ստանալուն: Այստեղ հասած ամենավերջին եվրոպական լրագրերը թվագրված են հոկտեմբերի 20-ով և նրանց մեջ այդ թեմայի վերաբերյալ մանրամասներ չկան:

3 -Ռուսական խորհրդային կառավարությանը...<sup>81</sup>, որ մեր հարձակման պատճառներն էին. հայերի կողմից իրագործվող կոտորածները, դաշնակների հրաժարումը մեզ հետ խաղաղություն կնքելուց, ինչպես նաև, նրանց ցանկությունը որպես անգլիական իմպերիալիզմի գործիք՝ մեր արևելյան վիլայեթները լիովին գրավել և կապ հաստատել Իրաքում գտնվող անգլիական զորքերի հետ... . . . Հնարավոր չեղավ պարզել, թե՞ արդյոք այդ հարցերին նվիրված համապատասխան հեռագիրը հասել է Մոսկվայում մեր ներկայացուցիչ Բեքիր Մամիլին<sup>82</sup>, հայտնի չեն նաև Ռուսաստանի կառավարության կարծիքը և մտեցումները այդ խնդիրների վերաբերյալ: Օգտվելով այս առիթից մեկ անգամ ևս կարևորությամբ խնդրում են ամեն գնով ասպեռվել Ռուսաստանի հետ հուսալի հեռագրային կամ ռադիո կապ:

4 -Հաշվի առնելով բարեկամության մասին պայմանագրի նախատեսվող ստորագրումը, ինչպես նաև մեր հարաբերությունների առանձնահատկությունները, խնդրում են, որ երբ կապ կհաստատուի ռուսական զորքերի հետ, Հեզ նրանցից հեռու չպահեն: Պիտի հաշվի առնել, որ երկու ազգերը համատեղ պայքարում են համաշխարհային իմպերիալիզմի

ղեմ, և Ռուսաստանը միակ մեծ տերությունն է, որը մեզ ճանաչել է, մեզ հետ հարաբերություններ է հաստատել և կարող է մեզ օգնել, քեկուզ և աննշան:

Եթե քննարկվի Չեզ հայտնի Վանի, Բիթլիսի խնդիրը<sup>83</sup>, ապա այդ հարցում վարվեք փափուկ, բացատրեք, որ ազգերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից այն անընդունելի է և քաղաքական առումով անիրականանալի: Բացատրեք նաև, որ Անկարայի կառավարության կազմավորման նպատակը Ազգային Ուխտի կողմից ճանաչված տահմանների շրջանակում քաղաքականապես ու տնտեսապես լիովին անկախ Թուրքիայի ստեղծումն է, և եթե նա այդ ծրագրի շրջանակներից դուրս գա, ապա ժողովուրդը լիովին կկորցնի խանդավառությունը, մեկ անգամ և կհիասթափվի և իշխանությունը կանցնի Ստամբուլին: Այդ դեպքում անգլիացիները Ֆերիթ փաշային<sup>84</sup> սադրազամ դարձնելու միջոցով կտիրեն ամբողջ իսլամական ժողովրդին, այդ քվում նաև Ամատոլիային, ինչը Ռուսաստանի բուլղարների համար և Կովկասում, և Ասիայում չափազանց անբարենպաստ հետևանքներ կունենա:

Երկրորդը, երբ ակնհայտ դառնա, որ Վան, Բիթլիս մտած հայերը կարող են Իրաքում գտնվող անգլիացիների հետ հեշտությամբ միանալ, ապա դա մեծապես կուժեղացնի անգլիացիների դիրքերը Արևելքում: Լոնդոնի խորհրդարանում Իրաքի մանդատի հարցի քննարկումների ժամանակ նախկին վարչապետ Ասքվիթը արդեն իսկ հայտարարել է, քե Մոսուլը պաշտպանել կարողանալու համար անհրաժեշտ է հասնել Սև ծով և եթե հայերին թույլ տրվի իջնել այդքան դեպի հարավ, ապա անգլիական ինպերիալիզմի համար այդ շատ մեծ ծառայություն կլինի: Կարծում եմ, այդ անհրաժեշտ է բացատրել...<sup>85</sup> Մյուս կողմից, խնդրում եմ, որ ամեն պատեհ առիթով զգացնել տաք, որ Անկարայի կառավարությունը նախապատրաստվում է իրականացնել մեր երկրի համար անհրաժեշտ արդիական սոցիալական բարեփոխումներ ու հեղափոխություն, ինչը օտարների միջամտությունը կդարձնի անհնարին:

Պարոն, խնդրում եմ Գյումրիում<sup>86</sup> հայերի վերաբերյալ մեր դիրքորոշումը ներկայացնել համաձայն նվաստիս կողմից շարադրածի:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար  
Ահմեթ Մուխթար<sup>87</sup>

4

ԹԱՄԺ-ի նախագահ

Մուսթաֆա Քեմալի ցուցումը խաղաղության պատվիրակներ  
մեծապատիվ պարոններ Համիթին<sup>88</sup> ու Նեջաֆին<sup>89</sup>  
(23 նոյեմբերի 1920թ.)<sup>90</sup>

23 նոյեմբերի 1920թ.

Հայերի հետ մեր բանակցություններում ոչ մի այլ կողմի միջամտությունն ու միջնորդությունը քննարկման ատարկա լինել չեն կարող: Մասնավորապես, կարող եք հայտարարել, որ անընդունելի է նրանց միջնորդությունը, ովքեր կցանկանան ներկայացնել հայերին և նրանց պաշտպանելու նպատակով կուզենան խառնվել գործին: Հստակ է, որ մենք դուրս գալու անգամ չենք հրաժարվի մեր իրավունքներից: Արտգործնախարարության կողմից Նորին զերազանցություն Քյազըմ Քարաբեքիր փաշային համապատասխան տեղեկությունները արդեն ուղարկվել են, պարտնայք:

ԹԱՄԺ-ի նախագահ  
Մուսթաֆա Քեմալ

5

Կապավոր պաշտոնյա դոկտոր Չուսթ Սարիք բեյի<sup>91</sup>  
նամակը Քյազըմ Քարաբեքիր փաշային  
(25 նոյեմբերի 1920թ.)<sup>92</sup>

Բաքու  
25 նոյեմբերի 1920

Նորին զերազանցություն Քյազըմ Քարաբեքիր փաշային

...<sup>93</sup>  
Թուրքը ձգտում են օգուտ քաղել հարձակվողական գործողություններից<sup>94</sup>: Դաշնակները ու հայ ազգայնականները, ինչպես նաև մանմեդական կապիտալիստները տարածում են լուրեր, քն թուրքերը միացել են անգլիացիների հետ, հարձակվել են բոլշևիկների վրա և նրանց մեջտեղից վերացնելուց հետո պիտի այդպիսով վերահաստատեն Թուրքիայի անկախությունը: Այդ լուրերի միջոցով մանմեդական հարուստները ձգտում են պահպանել իրենց ձեռքից գնացող հարստությունները: Իսկ հայերի նպատակն է սրել թուրքերի և բոլշևիկների հարաբերությունները և թուրքերին միայնակ թողնել: Ես համոզված եմ, որ Մուսիին նույնպես մեծ վարպետությամբ օգտվեց դրանից<sup>95</sup>: Թուրքերի առաջխաղացումը կսակաձեղի ներկայացնելու համար մա առիթը քաջ չթողեց և աշխատեց հավատացնել տալ, որ եթե ինքը չլինի, ապա ազգայնամտ, իմպերիալիստ, պանխրամիստ Թուրքիայում տեղի կունենան քազմաթիվ արկածախնդրություններ: Այդ միջոցով մա ձգտեց ամրապնդել իր խարխուլված դիրքերը: Ինձ ծանոթ չբջանակներում, հանդիպելով իմ ծանոթների հետ ես հայտարարում եմ, որ այդ ամենն է, որ թուրքերը երբեք ինպերիալիստական ու կապիտալիստական Եվրոպայի հետ չեն մերձենա: Եթե նույնիսկ ընդունենք, որ իրենց գոյությունը պահպանելու համար նրանց ղեկավարները կարող են որոշ շեղումներ թույլ տալ, ապա նրանցից, որոնք արդեն պարզաբանել են իրենց հայացքները, չի կարելի սպասել, որ նրանք մարդասպանների հետ միանալով, դուրս կգան հեղափոխության

դիմ: Անհավանական է մաս, որ ճրանք, ուրիշ արդեն ազատվել են ստրկականության իշխանությունից՝ անօրինական համաձայնության կզան մրա հետ, այդպիսով իրենց դնելով հավերժական տնտեսական ստրկության մեջ:

Ես ասում էի, որ եթե մույնիսկ ղեկավարների մտտ այդպիսի հակում առաջանա, ապա թուրքիայի ժողովուրդը արդեն շատ ետևում է թողել այն ժամանակը, երբ ակնհայտ էր լինում ամեն ասածին: Նա այժմ ունի այնպիսի մի իշխանություն, որը ի գորտու է իրականացման մասնապարհ հարթել ժողովրդի ճակատագրի և ցանկությունների համար:

Դրա հետ մեկտեղ, ռուսական հեղափոխական շրջանակներում թուրքերի նկատմամբ մեծ կասկած գոյություն ունի: Համոզված եմ, որ այն անտեղի է և որ մտտական ապագայում իր անհիմն լինելը ակնհայտ կդառնա: Անհրաժեշտ է այդ կասկածը ժամանակին վերացնել և բախտախնդիրների խարդավանքներին տեղ չտալ...<sup>96</sup>

Դուկտոր  
Ֆուաթ Սաբիթ

6

Իսմեթ բեյի նամակը Քյազըմ Քարաբեքիր փաշային  
(28 նոյեմբերի 1920թ.)<sup>97</sup>

Միտելի եղբայրս, իմ շատ սիրելի եղբայր Քյազըմ ջան:

Այսօր Մաֆֆեթը<sup>98</sup> գալիս է: Ֆուաթ փաշայի<sup>99</sup> հետ միասին ձեզ մտտ կլինեն: Ինչքա՛ն երջանիկ են մրանք: Ի՛նչ մեծ երջանկություն է թեզ հետ տեսնվելը: Չես կարող պատկերացնել, թե ինչքա՛ն եմ կարտտել, ինչքա՛ն եմ ուզում տեսնել թեզ: Այժմ իմ ամենամեծ ցանկությունն է կողքիդ մնալու համար մի տաս - տասնհինգ օրով արձակուրդ ստանալ: Մակայն ներկայումս դա անհնարին պատրանք է...

Արևելյան գործողությունը<sup>100</sup> մեզ և մեր գործը վերականգնման գրեց: Այնքան ծանր դրության մեջ էինք, այնքան նեղված էինք, որ բացարձակ անհրաժեշտություն էր դարձել մի օդանցք բացել, որ իրադրությունը կարողանար շունչ քաշել: Ալլահի տրորությունը այն բացեցիդ դու՛ արժանի հաջողությամբ ու համակարգվածությամբ: Նախախնամության ու ճակատագրի կողմից թեզ վերապահված է մեր ազգին ու պատմությանը ավելի մեծ ծառայություններ մատուցել: Այսանը թեզ նվիրարեթեց մեր ազգին: Հատկապես Մուսթաֆա Քեմալը չի պատկերացնում, թե ի՞նչ կարելի է անել, որ հնարավոր լինի ցույց տալ և արտահայտել իր շնորհակալությունը: Բոլորը մույն դրության մեջ են<sup>101</sup>:

Դրա հետ մեկտեղ, Արևելքը մի նրբաբնույթ փուլի մեջ է մտել: Եթե հնարավոր լինի այսպիսով մի արդյունքի հասնել, ապա փրկության ճանապարհը իրապես բացված կլինի: Ինչպես և ինչ ձևով այդ տեղի կունենա՝ դա այստեղ ընմարկել չարժե, քանի որ գործը առաջ է շարժվում:

Արևմուտքում մեր դրությունը ծանր է, Քյազըմ: Չինամթերքի պակաս, անիշխանություն, ինտրիգներ, ամենակարևորը, իհարկե, զինամթերքն է...<sup>104</sup>

Իսմենթ<sup>103</sup>

7

Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալի հեռագիրը  
Արևելյան ճակատի հրամանատարությանը  
(30 նոյեմբերի 1920թ.)<sup>104</sup>

Արևելյան ճակատի հրամանատարությանը

Անկարա, 30 նոյեմբերի 1920թ.

Բարձրագույն Թուրքիայի ներկայացուցիչ Մեմդուհ Շեքերբեյին  
Թիֆլիսում Թուրքիայի ներկայացուցիչ Քյազըմ բեյին<sup>105</sup>

Ինչպես պարզ է դառնում տարբեր տեղերից եկող լուրերից, անգլիացիները դիմում են բոլոր միջոցներին՝ բռնկվելիցների և մեր, ինչպես նաև իսլամական երկրների միջև, հարաբերությունները խաթարելու նպատակով: Երանք հույս ունեն, որ երբ այդ նրանց հաջողվի, նրանք երկու հասարակություններին կարող են առանձին առանձին ճնշել: Այդ նպատակով տարածվող ասեկոսների քվում է այն, որ անգլիացիների կողմից Ադրբեջանը մեզ համձեռնությամբ վտխարեն մենք Կովկասում բռնկվելիցների դեմ ճակատ կստեղծենք. դրա նման էլի մի քանի խաբեություններ են շրջանառվում: Դուք իրավասու և պարտավոր եք ձեր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով անհասպաղ և հստակորեն հերքել այդ տեսակ բոլոր ասեկոսները:

Անգլիացիների, ֆրանսիացիների կամ էլ իտալացիների կողմից ուղղակի կամ Մտամբուլում նրանց կողմից իշխանության բերված կառավարության կողմից մեզ խաղաղության առաջարկ չի արվել:

Մուսթաֆա Քեմալ

8

Թուրքական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական վարչության նախագահ Մուսթաֆա Աուֆիիի նամակը

430



Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուսաֆա Քեմսդին  
(1920թ. նոյեմբեր<sup>166</sup>),<sup>167</sup>

Ազգային Մեծ Ժողովի նախագահ Նորին Գերագանցություն  
Մուսաֆա Քեմսալ փաշային

Բաքու

1...<sup>168</sup>

2. Արևելյան ռազմականությունն ապստամբ բանակների հաջող հարձակումը<sup>169</sup> այստեղ լավ տպավորություն է առաջացրել: Քանի որ Չեզանից վերջին ժամանակներին ոչ մի լուր կամ կապակոր այստեղ չի հասել, ապա իրադրությունը ուսումնասիրելու և ավելի հաստատուն հարաբերություններ հաստատելու նպատակով ընկեր Ադիվանիի ղեկավարությամբ ձեր կողմերը մի պատվիրակություն է ուղարկվել:

Այդ հարձակման ընթացքում հայկական սահմաններից ներս չափից ավելի խորանալը հասարակական կարծիքի մեջ որոշ կասկածներ է առաջացրել, որոնք մեր կողմից տարածված հաղորդագրությունների միջոցով փարատվել են: Մեր կողմից մշվել է, որ այդ հարձակումը վնաս չի պատճառի հայ բանվորին ու գյուղացուն և որ նրա նպատակն է պատժել դաշնակցական կառավարությանը, որը լինելով Անտանտի գործակալը, չի խորշել կատարել բազմաթիվ խաբեություններ ու ոճրագործություններ:

Ըստ ամենայնի, մեր այդ հաղորդագրությունները հանրային կարծիքը դրական է ընկալել, քանի որ այս անգամ չկար քարոզություն քուրքերի քարքարությունների մասին, ինչպես նաև ղեկավարում սովորաբար լինում էր անցյալում: Նույնիսկ հայ կոմունիստները մամուլում հանդես եկան որպես քուրքական հարձակման կողմնակիցներ և շարունակում են տպագրել լուրեր, որոնք Անատոլիայի ապստամբներին ներկայացնում են որպես արդարացի կողմ:

Ամեն ղեկավար, կարծում ենք, ավելորդ չէ մշել, որ հնարավորություն չտրվեց օգտագործել "հայկական կոտորածը" որպես միջոց Ռուսաստանի և Եվրոպայի պրոլետարների կարծիքը Անատոլիական շարժման դեմ ուղղելու և մեզ խաբեքա որակելու համար:

3. Վրաստանի անհաջողության և Անատոլիայի կողմից Արևմտյան ու Արևելյան ճակատների կայունացման հետևանքով վերջին օրերին ուժեղացել է վտանգը, որ Անգլիան դաշնակցային հարաբերությունների մեջ կմտնի ԱՄՄ-ի<sup>170</sup> կատավարության հետ: Այդպիսի միությունը կհանգեցնի Անատոլիայի ապստամբների մինչև այժմ ձեռք բերած կորուստին: Միաժամանակ անգլիացիների պատճառով Անատոլիան կզրկվի Սովետներից ուղարկվելիք նյութական ու քարոզական ամեն տեսակ օգնությունից: Այդ պատճառով կարծում ենք, որ մենք չէինք սխալվել, երբ

ասել էինք, քննադատները ձգտում են ունենալ Ռուսաստանի հետ ավելի ուժեղ ու գործուն հարաբերություններ:

4.Նախապես արդեն հայտնել էինք, որ մեր կուսակցության կողմից Անատոլիական շարժմանը օգնելու նպատակով կազմվել է Թուրքական Կարմիր Գունդ: Այն սրամիջ մտավորապես երեք շաբաթ ատաջ Կենտրոնական կոմիտեի անդամ ընկեր Մեհմեթ Էմինի<sup>11</sup> հրամանատարության ներքո Նախիջևանի վրայով ուղարկվեց Քյազըմ Զարարեքի փաշայի տրամադրության տակ: Սակայն այդ ժամանակ Արևելյան ռազմաճակատի հարձակման անցնելու և դաշնակների կողմից Նախիջևանի ճանապարհը փակելու պատճառով հնարավոր չեղավ զինվորներին հասցնել Անատոլիա: Մեր գումարը անցում կատարեց Քերյուսի դիմաց<sup>12</sup> մինչև Արփաշայ և ավարտեց այն հաջողությամբ՝ հակառակորդի ուժերին պատճառելով մեծ վնաս: Մեր զինվորների կորուստները կազմեցին 11 սպանված և մինչև 20 քեթև վիրավոր: Քանի որ ներկայումս իշխում է ժմեռը, ապա այդ պատճառով մեր զինվորները քաշվեցին հանգստի դեպի Ադրաս<sup>13</sup>: Բոլոր անհրաժեշտ միջոցները կճեռնարկվեն նրանց Դելիջանի<sup>14</sup> վրայով ուղարկելու նպատակով:

5.Աղբյուրներում ԱՄՄ-ի ներկայացուցիչ Մեմդուհ Շեվքեթ բեյի<sup>15</sup> Բաքու ժամանելուն պես մեր կողմից որոշվեցին նրա պարտականությունների հաջող կատարման համար անհրաժեշտ միջոցները և նա մասնագրվեց հայտնի հեղափոխական գործիչների հետ, մասնավորապես, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամ ընկեր Ստալինի հետ, որը վերջին օրերին գտնվում է այստեղ:

Ենթադրում ենք, որ ընկեր Ստալինի հետ մինչև երկու ժամ տևած այդ գրույցի արդյունքները Մեմդուհ Շեվքեթ բեյի կողմից Չեզ ներկայացվել են: Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է դրան մի երկու - երեք կետ ևս հավելել:

Ընկեր Ստալինը առաջին հերթին ոչեց, որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը Անատոլիայի ազգային ապստամբական շարժումը դիտարկում է որպես կարևոր պատմական մի իրադարձություն, որը պիտի օրինակ ծառայի և որին պիտի հետևեն Արևելքի բոլոր ազգերը: Այդ շարժման ուժեղացման համար Ռուսաստանը պատրաստ է զնայ ամեն տեսակի զոհողությունների: Դրանից հետո նա քացատրեց, որ մեծ չափով չօգնելու պատճառը այն է, որ իրականում միայն վերջերս է հաջողվել Անատոլիայի հետ հուսալի կապ հաստատել: Մյուս կողմից, խուսակցություններն այն մասին, որ Անատոլիական շարժումն սկսելուց հետո Կարմիր բանակը մնացել է չեզոք, չեն համապատասխանում իրականությանը: Նա հայտնեց, որ արդեն այսօր Նախիջևանի գրավմանը մասնակցում են կարևոր ուժեր, իսկ Գրինում ռազմական գործողություններն ավարտվելուն պես Կովկասյան ուղղությունը կմղվի առաջին պլան:

Ընկեր Ստալինը խոսեց նաև երբորտ կարևոր հարցի մասին:

Էնվեր փաշայի և իր ընկերների լավ ընդունելությունը Ռուսաստանում պայմանավորված է նրանց աշխատանքով ի օգուտ ապստամբ Անատոլիայի: Նրանց տրվում է նյութական օգնություն: Արդյո՞ք կա հնարավորություն, որ նրանք փորձեն ստացազանել ներքին ապստամբություններ և քայքայեն Անատոլիայի ռազմաճակատը: Մեմուրի Շեվքեթը բեր պատասխանեց, որ օգնությունը Էնվեր փաշային և իր ընկերներին կարելի է շարունակել և պարզաբանեց դրա պատճառները:

Այստեղ վաղուց ի վեր կոմունիստի անվան տակ գործող դ-ր Չոաթ բեյը<sup>16</sup>, որն իրականում ոչ մի կապ չունի կոմունիզմի հետ և որի հարաբերությունները մեր կազմակերպության հետ խզված են, աշխատում է Անատոլիայի շարժումը ներկայացնել որպես անկազմակերպ<sup>17</sup> մի շարժում, որին հատուկ է միայն ազգայնականությունը: Վերտիշյալ այդ անձնավորությունը, հենվելով սրանից մի քանի ամիս առաջ Բեքիր Մամի բեյի կողմից հայտնած տեղեկատվության վրա, հայտարարեց, թե ինքը Անատոլիայի ԱՄԺ-ի ղեկավարն է Ռուսաստանում և մի կնիք պատրաստել տալով՝ Ադրբեջանի կառավարությունից պահանջեց չորս միլիոն ռուբլի, այդպիսով ստեղծելով տգեղ մի իրադրություն:

Կարծում ենք, որ այն անձնավորությունը, որը պիտի ներկայացնի [Թուրքիան – Ռ. Ս.] Ռուսաստանի Խորհրդային Կառավարության առջև, պիտի ընտրված լինի ապստամբական շարժման մեջ դիրք ձեռք բերած գործունե ինքնավարականների թվից:

7...<sup>18</sup>

Թ-Կ Կենտրոնական կոմիտե  
Նախագահ՝ Մուսթաֆա Մուկիհի  
Զարտուղար՝ Էփեն Ենժաթ<sup>19</sup>

RUBEN SAFRASTYAN

**TURKISH DOCUMENTS FROM THE PERIOD OF  
TURKISH-ARMENIAN WAR  
(NOVEMBER 1920).**

For the first time in Armenian historiography, the present article is examining the Turkish documents from the last period of Turkish-Armenian war. Article deals mainly with the confidential and decrypted documents, which were intended to use only in the internal circulation. The authors of documents were the leading representatives of emerging kemalist political elite, including Mustafa Kemal himself. The thoughtfully analyses of documents allows author to come to conclusion that the final goal of kemalist Turkey during this war was the elimination of Armenia as an independent political factor in South Caucasus.

As addition to the article, there are attached the texts of eight translated into Armenian documents with the detailed commentary.

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Երվանդ Սարգսյան*, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա. Երևան, 1995: *Է. Ա. Ջոհրաբյան*, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997: *Գալուստ Գալոյան*, Հայաստանը և Սեփ Տերությունները 1917 – 1923թթ. Երևան, 1999: *Լինդրոլ Խորշոդյան*, Հայաստանի բաժանումը 1920 թվականին. Երևան, 2002:
2. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına. Ankara. 8/11/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.
3. *Ալ. Խատիսխան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Աթենք, 1930, էջ. 263:
4. Տես այդ մասին. [Atatürk], Erzurum Mebusu İsmail Beyle Rûfekasınm. Ermenistan Sulh Şeraiti Hakkında İstizah Takriri ve Hariciye Vekâleti Vekili Muhtar Beyin Cevabı Münasebetiyle Sözleri. - [Atatürk] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. 322.
5. *Kemal Atatürk*, Nutuk. Cilt: II, 1920 – 1927. İstanbul, 1961, s. 486.
6. Տես այդ մասին քննարկված պաշտոնական պատմագրության հիմնասյուններից մեկի հետևյալ աշխատությունը. *Tevfik Bıyıklıoğlu*, Atatürk Anadolu'da (1919 - 1921). Ankara, 1959, s. 19.
7. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına, Ankara. 8/11/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.
8. Այդ ուշագրավ փաստաթուղթը առանց կրճատումների հրատարակել է իր հոշագրություններում Իսմայիլը: Տես. *İsmet İnönü*, Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: *Sabahattin Selek*. Ankara, 1985, s. 222.
9. Ibid.
10. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 898.
11. Տեքստը տես. *Ալ. Խատիսխան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը. Աթենք, 1930, էջ. 245 – 246:
12. *İsmet İnönü*, Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: *Sabahattin Selek*. Ankara, 1985, s. 222.
13. Siyasi Kırgınlıklar: 15 Gün Gizli Tutulan Görev. – Tercüman, 04. 05. 1993.
14. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 899.
15. Տեքստը տես. Телеграмма начальника штаба 11-ой Красной армии Пугачева в Реввоенсовет РСФСР с изложением турецкой версии событий в Армении, предоставленной кемалистским командованием Восточного фронта. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. А. Борсегов. Москва, 2003, с. 218 – 219. Հայերեն այդ փաստաթուղթը հատվածաբար հրատարակել է Է. Ջոհրաբյանը. Տես. *Է. Ա. Ջոհրաբյան*, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տերությունները. Երևան, 1997, էջ. 287:

16. Տես Քարաբեքիրի ուղերձի տեքստում. Телеграмма начальника штаба 11-ой Красной армии Пугачева в Революционный Совет РСФСР с изложением турецкой версии событий в Армении, предоставленной кемалистским командованием Восточного фронта. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. А. Барсегов. Москва, 2003, с. 218.
17. Մեջբերումն ըստ. Է. Ա. Չոքրաբյան, 1920թ. թուրք – հայկական պատերազմը և տեղափոխումները. Երևան, 1997, էջ. 287:
18. Նույն տեղում, էջ. 273 - 274:
19. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 899.
20. *Ibid.*
21. *Ibid.*
22. *Ibid.*
23. *Ibid.*
24. Վերցնազրեի տեքստերը տես. *Միտնի Վրազյան, Հայաստանի համրապետություն.* Երևան, 1993, էջ. 511 – 513:
25. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanlığına, Ankara, 8/11/1336. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 901.
26. Տեքստը տես. *Sulh Şartlarımız.* Ankara, 8/11/1920. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 900.
27. *Ibid.*
28. Hariciye Vekili *Ahmet Muhtar*, Şark Cephesi Kumandanı Kâzım Karabekir Paşa Hazinelerine. Ankara, 20 - 21/11/1336. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz.* İstanbul, 1959 – 1960, s. 905 - 906.
29. *Ibid.*, s. 906.
30. *Mustafa Kemal, Doğu Cephesi Komutanlığı'na,* Ankara, 30 Kasım 1920. - Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. Yayınlayan: *Mustafa Onar.* C. II, Ankara, 1995, s. 210-211.
31. Մամուլում այդ մասին տես հետևյալ մեմորանդումում. *Ազալի Նասիպյան, Բրիտանիա և Հայկական Հարցը 1915 – 1923.* Պեյրոն, 1994:
32. *Salahi R. Soneyel, Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 – Mart 1921).* – Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 – 360.
33. Համաձայն թուրք հետազոտող Է. Թելլալի այդ նպատակն էր հետապնդում ԹԱՄԲ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մոմթարի հոկտեմբերի 22-ի մամուլը Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիլերիին: Տես. *Erel Tellal, Sovyetlerle ilişkiler.* – Türk dış politikası: Kurtuluş savaşından bugüne olgular, belgeler, yorumlar. Editör: *Baskın Oran.* (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 170. Այստեղ Ահմեթ Մոմթարի պաշտոնը սխալմամբ նշված է որպես "արտաքին գործերի ժողովրդական կոմիսար":
34. Այդ առումով հատկանշական է Ի. Ստալինի հեռագիրը Վ. Լենինին, որտեղ մա խորհուրդ է տալիս ձգձգել պայմանագրի ստորագրումը Հայաստանի հետ, քանի որ այն կարող է վանել քննադականներին և կորոշի նրանց

- համաձայնության գալ անգլիացիների հետ: Տես. Телеграмма И. Сталина В. Ленину, Баку, 5 ноября 1920г. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев Ю. А. Барсегов. Москва, 2003, с. 216.
35. Տես այդ մասին. *Ihan Uzgel, Omer Kırkıoğlu*, İngiltere ile ilişkiler. - Türk Dış Politikası: Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar. Editor: *Baskan Oran*. (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 141 - 142.
36. Տես այդ մասին. *Salahi R. Sonyel*, Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 - Mart 1921). - Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 - 360.
37. *Ibid.*, s. 356 - 357.
38. Տես այդ փաստաթղթը. Maslahatgüzar Ferruh Bey'den Hâriciye Nâzırı Safa Bey'e, Roma, 24 Kasım 1920. - Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), HR. SYS. 2607/6\_17, Osmanlı İmparatorluğu Büyükelçiliği, 118/73 numaraya ek. - <http://www.devletarsivleri.gov.tr/vavin/osmanli/belgelerleataturk/065.htm>
39. TBMM Başkanı *Mustafa Kemal*, Barış Delegeleri Hamit ve Necati Beyefendilere, 23 Kasım 1920. - Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. Yayınlayan: *Mustafa Onar*. C. II, Ankara, 1995, s. 207.
40. Մուսթաֆա Մուսիհին համարվում էր "Մուսլվալի մարդը": Տես այդ մասին, օրինակ, *Doğan Avcioğlu*, Millî Kurtuluş Tarihi 1836'den 1995'e. İstanbul, 1976, s. 621 - 624.
41. Տես *Mete Tunçay*, Türkiye'de Sol Akımlar 1908 - 1925. 3. Baskı. Ankara - İstanbul, 1978, s. 228.
42. TKP Merkez Heyeti Reisi: *Mustafa Suphi*, Kâtibi: *Ethem Nejat*, B. M. M. Reisi Mustafa Kemal Paşa Hazretlerine, Bakü [?] Kasım 1920]. - *Mete Tunçay*, Türkiye'de Sol Akımlar 1908 - 1925. 3. Baskı. Ankara - İstanbul, 1978, s. 231 - 233.
43. *İsmet*, 28/Teşrinisani/1336. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 903.
44. Այդ շրջանում Քարաբեքերի և Էնկերի միջև փոխանակված բազմաթիվ նամակների զետեղված են Քարաբեքերի զրքերից մեկում. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967.
45. Տես այդ մասին. *Murat Çulcu*, Spekulatif Marjinal Tarih Tezleri. 6. Baskı. İstanbul, 2000, s. 281 - 282.
46. Տես այդ մասին. *Doğan Avcioğlu*, Millî Kurtuluş Tarihi 1836'den 1995'e. İstanbul, 1976, s. 487.
47. Doktor *Fuad Sabit*, Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Bakü, 25 Teşrinisani 1920. - *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967, s. 78 - 80.
48. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960 և *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı. İstanbul, 1967.
49. *Muhammed Erat*, Kâzım Karabekir Paşa'nın Ermeniler Üzerine Harekâtı (1920). - Kafkas Araştırmaları, II, 1996, s. 102.

50. Shu. *Muhammed Erat, Halide Yılmaz, Kâzım Karabekir'in Hayatı ve Çanakkale Savaşlarındaki Rolü*. - T.C Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003, s. 17.
51. Shu. *Şerafettin Twan, Türk Devrim Tarihi II: Ulusal Direnişten Türkiye Cumhuriyeti'ne*. İstanbul, 1992, s. 202.
52. Shu. Գրչին պատկանող հետևյալ հետազոտությունը. *Cemal Kutay, Karabekir Ermenistan'ı Nasıl Yok Etti?* İstanbul, 1956.
53. Ջարաբեքիրը 1946թ., երբ հերթական անգամ արդիականացել էր Հայկական հարցը, պարտեց հայերին միևրված իր գրքի ծնագիրը, որը այդպես էլ վերնագրված էր. «Հայերը որտեղի՞ց են եկել, ո՞ր են գնում»: Այն լույս տեսավ տասնամյակներ անց՝ «Հայկական դոսյե» խորագրի ներքո: Shu. *Kâzım Karabekir, Ermeni Dosyası*. Yayına Hazırlayan Prof. *Faruk Özerengin*. İstanbul, 1994.
54. *Kâzım Karabekir, Ermeni Dosyası*. Yayına Hazırlayan Prof. *Faruk Özerengin*. İstanbul, 1994, s. 29.
55. *Ibid.*, s. 40.
56. *Ibid.*, s. 42.
57. Սուաբախա Քեմալի և Քյազըմ Ջարաբեքիրի փոխարարությունների պատմության վերջինիս մանրամասն մեկնարանությունը տես. [*Kâzım Karabekir*], *Kâzım Karabekir Anlatıyor*. Yayına Hazırlayan *Uğur Mumcu*, Beşinci Basım. İstanbul, 1990.
58. Հետազոտում նա կանգնել է դատարանի առջև և արդարացվել է: Shu այդ մասին. *Erik Jan Zürcher, The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926*. Leiden, 1984, p. 152 -154.
59. Shu այդ մասին. *Feridun Kandemir, Kâzım Karabekir'in Yakılan Hatıraları Meselesinin İçyüzü*. İstanbul, 1964, s. 90 – 115.
60. Shu այդ մասին. *Faruk Özerengin, Sunuş*. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimizin Esasları*. İstanbul, 1992, s. 5.
61. Shu այդ մասին. *Hayat Feyzioğlu, Emel Özerengin, Tımsal Ayasbeyoğlu*. Önsöz. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. VI.
62. Shu այդ մասին *Erik Jan Zürcher, Young Turk Memoirs as a Historical Source: Kazım Karabekir's İstiklâl Harbimiz*. - *Middle Eastern Studies* Vol. 22, No. 4, October 1986, p. 565.
63. Ուշագրավ է, որ գրքի հրատարակումից մի քանի ամիս անց թուրքական իրավասահ համակարգը սրափվեց և սկսեց հետապնդել հրատարակչին, սակայն արդեն ոչ էր: Shu. *Ibid.*, p. 565 – 566.
64. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı*. İstanbul, 1967.
65. *Merhum General Karabekir Kızları*, Önsöz. - *Kâzım Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki Erkânı*. İstanbul, 1967, s. III.
66. [*Atatürk*] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990; [*Atatürk*], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları. C. II. Yayınlayan: *Mustafa Onar*. Ankara, 1995,

67. *Kemal Atatürk*, Nutuk. Cilt: I - III. İstanbul. 1961. Մեր պատմաբանների կողմից օգտագործվել է այդ գրքի առաջին հրատարակության ռուսերեն փարզանմուշումը. Мустафа Кемаль, Путь новой Турции. 1919 - 1927. Т. 1 - 4. Москва, 1929 - 1934.
68. Մոսթաֆա Քեմալի "Ճառի" երրորդ հատորը, որը վերնագրված է "Փաստաթերթ", պարունակում է 299 պաշտոնական վավերագիր: Տես. *Kemal Atatürk*, Nutuk. Cilt: III: Vesikalar. İstanbul, 1961.
69. *Kâzım Öztürk*. İkinci Baskının Özetisi. - [*Atatürk*] Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. III.
70. Անճեր Մուհթար, հետագայում ընդունել է Մուլաօղլու ազգանունը (1870-1934): Դիվանագետ, փոխարտգործնախարար, 1920 - 1921 թթ. հաճախակի փոխարինում էր երկարատև արտասահմանյան գործուղումներում գտնվող քեմալական թուրքիայի առաջին արտգործնախարար Բեքիր Սամիին: Եղել է Օսմանյան կայսրության դեսպանը Հունաստանում, Ուկրաինայում, հանրապետության տարիներին զբաղեցրել է դեսպանի պաշտոնները Մոսկվայում ու Վաշինգտոնում: Բազմիցս ընտրվել է թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի պատգամավոր:
71. *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 901. Փաստաթուղթը հայերեն ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: Նրա առանձին հատվածների հայերեն փարզանմուշումը ժամանակին տպագրել է Ե. Ղ. Մարգարյանը: Տես. *Երվանդ Մարգարյան*, Հայադավություն. - Հայաստանի աշխատավորուհի, 1991, N. 3, էջ. 1 - 2 և *Երվանդ Մարգարյան*, Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա. Երևան, 1995, էջ. 170 - 171: Այդ երկու փարզանմուշումները զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից և շեղվում են քննադից: Փաստաթղթին անդրադարձել է նաև Վահագն Տատրյանը, տպագրելով նրա մեկ հատվածի անգլերեն փարզանմուշումը, տես. *Vahagn N. Dadrian*, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Oxford, 1995, p. 358.
72. Ի նկատի ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը փոխանցվելիք փաստաթուղթը:
73. Հետագայում ընդունել է Արսլան ազգանունը:
74. Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: *Kâzım Öztürk*. Ankara, 1990, s. 321 - 322. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
75. փաշա:
76. Թերևս, ի նկատի ունի արտաքին գործերի փոխնախարար Մուհթար քեյին:
77. Հրատարակված է *Kâzım Karabekir*, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 - 1960, s. 905 - 906. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
78. 1920թ. նոյեմբերի 13:
79. Քարաբեքիրը իր հուշագրություններում այդ վավերագիրը չի հրատարակել:
80. Շածկագրի առաջին կետում քննադրվում են Կ. Պոլսի սուլթանական կառավարության գործունեության հետ առնչվող որոշ խնդիրներ: Այդ հատվածը չենք փարզանմուշել:



81. Հեռագրի թուրքերին տեքստում այս տեղում դրված է քաղաքակետ, ամենայն հավանականությամբ, քաղց հնարավոր չի եղել ընթերցել կամ վերծանել՝ այդ տարիներին հեռագրային կապը անհուսալի էր: Նախադասության իմաստը հուշում է, որ այստեղ պիտի լիներ "հայտնի ենք" կամ մեկ այլ մույնիմաստ արտահայտություն:
82. Բեքիր Սամի (հետագայում ընդունել է Քոնդուտի ազգանունը), (1865 – 1933, որոշ տեղեկություններով՝ 1932): Օսմանյան կայսրության և համրապետական Թուրքիայի քաղաքական գործիչ, դիվանագետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դիվանագետ պաշտոններ է զբաղեցրել օսմանյան կառավարման համակարգում: Քեմալականների առաջին և երկրորդ կառավարություններում զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը (1920 – 1921 թթ), դեկավարել է այդ կառավարության առաջին պատվիրակությունը Մոսկվա (1920թ, հուլիս – սեպտեմբեր): Նրա դերը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ դեռևս վերջնականապես պարզաբանված չէ, քանի որ առկա են իրարամերժ վկայություններ: Տես, օրինակ, Ա. Անտոնյան, Մեծ ոճրերը: Հայկական վերջին կոտորածները և Թալիսաք փաշա: Երևան, 1990, էջ. 31 և British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. By Vartkes Yeghayan. La Verne, 1991, p. 325:
83. Ի նկատի ունի խորհրդային կառավարության առաջարկը հանձնել Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին:
84. Ֆերիթ փաշա, դամաթ՝ սուլթանական ընտանիքի ներկայացուցիչ (1853 - 1923): Օսմանյան պետական գործիչ, հինգ անգամ զբաղեցրել է սաղրեզամի (կառավարության նախագահի) պաշտոնը: Ղեկավարել է թուրքական պատվիրակությունը Սևրում և ստորագրել է Սեբի դաշնագիրը:
85. Այդպես է թուրքերին տեքստում: Ըստ ամենայնի, վավերագրի այդ հատվածը հրատարակելի համար եղել է անընթեռնելի:
86. Ի նկատի ունի քանակությունները Ալեքսանդրապոլում:
87. Բնութագրելով այս և հաջորդ վաստաթուրք -Քարաբեքիրը գրում է. "Արևելյան գործողության ընթացքում Անկարայի հետ տեղի է ունեցել նաև որոշ մամակափոխանակություն ընդհանուր իրադրության վերաբերյալ:" – Տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 904: Ոչազդավ է, որ իր պատասխան ծածկագրում Քարաբեքիրը հայտնել է իր մտտեցումները Անմիթ Մուսթաֆայի մամակի միայն այն կետերի վերաբերյալ, որոնք առնչվում էին Կ.Պոլսի սուլթանական կառավարության գործունեության հետ, անտեսելով Հայաստանի դեմ պատերազմի մասին կետերը: Այդ պատճառով Քարաբեքիրի վերևում նշված ծածկագիրը սույն հրապարակման մեջ չենք ներգրավել: Տեքստը տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 906 - 907.
88. Համիթ բեյը (հետագայում ընդունել է Քափալը ազգանունը) այդ շրջանում եղել է Էրզրումի վալի (նահանգապետ): Հայտնի է եղել "Խելագար Համիթ" մականունով: Ստորագրել է ի թիվս այլոց Ալեքսանդրապոլի 1920թ. պայմանագիրը: Համարվում է Մոսթաֆա Մուսիիի սպանության կազմակերպիչներից:
89. Մյուլեյման Նեջաֆի բեյ, հետագայում ընդունել է Գյումերի ազգանունը (1890 - 1944), քեմալական շարժման մասնակից, կրթական և

իրատարակյալան որդուների գործիչ: ԹԱՄԺ-ի պատգամավոր է եղել Էրզրումից, այն է ընկել իր հակահայկական երայքներով ու հարցապնդումներով: Ստորագրել է ի քիս այնց 1920թ. պայմանագիրը: Հետագայում դասավանդել է քոլորներն լեզու Կ.Պոլսի Գալստիյո հայկական վարժարանում: Հեղինակել է հուշագրությունների ոչ ծավալուն գրքույկ *Sileyman Necati Güneri, Hatıra Defteri*. İstanbul. 1999.

90. Տպագրված է. *[Anatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları*. C. II, Yayınlayan: *Mustafa Onar*. Ankara, 1995, s. 207. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:

91. Դոկտոր Ֆուաթ Սարիթ, հետագայում ընդունել է Աղաջըր ազգամուրը: Երիտթուրքական կուսակցության գործիչ, պանթուրքիստական շարժման ակտիվ մասնակից, «Թյուրքական օջախ» ծայրահեղական կազմակերպության հիմնադիրներից ու ղեկավարներից, տես այդ մասին, մասնավորապես, *Tarik Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler*. Cilt I: İkinci Meşrutiyet Dönemi, 1908 – 1918. Genişletilmiş İkinci Baskı. İstanbul, 1988, s. 432. Եղել է հայոց ցեղասպանությունն իրականացրած «Թեքլիյաթ-ը Մահստեի» («Հատուկ կազմակերպության») անդամ, տես այդ մասին. *Abdullah Muradoğlu, Teşkilat-ı Mahsusa – Yeni Şafak*, 23. 11. 2005. Ազգայնական շարժման տարիներին եղել է երիտթուրքերի կողմից հիմնադրված ԹԿԿ ղեկավարներից, հանդես է եկել կապավորի դերում եվկերականների, քեմալականների և ռուս թուշկիկների միջև: Նրա կյանքի ու գործունեության մասին տես. *Ali Birinci, Dr. Fuat Sabit - Türk Yurdu*, 1999, Sayı. 139-141, s. 45 – 58.

92. Տպագրված է. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki* Erki. İstanbul, 1967, s. 78 – 80. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:

93. Նամակի առաջին մասում նկարագրվում է Մուսթաֆա Սուվհիի գործունեությունը Բաքվում: Այդ հատվածը քարգմանված չէ:

94. Ի նկատի ունի Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա և Կարսի զրավումը:

95. Ի նկատի ունի Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա:

96. Նամակի մնացած հատվածը, որը առնչություն չունի թուրք-հայկական պատերազմի հետ, քարգմանված չէ:

97. Հրատարակված է. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 903. Գրված է Էսքիշեհիրից: Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:

98. Գնդապետ Սաֆֆիթ քեյ, հետագայում ընդունել է Արքթան ազգամուրը (1888 – 1947): Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի ռազմական ու պետական գործիչ, ղիվանագետ: 1920թ. Մոյեմբերի 14-ին նշանակվել է Այի Ֆուաթի Մոսկվա մեկնող դեսպանության կցորդ:

99. Այի Ֆուաթ փաշա, հետագայում ընդունել է Ջեքեսոյ ազգամուրը (1883 – 1968): Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի ռազմական ու պետական ղեկավար գործիչ, ղիվանագետ: 1920թ. Մոյեմբերի 21-ին նշանակվել է քեմալական Թուրքիայի առաջին դեսպանը Խորհրդային Ռուսաստանում, 1921թ. ստորագրել է Մոսկվայի ռուս-թուրքական

պայմանագիրը: Թուրք-ռուսական բանակցությունների վերաբերյալ  
իրատարակի է հուլազոությունների գիրք: Տես. *Ali Fuat Cebesoy, Moskova*  
*Hatıraları* (21/11/1920 – 2/6/1922). İstanbul, 1955.

100. Ի նկատի ունի պատերազմը Հայաստանի դեմ:
101. Ինչպես նրանում է ներկայացված Քարաբեքիրի մեկնարանություններից, նրան չէին գոհացրել Մուսթաֆա Քեմալի և այլոց պաշտոնական շնորհավորանքները:
102. Քարաբեքիրի հրատարակած տեքստը սրանով ավարտվում է:
103. Այս նամակի մասին Քարաբեքիրը իր հուշերում գրում է. «... Մուսթաֆա Քեմալ ու Ֆեվկի փաշանաներից, ինչպես նաև այլոց կողմից ստացած պաշտոնական շնորհավորանքներից ինձ համար ավելի մեծ արժեք ունեին Իսմեթ բեյի նամակը և հետագիրը, քանի որ Արևելյան ռազմաճակատի դերը Անկախության պատերազմում և նրա նշանակությունը մեր ազգային գործի համար նա տեղադրել էր մեր պատմության շրջանակների մեջ»: Տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 902 – 903: Իսմեթի այդ ծածկագրված հետագիրը գրված է 1920թ. դեկտեմբերի 9-ին և այդ պատճառով չի ներգրավված սույն հրապարակման մեջ: Տես. *Kâzım Karabekir, İstiklâl Harbimiz*. İstanbul, 1959 – 1960, s. 903.
104. *[Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları*. C. II. *Yayımlayan: Mustafa Onar*. Ankara, 1995, s. 210-211. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
105. Քյազըմ բեյ, հետագայում ղեկավարել է Դիրիք ազգամուրը (1880 - 1941): Արևհատակարժ զինվորական, համրապետական շրջանում՝ պետական գործիչ: Մաս է կազմել Մուսթաֆա Քեմալի մեղմակոր շրջապատի:
106. Ամիսը որոշված է բուրբ հրատարակչի կողմից:
107. *Mete Tunçay, Türkiye'de Sol Akımlar 1908 – 1925*. 3. Baskı. Ankara – İstanbul, 1978, s. 231 – 233. Փաստաթուղթը հայերեն տպագրվում է առաջին անգամ:
108. Նամակի սկզբնական հատվածը, որտեղ խոսվում է Թուրքիայում կոմունիստական գործունեության հնարավորությունների մասին, չենք թարգմանել:
109. Նկատի ունի ազգայնականների զինված ուժերի Արևելյան ռազմաճակատը, որի հրամանատարն էր Քարաբեքիրը:
110. ԱՄԺ՝ [Թուրքիայի] Ազգային Մեծ Ժողով:
111. Թուրքական աղբյուրները նշում են, որ ԹԿԿ այդ գործիչը գտնվել է Էնվերի ազդեցության տակ և հետագայում քեմալականների մատնել է Էրզրում ժամանած Մուսթաֆա Սուվիհին, այդպիսով փրկելով իր կյանքը: Տես այդ մասին. *Mete Tunçay, Türkiye'de Sol Akımlar 1908 – 1925*. 3. Baskı. Ankara – İstanbul, 1978, s. 215 – 216.
112. Հայերեն՝ Գորիս
113. Թերևս, պետի լինի Ադրամ:
114. Հայերեն՝ Դիլիջան:
115. Մանդուհ Շեվքեթ, հետագայում ղեկավարել է Էսենդալ ազգամուրը (1883 - 1952): Երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կոմիտեի և քեմալական Հանրապետական-ժողովրդական կուսակցության ղեկավար

- գործիչ, ղիվանագետ, արձակագիր: 1920-1924թթ. եղել է Անկարայի կառավարության ղեկավարող Բարվում: Մեղակից է Հայոց ցեղասպանության ոճրագործության, ինչի մասին 1919թ. նշվել է քուրթական ռազմական արտակարգ ատյանի դատավճիռներից մեկում: Տես. *Osman Selim Kocahanoglu, İttihat – Terraki'nin Sorgulanması ve Yargulanması: Meclis-i Mebusan Tahkikatı, Teşkilat-ı Mahsusa, Ercmni Tehcirin İçyüzü, Divan-ı Harb-i Örfi Muhakemesi. İstanbul, 1998, s. 521.*
116. Խուսրը վերևում հիշատակված դրկտոր Ֆուաթ Սարիթի (Աղաջը) մասին է:
117. Թուրքերին տեքստում օգտագործված է «չոբան» (չօբան) քառը, որը տվյալ դեպքում ունի «լուպիտ», «անուշ» իմաստները:
118. Այդպես է քուրթերին տեքստում, վեցերորդ կետը բացակայում է:
119. Էրհնմ Նեմաթը (1887 - 1921) կրիտթուրքերի իշխանության շրջանում մասնակցել է պանթուրքիստական շարժմանը, հետագայում ակտիվորեն ներգրավվել է կոմունիստական շարժման մեջ և Մուսթաֆա Սուլթիի հետ սպանվել է Քեմալի ու Քարաբեքիի հրամանով:

---

---

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

---

---

ԱԶՍՏ ԲՈՋՈՑԱՆ

ՆԵՐՂՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Aram Mardirossian, *Le livre des canons Arméniens (Kanonagirk' Hayoc') de Yovhannēs Awjēc'i: igrise, droit et sociéte en Arménie du I<sup>ve</sup> au VIII<sup>e</sup> siècle*, Lovanii, In aedibus Peeters, 2004, XX+711 p. (Corpus scriptorum christianorum orientaliū, vol. 606, subsidia tomus 116).

Արամ Մարտիրոսյան, Հովհաննես Օճնեցու հայկական կանոնների գիրքը (Կանոնագիրք Հայոց). եկեղեցին, իրավունքը և հասարակությունը I - II դարերի Հայաստանում, Լուվեն, 2004, Ի + 711 էջ:

Հայկական կանոնագիտական գրականությունը վերջին տարիներին համեմատաբար հետ էր մնում հայագիտության մյուս մարզերից: Ցավոք, դասական կանոնագիտությունը արդեն շուրջ իննսուն տարի իր հետևորդները չունի հայաստանյան Հայագիտության մեջ: Ուրախստի է, որ ներկա աշխատանքով հայագիտության ասպարեզ է իջնում կարող մի հայագետ, որն ունի դասական իրավաբանության մասնագիտական կրթություն: Ներկա աշխատանքը 2002 թ. իբրև յոկտոբրական ավարտաճառ պաշտպանության է ներկայացվել Փարիզ X-Նամստեռ համալսարան և հանձնաժողովի անդամներ պրոֆեսորներ Ժան-Պիեռ Պոլի (դեկավար), Ժան-Պիեռ Մանեի (համադեկավար), Էրիկ Բոտնագելի, Ժոզեֆ Սելեզ Մոդրցևսկու և Իվ Մասիեի ներկայությամբ ստացել հայցված կոչումը: Հեղինակը աշխատանքի գրման գործում արժևորում է նաև պրոֆեսորներ Նինա Գարսոյանի և Սոֆի Լաֆոնի արժեքավոր խորհուրդները: Հեղինակն ընդգծում է գրքի սրբագրման գործում Ազնես Ուզունյանի և Ֆրանսուազ Պոնտ-Բուրնեզի կատարած դերը: Վերջապես արժևորում է պրոֆեսոր Բեռնար Քուլլիի դերակատարությունը գրքի հրատարակությունը գիտական շրջանակներում մեծ ճանաչում ունեցող Corpus scriptorum christianorum orientaliū շարքում հրատարակելու գործում:

Գիրքը բացվում է ճանաչված հայագետ Ժան-Պիեռ Մահեյի և Փարիզ X-Նամտեո համալսարանի իրավունքի պատմության պրոֆեսոր Ժան-Պիեռ Պոլիի առաջաբաններով, ապա ներկայացվում է տրամսյի-անրագիտյի և հասարակականների Revue des etudes Armeniennes-ում ընդունված համակարգը: Քուն աշխատանքը սկսվում է Ներածությամբ (էջ 1-40), և բաղկացած է երկու մասից. ա) Գրիգոր Լուսավորչից մինչև Շահապիվանի ժողով, Ծագում (էջ 41-251), բ) Շահապիվանի ժողովից մինչև Կանոնագիրք (էջ 253-493), Եզրակացությունից (էջ 495-500), երկու բնագրագիտական ակնարկներից (Excursus). ա) Շահապիվանի ժողովածուն (էջ 501-532), բ) Հովհաննես Մայրազունեցու ժողովածուն (էջ 533-625), մատենագիտությունից (էջ 627-692), հավելվածներից (էջ 693-701), երկու քարտեզից (էջ 702-705) և բովանդակության ցանկից: Գիրքը մի ձև է Յովհան Իմաստասեր Օձնեցու հիշատակին:

Ինտիմուտի անդամ Ժ.-Պ. Մահեյն իր առաջաբանում ընդգծում է Հայոց պատմությունն ընկալելու տեսանկյունից բնական իրավունքի դերը, անդրադառնում է հայ և արևմտյան վաղ միջնադարյան հասարակությունների կառուցվածքային տարբերություններին, խոսում է Հայաստանում քաղաքացիական ժողովրդի առաջ և հետո քրիստոնեության խաղացած դերի մասին՝ բարձր գնահատելով Արամ Մարտիրոսյանի բնագրագիտական-իրավագիտական հետազոտությունը: Պրոֆեսոր Ժ.-Պ. Պոլին իր առաջաբանում անդրադառնում է հին աշխարհի մշակույթներում բանավոր և գրավոր իրավունքների խաղացած դերին, հռոմեական գրավոր և արևելյան «բարբարոսական» իրավունքների հարաբերակցությունը, ազգային համախմբման գործում կանոնական իրավունքի և պետության տեղը գրադեցրած եկեղեցու խաղացած դերին՝ արժևորելով Ա.Մարտիրոսյանի աշխատանքն իբրև իրավական նորմերի և մտածողության մի նոր ու ինքնատիպ, երբեմն հակասական աշխարհի բացահայտում:

Ներածության մեջ երկուսն ունենալով Կանոնագրի հիշատակարանում Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի ձգտումը ի մի բերելու հայոց կանոնական իրավունքի հուշարձանները, Ա.Մարտիրոսյանն անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանի իրավունքը և հասարակական կատարյալ բնորոշող հիմնական հասկացություններին (synode-ժողով, կանոնական իրավունք, արեմք, գերդաստան, իշխան-նախարար, ազատ, ռամիկ-շինական, գավստ և այլն), ընդգծում է եկեղեցական կազմակերպության դերը ազգային միասնականության պահպանման գործում: Հեղինակն այնուհետև մի հայացք է նետում Գ-Ը դարերի Հայաստանի վարչական և քաղաքական բաժանումներին, հայագիտական գրականության և սկզբնաղբյուրներում կիրառված աշխարհագրական անվանակարգին (նունակատարա), ընդգծելով Հայաստանի բացառիկ դերը արևմտյան (Հռոմի և Բյուզանդիայի) և արևելյան (Իրան և Արաբական խալիֆատ) քաղաքակրթությունների խաչմերուկում ասպարեզում:

Այստեղ ներկայացվում են նաև դարաշրջանի պատմության հիմնական սկզբնաղբյուրները (Մովսես Խորենացի, Ագաթանգեղոս, Կողոմ, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Վազար Փարպեցի, Գիքոր Մղոմ) հիմնվելով վերջին տարիների հայագիտական գրականության ընթացումների վրա: Այստեղ հիմնական նշանակություն է հեղինակն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հանգամանքներին ու նրա պատմությանը, առաջին տիեզերածառնային հանդեպ Հայոց եկեղեցու բռնած դիրքին, որը հարաբերակցում է Բյուզանդական կայսրության և Իրանի քաղաքական հակամարտությանը բուն Հայաստանում ստեղծված հակադիր (հունամետ և պարսկամետ) քաղաքական կուսակցությունների գոյության հետ: Հայոց եկեղեցու վերջնական հակաքրիստոնեական դիրքորոշումը հեղինակը կապում է Արքայապետ Արտաշատի կաթողիկոսի գործունեության հետ, որի գահակալությունից մինչև Հովհաննես Օձնեցի, համարում է եկեղեցական բախումների դարաշրջան (էջ 19-20), կայունության դարաշրջան համարելով Կոմիտաս Աղցեցու տարիները: Անդրադառնալով Հովհաննես Մայրազոմեցու գործունեությանը, միանշանակորեն այն համարում է հերձվածողական (հուլիանիստական), և հետևելով Ժ.-Պ. Մահեյի, կարծում է, որ նա իր երկերը (նշանակալի մասով կանոնական) տարածել է ուղղափառ եկեղեցակների անունով: Եզրին մինչև Հովհաննես Օձնեցու գահակալման դարաշրջանը համարելով բյուզանդական եկեղեցու հետ վերամիավորման շրջան, Արամ Մարախրոսյանն անդրադառնում է եկեղեցական միության երկուստեք վարձերին: Հայ իրականության մեջ կանոնական իրավունքի ծնունդը կապելով 311 թ. Տրդատ Մեծի կողմից քրիստոնեության ընդունման հետ, ըստ նրա, կրակապաշտությունից քրիստոնեության անցումով, հին սովորության իրավունքը հետգիտելի վիճարկվում է գրավոր կանոնական իրավունքով, ինչպես որ գրադաշտական տաճարների տեղում կառուցվում են քրիստոնեական սրբավայրեր:

Հայոց եկեղեցին մինչև 373 թ. կապվեց կապաղովկյան եկեղեցու հետ, նրա միջոցով մասնակցելով Տիեզերական եկեղեցու ժողովներին և ծանոթանալով կանոնական հուշարձաններին, սկսելով կամաց-կամաց հեռանալ ազգային սովորության իրավունքի նորմերից: Իրավունքի այս երկու տեսակի միաձուլումով, 444 թ. Եանապիվանում սկիզբն է դրվում հայ կանոնական իրավունքի առաջին հուշարձանի: Հովհաննես Մայրազոմեցու գործունեության հետ է կապում Հայոց կանոնական իրավունքի քեռականական ուղղվածությունը, որի ամբողջականացումն ավարտվում է Հովհաննես Օձնեցու գործունեությամբ: Հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանի Հայաստանում կանոնական մարչի զարգացման մասին չկան հստակ սկզբնաղբյուրներ և հետազոտողները ստիպված են իրենց տեսությունները կառուցել անուղղակիորեն խնդրի հետ կապվող սկզբնաղբյուրների վրա: Այս առումով Հայոց կանոնագրքի գաղափար-

րական հիմքի կապումը Հովհաննես Մայրազունցու գործունեության հետ, դեռևս կարիք ունի ապացուցման: Բազմակողմանի ապացուցման կարիք ունի նաև Հովհաննես Մայրազունցու դավանաբանական հավատամքի (կրեդո) պարզաբանումը, խնդիր, որի համակողմանի քննարկման կարիքն է զգում հայագիտությունը: Պահպանված մատենագրական երկերը, դրանց հեղինակային պատկանելության խնդիրների հետ կապված հարցերը դեռևս թույլ չեն սաղիս հայտարարություններ կատարել: Պահանջվում է պատմաստվածաբանական համակողմանի քննություն, Հայոց եկեղեցու անցած ճանապարհի վերափնաստավորում:

Կանոնական իրավունքի ձևավորման խնդրին անդրադառնալիս, հեղինակը բացատրում է սովորութայինից կանոնական իրավունքին անցման, «արևելք» և «կանոն» տերմինների միջնադարյան նշանակության խնդիրներին: Ըստ նրա «արևելքը» Հայաստանում մինչև ԺԲ դարը մնում էր բանավոր, թեպետ դեռևս հելլենիստական դարաշրջանում Հայոց թագավորներն իրենց հրամանագրերն արձանագրում էին քարերի վրա հունարեն կամ արամեերեն: Մինչև Դ դարը հեղինակն հնարավոր է համարում նույնիսկ Սասանյան դատաստանագրքի օգտագործումը, սակայն մինչև ԺԱ դարը բացառում է գրավոր իրավունքի գոյությունը Հայաստանում (էջ 29, 31): Միայն ԺԲ դարից սկսած, Ներսես Լամբրոնացու ջանքերով շրջանառության մեջ են դրվում հարևան ժողովուրդների գրավոր իրավական հուշարձանների հայերեն թարգմանությունները, իսկ դրանից քիչ առաջ ստեղծվում է Մխիթար Գոշի Դատաստանագրքը, որն իր նշանակալի մասով Կանոնագիրը Հայոցի սահմանումների վերահաստատումն է, որոնք ուղեկցվում են բազմաթիվ լրացումներով:

Հեղինակը հետևելով Ժ-Պ Մահեյին առանձնացնում է սովորութային իրավունքի ձևավորման հիմնական սկզբնաղբյուրները, որոնց մեջ ընդգծում է Ասավածաշնչի, ազգագրության կողմից հետազոտվող տեղական սովորութային նորմերի, Բյուզանդական իրավունքի գրավոր հուշարձանների, հրավարտակի բնույթ ունեցող վիմագիր արձանագրությունների դերը: Հետազոտվող դարաշրջանի համար հեղինակը իրավունքի հուշարձանները բաժանում է երկու տեսակի. հոգևորականության շրջանակներով սահմանափակվող գրավոր կանոնական իրավունք և ավելի ընդհանուր նշանակություն ունեցող բանավոր սովորութային իրավունք: Վաղ միջնադարյան քրիստոնեական հասարակության համար Արամ Մարտիրոսյանը այս երկվությունը զարմանալի չի համարում (էջ 31), ընդգծելով «օրենք»ի նշանակությունը իբրև կրոնի Սերժավորարևելյան քրիստոնեական եկեղեցիների մտեցումը, ուր պահպանվում է «Կեսարիցն կեսարիցն» ավետարանական սկզբունքը, բաժանելով եզրույթ և աշխարհիկ իշխանությունները: Այնուամենայնիվ, Հայաստանում կանոնական իրավունքը հակում ունի զբաղեցնելու քաղաքացիական իրավունքի տեղը: Իհարկե այս խնդրի շուրջ հեղինակի մտեցումը նոր հե-



տագոտությունների հետանկարներ է քաջում հայագիտության համար, սակայն հարցադրման իր դրվածքով հիշեցնում է արևմտաեվրոպական մոդելը, որի հավաստիությունը պարզելու համար դեռևս պետք է նյութեր հավաքել, ապացուցել հայկական և արևմտյան մոդելների նույնականությունը: Հեղինակն այնուհետև ամրադառնում է Կամոնազիքը Հայոցի հրատարակություններին և հետազոտություններին (էջ 32-40), առանձնակի շեշտելով Վազգեն Հակոբյանի հսկայական վաստակը:

Գրքի առաջին մասն անվանված է «Գրիգոր Լուսավորչից մինչև Շահապիվանի ժողով. Ծագում», ուր ամրադառնում է Հայոց կանոնական իրավունքի ձևավորման խնդիրներին, իր ասելիքը ներկայացնելով հետևյալ գլուխներում (1.«Հին մարդուց նոր մարդ», 2.«Ժառանգակամության դեմ պայքարող եկեղեցի», 3.«Ճակատամարտերը», 4.«Ճակատամարտերի միջոցները. Իրավունք»): Շահապիվանի ժողովի հիմնական խնդիրը համարելով Հովսեփի Հողմցեցու կաթողիկոսական ընտրությունը, որով ամբողջացվում էր Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը ի հակադրություն պարսկական վտանգի, հեղինակն ամրադառնում է Տիեզերական եկեղեցու այն հիմնական կանոնախմբերին (Ամտիոքյան, Նիկիական, Առաքելական և այլն), որոնք հիմք են դարձել այդ ժողովի որոշումների համար, դրանց մեջ ընդգծելով ամտիոքյան կանոնական ժողովածոյի դերը: Ամտիոքի կանոնախմբի ասելով հեղինակը նկատի ունի Տիեզերական եկեղեցու տեղական ժողովների կանոնախմբերի այն ժողովածուն, ուր հավաքված են եղել Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Ամտիոքի, Լավողիկիայի, Սարդիկեի տեղական ժողովների կանոնախմբերը: Այս ժողովածոյի պատմաաղբյուրագիտական քննությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ հայկական կանոնական գրքերի հետագա հետազոտության համար, որը լայն ճանապարհ է քաջում Քրիստոսյա Արևելքի Կամոնազքերի համեմատական ուսումնասիրության տեսանկյունից:

«Հին մարդուց նոր մարդ» գլխում հեղինակն ամրադառնում է մազդեականության հայկական տարբերակից քրիստոնեությանն անցման, հին կրոնից նորին՝ ունեցվածքի վտխանցման խնդիրներին: Հեղինակը պաշտպանում է այն տեսակետը, որ Տրդատն ու Գրիգոր Լուսավորիչը ոչնչացնելուց հետո բռնագրավում էին հեթանոսական հիմնական տաճարների ունեցվածքը, մասնաշաղկապ կոչելով հին կրոնի քրմերին (էջ 46-47): Այս դրույթն ապացուցման կարիք ունի: Պիտի չնոտանալ, որ բազմաթիվ հեթանոսական սրբարաններ կանգուն են մնացել քրիստոնեության ընդունումից հետո էլ, դրա լավագույն ապացույցներն են Գառնու տաճարը և Ս.Էջմիածին տաճարի բեմի տակ պահպանված ատրուշանը: Ունեցվածքի անցման խնդիրներին ամրադառնալիս պետք է ճշտել անցման ձևերը: Հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ քրիստոնեության առաջին շրջանում

յուրաքանչյուր նախարարական տեղն ունի իր դրամ ելակետայնությամբ և պատահական չէ, որ Գրիգորին ձեռնադրելու համար նրան Կեսարիս են ուղեկցում Հայոց աշխարհի հիմնական նախարարական տներին առաջին դեմքերը: Հանգամանք, որը թույլ է տալիս մտածել, որ նրանք էին հեթանոսական սրբավայրերի կործանման նախաձեռնողները: Ա.Մարտիրոսյանն անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանում հողատիրության և ունեցվածքի ձևերը բնորոշող եզրերին և հասկացություններին (դաստակերտ, սահման, գետին, գանձ, հող երդոյ, ազարակ տեղի, տասանորդ, պտտոյ), եկեղեցու տնտեսական, հոգեխնամ (գողեմոց, արկանոց, աղքատանոց, այրեմոց, ռքբանոց, հիւանդանոց և այլն) և իրավական կարողություններին, եկեղեցու բարեգործության և բարեկեցության հիմք հանդիսացող ֆինանսական և հարկային աղբյուրներին, համեմատելով երբեմն զրադաշտական և քրիստոնեական որոշ գույքահեղ եզրեր (ջատագով, մոզպետ, դատավոր, քուրմ և այլն), եկեղեցական ժառանգական հողատիրության (հայրենիքի) ձևավորման հիմնական աղբյուրներին: Հեղինակը եզրակացնում է, որ Հայաստանում քրիստոնեության մուտքի հենց սկզբից հոգևոր դասը ձեռք է բերում հասարակության մեջ որոշակի արտոնություններ (հարկային և դատային), որոնք ավելի են ամրապնդվում դարերի ընթացքում, հատկապես Արշակունսից հարստության անկումից (428) հետո:

Ա.Մարտիրոսյանն անդրադառնում է նաև վաղ Միջնադարյան Հայաստանում եկեղեցական հողատիրության տիրապետման և կառավարման ձևերին, կաթողիկոս-պատրիարքի գլխավորությամբ նվիրապետական համակարգի ինքնազլխությանը, եկեղեցական ողջ կազմակերպության ընդհանուր (ոչ մասնակի) սեփականության խնդրին, այդ արտոնության ետ վերցման համար Պապ թագավորի թափած անպտուղ ջանքերին (էջ 58), հոգևորական-«վիճակավայ»ների և կրտսեր հոգևորականության «բաժն»ին, եկեղեցուն տրվող տուրքերին, եկեղեցական ունեցվածքի օգտագործման ու կաթողիկոսի կողմից վերահսկման խնդիրներին (էջ 60):

Խոսելով Հայաստանում քրիստոնեացման երկու ճանապարհների և դրա հետ կապված մշակութային խնդիրների մասին, հեղինակն անդրադառնում է Դ-Ե դարերի Հայոց եկեղեցու պատմության հիմնախնդիրներին (էջ 60-69), վարձելով ընկալելի դարձնել եկեղեցու պատմության վերջին տարիների հետազոտությունների (Գ.Վիլնկեր, Ն.Գարսոյան, Մ. վան Էսթրուկ, Ժ.-Պ.Մահե Նմ.) արդյունքները: Ջննարկման ենթակա հիմնական հարցերն են քրիստոնեության ընդունման աստրական և հունական ճանապարհները, հռոմեական և պարսկական ազդեցության գոտիները Հայաստանի քաղաքական և կրոնական կյանքում, Հայաստանում գրերի գյուտի և մշակութային կյանքի աշխուժացման ազդակները, կանոնական որոշումների և բառասպաշարի հարաբերակ-

ցությունը, խնդիրներ, որոնք քննարկման նյութ են դարձել Շահապիվանի ժողովում: Այդ խնդիրների մեջ հեղինակն առանձնացնում է Ամուսնության և հուղարկավորության խնդիրները:

«Ինչպես են ամուսնացնում» բաժնում հեղինակն ընդգծում է, որ Շահապիվանի ժողովի կանոնների մեկ երրորդը վերաբերում է ամուսնական փոխհարաբերություններին: Այդ երևույթը տարօրինակ չէ, քանի որ ամուսնական խնդիրներին անդրադառնում է և՛ Ավետարանները, և՛ Կաթողիկե թղթերը, ինչպես նաև սովորության իրավունքը, քանի որ ամուսնական ընտանիքը քրիստոնեական հասարակության հիմնարարներից է: Անդրադառնալով Շահապիվանի է կանոնին, ուր քննարկվում են առևանգումից հետո ամուսնության կարգավորման, պատժապահների կարգավորման և դատական պատասխանատվության հարցերին (էջ 72-73), խնամախոսության, «վարձանքի», «օժիտի», ամուսնության վավերականության խնդիրներին (էջ 74-76), եկեղեցական պատկի, ամուսնության սրբացման, կուսության, նշանելու խնդիրներին (էջ 76-78):

Բաժնի հաջորդ մասը վերաբերում է ամուսնական արգելքներին: Անդրադառնալով հին Հայաստանում բազմակնություն խնդիրներին, հեղինակը ցույց է տալիս, որ այն վերացել է քրիստոնեության ընդունումից հետո և չի պահպանվել մույնիսկ կանոնական արգելքի տեսքով, թեպետ Արշակ Բ-ի ժամանակներում, մույնիսկ Ե դարում բազմակնություն հետքեր է նկատում (էջ 79-81, 86): Հեղինակն անդրադառնում է նաև եկեղեցական հնագույն կանոններում արգելված մտակի արյունակցության դեպքում ամուսնության, չորրորդ պորտի անհասության, ոչ քրիստոնեայի հետ ամուսնության խնդիրներին (էջ 83-86):

Ամուսնության խզման հետ կապված հարցերը քննարկելիս, Ա.Մարտիրոսյանը քննարկում է սկզբնաղբյուրներում օգտագործված ողջ բառապաշարը (թողնել և կնաթող, արձակել, ելանել, հանցել, կնահան, ելանել, մեկնել բաժանել, հրաժարել), գույգերի բաժանման պատճառներին և կարգին, բաժանումից հետո ունեցվածքի տնօրինման սկզբունքներին, որոնց նշանակալի մասը ըստ հետազոտողի բխում է սովորության իրավունքից: Այստեղ հեղինակն անդրադառնում է նաև անբարոյականության, քանանայի կնոջից բաժանման և այլուայլ խնդիրների: Հեղինակը քննարկում է նաև կրկնամուսնության խնդիրը, մշտն սահմանափակումները, ընդգծում, որ այն արգելված է քանանացիների և երեցկնոջ համար, կրկին անգամ հավաստելով, որ սովորության և կանոնական իրավունքի նորմերը շատ դեպքերում միասնաբար են հանդես գալիս: Շահապիվանի ժողովը անհաշտ պայքար է ծավալում նման մնացուկների դեմ:

Երրորդ բաժինը նվիրված է մահացածի թաղելու խնդիրներին, ուր քննարկվում են սկզբնաղբյուրներում վկայված քաղման սովորությունները, որոնք դարձել են կանոնական կարգավորման առարկա: Կանոնա-

կան իրավունքով արգելվում էր լացն ու կոծը մանացածի վրա, ներկայացվում են անդրաշխարհի մասին հայկական հեթանոսական պատկերացումները (արախզ և այլն):

Առաջին մասի երկրորդ գլուխն անվանված է «Ժառանգության համար պայքարող եկեղեցի», որ հեղինակն անդրադառնում է եկեղեցական կազմակերպության երկու հակադիր ճևերին (միապետականություն և ժողովականություն), որոնց խառնուրդը ըստ նրա ծնել է այսօրվա եկեղեցական կառույցը: Տրդատ Մեծի ժամանակներից Հայոց եկեղեցին ձևավորվում է իր պատրիարքի շուրջը ստեղծելով նվիրապետական կառույց, ամրացնելով այն եկեղեցական ժողովների որոշումներով: Այդ է պատճառը, որ գլխի առաջին բաժինը հեղինակը նվիրել է եկեղեցու կառուցվածքին, օրինակներ բերելով Գ-ի դարերի կարթագնյան եկեղեցու պատմությունից, որն ի տարբերություն Հայոց եկեղեցու ժողովական դրությունից է անցել միապետականությանը, հետզհետե ամրապնդելով Կարթագենի եպիսկոպոսի իշխանությունը: Ա.Մարտիրոսյանը անդրադառնում է Հայոց կաթողիկոսական իշխանության ձևավորման ակունքներին (Թադեոսից մինչև Գրիգոր Լուսավորիչ), նա ենթադրում է, որ երկրի մոզայեռի հիմնական պարտականություններն անցել են եկեղեցու առաջնորդին: Այնուհետև քննարկում է մինչև Շահապիվանի ժողովը սկզբնաղբյուրներում վկայված Հայոց կաթողիկոսի անվանումներին (գլխավոր եպիսկոպոս, կաթողիկոս, քահանայապետ, եպիսկոպոսապետ, հայրապետ և այլն): Հեղինակն անդրադառնում է նաև եպիսկոպոսական իշխանության սահմաններին, քննարկում է Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատած եպիսկոպոսական աթոռների թիվը (12 թե՛ 400), տրամաբանական լուծում համարելով շուրջ 20 եպիսկոպոսական աթոռների հաստատումը Գրիգոր Լուսավորչի կողմից, նախարարական տները և եպիսկոպոսական աթոռների հարաբերակցությանը, աշխարհի և գավառի եպիսկոպոս հասկացություններին: Քննարկում է քրեեպիսկոպոսի աստիճանի հետ կապված խնդիրները, նույնություն է տեսնում կանոններում (հատկապես Շահապիվան-16) հիշատակված առաջնորդ և քրեեպիսկոպոս տերմինների միջև (էջ 114), անդրադառնում է երեց, քահանա, սարկավագապետ, սարկավագ տեմինների գործառնությանը, անուսնացած (նույնիսկ եպիսկոպոս) և կուսակրոն հոգևորականության խնդիրներին, կրոսեր պաշտոններում (կես սարկավագ, սարկավագուհի, դպիր և այլն):

Հեղինակն անդրադառնում է եկեղեցական նվիրապետությանը հատուկ խնդիրների լուծման կոլեգիալ և անհատական (solitaire), ճգնական և վարդապետական սկզբունքներին: Ժողովների տարբեր տեսակներ կային հոռմեական կայսրությունում, Տիեզերականից մինչև գավառային և տեղական, որոնց անդամները հիմնականում եպիսկոպոսներ էին: Հայոց եկեղեցին ևս հրավիրում է տեղական քազմաքիվ ժողովներ

(Աշտիշատ, Շահապիվան, Արտաշատ ևն.), որոնց մասնակցում էին աշխարհակամներ և հոգևորականներ (էջ 125): Ա.Մարտիրոսիանը փորձում է կապ տեսնել վերջին երկու ժողովների և արշակունյաց շրջանի թագավորական խորհրդի հետ (էջ 126): Եկեղեցու անցած անհատական ճանապարհը բնորոշող հաստատություն համարելով ճգնաժամը, վարդապետի աստիճանը, որի կրողը հետագայում էր աշխարհից դեպի վանք կամ անապատ: Շահապիվանի կանոնախմբի 16-18 հոդվածներում վարդապետ տերմինի օգտագործումը Ա.Մարտիրոսյանը վերագրում է Հովհաննես Մարագոմեցու հավելումին, վարդապետ քառը կապելով պարսկական «վարծ» արմատի հետ: Վարդապետի (ուսուցիչ, կանոնագետ) շուրջ հավաքվում էին նրա աշակերտները: Թեպետ այս մտեցումները նորովի են ներկայացնում խնդիրը, այնուամենայնիվ պահանջվում են նոր փաստարկներ, վարդապետի ինստիտուտի առաջացման խնդիրը լուսաբանելու համար:

Հաջորդ քաժինն անվանված է «Կղերականության հաստատումը»: Հեղինակն անդրադառնում է վաղ միջնադարյան Հայաստանի հասարակական կառուցվածքին, և դրա մեջ քրմաց դասի տեղին: Անդրադառնալով Շահապիվան-16-ին, և այս ժողովում և դրանից առաջ կաթողիկոսի ընտրության սկզբունքին: Այստեղ արձանագրված է այն սկզբունքը, ըստ որի առանց երկրի գլխավոր եպիսկոպոսի համաձայնության որևէ մեկը չի կարող եպիսկոպոս ձեռնադրվել (էջ 151-154): Այս խնդրի լուսաբանումը ևս պահանջում սկզբնաղբյուրների լիակատար հաշվառում: Միանշանակորեն կարելի է ասել, որ հարցի քննարկումն առանց Քրիստոմյա Արևելքի մյուս եկեղեցիների պատմական փորձի հաշվառման չի կարող գոհացուցիչ լինել:

Երրորդ գլուխն անվանված է «Պայքարը»: Հետևելով Ժ.-Պ.Մա-հեին, հեղինակն Հայոց եկեղեցու մղած պայքարի երկու ուղղություն է մատնանշում. ա) Ընդդեմ հեթանոսության, և բ) Ընդդեմ Ասորիքից եկող դասական «երկարմակության»: Հեթանոսության վերապրուկները ըստ նրա շարունակում են կենցաղավարել կյանքի զանազան քննազնականներում (ամուսնություն և քաղում, կախարհություն և դյուբում ևն.): Այդ մտահոգությամբ են գրվել Շահապիվանի ժողովի մի շարք որոշումները (կան 8-10): Ի մի բերելով խնդրի շուրջ առկա հայագիտական ողջ գրականությունը, հեղինակն անդրադառնում է հեթանոսական վերապրուկների մասին պատմող հիմնական սկզբնաղբյուրներին և եզրերին (գայլկաս, յուտոք, չարակն, հարցուկ, քախտ, ճակատագիր, վիճակ ևն.), քննարկման մյուս դարձներով Շահապիվանի ժողովի որոշումների համապատասխան կանոնները (էջ 166-173), ուր եթե ըստ Եղիշեի և Փարպեցու քարկոծման են դատապարտվում, ապա ըստ այդ ժողովի կանոնական որոշումների՝ դրամական տուգանքի կամ մարմնական պատժի (ծեծի):

Նույն գլխի երկրորդ բաժինը նվիրված է նահատակների մատուցման պաշտամունքին, որ հեղինակն անդրադառնում է Հայաստանում քրիստոնեության առաջին սրբերի հիշատակին կանգնեցված մատուցմանը, նախաքրիստոնեական Հայաստանում քաղաքական ընտանիքի նախնիների պաշտամունքին վերաբերող տեղեկություններին, քննարկելով «վատք», «քաջ» և այլ տերմիններ: Այնուհետև անդրադառնում է Շահապիվան 17 կանոնին, որը վերաբերում է եպիսկոպոսների կողմից վկայարանների սրբացման կարգին (էջ 185-186), Հայոց տոնական տարվա ձևավորմանը վերաբերող սկզբնաղբյուրներին (187):

Գլխի երրորդ բաժինը նվիրված է Շահապիվան-18-20 կանոններին՝ հերձվածների (հասկապես բոբբորիտների, մոդեռնության) դեմ պայքարին (190-214): Պետք է այստեղ շեշտել, որ զննատիկական այդ հերձվածներից շատերը անխզելիորեն կապված են Եզիպտոսից սկիզբ առած անասլատական շարժումների հետ, որոնց մասին ակնարկում է Ղազար Փարպեցին: Փորձելով զանազանել Ե աբում ադանդ և հերձված տերմինների նշանակությունը, հեղինակը ճշտում է Եզիպտոսցու տեղը նմանատիպ գրականության ստեղծման գործում:

Առաջին մասի չորրորդ գլուխը անվանված է «Պայքարի միջոցները. Իրավունքը», որ հեղինակն անդրադառնում է այդպիսի պայքարի իրականացման հայկական եղանակներին, «արևելք» և «ամառլեն» հասկացությունների, արդարատությունը իրականացնող սիստեմի մասին վկայություններին (դպիր, դատավոր, գործակալ ևն.): Վիճում է Հայաստանյան հայագիտության մեջ տարածված այն տեսակետի դեմ, ըստ որի Արշակունի քաղաքները նաև երկրի գլխավոր դատավորներն էին: Հետևելով Ն. Գարսայանին, նա կարծում է, որ Արշակունիները լինելով առաջինը հավասարների մեջ, չէին կարող նման արտոնություն ունենալ ողջ Հայաստանի տարածքում, այլ միայն իրենց հայրենիքում (էջ 219-220):

Անդրադառնալով եկեղեցական դատաստանի կառուցվածքին, առանձնացնում է հոգևոր դատարանի կառուցվածքը: Եկեղեցական բարձրագույն դատարանի գոյությունը շարունակությունն է համարում զրադաշտական հոգևոր դատարանի, որի գլուխ կանգնած է եղել մոզպետը: Իտպվում է տարբեր իրավասություններ ունեցող դատավորների, միջնորդ դատարանի, հոգևոր դատարանի պաշտոնության մասին (223-225): Անդրադառնում է հոգևոր դատարանի իրավասությունների ոլորտներին (225-230), դատարանի աշխատանքի արարողակարգին (230-234):

Այս գլխի երկրորդ բաժնում անդրադառնում է Հայոց եկեղեցական իրավունքում, մանավանդ Շահապիվանի ժողովի կանոններում առկա մարմնական պատիժների տեսակներին (դրամական, ջրերի հատում, աղվեսադրոշմ, քարկոծել, ևն.) (234-245), հոգևոր-եկեղեցական պատիժ-

